զգովութիւն քում հոգելից յաղթութեանդ: (27 / 15) և զսոցայն ստոյգն, թէ յորմէ տոհմէ են, չունիմ *ասել:* (41 / 13) և ոչ ոք իշխէր *ասել* զանուն Սիւնեաց (108 / 18) որ լրբաբար յանդգնեցան *ասել* երկու բնութիւնս և երկու դէմս ի վերայ միոյ Քրիստոսի Աստուծոյ (125 / 5) մի՛ ընդունիջիք զնա ի տունս և մի՛ բանիւք ողջոյն *ասել* նմա: (125 / 14) Ես Վիրոյ Աղուանից և Լփնաց և Չորայ կաթողիկոս թողում *ասել* զայն ամենայն զպէսպէս զազրալիս (166 /2) Քանզի սկսայ *ասել* վասն ահագին և սոսկալի հատուցմանն, որ հատուցաւ ի գլուխ թշնամեաց մերոց: (169/18) Եւ եթէ զորս յետ այսր եղեալ ի տեղիս տեղիս անթիւս սրահար ջարդմունս պարսկացն ի Ջուանշիրէ անտեղի է *ասել:* (179 / 3) ձեռնարկեցից և զայն *ասել* (192 / 2) Ընդ որ թէպէտ առաւելասքանչ զարմանք, սակայն ոչ այնչափ զոր հանդերձեալ եմ *ասել* (200 / 1) զի ոչ է պարտ ի մտաց *ասել* զերևումն (204 / 2) Քաղցր էր զայլս *ասել* ևս և միշտ հեծել, Բայց քաղցրագոյն ևս ընդ քեզ մեռանել:(230/16) ի դեպ է ինձ *ասել* (276 / 8) ըղձամբ աղօթալիր և ուժգին խնդրուածովք սրտի զտէրունեան հոգեխառն ողջոյն համարձակապէս մեզ առ ձեզ *ասել:* (277 / 2) և տուեալ նմա խրատ միայնակեցին՝ *ասել* զինքենէ անբնակ անազգի մուրացիկ առաջի կայսերն: (321 / 6) Եւ առ սա գրեցին ի ժողովոյն Դունայ՝ *ասել* մի բնութիւն աստուածութեան և մարդկութեան (343/3) որք զնոյն սահմանեցին ուղղափառացն «անմահ որ խաչեցար» *ասել,* որպէս և է իսկ: (343 / 10) Զայս ոչ էր սահմանեալ *ասել* Աբաս հայրապետն (343/10) ձայն լսէր ուժգին *ասելով.* (70 / 9) և մեզ պատուիրէր *ասելով* (76/2) Եւ համբարձեալ զձեռս իւր առ Աստուած՝ բարբառէր *ասելով* (101 / 11) յայնժամ մեծաւ յօժարութեամբ առնէր զպատասխանին *ասելով.* (141/13) իսկ ի վերջնում նուագին յոյժ խրոխտացեալ գրէր առ նա՝ *ասելով.* (144 / 17) և ետ նմա զայրիչն մեղաց *ասելով.* (184 / 8) օրհնեաց զնա ի ձայն մեծ *ասելով.* (184 / 15) Եւ զայն օր ևս արար յաղթութիւն մեծապէս՝ *ասելով* առ բարբարոսն այն ազգ. (187 / 2) Զի և անմարմին զինուորութիւնքն սրբասաց ձայնիւ, երրորդական բարբառով աղաղակեն՝ *ասելով* (243 / 7) կնքէր դաշինս վասն փառամոլ տիրողութեանն՝ *ասելով.* (293 / 7) զնոյն հրաման առաւել տիրացուցին սուրբ առաքեալքն հրամանաւ փրկչին *ասելով* (308 / 11) Եւ ապա այլ խորհուրդ մտաբերեալ՝ յղեն առ քաղաքացիսն բանս հաւանականս *ասելով* (323 / 5) զոր ողբերգական կանայք կականէին՝ *ասելով.* (337 / 3)

ԱՍԵՄ - 231

«Ե՛րթ ի Ցրի առ գործակալ քաղաքին Խոճկորիկ անուն՝ նախարար յԱղուանից աշխարհէն և *ասա* (57 / 4) Արդ՝ աղէ, *ասա,* անզգայացեալ հոգւոյն զի՞նչ մեծարանք էին վերակացու լինել քաղաքին նորա (87 / 16) «Ե՛րթ, *ասա՛* թագաւորին քում և եղբօրն մերում խաքանայ (143 / 12) Եւ եկեալ Գրիգորիսի ի տեսլեան մեծավայելուչ փառօք, ումեմն երևեալ *ասաց* զանուն աբեղային (82 / 7) և մտեալ մեծաւ զգուշութեամբ, *ասաց* մանրամասնաբար զերևումն ցուցակութեան խորհրդոյն եպիսկոպոսին ճշգրտիւ զբովանդակն: (202 / 15) զորոց գիրն *ասաց* (210 / 7) *ասաց* մեծ իշխանն Հոնաց (260 / 14) որ արարած

զորդի Աստուծոյ *ասաց.* (288 / 3) ԶԻ տէրն *ասաց.* (310 / 15) Որպէս ոմն ի յաստուածազան վարդապետացն *ասաց.* (315/11) որպէս յառաջագոյն *ասացաք* (31 / 15) վասն այնորիկ *ասացաք,* (58/10) Եւ թէ խոստովանին, թէ սուտ *ասացաք,* ապաշխարութիւն ի վերայ դիցեն և ի վանաց մի հանցեն. (93 / 5) զոր վերագոյնն *ասացաք* (135 / 6) զոր վերագոյնն *ասացաք:* (154 / 9) Ահա *ասացի* քեզ: (168/14) Քանզի և զարբանեկէն ձերոյ *ասացի* ի կերտողէն հրաժարեալ(277/4) Զայս *ասացին* և զհամատարած ծովն շարժեցին ի վերայ քո: (21 / 7) Եւ որք *ասացին* անզգայ լինել զհոգին ելեալ ի մարմնոյն, յանդիմանեմ զնոսա Աստուածաշունչ գրոց վկայութեամբ (87 / 6) զի *ասացին* Յոյնք, եթէ կարգաւորեաց Աստուած զեկեղեցի ինն դասուք. f(272 / 6) *Ասացից* առ քեզ և բան ինչ առակաւոր. (25 / 4) Բայց ահա կանխաւ *ասացից* քեզ, զոր ինչ ես գործելոց եմ յառաջագոյն. (134/4) Աստանօր և արդ զի՞նչ *ասացից* և կամ զո՞ր խօսեցայց (200 / 12) Եւ մեք գտանէաք, զոր *ասացն:* (71/12) Բայց արդ աղաչեմ, փոխանակ *ասեմ՝* չունել վնաս ի մտի, չհիշել զիմ հեղգութիւնս: (28 / 12) զՀոիփսիմեայն *ասեմ* և զնորին ընկերացն (34 / 12) զամենաչարն զՊերոզէ *ասեմ* (45 / 4) Եւ *ասեմ.* «Ո՞վ ես դու. տէր». (120 / 6) Վասն որոյ *ասեմ* քեզ, մի՛ կրկնել առ իս վասն դորին ունայն խնդրոյ. (134 / 3) Արդարև *ասեմ,* եթէ որպէս արջ որդեկոտոր զայրագնեալ գազանանայր: (178 / 2) արդարև *ասեմ* թէ իբրև բեհմութ ի շարժելոյն գլխոյ ահաբեկ զարհուրանօք դողումն լինէր բնութեան մարդոյ: (200 /8) «Լալով իսկ *ասեմ* զթշնամեաց խաչին Քրիստոսի, որոց կատարածն կորուստ է»: (289 / 19) Դարձեալ աղաչեմ և *ասեմ,* զգոյշ կացէք: (311 /4) զոր *ասեմս* ձեզ. (158 / 13) Այսպէս հաւատամք և երկրպագեմք և փառաւորելով *ասեմք.* (124 / 21) Ի սորա՝ Առանայ ծննդոց, *ասեն* (8 /14) Եւ ի սորա զաւակէ, *ասեն* (8 /16) «Մի այդպէս, *ասեն,* տագնապեր յանձն քո, ո՛վ քաջդ. (21 /4) Եւ *ասեն.* (38 /12) և անդ են, *ասեն,* նշխարք երանելեացն մինչև ցայսօր: (40 / 11) և *ասեն* ցերէցն … և նոքա *ասեն.* (57/8; 57/10) և *ասեն* ցԽոճկորիկն. (58 / 5) և եկեալ երրորդ անգամ նոյն արքն լուսազգեստք …*ասեն.* (58 / 13) Եւ բազումք ի գիւղս, *ասեն,* որ անորդիք լեալ են (77 / 11) ոմանք *ասեն* (78 / 9) Պատասխանի ետուն ամենեքեան և *ասեն* (78 / 10) Եւ նոցա միաբան օրհնեալ զթագաւորն թագուհեաւն հանդերձ և ամենայն դրամբն՝ *ասեն.* (84 /15) զոր այլքն *ասեն* ճշմարտութեամբ (92 / 14) «Զի՞նչ մեք արասցուք, *ասեն* (97 / 16) Եւ հրամանաւ արքայի ստիպեն զամենեսեան և *ասեն.* (113 / 2) և ամբարձեալ յերկինս զձայնս իւրեանց՝ *ասեն.* (114 / 12) Են և այլք ոմանք, որ *ասեն* (125 / 8) զաղաղակ բարձին և *ասեն* (136 / 17) Ապա *ասեն* այր ցընկեր իւր. (137 / 2) խորհեցան առ միմեանս թագաւորքն և *ասեն.* (139 / 3) սկսան քրթմնջել ընդ միմեանս և *ասեն.* (145 / 4) Եւ նոքա *ասեն.* (148 / 1) Յայնժամ սկսան պատգամաւորքն ստիպել և *ասեն.* (155 / 11) ձայն բարձին միաձայն և *ասեն.* (158 / 6) քանզի թագաւոր ոմն եղեալ, *ասեն,* անուն Կոստանդիանոս, որ զԿոստանդնուպօլիսն շինեաց: (260 /4) Առաջին զնա *ասեն* լեալ քրիստոնեայ թագաւորութեանն այն (260 / 5) *Ասեն.* «Ոչ է պարտ դմա զհաւատացեալ դմա յԱստուծոյ զհօտն իւր թողուլ միանգամայն և լինել ընդ ձեզ. (265/19) խոռվամիտ ընդ իրսն եղեալ զարհուրէին և անյօժար կամաւորութեամբ

հաւանեալ ասեն. (266 / 5) ասեն ցՄահմետ. (288 / 6) որպէս օրէնքն իսկ ասեն. (308 / 3) Զի այսպէս ասեն զօդոց երկրին, (311/15) յայլ քաղաքս այսպէս ասեն (316 / 6) Ասեն, թէ ի պիղծ կենաց եղև մահ նորա. (321/15) որ ասենդ ելեալ ի մարմնոյն (87 / 10) և զոր ինչ ասես, առնեմ: (17 / 13) զստոյգն ասես (53 / 12) «Զքոյրդ իմ, ասէ, և զքեռորդիդ ի բաց տուր ածել (17 /5) Յայնժամ քաջն Վահան Ամատունի նայեցեալ ի կաթողիկէն ասէ. (30 / 5) «Անհնարին է ձեզ, ասէ, ի հարուածոցդ զերծանել (33 / 23) ինքն իսկ ի խոր վիրապին մարգարէական ակամբն տեսանէր զնահատակութիւն երանելեաց վկայիցն Քրիստոսի և ասէ. (34 / 13) «Զո՞ր սրբոցն ասէ»: (34 / 14) Հրեշտակ Աստուծոյ եկեալ առ մեծն Գրիգորիոս՝ ասէ ցնա. (35 / 1) Եւ երանելին պատասխանի արարեալ ասէ. (40 / 5) Յարուցից ի վերայ նոցա, ասէ տէր Սաբաւովթ (44 / 12) Ասէ. «Դևն յայտնապէս գայ ի կերպարանսն մարդոյ (53 / 13) և նա ասէ. (57 / 10) և նա ասէ. (65 / 9) Եւ ասէ թագաւորն, թէ զհող տեղւոյն ի բաց հրամայեմ պեղել, և եղեալ ի միտս իւր ասէ. «Գուցէ ի բազմութենէ գերեզմանացն ոչ կարեմք կալ ի վերայ ամենասուրբ գերեզմանի երանելւոյն, այլ ապաստան պարտ է լինել ի պահս և յաղօթս, և բազում աղաչանօք խնդրել յամենողորմէն Աստուծոյ՝ յիշեցեալ զտէրունեան զբանն, որ ասէ. (65/11; 65/12; 65/15) Եւ վստահացեալ այնուհետև բարեսէր արքայն յիւր հաստատուն հաւատոյն խնդիր և յառաքինի ժողովոյն բարի հայցումն, ասէ. (68 / 7) Եւ գիտացեալ ի տեսլեանն, որպէս պատմեացն, թէ ես յԱմարաս երթամ. և որ անդ, ասէ, երևելոց ումեք իցէ անդ մարդոյ: (72 /19) և ասէ. «Զիմ տեսիլդ մի՛ ումեք յայտնել». (73/2) Իսկ թագաւորն ասէ. (73 /9) Եւ պատմեաց վանաց երէցն և ասէ. (75 / 7) «Այդր եպիսկոպոս նստէր, ասէ, լուսաւոր զգեստու և ահաւոր կերպարանօք»: (77 /9) և խոսեալ առն ընդ աբեղայսն՝ ասէ. (78 / 7) Եւ մի յեօթանցն առաջնորդեալ առնն և ասէ. (78 / 11) Եւ նա ասէ. (78 / 15) Եւ անդրէն դարձեալ առ այրն, ասէ. (79 / 3) Եւ նորա չառեալ ևս յանձն, ոտամբ հարեալ զտեղին՝ անյայտ արարեալ զպատառուածն, ասէ. (79 /9) Ասէ արքայ. (86 /15) որ ասէ. (87 / 7) «Աստուած, ասէ, կենդանեաց եմ ես և ոչ մեռելոց. (87 / 11) Եւ առաքեալն Պօղոս ասէ, «Ելանել ի մարմնոյս և ընդ Քրիստոսի լինել՝ լաւ համարիմ». որ և նոյն իսկ կենարար Բանն ասէ ցհայրն. (87 / 18; 87 / 19) որպէս Պաւղոս ասէ. (91 / 2) «Քաւ լիցի ինձ, ասէ, տալ զզգաստութիւն պարկեշտութեան իմոյ շանազգի և խոզաբարոյ հեթանոսաց (101 / 7) խօսել սկսաւ ընդ նմա և ասէ. (104 / 2) և ասէ ցթագաւորն. (104 / 8) Եւ խորհուրդ բերեալ ընդ մեծամեծս իւր՝ ասէ. (106 /14) և ասէ ցնա. (110/5) Եւ նոյնժամայն ապաւինեալ ի վերին օգնականութիւնն ասէ. (110 / 7) և նորա բան խնդրեալ ասէ.(110 /17) և նա ասէ ցիս.(120 / 6) որ ասէ. (125 / 12) ասէ. «Լսելոց էք պատերազմունս և համբաւս պատերազմաց (127 / 12) Եւ ասէ ցայրն այն (139 / 8) այսպէս ասէ արքայն հիւսիսոյ՝ տէրն ամենայն երկրի (143 / 2) և ասէ. «Աստուածք իմ, դատ արարէք ընդ իս և ընդ թագաւորն իմ անողորմ»: (144 / 19) ասէ ցայնոսիկ, որ ի մօտն կային. (147 / 17) Դարձեալ ասէ ցնոսա, որ մերձն էին. (147 / 20) ասէ, թէ ելցեն մեծամեծք (153 / 16) «Ո՞վ ես, ասէ, և ուստի՞ տունդ Աղուանից (154/10) և ասէ ցնոսա. (157 /19) Յայնժամ ասէ ցնոսա. (158 / 12) և ասէ ցորս անդն կային. (159 / 6)

և ասէ. «Քաջալերեցարո՛ւք, որդեակք իմ, մի՛ երկնչիք (159 / 11) Եւ հայեցեալ ընդ երեսս կաթողիկոսին իբրև ժամ մի, ասէ. (161 / 4) Յարեաւ կաթողիկոսն և երկրպագեաց նմա և ասէ. (161 / 16) ապա և նա սկսաւ համարձակապէս առնել զինդիր իւր և ասէ առաջի արքայորդւոյն. (162 /14) «Արի՛, ասէ, անց ի մէջ, ընտրեա՛ դու քեզ գունդս՝ արս արիս իբրև տասն հազարս և դիմեա՛ ի վերայ նոցա: (168 / 5) և ողջունեալ զնա՝ ասէ. (185 /14) այլ նա աներկիւղաբար և անվեհեր սրտիւ անկեալ առաջի փրկչական խաչին, ասէ. (190 / 19) որպէս մեծն Դաւիթ ասէ. (194 /10) Եւ ասէ. «Տէրդ իմ, մի՛ հեղգասցուք զհրամանս Աստծոյ յապաղել (203 / 1) Յայնժամ պատասխանեալ առ նա սրբոյ հայրապետին՝ ասէ. (203 /15) որպէս սուրբ առաքեալն ասէ, թէ զամենայն ինչ փորձեցէք և զբարին ընկալարուք: (204 / 10) Եւ դարձեալ ի կաթողիկոսէն ասէ, թէ մի՛ ամենայն հոգւոյ հաւատայք, այլ ընտրեցէք, որ յԱստուծոյ հոգին: (204 / 11) Զի որպէս Կիւրղի, որ յԵրուսաղէմ էր հայրապետ, գրութեամբ ի Կոստանդիանոս վասն երևման խաչին ասէ. (216 / 8) և ասէ այսպէս. (225 / 5) «Եկա՛յք, ասէ, զընտրեալս զայս յԱստուծոյ զԻսրայէլ (234 /7) «Տո՛ւք, ասէ, ի նշխարաց սրբոյն Գրիգորի»: (236 / 11) և ասէ. «Ահա հարկք, որ եդան ի վերայ մեր ի դժնդակ ազգէն Տաճկաստանեայց (237/14) սկսաւ ճառել նոցա ի վարդապետութենէ Գրոց աստուածայնոց և ասէ. (242 /12) Եւ միւս մարգարէն ասէ. (243 /14) Որպէս և ասէ իսկ ի Ծննդոց պատմութեանն (244 /10) այսպէս ասէ վասն նոցա աստուածային Գիր (247 / 12) վասն նոցա ասէ Գիր. (247 /15) զոր հակառակորդն մեր և թշնամի աստուածոցն մերոց ասէ ընդ ձեզ հատանել զծառն զայն: (250 /15) և ասէ. «Մեք հաւանեալ հաւատացաք առնս այսմիկ և պաշտեմք և երկրպագեմք Աստուծոյն (252 / 10) ասէ զնոսա. (254 / 9) և ասէ. «Առաջի այսր ամենակեցոյց նշանիս երկրպագեցէք տեառն արարչին ձերոյ (256 /1) ասէ եպիսկոպոսն ցիշխանն.(258 /11) Մտանէ մեծ իշխանն Հոնաց ընդ ամենայն մեծամեծս և նախարարս իւրոյ տէրութեանն ի խորհուրդ բարի և ասէ. (259 /14) Եւ պատասխանի տուեալ եպիսկոպոսին ասէ. (261 / 3) Եւ եպիսկոպոսն ասէ. (261 / 9) և ասէ. «Պարտ է մեզ առնել կաթողիկոս»: (268 / 4) ասէ. «Վասն զի քաղաք մեծի արքային է»: (273 /11) «Աղաչեմ զձեզ, ասէ, ի ձեռն տեառն Հիսուսի Քրիստոսի և սիրով հոգւոյն պատերազմակից լինել ինձ յաղօթս առ Աստուած: (278 / 8) Քանզի և այժմ ցանգ բարի հովիւն զլերինս հնչեցուցանելով՝ ասէ. (279 / 10) և ի սպառել նոցա՝ ետ զսուրբսն ցՄխիթար և ասէ. (281 / 3) Եւ նա ասէ. (281 / 11) Իսկ նորա սաստիկ ձայնեալ ասէ. (287 / 14) Ասէ առ նա Մահմետն. (288 / 1) Եւ Մահմետն հայթայթեալ զանձանօթն զիւր ազգ՝ ասէ. (288 / 7) Եւ ի նմին տեղւոջ նստեալ ինքն լրտեսացն ասէ. (288 / 11) Ասէ. «Եթէ դուք անսայք իմում մարգարէութեանս և քարոզութեանս և առնէք, մեծ իշխանութիւն ազգիս մերոյ հասանէ, որպէս Հռոմոց գիրն ասէ, թէ՝ «մեզ իշխանութիւն վասն հաւատոյս մերոյ տուաւ յԱստուծոյ»: (288/17; 288/19) և յետ այնորիկ դարձեալ ասէ զՏալբն. (289 / 11) Առ նոսա ասէ օրհնեալն Պօղոս. (289 / 17) Որպէս և երանելի առաքեալն ասէ (306 / 3) և նորա խորամանկեալ ասէ. (312 / 2) Ղուկաս աւետարանիչն ասէ. (315 / 2) զոր դարձեալ ասէ Աստուածաբանն. (315 /18) Դարձեալ որ յընթերցուածին ասէ վասն Դաւթի և Յակոբու տօնին աւուրն

(316 /4) որպէս *ասէ.* «Եթէ Օրէնքն ի Սիոնէ ելցեն, և բանն Աստուծոյ՝ յԵրուսաղէմէ»: (316 /11) Յայնժամ գտեալ համարձակութիւն Ստեփաննոսի՝ *ասէ* զկայսրն. (321 / 8) և նորին տեառն եղբայրն աշխարհական հարցեալ *ասէ* զնա. «Ուստի՞ գաս տէր». և նա *ասէ:* «Ի տանէ եղբօր քո». (346 /1; 346 /1) և *ասէ* իշխանն ցԴաւիթ. (346 / 2) և ամենեքին ըմբերանեալ դարձվէին զկինն և *ասէին.* (33/25) մաղթէին զճիղոր մանուկն և *ասէին.* (40 / 3) և *ասէին.* «Երթ ի ցրի առ գործակալ քաղաքին Խոճկորիկ անուն՝ նախարար յԱղուանից աշխարհէն (57/3) Եւ *ասէին.* «Ոչ եթէ վասն այնորիկ ասացաք, եթէ ի ժամ վաղ չոգար, այլ մեր նշխարքն կան յեկեղեցւոջն, երթ դու և երէցն հանէք». (58 / 9) և որք գային ի տեղին յայն՝ կոփէին ի նմա և *ասէին.* (111 / 2) և *ասէին.* «Գունդն Պարսից, որ էր ի կողմանս աշխարհին Հոնաց, դարձաւ այսրէն (112 / 14) Եւ բերեալ զայն եդին ի վերայ պարսպին յանդիման նոցա և աղաղակէին առ զօրսն և *ասէին.* (140 / 3) որք օրհնէին զԿաւատ և *ասէին.* (147 / 10) և *ասէին* զմիմեանս. (242 / 8) փառաւոր առնէին զԱստուած և *ասէին.* (248 / 9) և *ասէին.* եթէ՝ «Զիարդ մարթէք և իմանայք և գիտէք առնել զայդ (250 / 14) զոր քաւդեայքն *ասէին* (256 / 11) Եւ երկրորդեալ և երրորդեալ պատգամացն՝ զնոյն *ասէին* բանս: (261 /8) *Ասէին.* «Մեր արուեստս լոյս է (267 / 9) Եւ յառաջն յաղագս ահ արկանելոյ նոցա որպէս *ասէինն.* նոյնպէս առնէր և կատարէր սատանայ: (253 / 18) քանզի նա ի քարոզութեանն *ասէր* զկամս բարերարին Աստուծոյ (38 / 10) Եւ զարթուցեալ ի քնոյն *ասէր.* (58 / 7) Եւ նորա ձայնեալ անդրէն *ասէր* (71/10) Եւ զի չէր բնաւ երթեալ սարկաւագին յԱմարաս, *ասէր* զտեղին (71 /13) և եկեալ հնչիւն ձայնի *ասէր.* (72 / 18) և *ասէր* երկիցս և երիցս առաջի բազմաց (75 /11) և *ասէր.* «Չիք հնար բուժել քեզ ի տանջանացդ (77 /4) Եւ *ասէր* ցաբեղայն (78/14) Եւ *ասէր* աբեղայն ցայրն. (79 / 5) և ապա քաջալերեալ արքային ճշմարիտ հաւատով՝ *ասէր.* (80 / 14) *ասէր* «Մեզ նեռն ընտրեցաւ Գրիգորիսն այն»: (82 / 10) և *ասէր.* «Որոց բարեխօսութեամբ և ձեր աղօթիւք զցանկալին ինձ և ձեզ շնորհողին Քրիստոսի միշտ փառ և գոհութիւն»: (84 / 13) *ասէր.* «Զի՞ է հեղումն արեանս. եկ մենամարտեսցուք դու և ես»: (109 / 16) և *ասէր* ցիս անուն իմ: (120 / 5) սուրբն Վարոս ի կերպ աբեղայի *ասէր* ցիս. (120 / 9) Եւ երևեր այր մի նոյն ձևով և *ասէր* ցիս. (120 / 12) զի դեռ ի նեղի եմք, *ասէր:* (121 /1). որ *ասէր* (127 /19). հիանայր ի միտս իւր և *ասէր.*(131 /5) Եւ առաքեր միանգամայն և երկիցս, և չորրորդեր գրով զգուշութեամբ առ թագաւորն իւր Խոսրով և *ասէր.* (144 / 12) Եւ քարոզն մեծաբարբառ աղաղակեր յաջմէ և յահեկէ Կաւատայ և *ասէր.* (147 / 2) Եւ *ասէր* ցնոսա. (147 / 6) բախեալ զկուրծս իւր՝ հեծեծելով *ասէր.* (148 / 15) երբեմն *ասէր.* «Կոչեցից զգլխաւորս, զառաջնորդս ամենայն գաւառաց աշխարհացս …և երբեմն *ասէր.* «Ոչ ինչ է պիտոյ յամել մնալ ինձ բազմացն խորհրդակցութեան (155 /5; 155 /8) Եւ *ասէր.* «Տեսէք և իմասջի՛ք տունդ Պարսից (167 / 16) Եւ անդ կացեալ ի վերայ ծնկաց իւրոց թախծալից զղջմամբ և արտասուօք դնէր աղերս ամենահաստչին և *ասէր:* (188 / 2) Լայր առաջի տեառն, կարդայր և *ասէր.* (191 / 12) գոհանայր զանպատում պարգևացն Աստուծոյ և *ասէր.* (199 / 3) Վասն որոյ ձայն արկեալ *ասէր.* (234 / 14) Իսկ հայրապետն Աբրահամ *ասէր* (274 / 12) Այլ և

յորժամ Մովսիսի պատուիրէր տէր վասն քահանայիցն, այսպէս *ասէր.* (306 / 6) Զի տէրն փառաց յորժամ պատուիրէր Մովսիսի յաղագս խորանին՝ *ասէր.* (308 / 1) Ստեփաննոս զգոգն արեամբ լի ունէր առաջի փրկչին և *ասէր.* (322 / 4) Իսկ երանելին Սիմէոն առ նա խրախուսեալ *ասէր.* (339 / 13) Եւ *ասի* բան (328 / 5) Ահա նմանութիւն խոտոյ *ասի* մարդ: (333 / 10) Միտ դի՛ր, ո՛վ սիրելի, զի թէ գիտութիւն և անգիտութիւն յաղագս հոգւոցն ննջեցելոցն *ասիցեմք,* չիք ինչ բնաւ այնպէս տխմար քան զոչ հանգուցեալքն: (88 / 17)

ԱՍԻԱԿԱՆ - 1

իսկ զկանայս նոցա գերեալ՝ մտանեն ի նաւսն դառնալ երկիրն *Ասիական.* (323 / 16)

ԱՍՈՐԵՍՏԱՆ - 6

անագորոյնն այն Տաճիկ փոխեալ ի Հայոց, գնայ անցանէ ընդ *Ասորեստան* երկիր (337 /12) յառաջ խաղային առ սահմանօքն *Ասորեստանի.* (98 / 3) և ահա ոչ կարէք տոկալ՝ ի հասանել ամառնային տապախառն ջերմութեան աշխարհին *Ասորեստանի* (139/11) անցանեն ընդ կողմանս *Ասորեստանի*(173/4) Այն վեցերորդ ամ էր հարաւայնոցն փոխելոյ զթագաւորութիւնն իւրեանց յաշխարհին *Ասորեստանի.* (193 /9) որ եհաս ի վերայ *Ասորեստանոյն* (170 / 3)

ԱՍՈՐԵՍՏԱՆԵԱՅՔ - 7

Եւ խոյս տուեալ յերեսաց նորա յամրոցացն սահմանացն Մարաց՝ գնաց անդէն յաշխարհն *Ասորեստանեայց:* (131 / 7) հաստատեցից և ես զերեսս իմ ի վերայ քո, կուսակալդ *Ասորեստանեայց.* (143 / 4) իջանէր յերկիրն *Ասորեստանեայց* (194 /15) Եւ որպէս զառաջինն աթոռ իշխանութեանն իւրեանց արկին ի Դամասկոս *Ասորեստանեայց*: (325 / 4) Ի ժամանակի խռովութեանն … զօրաժողով լինի որդին Շեխայ ի կողմանցն *Ասորեստանեայց* միակամութեամբ Աշոտի իշխանի (334 / 7) անցանէ ասպատակաւ յաշխարհն *Ասորեստանեայց* (336 /8) Յետ այսորիկ առնոյր զզօրսն ամենայն զօրավարին Պարսից և իջանէր յերկիրն *Ասորեստանեաց:* (174 / 3)

ԱՍՈՐԵՐԷՆ - 1

և ի նմա գրեալ *ասորերէն* և հայերէն գրով: (206 / 7)

ԱՍՈՐԻ - 2

և ի նմա գիր *ասորի* և հայ: (210 / 5) որ և ունէր առ հասարակ հայ, հոռոմ և *ասորի* գիր. (215 / 16)

ԱՍՈՐԻՔ - 6

որք Պարսից և *Ասորեաց* տիրեցին ՄՕԲ ամօք (7 / 7) Զորս առեալ *Ասորեաց* ոմանց աբեղայից տանէին ի Հակու անուանեալ գիւղն. (40 /9) Ի Յովհաննիսէ՝ Հայոց կաթողիկոսէ … յԱբդիշուէ՝ *Ասորեաց* եպիսկոպոսէ …և յայլ ամենայն եպիսկոպոսաց Հայաստանեայց օրհնութեամբ ողջոյն: (122 /13) Ապա կոչէ ամիր մոմնին զՋափր *Ասորեաց* եպիսկոպոսն (332 / 13)Եւ ժողով անթիւ արարեալ

Շապիոյ *Ասորւոց,* Խորասանի, Խորազմայ (107 / 17) Ի սորա աւուրս տիրեցին *Ասորւոց* Տաճիկք (317 / 1)

ԱՍՊԱՆԴԻԱՏ - 7

և *Ասպանդիատայ* ումեմն վայրագ սկայի ձիով այրեցելովք զոհ մատուցանէք. (246 / 5) զորս ձօնեալ էին *Ասպանդիատայ* գարշելւոյ առ ի զոհս մատուցանելոյ նմա ձիովք (250 / 5) Ո՞չ ապաքէն յորժամ պաշտէիք և մատուցանէիք զզոհս և զնուէրս առաջի ծառոցն յանուն սկայազօր քաջին *Ասպանդիատայ* (251 / 5) Այլ և ո՞վ իշխեսցէ իսկ մօտել, հպել և մերձենալ ի յայն վայրն, ուր սկայազօրին *Ասպանդիատայ* մեհեանքն և բագինքն շինեալ և հաստատեալ են (252 /1) զորս ձօնեալ էր յանուն *Ասպանդիատայ* գարշելւոյն: (255 /6) որ *Ասպանդիատային* մատուցանեն պաշտօն (246/8) որում պարսիկք *Ասպանդիատն* կոչեն: (241 / 5)

ԱՍՊԱՍՏԱՆ - 2

Եւ մխեալ յընտիր յընտիր երիվարս *ասպաստանացն* Խոսրովու.(147 /11) և յարքունի *ասպաստանէ* ձիս սպիտակս ընտրեալս (62 / 3)

ԱՍՊԱՏԱԿ - 11

Իսկ երրորդ մասն զօրուն հասեալ ի մուտ զատկին յԱրցախական գաւառն՝ տայր *ասպատակ* ի վերայ Մեծ Կուենից: (99 /15) Եւ *ասպատակ* սփռեալ զկողմամբք Ատրպատականու մինչև ցտեղի անուանեալն Գայշ աւան (131 /19) զի ահա եհաս օրս սահմանեալ սփռելոյ *ասպատակ* ընդ ամենայն երեսս Աղուանից աշխարհիս (155 / 12) և ոչ ևս ելցեն *ասպատակ* սփռել ընդ սահմանս երկրի քոյ. (161 /7) *ասպատակ* սփռեալ յաշխարհն Աղուանից՝ առ ստորոտով մեծ լերինն Կաւկասու և յաւանս Կապաղակայ գաւառին: (232 / 7) *ասպատակ* տուեալ յանխնայ գերէին (232 /14) Եղև անդ ամ մի և զողջոյն ամն ի շահաստանէն *ասպատակ* արարեալ. (290 / 4) ընդ նմին և առնուլ *ասպատակաւ* յաւարի զամենայն աշխարհս (141 / 12) անցանէ *ասպատակաւ* յաշխարհն Ասորեստանեայց (336 / 8) որ ետ մեզ յաղթութիւն *ասպատակիս* (104 / 5) Եւ յորժամ ելանէին *ասպատակք* ի նոցանէն, ելանէր և սպարապետն Աղուանից և զյաջողութիւն ցուցանէր արիաբար: (174 / 6)

ԱՍՊԱՏԱԿ ԱՐԱՐԵԱԼ - Տե՛ս ԱՍՊԱՏԱԿ

ԱՍՊԱՏԱԿԱՒՈՐ - 1

սակայն *ասպատակաւորքն* Հոնաց … գերի վարեալ զամենայն ի բանակետղն ժողովէին: (190 / 11)

ԱՍՊԱՏԱԿԵԱԼ - 1

Եւ երկրորդ անգամ անհնարին աղէտք այն են մեզ՝ ամի ամի *ասպատակեալ* յաշխարհս մեր զօրացն Հոնաց: (237 / 16)

ԱՍՊԱՏԱԿԵԼ - 2

և հրամայէր յերիս առաջս առնել՝ *ասպատակել* ի վերայ աշխարհին Աղուանից, Հայոց և Վրաց: (99 /13) Սաստիկ ամբոխիւ ելին Խազիրք՝ *ասպատակել* յաշխարհս մեր հրամանաւ Հերակլի: (133 / 15)

ԱՍՊԱՏԱԿԵՄ - 3

Եւ ի նոյն ամի *ասպատակեաց* Սևադայ աշխարհաւերն Տաճիկ …ի սահմանս Հայոց. (326 / 7) Եւ *ասպատակեցից* ես ընդ աշխարհս, որ շուրջ զքն (161 / 12) Եւ ինքն իսկ մեծ թագաւորն Ռոսմոսոքեան դարձեալ լինէր, ամենայն զօրօք իւրովք *ասպատակէր:* (103 / 10)

ԱՍՊԱՏԱԿ ՍՓՌԵԱԼ - Տե՛ս ԱՍՊԱՏԱԿ

ԱՍՊԱՏԱԿ ՍՓՌԵԼ - Տե՛ս ԱՍՊԱՏԱԿ

ԱՍՊԱՏԱԿ ՏՈՒԵԱԼ - Տե՛ս ԱՍՊԱՏԱԿ

ԱՍՊԱՐ - 1

զինու և *ասպարաւ* քո օգնեա մեզ (114 / 13)

ԱՍՊԱՐԱԽԻՏ - 1

ասպարախիտ շարժմամբք յառաջ խաղացեալ նախաձեռն լինէին՝ հարկանել զզօրն Պարսից: (174 / 11)

ԱՍՊԱՐԱՓԱԿ - 1

որք զդուռն նորա պահէին. շուրջանակի *ասպարափակ,* նիզակախիտ զգուշութեամբ: (160 / 11)

ԱՍՊԱՐԷԶ - 2

Իսկ սուրբ Սիօնի եկեղեցին միով *ասպարիզաւ* բացագոյն ի Յարութենէն (283 / 13) և անտի յարևելից կուսէ ըստ Յորդանանու կողմանէ երեք *ասպարիզօք* հեռի ի Բեթղեհեմէ հովանոցն (285 / 1)

ԱՍՊԵՏ - 1

հանդիպի նմա հակառակել Սմբատայ *ասպետի* Հայոց երկաբնակի առն. (321 / 2)

ԱՍՊՆՋԱԿԱՆ - 1

օր ըստ օրէ պայծառանայր սիրովն Քրիստոսի՝ *ասպնջական* ցանկալի սուրբ հաւատոցն լինելով. (249 / 6)

ԱՍՏ - 13

Աստ կատարին սահմանք Յաբեթի մինչև ցկղզիսն Բրիտանիկեցւոց: (6 / 2) *Աստ* բարձաւ թագաւորութիւնն յԱրշակունեաց (7 /11) *Աստ* սկիզբն առնու նախագահութեան Աղուանից. (8 / 3) Եթէ զԳրիգորիս խնդրէք, *աստ* է» (71 / 6) «Կողքս և զստկունքս *աստ* են, ի ձեզ առէք»: (71 / 11) «Օրհնեալ արք, յորժամ դուք *աստ* էք, ընդէ՞ր ոչ ցուցանէք զտեղի նշխարաց սրբոյն Գրիգորիսի. զի ոմանք ասեն, եթէ *աստ* է, և ոմանք եթէ անդ. (78 /8; 78 /9) Թողու *աստ* վերակացու զաշակերտն իւր Յովնաթան (117 /17) *Աստ* իմն դարձեալ խաղաղութեամբ գայ ի տեղի իւր բարգաւաճեալ սրտիւ: (191 / 10) այսպէս և ի վերջնումն *աստ* յոգնաբաստիկ իշխանիս մերոյ տեսաք օրհնիչ: (199 /16) Քև զսնոտութիւն նորին նոր ուսեալ, Թէ չունի երբեք ումեք *աստ* մնալ: (230 / 15) Եւ որպէս զառաջինն աթոռ իշխանութեանն իւրեանց արկին ի Դամասկոս Ասորոստանեայց, նոյնպէս *աստ* յԱղուանս նստուցին ի Պարտաւ կալ արքունեացն (325 / 4) *Աստ* իմն հնարեալ նաւորդացն… յօշեն զնա ի տտնոյն կողմանէ սրով մինչև սատակիլ նմա (329 / 18)

ԱՍՏԱՆՕՐ - 7

Աստանօր յայտարարութիւն սահմանացն Յաբեթի (4 /3) Աստանօր հրամայէր թագաւորն տալ մասն իւրաքանչիւրում եպիսկոպոսաց՝ առ ի բաշխել վիճակելոց իւրեանց. (82 / 17) Յիշեցաք աստանօր զՇապհոյ՝ Պարսից արքայի Որմզդեան (106 /8) ՈՐ ԻՆՉ Ի ԹԱԳԱՒՈՐԷՆ ՀԱՐԱՒՈՅ ՄԵԾԱՐԱՆՔ ԱՐԵԻԵԼԻՑ ԻՇԽԱՆԻՆ ԵՂԵՒ, ԱՍՏԱՆՕՐ ԳՏՑԵՍ (192 / 7) Աստանօր և արդ զի՞նչ ասացից և կամ զո՞ր խօսեցայց (200 / 12) Աստանօր աղմկեալ կրկին ժողով լինի. (267 / 11) ՎԱՍՆ ՈՐ Ի ՍՈՒՐԲՆ ԵՐՈՒՍԱՂԷՄ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՇԻՆՈՒԱԾՔ ԹՈՒՈՎ ԵԻ ՉԱՓՈՎ ՀԻՄՆԱԴՐԵԼՈՎ. ԵԻ ԶՍՏՈՅԳՆ ԳՏՑԵՍ ԱՍՏԱՆՕՐ (283 / 3)

ԱՍՏԵՂԱԲԼՈՒՐ - 1

զանուն տեղւոյն Աստեղաբլուր անուանեցին մինչև ցայսօր: (102 / 12)

ԱՍՏԵՂԱՆՄԱՆ - 1

Եւ հարուստ ժամանակաւ լոյս աստեղանման ծագեալ ի տեղւոջն՝ փարէր ի վերայ սրբոցն նահատակացն (102 / 11)

ԱՍՏԵՂՆ ԲԼՈՒՐ - Տե՛ս ԱՍՏՂ

ԱՍՏԷՆ - 4

զհարիւրապատիկն աստէն ընկալցի (25 / 9) և ես աստէն վախճանեցայ: (60 / 3) Զի աստէն իսկ յԱղուանից աշխարհիս ի բազում տեղիս երևեալ են նշխարք սրբոց. (204 / 6) սա էր Դունայ եպիսկոպոս Հայոց և առանց կամաց կաթողիկոսին Գէորգայ գայ յԱղուանս և աստէն ձեռնադրի (346 / 8)

ԱՍՏԻ - 6

յափշտակեալ զբազում ինչս յաշխարհէս աստի՝ զերծաւ գնաց անկաւ ի կողմանս Պարսից: (154 / 12) Եւ յարուցեալք աստի անտի գոչէին ի վերայ նոցա. (168 /20) և դրունք բանային, և զինուորքն մտեալ՝ ունէին զզէնս իւրեանց աստի անտի շուրջ զնովաւ պարախմբեալք: (183 / 6) որք երկաքանչիւր աստի և անտի միջաւորեալ ունէին յինքեանս զկոչարանն սուրբ (215 / 7) իսկ եթէ ոք ընդդիմացեալ թիւրեսցի ի ճշմարտութենէ աստի, ինքն տացէ Աստուծոյ պատասխանի (302 / 12) Ստեփաննոս հերձուածող եկեալ աստի՝ բնակի առ այս անուն միայնակեցի: (321 / 5)

ԱՍՏԻ ԱՆՏԻ - Տե՛ս ԱՍՏԻ

ԱՍՏԻ ԵԻ ԱՆՏԻ - Տե՛ս ԱՍՏԻ

ԱՍՏԻՃԱՆ - 2

և անտի ցվայր երկուհարիւր և յիսուն քարեայ աստիճանք մինչև ցսուրբ գերեզման կուսին, որ ի ձորն Գեթսեմանի. և անտի մինչև ի լեառն Ձիթենեաց, ուստի վերացաւ Քրիստոս, ութ հարիւր աստիճանք: (284 / 7; 284 / 9)

ԱՍՏՂ - 6

Վարէր զկառս զԱրէսի ի մէջ աստեղացն (229 /2) Եւ ի կիրճս ճանապարհին երկաջոկեալ գունդն յերկուս բաժանելով նստէին գուպարս յայնմ տեղւոջ, որում Աստեղն կոչեն քլուք (99 / 1) Ամենեցուն տեսեալ զել և զէջ սուրբ շնորհացն ի վերայ ամենասուրբ խաչին, երբեմն ի նմանութիւն հրոյ,

երբեմն ի նմանութիւն լուսոյ, երբեմն ի տեսիլ *աստեղն,* որ ծագէ յառաւօտուն (216 / 14) ուր ցրեալ պատառած հանդերձի նորա սփիռ և տարած ընդ երեսս անտառին փայլէին իբրև *աստեղս:* (102 / 10) Եւ յետ այնորիկ ոչ արև և ոչ *աստեղք* ի բազում աւուրս երևէին. (239 / 12) Որքան պայծառ են երկինք *աստեղօք* և երկիրս բուսովք (106 / 5)

ԱՍՏՈՒԱԾ - 301

Այլ յոր ժամանակս այց արար *Աստուած* ազգի մարդկան (14 / 7) վաղվաղակի դառնալ սոցա ի բազում շաւղաց մոլար ճանապարհին առ մի ճշմարիտ *Աստուած:* (18 /17) Եւ ապա ամենազօրն *Աստուած* յայց ելանէր երանելւոյն Գրիգորիոսի (33 / 11) այց արար ամենողորմն *Աստուած* հեղման արեան սրբոց վկայիցն Քրիստոսի և աւերածոյ սրբոյ եկեղեցւոյ (43 / 9) յայտնապէս իսկ բերել ի խոստովանութիւն՝ զՔրիստոս *Աստուած* ճշմարիտ գոլ: (48 / 7) և մաղթէր բազում աղաչանօք զեպիսկոպոսսն և զերիցունս և զանապատականս և զամենայն ուխտ եկեղեցւոյ՝ ցաւակից և աղօթակից լինել իւր առ ի հաշտեցուցանել զամենողորմ *Աստուած:* (48 / 16) Եւ դարձեալ՝ այլ ոմն յաշակերտացն տեառն թերահաւատեալ և յետոյ տէր և *Աստուած* խոստովանեալ՝ կալաւ զկարգ առաքելութեանն. (49 / 2) Եւ այլոց ևս բազմաց և բազում աշխարհաց բժիշկ լինել դարձի առ բոլորեցունսն *Աստուած* Յիսուս Քրիստոս (49 / 7) որ դառնայ առ *Աստուած* յամենայն սրտէ (49 / 13) Եւ մինչդեռ յայսմ խնդրի էր, մարդասէրն *Աստուած* կամեցաւ յայտնել սմա ի ձեռն աստուածասէր արքային բառնալ զչար աղանդն յաշխարհէ: (51 / 14) և հրամայէր ուխտի եկեղեցւոյն պահել և պաշտօն առնել առ *Աստուած* խնդրուածովք (52 / 13) ինքն թագաւորն …ի հետիոտս ելանէր ընդառաջ բազում պաշտօնէիւք … և՛ անթիւ ժողովոց բազմութեամբ՝ օրհնեալ և փառաւորեալ հոգևոր երգովք ի ձեռն առաքինասէր նահատակացն Քրիստոսի. զՅիսուս Քրիստոս՝ զճշմարիտն *Աստուած:*(61/3) և մարդասէրն *Աստուած* ՝այս է մատակարար բարեաց, լուեալ աղօթից նորա՝ շնորհէր նմա զաւակ արու: (63 / 8) առնել խնդրուածս առ մարդասէրն *Աստուած* առ ի շնորհել մեզ զնշխարիս երանելւոյն Գրիգորիսի. (66 / 7) տայ ինձ *Աստուած* ի ձեռն մեծիս Գրիգորի զամենասուրբ նշխարս սրբոյն Գրիգորիսի»: (68 / 8) Եւ դասք եպիսկոպոսաց… երթային ի չորեցունց կողմանց դեսպակի սրբոցն սաղմոսելով և բարեբանելով զմիածինն *Աստուած* ՝խնդրելով զամենեցուն ցանկալին՝ զսուրբ նշխարս սրբոյն Գրիգորիսի: (69 / 12) պահք և աղօթք և խնդրուածք յամենայն ժողովելոցն լինէին առ մարդասէրն *Աստուած:* (70 / 17) յոյժ բազում աղաչանօք՝ ծածուկ սրտիւ հայցէր զառատատուրն *Աստուած:* (72 / 15) Եւ ցայգն բոլոր ամենայն բազմութիւն ժողովելոցն անդադար խնդրուածս և պաղատանս մատուցանէին առ *Աստուած* (79 / 12) Այսպէս փառաւորէ *Աստուած* զսուրբս իւր: (86 /12) *«Աստուած,* ասէ, կենդանեաց եմ ես և ոչ մեռելոց. (87 /11) և վաղվաղակի ընդունի *Աստուած* զխնդիրս նոցա (88 / 12) Այլ *Աստուած* …ընդունիչ է պատարագաց և կատարիչ ուխտից: (88 / 17) Եւ տէր *Աստուած* մեր գթացեալ յայրին՝ յարոյց զմիամօր որդի նորա. (89 / 3) Եւ համբարձեալ զձեռս իւր առ *Աստուած* ՝բարբառէր

ասելով. (101 / 11) զի և սոքա ծանիցեն զքեզ, միայն ճշմարիտդ *Աստուած»:* (101 / 15) ՀԱՒԱՏԱԼՆ ՄԵԾԻ ՋՕՐԱՎԱՐԻՆ ԹՈՓԵԼԵԱՆ Ի ՔՐԻՍՏՈՍ, ԵԹԷ ՆԱ Է *ԱՍՏՈՒԱԾ* (103 /2) անտրտում ուրախութեամբ, գոհութեամբ առ *Աստուած* և նորին յուսովն հասանէր յերկիրն Հայոց յաւուրս երեսուն: (116 /18) որոց բարեխօսութեամբ միշտ գթասցի *Աստուած* Աղուանից աշխարհիս և Հայաստանեայց երկրին: (120 /1) Այսպէս արտահայտեաց *Աստուած* սրբական ծառայից իւրոց ճրագ (121 /13) Որոց ի յայտնելն արար *Աստուած* ողորմութիւն աշխարհիս Աղուանից (121 /14) Խոստովանիմք զմի *Աստուած* հայր ամենակալ՝ զարարողն ամենայնի և զմի տէր Յիսուս Քրիստոս՝ որդի Աստուծոյ, ծնեալ ի հօրէ, *Աստուած* ճշմարիտ յԱստուծոյ ճշմարտէ, որով ամենայն: (123 /14; 123 /15) Իսկ ի վախճան յաւիտենից *Աստուած* գոլով մշտնջենաւոր բանն Աստուծոյ՝ եղև մարդ կատարեալ անյեղապէս, մարմնացեալ անճառապէս ի սուրբ կուսէն, ոչ հեռացեալ ի բնութենէն, և ոչ քայքայեալ ի մարմնաւորութիւն, այլ եկաց մնաց որ էրն. նոյն անփոփոխելի *Աստուած* մարմնացեալ ոչ մասամբ, այլ բոլորովիմբ. ոչ երկուութիւն, այլ միութիւն անբաժանելի. ոչ հայր մարմնազգեաց, այլ որդի. ոչ սուրբ հոգին մարմնացեալ թանձրաձև, այլ միածինն ի հօրէ. բայց կամաւ և հօր զօրութեամբ և սուրբ հոգւոյն. այլ գոյութեամբ միայն բանն *Աստուած*: (124 / 3; 124 / 6; 124 / 9) «Սուրբ *Աստուած,* սուրբ և հզօր, սուրբ և անմահ, որ խաչեցար վասն մեր, ողորմեա՛ մեզ»: (125 /1) և եթէ սուրբ կոյսն ոչ ծնաւ *Աստուած,* այլ՝ մարդ սոսկ ըստ մեզ և լոկ տաճար բանին Աստուծոյ: (125 / 6) զխորհեցողն այսպէս՝ նզովէ *Աստուած* (125 /10) այց արար *Աստուած* յանդիմանել զսէգ թագաւորն Պարսից՝ զմեծն Խոսրով (128 /14) Արդ՝ եթէ երկայնամտեսցէ մարդասէրն *Աստուած,* մի՛ յապաղեր որպէս հովիւ քաջ դնել զանձն քո ի վերայ մեր. (158 / 11) Եւ կարդային զանուն կաթողիկոսին ըստ անուանն արքայորդւոյն իւրեանց *Աստուած* Շաթ և *Աստուած* կաթողիկոս և զանուանս երթելոցն ընդ նմա՝ սիրելի եղբայր: (162 /4; 162 /5) Եւ մեծացաւ անուն նորա ի մէջ բազմութեան թշնամեացն մինչև յօրն, յորում այց արար *Աստուած* ի ձեռաց նոցա ժողովրդեան իւրում ի փրկութիւն: (163 / 17) Զորս ողբալ ի սուգ առի աւուրս բազումս ի վերայ անթիւ խայտամահացն՝ աղաչելով զամենողորմն *Աստուած* (166 /1) Ապա իբրև ետ *Աստուած* կատարել զամենայն կամս իւր, յիշեաց իբրև զՆոյ ի ջուրցն հեղեղէ ի տապանի անդ: (166 / 6) Ընկալաք զգիր ողջունի, որ եցոյց մեզ զառ *Աստուած* բարեպաշտութեան քո սէր (182 /12) Արդ՝ որպէս տէր *Աստուած* երևեցուցանէ և յայտնէ զխորհուրդ ձեզ ի տեղւոջն, օր ըստ օրէ և մեզ ուսուսջիք»: (204 / 16) ԹԷ ՈՐՊԷՍ ԵՅՈՅՅ *ԱՍՏՈՒԱԾ* ՋՄԵԾ ՍՔԱՆՉԵԼԻՍՆ (208 /7) Եւ տէր *Աստուած* զօրութեամբ և փառօք զձեզ պահպանեսցէ ի շնորհս աստուածընկալ խաչիս երևման (210 / 14) «Զնախահրաւէր կոչեցեալսն արդարացոյց *Աստուած* (214 / 12) Առեալ զնշան խաչին պարծանաց յանձն իւր բազկատարած պաղատանս առ *Աստուած* մատուցանելով վասն իւրոյ աշխարհին: (235 /9) Նոյնպէս սկայի ումեմն վայրագի անճոռնւոյ ձիախորով զոհիւք պաշտօն մատուցանէին՝ կարդալով նմա Թանգրի խան *Աստուած* (241 /4) «Որդեակք, դարձարու՛ք առ տէր և ծներ ու՛ք զտէր *Աստուած* (242 /13) Այլ

զգիտութեան և զանգիտութեան մեղս ձեր մի՛ յիշեսցէ *Աստուած* (242 /18) ած ի վերայ նոցա *Աստուած* զանձրևասաստ պատիժն (245 /2) Նոյնպէս և եթերացայտ կայծականց, որ ի ձայնից որոտմանց փայլատակէ, *Աստուած* կարդացեալ՝ փրկիչ անուանէք: (246 / 10) Արդ՝ դուք ծաներուիք և տեսէիք, եթէ տէր *Աստուած,* որ նա միայն է ինքնութեամբ, և յառաջ քան զնա չիք ոք. (247 / 2) Եւ որդին միածին *Աստուած,* որ ի հօրէ ծնեալ, և հոգին սուրբ, որ ի նոցունց յէութենէ, որով և աշխարհ եղև: (247/4) Յայնժամ հրամայէր եպիսկոպոսն քահանայիցն առնուլ փայտատ ի ձեռն, դնել ծունր և աղօթել՝ կարդալով առ *Աստուած* զսաղմոսս զայս. «Յարիցէ *Աստուած,* և ցրուեսցին ամենայն թշնամիք նորա. (255 / 4; 255 /4) «Ահա զխոստմունս սիրոյ քո, զոր ունիս առ *Աստուած* (258 / 12) որ բանիւք և գործովք կշտամբեալ յանդիմանեաց զանօրէնութիւնս մեր և ետ մեզ ճանաչել զամենաստեղծն *Աստուած* (259 / 18) Եւ ահա հաւատացաք ի մի *Աստուած* արարիչ երկնի և երկրի: (260 / 2) զիա՞րդ մարթացից թողուլ զիօտն իմ, զոր *Աստուած* շնորհեաց ինձ հովուել: (261 / 5) «Թոյլ տուք այժմ, մինչև շնորհեսցէ ինձ *Աստուած* երթալ յաշխարհն իմ առ բարեպաշտ որդեակն իմ Վարազ Տրդատ՝ իշխանին Աղուանից (261 / 9) կատարեսցէ *Աստուած* զբանդ զայդ: (261 / 11) Իսկ զեկեալ փրկութիւնն աշխարհի, զվերինն *Աստուած,* յերկիր եկեալ զՔրիստոս ի լուր ականջաց լուաք իբրև ընդաղօտ: (263 / 8) զոր ինչ արար *Աստուած* ի ձեռն նորա յաշխարհին Հոնաց (264 / 5) որպէս և զամենայն աշխարհս առաւել փառաւորեցաք զմարդասէրն *Աստուած* (264 / 17)
կարգաւորեաց *Աստուած* զեկեղեցի ինն դասուք. (272 / 7) ի ձեռն տեառն Հիսուսի Քրիստոսի և սիրով հոգւոյն պատերազմակից լինել ինձ յաղօթս առ *Աստուած:* (278 / 9) Եթէ *Աստուած* է տէր Հիսուս Քրիստոս և սուրբ հոգին»: (278 / 9) զնոյն հաւատն ունող և զաւակ բարեխօս առ Քրիստոս *Աստուած* վասն մեզ ժառանգակից նմա լինել. (279 / 1) ապա զնա *Աստուած* յաւել առ հարս իւր: (280 / 14) որոց բարեխօսութեամբն տէր *Աստուած* աշխարհի ողորմեսցի: (282/16) *Աստուած* հրամայեաց թողուլ զկին քո: (289/8) «*Աստուած* հրամայեաց առնուլ զկին քո առ քեզ»: (289 / 12) զոր առ *Աստուած* կամեցան մեղանչել»: (296 /4) Եւ ի հասանել փորձանացս՝ հասոյց *Աստուած* զօգնութիւն իւր ի ձեռն փոխանորդիդ սրբոյն Գրիգորի (300 /18) այլ կալ ձեզ յեկեղեցիս ձեր և հանապազ անդադար աղօթս մատուցանել առ *Աստուած.* ի ձեր վերայ իշխան *Աստուած* լիցի և ուղղափառ վարդապետք: (303 /16; 303 /17) Զի կամեցաւ գթալ ի մեզ քաղցրութեամբն իւրով բարերար և մարդասէր ամենակալն *Աստուած* ըստ մեծի ողորմութեանն իւրում (305 / 15) այլ արարիչն և հաստիչն ամենայնի *Աստուած* կարգեաց զմեզ յայս տեղի (306 / 15) զի հաշտեսցի ընդ մեզ մարդասէրն *Աստուած* և ողորմեալ փրկեսցէ զմեզ յամենայն նեղութեանց: (310 /14) և կանգնեցին նշան տէրունական, յորում կայ գիր այսպէս. «Քրիստոս *Աստուած,* յիշեա զկամաւոր չարչարանս քո ի վերայ սորա, որ վասն մերոյ փրկութեան. (313 /3) քանզի երևեցաւ *Աստուած* մարդ ծննդեամբ»: (316 / 1) Եւ թէպէտ կրեցին Հայաստանեայքն զհարուածն զայն, սակայն ոչ եթող

տէր *Աստուած* Մահմետի զվրէժն զայն. (318 / 12) Իսկ եղբայրն Միրդազատ ոչ ժուժեալ տանջանացն առաջի բազմամբոխ ժողովոյն ուրացաւ զՔրիստոս *Աստուած.* (319 / 15)
մաղթանս առ *Աստուած* մատուցանէր: (325 / 12) Եւ Վարազ Տրդատայ՝ Վարազմանայ որդւոյ, *Աստուած* շնորհեաց կեանս. (325 / 16) Եւ նոյն ինքն Համամ սակս առ *Աստուած* մեծապէս յանցանացն, որ վասն սնոտի այս կենացս զպարտ արեան եղբօրն ժողովեալ յանձին իւրում մեծագոյն բարեգործութիւնս առ եկեղեցիս և առ ամենայն կարօտեալս և չքաւորս առատազուարթ անսպառ կատարէր (335 / 19) Զորոյ վրէժն միայն *Աստուած* խնդրեաց զսպանմանն Սմբատայ (337 / 11) «Ո՞վ ես դու. տէր *Աստուած* յայտնեաց զաշխարհակործան քո ամբարշտութիւնդ. (339 /13) Եւ առ սա գրեցին ի ժողովոյն Դունայ՝ ասել մի բնութիւն աստուածութեան և մարդկութեան, և յաւելուլ ի սուրբ *Աստուածդ*՝ «անմահ և խաչեցար»: (343 / 4) Քո գործդ *Աստուածոյ* նմանի: (25 / 14) Իսկ իբրև *Աստուածոյ* յաջողեալ էր ի ձեռն թագաւորին … բառնալ զչար աղանդն յաշխարհէս (53 / 7) և ապստամբեալ քո յինէն քոյովք զօրականօքդ՝ պաշտօն մատուցանէք *աստուածոց* մերոց (104 /6) քանզի կրակաց և ջրոց զոհէին և ճանապարհաց *աստուածոց* ոմանց, երկիր պագանէին լուսնի և ամենայն արարածոց, որ ինչ թուէր յաչս նոցա զարմանալի: (241 / 13) *աստուածոց* նմանեցուցեալ զինքն Նէբրովթայ՝ ամբարտաւանեալ հպարտանայր (245 / 15) համարէին զնա *աստուածոց* փրկիչ և կեցուցիչ և տուող ամենայն բարեաց: (250 / 9) և տայք դմա զիշխանութիւնդ զայդ հանել, աւերել, քակտել զմեհեանս *աստուածոց* ձերոց: (251 / 4) Եւ արդ՝ դա կարէ՞ հպել, մօտել և կտրել զդա, և կամ աւերել զմեհեանսն *աստուածոց* մերոց: (252 / 7) «Այս են ընծայք *աստուածոցդ* Ղիոնի»: (323 / 11) Ցայնժամ հրաման տայր դիւցազնային մոլորութեամբն ձօնել նուէրս զոհից մեհենազարդ խնճոյիւք *աստուածոցն* իւրոց: (103 / 13) զոր հակառակորդն մեր և թշնամի *աստուածոցն* մերոց ասէ ընդ ձեզ հատանել զծառն զայն: (250/15) փոխանակ այնորիկ եղև այդ առ ձեզ յանդիմանութիւն ի մեծէ *աստուածոցն* մերոց: (253 / 15) ընդէ՞ր դու թողեր զքաջատոհմիկ *աստուածս* ազգի քո (104 / 5) սակայն զբնական *աստուածսն* ձեր … ոչ է պարտ ձեզ թողուլ և ուրանալ և ի բաց ընկենուլ (251 /13) *«Աստուածք* իմ, դատ արարէ՛ք ընդ իս և ընդ թագաւորն իմ անողորմ»: (144 /19) Որով յայտ իսկ է, եթէ ոչ են *աստուածք,* այլ արարածք արարչին Աստուծոյ: (246 /15) մեծ են *աստուածքդ* Ղիոնի (323 /5) *«աստուածքն,* որ զերկինս և ոչ զերկիր ոչ արարին, կորիցեն յերկրէ»: (247 / 1) ԳԻՏՈՒԹԻՒՆ ԵՐԵՒՄԱՆ *ԱՍՏՈՒԾՈՅ* ՄԵՐՈՅ ՄԵՐՈՅՍ ԱՐԵԻԵԼԻՑՍ. (9 /12) որ այժմ կոչի Ջրվշտիկ ի փառս տեառն *Աստուծոյ* ամենակալի: (12 / 3) Առ զայն ի թագաւորէն և նստաւ ի նմա միայնակեցօք հանդերձ. և այնպէս անզբաղապէս կեայր ըստ *Աստուծոյ:* (17 / 16) Լի երկնաւոր շնորհօքն *Աստուծոյ,* ողջոյն: (17 / 20) լուաւ զմեծամեծ սքանչելիսն *Աստուծոյ* (18 / 14) Քաջալերէր զնա սուրբն Գրիգորիոս ի գալուստ մարմնաւորութեան որդւոյն *Աստուծոյ* (19 / 11) զերրորդութիւնն *Աստուծոյ* յերկնից յերկիր ածեր քեզ յօգնականութիւն:

(22 / 6) նիզակ քո նիզակ Յեսուայ, և սպառազինութիւնք քո սպառազինութիւնք սպարապետին *Աստուծոյ.* ձայն փողոյ քոյ իբրև զձայն հրեշտակապետին *Աստուծոյ,* որ իջանէ ընդ նմա յաւուրն յարութեան: (22/11; 22/12) Այս *Աստուծոյ* միայն է (22 / 15) եթէ նետ ի կորովից քոց թռչէր ուղղակի, ընդ նմին և աղօթք սուրբք խնդրուածաց քոց վաղվաղակի գեր ի վերոյ գտանէին, քան զերկինս առաջի *Աստուծոյ:* (23 / 7) Ապա եթէ արասցէ ոք, որպէս և արարերդ, մարդկան անհաւատալի, հրեշտակաց զարմանալի, *Աստուծոյ* նմանելի (25 / 12) Եւ այս լինէր նախախնամութեամբ մեծին *Աստուծոյ* յօրինակ նախամարգարէին Մովսեսի, որ ի պրտուեայ տապանակին ի մէջ ջուրցն զերծանէր ի ձեռաց ամպարիշտն փարաւոնի՝ առ ի փրկել զժողովուրդն *Աստուծոյ* ի ծառայութենէ եգիպտական տանջանացն: (32 / 5; 32 / 7) երևէր ի տեսլեան գիշերոյ հրեշտակ ողորմութեան *Աստուծոյ* կնոջ ումեմն Խոսրովիդուխտ անուն՝ քեռ Տրդատայ՝ Հայոց արքայի. (33 / 21) չոգան ի բերան վիրապին թերահաւատքն՝ կաղս ի կաղս բարբառեալ բանիւն *Աստուծոյ.* (34 / 2) որոյ ծունր եղեալ մեծին սրբոյն Գրիգորի՝ արտասուօք խնդրէր յամենողորմէն *Աստուծոյ* զփրկութիւն թշուառացեալ ազգին. (34 / 8) Հրեշտակ *Աստուծոյ* եկեալ առ մեծն Գրիգորիոս՝ ասէ ցնա. (35 / 1) Եւ եկեալ ի Հաբանդ գաւառ՝ ուսուցանէր և խրատէր պահել զպատուիրանս Որդւոյն *Աստուծոյ.* (35 / 6) ի դիւաց պինդ կապեալ կաշկանդեալք եղեն հրամանաւ բարերարին *Աստուծոյ* (35 /16) Եւ քարոզէր զանճառելի երրորդութեանն զմի արարչական զօրութիւնն և զմարմնանալն *Աստուծոյ* բանին (38 / 4) քանզի նա ի քարոզութեանն ասէր զկամս բարերարին *Աստուծոյ* ՝ո՛չ աւարել և ո՛չ յափշտակել և ո՛չ գողանալ, այլ վաստակել ձեռօք և վայելել մարդաբար և երանելի լինել *Աստուծոյ:* (38/10; 38/12) քանզի սկայաբար հրամանաւն *Աստուծոյ* եկեալ Հեփթաղական ազգն յագեցուցանել զսրտմտութիւն բարկութեան տեառն: (44 / 19) Յայնժամ լցաւ եկեղեցի *Աստուծոյ* երանութեամբ (45 /12) նա մեծ կոչեսցի յարքայութեանն *Աստուծոյ:* (46 / 6) և արժանաւորս առնէր ճաշակման կենդանացուցիչ մարմնոյ և արեան որդւոյն *Աստուծոյ:* (47/6) Եւ դարձեալ նախախնամութեամբ մեծին *Աստուծոյ* ազդեալ ի միտս թագաւորին՝ հրաման տայր Վաղարշակ արքայն պարսից (48 / 9) բազում խնդալից բերկրանօք դիմեալ յեկեղեցի *Աստուծոյ,* բազում աղօթիւք և արտասուօք խոստովանէր զմշտնջենաւոր և զանճառ սուրբ երրորդութիւնն. (48 / 13) Յայնժամ բաւական և առատաբաշխն ողորմածին *Աստուծոյ* հայեցեալ յառնն ամենաբաւ բարուցն վայելչութիւն (55 / 11) որ միշտ հակառակ կայր եկեղեցւոյ *Աստուծոյ* (56 / 10) որպէս առն *Աստուծոյ* առնէր ընդունելութիւն: (57 / 15) Իսկ աստուածասէր թագաւորին յոյժ ցնծալից ուրախութեամբ զուարճացեալ՝ կանխէր յաղօթս և ի բարեբանութիւն մեծին *Աստուծոյ.* գոհանայր զմեծագոյն տուելոյն զպարգևս: (60 / 9) Եւ ինքն թագաւորն հանդերձ թագուհեաւն և բոլոր բանակօքն կանխէր զցայգ և զցերեկ յաղօթս *Աստուծոյ* (63 / 5) հրամայէր սնուցանել զմանուկն ընդ երկիւղիւն *Աստուծոյ* (63 / 12) և բազում աղաչանօք խնդրել յամենողորմէն *Աստուծոյ* ՝յիշեցեալ զտէրունեան զբանն, որ ասէ. «զբարի հայցումն վաղվաղակի առնուլ յառատատուրն *Աստուծոյ»:* (65/15; 65/16) Եւ

զինգեսեան զամենասուրբ վկայսն Քրիստոսի … առեալ ի բարեխօսութիւն մեծին և բոլորեցուն *Աստուծոյ* առ ի շնորհելոյ ի ձեռն նոցա զինքեան փափագելին: (69 / 1) Իսկ դրան երիցունքն արքունի յոյժ ջերմագոյն պահէին և խնդրէին ի բարերարէն *Աստուծոյ*: (69 / 16) Եւ ապա ողորմութեամբն *Աստուծոյ* յարևելս կոյս արարեալ զբրածն՝ գտին զամենասուրբ նշխարս երանելւոյն ըստ եկեալ ձայնի հնչմանն: (70 / 12) «Անսխալ լինի բան ամենակեցոյցն *Աստուծոյ*՝ (80 / 14) Իսկ այսչափ բազմութիւն ժողովելոցս յամենասուրբ անուն բոլորեցուն *Աստուծոյ*՝ հաստատեալ գիտեմ (80 / 16) Եւ իսկոյն հասեալ նմա պատուհաս *Աստուծոյ,* զգետնեալ յերկրի, դառնայր երեսքն յետս (82 / 11) Եւ այնուհետև ոտանաւոր տքնութեամբ անձնապաշտ լեալ արքայն եպիսկոպոսքն հանդերձ ամենեքումբք ցնծալից ուրախութեամբ պաշտէր զհամայնաժողովսն ի ձայն քաղցր, երգս սաղմոսացն յորդագոյնս ի բարեբանութիւնս *Աստուծոյ:* (83 / 5) Եւ քրիստոսաժողով բանակին աւարամասն առեալ զողորմութեանցն *Աստուծոյ*՝ զբերումն անճառաբար ստանային ի /գրքում՝ և/ ձեռն քրիստոսազգեստ արքային՝ Վաչագանայ (83 / 12) և երկասիրութեամբ հմտացեալ հպատակէր պատուիրանացն *Աստուծոյ:* (85 / 6) արդ եկեալ Մովսէս չքնաղազգեստն փառօք առաջի *Աստուծոյ. .* (87 / 8) Եւ մեզ ուսոյց ճշմարիտ հաւատն՝ իջումն *Աստուծոյ* ի դժոխս ի փրկել զնոսա (88 / 8) նոքօք հայցեն զողորմութիւն յառատատուրն *Աստուծոյ* (88 / 11) և անտի անառ, ծածուկ լեալ օր ըստ օրէ հաստատէր զեկեղեցիսն *Աստուծոյ:* (96 / 6) մեծին *Աստուծոյ* է այն նշանն (96 / 17) Եւ նախ անդ եդեալ հիմունս՝ հաստատէին եկեղեցի *Աստուծոյ* ի կայարանի խաչին (97 / 5) և բազում նշխարօք յամենայն սրբութեանցն *Աստուծոյ.* յարազուարճ ցնծութեամբ հրաժարեալք՝ քահանայիքն հանդերձ ուղևորեալ գնային: (98 / 17) և նոքա պատարագս *Աստուծոյ* ըստ կարգի քրիստոսական կրօնից ի ձեռն օրհնութեան քահանայիցն սրբոց խաչազարդ յօրինէին զնշանս դրոշիցն իւրեանց: (103 / 15) որք վասն անուանն *Աստուծոյ* ցրուեալք և վատնեալք էին յամուրս լերանց Կապկոհի (116 / 2) Եւ ես Վեհիկ հիացեալ կայի ընդ միտս իմ՝ մինչև ցեօթն անգամ խնդրելով յամենողորմէն *Աստուծոյ* և ի սուրբ վկայիցս՝ ստուգութեամբ և ճշմարտապէս ցուցանել զկորհուրդ տեսլեանն: (120 / 16) ետ փառս *Աստուծոյ* կենդանւոյ բազմապատիկ գոհութեամբ. (121 / 3) Եւ նոյնժամայն մեծապէս օրհնաբանութիւն *Աստուծոյ* և գովեստ սրբոցն տուեալ ժողովոյն՝ ամփոփեցին զնշխարսն ի պատուական ինչ տեղարանս՝ յիւրաքանչիւրոցն առեալ մասն: (121 / 16) որոց ձայնակիցք և ժառանգորդք եղաք ուղղափառ նոցա հաւատոյն, այսինքն ամենայն եկեղեցիք Քրիստոսի *Աստուծոյ:* (123 /13) Խոստովանիմք զմի Աստուած հայր ամենակալ՝ զարարողն ամենայնի և զմի տէր Յիսուս Քրիստոս՝ որդի *Աստուծոյ* (123 /15) Իսկ ի վախճան յաւիտենից Աստուած գոլով մշտնջենաւոր բանն *Աստուծոյ*՝ եղև մարդ կատարեալ անյեղապէս (124 / 3) որ լրբաբար յանդգնեցան ասել երկու բնութիւնս և երկու դէմս ի վերայ միոյ Քրիստոսի *Աստուծոյ,* և եթէ սուրբ կոյսն ոչ ծնաւ Աստուած, այլ՝ մարդ սոսկ ըստ մեզ և լոկ տաճար բանին *Աստուծոյ:* (125 / 6; 125 /7) այլ ի վերայ բարւոյ գիւտի ձերոյ եղիցի ուրախութիւն հրեշտակաց յերկինս

և մեզ՝ յերկրի, ծառայիցս և երկրպագուացս Քրիստոսի *Աստուծոյ* մերոյ. (126 / 2) որ ի ներելն *Աստուծոյ* զօրացաւ սուտ վարդապետութիւն նոցա (126 /9) որով զթշնամիս մեր պարտեաց հզօր և մարդասէր աջն *Աստուծոյ* (128 / 6) յանկարծակի ազդ արարեալ կայսերն ամենայն զօրավարաց և զօրագլխաց իւրոց զյաջողելն *Աստուծոյ* առաջի նորա (130 / 9) Եւ ի խնամակալութենէն *Աստուծոյ* ոչ ևս յաւելին պնդել զհետ բազմութեան փախստէից: (137 /12) ՅԱՂԱԳՍ ՎԻՐՈՅԻ ԱՇԽԱՐՀԱԿԱԼ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆՆ ԱՂՈՒԱՆԻՑ ԵՒ ՄԵԾԱՄԵԾ ՎՇՏԱԿՐՈՒԹԵԱՆՆ ԵՒ *ԱՍՏՈՒԾՈՅ* ԽՆԱՄՈՑՆ (149 / 14) «Հայր իմ ես դու, և տեսիլ քո իբրև զտեսիլ *Աստուծոյ.* (161 / 5) Եւ թոյլ տուեալ ըստ կամաց ծառայիցն *Աստուծոյ* ՝բարձին զմիսն և բերին եդին հացս սակաւս անօսրունս խարշեալս ի տապակի: (162 / 9) Եւ շնորհք *Աստուծոյ* էին ընդ նմա. (163 /15) զի վայելեալք յաւելցեն ի փառաւորութիւն *Աստուծոյ:* (166 / 9) որոյ հիացեալ ընդ *Աստուծոյ* ներողութիւնն առ ինքն լեալ՝ գայր յիւրն աշխարհ: (184 / 13) և ի բնական գաւառին ի Գարդման բերդին հիմն արկեալ տուն *Աստուծոյ* մեծապէս գեղազարդէ ի հրճուանս և ի փառս Քրիստոսի *Աստուծոյ:* (184 /18; 184 /19) և որ ինչ մարդկան է վայելուչ, և ամենապայծառ իրք անկարօտ էր նմա ի փառացն *Աստուծոյ* (186 / 1) Ի յաղթահարելն Ջուանշիրի զԽազիրսն և երկուց ամաց անցելոց զկնի վանելոյն զզօրսն Խազրաց կատարի գեղեցկայարմար շինումն տաճարի անուան *Աստուծոյ:* (187 / 9) Լերինք մշտնջենաւորք և ծովք անդնդայինք ալեկոծեալք հնազանդեալ կան բանին *Աստուծոյ* (192 / 9) գոհանայր զանպատում պարգևացն *Աստուծոյ* (199 /3) ՏԵՍԻԼ ՄԻԱՆՁՆԱՅԵԼՈՅ ԱՌՆ *ԱՍՏՈՒԾՈՅ* ԻՍՐԱՅԵԼԻ Ի ՎԵՐԱՅ ՄԱՇՏՈՑԻ ՍՐԲՈՅ (201/15) Ապա յարուցեալ անտի՝ զուարթանայր և բազկատարած եղեալ առաջի *Աստուծոյ* գոհութեամբ զառաւօտին կատարէր զաղօթս: (202 / 11) «Տէրդ իմ, մի՛ հեղգասցուք զիրամանս *Աստուծոյ* յապաղել, գուցէ իբրև զլացողս դատապարտիմք. այլ զկնի լինելով գործոյս փութապէս կատարեա՛, զի յայտնեսցի *Աստուծոյ* գանձն»: (203/1, 203 / 3) զի ոչ ինչ է ի գանձուց *Աստուծոյ,* որ ծածկեսցի յերկրի. և չէ իսկ պարտ զճշմարտութիւն ընդ ստութեան և ընդ խաբէութեան ի բաց ընկենուլ, և զգործ *Աստուծոյ* սատանայի լլկանս համարել (204 / 8; 204 / 9) զի սատանայի փորձանք և մարդկան խաբէութիւնք յայտ են, և *Աստուծոյ* շնորհք առաւել ևս յայտնի: (204/16) զի մասնաւորեսցին ամենեքեան տեսակի սքանչելեացն *Աստուծոյ:* (205 / 9) Քանզի որպէս ի մէջ բազմամբոխ հրապարակին այնպիսի հրաշագործութեան *Աստուծոյ* լինէր երևումն (206 / 8) Նոյնպէս և սրբոցն արանց և քրիստոսասէր եպիսկոպոսացն յոլովք սխրացեալք յոյժ վասն սքանչելեացն *Աստուծոյ,* վասն որոյ օրհնութեամբ մեծաւ գոհանային զանպատում պարգևացն *Աստուծոյ:* (206 /14; 206 /15) Վասն որոյ այրն *Աստուծոյ* Իսրայէլ մեծարոյ եղեալ յոյժ առաջի եպիսկոպոսացն (206 /16) Այլ ընդ այն թէպէտ և կարի յոյժ դժկամակ այրն *Աստուծոյ* լինէր, զի որ ինչ նմայն հաւատացաւ յԱստուծոյ, և որում ինքն եղեալ էր գիտակ, ի դէպ էր ընդ նորին ձեռն և մատակարարեալ սրբութեանն *Աստուծոյ:* (207/14; 207/15) Սակայն ճշդիւ քննեալ շնորհիւն *Աստուծոյ* գտաք

ճշմարտութիւնն (209 / 13) և զայլ սրբութիւնսն յուղարկեցաք ի ձեռն քորեպիսկոպոսաց և քահանայից և դասու պաշտօնէից մեք՝ Դաւիթ և Յովէլ եպիսկոպոսունք ի տեղի մենաստանաց աբասուս շնորհօքն Աստուծոյ (210 /13) մինչդեռ բարեբաստիկն Ջուանշիր զաշխարհական տէրութիւնն վարէր յանհաստատելի կենցաղումս ի կամս Աստուծոյ: (213 / 13) ՅԱՂԱԳՍ ՍՐԲԱԿԱՆ ԱՌՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԻՍՐԱՅԵԼԻ ՔԱՀԱՆԱՅԱՆԱԼՈՅՆ (213 / 15) Եւ վասն զի ինքն առաջնորդ բարի եղբարց՝ զսիրոյն խորհելով կատարել առ ամենեսեան զպատուիրանն և զգեցեալ էր զճշմարտութիւնն Աստուծոյ ի ծածուկ: (214 / 17) Ապա այնուհետև հրճուալից եղև յոլովակի խնկարկութեամբ այրն Աստուծոյ (216 / 1) մեծ և հրաշալի զարմացումն լինէր, որ լոյս անհնարին էր զահեղ, զմեծ փառացն Աստուծոյ: (216 / 7) Ապա զգացեալ Աստուծոյ սպասաւորին, որ էր ի հին եկեղեցւոջ անդ, ծագումն խաչին: (218 / 5) զոր նա բերեալ տայր առնն Աստուծոյ: (218 /11) Յայնմհետէ մեծարու եղեալ քահանայն Աստուծոյ Իսրայէլ առաջի կաթողիկոսին և իշխանին և յաչս մեծամեծացն. (219 / 10) Զայսոսիկ լուեալ եպիսկոպոսապետին և Ջուանշիրի՝ նոյնժամայն գրեն առ այրն Աստուծոյ Իսրայէլ (219 / 18) ընդդէմ Աստուծոյ երկասիրէր պատուիրանին (221 / 9) զի անդ պարգևաձիր մեծարանօք ի հանդիսաւոր տօնին Աստուծոյ մատուսցէ երկրպագութիւն: (222 / 2) որոյ յաւելեալ և այլ բանս աստուածայինս զանգիտականս՝ մերձեցուցանէր զնա յերկիղ և ի սէրն Աստուծոյ: (233 /4) «Կամք Աստուծոյ կատարեսցին»: (234 / 14) Եւ մարդասիրին Աստուծոյ արկեալ ի սիրտ նոցա միակամութեամբ տալ մասն յօրէնսուսոյց ծնօտէն խոստովանողին Քրիստոսի՝ մեծին Գրիգորի: (237 /1) յանձն արարեալ շնորհացն Աստուծոյ՝ ճանապարհորդէր: (237 / 4) զի երթեալ հաճեսցէ շնորհիւն Աստուծոյ զմիտս երկուց աշխարհակալաց ի հաշտութիւն և յանքակտելի սէր (238 / 1) սակայն ոչ կարէին զայրն Աստուծոյ զարհուրեցուցանել (239 /7) հրամանաւ Աստուծոյ պահեալ լինէր իւրայնովքն հանդերձ ի ջրահեղձ պատուհասէն: (245 / 5) գարշելի և պիղծ են առաջի Աստուծոյ ամենեքեան (246 / 7) Ո՞չ ապաքէն յակնարկել արարչին մերոյ Աստուծոյ զփայլատակելն փայլատակեն (246 / 14) Որով յայտ իսկ է, եթէ ոչ են աստուածք, այլ արարածք արարչին Աստուծոյ: (246 / 16) Մի՛ երկրպագէք արեգական և լուսնի, այլ Աստուծոյ (247 / 9) Զայս և առաւել քան զսոյն խօսեցաւ մեծ քահանայապետն Աստուծոյ Իսրայէլ: (248 / 1) Քանզի յորդորեալ էին յոյժ յունկնդրութիւն բանից առնն Աստուծոյ բարեմիտ իշխանն մեծագահ Ալփիղութուէր մեծամեծօքն հանդեից (248 / 6) յաշխարհածնունդ հայրենեացն որդի գտանիւր շնորհացն Աստուծոյ մերձաւոր կենարար կենացն լինելով: (249/7) Շինէր ի տեղիս տեղիս եկեղեցիս և մեծացուցանէր զպատիւ քահանայիցն Աստուծոյ: (250 /4) երկրպագեմք միոյ Աստուծոյ (253 /6) զարհուրեցուցանել զայրն Աստուծոյ և յաղթեալ նմա (254 / 6) զի են իսկ դոքա անյոյսք ի ճշմարիտ կենացն Աստուծոյ (254 /10) այսուհետև մատուցէք զանձինս ձեր առաջի աթոռոյ շնորհացն Աստուծոյ՝ թօթափելով ի բաց զամենայն ախտս չարեաց անօրէնութեան ձերոյ (256 / 8) Իսկ բարեպաշտ իշխանն Հոնաց իբրև լսէր զայն մեծամեծօքն հանդերձ՝

յորդորեալ ի սէր և յերկիւղ Աստուծոյ: (256 /11) և ածեալ առաջի առնն Աստուծոյ՝ տայր ի ձեռս նորա: (257 / 1) կազմեցաւ, պատրաստեցաւ կամօք տեառն Աստուծոյ ի ձեռն եպիսկոպոսին (257 /12 որ հրեշտակ Աստուծոյ կայր ի սպասու նմա (260 /6) Ահա ուսուցիչ պատգամացն Աստուծոյ այրս Իսրայէլ եպիսկոպոս. (260 / 9) Եթէ Աստուծոյ և նոցա հաճոյ թուեսցի, կատարեսցէ Աստուած զբանդ զայդ: (261 / 11) «Իմանալի աչաց տեսութեամբ ընկալաք զառաքեալդ ի ձէնջ՝ այրդ Աստուծոյ Իսրայէլ եպիսկոպոս (262 /12) Վասն զի խնդրէիք մարմնաւոր խաղաղութիւն ի ձէնջ, և մեք հոգևոր ողջունիւ տեսաք զդա որպէս պատկեր Աստուծոյ (262 / 15) Եւ բան Քրիստոսի Աստուծոյ մերոյ լցեալ կատարեցաւ (263 / 11) զոր նորընծայ ծառայիցդ Աստուծոյ գրեալ էր առ մեզ (264 / 15) և եղէք ճշմարիտ երկրպագուք արարչին մերոյ Աստուծոյ: (265/2) Եւ նոյն շնորհք սուրբ հոգւոյն հաստատեսցէ զձեզ յերկիւղն Աստուծոյ (265 / 13) հրամայեցին նկարել զպատկերս ի տան Աստուծոյ. (267 / 8) յո՞ր պատճառս չընդունիք զմարմնացելոյ Աստուծոյ զպատկերն. (269 /7) և ամենայն կենցաղով իւրով որոշեսցի յեկեղեցւոյ Աստուծոյ. (271 /3) զի եկեղեցւոյ Աստուծոյ այս ոչ է սովորութիւն: (277 / 11) Արդ ընդէ՞ր տամք տեղի Ռոբովամու պատառել զեկեղեցի Աստուծոյ, զորս որդին Աստուծոյ ժողովեաց ի մի գաւիթ. (278 / 13; 278 / 14) Եւ ողորմութեամբն Աստուծոյ՝ հաւանեալ նորա՝ եբաց զտապանակն (282 / 8) որ զընթերցուածսն եցոյց ի փառս Քրիստոսի Աստուծոյ մերոյ: (282 / 13) որ արարած զորդի Աստուծոյ ասաց. (288 / 3) Եւ այսպէս է անօրէն նոցա օրէնսդրութիւն, որ մինչ յահեղ անունն Աստուծոյ երդնուն, ստեն (289 / 14) որոց անմեղութիւնն յայտնի լիցի յաւուր մեծի դատաստանին Աստուծոյ» (289 /19) և ի ներել Տեառն Աստուծոյ զօրացեալ տիեզերակործան զեղխ կրօնն Քաղկեդոնի (295 / 5) Յամենակալէն Աստուծոյ ունիմք զծառայական աշխարհս հնազանդ ձերոյ տէրութեանդ. (295 / 15) «Զառնդ Աստուծոյ զԵղիայի զԱրմենեան ազգի ջաթլկիդ կարդացի զգիր մտերմութեան (296 / 8) շահել կամեցաւ այժմ զնոյն ի ձեռն անիմաստ մարդոց պառակտողաց զեկեղեցի Աստուծոյ (298 / 16) Այլ սակայն յայսմ վայրի օրհնութիւն և գոհութիւն եղիցի Փրկչին մերոյ Աստուծոյ (299 / 12) Եւ գթացեալ ի տկարութիւնս մեր և ողորմեալ ժողովրդեան իւրում առաքեաց առ մեզ զպատուական հայր զԵղիա շնորհիւն Աստուծոյ Հայոց կաթողիկոս (299 / 15) Եւ զնոյն կանոնս առաջի Աստուծոյ և ձեր սրբութեանդ պայմանեցաք (301 / 8) վասն այդորիկ պայմանեցաք առաջի Աստուծոյ և ձերոյ հայրութեանդ (302 / 4) զոր դուք ընտրէք, հաճոյ Աստուծոյ է և մեզ: (302 /7) Արդ՝ որք երկիւղիւն Աստուծոյ մերոյ սահմանադրութեանս կատարիչք լինին, ի սրբոյ երրորդութենէ օրհնեալք լիցին և յամենայն ծառայից Աստուծոյ ուղղափառաց. իսկ եթէ ոք ընդդիմացեալ թիւրեսցի ի ճշմարտութենէ աստի, ինքն տացէ Աստուծոյ պատասխանի՝ ոյք և իցեն: (302 /10; 302 /11; 302 /12) «Գրեցաւ գիրս այս միաբանութեամբ և Աստուծոյ միջնորդութեամբ (302/14) նոյն եպիսկոպոսունքն և բովանդակ ուխտ եկեղեցւոյ վերստին նզովեցին գրով և կնքով, Աստուծոյ միջնորդութեամբ և մեօք հանդերձ և պայմանեցին

(303 / 11) պարտ և արժան է մեզ պտղաբերել *Աստուծոյ* պտուղ բարի և քաղցր ի հաճոյս նորա և շինել ի վերայ հիմանն առաքելական, որ է Յիսուս Քրիստոսի՝ ոսկի, արծաթ, ականս պատուականս, այսինքն՝ զզանազան առաքինութիւնս և զամենայն գործս բարիս, զի յերևել Փրկչին մերոյ *Աստուծոյ* ընդունիցիմք զանթառամ փառաց պսակն: (306 /18; 307 /3) զոր մատուցանէին ժողովուրդն ի տան *Աստուծոյ* վասն մեղաց (307 / 15) «Թէ մի՛ ումեք լիցի իշխանութիւն զեկեղեցի *Աստուծոյ* ընձեռել անարժանից և զինուորաց (308 /15) ոչ է պարտ *Աստուծոյ* հակառակ լինել: (309 /1) եկեղեցիք *Աստուծոյ* ազատ են (309 /4) Զի հակառակ *Աստուծոյ* պատուիրանացն է և կորուստ հոգւոյ և մարմնոյ՝ զազատութիւն եկեղեցւոյ ի ձեռն անարժանից մատնել: (309 /7) Վասն որոյ լսեմ ի բազմաց տրտնջելոյ, թէ ի յոլով տեղիս զեկեղեցիս *Աստուծոյ* վանականութեամբ զինուոր մարդիկ ունին (309 / 9) Արդ՝ ես Սիմէոն շնորհիւն *Աստուծոյ* Աղուանից կաթողիկոս ըստ աստուածային պատուիրանացն և կանոնացն այսպէս հրամայեցի, զի զիրաւունս եկեղեցւոյ *Աստուծոյ* քահանայք կալցեն ճշմարիտք և ուղղափառք (310 / 1; 310 /2) և մի՛ տայք համարձակութիւն նեղել զեկեղեցի *Աստուծոյ* (310 / 13) «Մի՛ արկանէք զմարգարիտս ձեր առաջի խոզից, և միթ տայք զսրբութիւնս շանց», որպէս կամ եղև *Աստուծոյ* կոչել սրբութիւն սրբութեանց (310 / 16) Արդ պատուիրեմ ամենեցուն՝ զգոյշ կացէք պատուիրանացն *Աստուծոյ* և գոհութիւն անսպառ մատուսջիք ողորմածին *Աստուծոյ* (310 /19; 310 /20) Եւ վասն այսր իրի զերծեալ *Աստուծոյ* օգնականութեամբն՝ եկն եհաս յաշխարհն իւր (312 / 4) վասն զի միոյ *Աստուծոյ* ծնունդ՝ հոգևոր փրկութեան մերոյ մի տօն կատարի: (315 / 10) «Բայց այժմ *Աստուծոյ* յայտնութեանս տօն է (315 /19) «Եթէ Օրէնքն ի Սիոնէ ելցեն, և բանն *Աստուծոյ* յԵրուսաղէմէ»: (316 / 11) զորոյ զգալուստն լուեալ տիկնոջն Վարդանուհեայ՝ կարեվէր եղեալ ի դատաստանացն *Աստուծոյ,* դիմէ ընդ առաջ նորա լինել կարեկից իւրում տարժանելի աղետիցն (325 / 9) և գերեալքն մնացին խաղաղութեամբ՝ փառս *Աստուծոյ* տալով: (332 /1) աւերէր քանդէր զեկեղեցիս *Աստուծոյ.*(336 /14) որք երկիւղածք *Աստուծոյ* և բարեպաշտ զիւրեանցն ցուցանէին զկեանս և աշխարհի քաղցունք: (340 / 10) կապեալ մարմնով և ոգւով յանէծս որոշեալ եղև ի փառաց որդւոյն *Աստուծոյ* Աղուանիւք և Հայովք (344 / 10) Նա և զորոտընդոստ հրատեսակ շանթիցն ցայտմունս և զեթերակէզ այրեցմունս, թէ մարդոյ դիպեսցի, թէ այլ ինչ նիւթեղինաց. ձօնեալ իմն, զնա ի պաշտօն առեալ՝ նուիրեալ Քուար *Աստուծոյն* համարէին: (241 /3) «Մեք հաւանեալ հաւատացաք առնս այսմիկ և պաշտեմք և երկրպագեմք *Աստուծոյն* (252 / 11) Եւ խնդութեամբ ընկալաւ զպարգևն *ի յԱստուծոյ* ի ձեռն սրբոց վկայիցն: (63 / 9)

ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆԵԱԼ - 1

և ապա յետ սակաւ ինչ բանից զսրբոյ Երրորդութեանն զյառաջ քան զյաւիտեանս զէութիւնն *էր աստուածաբանեալ* տարաբերմամբ: (277 / 17)

ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆ - 1

զոր դարձեալ ասէ *Աստուածաբանն.* (315 / 19)

ԱՍՏՈՒԱԾԱԲԱՐ - 1

Նա և զամենայն ժամանակս կենաց իւրոց *աւազան* քաւութեան զարտօսրն իւր արարեալ՝ լուանայր (319 /17) Որ լուսաւորեաց իսկ զամենայն տիեզերս աստուածընկալ *աւազանաւն* (243 /1) Իսկ զբոլոր աշխարհին Հայոց ուսուցանէր և խրատէր և կնքէր կենսատու խաչիւն և լուսաւորէր մկրտութեամբ *աւազանին* փրկութեան. (34 / 22) Եւ որք յետ շնորհի *աւազանին* փրկութեան էին զառածեալ ի մոգութիւն. ապաշխարութեամբ հաստատէր. և որք ի տղայութենէ իսկ երթեալ էին զհետ կորստեան ճանապարհին, հրամայէր լուսաւորել *աւազանին* փրկութեամբ (47 /3; 47 /5) Որպէս շնորհեցեր ինձ զծնունդ *աւազանին* լուսոյ նորոգման ճանաչել զքեզ, արա՛ և այժմ անարատ մնալ ինձ ի մեղաց հաւատովք և սրբութեամբ: (101 /13) որով դարձուցանէր իսկ զաշխարհս Աղուանից ի կռոցն մոլորութենէ լուսածնութեամբ *աւազանին* շնորհաց: (219 / 7) Զքուէս կորուսիչ հմայիցն ի ձեռն տուեալ եպիսկոպոսին ի նիւթ հրոյ ծախէին՝ արժանի լինելով վերստին ծննդեանն ի ձեռն սրբոյ *աւազանին:* (258 / 5) Եւ սուրբն Սիօնի ընդ աջմէ խորանին Պիղատոսի … և վէմն, յորոյ վերայ կայր փրկիչն առաջի Պիղատոսի, յորում ոտից տեղն երևի ցարդ ևս. և *աւազանն* ներքոյ նորին (284 / 3)

ԱՒԱՆ - 3

Եւ ասպատակ սփռեալ զկողմամբք Ատրպատականու մինչև ցտեղի անուանեալն Գայջ *աւան* (132 / 1) և յաւարի առեալ զաշխարհս ամենայն՝ դառնայ ի Սիւնիս, և ամրանայ ի Բերդատեղի *աւանին* Շաղատու (326 / 9) հասանէ Գորայ *աւանն* Խոտայ (111 / 18)

ԱՒԱՆԴ - 1

Զի էր նա նոցա քեռորդի և յառաջ լեալ էր քրիստոնեայ ըստ հայրենական *աւանդին* (15 / 11)

ԱՒԱՆԴԵԱԼ - 2

Եւ այսպէս մեծաւ ուրախութեամբ *աւանդեալ* նմա զպատիւ նախագահ իշխանութեանն հայրենական գահուն՝ օժտաբեր և ընծայաբեր լինէին նորոգ նորա տէրութեանն: (231 / 10) Առաջինն մայր եկեղեցեացն արևելեայց Գիսոյ եկեղեցին նորին հիմնադրեալ և զինքեանս նմա *աւանդեալ.* (275 / 1)

ԱՒԱՆԴԵՄ - 9

այլ մօրն աղաչանաց լսելով՝ կենդանացոյց զմանուկն և *աւանդեաց* մօրն: (89 / 3) Եւ այլ ինչ բազում աղտեղութիւն *աւանդեաց* ազգին այնորիկ (289 /16) բազում կարգս ուղղութեան *աւանդեաց* եկեղեցւոյ վրիպելոյ. (297 /14) որ և մեր նախնեացն *աւանդեցաւ* (316 /10) և *աւանդեցին* զնա նոցա: (89 / 6) որպէս և յառաջընծայ *աւանդեցին* մեզ աստուածազան առաքեալքն (243 / 9) Եւ *աւանդէ* նմա պատիւ ընդ Բագրատունիս և ընդ Մամիկոնեանս համապատուել: (111 / 5) որ *աւանդէ* աշխարհի

զպատգամս հոգւոյն սրբոյ»: (242 / 10) զաւուրս քառասունս պահուց *աւանդէին* զանձինս իւրեանց (19 / 14)

ԱԻԱՆԴՈՒԹԻՒՆ - 1

«Եթէ դուք յիմում խոստովանութեանս էք, օրհնեալ էք. ապա եթէ յԱղուանից *աւանդութեանն* էք, դուք գիտէք»: (313 /18) Վասն զի զփրկական *աւանդութիւնն* առաքելաքարոզ հարցն մերոց՝ որ անարատ ձեռօք հաստատեալ էին յեկեղեցիս՝ անարժան ձեռօք ի բաց կործանեաց. (299 / 2)

ԱԻԱՌԱՆՇԱՆ - 1

Եւ ի նոյն ամի ասպատակեաց Սևադայ աշխարհաւերն Տաճիկ, որ *Աւառանշան* անուն ճանաչէր, ի սահմանս Հայոց. (326 / 7)

ԱԻԱՐ - 17

Եւ Անտիոքոս առեալ *աւար* բազում և զհարկն արքունի՝ դառնայ առ կայսր: (29 / 20) և զտունս նոցա *աւար* հարկանիցեն (44 / 8) Անդանօր բարեացապարտն Վաչագան արքայ զհոգևորականն և զգերաշխարհիկն զայն *աւար* առեալ (83 / 9) Եւ զսպասսն ոսկւոյ և արծաթոյ *աւար* առեալ (100 / 8) Եւ ինքեանք զառօրեայ արշաւանսն վճարելով՝ ածին ժողովեցին զամենայն առ և *աւար* գաւառին և զնոցուն համագունդ եղբարսն: (100 / 17) և զամենայն մեծամեծաց տանց *աւար* առեալ յոյժ անբաւս, ժողովէ զամենայն ի Բաղաբերդ: (108 / 11) Յայնժամ ելեալ հոնն ի Հոնաց՝ Հոնագուր անուն, *աւար* առեալ զաշխարհն Պարսից՝ յղեալ առ Շապուհ՝ ասէր.(109 / 15) զտուն նորա, որպէս և կամիցիմք, *աւար* հարկանիցեմք»:(139 / 7) Եւ մետաքսառէչ և զկերպասանիւթ դիպակս և զգոյնագոյն կապերտս զոսկի և զարծաթ և զընտիր ընտիր կահուց և սպասուց *աւար* առեալ. (224 / 9) *աւար* առեալ գերէին զամենայն: (232 / 10) Ապա իբրև ետես իշխանն՝ տէրն նոցա զայն ամենայն աղխ գերութեան *աւարացն* մարդոյ և անասնոյ և անօթոց, արծաթեղինաց և ոսկեղինաց և հանդերձից պատուականաց, խորհեցաւ ի մտի իւրում յայն կոյս ինքն իսկ իւրովի գալ ելանել: (134 / 17) և դառնայ ինքն մեծաւ *աւարաւ* և բազում գերեօք ի Հայս: (13 / 13) Յայնժամ Անդոկայ պարապ գտեալ ժամ՝ թողու զբերդն և մեծաւ *աւարաւ* անցանէ ի Հռովմայեցւոց աշխարհն: (109 / 9) և մնացեալքն զանգիտող ձևով գնացին յաշխարհն իւրեանց բազմազան *աւարաւ:* (338 / 10) Չու արարեալ Վարդանայ մեծաւ *աւարաւն,* անտրտում ուրախութեամբ, գոհութեամբ առ Աստուած և նորին յուսովն հասանէր յերկիրն Հայոց յաւուրս երեսուն: (116 / 18) Եւ յայնմիկ զօրքն Հայոց կատարելով զգործ մեծի պատերազմին՝ ժողովէին զբազմութիւն *աւարին* և կուտէին արծաթ և ոսկի յոյժ, զզէնս և զզարդս արի արանց և քաջ երիվարաց: (115 / 12) Բազմահոյլ գերութեամբ և մեծամեծ *աւարօքն* անցեալ զԿուրական գետովն ի յարևելից կուսէ բանակէին յայն կոյս յանդիման նոցա: (103 / 11)

ԱԻԱՐԱՄԱՍՆ - 1

Եւ քրիստոսաժողով բանակին աւարամասն առեալ զողորմութեանցն Աստուծոյ՝ զբերումն անճառաբար ստանային ի /գրքում՝և / ձեռն քրիստոսազգեստ արքային՝ Վաչագանայ (83 / 12)

ԱԻԱՐ ԱՌԵԱԼ - Տե՛ս ԱԻԱՐ

ԱԻԱՐԵԱԼ - 1

Եւ զամբարշտութեամբ մթերեալ անբաւ մեծութիւնն աւարեալ ի բաց բառնային (45 / 6)

ԱԻԱՐԵԼ - 1

քանզի նա ի քարոզութեանն ասէր զկամս բարերարին Աստուծոյ՝ ո՛չ աւարել և ո՛չ յափշտակել և ո՛չ գողանալ (38 / 10)

ԱԻԱՐԵՄ - 1

և ի՞ւ կեցցուք, զի ոչ աւարեսցուք և ոչ յափշտակեսցուք»: (38 / 13)

ԱԻԱՐ ՀԱՐԿԱՆԵՄ - Տե՛ս ԱԻԱՐ

ԱԻԱՐՏԵԼ - 1

Եւ ի վերայ գերեզմանին հրամայէր հիմն արկանել մատրան և փութապէս աւարտել և անուանել մատուռն սուրբ Գրիգորիսի: (83 / 2)

ԱԻԱՐՏԵՄ - 1

և ի բարեքաւութեան աւարտէր զառաքինութիւնն: (46 / 10)

ԱԻԵԼԻ - 6

Արդ՝ վասն զի հարքն ձեր հաւատակից էին հարցն մերոց, և դուք մեզ, հաճոյ թուեցաւ գալ ի ձէնջ այսր եպիսկոպոսաց երից կամ աւելեաց լսելով ի մէնջ յանդիման զճշմարիտ վարդապետութիւնն (125 / 19) և որ որք աւելի քան զայս տացէ սակս հոգւոյն, բարի առնէ (91 / 2) Եւ որպէս վայրափոսէր, հինգ էր քիլ կամ թէ աւելի ինչ՝ յանկարծակի երևեալ տապան մի արծաթի՝ ժանգառագոյն, հնացեալ (215 / 14) նոցա ետուն զպատիւ լինել մետրոպօլիտ Հայոց խաչանիշ մեծարանօք և ոչ ժտել յիրս ինչ աւելի և ոչ քարոզել եպիսկոսապետ զհայրապետն: (275 / 11) զի Ճ աւելի վանք, որ կան անդ, զորոց փոյթ կալեալ իշխանացն Հայոց, Է կենդինար տուեալ թագաւորին Յուստիանոսի (286 / 8) որք ոչ աւելի քան զերիս ժամանակս ընթանալով իբրև զմրրիկ ընդ համատարած աշխարհածով ելիցն Կասպից՝ յանկարծ հասանէին ի մայրաքաղաքն Աղուանից Պարտաւ (338 / 2)

ԱԻԵՏԱԲԵՐ - 2

Իսկ դու լիալայն, բարձր լուսասարաս, աւետաբեր ... քաջալերիչ, պայծառ և գեղեցիկ քան զամենայն հասակակից ընկերս քո: (24 /9) Աւետաբեր ինչմամբ հանդիսացուցանել ձեզ պարտիմք (208 / 13)

ԱԻԵՏԱՐԱՆ - 11

Եւ բան Քրիստոսի Աստուծոյ մերոյ լցեալ կատարեցաւ և ի ծագս հիւսիսայնոցս քարոզեցաւ աւետարան նորա (263 / 12) և հրաման տայր բոլոր եպիսկոպոսացն ... աւետարանաւ և խաչիւ յոլովութեամբ իւրաքանչիւր դասու, և բազմութեամբ բուրվառաց խնկոց ծխելոց զկնի ելանել: (68 / 11) Այլ տէր Քրիստոս ըստ մարդասիրութեանն իւրոյ զձեզ

հոգասցէ, աճեցուսցէ և օրհնեսցէ և տացէ ձեզ ըստ հաւատոց ձերոց հովիւ տեսչաւորել զձեզ *աւետարանաւն* Քրիստոսի»: (261 / 8) Զի եկն եհաս ի վերայ մեր միանգամայն և կատարեցան, զոր փրկիչն մեր ի կենսաբեր *աւետարանի* անդ ի ժամանակի չարչարանացն, ըստ հանդուրժելոյ լսելեաց ընտրեալ երկոտասանիցն մարդկօրէնս զիջանելով խօսէր. (127 / 11) «Որ թողցէ վասն *աւետարանին* զհայր և զմայր և զքոյր և զեղբարս և զամենայն ստացուածս իւր (25 /8) ոչ ունէին հրաման դատարկաձեռն լինել, և ոչ ինքն թագաւորն ունայնաձեռն երթայր յողջոյն *աւետարանին:* (64 / 8) ընդ առաջ ելանէին ամենայն եպիսկոպոսունքն իւրաքանչիւր իշխանութեամբ և պաշտօնէիւք բազում դասք դասք և գունդք գունդք՝ յիւրաքանչիւր գնդի նշանք սրբոցն մեծապէս պատուով ընդ *աւետարանին* պատուեալք (67 / 10) Եւ ձգէր զքարոզութիւն *աւետարանին* յաշխարհին Ուտիացւոց և յԱղուանս, և՛ Լփինս, և՛ ի Կասպս, և՛ մինչև ի դուռն Չորայ. (95 / 14) Եւ լի է ամենայն երկիր փառօք նորա, այսինքն է քարոզութիւն *աւետարանին.* ըստ փրկչական բանին ի վկայութիւն ամենայն հեթանոսաց(243/12) և որպէս յարութեան *աւետարանն* նախ զնաչն և զթաղումն յայտնէ և ապա ի վերայ ածէ զյարութիւնն (315/17) և արտաքոյ բեժին ամենայն ժողով եպիսկոպոսացն դասք դասք իւրաքանչիւր աշակերտօք շուրջ կացեալ զբեժովն, սարկաւագապետացն խաչ ի ձեռս, և երիցանցն՝ *աւետարանս* ի գիրկս (80 / 3)

ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆ - 2

Եւ խնդութեամբ ընկալեալ հաւատային *աւետարանական* բանին զառաջինն: (38 / 7) և կենարար *աւետարանական* բանքն ընթերցեալ լինէին առաջի յոլովագոյն ժողովրդոցն (64 / 6)

ԱՒԵՏԱՐԱՆԵՄ - 1

զի առաքեալքն և վարդապետքն հասարակ և միապէս *աւետարանեցին* (277 / 15)

ԱՒԵՏԱՐԱՆԻՉ - 5

որպէս Ղուկաս *աւետարանիչն* ասէ. (315 / 1) Զի յետ առաքելոցն և *աւետարանչացն* քարոզելոյ ոչ երևել այդպիսի իրք, և ոչ այժմ լինել պարտ է»: (203 / 13) զի չորք միայն կացին ի վերայ երկրի.... ըստ չորեքկերպեան տիեզերաց, ըստ քառավտակ գետոցն աղենականի, ըստ չորեքկերպեան կենդանեացն, ըստ չորից *աւետարանչացն,* ըստ չորից մովսիսական օրինացն (272 / 15) Յիշեցուցանեմք և զբանն Յովհաննու *աւետարանչի* (125 /12) Իսկ ի թագաւորելն Յուստիանոսի փոխեաց զնշխարս սրբոյն Յովհաննու *աւետարանչի* ի Կոստանդնուպօլիս. (273 / 9)

ԱՒԵՏԻՔ - 4

զամենայն ի միտ առնուլ զասացեալսն, զմեծ խորհուրդ ցուցակութեանն զանցեալ ժամանակաց. զմեծաց նախապարգև *աւետեացն* քարոզութիւն (202 /6) Ընդ որ հայրապետն Եղիազար հիանայր վասն պարգևական *աւետեացն* (218 /17) Եւ յետ այսորիկ իջանէ անտի աստուածավայելուչ *աւետեօքն* ի ձմեռնահանգիստ քաղաքն Պերոզ

Կաւատ. (190 / 2) Արդ՝ ի տասնէն յառաջ սկսանիմք լնուլ զվեց ամիսն և լինի յապրիլի եօթանն, ըստ հրեշտակին, թէ այս վեցերորդ ամիս է նորա, Եբրայեցւոցն նիսանի ի տասն և եօթանն աւետիք կուսին: (315 / 7)

ԱԻԵՐԱԾ - 1

մինչև այց արար ամենողորմն Աստուած հեղման արեան սրբոց վկայիցն Քրիստոսի և աւերածոյ սրբոյ եկեղեցւոյ (43 / 9)

ԱԻԵՐԱՆՔ - 1

Եւ ապա գուժէր ձայն աղետաւոր ի տունն Թորգոմայ և առհասարակ աւերանք աշխարհին հասանէր: (337 / 10)

ԱԻԵՐԵԱԼ - 3

Եւ զտուն հօր նորա աւերեալ քանդէին հրդեհաբոց կիզմամբ: (224 / 7) Եւ յերկաքանչիւր կողմանց բռնութենէ թշնամանեաց աւերեալ պակասեցաւ երկիրս: (237 / 17) և դա աւերեալ քանդէ զբագինս և զմեհեանս (253 / 3)

ԱԻԵՐԵԼ - 6

Յայնժամ ամենայն մեծամեծքն առաջի անկեալ՝ աղաչէին մի ևս տալ պատերազմ, այլ շուրջ զամրոցաւն աւերել: (109 / 8) որ եկեալ էր աւերել զեկեղեցիսն Աղուանից: (113 /16) Եւ ընդէ՞ր իսկ բնաւ անսայք նմա և լսէք քանդել և աւերել, կործանել զբագինս մեհենաց մերոց (250 / 16) և տայք դմա զիշխանութիւնդ զայդ հանել, աւերել, քակտել զմեհեանս աստուածոց ձերոց: (251 / 3) Եւ արդ՝ դա կարէ՞ հպել, մօտել և կտրել զդա, և կամ աւերել զմեհեանսն աստուածոց մերոց: (252 / 6) գրով և պատգամաւ յանդիմանէր զնա՝ վասն զուր աւերելոյն զաշխարհին Հայոց: (16 / 10)

ԱԻԵՐԵՄ - 12

գուժկան հասանէր յերկրէն Հայոց վասն ուրացողին Վասակայ՝ եթէ աւերեաց զբազում երկիրս Հայոց: (116 /17) Եւ զմթերս գանձուցն, զոր աւերեաց և ետ բերել ի դուռն Պարսից արքայի: (129 / 13) քակեալ աւերեաց զբազում սեղանս եկեղեցեաց (294 / 8) Եւ զկնի Գ ամաց եկն Մսլիման աւերեաց զԴարբանդ և եմուտ ի Խազիրս: (320 /1) և ել նա ի Պարսից և էառ աւերեաց զերկիրն և ի սուր սուսերի էարկ զկանայս և զմանկունս Բաղաց: (326 / 17) Եւ յերկարել պաշարմանն՝ Մեծ Կողմն աշխարհին աւերեցաւ (17 /3) ԶՈՐ ՅԵԼՄՆ ԻԻՐԵԱՆՑ ԱԻԵՐԵՑԻՆ (118 / 17) որ անիրաւք զայրացեալք առ ոտսն կոխեցին զեկեղեցիս և զտառապեալսն հարկապահանջ և անառակ գնացիւք աւերեցին, (280 /10) որ զերկիր շարժէ, զվէմս դղորդէ, զգերեզմանս աւերէ, զմեռեալս յարուցանէ (22 /13) զկաթողիկոսարանն արևելից ոչ աւերէ (320 /13) Աւերէր, քանդէր, գերէր զերկիրն ամենայն (132 / 3) ուր գնացք ոտից նորա լինէր, աւերէր քանդէր զեկեղեցիս Աստուծոյ. (336 / 14)

ԱԻԵՐՈՒՄՆ - 1

Ի ԳՐԵՆՈՑՆ ՍՏԵՓԱՆՆՈՍԻ ՍԻՒՆԵԱՑ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ԳՏԱԻ ԱՅՍ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՍԱԿՍ ԱԻԵՐՄԱՆ ՂԻՈՆ ՔԱՂԱՔԻ ԵՒ ՇԻՆԵԼՆ ՀՌՈՄԱՑ (322 / 11)

ԱԻՉԻ - 1

Զայսոսիկ միաբանութեամբ խորհեալ՝ յղեն առ եպիսկոպոսն Իսրայէլ աւագ ոմն իշխան՝ անուն *Աւչի* (260 / 13)

ԱԻՐ - 61

Դու *աւուր* աւուր արուսեակ և ի վեր քան զարուսեակ: (24 /3; 24 /3) և յերիր *աւուր* յառնել և նովին մարմնով ի յերկինս վերանալ (38 / 5) Եւ յորժամ սկիզբն լինէր ցայգապաշտամանն ի նմին *աւուր,* և բարեպաշտ արքայն անդադար խնդրէր յԱստուծոյ զգիւտ սրբոյն Գրիգորիսի (72 / 11) Այրն այն Խոճկորիկ անուն …ի հասարակ *աւուր* ի քուն կայր և տեսանէր ի տեսլեան եօթն այր յեկեղեցւոջն՝ սպիտակ, պճղնաւոր պարեգօտիւք (78 / 6) յերրորդ *աւուր* յարեաւ (124 / 17) Եւ այն ի միում *աւուր,* ի միում ժամու: (156 / 6) Յայնժամ առնու զկաթողիկոսն հանդերձ եպիսկոպոսօքն և ամենայն նախարարօքն իւրովք՝ ելանէ իբրև *աւուր* միոյ ճանապարհ ի վեր կոյս Պերոժ Կաւատ քաղաքի.(187 /13) նախ՝ նա այրեսցի յայսմ մեծի *աւուր* ի ձեռն խոստովանող քրմապետացդ այդոցիկ (258 / 17) Եւ ի միում *աւուր* կերպարանեալ սատանայի ի ձև էրէոյ վայրւոյ դիպեցուցանէ զնա Արիոսի կեղծոյն միայնակեցի ումեմն՝ անուն Բահիրայ. (287 / 11) Եւ ի յերկարելն Վարազ Տրդատայ ի միում *աւուր* եղև թագաւորին Հռովմայեցւոց ընտրել ակունս պատուականս (311 / 18) ի միում *աւուր* տօնեմք զծնունդն և զմկրտութիւնն: (315 / 15) ի հեթանոսութեանն սովոր էին ծնունդ արեգականն կատարել այնմ *աւուր* (316 / 8) Ապա հարկաւորեցան առաքեալքն հաւանել նոցա և կարգել նոցա զՔրիստոսի ծնունդն յայնմ *աւուր:* (316 / 9) Սա յոլովիւք *աւուրքդ* ժամանեալ՝ յամէր ի դրան արքունի: (225 / 2) Եւ ընդ երեկս *աւուրն* սպահապետ գնդին Թորելեան հրամայէր ածել զերանելի Թագուհին, (101/4) Եւ ի նսեմանալ *աւուրն* ոչ կարացին ժամանել ի բազում ինչ ի վնաս (137 / 9) Եւ ի նսեմանալ *աւուրն* զերծեալքն ախտիւք խնդրէին զխաւար գիշերոյն առաւել, քան զլոյս տուընջեան: (157 / 10) Իսկ ի համաշխարհական *աւուրն* յարութեան հասանելոյ…ողորմութեամբ այց արասցես ինձ (189 / 7) Եւ զի՞նչ քաջասիրտ տէրն իմ և միւսում *աւուրն* եցոյց. (191 / 7) Դարձեալ որ յընթերցուածին ասէ վասն Դաւթի և Յակոբու տօնին *աւուրն,* եթէ յայլ քաղաքս առնեն զծնունդն Քրիստոսի, որ է դեկտեմբերի քսան և հինգն. (316 / 4) Եւ յինն ժամ *աւուրն* մտանեն առաջի և զվաղորդայն *աւուրն* հրաման առնուն և մարդկան զօգտակարն մատակարարեն: (330 /9; 330/9) Եւ անդ զերիս *աւուրս* մեծապէս կատարեցին զյիշատակ սրբոցն (66 / 13) և այնպէս բազում *աւուրս* առնէր ընդ առնն (82 / 12) «Զամենայն բարի զոր խնդրեսցես դու յԱստուծոյ, ի ձեռն սրբոյն Գրիգորիսի տացէ քեզ և շնորհեսցէ մեզ լինել քեզ ընդ երկայն *աւուրս* խաղաղասէր ընդ աշխարհի (84 / 18) և ինքն ի տարւոջն երկիցս անգամ կատարէր զյիշատակ սրբոցն զերիս երիս *աւուրս.* (86 / 7) Առնէին անդ *աւուրս* բազումս՝ յարելով յինքեանս արս երիս աստուածասէր քահանայս (98 / 10) Այլ առաքէր միայն ծածկաբար առ կայսրն Հերակլիոս՝ զետեղանալ նմա անդէն, ուր էրն զօրօքն իւրովք հանդերձ *աւուրս* ինչ: (146/15) Եւ յոյժ աշխատեալք որպէս *աւուրս* երկուց ամսոց զուր ջանալով ընդ հրամանի կատարածի կենաց իւրեանց: (151 / 19) Եւ ի ժամուն յայնմիկ և ի խառնել դալարւոյն

առաւել էր թիւ սատակելոցն, քան զամենայն *աւուրս* ձմերայնոյն: (165 /9) Այլ յանկանել յախտէ անտի անզգայեալք իբրև *աւուրս* ամսոյ միոյ կամ երկուց կարկափեալք կցրէին զատամունս իւրեանց և յեղուին զաչս իւրեանց. (165/13) Զորս ողբալ ի սուգ առի *աւուրս* բազումս ի վերայ անթիւ խայտամահացն (165 /20) Եւ եղեալ անդ սակաւ ինչ *աւուրս* ՝ոչ դադարէր սպարապետն Աղուանից յելանելոյ առ նոսա և զիւր անձինն հրապարակաւոր ցուցանել քաջութիւն (176/10) ի գեղեցիկ մարգս պերևետեալ յոլովէին *աւուրս* բարեկեցիկ յղփութեամբ: (221/14) զի սուղ ինչ *աւուրս* տևեաց կենդանի (224 /10) Եւ յետ այնորիկ ոչ արև և ոչ աստեղք ի բազում *աւուրս* երևէին. (239 / 12) բազում *աւուրս* երթեալք ի վաղնջուցն թագաւորանիստ հասանէին կայեանս (239 / 13) վստահ լինիմ ի սպասաւորել զամենայն *աւուրս* կենաց մերոց: (281 / 13) Ի սորա *աւուրս* էր Հաջաջ Իբն Յուսուփ: (291 / 8) Եւ եղև ի նմին *աւուրս* Վարազ Տրդատայ սով անտանելի յԱղուանից սահմանս. (312 / 7) Ի սորա *աւուրս* տիրեցին Ասորւոց Տաճիկք (317 / 1) Ընդ այն *աւուրս* հասանէ վախճան հայրապետին Աղուանից Յովսեփայ (334 / 9) ի սորա *աւուրս* արար գիր Աղուանից երանելին Մեսրոպ (342 / 14) Ընդ *աւուրսն* ընդ այնոսիկ առաքեաց արքայ զՄատթէ երէցն Դարահոջու՝ հանդերձ պաշտօնէիւք ի Սուհառ՝ պաշտօն առնել և պատարագս մատուցանել յանուն սրբոցն, որ անդն յայտնեցան: (70 / 6) որ հանդերձեալ է լինել ի յետին *աւուրսն:* (297 / 11) Եւ ընդ *աւուրսն* ընդ այնոսիկ եկին հասին բաղականացիքն և արարին վնաս Սիսան, Տրւոյ և Ամարաս գաւառաց: (331 / 6) յետ սակաւ ինչ *աւուրց* զմարտիրոսական առնուին զպսակ: (96 / 14) Եւ յետ սուղ ինչ *աւուրց* յամսեանն մեհեկանի … երեսուն հազար հեծելոց և տասն հազար հետևակաց զինեալ ընդդէմ նոցա ճակատեցան (174 /8) սակայն յետ սակաւ ինչ *աւուրց* դժրողաբար ուխտազանցեալ երթայ առաջի կաթողիկոսին և այլոցն ամենեցուն հռչակեցուցանել զզրոյցն (218 / 15) Եւ յետ սուղ ինչ *աւուրց* վասն առաւել հրաշիցն և մեծամեծ սքանչելեացն, որ բազում անգամ եղեալ էր ի վերայ ծառոցն նոճից, կամեցաւ զի ի նուէր նշանին ձօնեսցէ ի պատկեր տեառնանման խաչին: (219 / 12) Եւ եղև ի ժամանակին յայնմիկ խաղալ գնալ մեծի իշխանին Ջուանշիրի ի կողմանս լեռնականացն ի զբօսանս բոլոր տարեկան *աւուրց* հրճուական անցուցանելով երկրաչափութեամբ: (221/4) Որ և անտի յետ *աւուրց* ինչ հասանէին ի դուռն Չորայ (239 / 15) յորոց ըստ թուոյ *աւուրց* տարւոյն եկեղեցի միայն բարեպաշտն Վաչագան շինեաց յարևելս: (338 / 16) Իսկ ի գալ գարնանային *աւուրցն* ՝ելանէ ի վերկոյս Գարդման գաւառի. (172 /1) զի ի ժամ տապակէզ *աւուրցն* առեալ գերահրաշապետաւորին զազատասուն տոհմն հանդերձ Նամեսական գնդիւն ի հովիտս բարձրաբերձ լերանցն բերկրէին ծաղկատեսակ հանգստեամբ (221 /12) զի էին *աւուրք* պահոց քառասներորդացն: (162 / 8) անցանէին *աւուրք* խորշակայեղց տօթանացն (221 /15) Չթուեսցին յամս ժամանակաց *աւուրք* դառնաբեր (229 / 13) Եւ եղև իբրև պայծառապէս ծագեցան *աւուրք* քառասներորդացն սրբոց (240 /3) Այնպէս հասին ի վերայ մեր *աւուրքն* այնոքիկ (156/14)

ԱԻՈՒՐ ԱԻՈՒՐ - Տե՛ս ԱԻՐ

ԱՓԱՆ - 1

կալաւ զիշխանութիւնն … Ութման Իբն *Ափան* ամս ԺԱ. (291 / 5)

ԱՓՆ - 5

Պայծառ քո *ափին* էր մեզ լոյս անմուտ (229 /16) և ելանէ առ *ափն* ծովակին Գեղամայ. (13 / 3) Իսկ ի ժամու միում մինչդեռ կատարէին զչար գործ մատնահատութեան յամուր մայրւոջն առ *ափն* Կուր գետոյ, չորիւք ցցովք պրկելով զչորեցունց բութոցն՝ կապեալ մանուկ մի և մորթէին կենդանւոյն: (52 /4) Եւ երթեալ, հասեալ յՈւտի գաւառն՝ իջեալ բանակէին առ *ափն* Կուրական գետոյն (103 / 8) գային հոգւոյն սրբոյն առաջնորդելով հասանէին յՌոստակ գաւառն Մեծ Կողմանց, ի Չղախեան հովիտն յասպարիսաձև դաշտակն առ *ափն* Տրտուական գետոյն (205 / 2)

ԱՓՐՈԴԻՏԱԿԱՆ - 1

Նոյնօրինակ և *ափրոդիտական* ցանկութեամբն զեղխեալք՝ ըստ հեթանոսական վայրենամիտ բարուցն՝ զիօրակինն առնելով կանայս (241 / 15)

ԱՓՐՈԴԻՏԷ - 1

Յայնժամ քաւդեայքն և կախարդքն և վհուկքն *Ափրոդիտեայ* մոլեկան կախարդութեամբն սկսան դիւթութիւնս առնել ստապաճոյճ գետնակոչութեամբքն՝ ուռութս և բարբաջմունս իմն յօրինէին: (253 / 9)

ԱՔԱՅԻԱ - 1

Այս է երկիր նոցա՝ Ատրպատական, Աղուանք, Ամազոնիա, Հայք Մեծ և Փոքր … Ատտիկէ, *Արապիա* (5 / 11)

ԱՔՈՅԵԱՆ - 2

Այլն քրիստոսասէր ամենագով ազատք՝ աստուածապահ Շերոյ պատրիկ և Աղուանից իշխան, իշխան Ջուանքոյ /գրքում՝ Ջուանքո/ պատրիկ՝ Աղուանից սպարապետ … Թէոդորոս յԱնաստասեան, Ռոստոմ ի Վարազ *Արոյեան* … և այլ ամենայն ազատք աշխարհիս օրհնեցաք (300 / 13) նոյնժամայն իմացաք զստոյգն. նախ՝ ես Շերոյ Աղուանից իշխան և Ջուանքոյ Աղուանից սպարապետ … Ռոստոմ ի Վարազ *Արոյեան* (305 / 1)

/ ա - տառով սկսվող բառեր, որոնք բառասկզբում ունեն զ-ը նախդիր /

ԶԱԲԱՍՆ - 1

և ներբողելով *զաբասան* մեծարէր կաթողիկոսաւն և ամենայն աշխահակոյտ ամբոխիւն: (212 / 6)

ԶԱԲՐԱՀԱՄ - 4

կամ մեռեալ մեծատանն հոգին ի տանջանարանէն հեռագոյն սրատես աչօք զԱբրահամ և զՂազար տեսանել կամ գիտել ուստի՞ էր. (88 / 3) զի մեծ վիհ ընդ մէջ կարել ճանաչել զԱբրահամ: (88 / 8) Եւ նստուցին հայրապետ ճշմարիտ և արդար այր՝ զԱբրահամ (269 / 3) կարգեն զԱբրահամ պատրիարք (274 / 10)

ՋԱԲՈՒ ՄՍԼԻՄ- 1

և սպան գաղտուկ զԱբու Մսլիմ (292 / 2)

ՋԱԳԱԹԱՆԳԵՂՈՍ - 1

Եւ նոյնժամայն խորհուրդ բերեալ իշխանացն Հայոց Մեծաց՛ մատուցին առաջի թագաւորին զԱգաթանգեղայ Պատմութիւնն ցանկալի: (107 / 9)

ՋԱԳԻ - 5

և զագիս ձիոցն կարմիր ներկուածով տայր յարմարել (62 / 4) և ձիս սպիտակս կարմիր ներկուածով զագիսն կազմեալ, և զպուրս, և զագիսն թագաւորական ձիոցն թագիւ պերճացուցեալ (69 / 6; 69 /6) կտրէին և զվարսս պարանոցացն և ճակատուցն, և զագիսն ընդ մորթսն և ընդ ոսկրն մինչև ցկանգուն մի. անշքեղացուցանէին զտեսիլ նոցա իբրև զիշուց կահակրաց: (169 /8) Յայնժամ կալեալ զմանուկն Գրիգորիս՝ ընդ ամեհի ձիոյ կապէին զագւոյն և արձակէին ի դաշտին Վատնեայ: (38 /15)

ՋԱՋԱՏ ԱՅՐ - 2

Դարձեալ՝ եպիսկոպոսունք և երիցունք զազատ արանց առաջի արքայի եղեն տրտունջ (93 / 8) «ՋՊարսից և զՊարթևաց զբնական Պահլաւիկս և զազատ արանց զնախադրութիւն քաջ գիտեմ (106 / 15)

ՋԱՋԱՏԱՍՈՒՆ - 1

զի ի ժամ տապակէզ աւուրցն առեալ գերահրաշապետաւուրին զազատաստուն տոհմն հանդերձ Նամեսական զնդիւն ի հովիտս բարձրաբերձ լերանցն բերկրէին ծաղկատեսակ հանգստեամբ (221 / 12)

ՋԱՋԱՏԱՏՈՀՄ - 1

իսկ զԱրմենու զազատատոհմ և զնոցին նախապատուութիւն ոչ կարացաք գիտել՝ ոչ ի հարցն մերոց թագաւորաց և ոչ ի մատենագրաց: (107 /1)

ՋԱՋԱՏՈՒԹԻՒՆ - 1

Զի հակառակ Աստուծոյ պատուիրանացն է և կորուստ հոգւոյ և մարմնոյ՝ զազատութիւն եկեղեցւոյ ի ձեռն անարժանից մատնել: (309 / 8)

ՋԱՋԳԱԲԱՆՈՒԹԻՒՆ - 1

Աստանօր յայտարարութիւն սահմանացն Յաբեթի, և զազգաբանութիւն նորին գտցես յիւրում տեղւոջն: (4 / 3)

ՋԱՋԳԱՅԻՆ - 1

«Թէ մի՛ ոք իշխեսցէ զազգային առնել կին. (314 / 8)

ՋԱՋԳ - 4

Եւ արդ՝ դու մի՛ յապաղեր զազգդ ամենայն սատակել (170 / 10) և զմատաղատունկս արուացն և զազգն իգականացն պահեցէք ինձ և ձեզ ի ծառայութիւն և յաղախնութիւն: (154 / 3) Եւ ի սորա զաւակէ, ասեն,

սերեալ *զազգս* Ուտէացւոց, Գարդմանացւոց… (8 /16) բանալ զդրունս Չորայ, հանել *զազգս* ազգս բարբարոսաց և նոքօք վանել զթագաւորն Պարսից (141 / 3)

ԶԱԶԳ ԱԶԳ - Տե՛ս ԱԶԳ

ԶԱԹՈՌ - 19

Եւ ոչ կամեցեալ իւր իսկ ունել *զաթոռ* քահանայապետութեան: (34 / 24) ի սոյն ամի փոխեցին *զաթոռ* հայրապետութեանն Աղուանից ի Չորայ քաղաքէն ի մայրաքաղաքն Պարտաւ (119 /2) զի թողեալ զերկիր աղախնոյն՝ արկանէին *զաթոռ* տէրութեանն ի Դամասկոս: (193 / 10) և յաջորդէ *զաթոռ* նորին Եղիազար՝ այր բարի և ազնուական: (213 / 5) Ջեռնում յիրաւի. տագնապեալ այրիմ, Մինչ *զաթոռ* քո բարձրագահ ունայն քև հայիմ: (229 / 21) ԵՒ ՎԱԽՃԱՆ ԴԱԻԹԻ՝ ՄԵԾ ԿՈՒԵՆԻՑ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ. ԵՒ ԻՍՐԱՅԷԼԻ ՓՈԽԱՆՈՐԴԵԼ *ԶԱԹՈՌՆ* ՈՐԻՆ (233 /10) ԽՈՐՀՈՒՐԴ ՄԵԾ ԻՇԽԱՆԻՆ ՀՈՆԱՑ ԻԼՈՒԹՈՒԵՐՈՒ ԸՆԴ ՆԱԽԱՐԱՐՍ ԻՒՐ ԶԻ ԵՊԻՍԿՈՊՈՍՆ ԻՍՐԱՅԷԼ ԱՌ ՆՈՍԱ ՄՆԱՑՑԷ ՀԱՍՏԱՏԵԼ ԱՆԴ *ԶԱԹՈՌ* ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ (259 / 12) զի հաւանեսցիս լինել մեր տեսուչ և վարդապետ՝ կանգնելով ի Վարաչան քաղաքիս մերում *զաթոռ* հայրապետական: (260 / 17) Եւ յաջորդեաց *զաթոռ* նորին Անդրէաս (280/15) վերանորոգեցէք *զաթոռ* հայրապետութեանս մերոյ (300 / 3) առաք զայս իշխանութիւն և զպատիւ և *զաթոռ* առաքելական (306 /14) Փոխանորդէ *զաթոռ* հայրապետութեանն Աղուանից երջանիկն Միքայէլ զկնի Սիմէոնի. (313 / 12) և ոչ լինէր պարապ իշխանացն Աղուանից նորոգել *զաթոռ* հայրապետութեան Աղուանից:(334/11) Ի նոյն ժամանակս յերեք հարիւր երեսուն և վեց թուին եղև Աշոտի Բագրատունւոյ նստուցանել *զաթոռ* թագաւորութեանն իւրոյ ի մէջ Հայաստանեայց (335 / 12) որ ի սկզբանն թուականիս Հայոց փոխեաց *զաթոռ* հայրապետութեանն ի Չորայ ի Պարտաւ (342 / 15) յօրինէր զքահանայապետութեան զպատիւ և *զաթոռն* (36 /18) որ կալեալ *զաթոռն* ամս ԽԴ (119 / 5) Եւ Ներսէս կալաւ *զաթոռն* ուղղափառութեամբ ամս ԺԴ: (297/9) ԵՒ ՄԻՔԱՅԵԼԻ ՓՈԽԱՆՈՐԴԵԼ *ԶԱԹՈՌՆ* ԱՂՈՒԱՆԻՑ ԶԿՆԻ ՍԻՄԷՈՆԻ (311 / 9)

ԶԱԹՈՌԱԿԱԼՈՒԹԻՒՆ - 1

ՓՈԽՈՒՄՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌՈՅՆ ԱՂՈՒԱՆԻՑ Ի ՉՈՐԱՅ ԵՒ ՆՍՏՈՒՑԱՆԵԼ Ի ՄԵԾ ՔԱՂԱՔԻՆ ՊԱՐՏԱՒ *ԶԱԹՈՌԱԿԱԼՈՒԹԻՒՆՆ* ՍԱԿՍ ԽԱԶՐԱՑ ՀԻՆԻՆ (118 / 16)

ԶԱԼԻՔ - 2

Դիմեալ որպէս *զալիս* ծովու՝ նախահաս յԱստեղն լինէին բլուր: (100 /5) քանզի առաջնորդ մեր է հոգին սուրբ ճշմարտութեան և զաւազանն Մովսեսի, շնորհք սուրբ խաչին Քրիստոսի, առ ի հարկանել *զալիս* ծաւալեալ ծովուն առաջի մեր»: (159 / 13)

ԶԱԽՏ - 1

Ժողովեաց գումարեաց զզօրսն իւր խաւարայինս, յայտնեաց նոցա *զախտն* չար, որ տանջերն զնա: (21 / 3)

ԶԱԿԱՆԱԿԱՊ - 1

Իսկ զզարդուց եկեղեցեաց, *զականակապ,* զմարգարտայեռ սպասուցն ո՞վ իցէ բաւական առ ի պատմել: (153 / 12)

ԶԱԿՆ /թանկագին քար/ - 1

և ի գերութիւն վարեաց զփայտն կենաց՝ զխաչն լուսատու տիեզերաց … և զսպասսն ամենայն սրբութեանց կողմանցն այնոցիկ զոսկւոյ և զարծաթոյ և *զականցն* պատուականաց (129 / 8)

ԶԱՀ - 7

Սակայն և այժմ առ անգամ մի թողեալ *զահ* և զերկիւղ … ի նոյն կարգն դարձցուք. (128 /2) «Արք եղբարք, դուք ինքնին գիտէք զհարուածս մեծամեծս, *զահ* և զդողումն անյագ և անողորմ սրոյն (157/20) Եւ եղ *զահ* և զերկիւղ ընդ երեսս երկրի. (166 / 14) Ամենեքեան *զահի* հարան և դողացին՝ ի միաբանութիւն եկեալ, ելս իրացն խնդրեցին (21 / 3) Այս է, որ *զահի* հարեալ էի ի սկզբան պատմութեանս (23 / 11) Զայն հէն համբաւու լուեալ Չղախական գնդին Երուսաղէմեան՝ *զահի* հարեալ մեծաւ երկիւղիւ: (100/1) Քանզի տեսանելով *զահն* սաստկացեալ ժանտատեսիլ, ժպրհերես …դողումն կալաւ զնոսա առաջի նոցա. (135/20)

ԶԱՀԱԳԻՆ - 3

և ուղղեալ զնիզակն ընդ գաւակ ձիոյն յերկիր կործանէր *զահագին* վիրագն: (30 / 6) Յուշ առնէր հեղգացելոցն *զահագին* աստուածային դատաստանն (86 / 9) Եւ ինքն հոնն վառեալ էր յիսնանիւթեայ զրահիւք զբարձր և զլայն հասակն և բևեռապինդ սաղաւարտիւ *զահագին* գլուխն (109 / 19)

ԶԱՀԵՂ - 2

զիա՞րդ կամ որո՞վ օրինակաւ կարաց արգելուլ ի գառագեղն մահու *զահեղ* որսորդն՝ զառիւծն արևելից (146/7) որ լոյս անհնարին էր *զահեղ,* զմեծ փառացն Աստուծոյ: (216 / 7)

ԶԱՂԱՂԱԿ - 1

զաղաղակ բարձին և ասեն (136 / 17)

ԶԱՂԱՂԱԿ ԲԱՌՆԱՄ - 1

զաղաղակ բարձին և ասեն (136 / 17)

ԶԱՂԲԻՒՐ - 2

Քանզի բաժանեցին վիճակաւ յառաջագոյն ըստ գնդից գնդից զգաւառս և զշէնս, զհեղեղատս և զգետս, *զաղբիւրս* և զմօրս, զլերինս և զդաշտս (156/8) Ռահ մխիթարութեան գնացք քո փակեաց, Ուստի վշտագին վիրօք աչք իմ Ծորեն յար *զաղբիւրս* արտասուաց: (229 / 24)

ԶԱՂԵՂՆ - 2

Լարեաց *զաղեղն* իւր բանսարկու թշնամին, Եւ սրեաց որպէս զսուր զնենգիչ սիրոյն (227/9) լարեցին *զաղեղունս* ի վերայ նորա յիրս դառնութեան: (157 /8)

ԶԱՂԷՏ - 2

Ապա այնուհետև անդ էր տեսանել *զաղէտս* եղկելի անձանցն (138 / 4) Ապա եկեալ Շապուհ արքայ ի վճարմանէ պատերազմին, ետես *զաղէտսն* (108 / 21)

ԶԱՂԻՍԱՇԱՐ - 1

և ոչ կարէր քակել *զաղիւսաշար* պոյր գմբեթին (97 / 8)

ԶԱՂԽ - 1

Եւ առեալ *զաղխն* իւր ընդ իւր…զերծաւ գնաց անկաւ ի կողմանս Պարսից: (154 / 11)

ԶԱՂՋԻԿ - 1

հրամայեաք արձակել զամենայն անձինս գերեալս ի զօրաց քոց՝ զարս և զկանայս, *զաղջկունս* և զմանկունս (163 / 2)

ԶԱՂՏԵՂԻ - 1

Հրաման տայր … ի բաց լքանել թողուլ զդիցապաշտութեանն զկարգս՝ *զաղտեղի* դիցն զոհամատոյց պաշտամունս: (47 / 14)

ԶԱՂՈՒԱՆՔ - 7

Այսպէս՝ առ նախանձու հայրապետքն Երուսաղէմի խանգարեցին զՀայոց և *զԱղուանից* անդ ձեռնտուութիւն ի վանորայիցն. (286 /7) կարգեն զԱբրահամ պատրիարք և *զԱղուանիցն*՝ արքեպիսկոպոս, և զՎրացն մետրոպոլիտ: (274 /10) առաւել լուսաւորէ *զԱղուանս* (14 / 15) ԵՒ ԽՈՍՐՈՎՈՒ ԳԱԼՆ ՅՕԳՆԱԿԱՆՈՒԹԻՒՆ ՋՕՐՕՔՆ ԵՒ ԱՌՆՈՒԼ *ԶԱՂՈՒԱՆՍ* ԵՒ ԶՀԱՐԿՍՆ (29 / 4) Իսկ հայրապետն Աբրահամ ասէր լինել յառաջահաւատ քան զՎիրս, *զԱղուանս* (274 / 12) Եւ ել Խազրաց տէրն ութսուն հազար արամբք և էառ *զԱղուանս.* (319 / 3) որք *զԱղուանս* ժառանգեցին որդի ի հօրէ առնլով: (326 / 14)

ԶԱՂՈՒՀԱՑ - 1

Եւ որ ի չորեքշաբթի և յուրբաթի միս ուտէ յառաջ քան *զաղուհացն,* մի շաբաթ պահեսցէ. (92 / 9)

ԶԱՂՕԹՔ - 2

կատարեաց *զաղօթս* (189/18) և բազկատարած եղեալ առաջի Աստուծոյ զոհութեամբ զառաւօտին կատարէր *զաղօթս:* (202 / 11)

ԶԱՄ - 8

որ *զամ* մի ողջոյն դողացուցեալ խորասուզեաց յանդունդս անձինս իբրև երկոտասան բիւր մարդկան: (333 / 8) և *զամն* ողջոյն յըղձալի և ի խաղաղաւէտն անցուցանէ հանգիստ: (190 / 3) *զամս* կենաց նորա ոչ դառնալ նմա յերկիր իւր. (150 / 15) *զամս* եօթն ի պատերազմունս յայսոսիկ տարժանեալ մրցէր քաջն Ջուանշիր մետասան դժնդակ վէրս յանձն առեալ (176 / 17) զոր շինեաց փոքրիկ հիւսն և որդի իւր Յոհան՝ նպաստաւորեալ և Բախդանէր դարբին *զամս* երիս (281 / 15) վասն խռովութեան թագաւորին կացին ի մթին տան ընդ երկրաւ *զամս* ԺԲ (312 /14) Եւ դարձեալ ապստամբքն ի Բաբանայ դիմադարձ պատերազմաւ ամրացան ի բերդն Գորոզու և կալեալ զգաւառսն *զամս* ԺԲ (327 / 9) և *զամս* Գ կալաւ զՀայս (333 / 5)

ԶԱՄԱՂԷԿ - 1

մի՞թէ առաւել իցէ քան զընկղմելն Փարաւոնի, կամ ամբառնալ խաչանման ձեռացն Մովսեսի ի հարկանելն *զԱմաղէկ* (170 / 1)

ԶԱՄԱՆ - 1

եդեալ առաջի *զամանս* լցեալ ի մսոյն պղծոյ. (162 / 7)

ԶԱՄԱՌՆ - 1

Իսկ ի ՃՀԴ թուականութեանն Հայոց *զամառն* մահ անասնոց և ձմեռն աշխարհագիրն Հերթի, որ արկ զմարդ և զանասուն և զսահմանս (320 / 6)

ԶԱՄԱՐԱՍ - 1

Իսկ ի լնուլ ՄՀ թուոյ հայոց ելին գաղտաբար ի Պարտաւայ արք ընտիրք ի Տաճկաց և յաւարի առին *զԱմարաս* գաւառ (326 / 2)

ԶԱՄԲԱՍՏԱՆԱԿԱՆ - 1

Զորոց ի շրջաբերական թղթին վասն Կիւրիոնի դիմադարձութեան Աբրահամ *զամբաստանականս* վասն նորա գրէ յազգ ամենայն (270 / 9)

ԶԱՄԲԱՍՏԱՆՈՒԹԻՒՆ - 1

Յայնժամ զգետնեաց զնա այսն պիղծ ի տեսիլ ամենեցուն *զամբաստանութեանն* կտակ ի մէջ բերեալ: (213 / 10)

ԶԱՄԲԱՐԻՇՏ - 1

որք հարեալ սատակեցին և համաջինջ արարին *զամբարիշտն* իշխանսն Պարսից աշխարհին (43 / 14)

ԶԱՄԲԱՐՇՏՈՒԹԻՒՆ - 1

Եւ *զամբարշտութեամբ* մթերեալ անբաւ մեծութիւնն աւարեալ ի բաց բառնային (45 / 6)

ԶԱՄԵՆԱԶՕՐ - 1

մանաւանդ զնշանին *զամենազօր* գալստենէն առաւել լինէր գոհացող. (182 / 17)

ԶԱՄԵՆԱԿԵՑՈՑՑ - 1

գտաք *զամենակեցոյց* խաչին մասն (210 / 6)

ԶԱՄԵՆԱՅՆ - 89

զամենայն վնասն ի հայրն իւր արկանէր. (17 / 10) պատմէր *զամենայն* մոլորութիւն հեթանոսաց (19 / 9) Իսկ դու լիալայն, բարձր լուսասարաս … պայծառ և գեղեցիկ քան *զամենայն* հասակակից ընկերս քո: (24 / 10) «Որ թողցէ վասն աւետարանին զհայր և զմայր և զքոյր և զեղբարս և *զամենայն* ստացուածս իւր (25 / 9) Զի թէ մինչ տղայն էիր, յաղթեցեր նմա, ի չափ հասեալ, գիտեմ, թէ առ ոտն կոխես *զամենայն* մենքենայս չարեաց նորա: (26/13) *զամենայն* ինչս և զմեծութիւնս փոխանակեցեր ընդ միոյ տեառն ամենայնի. (27 /17) Եւ տայր ուսանել պահել *զամենայն* տէրունեան պատուիրեալսն (37 / 7) կամէր բառնալ *զամենայն* թագաւորութիւնս աշխարհի միանգամայն. (42 / 11) և մաղթէր բազում աղաչանօք զեպիսկոպոսսն և զերիցունս և զանապատականս և *զամենայն* ուխտ եկեղեցւոյ (48 / 15) Եւ զաւազակս և *զամենայն* վնասակարս բնաջինջ արարեալ յաշխարհէն

Աղուանից։(55 / 7) Յայնժամ յոյժ տրտմութիւն կալաւ զթագաւորն և զամենայն ժողովս բանակին (80 / 12) «Զամենայն բարի զոր խնդրեսցես դու յԱստուծոյ, ի ձեռն սրբոյն Գրիգորիսի տացէ քեզ (84 / 15) ժողովեաց զամենայն զօրս Հոնաց և անց յայս կոյս Կուրական գետոյն (99 / 9) Եւ ինքեանք զառօրեայ արշաւանսն վճարելով՝ ածին ժողովեցին զամենայն առ և աւար գաւառին (100 / 17) որ լսէր զամենայն խօսս նորա։ (101 /17) զամենայն ոք մեծարեալ ցուցանէր։ (106 /12) զնախանիստ բարձ, զպատիւ, և՛ զտուն, և՛ զհող, և՛ զջուր, և՛ զամենայն ստացուածս ձեր Արեաց ազատ արանց շնորհեսցուք (107 /6) և՛ զոր ինչ բառնալն կարացին ի թագաւորական տանէն, և զամենայն մեծամեծաց տանց աւար առեալ յոյժ անբաւս, ժողովէ զամենայն ի Բաղաբերդ։ (108 / 11;108 /11) Եւ զամենայն գաւառացն իւրոց դարմանս անասնոց այրել հրամայեաց (108 / 12) Եւ ժողովեալ աշխարհին որ ինչ եկեղեցւոյ էր զարդ, զամենայն բերեալ ի Շաղատու եկեղեցին. հաւաքէին և զնշխարս սրբոց և լալով համբուրէին իւրաքանչիւր ոք։ (108 /15) կուտեաց զամենայն բազմութիւն զօրաց իւրոց (114 / 4) և այսպէս կատարեալ զամենայն ըստ կարգի իւրեանց։ (116 /15) և մեք նզովեմք զամենայն, որք այսմ հաւանեցան կամ հաւանին։ (125 / 10) Ժողովեալ և նորա զամենայն զօրս զօրութեան իւրոյ, գայր վաղվաղակի հասանէր առ նիզակակից օգնականն իւր. (138 / 1) Նա և զամենայն ժամանակս իւրոյ թագաւորութեանն միաբանէր առ իւր զամենայն տունն Հռովմայելեայ (140/17; 141/1) ընդ նմին և առնուլ ասպատակաւ յաւարի զամենայն աշխարհս, որ ընդ հնազանդութեամբ Պարսից արքայի (141 /12) «Եթէ ոչ դարձուցանես զերեսս քո ի թագաւորէն Հռովմայեցւոց և թողցես ի նա զամենայն աշխարհս և զքաղաքս, զոր առէր բռնութեամբ քոյով և յուղարկեսցես զամենայն գերեալսն յերկրէ նորա, զոր այժմդ ունիս ընդ ձեռամբ քոյով հանդերձ փայտիւն խաչի, զոր ամենայն ազգ քրիստոնէից երկիր պագանեն և փառաւորեն, և կոչեսցես արտաքս քան զսահմանս նորա զամենայն զօրս քո.(142/18; 142/19; 143/2) և յախուռն կոչէր արտաքս զամենայն կալանաւորս արքային (147 / 5) և արձակեաց զամենայն կալանաւորս մեծի բանտին զարգելեալսն ի հրամանէ քումմէ.(148 / 3) Եւ արձակեաց յիւրաքանչիւր տեղիս զամենայն կալանաւորս (149 /3) և զամենայն հարկս և զմաքս արքունի երեքամեայ ժամանակս ընդ ամենայն տեղիս իւրոյ տէրութեանն շնորհեալ ամենեցուն։ (149 / 5) զի մի՛ ոք կապեսցէ զսուր իւր յազդեր իւրում զամենայն ժամանակս թագաւորութեան իւրոյ։ (149 / 7) Մինչ դեռ նոքա զայս խօսէին, յանկարծակի պատեաց մէգ և մառախուղ զամենայն երեսս երկրիս մերոյ առ հասարակ (156 /1) Եւ ժողովեալ առ ինքն կաթողիկոսին զամենայն գլխաւորս, զորդիս թագաւորազանց մեծաց աշխարհիս (157 /16) և հրամայեա՛ արձակել զամենայն անձինս գերեալս ի զօրաց քոց (163 / 1) և եկեր զամենայն բոյսս և սպառեաց զամենայն պտուղ անդաստանաց մերոց։ (164 /4; 164 /5) Եւ ի ժամուն յայնմիկ և ի խառնել դալարոյն առաւել էր թիւ սատակելոցն, քան զամենայն աւուրս ձմերայնոյն։ (165 / 8) ետ Աստուած կատարել զամենայն կամս իւր (166 /7) Նա և զանցս վաճառաց և զկարթընկէցս ձկնորսութեան մեծամեծ գետոցն Կուրայ և

Երասխայ՝ *զամենայն* ճշդիւ պահանջէր (167 / 1) ստուգեաց *զամենայն* բարութիւնս երկրիս (167 / 2) և բովանդակ *զամենայն* կուտեալս բաժանեցին յինքեանս. և, ըստ սովորութեանն իւրեանց, *զամենայն* գեղեցիկ երիվարացն հերձուին զլանջս և զշնչափողսն (169 /6; 169 /7) Զնա տեսեալ կայսերն՝ խնդամիտ համբուրիւ յառաջագահ անդ զնստելն առձեռնէր քան *զամենայն* մեծամեծացն: (185/5) Եւ զինչ թագաւորականն սպաս էր, *զամենայն* նմա հրամայեաց տալ (185 / 6) գերի վարեալ *զամենայն*ի բանակետղն ժողովէին: (190 / 14) որ պատուականն ևս է, քան *զամենայն* թոչունս (197 / 16) որով արար նախամեծար քան *զամենայն* իշխանսն (199 / 1) *զամենայն*ի միտ առնուլ զասացեալսն (202 / 5) Զայսոսիկ *զամենայն* լսելով եպիսկոպոսին Դաւթայ … մտախոհ եղև իբրև ժամ մի. (203 / 3) *զամենայն* ինչ փորձեցէք և զբարին ընկալարուք: (204 / 10) *զամենայն* երկբայութիւն ի բաց ընկեցեալ յիմոց մտացս (210 / 9) առնոյր և հրաման ի նոցանէ գործել *զամենայն* համարձակապէս: (219 /11) Եւ առժամայն կալեալ վարձաւորս արս ճարտարս հիւսանց և պատշաճաբար յօրինեալ զնշան խաչին քանդակակերպ զարդու դրուագելով պատրաստեցին *զամենայն* ըստ գործոյ տեառն: (219 /16) զայրագնեալ վիրաւորէր *զամենայն* մարմինս նորա իբրև զթունաւոր օձ (223 / 12) Որ *զամենայն* գերչաց փարատէր զյուզմունս: (228 /19) աւար առեալ գերէին *զամենայն:* (232 / 11) զի ասպատակ տուեալ յանխնայ գերէին, քանդէին *զամենայն* (232 /14) Որ լուսաւորեաց իսկ *զամենայն* տիեզերս (243 / 1) «Անօրէն իշխանն յորժամ աստուածանալ կամեցաւ՝ ձեռն արկանէր և *զամենայն* մարդիկ մեղօք կապէր: (244 / 6) Յոբաղ՝ որդին Ղամեքայ եհան զերգս և զքնարս, մանաւանդ թէ զփողս և զտաւիղս և զթմբուկս և *զամենայն* ձայն արուեստական (244 / 12) որ զարեգակն և զլուսին արարեալ է և զերկինս և զերկիր և զծով և *զամենայն,* որ ի նոսա: (247 /10) «Հուր վառեսցի ի վերայ ամենայն փայտի ազարակի և կերիցէ *զամենայն* ամբարիշտս և միթ շիջցի»: (247 /14) Եւ *զամենայն* յաւելուածս չարեաց հերքելով ի բաց ի մտաց իւրոց, իբրև զորդի ծնեալ մանուկ անխարդախ կաթինն փափագէր: (250 / 2) թօթափելով ի բաց *զամենայն* ախտս չարեաց անօրէնութեան ձերոյ (256 / 8) Օրինակ բերցուք մեզ *զամենայն* աշխարհս հաւանեալս այսմ հաւատոց (260 /3) և այսու հաւատով հզօր յաղթութեամբ *զամենայն* թշնամիսն իւր կործանեաց: (260 / 7) ես Իլութուեր ընդ քեզ և *զամենայն* հեթանոսական պաշտամունս բնաջինջ խլեցից յերեսաց Հոնաց երկրիս (260 / 18) եկին հասին նոքա յաշխարհս Աղուանից և Հայոց … պատմելով *զամենայն,* զոր ինչ արար Աստուած ի ձեռն նորա յաշխարհին Հոնաց (264 /5) որպէս և *զամենայն* աշխարհս առաւել փառաւորեցաք զմարդասէրն Աստուած (264 /16) վասն որոյ բարձրամտեալ նկարչաց՝ զինքեանս գերագոյնս կամէին առնել, քան *զամենայն* արուեստս եկեղեցականս: (267 / 9) որոց *զամենայն* արարածս ի պաշտօն էր առեալ: (269 /9) և եղ *զամենայն* աշխարհս իբրև զհող ի կոխումն: (280/11) «Գիտեմ, զի անարժան եմ ի սպասաւորել դոցա, այլ քո հանդերձ, Մխիթար, վստահ

լինիմ ի սպասաւորել *զամենայն* աւուրս կենաց մերոց: (281 /13) այժմ տաճիկ ունի *զամենայն:* (286/3) թափեցին ի բռնութենէ հայրապետացն *զամենայն* վանորայսն. (286 /10) և ես արարից *զամենայն* Աղուանս խոստովանութեամբն Քաղկեդոնի»: (293 / 8) և զեղկելոյն Ներսիսի գրեանն…առեալ *զամենայն* ետ ի գետն Տրտու (297 /15) Եւ արդ մեք ամենեքեան նզովեմք *զամենայն* հերձուածողսն՝ զառաջինս, և զմիջինս, և զվերջինս (301 /3) պարտ և արժան է մեզ պտղաբերել Աստուծոյ պտուղ բարի և քաղցր ի հաճոյս նորա և շինել ի վերայ հիմանն առաքելական, որ է Յիսուս Քրիստոսի՝ ոսկի, արծաթ, ականս պատուականս, այսինքն՝ զզանազան առաքինութիւնս և *զամենայն* գործս բարիս (307 / 2) դաւով և խաբէութեամբ առ ինքն ժողովեաց *զամենայն* գլխաւորս Հայոց (318 / 6) Նա և *զամենայն* ժամանակս կենաց իւրոց աւազան քաւութեան զարտօսրն իւր արարեալ՝ լուանայր (319 /16) և ժողովեալ անթիւ զօրս՝ պատերազմին ընդ Ղիոնի ամս ԺԵ ապականելով *զամենայն* երկիրն: (323 4) որ իբրև զհուր լափեաց *զամենայն* գեղեցկութիւն և զփառս մարդկան. (324 /14) *զամենայն* ստացուածս նորա յափշտակեցին: (326 /13) *զամենայնն* ի նա ընձեռեաց ազգաց յազգս (185 /11) և փախստեամբ դարձուցանեն ի Հայս՝ թափուր և ունայն *զամենայնն* առնէին: (336 / 9)

ԶԱՄԵՆԱՉԱՐ - 1

և նոյն ինքն թագաւորն, *զամենաչարն* զՊերոզէ ասեմ, սրով խողխողեալ ի մէջ անթիւ դիականցն լինէր կորուսեալ (45 / 4)

ԶԱՄԵՆԱՊԱՏԻԿ - 1

յօրինէր զքահանայապետութեան զպատիւ և զաթոռն և զմարտիրոսութեանն *զամենապատիկ* բարձրութեանց պսակն: (36 / 18)

ԶԱՄԵՆԱՍՏԵՂԾ - 1

և ետ մեզ ճանաչել *զամենաստեղծն* Աստուած (259 / 18)

ԶԱՄԵՆԱՍՈՒՐԲ - 11

ցուցին զպատուական և *զամենասուրբ* նշխարս ոսկերացն: (34 / 16) Եւ տարեալ *զամենասուրբ* նշխարս վկայիցն ի մեծ քաղաքն Յրի Աղուանից իշխանութեանն (37 / 13) առաքէր փութապէս առնուլ առ իւր *զամենասուրբ* նշխարս վկայիցն: (60 / 14) Գտանէր և *զամենասուրբ* նշխարս Գրիգորի (66 /15) զի տայ ինձ Աստուած ի ձեռն մեծիս Գրիգորի *զամենասուրբ* նշխարս սրբոյն Գրիգորիսի»: (68 / 8) Եւ զինգեսեան *զամենասուրբ* վկայսն Քրիստոսի … առեալ ի բարեխօսութիւն մեծին և բոլորեցուն Աստուծոյ առ ի շնորհելոյ ի ձեռն նոցա զինքեան փափագելին: (68 / 18) գտին *զամենասուրբ* նշխարս երանելւոյն ըստ եկեալ ձայնի հնչմանն: (70 / 12) Զի ուխտիւք խոստացեալ էին առ միմեանս կատարել ի տեղւոջն *զամենասուրբ* զատիկն: (99 / 4) և դառնային խաղաղութեամբ ի տեղի իւրեանց՝ փառաւոր առնելով *զամենասուրբ* Երրորդութիւնն: (266 /12) Եւ զինգեսեան զամենասուրբ վկայսն Քրիստոսի՝ զմեծն Գրիգորիոս և զերանելին Զաքարիա և *զամենասուրբն* Պանդալիոն … առեալ ի բարեխօսութիւն

մեծին և բոլորեցուն Աստուծոյ առ ի շնորհելոյ ի ձեռն նոցա զինքեան փափագելին: (68 / 19) Եւ հրամայեալ այնուհետև զսուրբ Զաքարիա և *զամենասուրբն* Պանդալիոն, զմեծ և զյոյժ հռչակելին Գրիգորիոս և զՀռիփսիմեայ Գայիանեաւ հանդերձ բերել և դնել առաջի բրածին: (80 / 18)

ԶԱՄԵՆԱՎԱՅԵԼՈՒՉ - 1

Եւ վաղվաղակի սրով գլխատեալք ընդունէին զերանութեան զպսակն և *զամենավայելուչ* նահատակութեան յաղթանակ մրցանակն (40 / 8)

ԶԱՄԵՆԵՔԵԱՆ - 17

լուսաւորեաց զմասունս ինչ արևելից հիւսիսոյ, այլ ոչ *զամենեսեան.* (14 / 5) Յայնժամ ահ և երկիւղ սաստիկ *զամենեսեան* լնոյր (33 / 18) ձեռնադրութեամբ *զամենեսեան* բժշկէր (36 / 5) Հրամայէր *զամենեսեան* ածել ի տեղի սպանմանն. (53 / 9) օգնութիւն հասեալ յամենազօրէն յԱստուծոյ որպէս թէ եկեալ ոք *զամենեսեան* կանգնէր: (59 /9) և անձանփրոյթ կատարէր զյիշատակ սրբոցն՝ յորդորելով *զամենեսեան* ի հաւատսն Քրիստոսի. (64 /10) յոյժ տրտմութիւն կալաւ *զամենեսեան:* (70 /11) վասն որոյ նախապատիւ ես քան *զամենեսեան* (104 /4) Ահ կալաւ *զամենեսեան:* (111 /12) Եւ հրամանաւ արքայի ստիպեն *զամենեսեան* և ասեն. (113 / 2) և սրոյ ճարակ *զամենեսեան* առնէին ընդ երեսս դաշտին. (114 / 16) նմանապէս և մեք նզովեմք զհին *զամենեսեան* եղեալ հերձուածողսն (125 / 3) զոր միշտ առաջի շրջեցուցանէին և նախամեծար քան *զամենեսեան* առնէին. (175/ 7) որ և զանազան իսկ խոհականութեամբ նուաճէր իսկ *զամենեսեան* ընդ իւրով իշխանութեամբ (221 / 7) նուաճեալ ընդ ինքեամբ *զամենեսեան* յարազուարճ ցնծութեամբ յաղթող և հզօր գոլով ի վերայ սահմանաց իւրոց: (233 / 15) Եւ մեծաշուք մեծարանօք յաթոռակցաց և ի գլխաւորաց և ի ժողովրդականաց առաւել քան *զամենեսեան* լաւ ցուցանէր զիւր վարդապետութիւնն: (235/8) Այսք ամենայն միաբանեալ՝ ապա կարեն ձեռնադրել զհայրապետն, և հայրապետն *զամենեսեան:* (272 /10) գոհացեալ *զամենեցունց* թագաւորն (84 / 11)

ԶԱՄԵՆԵՔԻՆ - 7

Եւ իբրև սպառեսցես *զամենեսին* առ հասարակ, կոչեսցես զտեղի պատերազմին Գերեզմանս թշնամեաց: (168 / 13) և բերկրեալ զուարճացոյց *զամենեցուն* հոգիս: (28/1) խնդրելով *զամենեցուն* ցանկալին՝ զսուրբ նշխարս սրբոյն Գրիգորիսի: (69 / 12) հայցել *զամենեցուն* զցանկալին՝ զԳրիգորիս: (70 / 2) Եւ նա այնպէս ի վայրկեան ժամանակի գողացաւ *զամենեցուն* սիրտ. (146 /10) ի ձեռն իմաստակիր և քաղցրահամբոյր խօսից նուաճէր և յանկուցանէր յինքն *զամենեցուն* սիրտ: (231 / 16) և ուր առաքեալ էր վախճանեալ՝ *զամենեցուն* աթոռ պատրիարք խոստովանեցին: (273 / 13)

ԶԱՄԵՆ - 2

զտնօրինականն կատարեալ *զամենիցս* (10 / 1) Եւ առեալ *զամենն* ի դուրս՝ ողջունէին ամենայն բազմութիւնն մինչև ցերեկոյ. (81 / 18)

ԶԱՄԵՆՈՂՈՐՄ - 2

ցաւակից և աղօթակից լինել իւր առ ի հաշտեցուցանել *զամենողորմ* Աստուած: (48 / 16) աղաչելով *զամենողորմն* Աստուած, զի յանգումն արասցէ անտանելի հարուածոցն: (166 / 1)

ԶԱՄԻՍ - 3

և պաշարեաց զարքայ ի Տիզբոն քաղաքի *զամիսս* վեց: (176 / 2) ոչ տայր նոցա թոյլ *զամիսս* վեց անցանել ընդ Դկլաթ գետն (176 / 5) և քաջամուխ կացին ի մարտի *զամիսս* ԺԳ: (334 / 9)

ԶԱՄԻՐ ՄՈՄՆԻ - 1

Եւ գիտութիւն իմն զայս ուսաք *զամիր մոմնւոյ* դարապասին (330 / 6)

ԶԱՄՊԱԽՐՈՒՏ - 1

և *զամպախրոխտ* բարձրութիւնս նորա խորք ծածկեցին: (192 / 12)

ԶԱՄՐՈՑ - 2

Յայնժամ ամենայն մեծամեծքն առաջի անկեալ՝ աղաչէին մի ևս տալ պատերազմ, այլ շուրջ *զամրոցաւն* աւերել: (109 / 8) Եւ առեալ *զամրոցն* նորա և զթագուհին հանդերձ տիկնամբք… բազում գանձիւք խաղացուցեալ ի գերութիւն: (336 / 16)

ԶԱՄՈՒՐ/գ./ - 1

այրէին *զամուրս* արգելանոցաց նոցա (115 / 15)

ԶԱՅԳՈՑ - 2

և ինքն չուեալ *զայգոյ* զատկին հանդերձ քահանայիւքն սրբովքն և այլ բազում հաւատացելովք՝ խաղայր գնայր Ագիստոսեան գնդիւն: (103 / 6) Յառնէր ի քնո իբրև զկորիւն առիւծուց՝ Ուծեալ *զայգուն* յափշտակէր և զբլթակս ոչխարաց բաշխէր: (228 / 23)

ԶԱՅԴ - 13

Զայդ աղքատի ումեք դիւրագոյն է առնել (25 /10) մի՛ առներ *զայդ,* մինչև արքայն ևս տեսցէ: (79 / 7) Ապա եթէ կամաւ *զայդ* ոչ առնէք, հրաման ունիմք ի գիւղս և յագարակս շինել ատրուշանս (113 / 3) «Արա՛ *զայդ* և ապրեսցիս դու և տուն քո և ամենայն մնացորդք երկրի քոյ. (157 /13) «Զիարդ մարթէք և իմանայք և գիտէք առնել *զայդ* (250 /14) և տայք դմա զիշխանութիւնդ *զայդ* հանել, աւերել, քակտել զմեհեանս աստուածոց ձերոց: (251 /3) «Ոչ է ինձ իշխանութիւն առանց մեծի հայրապետին Աղուանից՝ սրբոյն Եղիազարու առնել *զայդ* (261 /4) Եթէ Աստուծոյ և նոցա հաճոյ թուեսցի, կատարեսցէ Աստուած զբանդ *զայդ:* (261 /12) Բայց պարտ է ձեզ *զայդ* խորհուրդ մտածութեան գրով ծանուցանել առ համօրէն աշխարհն Աղուանից (261 /14) «Ուստի՞ է քեզ *զայդ* գիտել: (288 / 6) *Զայդ* հրաման ունիմք մեք յԱստուծոյ (309 /1) զոր յայսմհետէ և յառաջ մի՛ոք իշխեսցէ առնել *զայդ* այդպէս: (309 / 7) «Ի տան իմում պատուականագոյնք գտանին քան *զայդոսիկ* (312 / 3)

ԶԱՅԼ - 20

և զայլ վիրաւորեալսն կարող է վաղվաղակի ածել յառողջութիւն: (49 / 12)Եթէ զայլ ոք մատնեալ կախարդութեամբ չար դիւացն, զնոյն աղէտս կուրութեան և պիսակութեան ի վերայ հասուցանէին: (55 /4) Երէց, որ զշէն մեծ պահէ, զայլ շէն մի՛ պահեսցէ. (91 /17) և զայլ ազգի ազգի հնարս յօրինեալ ի ձեռաց ճարտարացն Հռովմայեցւոց (138 /15) և զայլ սրբութիւնսն յուղարկեցաք ի ձեռն քորեպիսկոպոսաց և քահանայից (210 / 11) Ապա եթէ պատրիարք որ ունիք, և ոչ զայլ կղերս եկեղեցւոյ բովանդակ, յայտնի է՝ խոտորեալ հերձուածողք էք ընդ Արիոսս և ընդ խուժաստանս և ընդ այլ չարափառս»: (273 / 6) որում ոչ հաւանեալ Աղուանից՝ զայլ ոմն երևեցուցին (274 / 15) Եւ զայլ աշխարհի զառաջին սովորութիւնն իւրեանց թողին (275 /11) իսկ զայլ խօսսն, որք ոչ ըստ սոսայն միաբանին, իբրև զպարզամիտս խաբելոյ կեղծաւորութեան դուռն առ մեզ հաւատացեալ փակի (278 /1) և զայլն մեծաւ զգուշութեամբ և զանազան սպասուք ինքն իսկ սպասաւորեալ՝ պահէր թագաւորական կնքով կնքեալ: (82 / 19) Ես Վիրոյ Աղուանից և Լփնաց և Չորայ կաթողիկոս թողում ասել զայլն ամենայն զպէսպէս զազրալիս (166 / 2) և զայլոց չաստուածոցն խափանել զնուէրս (249 /16) սատակէր զՎուրկն քաջ՝ զեղբայր թագաւորին Լփնաց և զայլս անհամարս (115 / 3) Քաղցր էր զայլս ասել ևս և միշտ հեծել, Բայց քաղցրագոյն ևս ընդ քեզ մեռանել: (230 / 16) որ կամին դիւապաշտ կախարդութեամբն զարհուրեցուցանել զիս, որպէս և զայլս ի մարդկանէ մոլորամիտս: (254 / 11) բայց արդ՝ որպէս նոքա զայլսն առնէին, դու նոյնպէս արա զնոսա: (54/11) նոքօք հանդերձ հալածեաց ի տանէ Աղուանից զպիղծ վարդապետս աղանդոյն այնորիկ՝ զԹոմասն կեղծաւոր և զփսաղտն Եղիա և զԲնոտն և զԻբաս և զայլսն ընդ նոսա (126 / 15) և զայլսն ամենայն ի նոյն օրինակի յիւր անուն՝ զառաւելն ի վերայ յաւելեալ: (130 /1) և զայլսն արգելեալ յերկրորդ դրանն, և փոխեալ ի նոցանէ զօժիտսն ի բազուկս իւրեանց, տարան զկաթողիկոսն միայն ի ներքսագոյն խորանն (160 /16) որ մեծ է քան զայլսն դահճապետաց աւագ (330 / 7)

ԶԱՅԼԱԶԳԻ - 1

և զայլազգի ազգսն…զկարգ աստուածապաշտութեան ուսուցանէր (95/15)

ԶԱՅԼ ՈՄՆ - Տե՛ս ԱՅԼ

ԶԱՅԼ ՈՔ - Տե՛ս ԱՅԼ

ԶԱՅՆ - 64

սակայն հանին, դիզեցին և հսկեցին յաղօթս զգիշերն զայն: (11 /10) Զայն լուեալ թագաւորին Պարսից Պերոզի՝ ի զիղջ եկեալ, զամենայն վնասն ի հայրն իւր արկանէր. (17 / 9) Առ զայն ի թագաւորէն (17 / 15) ընդ նմին և զայն գիտասջիր. (24 /16) և մարթ էր զայն բանիւ ընդ պատմութեամբ արկանել (26 / 14) զայն աւար առեալ (83 / 9) որ բազում անգամ տեսեալ էր զնշանն զայն (97 /1) Զայն հէն համբաւու լուեալ Չղախական գնդին Երուսաղէմեան՝ զահի հարեալ մեծաւ երկիւղիւ: (100 / 1) Քանզի մեծ զօրավարն Հոնաց անդէն բանակեալ կայր իւրովն զօրօք զայն գիշեր: (101 /4) Իսկ զայն իբրև լուան անօրինացն ջոկք, չոգան պատմեցին իշխանին իւրեանց (101 /16) Զայն տեսեալ քրիստոսազարդին Թէոփիլեայ և Ագիստոսեան գնդին՝ մատուցանէին և

նոքա պատարագս Աստուծոյ ըստ կարգի քրիստոսական կրօնից (103 /14) իբրև զայն տեսանէին, աճապարէին յիւրաքանչիւր երիվարս՝ փախստական լինել յանօրէն թագաւորէն. (105 / 6) Եւ առեալ զիւրոյ զօրութեանն զզէն և ճաճանչաւոր մարգարտական զրահիւք արքունի զվայելչականն զայն՝զարդարէր զհասակ (110 / 9) Զայն օր մեծապէս կատարեցին տօն. (111 / 15) Իսկ նոքա իբրև զայն լուան, իսկոյն հասին ի տեղին, և ականատեսք լինէին յաջողմանն. (116 /12) տէր է բարձրեալն թագաւորութեան մարդկան և ում կամի, տայ զայն: (130 / 6) զի ուր տարայց, հանգուցից, յորժամ հանից ես անտի զայն ամբոխ բազմութեան. (134 / 13) ետես իշխանն՝ տէրն նոցա զայն ամենայն աղխ գերութեան աւարացն մարդոյ և անասնոյ (134 / 17) Եւ բերեալ զայն եդին ի վերայ պարսպին յանդիման նոցա (140 / 2) Տեսեալ նորա զհրամանն զայն խիստ (144 / 18) տեսին նախարարքն Պարսից զայն ևս բեկումն մեծ, որ եղև զօրացն Պարսից (145 / 3) որք տեսին զվիհին զայն մեծ: (164 / 10) և զերկայն զայն ուղի և կարճ բերելով գային շրջագայութեամբ անդ ի Պերոզ Կաւատ քաղաք (180 / 5) զուարճանայր, զուարթանայր, բազմամեծար ուրախութիւն զօրն զայն առնէր (181 / 16) Որ և զգիշերն զայն փակեալ զինքն ի քնոյ՝ անցուցանէր խորհելով զաշխարհին իւրոյ զօգուտն: (183 /3) Եւ զայն օր ևս արար յաղթութիւն մեծապէս (187 /1) Եւ իբրև կատարեաց զաղօթս, մատոյց և զայն, որ յաղագս նորահրաշ տօնին էին պատարագք(189 / 18) Արդ՝ ձեռնարկեցից և զայն ասել,եթէ որպէ՛ս կամ զինչ պատճառաւ շնորհատուն այն խաչ ծագեաց նմա ի խաւարէ լոյս կամ քաղել ծաղիկ ի հրոյ: (192 / 2) հրամայեաց շնորհել նմա զայն (197 /12) Թողու զայն յաւելուած փառաց (198 /11) Նորա լուեալ զայն՝ուրախութեամբ գոհանայր զտեառնէ (203 /6) Իսկ զայն աստուածային նշանն … տեսանէր Մեծիրանց հայրն հովուապետն Յովէլ (207 /4) Որոյ զայն ահա տեսեալ սրբոյն՝ հմտաւորեալ թէ ի վերուստ է ազդեցութիւնն, յայտնէ նմա զխորհուրդն (218 /11) ետես իշխանն Աղուանից Վարազ Տրդատ զայն ամբոխ բազմութեան գնդին (232 / 13) Զայն պայծառութիւն ընդունելութեան և զհամբոյր սրբութեան սիրոյն իբրև տեսանէր եպիսկոպոսն՝ խնդամիտ յոյժ լինէր (240 /6) լսէր և տեսանէր զայն ևս չարեաց պաշտամունսն զկռակործան անուղղայ սովորութիւնն (242 / 2) և զայն ոչ մարթէք գիտել, թէ անմաքրոցն սիրող զիա՞րդ լինիցի սուրբ: (246 / 5) Եւ դուք յոյժ մոլորեալ էք՝ ոչ լսելով զբանն զայն, եթէ «աստուածքն, որ զերկինս և ոչ զերկիր ոչ արարին, կորիցեն յերկրէ»: (247 / 1) զայն ևս շնորհօք լուսատու խրատու սրբոյ եպիսկոպոսին ի բաց քերեալ ի մտաց նոցա: (248 /16) լսէին զայն, թէ հրամայէր հատանել զսկայաձիր դիւցազանց ծառն (250 / 10) զոր հակառակորդն մեր և թշնամի աստուածոցն մերոց ասէ ընդ ձեզ հատանել զծառն զայն: (250 / 15) Իսկ բարեպաշտ իշխանն Հոնաց իբրև լսէր զայն մեծամեծօքն հանդերձ՝ յորդորեալ ի սէր և յերկիւղ Աստուծոյ: (256 / 10) զայն ևս տեսանէր (256 / 11) Իսկ իբրև ետես իշխանն զայն Հոնաց, ամենայն բազմութեամբն հանդերձ առաւել ևս հաստատեցան ի սէր հաւատոցն Քրիստոսի (258 / 6) և զօրն զայն տօնից տօն և ժողովոց ժողով առնէին իշխանն և մեծամեծքն: (259 / 8) փառս և պատիւս ինձ զայն համարիմ վասն տեառն խնդամիտ յոյժ լինելոյ: (261 / 13) ըստ

արժանի սրբոցն հանգուցի զայն օր (281 /11) Եւ նոցա գաղտնի լրտես կացուցեալ առ ի գիտել թէ ով պատմէ նմա զայն (288 / 9) և զօրն զայն Աբրահամու անուանեաց. (289 / 3) զայն անսուտ պահեն: (289 /15) և ցուցին ինձ զայն գիր, որ յառաջ նզովեալ և ի բաց ընկեցեալ էր զՆերսէս ի յԱղուանից կաթողիկոսութենէն: (303/8) զի աստուածային օրինօքն, զոր մատուցանէին ժողովուրդն ի տան Աստուծոյ վասն մեղաց՝ զայն քահանայքն, անարատք մատուցանողք և սպասաւորք սեղանւոյն՝ վայելէին. (307 /16) և մի՛ լիցի ունել Փուսանու Վեհին այն զայն եկեղեցին ըստ սուրբ հոգւոյն հրամանի. (309 / 17) և ապա առնու զայն և ի սուր սուսերի արկանէ, զորս գտանէ ի նմա. (318 / 3) Եւ թէպէտ կրեցին Հայաստանեայքն զհարուածն զայն, սակայն ոչ եթող տէր Աստուած Մահմետի զվրէժն զայն. (318 /12; 318 /12) Ապա կալեալ շուն մի շամփրեցին ընդ մարմինն Մահմետի և այնպէս ծածկեաց երկիր զչարն զայն: (318/16) Եւ լուեալ զայն՝ շիջաւ ցասումն բարկութեան բռնաւորին: (321 /7) Եւ ընթերցեալ զայն՝ առաքէ կայսրն զՍտեփաննոս ի Հռոմ քաղաք բերել անտի երիս գիրս համաբարբառ այնմ գրոց սակս ճշմարիտ հաւատոյ: (321 / 10) Այս է, որ զահի հարեալ էի ի սկզբան պատմութեանս, եթէ զիարդ կարացից բանիւ պատմել զայնմանէ, որ ի վեր քան զբանն գտանի: (23 / 12) պատուհասէր և խրատէր զայնոսիկ, զորս ի դիւապաշտութեանն գտանէր յաղանդին. (35/11) «Դատեա՛, տէր, զայնոսիկ, որ դատին զմեզ. (114/12) տաց զայնս ձերոյդ աստուածապսակեալ անձինդ (312 / 3)

ՋԱՅՆՊԻՍԻ - 3

«ընդէ՞ր բնաւ թողէք յականջս ձեր զայնպիսի դատարկաբանութիւն. (203 / 12) զայնպիսին կապեալ ի դուռն արքունի տարցին, և դառն մահ ի վերայ դիցեն: (92 / 3) Զայնպիսին ի սահմանաց ձերոց հալածեսջի՛ք (125 / 16)

ՋԱՅՆՔԱՆ - 1

Եւ տեսեալ զայնքան հռչակեալ նորա անուն՝ զօրապետն Պարսից ստիպէր զնա՝ առնուլ զքոյր իւր ի կնութիւն: (176 / 21)

ՋԱՅՍ - 90

Զայս լուեալ քաջին Ուռնայրի՝ ոչ դլաց, և ոչ դադարեաց (19 / 3) Զայս ամենայն… լսէր թագաւորն ծեր (19 /13) Զայս ասացին և զհամատարած ծովն շարժեցին ի վերայ քո: (21 /6) ունէի զայս ամենայն արուեստս նյութականաց պատմող (23 / 17) Զայս իսկ արար աստուածասէր արքայն Վաչագան. (46 / 6) Եւ լուեալ զայս բարեպաշտ և աստուածասէր արքային Վաչագանայ (48 / 12) Եւ զայս լուեալ արքային յաղօթս կացեալ գոհանայր զմարդասիրէն Քրիստոսի (52 /12) որ պատմեաց զայս ամենայն (54 / 10) Զայս նշանագործութիւն Յունան Յոնաց եպիսկոպոս … իւր իսկ ականատես եղեալ պատմեաց: (56 / 13) Եւ ապա բացեալ գտին զնշխարս երանելեացն և գիր ի վերայ տարմալոյն, յորում սուրբքն կային զայս օրինակ. «Ես Գրիգորիս բերի զայս սուրբս՝ զերջանիկն Զաքարիա՝ զհայր Յովհաննու և զմեծ վկայն Քրիստոսի՝ զՊանդալիոն երանելի (60 / 1; 60 /1) Յայնժամ հրամայէր թագաւորն հրովարտակս առնել ընդ ամենայն աշխարհս տէրութեան

հրամանաւ և գանձուք շինեաց զԳանձակ քաղաքն ՄՂԵ թուին յԱրշակաշէն *գաւառի:* (331/13) Յայսմ ամի անչափութիւն անձրևաց եղեալ յանկարծազեղ ի Մեծիրանց *գաւառի* (333 / 1) Բնակեցուցանէ զզերեալսն ի *գաւառին* Շաւարշան (13 / 13) որ էր ի *գաւառին* Հաբանդայ: (39 / 2) յոյժ հռչակեալ լուր սրբոյն Գրիգորիսի ընդ ամենայն աշխարհն Ուտիացւոց *գաւառին.* (85 / 8) ածին ժողովեցին զամենայն առ և աւար *գաւառին* (100 / 17) Եւ յետ երկուց ամաց տեսնէի ի տեսլեան որպէս եթէ սուրբն Վարոս ի կերպ աբեղայի ասէր ցիս. «Մեք եմք նշխարք ծածկեալ ի *գաւառին* Արցախայ (120 / 9) աճապարէին անկանել ի լեռնակողմն Արցախայ *գաւառին:* (137 / 6) Եւ ի գալ հրովարտակին՝ պատահի նմա ի սարոտն *գաւառին* Գարդմանայ. (171 / 17) և ի բնական *գաւառին* ի Գարդման բերդին հիմն արկեալ տուն Աստուծոյ (184 / 18) ասպատակ սփռեալ յաշխարհն Աղուանից՝ առ ստորոտով մեծ լերինն Կաւկասու և յաւանս Կապաղակայ *գաւառին:* (232 / 8) իշխել ամենայն թագաւորութեանն Աղուանից և Ուտիացւոց *գաւառին* (233/14) յաթոռ աստուածազան վերադիտողութեան *գաւառին* Մեծ Կողմանց կարգեցուք տեսուչ (234 / 8) Ապա առեալ զնա կաթողիկոսին՝ ձեռնադրէ յեպիսկոպոսութիւն *գաւառին* Մեծ Կողմանց (235 / 5) և ի սէր արձակել զեպիսկոպոսն Իսրայէլ առ մեծ կաթողիկոսն Հայոց և առ բարեպաշտ իշխանն Այրարատեան *գաւառին:* (236 / 3) ընտրեցին և արձակեցին մեծաւ աղաչանօք զիմաստուն և պարկեշտ եպիսկոպոս *գաւառին* Մեծ Կողմանց (238 / 5) Եղև խռովութիւն ի *գաւառին* (268 / 13) Յետ այսր եղելոյ հաճեցան սուրբքն ամենայն, որ ի *գաւառին* Գեղամայ. (282 / 14) որ է ի *գաւառին* Ծղկաց: (326 / 9) Տիկինն Սպրամ … մեծածախ տենչմամբ շինէ զՆորավանս ի *գաւառին* Սոդէից (340 / 15) ԵՐԱՆԵԼԻՈՅՆ ՅՈԲԱՅ ՃԳՆԱԻՈՐԻ ՀԱԻԱՏԱՅՈՒՅԱՆԵԼՆ ՋՄԵԾԱԳՈՅՆՆ ԱՐՑԱԽԱՅ *ԳԱՒԱՌՆ* ՊԱՋԿԱՆՅ (75 / 6) Անցանելով ընդ Հայաստան՝ ճանապարհորդէ հասանել ի սահմանս արևելից՝ ի *գաւառն* Ուտիական: (95 / 12) Եւ եկեալ հասանէին … ի մայրաստանիկ աշխարհն Արցախայ՝ *գաւառն* Մեծ Կուենից: (98 / 19) ժողովեաց զամենայն զօրս Հոնաց և անց յայս կոյս Կուրական գետոյն՝ տարածեալ յՈւտիացւոց *գաւառն:* (99 / 11) Իսկ երրորդ մասն զօրուն հասեալ ի մուտ զատկին յԱրցախական *գաւառն* ՝տայր ասպատակ ի վերայ Մեծ Կուենից: (99 / 15) Եւ երթեալ, հասեալ յՈւտի *գաւառն* ՝ իջեալ բանակէին առ ափն Կուրական գետոյն (103 /8) Եւ ի գիշերի յայնմիկ անցին ամենեքեան … և անկան յամուր *գաւառն* Արցախայ: (137/14) և ինքն եղբարբքն հանդերձ ելանէր ի հայրենի *գաւառն:* (179 / 17) Գայր հասանէր յԱյարատեան *գաւառն* (195 / 15) Եւ նովին բարեզարդութեամբ գայր, իջանէր ի *գաւառն* Գարդման. (196 / 2) հասանէին յՈռստակ *գաւառն* Մեծ Կողմանց (205 / 1) Ապա հրաման տայր յուղարկել զնա խաչապայծառ տապանակաւն անդրէն ի վերնակողմն *գաւառն* Մեծ Կուենից (212 / 8) քաջայօժար կամաւ երթայր ի Մեծ Կուենից *գաւառն* (218 /7) ի վերնակողմն երթային յԱրցախունեաց *գաւառն* (224/6) ուղարկէր զնա յիւր *գաւառն:* (235/6) Ապա Յեսու անուն քահանայ ևի Թադէոս ևի Գրիգոր … գնացին ի Դունայ և ելին ի Սոթից *գաւառն:* (268 / 11)

եկի ի *գաւառն* իմ Գեղարքունի (282 / 6) Յայնժամ գտեալ տեղի Ներսէսի կատարել զկամս իւր իսկոյն, փութայ ի *գաւառն* Մեծիրանց (294/1) Եւ ազդեալ ի *գաւառն* զգալ բարկութեանն՝ բողոքէ կալ յաղօթս. (322/5) Յետ այսորիկ անհրամանակատար եղև *գաւառն* Բաղաց՝ յանօրէն Բաբանայ. (326 /16) Եւ անտի ի միւս տարին էանց Բաբան ի *գաւառն* Գեղարքունի (326/18) որ պարունակեալ շրջագայէ զբազմաւորական *գաւառս* աշխարհին: (105 / 11) շրջէր ընդ ամենայն *գաւառս* վիճակելոց իւրոց. (235 / 11) Նոքա ոչ անսացին հրամանին, այլ անտի գնացեալ բնակեցան ի ձերում Արցախական *գաւառս:* (268 / 15) Յայսպիսի նեղութեանց խոյս տուեալ իմն՝ եկի ի *գաւառս* Արցախայ (280 / 12) Եւ Յիսայի անուանեալն Աբու Մուսէ՝ այր խաղաղութեան, քեռորդի Աբլ Ասադայ՝ ըմբռնեալ զնոյն *գաւառն* ՝իշխանացաւ ամենայնի: (327 / 13) որպէս քաղցր են ծնողք, նոյն և *գաւառք:* (109 / 11) անտի երևի Յորդանան գետ և Հովր լեառն և բազում *գաւառք:* (284 / 12) բազում *գաւառք* Հայոց փախեան ի Հոռոմս: (292 / 6)

ԳԱՒԱՌԱՊԵՏ - 1

վաղվաղակի ճեպով ժամանեալ գումարէին արք պատուականք, քորեպիսկոպոսունք, երիցունք, սարկաւագունք, հարիւրաւորաց *գաւառապետք* (205 / 8)

ԳԱԻԹ - 5

ոչ ոք իշխէրն զգիշերն ի յարկսն յայն մտանել կամ ի քաղաքի *գաւթին* օթել. (217 / 12) Եւ յորժամ վազեցին ի *գաւիթ* եկեղեցւոյն, ի դիւաց պինդ կապեալ կաշկանդեալք եղեն հրամանաւ բարերարին Աստուծոյ (35 / 15) Եւ իբրև մտին ի *գաւիթ* եկեղեցւոյն, կայր խաչ արտաքոյ դրանն. (59 / 3) Եւ ի ծագել արեգական մտանէին ի *գաւիթ* եկեղեցւոյն (217/14) զորս որդին Աստուծոյ ժողովեաց ի մի *գաւիթ* (278/14)

ԳԳՈՒԵՄ - 1

և *զգուէին* ի գիրկս որպէս մանուկ ընդոծնի իւրեանց: (168 / 1)

ԳԵԴԷՈՆ - 1

զոր *Գեդէոնն* կոտորեաց (170 / 1)

ԳԵԴԷՈՆԵԱՆ ԴԺՆԻԿ - 1

գնացեալ յարեցան ընդ հովանեաւ այնր, որ ըստ *Գեդէոնեան դժնկին* ՝էր պատաղիճ (193 / 1)

ԳԵԴՈՒՐ - 1

Եւ իսկոյն եհաս *գեղուր* գուժի, եթէ մտին զօրքն Պարսից ի Պերոզ Կաւատ (178 / 1)

ԳԵԴԵՒՈՒՆ - 1

և երէց մի Նաթան անուն … և միւս ևս երէց *Գեղևուն* անուն բրէին զտեղին. և Յովէլ ի ծունգս իջեալ՝ շալակ ունէր առաջի: (71 / 9)

ԳԵԹՍԵՄԱՆ - 1

և անտի ցվայր երկուհարիւր և յիսուն քարեայ աստիճանք մինչև ցսուրբ գերեզման կուսին, որ ի ձորն *Գեթսեմանի.* (284 / 8)

ԳԵՂԱԶԱՆԵԱԼ - 1

Կայր անդ նշանն Քրիստոսի արծաթաձոյլ, *գեղազանեալ* ոսկիազօծ տեսակաւ (215 / 17)

ԳԵՂԱԶԱՐԴԵԱԼ - 1

գայ անցանէ յՈւտի գաւառ ի Պարտաւ քաղաք յիւրականն *գեղազարդեալ* տաճարս (222 / 1)

ԳԵՂԱԶԱՐԴԵՄ - 1

և ի բնական գաւառին ի Գարդման բերդին հիմն արկեալ տուն Աստուծոյ մեծապէս *գեղազարդէ* ի հրճուանս և ի փառս Քրիստոսի Աստուծոյ: (184 / 19)

ԳԵՂԱԶԱՐԴՈՒԹԻՒՆ - 1

զի նա ևս արևելից տիկնոջն տացէ ըստ թագուհեաց պարգևս հրաշապաճոյճ *գեղազարդութեան,* մետաքսառէջ և ոսկեհիւսակ զգեստս: (198 / 6)

ԳԵՂԱՄ - 1

Գիր անուանց նախագահ կարգելոց ... Յաբեթ, Գամեր ... *Գեղամ,* Հարմա, Արամ (41 / 4)

ԳԵՂԱՄԱՅ - 5

Եւ եկեալ Արտաշէս միաբանէ զզօրսն Աղուանից ընդ ինքեան և ելանէ առ ափն ծովակին *Գեղամայ.* (13 / 3) և շուրջ պատեալ որպէս հուր յեղէգն զեզերք ծովուն *Գեղամայ,* ոչ թողին ի նոցանէ և ոչ մի. (169 / 1) գնացի ես Յովսէփ անապատական ի գաւառէ *Գեղամայ* յանապատէ Բրտի այրեաց վասն չար նեղութեան ժամանակի (280 / 8) Յետ այսր եղելոյ հաճեցան սուրբքն ամենայն, որ ի գաւառին *Գեղամայ.* (282 / 14) որոյ բռնազբօսութեամբ կալեալ էր զգաւառն *Գեղամայ.* (340 / 9)

ԳԵՂԱՇԱՐԵԱԼ - 1

Ըստ նմին և այլ ևս մեծութիւն շնորհէր նմա. սուսեր պողովատիկ, ոսկեպատեան, մարգարտահոծ, *գեղաշարեալ* պատմուճանս (198 / 1)

ԳԵՂԱՊԱՐԵՄ - 1

և լիալիճ աղեղն ի Մահմետէ *գեղապարիւր* մարդոյն: (287 / 13)

ԳԵՂԱՐԴ,ԳԵՂԱՐԴՆ - 5

Եւ առեալ *գեղարդ* ի ձեռն՝ ծակոտէին յանդիման նոցա զդդումն՝ զնմանեցուցեալն ի պատկեր նորա: (140 / 5) Տուր և առ *գեղարդացն* ճայթիւն որոտման ելանէր յառաւօտէ մինչև ցինն ժամն: (110 / 13) և զանհեթեթ *գեղարդն* ի բարձրամայր փայտից, և զսուսերն բոցանշան ունելով՝ ահաբեկ զտեսողսն առնէր: (110 / 1) և յայն վերնատանն *գեղարդն* և սպունգն և սկաւառակն Քրիստոսի պատեալ ոսկւով: (283 / 8) առանց յապաղելոյ փութանակի կոտորէին զխոփս իւրեանց ի սուսերս և զգերանդիս իւրեանց ի *գեղարդունս:* (130 / 13)

ԳԵՂԱՐՔՈՒՆԻ - 2

որոց ողջոյն անգամ ոչ տուեալ՝ եկի ի գաւառն իմ *Գեղարքունի*՝ի Պուհավանս (282 / 6) Եւ անտի ի միւս տարին էանց Բաբան ի գաւառն *Գեղարքունի* (326 / 18)

ԳԵՂԳԵՂԵԱԼ - 1

որք հողմավար թեթևութեամբ զարշաւանս առնէին ոսկեսանձ թամբօք և *գեղգեղեալ* զինուք: (200 / 11)

ԳԵՂԵՑԻԿ - 8

Իսկ դու լիալայն, բարձր լուսասարաս, աւետաբեր …պայծառ և *գեղեցիկ* քան զամենայն հասակակից ընկերս քո: (24 / 10) Գիր անուանց նախագահ կարգելոց … Ցաբեթ, Գամեր, Թիրաս … Արայն *Գեղեցիկ* առ սովաւ Իսահակ. (41 / 5) և ինքն հեծեալ յերիվար մի *գեղեցիկ* ճեպէր հասանել առ բարեպաշտն Վաչագան (60 / 6) զի *գեղեցիկ* էր յոյժ: (100 / 15) զամենայն *գեղեցիկ* երիվարացն հերձուին զլանջս և զընչափողոն (169 / 7) ի *գեղեցիկ* մարգս պերևետեալ յոլովէին աւուրս բարեկեցիկ յղփութեամբ: (221 / 14) Տալը ոմն տաճիկ ունէր կին *գեղեցիկ.* (289 / 8) զսա տեսաք՝ լի ամենայն ընչիւք, ոսկի և արծաթ բազում յոյժ, ծիրանիք պատուականք և հանդերձք *գեղեցիկք* (200 / 16)

ԳԵՂԵՑԿԱԲՈՅՍ - 1

ո՞վ իշխեսցէ իսկ մօտել, հպել և մերձենալ ի յայն վայրն, ուր սկայազօրին Ասպանդիատայ մեհեանքն և բագինքն շինեալ և հաստատեալ են, կամ ի ծառն *գեղեցկաբոյս,* որ պահիչ և կեցուցիչ է աշխարհիս այսորիկ. (252 / 2)

ԳԵՂԵՑԿԱԳՈՅՆ - 1

Նոյն օրինակ և յաջող կողմանէ *գեղեցկագոյն* իմն լուսեղէն խաչս մի զմիոյ զկնի ի վերուստ ի վայր տողեալ՝ պնդէր հաստահեղոյս բևեռօք. (255 / 13)

ԳԵՂԵՑԿԱԶԱՐԴ - 1

Նոյն օրինակ և սա *գեղեցկազարդ* արդարութեամբ էր վայելչացեալ անուանելով յաշխարհի. (214 / 2)

ԳԵՂԵՑԿԱԶԱՐԴՈՒԹԻՒՆ - 1

Եւ լինէր օրն այն յաւուրս օրհնեալ պէսպէս *գեղեցկազարդութեամբ* ոսկւոյ և արծաթոյ:(185 / 6)

ԳԵՂԵՑԿԱՀԻՍ - 1

Իսկ ի տեղւոջն Համբարձմանն ըստ Յարութեան եկեղեցւոյ ձևոյ *գեղեցկահիւս* գմբէթաձև շինուածն հարիւր կանգուն յերկայնն և հարիւր ի լայնն. (284 / 10)

ԳԵՂԵՑԿԱՅԱՐՄԱՐ - 1

Ի յաղթահարելն Ջուանշիրի զԽազիրսն և երկուց ամաց անցելոց զկնի վանելոյն զզօրսն Խազրաց կատարի *գեղեցկայարմար* շինումն տաճարի անուան Աստուծոյ: (187 / 9)

ԳԵՂԵՑԿԱՏԵՍ - 2

և ոչ խնայէր ակն նոցա ի *գեղեցկատես,* պայծառագեղ, մանկահասակ արուի կամ իգի, և ոչ յանպիտանս և յանօգուտս: (136 / 5) եւ իբրև անցին

ընդ ձորս լերանց և թափեցան ի գեղեցկատես, վայելուչ, հարթ հաւասար յուռթի դաշտն Ուտի գաւառի (159 / 14)

ԳԵՂԵՑԿՈՒԹԻՒՆ- 5

Այսպիսի օրինակաւ կարգեալ և հարմարեալ զանազան և հրաշալի գեղեցկութեամբ կանգնէր զնա յուխտի և ի խնդրուածոց տեղի յարքունական դրանն ընդ արևելս (255/17) և յօրինուածովք նկարակերպ և պէս պէս կենդանագիրս հաստատեաց և սոսնձեալ ի վերայ բոլորովին ծածկելով գեղեցկութեամբն պատկերագործ նմանահանութեամբն ճշգրտեալ, ի ծայրից մինչև ի խոնարհ համանման դեղովքն պաճուճեալ: (255 / 11) Սկսանէր այնուհետև զոր ինչ ազնուական նիւթեղինացն էր, առ ի զարդ յօրինել նորահրաշ գեղեցկութեանն անճառելի լուսոյն: (196 /4) Անդ կայր մատուռն մի փայտեղէն կազմեալ և խեցայարկ վերստաւորեալ և խաչանիշ զարդու յարմարեալ պալարափայլ զորմոցն յօրինեալ գեղեցկութիւն: (205 / 6) որ իբրև զհուր լափեաց զամենայն գեղեցկութիւն և զփառս մարդկան. (324 / 15)

ԳԵՂԻԿ - 1

Վարազ Տրդատայ՝ Աղուանից իշխանի, տուեալ է գեղիկ փոքրիկ Սրբոյ Խաչիս ի սպասաւորութիւն սակս հոգւոյն մասին: (309 / 13)

ԳԵՂՋԵԱՅ - 1

Եւ նորա ընկալեալ զիս զանարժանս՝ խնդրեաց ի գեղջէիցն զայս տեղի, շինեաց զեկեղեցիս. (280 / 13)

ԳԻՒՂ - 10

զորոյ զգլուխն միայն մեծահաւատ ոմն Ստեփաննոս քահանայ Ուռեկան գեղջ յափշտակեալ ի միջոյն, աճապարեալ յերիվար իւր՝ ի բաց գնաց: (11 / 14) և յորժամ գեղջ ուրեք ի յայտ ելանէր դեսպակ սրբոցն, իջանէր թագաւորն և հետևակ սպասաւորէր սրբոցն (85 / 2) Բայց կին մի Թագուհի անուն … ի Բագնաց գեղջէ՝ մեծատուն յոյժ, որ նոյն ինքն ընդ երուսաղէմացիսն էր ցանկորդեալ: (100 / 13) ընդառաջ ելանէր թագաւորն հանդերձ թագուհեաւն և ամենայն մեծամեծ նախարարօքն հեռագոյն ի գեղջէն (67 / 7) Եւ կոչեցեալ զվանաց երէցն գեղջն հարցանէր (65 / 8) և հարցեալ արքայի ցվանաց երէց գեղջն և ցայլ ևս աւագանի՝ եթէ ձեր նշան ինչ տեսեա՞լ է ի տեղւոջն, եթէ ոչ: (75 /1) Եւ զմնացեալն ի նշխարացն կնքեալ՝ մեծաւ զգուշութեամբ տայր պահել ի սուրբ և յազնուական սենեկի, մինչև կատարեսցի հիմնարկութիւն մատրանն, որ ի Դիւտական գեղջն՝ յանուն Պանդալիոնի. (86 / 4) Իսկ իբրև եկն եհաս զօրն Հռովմայեցւոց անթիւ բազմութիւն յոյժ յոյժ և բանակեցան յՈւտի գաւառի առ հեղեղատովն, որ ի մէջ սահմանացն գեղջն Կաղանկատուաց. (132 / 20) հասեալ ի մասն ինչ առ ստորոտով լերինն, որ է յանդիման գեղջն մեծի կողմանն Կաղանկատուաց (137 / 8) հանեալ զնա ի տեղւոջէ ապառաժից վիմայատակ լերանցն ի գեղջն, որ կոչի Կողթագարակ. (156 / 19)

ԳԵՏ - 62

գետ փոքրագոյն անցանէր ընդ մէջ շինին (74 / 9) Եւ եկեալ էանց ընդ Երասխ գետ (111 / 7) անտի երևի Յորդանան գետ (284 / 11) և

Յորդանան *գետ* հինգ հրասախ հեռի է յԵրուսաղէմէ յարևելից կուսէ (285 /2) և նորին եղբայր Վարազման վրիպեալ ընկղմեցաւ ի Կուր *գետ* (325 / 18) և *գետն* Դկղաթ, որ մեկնէ ի մէջ Մարաց և Բաբելովնի: (6 / 11) Եւ *գետն* մեծ Կուր հեզասահ գնացիք բերելով յինքեան ձկունս մեծամեծս և մանունս (9 / 5) Եւ փախստեայ եղեալ մանկանն՝ անկանէր ի *գետն* մեծ Կուր: (52 / 8) Անտի զերծեալ անցանէր ընդ մեծ *գետն* և եկեալ փութապէս պատմէր արքային: (52 / 10) ինքն թագաւորական զգեստուք հանդերձ իջեալ անցանէր ընդ *գետն:* (74 / 12) Եւ ինքն իսկ թագաւորն անխոնջ *վաստակով* ՝որպէս ի գալն, նոյնպէս և ի գնալն անցուցանէր ընդ նոյն *գետն* (84 / 6) և փութանակի գայ անցանէ ընդ *գետն* մեծ Կուր (114 / 4) Իսկ մի ոմն ի զօրացն թշնամեաց զինու հանդերձ ելեալ ի նիստ երիվարին՝ անցանէր ընդ մեծ *գետն* մազապուրծ զերծեալ գոյժ տանէր ի բուն բանակն (115 / 9) գայ ընդ Հայս և անցանէ ընդ *գետն* Երասխ: (131 / 3) Եւ յետ այսր ամենայնի դիմէին ուղիքն յարուցեալ, *գետն* յորձանուտ ընդդէմ Վրաց աշխարհին (137 / 17) Եւ անցեալ ընդ *գետն* Դկղաթ՝ եհաս ի Վեհկաւատ գաւառ. (174 / 3) հինահալած արշաւանօք տարեալ զնոսա անցուցանէր ընդ գետն և ոչ տայր նոցա թոյլ զամիսս վեց անցանել ընդ Դկղաթ *գետն* (176 / 5,176 / 6) Եւ ինքն իւրով յօգնական գնդիւն ի հովիտս դաշտացն ճախր առեալ՝ անցանէր յՈւտի գաւառ ընդ *գետն* Կուր (232 / 9) Եւ յուղարկեալք խաղաղութեամբ ի Պերոզ Կաւատ քաղաքէ՝ վտարեալք անցանէին ընդ *գետն* մեծ Կուր. (238 / 13) առեալ զամենայն ետ ի *գետն* Տրտու յիւր հովոյ տեղւոջն, որ Բերդակուրն կոչի. (297 / 15) Յայնժամ տայր հրաման բռնաւորն Տաճկաց երկաթի կապանօք զնոսա կենդանւոյն ընկենուլ ի *գետն* Եփրատ. (332 / 9) զի արք իջեալ ի *գետն* առցեն զոսկերսն և հրով այրեսցեն: 332 / 11) Սահմանք Յաբեթի այս են … ի Մարաց մինչև ցԳադիրովն կողմն հիւսիսոյ և *ցգետն* Դկղաթ (4 / 6) ուստի մինչև *ցգետն* Եփրատ հինահալած արարեալ՝ արշաւանօք զհետ ընթանայր թշնամին: (174 / 15) Այսպէս ի սահմանացն Վրաց մինչև ի դրունս Հոնաց՝ միահեծան ճոխութեամբ եղև տէր մինչև *ցգետն* Երասխ: (183 /11) որ ձգին ի Պարգամիդոս *գետոյ* մինչև ի Մատուսիա (6 /8) և իւր փախուցեալ գնալով՝ հեղձամղձուկ ի ջուրս Երասխ *գետոյ* լինէր. (32 / 4) կատարէին զչար գործ մատնահատութեան յամուր մայրուջն առ ափն Կուր *գետոյ* (52/4) փախստականս արկանէին յամուր տեղիս մայրեացն առ խորագոյն դարիւք Լուբնաս *գետոյ* (114/18) Եւ կացուցանէր զնոսա առ խեղս կամրջին Տիգրիս *գետոյ* (146 / 19) Սակայն ճշդիւ քննեալ շնորհիւն Աստուծոյ գտաք ճշմարտութիւնն ի գալն մեր ի հովիտ մի Արցախայ՝ եզր *գետոյ* ինչ (209 / 14) և եկեալ եպիսկոպոսն յեզր Եփրատ *գետոյ* իջուցանէ խորէջս. (332 / 14) որ ժառանգեաց զդաշտս և զլերինս Աղուանից՝ ի *գետոյն* Երասխայ մինչև ցամուրն Հնարակերտ: (8 / 12) Անդ ի միջի *գետոյն* ծառ մի կղզւոջ դիպեալ. (52 / 8) և գունդն երկրորդ յայնկոյս Տրտուական *գետոյն,* ի հարաւական կողմանն ի մայրոլորտ հովտի պուրակի բնակէին՝ Չղախն անուանեցելոյ: (99 / 2) ժողովեաց զամենայն զօրս Հոնաց և անց յայս կոյս Կուրական *գետոյն* տարածեալ յՈւտիացւոց գաւառն: (99 / 10) Եւ երթեալ,

հասեալ յՈւտի գաւառն՝ իջեալ բանակէին առ ափն Կուրական *գետոյն* (103 / 8) Եւ ի բազմութենէ անկելոցն յստակ ջուր *գետոյն* յարիւն դառնայր. (115 / 6) և զկանայս և զհարճս իւր և զորդիս անցուցանէ յայնկոյս *գետոյն* Դկլաթու: (144 / 3) և ահա ճակատեալ է յանդիման քաղաքիս առ եզերբ *գետոյն.* (148 / 3) Եւ դառնացեալ ճեպով անցանէր զհայրենի վիճակին իւր սահմանս յայնկոյս *գետոյն* Կուրայ ի Կապիճանն գաւառ (178 / 4) ՎԱՍՆ ԵԼԻՑՆ ԽԱՋՐԱՑ ԵԻ ՅԱՂԹԱՀԱՐԵԼՆ Ի ՋՈՒԱՆՇԻՐԷ ՅԱՅՆԿՈՅՍ *ԳԵՏՈՅՆ* ԿՈՒՐԱՅ (186 / 11) Եւ առեալ զգունդն իւր՝ անց յայնկոյս *գետոյն* մեծի Կուրայ: (186 / 16) ասպատակաւորքն Հոնաց յայսկոյս *գետոյն* Կուրայ և զեզերբքն Երասխայ ոչ միայն զբնաշխարհիկսն, այլ որ զԱյրարատեան գաւառացն և ի Սիւնեստանեայց աշխարհէն հօտք և անդեայք ի ձմեռնաճաշակ դաշտն եկեալ էին յարօտ, գերի վարեալ զամենայն ի բանակետղն ժողովէին: (190 / 11) Իսկ թագաւորն Հոնաց ընդ առաջ նմա ելեալ՝ գայր հանդերձէր ի նաւ և յայսկոյս խաղացեալ դադարէր յեզր *գետոյն* ի վերայ նարմաշարժ և խորասոյզ ջրոյն: (191 /3) ԺԷ արամբք էանց յայս կոյս *գետոյն* ի բանակն Հոնաց. (191/8) այլ և ստիպէր զնա թագաւորն, զի առցէ յանձն և յայնկոյս *գետոյն* Ատրպատականացն իշխել: (198 / 9) հասանէին յՌոստակ գաւառն Մեծ Կողմանց, ի Չղախեան հովիտն յասպարիսաձև դաշտակն առ ափն Տրտուական *գետոյն* (205/2) տարօրէն խառնակութեամբ գլխաւորք ազգաշաղախ Աղուանից աղծապիղծք եղեալ. նախ՝ թագաւորազինն Կողթայ տեառն տունն … և Կուր *գետոյն* յայնկոյս տունն Հեջերւոյ (212 / 16) զաւուրս բազումս ջահք լուսոյ *ի վերայ գետոյն* երևեալ (332 / 10) էանց յայնկոյս *գետոյնն* (181 / 1) Ժողովէ և Արտաշէս զզօրս իւր ընդդէմ նոցա և բանակի առ Կուր *գետով:* (13 / 8) Եւ ի նոյն ամի էանց Աբդլ Ազիզ զ Կուր *գետով* յայն կողմն: (319 / 21) Բազմահոյլ գերութեամբ և մեծամեծ աւարօքն անցեալ զ Կուրական *գետովն* ի յարևելից կուսէ բանակէին յայն կոյս (103 / 11) ուր է թագաւորանիստն Պարսից առ *գետովն* մեծ, որ է Տիգրիս: (139 / 12) սլացեալք որպէս զարծուիս առ ի մեծ *գետովն* Կուրայ՝ յոք ոչ խնայելով, որ հասանէր ընդդէմ նոցա: (142 /1) Եւ բանակեալ նոցա առ *գետովն* Երասխայ՝ առաքէր ի ձեռն պատգամաց առ մեծ թագաւորն Խոսրով (142 / 15) Նա և զանցս վաճառաց և զկարթընկէցս ձկնորսութեան մեծամեծ *գետոցն* Կուրայ և Երասխայ՝ զամենայն ճշդիւ պահանջէր(166/19) զի չորք միայն կացին ի վերայ երկրի. Աղեքսանդրին՝ Մարկոսի աթոռն, Անտիոքայն՝ Մատթէոսին, Հռոմայն՝ Ղուկասուն, Եփեսոսին յԱսիա՝ Յովհաննուն. ըստ չորեքկերպեան տիեզերաց, ըստ քառավտակ *գետոցն* ադենականի, ըստ չորեքկերպեան կենդանեացն, ըստ չորից աւետարանչացն, ըստ չորից մովսիսական օրինացն (272 / 14) ի կից *գետոցն,* զութ հարիւր վրան խաշնարածաց տարաւ (333/2) Եւ հրամայեցին նմա գիւղաստանեայս բնաբար ծառայութեան և *գետս* ձկանց: (175 / 13)

ԳԵՏԱՍՈՒՅԶ ԱՌՆԵՄ - 1

առ յոյժ յանդուգն յարձակմանէն բազումք այն էին, զոր *գետասույզ առնէին,* քան զանկեալսն սրով ի ցամաքի: (115 / 5)

ԳԵՏԻՆ - 1

զոր առ *գետնովն* շրջշրջելով այսր անդր ստէպ ստէպ դարձուցանելով և ուղղորդաձև ի վեր կանգնելով և մերթ ի յինքն քնթռնեցուցանելով, և ուժգնակի մռնչմամբ զտուր և առութիւն շնչոյն ընդ խոչափողն արտաքս հոսելով (200 / 6)

ԳԵՏՆԱԿՈՂ - 1

զի յողդողդամիտ և առասպելակոծ մրցանօք յածիք այսր անդր ընդ անկոխ ճանապարհն խաբէութեամբ կախարդասար վհկաց և *գետնակոչ* քաւդէից և Ասպանդիատայ ումեմն վայրագ սկայի ձիովք այրեցելովք զոհ մատուցանէք. (246 / 4)

ԳԵՏՆԱԿՈՂՈՒԹԻՒՆ - 1

Յայնժամ քաւդեայքն և կախարդքն և վհուկքն Ափրոդիտեայ մոլեկան կախարդութեամբն սկսան դիւթութիւնս առնել ստապաճոյճ *գետնակոչութեամբքն*՝ ուռութս և բարբաջմունս իմն յօրինէին: (253 / 10)

ԳԵՏՆԱԿՈՒՐ - 1

Իսկ ի միւսում ամին զաւուրս քառասուն եղելոյ սաստիկ անձրևաց՝ լցաւ ծայրալիր հոսմամբ *գետնակուր* մինչև հնգետասան հրասախ արտաքս ծովանալ ընդ եդեալն իւր սահման. (329 / 15)

ԳԵՏՆԱՓՈՐ - 2

և զաստուածային առեալ գանձ … եդեալ ի տապանի՝ ծածկէր ի *գետնափոր* կայենի: (96 / 10) ի վերայ *գետնափոր* կայենի խաչին շինէ մատուռն մի հողեղէն չորեքկուսի (97 / 1)

ԳԵՐԱԳՈՅՆ - 3

Կրկնակի ընդ ձեռն Ուռնայրի *գերագոյն* լուսաւորեցան: (14 / 10) արի այրն Վարազ Տրդատ՝ հնարիմաց հանճարով *գերագոյն* էր (231 / 12) վասն որոյ բարձրամտեալ նկարչաց՝ զինքեանս *գերագոյնս* կամէին առնել, քան զամենայն արուեստս եկեղեցականս: (267 / 9)

ԳԵՐԱԶԱՆՑԵԱԼ - 1

զոյժ ահեղ զօրութիւնն Քրիստոսի քեզ յօգնականութիւն կոչելով՝ վերագոյն *գերազանցեալ* քան զբոլոր աշխարհս բարձրագոյն գտար: (27 / 6)

ԳԵՐԱԶԱՆՑԵԼ - 1

Վասն որոյ ամենանուաստ ծառայիցս ընդարձակ եղիցի ոչ ընդ Օգոստի ումեմն կամ ընդ Տիբերի կայսեր, այլ ընդ աստուածաշնորհ բարերարութեանն՝ ահեղագոյն *գերազանցելումն* ընդ երանելւոյն Կոստանդիանոսի (201 / 8)

ԳԵՐԱԿԱՏԱՐ - 1

և ի նոյն միացեալ հաւասար *գերակատար* գմբեթին, բովանդակապէս սահեալ ճառագայթէր ի ծայրս ծառոցն նոճից ճշգրտապէս աղեղանդ (215 / 9)

ԳԵՐԱՀՌՉԱԿ - 3

Այսպէս *գերահռչակ* հրճուանօք անցեալ գայր յաշխարհս իւր: (185 / 15) Եւ յետ այսորիկ *գերահռչակ* ևս պատուով ըստ թագաւորին՝ արքայից զարևելից իշխանն ծայրափառեալ թագաւորն հարաւոյ հրամայեաց շնորհել նմա զայն (197 / 11) եկի հանդերձ իմովք եպիսկոպոսօք յԱղուանս ի *գերահռչակ* քաղաքդ Պարտաւ: (303 / 7)

ԳԵՐԱՀՐԱՇԱՊԵՏԱԻՈՐ - 1

ի ժամ տապակէզ աւուրցն առեալ *գերահրաշապետաւորին* զազատասուն տոհմն հանդերձ Նամեսական գնդիւն ի հովիտս բարձրաբերձ լերանցն բերկրէին ծաղկատեսակ հանգստեամբ (221 / 12)

ԳԵՐԱՆՆԱՁԵԻ - 1

որոյ *գերանաձև* սրունք որպէս զլեառն ինչ ի վեր բարձեալ ունէին (200 / 4)

ԳԵՐԱՍՏԱՑՈՒԹԻՒՆ - 1

և բոլորովիմբ եղեալ յերկրականիս բարեբաստիկ *գերաստացութեամբ* խրոխտաբար յօրանայր իմաստակիր քաջութեամբ: (221 / 8)

ԳԵՐԳԵՍԱՑԻ - 1

որք վկայեցինն ի Ցրի քաղաքի առաջի *գերգեսացւոյն* պարսկի (56 / 15)

ԳԵՐԵԱԼ - 11

Այլ և կանայք տղայովք հանդերձ արտօսրահառաչ ձայնիւ *գերեալ* լինէին յօտար աշխարհ (42 / 16) իսկ զկանայս նոցա *գերեալ* մտանեն ի նաւսն դառնալ երկիրն Ասիական. (323 / 15) իսկ *գերեալ* կանայքն ի մէջ գիշերին հրով տոչորէին զնաւսն (324 /2) Եւ տեսեալ արանց զեղեալսն, յոչ կամաց դադարեալ յաշխարհին՝ ամուսնացան ընդ *գերեալ* կանայսն: (324 / 4) հրամայեա՛ արձակել զամենայն անձինս *գերեալս* ի զօրաց քոց՝ զարս և զկանայս, զաղջկունս և զմանկունս (163 / 2) զոր առէր բռնութեամբ քոյով և յուղարկեացես զամենայն *գերեալսն* յերկրէ նորա (142 / 19) արձակեսցին ամենայն *գերեալքն* (163 / 8) և *գերեալքն* մնացին խաղաղութեամբ՝ փառս Աստուծոյ տալով: (332 / 1) որ խնդրեաց յարքայէն Բաբելացւոց զմի ոմն ի *գերելոցն* Հրէից՝ Շամբաթ անուն, (7 / 14) Զնա տեսեալ զօրավարին Հոնաց ի մէջ *գերելոցն*, դիւայորդոր բղջախոհական ախտիւն յեղազեղեալ տռփէր ի նա (100 / 14) Եւ ի մէջ *գերելոցն* ունէին զերկուս քահանայսն (101 / 1)

ԳԵՐԵԶՄԱՆ - 23

Մօտ ի *գերեզման* անդր փոքր բլրիկ մի էր և խաչ ի վերայ: (71 / 7) ուր կայր *գերեզման* սրբոյն: (82 / 12) որ Ադամայ *գերեզման* կոչի. (283 / 11) և անտի ցվայր երկուհարիւր և յիսուն քարեայ աստիճանք մինչև ցսուրբ *գերեզման* կուսին (284 / 8) Եւ Վարազ Տրդատայ՝ Վարազմանայ որդւոյ, Աստուած շնորհեաց կեանս. և որդի նորին Ստեփաննոս կիսօրեայ վախճանեալ. և նորին եղբայր Վարազման վրիպեալ ընկղմեցաւ ի Կուր գետ՝ նա եղև *գերեզման* նորա: (325 / 18) «Գուցէ ի բազմութենէ *գերեզմանացն* ոչ կարեմք կալ ի վերայ ամենասուրբ գերեզմանի երանելւոյն (65 / 13) Անձնաչափ կենարարին Քրիստոսի

լայնութիւն տապանափորած վիմին գիրկ և կէս հեռի են ի միջի գմբեթէն սրբոյ փրկչին մերոյ կենարար *գերեզմանէն.* (283 /5) և անդ եդեալ *ի գերեզմանի,* և ինքեանք ի տեղւոջն վանս շինէին. (40 / 10) «Գուցէ ի բազմութենէ գերեզմանացն ոչ կարեմք կալ *ի վերայ* ամենասուրբ *գերեզմանի* երանելւոյն (65 / 13) Ապա նստէր *առ գերեզմանի* սրբոյն թագաւորն ի վերայ երկրի (81 / 12) եդաւ *ի գերեզմանի,* զի խորտակեսցէ զնիզս դժոխոց. (124 / 16) Եւ կոչեցեալ զվանաց երէցն գեղջն հարցանէր, եթէ նշան ինչ ուրեք է՞ առ եկեղեցեաւն *ի գերեզմանին* վերայ, թէ ոչ. (65 / 9) Իսկ յորժամ բերէին զտեղի *գերեզմանին* ՝սխալեալ ի հիւսիսակողմն արարին զբրածն. (70 /10) և զինքն մերկ կապեալ՝ տանջել հրամայէր *ի վերայ* սրբոյ *գերեզմանին:* (76 / 11) և պատահէր ամենասուրբ *գերեզմանին* երանելւոյն. (81 / 3) Իսկ ի բանալ *գերեզմանին* և յերևել նշխարացն՝ անընդելական իմն բուրել հոտ անուշից: (81 / 8) Եւ գտանէին ապակի մի *ի գերեզմանին* նորին Գրիգորիսի ըմպելի (82 / 1) Եւ *ի վերայ գերեզմանին* հրամայէր հիմն արկանել մատրան (83 / 1) և մինչ *ի գերեզմանին* էր, ոչ էր ընդ աջմէ հօր. (125 / 9) Ո՛հ, թէ խունկ անուշութեան Բուրեալ լինէաք քո *գերեզմանին:* (229/28) Եւ իբրև սպառեսցես զամենեսին առ հասարակ, կոչեսցես զտեղի պատերազմին *Գերեզմանս թշնամեաց:* (168 /13) «Բազում *գերեզմանք* են արդ շուրջ զեկեղեցեաւն. (65 / 9) որ *առ գերեզմանօքն* յածին այր առ այր և ջոկ առ ջոկ մարտատեսիլ հոլարանին: (241 / 8)

ԳԵՐԵԶՄԱՆ ԹՇՆԱՄԵԱՑ - 1

Եւ իբրև սպառեսցես զամենեսին առ հասարակ, կոչեսցես զտեղի պատերազմին *Գերեզմանս թշնամեաց:* (168/13)

ԳԵՐԵԼ - 1

ետ հրաման ամենայն զօրացն ելանել ի Սիւնիս, *գերել* զխօսուն և զանասուն: (109 / 1)

ԳԵՐԵԼՈՑ - 1

և դարձուցանէր յաւարէ անտի հարիւր և քսան հազար հօտից և եօթն հազար ձիոց և արջառոց բազմութիւն, և ոչ ինչ նուազ քան զհազար և երկերիւր արանց *գերելոց:* (191 / 10)

ԳԵՐԻՄ - 1

գերեսցին սահմանք աշխարհացն այնոցիկ ի զօրաց նորա: (132 / 8) որով դժոխք *գերեցան* (129 / 7) Իսկ զթիւ նոցա, որ *գերեցանն* ի նոցանէ, ո՞ կարիցէ հասու լինել և ընդ գրով արկանել: (142 / 14) և որք *գերեցանն* ՝ԼԵՌ թուեցան: (317 / 4) Յետ այսորիկ *գերեցաւ* ի Խազրաց աշխարհս Աղուանից. (118 / 18) աւար առեալ *գերէին* զամենայն: (232 / 11) ասպատակ տուեալ յանխնայ *գերէին,* քանդէին զամենայն (232 / 14) Աւերէր, քանդէր, *գերէր* զերկիրն ամենայն (132 / 3)

ԳԵՐԻ - 7

և դառնայ ինքն մեծաւ աւարաւ և բազում *գերեօք* ի Հայս: (13 / 13) և զմնացեալսն *գերի առեալ* ի տեղւոջն բակարգել առնէին: (100 /10) Եւ զբազումս ի նոցանէ սպանանէին և զմնացեալսն *գերի վարէին* (100 / 18) և

զմայրն հանդերձ եղբարբքն *գերի առեալ* վարեցին: (178 / 2) *գերի վարեալ* զամենայն ի բանակետղն ժողովէին: (190 / 13) և յաւարի առին զԱմարաս գաւառ և *գերի առեալ* իբրև ոգիս հազարս (326 / 2) և *գերի* վարեալ զԲաղացն սահմանս՝ գայ իջանէ յԱղահէջ գաւառ (331 / 13)

ԳԵՐԻ ԱՌԵԱԼ - Տե՛ս ԳԵՐԻ

ԳԵՐԻ ՎԱՐԵԱԼ - Տե՛ս ԳԵՐԻ

ԳԵՐԻ ՎԱՐԵՄ - Տե՛ս ԳԵՐԻ

ԳԵՐ Ի ՎԵՐՈՅ - 2

ընդ նմին և աղօթք սուրբք խնդրուածաց քոց վաղվաղակի *գեր ի վերոյ* գտանէին: (23 / 7) զմիմեամբք դիզանալով այնչափ բազմութեանն՝ վերանային քան զպարիսպն *գեր ի վերոյ*: (152 / 5)

ԳԵՐՄԱՆՈՍԱՆ - 1

Եւ զայս հրաման մատանեցին Մուծիկ՝ արքայի հրամանատար…Խուրս, *Գերմանոսան ...* և ամենայն ազատք Աղուանից: (94 / 14)

ԳԵՐԻՉ -1

Որ զամենայն *գերչաց* փարատէր զյուզմունս: (228 / 19)

ԳԵՐՈՒԹԻՒՆ - 15

Բազմահոյլ *գերութեամբ* և մեծամեծ աւարօքն անցեալ զԿուրական գետովն ի յարևելից կուսէ բանակէին յայն կոյս յանդիման նոցա: (103 / 11) ՎԱՍՆ ԳՈՒՄԱՐԵԼՈՅ ԽՈՍՐՈՎՈՒ ԸՆԴԴԷՄ ԱՐՔԱՅԻՆ ՅՈՒՆԱՅ ԵՒ ՅԱՂԹԱՀԱՐԵԼՈՅ ԶՆԱ ԱՄՍ ԲԱԶՈՒՄՍ ՍՐՈՎ ԵՒ *ԳԵՐՈՒԹԵԱՄԲ* ԱՇԽԱՐՀԻՆ ՀՌՈՎՄԱՅԵՑՒՈՑ (133 / 13) եթէ ոք ի սոցանէ գտանիցի երկաբնակ եղեալ՝ սրով և *գերութեամբ* սպառեսցի: (305/6) էառ զմեծ քաղաքն զԵմովրիայ սրով և *գերութեամբ:* (330 / 21) իսկ նորին որդին եկեալ էառ զաշխարհս սրով և *գերութեամբ* (331 / 11) զոր *գերութեամբն* էր ածեալ Աղեքսանդրի Մակեդոնացւոյ (95 / 15) այց արար ամենողորմն Աստուած հեղման արեան սրբոց վկայիցն Քրիստոսի և աւերածոյ սրբոյ եկեղեցւոյ, և ի զուր խողխողմանն ծերոց և երիտասարդաց և *գերութեան* կանանց և տղայոց (43 / 11) ետես իշխանն՝ տէրն նոցա զայն ամենայն աղխ *գերութեան* աւարացն մարդոյ և անասնոյ և անօթոց, արծաթեղինաց և ոսկեղինաց (134 / 17) որք Պարսից և Ասորեաց տիրեցին ՄՕԲ ամօք յառաջ քան զգալ կենարարին մերոյ Քրիստոսի և յետ դարձի *գերութեանն* Հրէից ի Բաբելովնէ ՄՀ ամաւ: (7 / 8) լցաւ ժամանակ *գերութեանն* Երուսաղեմի (128 / 12) ՎԱՍՆ ՍԱՍՏԿԱՅԵԱԼ ՍՈՎՈՅՆ, ՍՐՈՅՆ ԵՒ *ԳԵՐՈՒԹԵԱՆՆ* Ի ՄԻԱՍԻՆ (164 / 2) աղօթիւք իւրովք զերծոյց ի *գերութենէ* զբազում անձինս. (343 / 19) *ի գերութիւն* վարեաց զփայտն կենաց՝ զխաչն լուսատու տիեզերաց (129 / 6) ակամայ դիմեալք *ի գերութիւն* (156 / 16) բազում գանձիւք խաղացուցեալ *ի գերութիւն:* (336 / 18)

Գ ԵՒ ԿԷՍ - 1

Եւ Ներսէս կալաւ զաթոռն ուղղափառութեամբ ամս ԺԴ և ի չարափառութեանն ամս Գ և կէս (297 / 10)

ԳԶԱԹ - 1

Եւ ոյր ոչխարք են, ի տանէ ոչխար մի և Գ *զգաթ* բուրդ և մի պանիր (91 / 4)

ԳԷՇ - 2

զերամ երամ մոգսն գայթակղեցուցիչս ուր և գտանէին, սրոյ ճարակ առնէին և *գէշ* թռչնոց երկնից և գազանաց երկրի արկանէին: (115 / 16) Եւ ի ժամանակի նեղութեան յաւուրս քառասներորդացն պահոցն յախուռն, անխտիր մերձեցեալ ի *գէշ* մեռելոտեաց անսրբոց, այլ և զարմատս բանջարոց և զկեղևս ծառոց հանեալք և զծայրս ոստոցն ծամէին. (164 / 13)

ԳԷՈՐԳ - 11

զոր մեծ իշխանն Հայոց գրէ առ հայրապետն *Գէորգ.* (335 / 4) յորոյ ձեռն ըմբռնեալ լինէր հայրապետն Հայոց *Գէորգ* ի կապանս երկաթիս պարփակեալ ածաւ ի Պարտաւ: (335/15) որ և զմեծ հայրապետն Հայոց *Գէորգ* յանօրէն Տաճկաց կապարանէն բազմաբաշխ գանձիւք տայր արձակել և յոգնամեծար զնա արարեալ՝ առողջ առ Հայաստանեայս առաքէր: (336 / 3) Ընդ նոյնն արշաւեալ ի Վիրս՝ ընդդէմ եկեալ նմա երկու քաջ զօրավարք Վրաց՝ *Գէորգ* իշխան և Արևէս եղբայր նորին. (337 / 1) զոր նոյն ինքն *Գէորգ* և զսա կրկին ձեռնադրէ: (346 / 8) շնորհեաց նմա Քրիստոս ի նշխարաց սրբոյն Ստեփաննոսի և սրբոյն *Գէորգայ* ի ձեռն հաւատաւորի միոյ՝ Հռոմայ շինացւոյ (281 / 2) յայնժամ ի միաբանութենէ զեկուցանեն զայս տեառն *Գէորգայ* Հայոց կաթողիկոսի: (334 / 16) Յանկամական մտաց չուեալ երթայ ի Դուին և զերկրորդն առնու ձեռնադրութիւն անձնահաճն Սամուէլ *ի Գէորգայ* Հայոց կաթողիկոսէ (335 / 6) որպէս այր իմաստուն, ընդ Սողոմոնի եպիսկոպոսի և ընդ *Գէորգայ* հայրապետի վերստին նորոգեաց: (335 / 9) առնու զերկրորդ ձեռնադրութիւն ի Դուին *ի Գէորգայ* Հայոց կաթողիկոսէ: (346 / 6) սա էր Դունայ եպիսկոպոս Հայոց և առանց կամաց կաթողիկոսին *Գէորգայ* գայ յԱղուանս և աստէն ձեռնադրի (346 / 8)

ԳԷՈՐԳԻՈՍ - 2

Նախավկայն է տէրն Ստեփաննոս և Թէոդորոս նահատակ, սուրբքն Վարոս, Մամաս, Մար, Սարգիս, *Գէորգիոս վկայ*, Կոզմաս և Դամիանոս (120 / 11) գործակից իւր կալեալ զմեծ *նահապետն Գէորգիոս* (330 / 14)

ԳԷՈՐԳԻՈՍ ՎԿԱՅ - Տե՛ս ԳԷՈՐԳԻՈՍ

ԳԹԱԼ - 2

Զի կամեցաւ *գթալ* ի մեզ քաղցրութեամբն իւրով բարերար և մարդասէր ամենակալն Աստուած ըստ մեծի ողորմութեանն իւրում (305 / 14) ոչ ոք կարելով ժամանել ի տուն իւր՝ ձայն տալ զուժին ահագին, հրամայել սիրելւոյ ամուսնոյ իւրոյ, կամ *գթալով* ի ծնունդս որովայնի իւրոյ (152 / 9)

ԳԹԱԾ - 1

Այլ՝ որ ողորմածն էր և *գթած,* զնա ընդ մարտիրոսս ընկալեալ. (319 / 19)

ԳԹԱՄ - 2

և ոչ թողուին զհաշմս կամ զծերս, և ոչ գթային կամ գալարէին աղիք նոցա ի խանդաղատանս տղայոց (136/7) որոց բարեխօսութեամբ միշտ գթասցի Աստուած Աղուանից աշխարհիս և Հայաստանեայց երկրին: (120 / 1)

ԳԹԱՑԵԱԼ - 4

Եւ տէր Աստուած մեր գթացեալ յայրին՝ յարոյց զմիամօր որդի նորա. (89 / 3) Եւ նա, իբրև հաւ ի վերայ ձագուց գթացեալ, զգեցուցանէր զմերկսն և կերակրէր զկարօտեալսն (163 / 14) Եւ գթացեալ ետ նոցա զխնդրուածս նոցա (166 / 7) Եւ գթացեալ ի տկարութիւնս մեր և ողորմեալ ժողովրդեան իւրում առաքեաց առ մեզ զպատուական հայր զԵղիա շնորհիւն Աստուծոյ Հայոց կաթողիկոս (299 / 13)

ԳԹԵԱԼ - 1

զի ի խռնել պատերազմին գթեալ քաջասլաց նորայն երիվարն գլորեցոյց զնա (186 / 17)

ԳԹԵԼ - 1

Եւ զոր օրինակ Դաւիթ զգեցեալ զսպառազինութիւնն Սաւուղայ՝ կաղալ և գթել սկսաւ (87 / 1)

ԳԹԵՄ - 1

Նա և զամենայն ժամանակս կենաց իւրոց աւազան քաւութեան զարտօսրն իւր արարեալ՝ լուանայր, զորս աղտեղեալ գթեացն. (319 / 17)

ԳԻՆ - 1

Զնոյնն ի վերայ Վրաց հրամայեցաք՝ ամենևին մի՛ հաղորդել ընդ նոսա ... և մի՛ ի մեր եկեղեցիս զնոսա ընդունել, այլ և ամուսնութեամբ ամենևիմբ հեռանալ. միայն գնել ինչ կամ գնոյ տալ որպէս Հրէից: (271 / 1)

ԳԻՆԵԶԻՆԵԱԼ - 1

գինեզինեալ ի խնճոյսն՝ սեղեխաբար վաւաշէր ի կին մի. (118 / 10)

ԳԻՆԻ - 6

գտանի ի նոսա հաց և գինի շատ, նաւթ և աղ (9 / 7) Եւ յորժամ յընթրիս լինէր, բարեսէր թագաւորին թակոյկ մի մեծ արծաթի յարքունի սպասէն լցեալ արքայի ըմպելի գինի և երկուս արծաթի մեծագոյն սեղանս լցեալ արքունական հացիւ՝ հանապազ առաջի արքունական սեղանոյն դնել հրամայէր: (63 / 14) և մանուկ մի գինի տայր բաժակաւ (76 / 6) և որ տառապեալն է հացոյ զկէսն տացէ, և գինի որչափ և կարող է: (91 / 1) որով զարգանական լափէին և նովին պարարտական սառոյց, անլուայ աղտեղեաւքն յաբխռոն յանզգայս ի միոյ միոյ բաժակէ երկու երկու կամ երեք երեք ի նոցանէն զանապակ գինին կամ զկաթն ուղտուց և ձիոց անյագ յորովայնս իւրեանց իբրև ի տիկս ուռուցիկս չափէին: (160 / 8) և ոսկեղէն մաղզմայս բերել անոյշ գինւով՝ զնշխարսն հրամայէր լուանալ և յարևացուցանել ի վերայ ստորարկեալ վառին: (82 / 4)

ԳԻՇԱԽԱՆՁ - 2

որ էր նա ինքն Ջերու խաքան, առ գիշախանձ կորիւնն իւր՝ Շաթ (170 / 7) Իբրև զգայլս գիշախանձս անամօթացեալ դիմեցին ի վերայ նոցա (136 / 4)

ԳԻՇԱՔԱՐՇ - 1

զի յերեսաց սրոյն, որպէս յահեղ առիւծէ ի մագիլս *գիշաքարշս* բեկանող արջոյ՝ ի ժանիս սովոյն մատնէին: (156 / 15)

ԳԻՇԵՐ - 22

Քանզի մեծ զօրավարն Հոնաց անդէն բանակեալ կայր իւրովն զօրօք զայն *գիշեր:* (101 / 4) Ո՛հ թէ զինչ *գիշեր* խաւար թխպահոծ Եւ մարմին անլոյս զդէմ քո մեզ կալաւ (229 / 17) *գիշերաւ* է ծածկեալ, ամպովք է թաքուցեալ (24 / 17) Արուսեակն յայգուն պահու և եթ երևի, իսկ դու ի քսան և ի չորս ժամս՝ ի տուընջեան և *գիշերի:* (24 / 5) ի *գիշերի* տեսանիս և ի տուընջեան թափ անցանեն ճառագայթք հաւատոց քոց: (25 / 2) որք միշտ ի տուէ և ի *գիշերի* պաշտեալ՝ սպաս ունէին սրբոցն: (62 / 10) Եւ ի տուէ և ի *գիշերի* ամենայն ժողովելոցն անդադար լինէին աղօթք և խնդրուածք ուժգին գոչմամբք (70 / 1) Եւ յետ այնորիկ, ի նմին *գիշերի* մինչդեռ արթնական խնճոյիւքն դեգերէին այլազուն իշխանն հանդերձ զօրականօքն և առնէին ծաղրակատակ խնդութիւն, յանկարծակի նշան զարմանալի երևեալ նոցա ի տեառնէ: (102 / 6) Եւ ի *գիշերի* յայնմիկ անցին ամենեքեան (137 / 13) յայնժամ ի *գիշերի* յառաջին պահուն՝ անվահան, ունելով թուր.(222 / 10) Չարաչար խոցոտմամբ հասոյց ի վերայ, Որպէս յազգին Մովաբու ի *գիշերի* սատակումն: (227 / 12) զոր տեսեալ նոցա, անհետեցին ի *գիշերի* (329 / 13) Ելանէր ի բանակէն, և յերրորդում *գիշերին* (83 / 5) Եւ ի *գիշերին* յայնմիկ ընդարձակէր ճանապարհ փրկութեան մեծի հայրապետին և ամենայն ապրելոցն: (157 / 12) իսկ գերեալ կանայքն ի մէջ *գիշերին* հրով տոչորէին զնաւսն (324 / 2) երևէր ի տեսլեան *գիշերոյ* հրեշտակ ողորմութեան Աստուծոյ կնոջ ումեմն Խոսրովիդուխտ անուն՝ քեռ Տրդատայ՝ Հայոց արքայի. (33 / 20) յաղկաթ ամսոյ ի հասարակել տուընջեան և *գիշերոյ* եկն ի Մաքա և անտի դարձեալ յիւր շահաստանն (290 / 7) այս վանաց երիցու երևի ի տեսլեան *գիշերոյն* (57 / 2) Եւ ի նսեմանալ աւուրն զերծեալքն ախտիւք խնդրէին զխաւար *գիշերոյն* առաւել, քան զլոյս տուընջեան: (157 / 11) մի՞թէ առաւել իցէ քան զընկղմելն Փարաւոնի … կա՛մ սոսկալի ահ *գիշերոյն,* որ եհաս ի վերայ Ասորեստանոյն (170 / 2) ի չորրորդում պահու *գիշերոյն* յեղակարծումն երևեալ ահա նմա տեսիլ հրաշալի (202 / 2) Ի հինգերորդում պահու *գիշերոյն,* այդոքիկ ամենեքեան տեսանէին զարփիահրաշ սքանչելիսն: (217 / 4)

ԳԻՇԵՐԱԳՆԱՑ - 1

Եւ եթէ զլուսին ածից քեզ յօրինակ, յոյժ ծիծաղելի է իմաստնոց. երկոտասան անգամ ի տարւոջն վիժած, ժանգահոծ, մանգաղաձև, կիսագունդ, խոնաւալից, կիսալոյս, հիւանդոտ, *գիշերագնաց,* խաւարասէր (24 / 7)

ԳԻՇԵՐԱԿՈՒԼ - 1

զբնութիւն նորա պատմեցից քեզ. շեղագնաց, թիւրընթաց, կողմնաւոր ստուերաշուք, հարաւաբնակ, ձմեռնատանջ, ամառնակէզ, թօնուտ գարնանի և երաշտուտ աշնանի, *գիշերակուլ,* առաւօտածին (24 / 14)

ԳԻՇԵՐԱՀԷՆ - 1

առեալ զմնացեալ դուստրն իւր Սպրամ *գիշերահէն* տաժանելի ուղևորմամբ մտանէ ի բերդն Խաչենայ (340 / 6)

ԳԻՇԵՐԱՊԱՇՏՕՆ - 1

Եւ մինչև նստեալ՝ ի *գիշերապաշտամանն* էր, նիրհ առնոյր փոքրկագոյն զթագաւորն. (72 / 17)

ԳԻՇԵՐԱՎԱՐ - 1

Արուսեակն զվեց ամիս արուսեակ է և զվեց ամիս *գիշերավար:* (24 / 2)

ԳԻՍ - 9

Իսկ սուրբ հայրապետն եկեալ ի *Գիս* կանգնեաց եկեղեցի և մատոյց զանարիւն պատարագ: (10/15) Ընդ այսոսիկ ապա ժամանակ տարօրէն խառնակութեամբ գլխաւորք ազգաշաղախ Աղուանից աղծապիղծք եղեալ. նախ՝ թագաւորազինն Կողթայ տեառն տունն … և յՈւտի գաւառի ի *Գիս* Վարազ Պերոժի տունն (213 / 1) ցանկութիւն յոյժ՝ սուրբ երէցն ունէր խնդրել զփափագելի խաչն՝ զծածկեալն սրբոյն Մաշտոցի ի *Գիս* անուանեալ գիւղ (214 / 15) Սա եգիտ զսուրբ խաչն՝ ծածկեալն ի Մեսրոպայ ի *Գիս* գիւղ (344 / 6) Եւ կարգ եդ յօր խաչին տօնել ի *Գիս:* (344 / 7) որում *Գիսն* կոչեն: (95 / 13) որում *Գիսն* կոչեն: (97 / 6) ՈՐ Ի *ԳԻՍՆ* ԷՐ (201 / 17) Առաջինն մայր եկեղեցեացն արևելեայց *Գիսոյ* եկեղեցին նորին հիմնադրեալ և զինքեանս նմա աւանդեալ. (275 / 1)

ԳԻՍԱՐՁԱԿ - 1

Քանզի տեսանելով զահն սաստկացեալ ժանտատեսիլ, ժպրհերես, լայնադէմ անարտևանուն բազմութեանն ի ձև իգական *գիսարձակս* դիմեալս ի վերայ՝ դողումն կալաւ զնոսա առաջի նոցա. (136 / 1)

ԳԻՍԱԻԱՆ - 1

Որոյ պարառաբար յարուցեալ յառաւօտուն՝ փութապէս հասանէր ի կարգեալ եկեղեցին՝ ի վիճակ *Գիսաւան* նահանգին: (220 / 4)

ԳԻՍԱԻՈՐ - 2

Ազդ առնէ այնուհետև ամենեցուն, որ ընդ ձեռամբ իւրով էին, տոհմից տոհմից և ազգաց ազգաց, լեռնականաց և դաշտականաց, յարկաբնակաց և բացօթեկաց, ծովամխաց և ցամաքայնոց, գլխագերծաց և *գիսաւորաց.* (135 / 2) յանձն առնում և ես լնուլ զպասքումն գազանաբարոյ ոսկեսէր ազգին *գիսաւորաց:* (141 / 9)

ԳԻՏԱԿ - 3

որում ինքն եղեալ էր *գիտակ* (207 / 14) Վասն որոյ իբրև *գիտակ* լինէր այսմ այրն՝ քաջայօժար կամաւ երթայր ի Մեծ Կուենից գաւառն՝ ի Գլխոյ վանաց եկեղեցին: (218 / 6) և հեծեծանս ի խորոց սրտին առաքէր առ *գիտակն* գաղտնեաց. (319 / 18)

ԳԻՏԱՑԵԱԼ - 4

Եւ *գիտացեալ* ի տեսլեանն, որպէս պատմեացն (72 / 18) Իսկ զօրավարն Պարսից *գիտացեալ* զմեծ պարտելն իւր ի նմանէ (179 / 7) *Գիտացեալ* այնուհետեւ սրբոյն առն, եթէ յայնմ տեղւոջ է գանձն անկապուտ: (215 / 12) և զձեզ գործակից և հաւատակից նմա *գիտացեալ* աղերսեմք յերկաքանչիւրոցդ կատարել զմեր հոգևոր խնդիր. (264 / 1)

ԳԻՏԵԼ - 10

Իսկ եթէ յաղագս Բագրատունեացն կամիցիս *գիտել* Պարոյր՝ որդի Սկայորդւոյ, կոչէր Հրաչեայ՝ թագաւոր Հայոց, որդի Հայկայ (7 / 12) մեռեալ մեծատանն հոգին ի տանջանարանէն հեռագոյն սրատես աչօք զԱբրահամ և զՂազար տեսանել կամ *գիտել* ուստի՞ էր. (88/3) շնորհօք լուսոյն *գիտել,* ճանաչել զԱստուած՝ զարարիչն երկնի և երկրի (104 /11) իսկ զԱրմենու զազատատոհմ և զնոցին նախապատուութիւն ոչ կարացաք *գիտել* ՝ ոչ ի հարցն մերոց թագաւորաց և ոչ ի մատենագրաց: (107 / 1) և զայն ոչ մարթէք *գիտել,* թէ անմաքրոցն սիրող զիա՞րդ լինիցի սուրբ: (246 / 6) «Ուստի՞ է քեզ զայդ *գիտել:* (288 / 7) Եւ նոցա գաղտնի լրտես կացուցեալ առ ի *գիտել* թէ ով պատմէ նմա զայն կամ ուստի գիտէ նա զայս ամենայն: (288 / 9) Եւ բազում արութիւնս յոլովպիադս Պարսից ցուցանէ՝ ոչ ոք *գիտելով* զնա: (109 /13) Եւ նովաւ հանդերձ հասանէր ի նախասացեալ վայրն՝ ի հինն եկեղեցի, և ոչ *գիտելով* ստուգել և նշմարել զտեղին: (215 / 5) և ի լուտ անցեալ ելանէր ի ծառն՝ *չգիտելով* չարագործացն: (52 / 9)

ԳԻՏԵՄ - 42

ընդ նմին և զայն *գիտասջիր.* (24 / 16) զի եթէ ոչ փութանակի յաւելցես ինձ զօր ի թիկունս իմ, ես ոչ զանգիտեմ ի մեռանելոյ, բայց ապա *գիտասջիր»:* (144 / 14) Ապա *գիտասցես* և ի միտ առցես զանիմացական, զտրտմեցուցիչ անձին քո խնդիրս (134 / 11) զի *գիտասցէ* ինքն պատուել կարասեաւն: (159 / 4) զի մի՛ ոք *գիտասցէ* զնորա տեղին: (288 / 5) Եւ իբրև *գիտաց* բազմութիւնն զանչափ վատասրտել առնն, զաղաղակ բարձին և ասեն (136 / 16) Արդ՝ իբրև պարտեցաւ այն ևս հպարտութիւն, *գիտաց* ի միտս իւր ամենայն պատերազմող և որ կապէր զսուր իւր յազդեր, եթէ ոչ ինչ համարի առաջի նոցա իշխանութիւն թագաւորաց և զօրութիւն զօրավարաց: (169 / 11) և որպէս այլով ամենայնիւ էր իմաստայեղց անվկանդն Ջուանշիր՝ յայնմ ևս *գիտաց* զնենգութիւն սպանողին պիտակահոյլ դաւոյն: (223/1) և ոչ ոք *գիտաց* զնա ի քրիստոնէիցն: (329 /13) Ահա *գիտացաք,* եթէ անուն նորա տարածեալ՝ ելից զտիեզերս. (265 / 3) Եւ իբրև *գիտացին,* եթէ ոչ բռնութիւն և ոչ սէր կարեն ածել նա ի հաւանս, զանձ սաստիկ ետուն տանել յաշխարհն խայլանդրաց: (16 / 14) որք զհրեշտակս ածին ի զարմացումն և անգիր օրինօք անձամբ անձանց օրէնք եղեն, և առանց օրինաց զտէրն ի վեր ծանեան և զեղեալսն *գիտացին* ընդ օրինօք (18 / 8) ապա *գիտացին* և նոքա, եթէ յագեցան սուրբք նոցա: (152 / 17) Զի թէ մինչ տղայն էիր, յաղթեցեր նմա, ի չափ հասեալ, *գիտեմ,* թէ առ ոտն կոխես զամենայն մենքենայս չարեաց նորա: (26 / 12) «Հաստատուն *գիտեմ,* զի տայ ինձ Աստուած ի ձեռն մեծիս Գրիգորի զամենասուրբ նշխարս սրբոյն

Գրիգորիսի»: (68 / 7) Եւ զի չէր բնաւ երթեալ սարկաւագին յԱմարաս, ասէր՝ զտեղին, զոր եցոյց, *գիտեմ:* (71 / 13) Իսկ այսչափ բազմութիւն ժողովելոցս յամենասուրբ անուն բոլորեցուն Աստուծոյ՝ հաստատեալ *գիտեմ* (80 /16) «ԶՊարսից և զՊարթևաց զբնական Պահլաւիկս և զազատ արանց զնախադրութիւն քաջ *գիտեմ* (106 / 15) Եւ ես *գիտեմ,* որ անգիտութեամբ արարէք, զոր ինչ արարէքն: (256 / 6) *«Գիտեմ,* զի անարժան եմ ի սպասաւորել դոցա (281 / 12) Եւ ահա եմք ի տարակուսանս, և *ոչ գիտեմք* յո՞ երթիցուք, կամ ո՞ւր փախիցուք յերեսաց նոցա: (157 / 22) Արդ *գիտեմք* զայս (252 / 7) և ճշմարտութեամբ *գիտեմք,* թէ զոր դուք ընտրէք, հաճոյ Աստուծոյ է և մեզ: (302 / 7) Եւ ի սոցանէ, որ *գիտեն* դպրութիւն՝ Եբրայեցիք, Լատինացիք … Սպանիացիք, Յոյնք, Մարք, Հայք, Աղուանք: (6 / 6) Արդ՝ եթէ ընտանեացն աղօթք ի մեռելութենէ ի կենդանութիւն *գիտեն* ածել, ապա աստուածային զօրութիւն կարի յոյժ. (89 / 7) «Է՞ր աղագաւ մեռանիս, *գիտե՞ս,* եթէ ոչ». (57 / 9) Ապա եթէ այլ ոք եկեղեցի ուղղափառ *գիտե՞ք* զատ յայսցանէ: (273 / 4) ԹԷ ՈՐ ԱԶԳ *ԳԻՏԷ* ԴՊՐՈՒԹԻՒՆ (6 / 5) ուստի *գիտէ* նա զայս ամենայն: (288 / 9) «Երիս ծնունդս մեզ *գիտէ* բանն՝ զմին փչմամբ, զերկրորդն մարմնանալով և մկրտութեամբ, և մի ծնունդ թուէ և զերրորդն յարութեամբն: (315 / 12) ժողովուրդքն *գիտէին* (93 / 4) և ջուր իսկ խնդրել *ոչ գիտէին:* (165 / 15) Եւ երանելին Վարդան *ոչ գիտէր* զդարանագործութիւն անիծելոյն Վասակայ ուրացողի (113 / 17) ինքն *գիտէր* զպարտելն յանկարծաժողով տկար զօրուն Խոսրովու առաջի կայսերն: (144 / 9) զի *գիտէր.* եթէ տէր ընդ նմա է: (174 / 8) Եւ նոյն ինքն տէրն զգուշացուցանէր, եթէ արթուն լերուք, զի *ոչ գիտէք* զօրն և զժամն: (127 /15) «Արք եղբարք, դուք ինքնին *գիտէք* զհարուածս մեծամեծս (157 /19) *ո՞չ գիտէք* եթէ նախահայրն մեր Ադամ սակս սորա ելեալ ի դրախտէն զփշաբեր և զտատասկածին ժառանգէր երկիր: (244 / 3) «Զիարդ մարթէք և իմանայք և *գիտէք* առնել զայդ (250 /14) «Եթէ դուք յիմում խոստովանութեանս էք, օրհնեալ էք. ապա եթէ յԱղուանից աւանդութեանն էք, դուք *գիտէք»:* (313 / 18) զորպէսն *չգիտեմք:* (342 / 13)

ԳԻՏՆԱԻՈՐ - 2

ՀԱՐՑՈՒՄՆ ՎԱՉԱԳԱՆԱՅ՝ ԱՐՔԱՅԻՆ ԱՂՈՒԱՆԻՑ ՋՄԱՏԹԷ ԵՐԷՑ *ԳԻՏՆԱԻՈՐ* (86 / 14) խռովութիւն և հերձուած բազում ի կողմանս կողմանս *գիտնաւորաց* և տգիտաց լինէր (266 / 18)

ԳԻՏՈՒԹԻՒՆ - 12

Եւ ինքն լի էր հզօր *գիտութեամբ* և տեղեակ Աստուածաշունչ գրոց: (203 / 14) «Լցաւ երկիր *գիտութեամբ* տեառն (243 /15) ծաղկէր իւրով սաղարթածաւալ *գիտութեամբն:* (207 / 6) և ի վերայ ծննդոց իմոց հե՛ղ զհանճար *գիտութեան* ՝ գնալ ի ճանապարհս քո (189 / 5) Այլ զգիտութեան և զանգիտութեան մեղս ձեր մի՛ յիշեսցէ Աստուած, այլ արկցէ զձեզ ի բովս *գիտութեան* և ի խրատ արդարութեան: (242 / 19) Թանց *գիտութեանց* դպրացն ջոկք և ուխտի մանկանցն դասք մնային. (218 / 3) *ԳԻՏՈՒԹԻՒՆ* ԵՐԵՒՄԱՆ ԱՍՏՈՒԾՈՅ ՄԵՐՈՅ ՄԵՐՈՑՄ ԱՐԵԻԵԼԻՑՄ. (9 / 12) ոչ ունիմ *գիտութիւն* աղքատութեան իմոյ կազմութեան պատրաստութեան. (27 / 11) զի թէ *գիտութիւն* և

անգիտութիւն յաղագս հոգւոցն ննջեցելոցն ասիցեմք, չիք ինչ բնաւ այնպէս տխմար քան զոչ հանգուցեալքն: (88 / 16) Արդ՝ *գիտութիւն* ձեզ լիցի (296 / 1) Եւ *գիտութիւն* իմն զայս ուսաք զամիր մոմնւոյ դարապասին (330 / 6) ոչ բերեալ ի լուր, այլ զայս փոքր ի շատէ, արտայայտեալ բացայայտեցաք առ ի *գիտութիւն* այնոցիկ, որք փոյթ յանձին կալեալ իցեն այսմ խնդրոյ: (342 / 4)

ԳԻՐ, ԳԻՐՔ - 71

ԳԻՐ ԱՋԳԱԲԱՆՈՒԹԵԱՆ ՅԱԲԵԹԻ ԾՆՆԴՈՑՆ (4 / 2) *ԳԻՐ* ԱՆՈՒԱՆՑ ՆԱԽԱԳԱՀ ԿԱՐԳԵԼՈՑ. (41 / 2) Եւ ապա բացեալ գտին զնշխարս երանելեացն և *գիր* ի վերայ տարմալոյն (59 / 15) Եւ արդ՝ մի յերկուց առաջի կայ ձեզ նախարարացդ Հայոց՛ ցուցանել զնախնական *գիր,* զիւրաքանչիւր տանց զաստիճան և զպատիւ (107 / 3) Եւ հրամայեալ ընթեռնուլ և թարգմանել ի պարսիկ *գիր* և լեզու: (107 / 10) Եւ գտեալ ի նմա *գիր* տասնևեօթն բարձի: (107 / 12) Ուստի և *գիր արարեալ* առ իշխանս և առաջնորդս աշխարհաց (132 / 5) Նա իսկ և իսկ առաքէ *գիր* խոնարհութեան զկնի Միհրանայ. (171 / 13) զորմէ տախտակ մի ձոյլ ոսկի՝ հաստահեղոյս բևեռեալ. և ի նմա *գիր* ասորի և հայ: (210 / 5) որ և ունէր առ հասարակ հայ, հռոմ և ասորի *գիր.* (215 / 16) նոյնժամայն կամաւ իշխանին Ջուանշիրի *գիր* հրամանական առ Իսրայէլ առաքէ փութանակի (219 / 1) այսպէս ասէ վասն նոցա աստուածային *Գիր* (247 / 13) վասն նոցա ասէ *Գիր.* (247 / 15) *ԳԻՐ* ՊԱՅՄԱՆԻ ՏԵԱՌՆ ԵՂԻԱՅԻ՝ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՌ ԱՂՈՒԱՆՍ (303 / 2) և ցուցին ինձ զայն *գիր* (303 / 8) և ետու զայս պայմանի *գիր* ձեզ. (304 /1) *ԳԻՐ* ԱՆՈՒԱՆՑ ՆԱԽԱՐԱՐԱՑ ԱՂՈՒԱՆԻՑ (304 / 5) Իսկ եթէ *գիր* ոք բերէ յառաջ վասն եկեղեցւոյ ըստ մարմնաւոր աշխարհական իրաւանց և ոչ ըստ աստուածային պատուիրանաց և կանոնաց, անվաւեր և անհաստատ է (310 / 6) յորում կայ *գիր* այսպէս. (313 /2) Տէր Երեմիա. ի սորա աւուրս արար *գիր* Աղուանից երանելին Մեսրոպ (342 / 14) Ես Եղիայ՝ Հայոց կաթողիկոս հանդերձ իմովք եպիսկոպոսօքս առի զմիաւորութեան *գիրդ* ի ժողովոյդ Աղուանից (303 / 20) Եւ էր *գիրն* այս, եթէ՝ «Երուսաղէմեան մասնաւորեալ նշխարք սրբոց են»: (207 / 3) զորոց *գիրն* ասաց, թէ Երուսաղէմեան են մասունք սրբութեանց տեառն: (210 / 7) Քանզի ի ձէնջ *գիրն* ծանոյց մեզ յետ դուզնաքեայ զմէնջ գոհութեանն ամբաստանութեան ճառ զմարդոյ, որ տկարագունի էր նշանակեալ և զմեր նմա հաւատալն իբր անիմաստ, անտեղի. (277 / 12) որպէս Հոռոմոց *գիրն* ասէ (288 / 18) Եւ նոյնժամայն Յովէլ եպիսկոպոս առ ինքն առեալ զնզովից *գիրն* ՝դնէր ի պահեստի. (293 / 17) Ու նորա տուեալ զսուրբ ուխտին *գիրն* ի նա. (294 / 4) նստէր ինքն թագաւորն ի դպրոցատանն և զորդիս դիւթացն և քրմացն զինքեամբ կացուցանէր. գոբողայաբար բակ առեալ բազմութեանն յոյժ՝ և ոմանց *գիրս,* և ոմանց պնակիտս ի ձեռին ունելով. (51 / 8) Գտանին զրոյցք Արևելից կողմանց, որ ոչ են անկեալ ի *գիրս* հնագիր պատմագրաց (106 / 7) ԳԱԼՈՒՍՏ ՄԵՍՐՈՊԱՅ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԱՌ ԵՍՎԱՂԷՆ ԱՂՈՒԱՆԻՑ ԱՐՔԱՅ. ԵԻ ԱՌՆԵԼ *ԳԻՐՍ* ԵԻ ԿԱՐԳԵԼ ՎԵՐՍՏԻՆ ԴՊՐՈՑՍ (117 / 6) Մի՛ *գիրս,* մի՛ պատկերս,

մի՛ նշխարս ի նոցանէ ընդունել: (268 /1) «Գրեցաւ գիրս այս միաբանութեամբ և Աստուծոյ միջնորդութեամբ վասն հաստատութեան հաւատոյ անշարժ լինելոյ ի մէջ երկոցունցս: (302 / 14) առաքէ կայսրն զՍտեփաննոս ի Հռոմ քաղաք բերել անտի երիս գիրս համաբարբառ այնմ գրոց սակս ճշմարիտ հաւատոյ (321/11) զոր և ուսուցանեն մեզ Գիրք սուրբք (89/1) Կատարեցան գիրք առաջին «Պատմութեանս Աղուանից»: (105 / 21) անսայք ցնորական տեսլեան, զոր Գիրք մեզ չհաւանել ուսուցին: (203 / 12) որ վերագոյնդ կան ի գրի (126 / 13) Սակս հայրապետական անուանց պարտ և պատշաճ վարկանելի էր զստոյգն յիշատակաւ դրոշմել ի գրի: (342/1) որք ըստ կարգի կան ի գրիդ (304 / 15) Եւ ըստ գրոյն մեր բացեալ առաջի սրբազան քահանայից, գտաք զամենակեցոյց խաչին մասն (210 / 5) Եւ վասն առաւել հաստատութեան գրոյս Վաչագանայ՝ Աղուանից արքայի մատանին եդաւ ի վերայ: (94 / 16) գրով և պատգամաւ յանդիմանէր զնա՝ վասն զուր աւերելոյն զաշխարհն Հայոց: (16 / 10) Իսկ զթիւ նոցա, որ գերեցանն ի նոցանէ, ո՞ կարիցէ հասու լինել և ընդ գրով արկանել: (142 / 14) Եւ առաքէր միանգամայն և երկիցս, և չորրորդէր գրով զգուշութեամբ առ թագաւորն իւր Խոսրով և ասէր. (144 / 11) Եւ այսպէս բաժանեալ զինչսն ըստ անուանց տոհմից նոցա, և գրով նշանակեալ կնքեաց: (159 / 5) և ի նմա գրեալ ասորերէն և հայերէն գրով: (206 / 7) Բայց պարտ է ձեզ զայդ խորհուրդ մտածութեան գրով ծանուցանել առ համօրէն աշխարհն Աղուանից (261/14) Վասն այսորիկ Դաւիթ՝ եպիսկոպոս Մեծ Կողմանց, խնդրեաց գրով ի Յոհաննէս վարդապետէ Հայոց զպատճառ իրացն: (267 / 4) և նա գրով ուսոյց զայս (272 / 5) բերին իւրաքանչիւր ոք անուամբ և գրով և եղին ի նմին եկեղեցւոյ (282 / 15) Թէպէտ և նա բռնակալութեամբ կացեալ էր յաթոռն, սակայն նոյն եպիսկոպոսունքն և բովանդակ ուխտ եկեղեցւոյ վերստին նզովեցին գրով և կնքով (303/10) զոր խնդրեցաք ի ժողովոյն Պարտաւայ գրով ծանուցանել մեզ զճշմարտութիւնն (304 / 8) և գտեալ զոսկերս երանելեացն տարաւ յիւրն եկեղեցի և կարգեաց յիշատակս գրով: (332 / 15) Եւ մի ևս ինչ ունել դեսպակին, բայց միայն զսուրբսն և զաւետարանն հանդերձ այլ ևս Աստուածաշունչ գրովք: (62 /7) եւ անդէն ի տղայական տիոցն վարժէր զինքն Աստուածաշունչ գրոց կրթութեամբ (36 /15) և ուսուցանէր Աստուածաշունչ գրոց վկայութեամբ (46 / 15) և ունկն դնել Աստուածաշունչ գրոց: (61 / 15) Եւ որք ասացին անզգայ լինել զհոգին ելեալ ի մարմնոյն, յանդիմանեմ զնոսա Աստուածաշունչ գրոց վկայութեամբ (87 / 7) և զկարգս հոգևորս ուսցին ի նմանէն ըստ Գրոց. (90 / 8) զոր ընկալան հարքն մեր ի Սրբոց գրոց՝ Հին և Նոր Կտակարանաց (123 / 10) Եւ ինքն լի էր հզօր գիտութեամբ և տեղեակ Աստուածաշունչ գրոց: (203 / 14) «Ըստ Գրոց իմանալի է այս. (203 / 15) սկսաւ ճառել նոցա ի վարդապետութենէ Գրոց աստուածայնոց (242 / 12) Սկսաւ եպիսկոպոսն յաստուածային գրոց ձեռն ի գործ արկանել վարդապետական բանին (257 / 18) մեք ոչ պագանեմք երկիր պատկերաց, զի ոչ ունիմք հրաման ի Գրոց: (269 / 10) զոր վարդապետութեան միտս եկեղեցի Քրիստոսի չէ առեալ յառաքելոցն, և ոչ զբանս գրոց ի նոյնս բռնաձգեալ (277 / 19) Ստեփաննոս Սիւնեցի տիոմք դեռ ևս մանուկ գոլով՝

կիրթ և յարավարժ ի խոկումն գրոց եղեալ (321 / 1) Եւ ընթերցեալ զայն՝ առաքէ կայսրն զՍտեփաննոս ի Հռոմ քաղաք բերել անտի երիս գիրս համաբարբառ այնմ գրոց սակս ճշմարիտ հաւատոյ (321/11) որով օրհնութեան իւղն խնկարկեն արտաքոյ ամենայն գրոց: (328 / 8) և ներբողումն գրոցն առնելով՝ դնէր ի վերայ աչաց իւրոց խանդաղատելով: (107 / 11) ՊԱՏՄՈՒԹԻՒՆ Ի ԴԷՊ ԳՐՈՑՄ (106 / 4)

ԳԻՐ ԱՐԱՐԵԱԼ - Տե՛ս ԳԻՐ

ԳԻՐԿ - 4

Անձնաչափ կենարարին Քրիստոսի լայնութիւն տապանափորած վիմին գիրկ և կէս հեռի են ի միջի գմբեթէն սրբոյ փրկչին մերոյ կենարար գերեզմանէն. (283 /4) և արտաքոյ բեժին ամենայն ժողով եպիսկոպոսացն դասք դասք իւրաքանչիւր աշակերտօք շուրջ կացեալ զբեժովն, սարկաւագապետացն խաչ ի ձեռս, և երիցանցն՝ աւետարանս ի գիրկս (80 / 3) Եւ երիցունքն հանելով զնշխարս՝ հաւաքէին ի վեր սպատն, զոր թագաւորն ունէր ի գիրկս իւր: (81 / 15) և զգուէին ի գիրկս որպէս մանուկ ընդոծնի իւրեանց: (168 / 1)

ԳԻՐՔ ՍՈՒՐԲ - Տե՛ս ԳԻՐ, ԳԻՐՔ

ԳԻՒ - 1

դ. Պտուղ ի ժողովրդենէ երիցու՝ կարգ այս լիցի. թուանիկն Դ գրիւ ցորեան և Ջ գիւ գարի և ԺՋ փաս քաղցու (90 / 15)

ԳԻՒՂ - 26

Եւ բարձեալ աշակերտաց նորին՝ բերին յԱմարաս գիւղ (65 / 3) Եւ հասեալ ի գիւղ մի՝ Արաժանս անուն (70 / 18) Եւ հասեալ ի Քարուէճ՝ փոքրագոյն գիւղ մի. (72 / 4) և յոր գիւղ կամէին մտանել սուրբքն, ընդ առաջ ելանէին ծերք և տղայք, արք և կանայք (85 / 8) Եւ եկեալ էանց ընդ Երասխ գետ և շինեալ գիւղ մի Ակորզ անուն (111 / 7) Զորոյ զգալն լուեալ ընդ առաջ նմա ինքն ելանէր ի Քունզր գիւղ (184 / 3) ցանկութիւն յոյժ՝ սուրբ երէցն ունէր խնդրել զփափագելի խաչն՝ զծածկեալն սրբոյն Մաշտոցի ի Գիս անուանեալ գիւղ (214 / 15) Յայսմ ամի անչափութիւն անձրևաց եղեալ յանկարծազեղ ի Մեծիրանց գաւառի և հասեալ գնացք հեղեղին ի Դաստակերտ գիւղ (333 / 2) Ի նոյն խորհուրդ գնացեալ Ներսեհի՝ անցանէր ընդ Հացիւն գիւղ մտանել յԱսորիս. (339 / 10) Սա եգիտ զսուրբ խաչն՝ ծածկեալն ի Մեսրոպայ ի Գիս գիւղ (344 / 6) Զի մինչ ընդ երկինս ցոլացեալ էր մերձ առ տեղեաւն ի տաճարին տեառն ոչ միայն բնակչաց քաղաքին, այլ շրջակայ համասփիւռ և համատարած ամենայն գիւղից և քաղաքաց (217 / 1) Զորս առեալ Ասորեաց ոմանց աբեղայից տանէին ի Հակու անուանեալ գիւղն. (40 / 10) Իսկ զյոլովս ի մանկանցն յիւր սեփական գիւղն Ռուտակ անուն ժողովէր (51 / 3) Եւ ի գալն իւրում ի գիւղն կատարել զյիշատակս սրբոցն (51 / 6) և յոյժ փութով ժողովեցան ի սեպհական գիւղն արքունի՝ անուանեալն Դիւտական: (66 / 11) Գտանէր և զամենասուրբ նշխարս Գրիգորի և յոյժ հռչակելոյն Հռիփսիմեայ և Գայիանեայ ի Դարահոջ գիւղն (67 / 1) Եւ յորժամ ի գիւղն մտանէր սուրբ և աստուածասէր ժողովն, գետ փոքրագոյն անցանէր ընդ մէջ շինին և կամուրջ կազմեալ արքունի պողոտային:

(74 / 8) Այս ձևով զային հասանէին ի սեպհական *գիւղն* Դիւտական (85 / 12) որոց արկեալ վիճակ Բաբկայ՝ հասանէ Գորայ աւանն Խոտայ, և կրտսերոյն՝ Գազանայ *գիւղն* ցանկալի Շաղատ վիճակեցաւ: (111 / 19) Եւ անտի չուեալ բանակեցան առ հեղեղատովն Տրտուայ՝ մօտ ի *գիւղն* Դիւտական: (133 / 3) Սա Ատրներսեհ շինէ զբերդն Հանդու, և զապարանս իւր եղեալ ի *գիւղն,* որ կոչի Վայունիք (340 / 12) Եւ զկէսս ի նոցանէ յիւրաքանչիւր *գիւղս* տանել առ դուրս ընտանեաց ետ խողխողել զնոսա (54 / 15) Եւ բազումք ի *գիւղս,* ասեն, որ անորդիք լեալ են և եկեալ ուխտեալ և հող առեալ ի տեղւոյս՝ որդեծնութեան զաւակի հասին. (77 / 11) Ապա եթէ կամաւ զայդ ոչ առնէք, հրաման ունիմք ի *գիւղս* և յագարակս շինել ատրուշանս (113 / 4) Յայսպիսի նեղութեանց խոյս տուեալ իմն՝ եկի ի գաւառս Արցախայ, ի *գիւղս* Յղերկս (280 / 12) և յոր գիւղ կամէին մտանել սուրբքն, ընդ առաջ ելանէին ծերք և տղայք, արք և կանայք և հեռագոյն ևս *գիւղք* խաչիւք և՛ զանազան ծաղկօք, և՛ բուրմամբ խնկոց անուշից. (85 / 9)

ԳԻՒՂԱՍՏԱՆԵԱՅՔ - 3

Եւ հրամայեցին նմա *գիւղաստանեայս* բնաբար ծառայութեան և գետս ձկանց: (175 / 12) Եւ որ միանգամ առաջին թագաւորացն Աղուանից *գիւղաստանեայք* և սահմանք լեալ էին, զամենայնն ի նա ընձեռեաց ազգաց յազգս (185 /10) և կոխեցին քանդեցին զգեղեցիկ ստացուածս այգեստանեացն և *գիւղաստանեացն,* ընդ որ անցանէին: (133 / 2)

ԳԻՒՂԱՔԱՂԱՔ - 4

Յորժամ չուեալ ի Քարուիճէ՝ կանայք յառաջ ելանէին ի *գիւղաքաղաքէն* Ամարասայ: (73 / 7) անդ արկանէր հիմն եկեղեցւոյն ի *գիւղաքաղաքին* Ամարասայ. (35 / 6) Եւ այսպէս պսակէր սուրբն, զոր բարձեալ աշակերտացն՝ բերէին յԱմարաս *գիւղաքաղաքն* (39 / 2) և ածէր զնա ի *գիւղաքաղաքն* իւր Արուճ: (195 / 16)

ԳԻՒՏ[1] 14

*ԳԻՒՏ*ՆՇԽԱՐԱՅ ԱՐԵՒԵԼԻՑ ԼՈՒՍԱՒՈՐՉԻՆ՝ ՍՐԲՈՅՆ ԵՂԻՇԱՅԻ (11 / 6) ԿԵԱՆՔ ԵՒ ՎԱՐՔ ԿԱՐԳԱՒՈՐՈՒԹԻՒՆՔ ԱՂՈՒԱՆԻՑ ՈՐ Ի ՎԱՉԱԳԱՆԱՅ ԱՐՔԱՅԷՆ ԵԴԱՆ. ԵՒ *ԳԻՒՏ*ՆՇԽԱՐԱՅ ՍՐԲՈՑ (42 / 8) *ԳԻՒՏ*ՆՇԽԱՐԱՅ ԵՐԱՆԵԼԻՈՅՆ ՄԱՆԿԱՆՆ ԳՐԻԳՈՐԻՍԻ՝ ԱՂՈՒԱՆԻՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ (64 / 14)Յոյժ ցանկալի տենչանս ունէր բարեպաշտն Վաչագան՝ արքայն Աղուանից առ ի *գիւտ* նշխարաց սրբոյ մանկանն Գրիգորիսի (64 / 17) Եւ ինքն թագաւորն զնոյն առնէր մինչև ի *գիւտ* սրբոցն: (69 / 15) ոմանք ոչ ճաշակեցին մինչև ի *գիւտ* սրբոց նշխարացն: (69 / 17) Եւ ազդումն լինէր բազմութեան ժողովոյն *գիւտ* նշխարաց սրբոյն. (81 / 5) ՆԱՀԱՏԱԿՈՒԹԵԱՆ ԱՇԱԿԵՐՏԱՑՆ, Ի *ԳԻՒՏ* ՍՐԲՈՅ ԽԱՉԻՆ (201/17) ՅԱՂԱԳՍ ՍՐԲԱԿԱՆ ԱՌՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԻՍՐԱՅԵԼԻ ՔԱՀԱՆԱՅԱՆԱԼՈՅՆ ԵՒ *ԳԻՒՏ* ՍՐԲՈՅՆ ԽԱՉԻՆ (213 / 16) Իսկ եկեղեցին կաթողիկէ, որ Մատուռն անուանի, որ է *գիւտ* խաչի, քան կանգուն հեռագոյն ի Յարութենէն, վաթսուն և հինգ սիւն վեր և ի ներքոյ

երկայնութիւն: (283 / 9) Եւ ապա դիւրաւ լինէր որսորդացն *գիւտ* ձկանց (330 / 2) ի վերայ բարւոյ *գիւտի* ձերոյ եղիցի ուրախութիւն հրեշտակաց յերկինս և մեզ՝ յերկրի (126 / 1) Վասն այսորիկ զմի ոմն ի սրբասնելոցն քահանայից նախամեծար պատուաւորաց հետևող իւրումն միայն զնա առաքէր *գիւտին* այնմիկ (215 /4) Վասն լինելոյ *գիւտիս* այսորիկ յիմում վիճակիս՝ մեծաւ ցանկութեամբ զմի ի տապանակացս յիմ սեպհական եկեղեցին առեալ տարայ (210 / 10)

ԳԻՏ[2] - 3

Վկայդ Քրիստոսի, չարչարակից խաչին, ի հրեշտակաց փառամատոյց պատմուճանաւ զարդարեալ, անգարշ որդեակ իմ Վաչէ՝ Աղուանից արքայ, *Գիւտ* եպիսկոպոս ի տէր բերկրիլ: (27 / 2) ԹՈՒՂԹ *ԳԻՏՅԱՅ* ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ԱՌ ՍՈՒՐԲՆ ՎԱՉԷ (17 / 19) Ի Յովհաննիսէ՝ Հայոց կաթողիկոսէ, յԱբրահամէ՝ Տարօնոյ եպիսկոպոսէ … ի *Գիւտայ* Վանանդայ եպիսկոպոսէ … և յայլ ամենայն եպիսկոպոսաց Հայաստանեայց օրհնութեամբ ողջոյն: (122 / 13)

ԳԼԵԱԼ - 1

Եւ անտի վէմս *գլեալ* ընդ զառիվայրն՝ սատակէին առհասարակ: (109 / 5)

ԳԼԽԱԳԵՐՁ - 1

Ազդ առնէ այնուհետև ամենեցուն, որ ընդ ձեռամբ իւրով էին, տոհմից տոհմից և ազգաց ազգաց, լեռնականաց և դաշտականաց … *գլխագերձաց* և գիսաւորաց. (135 / 2)

ԳԼԽԱԿԱՐԳՈՒԹԻՒՆ - 1

յայնժամ սկսաւ նա երգել ըստ ալփափետաց *գլխակարգութեանց* զողբս զայս ի վերայ բարեացապարտն Ջուանշիրի (225 / 4)

ԳԼԽԱՏԵԱԼ - 1

Եւ վաղվաղակի սրով *գլխատեալք* ընդունէին զերանութեան զպսակն (40/7)

ԳԼԽԱՏԵՄ - 1

որ *գլխատեցանն* և բերան ի Հակու (57 / 1)

ԳԼԽԱՏՈՒՄՆ - 1

Արար *գլխատումն* արանց վաթսնից (172 / 7)

ԳԼԽԱՒՈՐ - 20

պատգամաւ յանդիմանէր զնա՝ վասն զուր աւերելոյն զաշխարհին Հայոց: (16 / 10) Եւ իբրև գիտացին, եթէ ոչ բռնութիւն և ոչ սէր կարեն ածել նա ի հաւանս, գանձ սաստիկ ետուն տանել յաշխարհին խայլանդրաց: (16 / 14) Եւ բացին զդրունս Ալանաց և հանին գունդ բազում ի Հոնաց և կռուեցան զմի ամ ընդ Աղուանից արքային: (16 / 16) Եւ թէպէտ պակասեցան և ցրուեցան զօրք նորա, սակայն զնա ոչ կարացին ածել ի հաւանս, այլ և հարուածք մեծամեծք հասին ի վերայ նոցա՝ էր որ կռուով և էր որ չարաչար ախտիւք ծիւրեցան: (17 /1; 17 /2) Եւ յերկարել պաշարմանն՝ Մեծ Կողմն աշխարհին աւերեցաւ, այլ ոչ ոք ի նմանէն բաժանեցաւ: (17 / 4) Ապա յղեաց առ Վաչէ թագաւորն Պերոզ. «Զքոյդ իմ, ասէ, և զքեռորդիդ ի բաց տուր ածել, զի ի բնէ մոգ էին, և դու քրիստոնեայ արարեր. և աշխարհդ քո քեզ լիցի»: (17 /5; 17 /6) Իսկ երանելի այրն ոչ ի վերայ տէրութեանն կռուէր, այլ յաստուածապաշտութեանն մրցէր: (17 /7) Եւ ետ տանել զմայրն և զկինն, և զաշխարհն բովանդակ ի բաց եթող, և ինքն զաւետարանն առ և ի բաց կամէր գնալ: (17 /8; 17 /9) Զայն լուեալ թագաւորին Պարսից Պերոզի՝ ի զիղջ եկեալ, զամենայն վնասն ի հայրն իւր արկանէր. անսուտ երդմունս կնքէր և տայր տանել առ նա՝ եթէ յաշխարհէդ միայն մի՛ գնար, և զոր ինչ ասես, առնեմ: (17 /9; 17 /10) Իսկ սա հաճեցաւ միայն զսեպհականն առնուլ բաժին իւր, զոր ի հօրէն էր առեալ հազար երդ: (17 /14) Առ զայն ի թագաւորէն և նստաւ ի նմա միայնակեցօք հանդերձ. և այնպէս անզբաղապէս կեայր ըստ Աստուծոյ: (17 /15; 17 /15) Ի ճառս սուրբ սիրոյ քոյ առաքինութեան ի կամս կամաց անձին իմոյ բղխեցան միտք իմ երկնաւոր զօրութեամբն՝ յօժարեցայ պատմող լինել բանիւ: (17 /20; 17 /20) Եւ յամենայն կողմանց շուրջ պաշարեաց զինն ի վեր և ի վայր, ի վերջ և յառաջ, յաջ և յահեակ. փախչել ոչ կարեմ և խորամուխ լինել երկնչիմ: (18 /2; 18 /2; 18 /2) Մի եթէ գուցէ ընկղմիցիմ որպէս Պետրոս առաքեալ ի ծով անդնդային, բայց եթէ տէր Յիսուս ձեռն կարկառուցու յօգնականութիւն: (18 / 4) Քանզի բան ունիմ մտաց գործի, եթէ գտից ինչ հիւթ յաննիւթ հոգեկիր յառաքինութենէ արանց քաջաց, որք զհրեշտակս ածին ի զարմացումն և անգիր օրինօք անձամբ անձանց օրէնք եղեն, և առանց օրինաց զտէրն ի վեր ծանեան և զեղեալսն գիտացին ընդ օրինօք, և առանց առաջնորդի և մարգարէի ուրուք և կամ երկնաւոր հրեշտակի աստուածատեսք եղեն: (18 /7; 18 /8) Արդ՝ ահա յորմէ երկուցեալն էի, ի ձեռն սիրոյ մօտիմ, և յուսով մերձենամ, և հաւատովք աներկիւղ հաստատիմ, և սկսանիմ, ուստի արժանն է սկսանել: (18 / 11) Որպէս յառաջագոյն սէրն Քրիստոսի բնակեաց ի նախնւոյն ձերում Ուռնայրի, նախանձ երկնաւոր եբեր ընդ Տրդատայ Հայոց արքային. իբրև լուաւ զմեծամեծ սքանչելիսն Աստուծոյ, որ ի ձեռն սրբոյն Գրիգորի նշանք և արուեստք գործեցան յաշխարհին Հայոց, վաղվաղակի դառնալ սոցա ի բազում շաւղաց մոլար ճանապարհին առ մի ճշմարիտ Աստուած: (18/13; 18 /14; 18/16) Աստուածածանօթութեամբ և բարեկամութեամբ ի բաց ընկեցին զծանրատաղտուկ զլուծն հեթանոսաց, թօթափեցան, թեթևացան, թևակոխեցին, թռեան և յերկինս ճախրեցին: (18 / 18) Զայս լուեալ քաջին Ուռնայրի՝ ոչ դլաց, և ոչ դադարեաց, և ոչ ի ձեռն ծառայական հրեշտակի, այլ ինքնին մեծ թագաւորն մեծամեծօք նախարարօք և բազմագունդ զօրօք գայր հասանէր յաշխարհին Հայոց յանդիման լինէր հսկայազօր թագաւորին Տրդատայ: (19 / 3) Քաջալերէր զնա

սուրբն Գրիգորիոս ի գալուստ մարմնաւորութեան որդւոյն Աստուծոյ, որ ի թողութիւն եկն և ոչ ի դատապարտութիւն, ի կեցուցանել և ոչ ի մեռուցանել. և յառաջ անցելոցն ի հողոյ կեանս խոստացաւ: (19 / 11; 19 /12; 19 /12; 19 /12; 19 /12; 19 /13) Զայս ամենայն իբրև լսէր թագաւորն ծեր, ինքն և ամենայն զօրքն, որ ընդ նմա, զաւուրս քառասունս պահուց աւանդէին զանձինս իւրեանց՝ ի բաց հրաժարելով յառաջին ըստ գտանելի գործոցն: (19 / 14) Եւ յաւուրն յիսներորդի իբրև ուրացանն ի սատանայէ և յամենայն գործոց նորա և խոստովանեցան երկրպագել զսուրբ երրորդութիւնն, էջ թագաւորն յամենասուրբ ջուրն և ամենայն զօրքն ընդ նմա: (19 / 16) Եւ կատարեաց զնոսա քահանայապետն ի վերստին ծնունդն՝ ի յերկնաւոր որդեգրութիւնն, ելին ամենեքեան՝ լցեալ հոգւովն սրբով: (20 /1; 20 /1) ի նմին ժամանակի շնորհեցաւ նոցա այր մի երանելի՝ ձեռնադրեալ յեպիսկոպոսութիւն ի Հռոմ քաղաքէ: (20 /2; 20 /2)Ընկալան ամենեքեան զդրոշմն երկնաւոր և գրեցան ի դպրութեան կենացն: (20 / 6) Նաև զհող երկրին ևս ի նոյն վիճակեցոյց և հաստատեալ կալաւ կարգ ուղղութեան առ նախնեօքն ձերովք, և հարբն քով երանելեաւ և մեծամեծ հաւովքն և հանուովքն մինչև ի ժամանակս քոյոյ սքանչելի տէրութեանդ: (20 /10; 20 /13) Վիշապն, որ հինն էր յաւուրցն առաջին մարդոյն, ետես զչքնաղ ծնունդ քոյոյ բնութեանդ առաջինն ի հայրենի հաւատոյն, երկրորդ որ ի գոռոզ վիճակէն: (20 /15; 20 /15) Յոյժ կասկած ի միտ անկաւ չարասէր թշնամւոյն, եթէ գուցէ ընդ որս եղև մուտ կենաց յաշխարհս Աղուանից՝ ընդ այն ծնունդ և մուտ ճշմարտութեանն յաշխարհն արևելից: (20 / 16) Ամենեքեան զահի հարան և դողացին՝ ի միաբանութիւն եկեալ, ելս իրացն խնդրեցին. «Մի այդպէս, ասեն, տագնապէր յանձն քո, ո՛վ քաջդ. կանուխ է մոլորութիւնս մեր, քան զճշմարտութիւնն նորա. տկար գաւազանաւն առաջին մարդոյն յաղթեցեր, մեծ թագաւորաւս տղայոցն չկարե՞ս կալ առաջի»: (21 / 3) Զայս ասացին և զհամատարած ծովն շարժեցին ի վերայ քո: (21 / 7) Իջին ի նա օդք մրրկածինք, շարժեցին և յուզեցին ի վերայ նորա զբազմութիւն ալեաց: (21 /7; 21 /8) Եկն եհաս ի վերայ քո միանգամայն բազմութիւն ազգաց հեթանոսաց՝ ահաւոր գազանօք, խառնադրոշմն նշանօք, բազմաձայն փողօք, գալարափող գոչմամբ անտառախիտ նիզակօք, ճառագայթաւոր սուսերօք, ոսկեկմբեայ վահանօք, թանձր և ստուար մկնդօք: (21 / 9) Վառեցան, բորբոքեցան և այրեցան իբրև փուշք ի մէջ հրոյ: (22 / 2) Նմանեցար երից մանկանցն ի հուր հնոցին, զզօրութիւն հրոյն շիջուցեր, զխոշորութիւն կայծականցն ի կակղութիւն վարդի փոխեցեր, զմղձկութիւն ծխոյն ի սպիտակութիւն շուշանի շրջեցեր, զայրեցող բնութիւն հրոյն յարարող զօրութիւն սովորեցուցեր, զերրորդութիւնն Աստուծոյ յերկնից յերկիր ածեր քեզ յօգնականութիւն: (22 /2; 22 /3; 22 /5) Զայնն նորա, որ զերկիր շարժէ, զվէմս դղորդէ, զգերեզմանս աւերէ, զմեռեալս յարուցանէ, զինացեալս նորոգէ, զդատաստանս հատուցանէ՝ ոմանց ի ձախակողմն և ոմանց ի յաջակողմն: (22 /14; 22 /15) Որ պարծէր ի չարն, տագնապեցաւ. որ խիզախէր ի մոլորութիւնն, յիմարեցաւ: (23 /1; 23 /1) Ամենայն ինչ քո զնդին կրկին է. եթէ զրահք էին պահապանք մարմնոյ, ընդ նմին և զրահքն հաւատոյ. եթէ սաղաւարտ էր ի զգուշութիւն սուսերի, ընդ նմին էր և սաղաւարտ փրկութեան. եթէ վահան ունէիր ընդդիմահար լանջացդ առաքինաց, ընդ նմին ունէիր և զվահանն համբերութեան հաւատոց. եթէ նետ ի կորովից քոց թռչէր ուղղակի, ընդ նմին

և աղօթք սուրբք խնդրուածաց քոց վաղվաղակի *գեր ի վերոյ* գտանէին, քան զերկինս առաջի Աստուծոյ: (23 /4; 23 /6; 23 /7) եթէ շողայր սուսեր *ի* բազուկսդ առաքինիսդ, ընդ նմին լուսաւորութիւն հաւատոց քոց *ի մէջ* հրեշտակաց փայլատակմունս արձակէր: (23 /8; 23 /8) Այս է, որ զահի հարեալ էի *ի* սկզբան պատմութեանս, եթէ զիարդ կարացից բանիւ պատմել զայնմանէ, որ *ի վեր* քան զբանն գտանի: (23 /11; 23/12) Եւ այս վիճակ ոչ ամենեցուն է, այլ որ քաջն դեզերեցան յուսումնասիրութեանն *ի* թուականին, յերկրաչափականին, յաստեղաբաշխականին, *ի* բժշկականին և ապա *ի* ծայրս ծագաց հասին *ի* մարգարէականն, յառաքելականն, յաւետարանականն, որ է սկիզբն և ընձիւղումն: (23 /13; 23 /14; 23 /14; 23 /15) Դու աւուր աւուր արուսեակ և *ի վեր* քան զարուսեակ: (24 / 3) Արուսեակն յայգուն պահու և եթ երևի, իսկ դու *ի* քսան և *ի* չորս ժամս՝ *ի* տուընջեան և գիշերի: (24 /4; 24 /5; 24 /5) Եւ եթէ զլուսին ածից քեզ յօրինակ, յոյժ ծիծաղելի է իմաստնոց. երկոտասան անգամ *ի* տարւոջն վիժած, ժանգահոծ, մանգաղաձև, կիսագունդ, խոնաւալից, կիսալոյս, հիւանդոտ, գիշերագնաց, խաւարասէր, լուսատեաց, չղջանման, պակասընթաց, խաւարատանջ, բազում անգամ *ի* թաքուստ մտեալ: (24 /6; 24 /8) Ոչ ինչ բաւական քեզ բաւեմ ասել, որ քան զարեգակն *ի վեր* գտանիս. ոչ զնա թշնամանեցից և զքեզ գովեցից, այլ զբնութիւն նորա պատմեցից քեզ. շեղագնաց, թիւրընթաց, կողմնաւոր ստուերաշուք, հարաւաբնակ, ձմեռնատանջ, ամառնակէզ, թօնուտ գարնանի և երաշտուտ աշնանի, գիշերակուլ, առաւօտածին, ծաղկաթարշամ, դալարացամաք, կենդանահալած *ի* ստուերս *ի* միջօրէի, կիսաբաժին յաւուրն ողջունի. յիրաւի սմա Յոյնք Ապողովն կարդացին: (24/11; 24/14; 24/15) Դու արեգական նմանեցեր, *ի* հօրէ զօրացար, *ի* յորդւոյ քաջալերեցար, *ի* սուրբ հոգւոյն լուսաւորեցար, *ի* գիշերի տեսանիս և *ի* տուընջեան թափ անցանեն ճառագայթք հաւատոց քոց: (25/1; 25/2; 25/2; 25/2; 25/2) Ասացից առ քեզ և բան ինչ առակաւոր. յամենայն կողմանց աչացար սրատես ես քան զարծուի և երագալուր քան զմի *ի* հանդարտ անասնոց. ոչ միայն զերկինս տեսեր, այլև զերկնից մեծն տեսեր, և զփոքրս թողեր, զանցաւորս ետուր և զանանցն առեր, *ի բաց* ընկեցեր զոսկիակուռ թագ թագաւորին և ահա կայ պահի քեզ անձեռագործ պսակն, զոր ընդունելոց ես յամենասուրբ ձեռացն Քրիստոսի: (25 /5; 25 /6) Ապա եթէ արասցէ ոք, որպէս և արարերդ, մարդկան անհաւատալի, հրեշտակաց զարմանալի, Աստուծոյ նմանելի, որ եթող զանթիւ բիւր բազում զօրս հրեշտակաց և եկն *ի* գձուձ կերպարանս մարդկան, գտաւ մարդ: (25 / 13) Քոյին իսկ աշխարհիդ հայրենի հաւատքն պահեցան, եկեղեցիք շէն մնացին, վկայարանք *ի* խաղաղութեան, քահանայք *ի* քահանայութեան, պատարագք *ի* սեղանս, մարգարէք յընթերցուածս, առաքեալք *ի* մխիթարութիւնս, սաղմոսերգուք *ի* յօրհնութիւնս, կուսանք *ի* կուսութեան, կնքաւորք *ի* սրբութեան և ամենայն ոք յիւրաքանչիւր կարգի: (25 /16; 25 /17; 26 /1; 26 /1; 26 /2; 26 /2; 26 /2) Եհաս լուր առաքինութեան քոյ յարևելից մինչև ցԳաղիրովն, *ի* հարաւոյ մինչև *ի* հիւսիսի: (26 /4; 26 /4) Գրեցաւ անուն մարտիրոսութեան քոյ յոսկի տախտակսն ընդ առաքեալսն և ընդ նախավկայսն, ընդ հայրապետսն և ընդ եպիսկոպոսապետսն, միանգամայն և *ի* դպրութեան կենացն *ի* յերկինս: (26/6; 26/7) Զզոյշ լեր, սքանչելի, որ այսչափ մեծամեծացն արժանի եղեր և յայսչափ բարձրութիւնս վերացար հասեր՝ *ի* հաստատուն կալ զյուսոյն խարիսխ, և

անհատ լեր *ի* սիրոյն և համբերող լեր *ի* հաւատս ճշմարտութեան, զի մի՛ վիշապն մեռեալ զտուտնն շարժեսցէ *ի վերայ* կենաց քոց: (26 /9; 26 /9; 26 /10; 26 /11) Զի թէ մինչ տղայն էիր, յաղթեցեր նմա, *ի չափ հասեալ*, գիտեմ, թէ առ ոտն կոխես զամենայն մենքենայս չարեաց նորա: (26 / 12) Բազում անգամ յառաջ ելեալ վասն քո սիրոյն՝ գալ առ քեզ և այժմ *ի* մերմէ բարեխօսութենէ և յամենայն սուրբ ուխտէ եկեղեցւոյ յանձն արարեալ հոգւոյն սրբոյ. տէր ընդ քեզ ամէն: (26 /15) Վկայդ Քրիստոսի, չարչարակից խաչին, *ի* հրեշտակաց փառամատոյց պատմուճանաւ զարդարեալ, անգարշ որդեակ իմ Վաչէ՝ Աղուանից արքայ, Գիւտ եպիսկոպոս *ի* տէր բերկրիլ: (27 /1; 27 /2) Յամօթալից հեղգութենէ չկարեմ համարձակել ասել բանս մխիթարութեան յաղթողիդ աներևոյթ պատերազմիդ, որ ոչ *ի* մարդկանէ առեր քաջալերութիւն, այլ զոյժ ահեղ զօրութիւնն Քրիստոսի քեզ յօգնականութիւն կոչելով՝ վերագոյն գերազանցեալ, քան զբոլոր աշխարհս բարձրագոյն գտար: (27 /5) Բայց արդ՝ զքեզ *ի հաւան ածեալ* քոյով ժուժկալութեամբդ, աղաչեմ, զի ախորժ և անոյշ իմ ողջոյնս քեզ թուեսցի. այլ գոհանալով զքո վերաբերութենէդ, ով զօրականդ Քրիստոսի, ոչ ունիմ գիտութիւն աղքատութեան իմոյ կազմութեան պատրաստութեան. զի և ոչ նիւթ ինչ ճարտարեալ իմաստութեամբ իմով համբարել կարացից՝ կկել զգեստ ինչ գովութեան քում ազնուականութեանդ: (27 / 8) Նա մանաւանդ եթէ իսկ ամենայն հռետորական փիլիսոփայքն աշխարհին Յունաց *ի* մի տեղի գումարեսցին, և ոչ կարասցեն ասել զարժանն զգովութիւն քում հոգելից յաղթութեանդ: (27 /15) Հրաժարեցար *ի* զոհիցն ճենճերաց դիւամոլ հեթանոսաց և ահա եղեր հոտ անոյշ *ի* Քրիստոս, որ հասեալ մինչև յարևմուտս՝ հռչակեալ ծաւալեցաւ և բերկրեալ զուարճացոյց զամենեցուն հոգիս: (27 /19; 27 /20) Թողեր զմեծութիւն երկրային, որ առիթ է մեղաց, ժառանգեցեր զարդարութիւն հանդերձ երկնային մեծութեամբն. հեռացար բնաւ իսկ *ի* զբօսանաց աշխարհիս և մերձեցար *ի* Քրիստոս, որ է նաւահանգիստ խաղաղութեան: (28 /3; 28 /3) Եւ գումարեալ զբանս իմ *ի* մի տեղի խօսեցայց. եթէ էիր մարդ, և եղեր հրեշտակ: (28 /4) Ունէիր ազգականս *ի* յերկրի, և գտար եղբայր Քրիստոսի *ի* յերկինս. էիր մահկանացու, և եղեր անմահ: (28 /5; 28 /6) Բայց արդ աղաչեմ, փոխանակ ասեմ՝ չունել վնաս *ի* մտի, չհիշել զիմ հեղգութիւնս: (28 / 12) Դու եղեր չարչարակից Քրիստոսի, նմանեա նմա ամենայնիւ. զի թէ նա *ի վերայ* խաչահանուացն աղաչէր չյիշել զմեղս, որչափ ևս առաւել քեզ արժան է թողուլ զիմ հեղգութիւնս: (28 / 14) Զի այն, որ արարն զհեզ ողջ հոգւով և առողջ մարմնով և իւրում որդեգրութեանն արժանաւոր, նոյն և շնորհեսցէ մեզ՝ զքեզ առողջ հոգւով և մարմնով տեսանել յաշխարհի և վայելել *ի* քո շնորհալից վարսդ առաքինութեան: (28 / 17) Ողջ լինելով *ի* Քրիստոս՝ լիցիս մեզ բազում ժամանակս պարապեալ և լցեալ սիրովն Քրիստոսի. ամէն: (28 / 18) ՊԱՏԵՐԱԶՄԵԼՆ ՏՐԴԱՏԱՅ ԸՆԴ ԲԱՍԼԱՅ ԱՐՔԱՅԻՆ *Ի*ՅԱՇԽԱՐՀԻՍ ԱՂՈՒԱՆԻՑ (29 /2; 29 /3) Լինի զօրաժողով Տրդատիոս՝ մեծ թագաւորն Հայոց և իջեալ *ի* դաշտն Գարգարացւոց՝ պատահէ հիւսիսականացն սաստիկ պատերազմաւ. և զթագաւորն Բասլաց մարտակից իւր ունելով, որ ձգեալ զճոպան արւոյն Տրդատայ և ոչ զօրեալ ընկճել զնա՝ ինքն լինի միջակտուր *ի* նմանէն: (29 / 5; 29 / 8) Եւ վարէ Տրդատիոս զնոսա կոտորմամբ մինչև ցՀոնս. և բազմաց լինի անկանել *ի* զօրացն Հայոց. և Արտաւազդ՝ սպարապետն Հայոց Մանդակունին մահանայ: (29 / 9) Անդ

առնու պատանդս Տրդատիոս և միաբանեալ զհիւսիսայինսն՝ դիմէ *ի վերայ* Շապհոյ արքային Պարսից: (29 /10) Իսկ *ի* վախճանելն Տրդատայ Սանատրուկ ոմն թագաւորեաց Աղուանից *ի* Փայտակարան քաղաքի և եկաց ընդդիմակաց Հայոց: (29 /12; 29 /12) Այսոքիւք ամենեքումբք միաբանեալ՝ խաղայ *ի վերայ* Աղուանից: (29 / 18) Աճապարէ Սանատրուկ զօրօքն Աղուանից և գնայ առ Շապուհ՝ արքայն Պարսից, թողլով զօր բազում *ի* քաղաքին Փայտակարան: (29 / 19) Եւ գտեալ ժամ պարապոյ Սանատրկոյ՝ հրամանաւ Շապհոյ ժողովէ զզօրս Աղուանից՝ թուով իբրև երեսուն հազար և արշաւէ *ի* միջոցս Հայոց: (30 / 2) Եւ զօրագլուխն ոմն անարի հսկայ *ի* տիգաւորացն վառեալ թաղեաւ կաճեայ՝ շահատակէր *ի մէջ* պատերազմին առ Օշական առապարաւն. եթէ զինուք հարկանէին, ոչ գործէր, այլ ճախր առնոյր: (30 /3; 30 /3) Յայնժամ քաջն Վահան Ամատունի նայեցեալ *ի* կաթողիկէն ասէ. «Օգնեա ինձ». և ուղղեալ զնիզակն ընդ գաւակ ձիոյն յերկիր կործանէր զահագին վիրագն: (30 / 5) ՇԱՊՀՈՅ ԹԱԳԱՒՈՐԵՑՈՒՑԱՆԵԼՆ ՋՏԻՐԱՆ ԵՒ ՓՐԿԵԼՆ *Ի* ՀԻՒՍԻՍԱԿԱՆԱՅՆ ԵՒ ԴԱՐՁԵԱԼ ԿՈՒՐԱՅՈՒՑԱՆԵԼՆ ՋՏԻՐԱՆ. ԵՒ ԽՌՎՈՒԹԻՒՆ ՀԻՒՍԻՍԱՅՆՈՅՆ. ԵՒ ՄԱՀՆ ԱՐՇԱԿԱՅ ԵՒ ՊԱՊԱՅ ԹԱԳԱՒՈՐԵԼՆ. ԵՒ ԿՈՐՈՒՍՏՆ ՄԵՀՐՈՒԺԱՆԱՅ. ԵՒ ԽՈՑ ԱՌՆՈՒԼՆ ՈՒՌՆԱՅՐԻ ՅԱՅՆՄ ՊԱՏԵՐԱԶՄԻ (30 / 8) Թագաւորեալ Տիրանայ Հայոց՝ առնէ խաղաղութիւն ընդ Պարսս և լեալ օգնական Շապհոյ, թափէ զնա *ի* յարձակմանէ հիւսիսայնոցն, որք ամս չորս բնակեալ յԱղուանս նեղէին զՀայս: (30 / 13) Ապա ըստ բարուց չարին Տիրանայ կուրանայ *ի* Շապհոյ: (30 / 14) *Ի* նմին ժամանակի եղև խռովութիւն Շապհոյ յազգացն հիւսիսոյ. և նա անցեալ *ի* Բիւթանիա՝ նստի ամիսս յոլովս և ոչ կարաց առնել ինչ: (30 / 15; 30 / 16) Ապա սիւն առ ծովակին կանգնեալ և առիւծ *ի վերայ* մատակ ընդ ոտիւքն ունելով՝ նշան իմն կոչել առիւծ զՊարսս և մատակ՝ զՀռովմայեցւոց տէրութիւնն: (30 / 17) Մեռանի և Արշակ, թագաւորէ Պապ. ապստամբի Մեհրուժան Արծրունի՝ զԱքիտոփելին խորհեցեալ զկորուստ անձին իւրոյ. լինի մեծ պատերազմ *ի մէջ* Պապայ և Մեհրուժանայ: (31 / 3) Յայնժամ քաջն Շերգիր՝ Ղեկաց արքայ, մեռանի *ի* ձեռաց Սպանդարատայ Կամսարականի: (31 / 4) Անդ առնու խոց մեծ արքայն Աղուանից Ուռնայր *ի* Մուշեղէ Մամիկոնենէ՝ Վասակայ որդւոյ. սատակի և Մեհրուժան *ի* սպարապետէն Սմբատայ Բագրատունւոյ՝ պսակեալ բոցագոյն երկաթիւ զգլուխն սրբոյն Ներսեսի աղօթիւք: (31 /6; 31 /7) ՍԱԿԱՒԻԿ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՎԱՍՆ ՍՐԲՈՅՆ ԳՐԻԳՈՐԻՍԻ՝ ՀԱՅՈՑ ԼՈՒՍԱՒՈՐՉԻ ԵՒ ԵՐԱՆԵԼԻ ՈՐԴՒՈՑ ՆՈՐԻՆ. ԵՒ ԸՆԴ ՆՄԻՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹԻՒՆ ՍՐԲՈՅՆ ԳՐԻԳՈՐԻՍԻ՝ ՈՐԴՒՈՑ ՎՐԹԱՆԵՍԻ՝ ԹՈՌԻՆ ՄԵԾԻՆ ՍՐԲՈՅՆ ԳՐԻԳՈՐԻ, *Ի* ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԻՒՆ ԱՂՈՒԱՆՒՑ ԵՒ ՎՐԱՑ. ԵՒ ԵԿՆ ՆՈՐԱ ՅԱՂՈՒԱՆՆ *Ի* ԼՈՒՍԱՒՈՐՈՒԹԻՒՆ ԱՇԽԱՐՀԻՍ. ԵՒ ՆԱՀԱՏԱԿՈՒԹԻՒՆ ՆՈՐԻՆ ԵՒ ԲԵՐՈՒՄՆ ՆՇԽԱՐԱՑՆ (31 / 12; 31/13) Արդ մի ոմն յաշակերտացն տեառն՝ Թադէոս անուն, որպէս յառաջագոյն ասացաք, հասեալ սմա մասն ինչ *ի* Հայաստան աշխարհին, լուսաւորէր զկողմանս ինչ Արևելից աշխարհին, մինչև եկն հռչակելին պատերազմողն և երիցս երանելին Գրիգորիոս, զոր *ի* մեռանելն Խոսրովայ՝ Հայոց թագաւորի, *ի* սպանանել զնա նենգութեամբ Անակայ Պարթևի՝ հօրն Գրիգորի, և իւր փախուցեալ գնալով՝ հեղձամղձուկ *ի* ջուրս Երասխ գետոյ լինէր. դայեկաց ոմանց առեալ

փախստեայ ի Յունաց աշխարհին զերծուցանէին զերանելին Գրիգորիոս: (31/16; 32/2; 32/2; 32/4; 32/4) Եւ այս լինէր նախախնամութեամբ մեծին Աստուծոյ յօրինակ նախամարգարէին Մովսեսի, որ ի պրտուեայ տապանակին ի մէջ ջուրցն զերծանէր ի ձեռաց ամպարիշտն փարաւոնի՝ առ ի փրկել զժողովուրդն Աստուծոյ ի ծառայութենէ եգիպտական տանջանացն: (32 /6; 32 /6; 32 /7; 32 /7; 32 /7) Սոյնպէս և ամենասուրբն Գրիգոր զերծեալ ի սրոյ Հայաստան նախարարացն՝ ի փրկութիւն պահէր նորին Հայոց աշխարհին և ամենայն Արևելից Կողմանց, իբրև նետ մի ընտիր ի կապարճս թաքուցեալ ի յունական աշխարհին, որով խոցոտեալ սատակէր աներևոյթ թշնամին: (32 /9; 32 /9; 32 /11; 32 /11) Իսկ թագաւորն մոլեգնեալ ի դիւացն զանազան և պղծալից պաշտամունսն՝ ձեռն արկանէր յամենազօր նահատակն Քրիստոսի՝ օժանդակութեամբ չար վիշապին՝ կամեցեալ իւրն ծառայել ի խորխորատ կորստեանն դիցն աղտեղութեան պաշտամանն: (32 /20; 33 /1) Բազում և զանազան տանջանօք չարչարեալ զսուրբն ոչ ինչ կարաց գամազիւտ լինել յանշարժելի հաւատս երանելւոյն, այլ օր քան զօր քաջաբար մրցեալ՝ առնու յաղթութեան մրցանակն ի վերայ աներևոյթ և երևելի թշնամւոյն: (33 / 3) Եւ իբրև ոչինչ կարացեալ պաճարանս գտանել՝ փոխելոյ զառաքինին յուղիղ հաւատոցն Քրիստոսի, յայնժամ ազդեալ չարին ի միտս չար արբանեկացն՝ տարեալ ընկենուին զսուրբն Գրիգորիոս յանհնարին խոր վիրապն Արտաշատ քաղաքի, յորում զերեքտասան ամ յօձախառն բնակէր վայրի, մինչև այլ ևս կանայք ոմանք երանելիք Հռիփսիմէ և Գայանէ հանդերձ երեսուն և հինգ ընկերօքն ի նորին ի Հայոց արքայէն կատարեցան: (33 /5; 33 /8; 33 /10) Եւ ապա ամենազօրն Աստուած յայց ելանէր երանելւոյն Գրիգորիոսի և երանելին նահատակացն՝ սրբոցն Հռիփսիմեանց, և պատուհաս մեծ հասուցանէր ի վերայ աշխարհին Հայաստանի: (33 / 12) Նոքին իսկ դևքն, զորս նուիրօքն և զոհիւք մեծարէին, իբրև ի վերայ թշնամեաց հասեալ՝ տային նոցա մոլեգնել և ուտել զիւրեանց մարմինսն. այլ և զնորին թագաւորին զկերպարանս ի խոզի դարձուցեալ բնութիւն՝ յեղէգն լինել փախստեայ: (33 / 15; 33 / 16) Մինչդեռ յայսմ ահի և ի դողման կային ի մեծամեծաց մինչև ի փոքունս, երևէր ի տեսլեան գիշերոյ հրեշտակ ողորմութեան Աստուծոյ կնոջ ումեմն Խոսրովիդուխտ անուն՝ քեռ Տրդատայ՝ Հայոց արքայի. «Անհնարին է ձեզ, ասէ, ի հարուածոցդ զերծանել, բայց եթէ ի ձեռն սրբոյն Գրիգորի երթեալ հանէք զնա ի խոր վիրապէն»: (33/19; 33/19; 33/20; 33/20; 33/23; 33/23; 33/23)Եւ իբրև կրկնեալ և երեքկնեալ զտեսիլն. յարուցեալ առ վտանգի հարուածոցն, չոգան ի բերան վիրապին թերահաւատքն՝ կաղս ի կաղս բարբառեալ բանիւն Աստուծոյ. «Ել ի դուրս, եթէ իցես կենդանի»: (34 /1; 34 /2; 34 /2) Բազում խնդութեամբք ի վեր առեալ ածին ի Նոր քաղաք թագաւորանիստ Հայոց արքային: (34 /4; 34 /4) Եւ զթագաւորն նոյնպէս յեղեգանէն առեալ դիւացն ածէին ընդ առաջ սրբոյն. որոյ ծունր եդեալ մեծին սրբոյն Գրիգորի՝ արտասուօք խնդրէր յամենողորմէն Աստուծոյ զփրկութիւն թշուառացեալ ազգին. և անդէն վաղվաղակի ընդունէին ի ձեռն սրբոյն աղաչանաց զբժշկութիւն մարմնական տանջանացն, ընդ նմին և զհոգւոյն լուսաւորութիւն: (34 / 9) Եւ իբրև ոչ ուրեք ինչ զեկուցեալ վասն երանելի կանանցն, որ պսակեցանն՝ զՀռիփսիմեայն ասեմ և զնորին ընկերացն, ինքն իսկ ի խոր վիրապին մարգարէական ակամբն տեսանէր զնահատակութիւն

երանելեաց վկայիցն Քրիստոսի և ասէ. «Ու՞ր են նշխարք սրբոցն»: (34 / 12) Եւ իբրև լուան *ի* նմանէն զանուանս պսակելոցն, ապա *ի միտ առեալ* ցուցին զպատուական և զամենասուրբ նշխարս ոսկերացն: (34 /14; 34 /15) Եւ առեալ Գրիգորի՝ պատէր իւրեանց իսկ պատառոտուն հանդերձիւքն չարարեալ ուրուք ինչ արժանի յերանելեացն մերձեցուցանել *ի* մարմինս, մինչ չև սրբեալք ելանէին յաւազանէն փրկութեան: (34 / 18) Եւ դնէր *ի* հանգստարանի՝ *ի* տեղւոջն, յորում պսակեցան սուրբքն: (34 /19; 34 /19) Եւ եկեալ *ի* Հաբանդ գաւառ՝ ուսուցանէր և խրատէր պահել զպատուիրանս Որդւոյն Աստուծոյ. անդ արկանէր հիմն եկեղեցւոյն *ի* գիւղաքաղաքին Ամարասայ. և կացուցանէր գործօնս հրամանատարս՝ շինել եկեղեցի: (35/5; 35/6) Եւ երթեալ *ի* Հայոց քաղաքն՝ օծանէր փոխանակ իւր զորդին՝ զՎրթանէս, նստուցանել յիւր աթոռ քահանայապետութեան, որ լի հայրենատուր շնորհօք և բանիւ վարդապետութեամբ կեցեալ՝ պատուհասէր և խրատէր զայնոսիկ, զորս *ի* դիւապաշտութեանն գտանէր յաղանդին. և յանդիմանէր զկինն թագաւորին վասն այլանդակ պոռնկութեանն: (35 / 8; 35 / 11) Եւ մինչ դեռ մտեալ յեկեղեցի, *ի* Տարօն գաւառի զտէրունեանն կատարէր խորհուրդ՝ չար և դիւապաշտ մարդիկ ժողովեալք բազմութիւն յոյժ առ *ի* սպանանել զերանելին Վրթանէս խորհրդեամբ կնոջ թագաւորին: (35 /12; 35 /14) Եւ յորժամ վազեցին *ի* գաւիթ եկեղեցւոյն, *ի* դիւաց պինդ կապեալ կաշկանդեալք եղեն հրամանաւ բարերարին Աստուծոյ՝ ուլնագելութեամբ ընդ կապճեալք կային անմռունչ ամենեքեան, մինչև կատարեալ երանելւոյն զաստուածեղէն խորհուրդն և եկեալ արտաքս՝ զարմանայր: (35/15; 35/15) Եւ անուն միւսումն Գրիգորիս յանուն հաւուն. և համանման և հաւասար նորուն վարուցն առաքինութեան՝ ոչ ամուսնացեալ *ի* կարգս աշխարհիս, այլ փափագեալ բաղձայր հայրենի հոգևոր ժառանգութեանն: (36 / 12) եւ անդէն *ի* տղայական տիոցն վարժէր զինքն Աստուածաշունչ գրոց կրթութեամբ և զմարմնական զգայութիւնս պահօք և աղօթիւք պարկեշտացուցանէր, զհոգին սիրոյն հաւատօք լուսաւորէր, և անդէն վաղվաղակի զինքեան հաւոյն՝ զմեծին Գրիգորի զգերաշխարհիկն բարձրութեանցն զերկոսեան զպատիւսն առեալ՝ յօրինէր զքահանայապետութեան զպատիւ և զաթոռն և զմարտիրոսութեանն զամենապատիկ բարձրութեանց պսակն: (36 / 13) Շինէր և եկեղեցիս ըստ կարգաց և քաղաքաց. և ձեռնադրէր երիցունս և հորդորէր *ի* պաշտօն սրբութեան. և հիշատակ սրբոց կանխեալ հանապազ. և նախանձեալ զբարի նախանձ առաքելական ուղղութեանն. և կատարէր զհրաման մարմնացեալ աստուածորդւոյն՝ շրջեալ ընդ ամենայն հեթանոս, մկրտեալ յանուն հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ: (37 / 3) Յայսմ բոլորից զգուշանալով՝ երանելւոյն առեալ ընդ իւր վայելուչ և յոյժ պատուականագոյն թոշակ, զմեծ քահանայապետին և մարտիրոսին Զաքարիայ՝ զհօրն Յովհաննու *ի* պատուական արենէն նշխարս և սրբոյն Պանդալիոնի, որ դաւանեաց զբարիոք դաւանութիւնն Քրիստոսի և պսակեցաւ *ի* Նիկոմիդիա քաղաքի: (37/11; 37/12) Եւ տարեալ զամենասուրբ նշխարս վկայիցն *ի* մեծ քաղաքն Ցրի Աղուանից իշխանութեանն՝ շինէր փոքրիկ եկեղեցի և դնէր անդ մեծ զգուշութեամբ մասն ինչ յարենէն Զաքարիայ և *ի* նշխարաց սրբոյն Պանդալիոնի. և թողոյր երէց մի սպասակալ և պաշտօնեայ վկայիցն Քրիստոսի Դանիէլ անուն և ինքն առեալ զաշակերտսն իւր զբարեսէրս և զհաւանս հրամանացն Քրիստոսի և զկէս նշխարացն սրբոյն Զաքարիայ և

երանելւոյն Պանդալիոնի և երթեալ ի Մասքթաց աշխարհն՝ յանդիման լինէր Սանեսանայ թագաւորին Մասքթաց՝ համատոհմին Արշակունեաց: (37 /13; 37 /15; 38 /2) Եւ քարոզէր զանճառելի երրորդութեանն զմի արարչական զօրութիւնն և զմարմնանալն Աստուծոյ բանին, զբազում և զզանազան նշանագործութիւնս յերկրի առնել, զխաչելն և զմեռանելն և յերիր աւուր յառնել և նովին մարմնով ի յերկինս վերանալ, նոյնպէս և յերկրորդ գալստեանն երևել՝ դատելով զկենդանիս և զմեռեալս: (38 / 5) Իսկ ամենաչարն սատանայ մտեալ ի սիրտս նոցա՝ զրգռէր չարանալ ընդ կենսատուր հրամանին բանիցն տեառն: (38 / 8) Սկսան դնել բաղբաղայս ճշմարիտ վարդապետական բանից երանելւոյն. քանզի նա ի քարոզութեանն ասէր զկամս բարերարին Աստուծոյ՝ ո՛չ աւարել և ո՛չ յափշտակել և ո՛չ գողանալ, այլ վաստակել ձեռօք և վայելել մարդաբար և երանելի լինել Աստուծոյ: (38 / 10) Յայնժամ կալեալ զմանուկն Գրիգորիս՝ ընդ ամեհի ձիոյ կապէին զագւոյն և արձակէին ի դաշտին Վատնեայ: (38 / 15) Եւ այսպէս պսակէր սուրբն, զոր բարձեալ աշակերտացն՝ բերէին յԱմարաս գիւղաքաղաքն, որ էր ի գաւառին Հաբանդայ: (39 / 2) Անդ եդեալ առ եկեղեցւոյն՝ հուպ ի բեմն ի հիւսիսոյ կողմանէ. և զսուրբ արիւնն Զաքարիայ ի միում ապակեղէն շշի եդեալ և միւսում շշի զերանելւոյն Պանդալիոնի զնշխարիս. և եդեալ զերկոսեան շիշսն ընդ ամենասուրբ նշխարսն մանկանն Գրիգորիսի և ինքեանք փախստեայ ի Հայս անկանէին: (39 /2; 39 /2; 39 /3; 39 /5) Վասն զի Սանեսան բազում և անթիւ զօրօքն Հոնաց ի Հայս արշաւէր, և աստուածային բարերարութեանցն զօրութիւն տուեալ Հայաստան նախարարացն՝ առ ի խնդրել զվրէժ արեան մանկանն սրբոյն Գրիգորիսի: (39 /6; 39 /7) Եւ ամենայն բազմութիւն զօրացն առ հասարակ ի սուր անկեալք՝ ոչ մնայր գուժատար յաշխարհն Մասքթաց. այլ ամենեքեան խողխողեալ սատակեցան յիւր ազգայնոցն սրով: (39 /8) Իսկ ընդ ժամանակս ընդ այն բերդաքաղաքն անուանեալն Ցրի ապստամբեալ յԱղուանից թագաւորէն և ձեռն տուեալ ի Պարսից արքայն. և եկեալ Արգեսացիք ունէին զաղաքն: (39 / 12) Եւ զերկոսեանն զսուսա ի կապանս և ի չարչարանս արկեալ՝ ստիպէին լինել մոխրապաշտ դիւացն աղտեղութեան: (40 /1; 40 /1) Եւ իբրև ոչ կարէին գամագիւտ լինել բազմութեամբ, մաղթէին զճիղբ մանուկն և ասէին. «Մերոյ աշխարհիս մարդ ես, զմեր կամս արա՛, և մեծարոյ առնեմք զքեզ ի մերում իշխանութեանս»: (40 / 5) Եւ երանելին պատասխանի արարեալ սաէ. «Լաւ լիցի յառաջագոյն քան զերէցն մեռանել ինձ վասն անուանն Քրիստոսի, քան բնականալ ի յարկս մեղաւորաց»: (40 / 6) Զորս առեալ Ասորեաց ոմանց աբեղայից տանէին ի Հակու անուանեալ գիւղն. և անդ եդեալ ի գերեզմանի, և ինքեանք ի տեղւոջն վանս շինէին. և անդ են, ասեն, նշխարք երանելեացն մինչև ցայսօր: (40 /9; 40 /10; 40 /10) Քանզի ի քաջէն Վաչագանայ մինչև ի Վաչէ թագաւորք էին Աղուանից թուով Թ ըստ կարգի. որոց տասներորդ էր բարեպաշտ և աստուածասէր թագաւորն Վաչագան՝ Աղուանից արքայ: (40 /14; 40 /15) ԳԻՐ ԱՆՈՒԱՆՑ ՆԱԽԱԳԱՀ ԿԱՐԳԵԼՈՑ. ՈՐՔ ՅԱՅՏ ԵՆ Ի ՅԱԲԵԹԷ ԵԻ ՅԱՌԱՆԱՅ ՄԻՆՉԵԻ ՅԵՐՐՈՐԴՆ ՎԱՉԱԳԱՆ (41 / 2) սա էառ թագ ի Բաբելացւոց թագաւորէն. (41 / 9) Ի սոցա ծննդոց կարգեցաւ Առան նախագահ Աղուանից. և թիւ անուանցն յԱռանայ մինչև զքաջն Վաչագան, որ էր ի մեծ ազգէն Արշակունեաց, չէ յայտ. և զսոցայն ստոյգն, թէ յորմէ տոհմէ են,

չունիմ ասել: (41 /11; 41 /12) Եւ որք ըստ կարգի կացին թագաւորք Աղուանից տասն. անուանք են այսոքիկ. Ծաչագան քաջ, Վաչէ, Ուռնայր, Յաւչագան, Մերհաւան, Սատոյ, Ասայ, Եսվաղէն, Վաչէ, ապա բարեպաշտն Վաչագան՝ արքայ Աղուանից, յորոց բազումք ի սոցանէ աստուածասէր և բարեպաշտ վարուք կացեալ՝ առին յիւրաքանչիւր ժամանակի զվախճան: (42 / 1) Սակայն ոչ ինչ ումեք ի նոցանէն այսպիսի աստուածային և հոգևոր ծածկեալ զանձ յայտնեալ ընձեռեցաւ, որպէս վեջին Վաչագանայ՝ բարեպաշտ Աղուանից արքայի: (42 / 2) Եւ ի հրամանէ Պերոզի՝ պարսից արքայի, շինեցաւ ի Վաչէէ Պերոզապատ մեծ քաղաքն, որ այժմ կոչի Պարտաւ: (42 /4; 42 /4) ԿԵԱՆՔ ԵԻ ՎԱՐՔ ԿԱՐԳԱԻՈՐՈՒԹԻՒՆՔ ԱՂՈՒԱՆԻՑ ՈՐ Ի ՎԱՉԱԳԱՆԱՅ ԱՐՔԱՅԷՆ ԵԴԱՆ. ԵԻ ԳԻՒՏ ՆՇԽԱՐԱՑ ՍՐԲՈՑ (42 / 8) Իսկ զերեսուն ամ ի Վաչէէ մինչև ցՎաչագան բարեպաշտն առանց թագաւորի կացեալ աշխարհս Աղուանից. քանզի ամենաչար և ամբարիշտ թագաւորն Պարսից Պերոզ զայրացեալ մոլեգնէր իբրև զկատաղեալ շուն, կամէր բառնալ զամենայն թագաւորութիւնս աշխարհի միանգամայն. շարժել զեկեղեցիս և բառնալ զկարգ քրիստոնէութեան և հաստատել կարգել յիւրում իշխանութեանն զմոգութեան դիւապատութիւնն, յոր բազում անպարտ արիւնք երանելի և սուրբ վկայիցն Քրիստոսի ի պղծալից նորա ձեռացն հեղոյր յերկիր: (42 /9; 42/14) Այլ և կանայք տղայովք հանդերձ արտօսրահառաչ ձայնիւ գերեալ լինէին յօտար աշխարհ, ի դառն ստրկութեան: (42 / 16) Եւ բազում նախարարս Հայոց, Վրաց և Աղուանից ի մոգութիւն դիւապաշտութեանն առածեալ կործանեաց՝ և՛ զոմանս բռնութեամբ, և՛ զոմանս պարգևօք մեծամեծ իշխանութիւնս ընձեռելով, և՛ ի տեղիս տեղիս ատրուշանս կանգնեալ՝ զօրանայր կրակալոյց պաշտամունք դիցն աղտեղութեան: (42 /17; 43 /1) Եւ ազգի ազգի աղանդ չարախոհն սատանայի յոլովեալ թշուառացուցանէին զհիքացեալ մարդիկ աշխարհիս Աղուանից, զորս ամենապիղծն զրպարտէր ապստամբութեամբ պատճառաւ, կապանօք և բանտիւք նեղէր և ակամայ ի մոգութիւն խոնարհեցուցանէր: (43 / 6) Ընդ նոսին և Վաչագան առ բուռն և սաստիկ չարութեան թագաւորին յակամայ հաւանէր մոգութեանն, այլ գաղտ յաղօթս և ի պահս և ի Քրիստոսի խոստովանութեանն կանխէր հանապազ, մինչև այց արար ամենողորմն Աստուած հեղման արեան սրբոց վկայիցն Քրիստոսի և աւերածոյ սրբոյ եկեղեցւոյ, և ի զուր խողխողմանն ծերոց և երիտասարդաց և գերութեան կանանց և տղայոց և կորստեան հոգւոց անմեղաց, որ մոգութեամբն եղեն հիքացեալ: (43/7; 43/7; 43 /9) Եւ թերևս ի վերայ սորա մարգարէանայր երջանիկն Եւայիաս, զտեսիլն, զոր ետես ի վերայ Բաբելոնի. «Բա՛ դիմեալ գան հսկայք յագեցուցանել զսրտմտութիւն իմ. խնդան գան միանգամայն և թշնամանեն: (43 /16; 43 / 7) Տէր զօրութեանց հրաման ետ ազգաց բազմաց՝ գալ ի յերկիրէ հեռաստանէ. և հասեալ է տէր իւրովք սպառազինօք: (43 / 19) Ողբացէք ամենայն պիղծ, չար զաւակքդ, զի մերձ է օր տեառն, և բեկումն յԱստուծոյ հասեալ է ի վերայ ձեր. վասն այսորիկ ամենայն ձեռք լքցին. և երկունք կալցին զքեզ իբրև զկանայս ծննդականս. զի ահաւասիկ օր տեառն հասեալ է ի վերայ քո, մարդախողխողդ, անհնարին, անբժշկելի բարկութեամբ անզաւակեցուցանել զքեզ յերկրէ և իջուցանել հնացեալ չարութեամբ զանձդ ի դժոխս սրախողխող տրտմութեամբ. և կորուսցէ զիպարտութիւն անօրինիդ, և զբարձրութիւն ամբարտաւանիդ կորացուցեալ՝ յերկիր կործանեսցէ: (44 /1; 44 /3; 44 /4) Քանզի որ

ըմբռնեսցին *ի* չար զաւակէն, *ի* պարտութիւն մատնեսցին, և ժողովեալք *ի միասին* սրով խողխողեսցին, և զորդիս նոցա առաջի նոցա սատակեսցեն, և զտունս նոցա աւար հարկանիցեն, և զկանայս նոցա առաջի նոցա խայտառակեսցեն, և լցցին տունք նոցա աղաղակաւ և գուժիւ: (44 /6; 44 /7; 44 /7) Զաւակ չար, պատրաստե՛ա զորդիս քո *ի* սպանումն վասն մեղաց հօրդ իւրեանց. զի մի յարիցեն և ժառանգեսցեն զերկիր և լցցեն զնա պատերազմօք: (44 / 10) Յարուցից *ի վերայ* նոցա, ասէ տէր Սաբաւովթ, և կորուսից զանուանս նոցա յերկրէ և զզարմ և զզաւակ: (44 / 12) Ամենայն թագաւորք ազգաց ննջեսցեն պատուով՝ այր իւրաքանչիւր *ի* տան իւրում. և որդիք նոցա յաջորդեսցեն զթագաւորութիւնս նոցուն. այլ դու անկցիս *ի վերայ* լերանց իբրև զմեռեալ գարշելի *ի մէջ* բազում դիականց կոտորելոց սրով և իջելոց *ի* դժոխս, զի ապականեցեր զերկիր իմ և զժողովուրդ իմ անողորմ կոտորեցեր. արդ՝ այսուհետև մի՛ մնասցես յաւիտեան»: (44 /13; 44 /14; 44 /15; 44 /16) Որում արդարև երկրորդեալ կատարեցաւ մարգարէութիւնս այս *ի վերայ* Պարսից թագաւորին՝ ամենաչարին Պերոզի, քանզի սկայաբար հրամանաւն Աստուծոյ եկեալ Հեփթաղական ազգն յագեցուցանել զսրտմտութիւն բարկութեան տեառն: (44 / 18) Զի նախ զորդիս նորա առաջի նորա հարեալ սատակեցին սրով բերանոյ, զչար զաւակսն և զբովանդակ նախարարսն և զկուսակալս աշխարհին, ընդ որս և զխառնիճաղանճ անթիւ զօրացն բազմութիւնս և նոյն ինքն թագաւորն, զամենաչարն զՊերոզէ ասեմ, սրով խողխողեալ *ի մէջ* անթիւ դիականցն լինէր կորուսեալ, և զթաղումն և ոչ զիշու թաղեցեալ: (45 / 5) Եւ զամբարշտութեամբ մթերեալ անբաւ մեծութիւնն աւարեալ *ի բաց բառնային* և զկանայս նոցա խայտառակէին, և ոչ խնայէին *ի* մանկունս նոցա, և ոչ ողորմէին որբոց նոցա: (45 /6; 45 /7) Եւ արդարապէս յագեցուցին զսրտմտութիւն բարկութեան տեառն, և հատուցումն չարեաց, զոր ամենայն ազգաց հատուցանէր արիւնարբուն Պերոզ, եօթանասնեկին տուժեցաւ, և դարձաւ չարն *ի* գլուխ նորին: (45 / 11) Յայնժամ լցաւ եկեղեցի Աստուծոյ երանութեամբ, զի զչար մանկունս նոցա զայրացուցիչս կալեալ հարին ոչ զքարի, այլ զբերանոյ սրոյ թշնամեացն, որ չարաչար մահուամբ վերացան *ի* կենցաղոյս: (45 / 15) ԹԱԳԱՒՈՐԵԼՆ ՎԱՂԱՐՇԱԿԱՅ ԵՒ *Ի*ՍՄԱՆԷ ԱՌՆՈՒԻԼ ՎԱՉԱԳԱՆԱՅ ԶԻՒՐ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆՆ ԱՂՈՒԱՆԻՑ (46 / 2) Զայս իսկ արար աստուածասէր արքայն Վաչագան. յառաջ զինքն դարձուցեալ *ի* մեղանչական գործոց և *ի* չար ճանապարհէն և գործեալ բազում և զանազան առաքինութիւնս, և զյոլով աշխարհս *ի* դիւական չարագործ պաշտամանէն *ի* սուրբ և յուղիղ աստուածապաշտութեանն դարձուցանէր *ի* պողոտայն, և *ի* բարեքաւութեան աւարտէր զառաքինութիւնն: (46 /7; 46 /8; 46 /9; 46 /9; 46 /10; 46 /10) Քանզի զիւրոյ աշխարհին նախարարս, որ միանգամ մոգութեամբն աղտեղացուցեալ էին զոգւոցն զխոհականութիւն դիցն գարշելի պաշտմամբք և զմարմինս պղծալից պոռնկութեամբ խեղեշացուցեալ, յորդորական խրատու ածէր *ի* խոստովանութիւն Քրիստոսի ճշմարտութեանն և ուսուցանէր Աստուածաշունչ գրոց վկայութեամբ՝ եթէ հաւաստեաւ լինելոց և յարութիւն մեռելոց՝ հրամանաւ աստուածորդւոյն Յիսուսի և անշէջ հրով դառն դատաստան յանանց յաւիտենին յաւիտենից ուրացողաց և ոչ խոստովանողաց և ամբարիշտ չարագործաց, և մշտնջենաւոր անճառ փառաց

պարգևք խոստովանելոց զանքննելի երրորդութեանն մի աստուածութիւն և ըստ կամաց նորուն աստուածութեանն՝ բարեգոնածութեամբ յօրինել հրամայէր: (46 / 13) Եւ որք յետ շնորհի աւազանին փրկութեան էին զառածեալ ի մոգութիւն. ապաշխարութեամբ հաստատէր. և որք ի տղայութենէ իսկ երթեալ էին զհետ կորստեան ճանապարհին, հրամայէր լուսաւորել աւազանին փրկութեամբ և արժանաւորս առնէր ճաշակման կենդանացուցիչ մարմնոյ և արեան որդւոյն Աստուծոյ: (47 /4; 47 /4) Եւ ինքն յոյժ ցնծացեալ ուրախանայր ոչ այնչափ ընդ թագաւորութիւնն, որչափ ընդ բոլոր նախարարաց աշխարհին միաբանութեամբ հաւասարել ուխտի եկեղեցւոյ սրբոյ. լուեալ ի կենարար պատուիրանէն, եթէ որ դարձուցանէ ոգի մի ի մոլորութեան ճանապարհէն և ուսուցանէ առաքինասէր վարս, քաւի մեղք նորա, և զիւր հոգին փրկէ ի մահուանէ և քաւեսցէ զբազմութիւն մեղաց իւրոց: (47 /8; 47 /9; 47 /10) Հրաման տայր այնուհետև Արցախայ ամուր աշխարհին յիւրում ծառայութեան, ի բաց լքանել թողուլ զդիցապաշտութեանն զկարգս՝ զաղտեղի դիցն զոհամատոյց պաշտամունս: (47 /14) Յայնժամ նախարարքն աշխարհին Աղուանից առեալ զիւրաքանչիւր իշխանութիւնս՝ միաբանեալ առնուն զՎաչագան յիւրեանց հայրենի թագաւորական զարմէն քաջարութեանց, իմաստուն և վարժ խոհականութեամբ, բարձր և վայելուչ հասակաւ, որդի Յազկերտի՝ եղբօր Վաչէի՝ արքային Աղուանից. և տարեալ թագաւորեցուցանէին ի ձեռն Վաղարշու՝ արքային Պարսից: (48 / 4) Եւ եկեալ յաշխարհին Աղուանից՝ խնդրէր հնարս պատճառանաց, որով մարթասցէ ի բաց թողուլ զաստուածուրաց մոգութեանն դէն և յայտնապէս իսկ բերել ի խոստովանութիւն՝ զՔրիստոս Աստուած ճշմարիտ գոլ: (48 /6; 48 /7) Եւ դարձեալ նախախնամութեամբ մեծին Աստուծոյ ազդեալ ի միտս թագաւորին՝ հրաման տայր Վաղարշակ արքայն պարսից, եթէ զիւրաքանչիւր օրէնս հաստատուն պահեսցեն ըստ իւրաքանչիւր ախորժելոյ կամացն. և մի՛ զոք վտանգեալ՝ դարձուցանել ի մոգութեան կրօնս: (48 / 9; 48 / 11) Եւ լուեալ զայս բարեպաշտ և աստուածասէր արքային Վաչագանայ՝ բազում խնդալից բերկրանօք դիմեալ յեկեղեցի Աստուծոյ, բազում աղօթիւք և արտասուօք խոստովանէր զմշտնջենաւոր և զանճառ սուրբ երրորդութիւնն. և մաղթէր բազում աղաչանօք զեպիսկոպոսն և զերիցունս և զանապատականս և զամենայն ուխտ եկեղեցւոյ՝ ցաւակից և աղօթակից լինել իւր առ ի հաշտեցուցանել զամենողորմ Աստուած: (48 / 16) Եւ ինքն ի պահս և յաղօթս և յողորմութիւնս աղքատաց առատապէս կանխէր՝ հայեցեալ յերանելին Պետրոս, եթէ յետ ուրացութեանն կարաց գլուխ առաքելոցն լինել, և միանգամայն փակակալ և իշխան արքայութեանն: (48 / 17) Եւ դարձեալ՝ այլ ոմն յաշակերտացն տեառն թերահաւատեալ և յետոյ տէր և Աստուած խոստովանեալ՝ կալաւ զկարգ առաքելութեանն. և այլ ևս բազում և յոլովք մեղուցեալք ի ծայրս, առաքինութեան ընթացան և եղեն ժառանգաւորք մշտնջենաւոր և վայելչական արքայութեանն: (49 / 3) Եւ այլոց ևս բազմաց և բազում աշխարհաց բժիշկ լինել դարձի առ բոլորեցունսն Աստուած Յիսուս Քրիստոս և ազատել ի դառն ծառայութենէ սատանայի. զի բժիշկ այն իսկ է հմուտ և առաւել տեղեակ բժշկութեան արուեստին, որ յիւր մարմինն առեալ է դժնդակութիւն սրոյ խոցման և զառողջութիւն ի ձեռն հնարից և բազում

պաճարանաց բժշկական դեղոց ընկալեալ, նովին դեղովք և զայլ վիրաւորեալսն կարող է վաղվաղակի ածել յառողջութիւն: (49 /9; 49 /11) Սոյնպէս և մեղուցեալ ոք, որ դառնայ առ Աստուած յամենայն սրտէ, և բժշկական դեղ ապաշխարութեան ընդունի յառողջութիւն հոգւոյն, և նովին կենսաբեր դեղով՝ խոստովանութեամբ և ապաշխարութեամբ կարէ և այլոց ևս առողջացուցիչ և նորոգիչ գոլ հոգւոց և անմահացուցիչ մարմնոց և դառնալ ամենևիմբ *ի* սուրբ և յամենապարկեշտ քրիստոնէութեանն պաշտօն: (49 / 16) Պատուհաս մեծ և տուգան *ի վերայ* ածէր և կարգէր, որ ոք բագին արասցէ և դիւթ հարցցէ, և կամ եթէ զինչ և իցէ, որ դից աղտեղեաց պաշտօն տարցի և զկարգս քրիստոնէութեան ամբողջ և հաստատուն ոչ պահեսցէ: (49 / 18) Եւ զկախարդս և զդիւթս և զքուրմս յետ միանգամ և երկիցս խրատելոյ և դարձեալ *ի* նմին չարութեան գտանիցի *ի* գործ, յայնժամ չարաչար տանջանօք և գանիւք, կապանօք *ի* դուռն արքունի հասուցեալ՝ մեծագոյն պատուհաս կրեսցեն: (50 /3; 50 /3; 50 /4) Եւ զբազում կախարդս այնուհետև, և՛ զդիւթս, և՛ զքուրմս՝ զոմանս խեղելով, և՛ զոմանս շկօթակ առնելով և՛ զոմանս *ի* ստրկութիւն արկանելով, և զյոլովս խրատելով՝ տուեալ զքրիստոնէական կնիքն՝ առնէր ուսեալս աստուածագիտութեան ճանապարհին: (50 / 6) Եւ կարգէր տեղեաց տեղեաց եպիսկոպոսունս, և՛ երիցունս, և՛ հայեցողս. և *ի* Կամբէճս և յԱղուանս զնոյն հրաման սաստից կարգեալ հաստատէր և այսպէս եպիսկոպոսս և երիցունս և սարկաւագունս. բոլոր իսկ ուխտ եկեղեցւոյ մեծարեալք և յարգեալք էին յամս թագաւորութեանն բարեպաշտ արքային Վաչագանայ: (50 / 9) Յաստուածուստ պսակեալն այն Վաչագան հրամայէր ժողովել զմանկունս կախարդացն, և՛ դիւթաց, և՛ քրմաց, և՛ մատնահատաց, և՛ դեղատուաց. հրամայէր *ի* դպրոցս ունել և ուսուցանել զաստուածեղէն ուսումն և տեղեակս առնել վարուց քրիստոնէութեան, առ *ի* հաստատել *ի* հաւատս երրորդութեանն և ուղղել յաստուածապաշտութիւն զիւրեանց ամբարիշտ հայրունեան ազգս: (50 /18; 51 /1; 51 /1) Իսկ զյոլովս *ի* մանկանցն յիւր սեփական գիւղն Ռուտակ անուն ժողովէր և կարգէր ռոճիկս և դպրապետս *ի վերայ*. և հրամայէր վարժել և հմուտ լինել կարգի քրիստոնէութեանն: (51 /3; 51 /5) Եւ *ի* գալն իւրում *ի* գիւղն կատարել զյիշատակս սրբոցն՝ նստէր ինքն թագաւորն *ի* դպրոցատանն և զորդիս դիւթացն և քրմացն զինքեամբ կացուցանէր. գոբողայաբար բակ առեալ բազմութեանն յոյժ՝ և ոմանց գիրս, և ոմանց պնակիտս *ի* ձեռին ունելով. և միաբան առ հասարակ ամենոցուն մեծաձայն հրանայէր կարդալ և ինքն զուարճացեալ *ի մէջ* նոցա յօրանայր իբրև մեծագոյն իմն գտեալ պարգևս համարէր անձին: (51 /6; 51 /6; 51 /6; 51 /8; 51 /9) Եւ մինչդեռ յայսմ խնդրի էր, մարդասէրն Աստուած կամեցաւ յայտնել սմա *ի ձեռն* աստուածասէր արքային բառնալ զչար աղանդն յաշխարհէ: (51 / 14) Քանզի *ի* բազում ժամանակաց, որպէս լուեալ էր Վաչէի, վարէր չարագործութիւնս այս յաշխարհիս Աղուանից: (51 / 15) Եւ նախկին թագաւորացն Աղուանից ոչ կարացեալ ըմբռնել և կամ թէ անփոյթ իսկ արարեալ, իսկ անիծեալ և չար պարսիկ մարզպանքն շատ անգամ ըմբռնեալ զնոսա՝ կաշառօք կուրացեալ *ի բաց* թողուին: (52 / 2) Իսկ *ի* ժամու միում մինչդեռ կատարէին զչար գործ մատնահատութեան յամուր մայրւոջն առ ափն Կուր գետոյ, չորիւք ցցովք պրկելով զչորեցունց բութոցն՝ կապեալ մանուկ մի և մորթէին

կենդանւոյն: (52 / 3) Այլ ումեմն մանկագոյն պատանեկի դէպ եղև ճանապարհաւ հուպ անցանել առ նոքօք և *ի* վայելն անդր *ի ներքս* յարեալ տեսանէր զմարդախողխողացն ոճիրս, և նոցա զհետ ելեալ մանկանն՝ կամէին ունել զնա ևս: (52 /6; 52 /6) Եւ փախստեայ եղեալ մանկանն՝ անկանէր *ի* գետն մեծ Կուր: (52 / 8) Անդ *ի միջի* գետոյն ծառ մի կղզւոջ դիպեալ. և *ի* լուտ անցեալ ելանէր *ի* ծառն՝ չգիտելով չարագործացն: (52 /8; 52 /8; 52 /9) Եւ *ի միտ առեալ* ճանաչէր զմարդիկն: (52 / 9) Քանզի սատանայի այսպէս կալեալ էր զմիտս իւր չար արբանեկաց, մինչ զի անկարելի ումեք էր զչար աղանդոյն մարդիկ *ի* խոստումն ածել: (52 / 16) Յայնժամ հրամայեաց թագաւորն ունել զմարդիկն, զորս *ի* խողխողմանն իսկ տեսին և յոլովագոյն այլևս մարդիկ, զորս համբաւաւ գիտէին, և բազում գանիւք և չարաչար տանջանօք *ի* փորձ առեալ՝ ոչ կարէին խոստացուցանել զչարագործսն, ապա բարկ քացախ և բորակ խառնեալ և զերկրեալ զչարագործսն արկանել հրամայէր ընդ ունչսն, մինչև աչքն լսնագոյն եղեալ շրջէին համայն. և յայնմ ևս դառն տանջանսն զոչ և զուրաստ կալեալ՝ չլինէին խոստուկ: (52 /16; 53 /2) Իսկ իբրև Աստուածոյ յաջողեալ էր *ի ձեռն* թագաւորին, որպէս եղեն ասացեալ, բառնալ զչար աղանդն յաշխարհէս, իմաստութեամբ խորհեցաւ ածել *ի* խոստումն: (53 /7; 53 /8) Հրամայէր զամենեսեան ածել *ի* տեղի սպանմանն. և զմի ոմն, որ մանկագոյնն էր *ի* նոցանէ, զառաջեաւ իւր հրամայեաց թողուլ և երդուաւ մեծապէս, թէ զքեզ չհրամայեմ սպանանել, եթէ զստոյգն ասես և հաւաստեաւ ցուցանես զհանգամանս դիւապաշտութեանն: (53 /9; 53 /9) Ասէ. «Դևն յայտնապէս գայ *ի* կերպարանսն մարդոյ և հրամայէ երիս դասս լինել, և մէն երիս մարդս ունել և մի՛ խոցել, և մի՛ սպանանել, այլ ողջոյն հանել զմորթն և լուծանել զաջոյ ձեռինն զբոյթն և մորթովն տանել ընդ լանջսն և *ի* ձախոյ ճկութէն հանել, և լուծանել զձախ ճկոյթն: (53 / 14; 53 / 16) Եւս *ի* ներքս նոյնպէս առնել և զոտիցն, մինչդեռ կենդանի կայ մարդն, և ապա սպանանել և զմորթն սնուցանել և՛ կազմել, և՛ դնել *ի* սապատի: (53 /16; 53 /18) Եւ իբրև ժամանակ չար պաշտամանն եկեալ լինի, արարեալ աթոռ երկաթի ծալածոյ, և ոտք են ոտից մարդոյ նման, զոր բերեալ իսկ տեսա բազումք. և հանդերձ ինչ պատուական դնեն *ի վերայ* աթոռոյն: (54 / 3) Եւ եկեալ դնն զգենու զհանդերձն և նստի *ի վերայ* աթոռոյն. և առեալ զինն մարդոյն զմորթն մատամբքն հանդերձ տեսանէ: (54 / 3) Եւ եթէ չկարեն ունել զպսակն, զծառոյ կեղև հրամայէ հանել և արջառ կամ ոչխար զենեալ առաջի նորա՝ զոհ առնեն. և՛ ուտէ, և՛ ըմպէ ընդ չար պաշտօնեայսն իւր. և ձի թամբեալ և սանձեալ կազմ պահեն. և հեծեալ *ի* ձին արշաւէ այնքան, մինչև զկայ առնու ձին. և ապա ինքն չքացեալ աներևութեանայ: (54 / 7) Եւ որպէս խոստուկն եղև, նոյնպէս արար զբազումս *ի* նոցանէն առաջի բազում արքայական բանակին: (54 / 13) Եւ զկէսս *ի* նոցանէ յիւրաքանչիւր գիւղս տանել առ դուրս ընտանեաց ետ խողխողել զնոսա, նոյն ձևով և բազում դեղատուս կալեալ՝ հրամայեաց սպանանել. քանզի և այն աղանդ էր պաշտամանն, զոր դիւին հրամայեալ *ի* տարւոջն միում մարդոյ տալ /դեղ/ և սպանանել. և եթէ այլում չկարէ տալ, այնչափ նեղէր դևն, մինչ զի իւրում ընտանւոյն տայր տալ զմահու դեղն: (54 /15; 54 /17) Եթէ զայլ ոք մատնեալ կախարդութեամբ չար դիւացն, զնոյն աղէտս կուրութեան և պիսակութեան *ի վերայ* հասուցանէին: (55 / 5) Զորս *ի բուռն առեալ* թագաւորին չարաչար տանջանօք բառնայր յաշխարհէս:

(55 / 5) Եւ որպէս զքաջ և զարի մշակ՝ ջերմագութ սիրով խնամ տանել անդաստանացն՝ զփուշ և զորոմն ի բաց խլելով և սերմն բարի սերմանել և տարածանել՝ առ ի պտղաբերս առնելոյ զերեսնաւորս և զվաթսնաւորս և զհարիւրաւորս: (55 /8; 55 /9) ՅԱՅՏՆՈՒԹԻՒՆ ՆՇԽԱՐԱՅ ՍՐԲՈՅՆ ԶԱՔԱՐԻԱՅ՝ ՀՕՐՆ ՅՈՎՀԱՆՆՈՒ ԵՒ ԵՐԱՆԵԼԻՈՅՆ ՊԱՆԴԱԼԻՈՆԻ, ՈՐ ՎԿԱՅԵԱՅ Ի ՆԻԿՈՄԻԴԻԱ ՔԱՂԱՔԻ, ԶՈՐ ՏԱՐԵԱԼ ԷՐ ՄԱՆԿԱՆՆ ԳՐԻԳՈՐԻՍԻ ՅԱՇԽԱՐՀՆ ՃՂԲԱՅ (56 / 3) Բազում նշանք և արուեստք լինէին ի քաղաքին՝ անուանեալն Յրի՝ ի տեղւոջն, յորում երանելի վկայիցն Քրիստոսի նշխարքն կային: (56/5; 56/5) Իսկ ամենաչար պարսկաց պապանձական պաշտօնն, որ միշտ հակառակ կայր եկեղեցւոյ Աստուծոյ, մտեալ պարսիկ մի մոգ, ուր կային նշխարքս այս՝ առ ի ծաղր առնելոյ, կամէր զպէտս իւր վճարել. և իբրև լուծեալ զխոնջանն, աղիքն ի վայր թափեալ, չարաչար տանջանօք ելանէր ի կենցաղոյս: (56 /11; 56 /11; 56 /12) Զայս նշանագործութիւն Յուսան Յոնաց եպիսկոպոս, որ ի Մասքթաց աշխարհին էր, և յոյժ ճշմարտախօս՝ իւր իսկ ականատես եղեալ պատմեաց: (56 / 13) Իսկ ի Հակու, ուր երանելեաց վկայից նշխարքն կային, որք վկայեցինն ի Յրի քաղաքի առաջի գերգեսացւոյն պարսկի, երէցն Յրւոյ և ճիրք մանուկն, որ գլխատեցանն և բերան ի Հակու, այս վանաց երիցու երևի ի տեսլեան գիշերոյն, որում անուն էր Յակոբ, այր մի աւագաշուք, լուսաւոր կերպարանօք, և մի ևս մանուկ յարանց նոյնպէս ահագին տեսլեամբ. և ասէին. «Երթ ի Յրի առ գործակալ քաղաքին Խոճկորիկ անուն՝ նախարար յԱղուանից աշխարհէն և ասա՝ մեք և նմա ցուցանեմք զտեսիլդ. սուրբք եմք յեկեղեցւոջդ, հանէք դու և նա». և անփոյթ արարեալ երիցուն. կրկնեալ և երեքկնեալ նոյն տեսիլ, և դարձեալ ի վերջ ընկեցեալ անփոյթ առնէր: (56 /14; 56 /15; 57 /1; 57 /1; 57 /3; 57 /6) Եւ նա ոչ զգաց մինչև ուժգին անկանել նմա ի ցաւս մերձ ի մահ: (57 / 7; 57 / 7) Եւ եկեալ նոյն արք հրեշտակաշուք և ահաւոր կերպարանօք և ասեն ցերէցն. «Է՞ր աղագաւ մեռանիս, գիտե՞ս, եթէ ոչ». և նա ասէ. «Եթէ ոչ, տեարք». և նոքա ասեն. «Վասն զի հեստեալ յամառեցեր և ոչ չոգար ի Յրի առ Խոճկորիկ՝ առնուլ զմեր նշխարս անտի, արդ մեռանիս աւաղիկ»: (57 / 11) Եւ աղաչեալ երիցուն հայցէր զբժշկութիւն. զի փութով երթեալ կատարեցից զհրամայեալսն. և նոցա ձեռն եդեալ ի վերայ՝ առժամայն բժշկէին: (57 / 13) Ընկալեալ զառողջութիւն և յարուցեալ գնայր ի քաղաքն Յրի: (57 / 14) Եւ իբրև գտանէր զԽոճկորիկ, որ էր գործակալ ի քաղաքին և նորա ոչինչ հարցաքնին արարեալ, այլ որպէս առն Աստուծոյ առնէր ընդունելութիւն: (57 / 15) Եւ վասն զի ի տեսլեանն ասացեալ էր, եթէ Խոճկորիկայ նոյնպէս ցուցանեմ զտեսիլդ, երէցն ոչինչ ի վեր հանէր զբանսն: (58 / 1; 58 / 2) Եւ իբրև յընթրեացն ի վեր յառնէին, երէցն երթեալ յեկեղեցւոջն հանգչէր՝ հանդերձ երկու ևս երիցամբք, որ ընդ գործակալին էին, և Խոճկորիկն երկու պատանեօք՝ յիւրն վանսն: (58 / 2) Եւ զարթուցեալ ի քնոյն ասէր. «Ուրեմն, ի ժամ վաղ չոգայ, վասն այսորիկ է տեսիլդ»: (58 /7; 58 /7) Եւ ասէին. «Ոչ եթէ վասն այնորիկ ասացաք, եթէ ի ժամ վաղ չոգար, այլ մեր նշխարքն կան յեկեղեցւոջն, երթ դու և երէցն հանէք». և զարթուցեալ յերկիւղ ահագին, դարձեալ քունն առնոյր քաղցրագոյն. և եկեալ երրորդ անգամ նոյն արքն լուսազգեստք, յոյժ պայծառ կերպարանօք շքեղացեալք և ասեն. «Արի երթ յեկեղեցին և տեսանես լոյս մեծ յեկեղեցւոջն և ուշ կալջիր լուսոյն, թէ յորում

տեղւոջ լոյսն ժողովի, անդանօր կան նշխարք մեր»: (58 / 10) Եւ նոյն տեսիլ նոյնպիսի *ի* նմին ժամուն երիցս երևեալ երիցուն: (58 / 14) Եւ յարուցեալ երէցն յեկեղեցւոյն *ի դուրս* ելանէր առ Խոճկորիկ գնալ: (58 / 15) Եւ իբրև մտին *ի* գաւիթ եկեղեցւոյն, կայր խաչ արտաքոյ դրանն. անդ երկրպագեալ խաչին՝ հայեցեալ տեսին լոյս սաստիկ յեկեղեցւոջն ահաւորագոյն յոյժ: (59 / 3) Եւ զարհուրեալ յոյժ՝ անկան *ի վերայ* երեսաց առաջի սուրբ խաչին և ոչ կարէին ամբառնալ զգլուխս իւրեանց յերևեցելոյ նորահրաշ լուսոյն: (59 / 5) Եւ պաշտեցեալ սաղմոս մի, կամեցան յառնել և ոչ կարացին. և ասացեալ զերկրորդ սաղմոսն, դեռ ևս այն անգամ ոչ զօրեցին. և *ի* կատարել զերրորդն՝ օգնութիւն հասեալ յամենազօրէն յԱստուծոյ որպէս թէ եկեալ ոք զամենեսեան կանգնէր: (59 / 8) Եւ նոցա զօրացեալ *ի* շնորհաց բարձրելոյն, կնքեալ զինքեանս նշանաւ տէրունեան խաչիւն, մտանեն յեկեղեցին՝ *ի* լցեալն պայծառագոյն լուսով և պաշտէին մինչև զառաւօտն: (59 /9; 59 /10) Եւ ընդ այգանալն ժողովել սկսանէր լոյսն բովանդակ *ի* բեմ անդր և երթեալ միաբանէր *ի* տեղւոջն, ուր երանելեաց վկայիցն Քրիստոսի ամենասուրբ նշխարքն կային: (59 /11; 59 /12) Եւ *ի* նուազել լուսոյն զօրէն ճրագի մերթ լուցանէր և մերթ անցանէր *ի վերայ* տեղւոյն, ուր սուրբ նշխարքն կային, մինչև նկատեցին զտեղին: (59 /13; 59 /13) Եւ ապա բացեալ գտին զնշխարս երանելեացն և գիր *ի վերայ* տարմալոյն, յորում սուրբքն կային զայս օրինակ. «Ես Գրիգորիս բերի զայս սուրբս՝ զերջանիկն Զաքարիա՝ զհայր Յովհաննու և զմեծ վկայն Քրիստոսի՝ զՊանդալիոն երանելի, որ վկայեաց *ի* Նիկոմիդիա քաղաքի. և ևս աստէն վախճանեցայ: (59/15; 60/3) Իսկ աստուածասէր թագաւորին յոյժ ցնծալից ուրախութեամբ զուարճացեալ՝ կանխէր յաղօթս և *ի* բարեբանութիւն մեծին Աստուծոյ. գոհանայր զմեծագոյն տուելոյն զպարգևս: (60 / 9) Եւ *ի* գալ սրբոցն՝ ինքն թագաւորն հանդերձ թագուհեաւ *ի* հետիոտս ելանէր ընդառաջ բազում պաշտօնէիւք, տէրունեան պայծառացեալ խաչին նշանաւ, և՛ խնկովք, և՛ զանազան ծաղկօք, և՛ անթիւ ժողովոց բազմութեամբ՝ օրհնեալ և փառաւորեալ հոգևոր երգովք *ի ձեռն* առաքինասէր նահատակացն Քրիստոսի. զՅիսուս Քրիստոս՝ զճշմարիտն Աստուած: (60 /14; 60 /15; 61 /1) Եւ հրամայէր առնել խորան փայտեղէն ծալածոյ և շիկակարմիր կազմել մորթով և սպիտակ կտաւովք և *ի ներքոյ* դրուագել զհանգստարան սրբոցն և զբոլոր կտակարանաց կայեանս: (61 / 6) Եւ Շուշանիկ աշխարհատիկինն Աղուանից յոյժ հաւատացեալ և բարեսէր կինն զիւր մեծագոյն խորանն հրամայեաց *ի* շիկակարմիր խորանի սրբոցն *ի վերայ* հարկանել եկեղեցաբար, յորում պաշտօնեայքն և թագաւորն և յոլով *ի* ժողովոյն կային *ի ներքս*, որ *ի* ջերմին հով ունէր *ի* սուրբ խորանին, և յանձրևաբեր խոնաւէն ցամաք պահէր: (61 /9; 61 /9; 61 /11; 61 /11; 61 /11; 61 /11) Եւ բէժ կտաւով զմեծ խորանաւն շուրջ որմափակաբար պատեալ, յորում բանակն արքունի *ի ներքս* մտանէր *ի* ժամ պաշտամանն առաջի ամենասուրբ խաչին և երջանիկ վկայիցն Քրիստոսի երկրպագութեամբ մաղթել զԱստուած և ունկն դնել Աստուածաշունչ գրոց: (61 /13; 61 /13) Եւ քանզի միշտ ընդ իւր առեալ կրէր զնշխարս երանելեացն, հրամայէր դեսպակ առնել յանուն սրբոցն և նոյնպէս շիկակարմիր մորթովք կազմեալ և սպիտակազգեստ պատուական կտաւով *ի վերայ* յարմարեալ, և խաչ ոսկեղէն *ի* պատուականագոյն կազմեալ ականց և զանուն թագաւորին ոսկեգործ քանդակով *ի վերայ* գրեալ,

զոր *ի վերայ* դեսպակին հարեալ կանգնէին, և գունակ գունակ կերպասուց յարքունական թագէն խաչին նշանք փողփողեալ շողային, և յարքունի ասպաստանէ ձիս սպիտակս ընտրեալս, որ իւր յոյժ սիրելի և պատուականք երևէին, և զագիս ձիոցն կարմիր ներկուածով տայր յարմարել, և պաշտակս յայտ արարեալ սրբոցն դեսպակի և ձիոցն սպաս ունել: (61 /18; 61 /18; 62 /1; 62 /1) Եւ սայլ ևս հրամայէր կազմել սպիտակ եզամբք լծելովք, ու զխորան սրբոցն բառնայցէ, և՛ երիցունս բազումս, և՛ սարկաւագունս, և՛ գրակարդացս, և՛ փսաղտս պահէր յարքունի դրանն, որք միշտ *ի* տուէ և *ի* գիշերի պաշտեալ՝ սպաս ունէին սրբոցն: (62 /9; 62 /10) Եւ յորժամ չու լինէր բանակին, յառաջ սրբոցն դեսպակ ելանէր առաջի՝ սպիտակազգեաց կտաւով ծածկեալ և ոսկի խաչ *ի վերայ* դեսպակին՝ թագաւորական թագով, գունակ գունակ կերպասուցն փողփողելով, սպիտակ ձիովք, կարմրազգեացն ընդելուզեալ կերպասուք. և զպուրս թագաւորական ձիոցն կազմեալ թագաւ և բազմութիւն պաշտօնէիցն առաջի և զկնի դեսպակին՝ խաչ *ի* ձեռս, սաղմոսանուագ երգովք միաբան փառաւորէին զերրորդութեան միաբուն զօրութիւնն: (62 /11; 62 /14) Եւ յորժամ բանակել կամէին, յառաջ սրբոցն հարկանէր շիկակարմիր խորանն և խաչ ոսկի *ի վերայ*. և ապա սպիտակ մեծ խորանն *ի վերայ* նորա, յոր եկեալ սուրբքն մեծաւ զգուշութեամբ, անուշագոյն խնկովքն ծխեցելովք և քաղցրաձայն սաղմոսանուագ երգովք *ի* հանգստարանն մտանէին: (63 /1; 63 /1; 63 /3) Եւ ինքն թագաւորն հանդերձ թագուհեաւն և բոլոր բանակօքն կանխէր զցայգ և զցերեկ յաղօթս Աստուծոյ և *ի* փառաբանութիւն սրբոցն: (63 / 5) Եւ զի մանուկ չէր աստուածասէր և բարեպաշտ թագաւորին Վաչագանի, վանականաց ուխտադրութեամբ աղաչէր զԱստուած *ի ձեռն* սրբոցն, զի շնորհեսցէ նմա զաւակ. և մարդասէրն Աստուած՝ այս է մատակարար բարեաց, լուեալ աղօթից նորա՝ շնորհէր մնա զաւակ արու: (63 / 7) Եւ խնդութեամբ ընկալաւ զպարգևսն *ի* յԱստուծոյ *ի ձեռն* սրբոց վկայիցն: (63 / 9) Եւ սարկաւագ մի յոտն կացեալ առ արքունական սեղանոյն, և որ ինչ *ի* սեղանն գայր, յամենայն խորտկացն առեալ՝ *ի վերայ* սեղանոյն դնէր. և իբրև զրաւ լինէր սեղանոյն արքունի ընթրեաց, յայնժամ առեալ սարկաւագին՝ մատակարարէր աղքատաց: (64 /2; 64 /3) Եւ արդարև միշտ բևեռեալ էր ընդ երկիւղիւն Քրիստոսի և ջերմախանդ սիրով փութայր հանապազ *ի* պահս և յաղօթս՝ հանդերձ թագուհեաւն և ամենայն դրամբն, և անձանփրոյթ կատարէր զյիշատակ սրբոցն՝ յորդորելով զամենեսեան *ի* հաւատսն Քրիստոսի. և խրախացեալ միշտ յօրանայր հանդերձեալ յուսովն Քրիստոսի, անանցական բարութեամբ յանանց յաւիտեանս: (64 /9; 64 /10) ԳԻՒՏ ՆՇԽԱՐԱՑ ԵՐԱՆԵԼԻՈՅՆ ՄԱՆԿԱՆՆ ԳՐԻԳՈՐԻՍԻ՝ ԱՂՈՒԱՆԻՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ, ՈՐ ՎԿԱՅԵԱՑ *Ի* ՄԱՍՔՈՒԹՍ *Ի* ՁԵՌԱՑ ՍԱՆԵՍԱՆԱՑ ԱՐՔԱՅԻՆ ՄԱՍՔԹԱՑ (64 /15; 64 /16) Յոյժ ցանկալի տենչանս ունէր բարեպաշտն Վաչագան՝ արքայն Աղուանից *առ ի* գիւտ նշխարաց սրբոյ մանկանն Գրիգորիսի, քանզի տեղեկացեալ էր *ի* հնադարացն պատմութենէ, եթէ *ի* Վատնեան դաշտին յեզր ծովուն մեծի առեալ էր զնահատակութիւն սուրբն Գրիգորիսի: (64 /17; 65 /1; 65 /1) Եւ ոչ նշան ինչ արարեալ *ի* տեղւոջն՝ երկուցեալ այլ ուրուք բառնալոյ զնշխարս երանելւոյն և կամ թէ յերկիւղէն հինին ճեպելոյ, և կամ թէ *ի* յոլովութենէ ամաց բազմանալոյ *ի* մոռացումն զընկեցեալ եղանէր տեղին նշխարաց սրբոյն: (65 /4; 65 /5; 65 /5) Եւ կոչեցեալ զվանաց երէցն գեղջն

հարցանէր, եթէ նշան ինչ ուրեք է՞ առ եկեղեցեաւն ի գերեզմանին վերայ, թէ ոչ. և նա ասէ. «Բազում գերեզմանք են արդ շուրջ զեկեղեցեաւն. վասն զի ի հինախաղաց ժամանակէն և ի մեծագոյն հիմնարկութենէ եկեղեցւոյն ոչ ոք կարաց շինել, զոր մեծին Գրիգորի հիմնարկեալ էր»: (65 /9; 65 /10; 65 /10) Եւ ասէ թագաւորն, թէ զհող տեղւոյն ի բաց հրամայեմ պեղել, և եղեալ ի միտս իւր ասէ. «Գուցէ ի բազմութենէ գերեզմանացն ոչ կարեմք կալ ի վերայ ամենասուրբ գերեզմանի երանելւոյն, այլ ապաստան պարտ է լինել ի պահս և յաղօթս, և բազում աղաչանօք խնդրել յամենողորմէն Աստուծոյ՝ յիշեցեալ զտէրունեան զբանն, որ ասէ. «զբարի հայցումն վաղվաղակի առնուլ յառատատուրն Աստուծոյ»: (65 / 2; 65 /12; 65 /12; 65 /13; 65 /14) ԹՈՒՂԹ ԱՐՔԱՅԻՆ ՎԱՉԱԳԱՆԱՅ ԱՌ ԱՄԵՆԱՅՆ ԵՊԻՍԿՈՊՈՍԻՆՍ ԵՒ ՔԱՀԱՆԱՅՍ ԱՌ ԻՇՈՐՀԵԼ ՆՄԱ Ի ՀԵՌՆ ԱՂՕԹԻՑ ԵՒ ՊԱՂԱՏԱՆԱՅ ՆՈՑԱ ՋՕԱԾԿԵԱԼ ԳԱՆՁՆ (66/3; 66/3) Առ եպիսկոպոսս և երիցունս. և սարկաւագունս, և անապատականս, և առ ամենայն ուխտս եկեղեցւոյ՝ ողջոյն. յուշ լիցի ամենեցուն ձեզ անյապաղ պաշտել և պահել և առնել խնդրուածս առ մարդասէրն Աստուած առ ի շնորհել մեզ զնշխարիս երանելւոյն Գրիգորիսի. ողջ լերուք: (66 / 7) Եւ ապա զայսպիսի հրաման արքային ընկալեալ այնուհետև ամենայն եպիսկոպոսք զիւրաքանչիւր իշխանութեան զերիցունս և զսարկաւագունս և զբոլոր ուխտ եկեղեցւոյ հանդերձ տէրունեան նշանաւ խաչին առեալ միաբանութեամբ և յոյժ փութով ժողովեցան ի սեպհական գիւղն արքունի՝ անուանեալն Դիւտական: (66 / 11) Եւ որ սպուժեալ յամեսցի ոք, մեծ պատուհաս ի վերայ հրամայէր դնել: (66 / 12) Գտանէր և զամենասուրբ նշխարս Գրիգորի և յոյժ հռչակելոյն Հռիփսիմեայ և Գայիանեայ ի Դարահոջ գիւղն, որ է ի նահանգին Արցախայ, զոր էր բերեալ երիցուն Մատթէ անուն կոչեցեալ ի Յոհաննէ Մանդակունւոյ՝ Հայոց կաթողիկոսէն, զոր ունէր նորին մատանեաւն կնքեալ և առաքեալ անդ երիցունս առնոյր առ իւր: (67 /1; 67 /1; 67 / 3) Եւ ի գալ մեծին Գրիգորի հանդերձ պատերազմակից պսակելովքն Հռիփսիմեաւ և Գայիանեաւ ի մեծ ժողովն Դիւտականու, ընդառաջ ելանէր թագաւորն հանդերձ թագուհեաւն և ամենայն մեծամեծ նախարարօքն հեռագոյն ի գեղջէն, ընդ առաջ ելանէին ամենայն եպիսկոպոսունքն իւրաքանչիւր իշխանութեամբ և պաշտօնէիւք բազում դասք դասք և գունդք գունդք՝ յիւրաքանչիւր գնդի նշանք սրբոցն մեծապէս պատուով ընդ աւետարանին պատուեալք բազմութիւնք խաչիցն և զանազան նշանացն փողփողելով ծուխ խնկելոցն ուժգին բուրեալ յիւրաքանչիւր դասուէն, ձայնք սաղմոսանուագ հոգևոր երգոցն քաղցրագոյն հնչմամբ անհատ բարեբանելով զԱստուած՝ զտուտղն մեծագոյն պարգևին: (67 /5; 67 /6; 67 /7) Եւ բերեալ ի հանգստարան սրբոցն դնէր առ երանելեացն Զաքարիայ և Պանդալիոնի: (68 / 5) Եւ վստահացեալ այնուհետև բարեսէր արքայն յիւր հաստատուն հաւատոյն խնդիր և յառաքինի ժողովոյն բարի հայցումն, ասէ. «Հաստատուն գիտեմ, զի տայ ինձ Աստուած ի ձեռն մեծիս Գրիգորի զամենասուրբ նշխարս սրբոյն Գրիգորիսի»: (68 / 8) Եւ զաշխարհատիկինն թէպէտ և կամեցաւ անդէն թողուլ, քանզի ժամանակն գարնանային էր և յոլովութիւն անձրևացն բերման սաստկանայր յերկիր, ոչ հաւանէր առնուլ յանձն. այլ մեծաւ փափագանօք տենչացեալ, և ինքն երթայր ի խնդիր սրբոցն: (68 / 17) Եւ զինգեսեան զամենասուրբ վկայսն Քրիստոսի՝ զմեծն Գրիգորիոս և

զերանելին Զաքարիա և զամենասուրբն Պանդալիոն, զյոյժ հռչակաւորս, զպատերազմայաղթս զՀռիփսիմէ և զԳայիանէ, առեալ ի բարեխօսութիւն մեծին և բոլորեցուն Աստուծոյ առ ի շնորհելոյ ի ձեռն նոցա զինքեան փափագելին: (68 /20; 69 /1; 69 /1) Եւ զանազան թագաւորական հանդերձիւ պատեալ զնշխարս սրբոցն՝ բազում խնկովք և զանազան անուշահոտ ծաղկօք հանդերձ՝ դնէր ի դեսպակի սրբոցն, զոր շիկակարմիր մորթով կազմեալ և սպիտակ կտաւով ի վերայ յարմարեալ և ոսկի խաչ ի պատուականագոյն ականց քանդակեալ, ի վերայ դեսպակին հարեալ, և ձիս սպիտակս կարմիր ներկուածով զագիսն կազմեալ, և զպուրս, և զագիսն թագաւորական ձիոցն թագիւ պերճացուցեալ, և բազմութիւն պաշտօնէից արքունի դրանն առաջնոյ և վերջնոյ դեսպակին, խաչ ի ձեռն անհատ քաղցրաբարբառ պաշտամամբք զցայգ և զցերեկ անդադար բարեբանէին զԱստուած: (69 /3; 69 /4; 69 /4; 69 /5; 69 /8) Եւ դասք եպիսկոպոսաց իւրաքանչիւր հանդերձ մեծագոյն ժողովովն երթային ի չորեցունց կողմանց դեսպակի սրբոցն սաղմոսելով և բարեբանելով զմիածինն Աստուած՝ խնդրելով զամենեցուն ցանկալին՝ զսուրբ նշխարս սրբոյն Գրիգորիսի: (69 / 11) Եւ ինքն թագաւորն զնոյն առնէր մինչև ի գիւտ սրբոցն: (69 / 15) Իսկ դրան երիցունքն արքունի յոյժ ջերմագոյն պահէին և խնդրէին ի բարերարէն Աստուծոյ. և ոմանք ոչ ճաշակեցին մինչև ի գիւտ սրբոց նշխարացն: (69 /16; 69 /17) Եւ ի տուէ և ի գիշերի ամենայն ժողովելոցն անդադար լինէին աղօթք և խնդրուածք ուժգին գոչմամբք՝ հայցել զամենեցուն զցանկալին՝ զԳրիգորիս: (70 /1; 70 /1) Ընդ աւուրսն ընդ այնոսիկ առաքեաց արքայ զՄատթէ երէցն Դարահոջու՝ հանդերձ պաշտօնէիւք ի Սուհառ՝ պաշտօն առնել և պատարագս մատուցանել յանուն սրբոցն, որ անդն յայտնեցան: (70 / 7) Իսկ յորժամ բերէին զտեղի գերեզմանին՝ սխալեալ ի հիւսիսակողմն արարին զբրածն. և իբրև ոչ պատահեաց, յոյժ տրտմութիւն կալաւ զամենեսեան: (70 / 10) Իսկ յորժամ չու արարեալ թագաւորն ի Դիւտականէ բազմութեամբ ժողովոյն, եպիսկոպոսօք, երիցամբք և ամենայն պաշտօնէիւք յոլովութեամբ, և որպէս եղևն ասացեալ, պահք և աղօթք և խնդրուածք յամենայն ժողովելոցն լինէին առ մարդասէրն Աստուած: (70 / 14) Եւ հասեալ ի գիւղ մի՝ Արաժանս անուն և սարկաւագ մի՝ Յովէլ անուն նորա ի դրան արքունի, տեսանէր ի տեսլեան յառաջ քան զծագել առաւօտուն, իբրև այն թէ՝ բահ ունիցի յուսն և զնշխարս երանելոյն Գրիգորիսի խնդրիցէ: (70 /18; 70 /18; 70 /19) Իսկ երանելոյն կալեալ զձեռանէ սարկաւագին և խոնարհեցուցեալ ի տեղին, ուր կային նշխարք սրբոյն. «Եթէ զԳրիգորիս խնդրէք, աստ է», և հրամայէր բերել զտեղին: (71 / 5) Մօտ ի գերեզման անդր փոքր բլրիկ մի էր և խաչ ի վերայ: (71 /6; 71 /7) Եւ երթեալ երանելոյն ի վերայ բլրոյն՝ առընթեր խաչին կացեալ. և երէց մի Նաթան անուն՝ եղբայր նորուն սարկաւագին, և միւս ևս երէց Գեղևուն անուն բրէին զտեղին. և Յովէլ ի ծունգս իջեալ՝ շալակ ունէր առաջի: (71 /7; 71 /9) Եւ նորա ձայնեալ անդրէն սաէր. «Կողքս և զստկունքս աստ են, ի ձեզ առէք»: (71 /11) Եւ արքայ յոյժ խնդալից եղեալ՝ զՄանասէ՝ զիւր դրան երէցն և զնոյն սարկաւագն առաքէր յԱմարաս յառաջ քան զիւր երթալն. և երթեալ ցուցանէր զնոյն տեղին, որ ի նմին իսկ տեղւոջն գտանէին զնշխարս սրբոյն: (71 / 15) Եւ հասեալ ի Քարուէճ՝ փոքրագոյն գիւղ մի. և լինէր անդ ցայգապաշտօն: (72 / 4) Եւ դարձեալ ցուցանէր նոյն Յովէլայ սարկաւագի ի նմին տեղւոջ արս չորս աւագագոյնս աբեղայս, և զնոյն Գրիգորէս մանկագոյն ևս քան զնոսա և յոյժ

ահաւորագոյնս տեսլեամբ շուրջ կացեալ զնոյն տեղեօքն զոբաղայիւք, զոր բրել հրամայեաց: (72 / 6) Եւ յահէ անտի ի բերանս անկեալ սարկաւագին, և անդէն ի վեր յարուցեալ կամէր հարցանել ինչ, և նոքա աներևոյթ լինէին ի նմանէն: (72 /8; 72 /9; 72 / 11) Եւ յորժամ սկիզբն լինէր ցայգապաշտամանն ի նմին աւուր, և բարեպաշտ արքայն անդադար խնդրէր յԱստուծոյ զգիւտ սրբոյն Գրիգորիսի և տեառնագրեալ զինքն տէրունեան խաչի նշանաւն՝ յոյժ բազում աղաչանօք՝ ծածուկ սրտիւ հայցէր զառատատուրն Աստուած: (72 / 11) Եւ մինչև նստեալ՝ ի գիշերապաշտամանն էր, նիրհ առնոյր փոքրկագոյն զթագաւորն. և եկեալ հնչիւն ձայնի ասէր. «Զոր դու հայցես աղաչանօք, անդ երևեցար»: (72 / 17) Եւ գիտացեալ ի տեսլեանն, որպէս պատմեացն, թէ ես յԱմարաս երթամ. և որ անդ, ասէ, երևելոց ումեք իցէ անդ մարդոյ: (72 / 18) Եւ Յովէլ երէց մի անապատական, որ առ արքային լինէր, պատմեաց, եթէ ես տեսի ի նմին տեղւոջ, ուր Յովէլ սարկաւագի բրել հրամայեաց, աղբիւր ելանէր յականէն նրբագոյն և յառաջ խաղացեալ յոյժ յորդագոյն: (73 / 3) Եւ իմ զարմացեալ՝ եթէ յառաջ չէր աղբիւր ի տեղւոջս, արդ այս յորդ ուստի՞ ելանէ: (73 / 5) Յորժամ չուեալ ի Քարուիճէ՝ կանայք յառաջ ելանէին ի գիւղաքաղաքէն Ամարասայ: (73 /6; 73 /6) Առ ի յոյժ ցանկալի տենչանացն ի վայր յերիվարէն իջանէր և շրջեալ ընդ դաս դաս եպիսկոպոսացն և երիցանց՝ կարգել և յարմարագոյնս երթալ՝ հանդարտիկ և յորդագոյն քաղցր ձայնիւ, սաղմոսանուագ երգով բարեբանեալ զկենարար երրորդութիւնն: (73 /10; 73 /10) Եւ ինքն անցեալ մեծաւ զգուշութեամբ սպասաւորէր դեսպակի երանելեաց վկայիցն Քրստոսի. և ի բազմութենէ ձայնիցն պաշտամանց յայլ և այլ լեզուս մեծագոյն հնչէր երկիրն. և ի յոլովութենէ տէրունեան խաչաձև նշանացն և ի փողփողելոյ նշանարձակ գունակ գունակ երանգախառն կերպարանաց, և փայլմունք ոսկւոյ և արծաթոյ և պատուական ականց, որ ի բազմութիւն խաչերոյն էին կառուցեալ, իբրև զլուսաւոր ամպ ծածկեալ ունէին զերկիր: (74/1; 74/1; 74/2; 74/4) Իսկ դեսպակ սրբոցն սպիտակազգեստ կազմածով, սպիտակ ձիով, ոսկի ականակապ խաչիւն ի վերայ կառուցեալ, յոյժ պատուական թագ խաչին նշանարձակ ի վերայ դեսպակին լեալ իբրև զաստղ պայծառագոյն լուսով, և ուժգին շքեղացեալ փառօք երթայր ի մէջ քրիստոնէական բանակին: (74/6; 74/6; 74/7) Եւ յորժամ ի գիւղն մտանէր սուրբ և աստուածասէր ժողովն, գետ փոքրագոյն անցանէր ընդ մէջ շինին և կամուրջ կազմեալ արքունի պողոտային: (74 / 8) Իսկ արքայն առ ի յոյժ սիրոյն, զոր առ սուրբսն ունէր, ոչ հաւանէր զդեսպակ սրբոցն յայլ ոք թողուլ, այլ ինքն թագաւորական զգեստուք հանդերձ իջեալ անցանէր ընդ գետն: (74 / 10) Եւ երթեալ ի նշանակեալ տեղին յերկարագոյն ծունրդրութեամբ թագաւորն հանդերձ եպիսկոպոսօք և բազմութեամբ ժողովոյն առնէր խնդրուածս: (74 / 12) Եւ հարեալ զխորանն արքունի ի վերայ տեղւոյն հրամայէր զգուշանալ մինչև ցվաղիւն: (74 / 14) Եւ ընդ այն ժամանակս եպիսկոպոս ոչ կայր յԱմարաս. և հարցեալ արքայի ցվանաց երէց գեղջն և ցայլ ևս աւագանի՝ եթէ ձեր նշան ինչ տեսեա՞լ է ի տեղւոջն, եթէ ոչ: (75 /2) Պատմեցին նոքա, զոր ի Յոբայ ճգնաւորէ լուեալ էին: (75 / 2) Եւ պատմեաց վանաց երէցն և ասէ. «Երէց մի Վեկերտու Յոբ անուն՝ ճգնաւոր և յոյժ առաքինի վարուք կեցեալ յաշխարհի, որ ունէր և առաքելական շնորհս, քանզի և մեծագոյն աշխարհ մի Արցախայ՝ Պազկանք անուն, դարձուցանէր ի մոլորութենէ և առնէր աստուածածանօթս անճառելի

խորհրդոյ խորհրդակից Երրորդութեանն պաշտօնատարս: (75 / 9) Եւ լուացեալ զոտս ճաշակել փոքրագոյն ինչ, և ելեալ *ի* տեղւոջդ յայդմ *ի* քուն մտեալ հանգչէր. (75 / 15; 75 / 15) մտեալ հանգչէր. և յարուցեալ վաղվաղակի՝ խաչ արարեալ իւրով իսկ ձեռամբ՝ կանգնէր *ի* տեղւոջն, և մեզ պատուիրէր ասելով. «Միթ ոք զխաչդ *ի* բաց հանցէ *ի* տեղւոյդ, այլ մեծագոյն խաչ տուք հարկանել *ի* տեղիդ և այգուն և երեկուն աղօթս կատարել և խունկ ծխել, զի մեծ սքանչելիս տեսանեմ *ի* տեղւոջն»: (76 /1; 76 /2; 76 /2; 76 /3; 76 /4) Եւ այլ աբեղայ ոմն հիւր եկեալ, և մեք ճաշ հրամայեցաք տալ. և մինչ նա հաց ուտէր, և մանուկ մի գինի տայր բաժակաւ, և *ի* շինին ամբոխն իմն լինէր: (76 / 6) Եւ մեր ամենեցուն զհիւրն թողեալ մեկնակ՝ յաղաղակն երթայաք, և հիւրոյն յարուցեալ զբաժակն առեալ գնայր. և տարեալ վաճառէր. և զգինսն առեալ *ի* դպրոց մտանէր և ուսանէր թոշակաւն: (76 / 8) Եւ տեսանէր *ի* տեսլեանն բաժակագողն՝ այր մի եպիսկոպոս նստեալ աթոռով առ խաչին, զոր անապատաւորն կանգնեաց՝ սպիտակազգեստ հանդերձիւ և յոյժ ահաւորագոյն տեսլեամբ և զինքն մերկ կապեալ՝ տանջել հրամայէր *ի վերայ* սրբոյ գերեզմանին: (76 /9; 76 /11) Եւ այնպէս օր ըստ օրէ հրամայէր տանջել, և նորա *ի* բռնութենէ տանջանացն ապաստանի *ի* սուրբ քաղաքն Երուսաղէմ՝ խնդրելով զբոյժ տանջանացն: (77 /1; 77 /1) Եւ տեսանէր դարձեալ անդ *ի* տեղւոջն զնոյն եպիսկոպոսն դժնդակագոյն ևս հարկանել հրամայէր և ասէր. «Չիք հնար բուժել քեզ *ի* տանջանացդ, եթէ ոչ երթեալ խոստովանեսցիս *ի* նմին տեղւոջ, ուստի զբաժակն գոցացար»: (77 /3; 77 /4; 77 /5) Եւ բազումք *ի* գիւղս, ասեն, որ անորդիք լեալ են և եկեալ ուխտեալ և հող առեալ *ի* տեղւոյս՝ որդեծնութեան զաւակի հասին. և ամենայն ջերմոտք և ախտաժէտք հող առեալ՝ վաղվաղակի ընդունէին զառողջութիւն անձանց իւրեանց: (77 /11; 77 /12) Ի ՍՈՑՆ ԽՈՐՀՈՒՐԴ ՏԵՍԻԼ ՄԻ ԵՒ ԽՈՃԿՈՐԻԿԱՅ՝ ՊՈՌՆԿՈՐԴԻՈՅՆ ԵՍՎԱՂԵՆԱՅ՝ ԱՐՔԱՅԻՆ ԱՂՈՒԱՆԻՑ, ՈՐ ԷՐ ԿԱՐԳԵԱԼ ԿՈՂՄՆԱՊԱՀ. ԵՒ ՊԱՏՄԷ ԱՐՔԱՅԻ (78 / 2) Այրն այն Խոճկորիկ անուն, որում *ի* Ցրի երանելին Զաքարիաս և սուրբն Պանդալիոն յայտնեցան, *ի* հասարակ աւուր *ի* քուն կայր և տեսանէր *ի* տեսլեան եօթն այր յեկեղեցւոջն՝ սպիտակ, պճղնաւոր պարեգօտիւք և խոսեալ առն ընդ աբեղայսն՝ ասէ. «Օրհնեալ արք, յորժամ դուք աստ էք, ընդէ՞ր ոչ ցուցանէք զտեղի նշխարաց սրբոյն Գրիգորիսի. զի ոմանք ասեն, եթէ աստ է, և ոմանք եթէ անդ. և մեք յաշխատութեան և *ի* բազում հոգս եմք»: (78 /5; 78 /6; 78 /6; 78 /6; 78 /9) Եւ մի յեօթանցն առաջնորդեալ առնն և ասէ. «Եկ զկնի իմ, և ցուցից քեզ զնշանակեալ տեղին». և տարեալ *ի* տեղին, զոր ցուցեալն էր յառաջ. և տեսանէի, զի երկիրն պատառէր և ընդ պատառուած ճրագ լուցեալ էր և երևէր, և բոց ճրագին յերկուս բաժանեալ բուրէր *ի վեր*: (78 /12; 78 /13) Եւ գայր այրն առ արքունիսն և թուէր, եթէ արքայ *ի* քուն իցէ, և ինքն չիշխէր զարթուցանել: (79 / 1) Եւ անդրէն դարձեալ առ այրն, ասէ. «Արքայ *ի* քուն էր, և ոչ իշխեցի զարթուցանել»: (79 / 3) Մինչև անդրէն դառնայր այրն, երկիրն նոյն պատառեալ կայր, ճրագն լուցեալ, և աբեղայն առընթեր կայր *ի* տեղւոջն: (79 / 5) Եւ զարթուցեալ *ի* քնոյ՝ եկն պատմեաց զայս ամենայն արքային: (79 / 10) Իսկ *ի* վաղիւ անդր յորժամ զառաւօտուն կատարէին զպաշտօն՝ եկեալ միաբանութեամբ ամենեքեան *ի* տեղի նշանաւոր խաչին. և զխորանն արքունի *ի վերայ* տեղւոյն հարեալ. և շուրջ զխորանաւն բէժ ածեալ բացագոյն, և արտաքոյ բեժին ամենայն ժողով եպիսկոպոսացն դասք դասք իւրաքանչիւր

աշակերտօք շուրջ կացեալ զբեժովն, սարկաւագապետացն խաչ *ի* ձեռս, և երիցանցն՝ աւետարանս *ի* գիրկս, և պաշտօնէիցն բուրվառ *ի* ձեռս զանազանութեան խունկս ծխել. և միաբանութեամբ բարբառելոյն, սաղմոսելոյն և բարեբանելոյն զանճառելի երրորդութիւնն՝ հնչէր երկիրն: (79 /12; 79 /13; 79 /14; 80 /3; 80 /3; 80 /4) Իսկ առաքինասէր թագաւորն հոլանեալ և բահ *ի* ձեռն առեալ՝ քաջաբար առնէր զբրածն: (80 / 6) Եւ բարեսէր և յոյժ հաւատացեալ թագուհին զխինձ մատուցեալ թագաւորական զգեստու՝ *ի* հողոյն կրէր փութապէս: (80 / 8) Յայնժամ եպիսկոպոսունք, նի երիցունք, նի նախարարք, նի կանայք նախարարացն իւրաքանչիւր զգեստիւք մեծաւ փափագանօք կրէին *ի դուրս* զհող բրածին. բայց սխալեալ առ կողմամբն առնէին զբրածն. իսկ երանելւոյն նշխարքն յարևելս կոյս մնայր: (80 / 9) Յայնժամ յոյժ տրտմութիւն կալաւ զթագաւորն և զամենայն ժաղովս բանակին, մինչև նստէր ստրջացեալ թագաւորն *ի* մեծագոյն հոգս. և ապա քաջալերեալ արքային ճշմարիտ հաւատով՝ ասէր. «Անսխալ լինի բան ամենակեցոյցն Աստուծոյ՝ երկուց և երից ժողովելոց յանուն կենարարին վաղվաղակի գտանել զինդիր բարւոյն: (80 / 13) Վաղվաղակի առեալ առն միոյ զբահն՝ թողոյր զառաջի բրածին և սկսանէր զկողմանէ յարևելս դիմաւ. և պատահէր ամենասուրբ գերեզմանին երանելւոյն. յոյժ խնդալից եղեալ թագաւորն և ամենեքեան, որ էին *ի* խորանին: (81 / 4) Եւ ազդումն լինէր բազմութեան ժաղովոյն գիւտ նշխարաց սրբոյն. և դիմեալ ամենայն բազմութիւնն *ի* նշխարս սրբոյն՝ առ ոտս կամէին հարկանել զբէժն և զխորանն, մինչև արտաքս ելանել թագաւորին և հազիւ ուրեմն դադարեցուցանել զդիմեալսն: (81 / 6) Իսկ *ի* բանալ գերեզմանին և յերևել նշխարացն՝ անընդելական իմն բուրել հոտ անուշից, մինչև ամենեքեան *ի* թմրութիւն լեալ ժամս բազումս՝ ծածկելով զյոլովիցն խնկարկութեանցն հոտ: (81 /7; 81 /9) Ապա նստէր առ գերեզմանի սրբոյն թագաւորն *ի վերայ* երկրի և *ի* զանազան պատուեալ սպասուց արքունի հրամայէր բերել. և եդեալ սապատ *ի վերայ* ինքեան ծնկացն՝ յոյժ երկիւղիւ սպասէր: (81 /12; 81 /13; 81 /13) Եւ երիցունքն հանելով զնշխարս՝ հաւաքէին *ի վեր ի* սապատն, զոր թագաւորն ունէր *ի* գիրկս իւր: (81 / 14; 81 /15) Եւ գտեալ շիշս երկուս ապակիս առ նոյն նշխարացն. *ի* միում կայր յարենէ Զաքարիայ և *ի* միում *ի* նշխարաց սրբոյն Պանդալիոնի: (81/16; 81 /16; 81 /16) Եւ առեալ զամենն *ի դուրս* ՝ողջունէին ամենայն բազմութիւնն մինչև ցերեկոյ. և կնքեալ արքունի մատանեաւն՝ հրամայէր մեծաւ զգուշութեամբ պահել մինչև ցառաւօտն: (81 / 18) Եւ գտանէին ապակի մի *ի* գերեզմանին նորին Գրիգորիսի ըմպելի, զոր առեալ գոհանայր արքայն զԱստուծոյ ամենակալէ՝ բարեաց տուեցելումն իւր: (82 / 1) Եւ *ի վաղիւ* անդր հրամայեաց զիւր իսկ վառն արկանել *ի վերայ* երկրին և ոսկեղէն մաղզմայս բերել անոյշ գինւով՝ զնշխարսն հրամայէր լուանալ և յարևացուցանել *ի վերայ* ստորարկեալ վառին: (82/3; 82 /3; 82 /4) Անդ ուրեմն գողացեալ աբեղայի միոյ *ի* նշխարացն, որ էր յԱմարասայ վանիցն: (82 / 6) Եւ եկեալ Գրիգորիսի *ի* տեսլեան մեծավայելուչ փառօք, ումեմն երևեալ ասաց զանուն աբեղային և զգողանալն, զոր հարցեալ արքային, խոստովանեալ երեր առաջի նորա զխորեալ մասն: (82 / 7) Եւ տրտնջեալ առն միոյ *ի* քարակրացն՝ սկսաւ հայհոյել զնահատակն Քրիստոսի զԳրիգորիս, ասէր «Մեզ նեռն ընտրեցաւ Գրիգորիսն այն»: (82 / 9) Եւ իսկոյն հասեալ նմա պատուհաս

Աստուծոյ, զգետնեալ յերկրի, դառնայր երեսքն յետս, և այնպէս բազում աւուրս առնէր ընդ առնն, մինչև եկեալ և հող առեալ ի տեղւոյն, ուր կայր գերեզման սրբոյն: (82 / 12) Ահ մեծ յայնժամ անկանէր ի վերայ գործօնէիցն և գործակալացն. և փութապէս երկիւղիւ գործէին զշինուած սուրբ եկեղեցւոյն: (82 /15) Աստանօր հրամայէր թագաւորն տալ մասն իւրաքանչիւրում եպիսկոպոսաց՝ առ ի բաշխել վիճակելոց իւրեանց. և մեծագոյն ինչ մասն յԱմարաս հրամայէր թողուլ ի նշխարացն, և զայլն մեծաւ զգուշութեամբ և զանազան սպասուք ինքն իսկ սպասաւորեալ՝ պահէր թագաւորական կնքով կնքեալ: (82 /17; 82 /18) Եւ ի վերայ գերեզմանին հրամայէր հիմն արկանել մատրան և փութապէս աւարտել և անուանել մատուռն սուրբ Գրիգորիսի: (83 /1) Եւ այնուհետև ոտանաւոր տքնութեամբ անձնապաշտ լեալ արքայն եպիսկոպոսքն հանդերձ ամենեքումբք ցնծալից ուրախութեամբ պաշտէր զհամայնաժողովսն ի ձայն քաղցր, երգս սաղմոսացն յորդագոյնս ի բարեբանութիւնս Աստուծոյ: (83 /4; 83 /5) Եւ քրիստոսաժողով բանակին աւարամասն առեալ զողորմութեանցն Աստուծոյ՝ զբերումն անճառաբար ստանային ի/գրքում՝ և/ ձեռն քրիստոսազգեստ արքային՝ Վաչագանայ (83 / 13) Ելանէր ի բանակէն, և յերրորդում գիշերին, յորում չորրորդն մերկանայր տիւ ի կատարել պաշտամանն, կատարէին զտէրունեան և զկենդանական ահաւոր խորհուրդն: (83 /5; 83 /6) Սա մեծապէս ելեալ ի հանդէսս յայս, դառնայ ըստ որում զգալն էր պատրաստեալ: (83/17) Շարժի ի տեղւոջէն և ի հետիոտս կացեալ արքային, ամենայն բազմութիւնն հանդարտ և ցածագնաց քայլիւք, նման խաղաղացեալ ծովու երթային: (84/1; 84/1) Եւ ի քաղցրաձայն հնչմանցն, ևի ի ճառագայթարձակ նշուլից փողփողելոց օդն զուարճացեալ, ևի հրեշտակք իսկ երգակիցք: (84 / 2; 84 /3) Եւ ինքն իսկ թագաւորն անխոնջ վաստակով՝ որպէս ի գալն, նոյնպէս և ի գնալն անցուցանէր ընդ նոյն գետն և կացուցանել հրամայէր զդեսպակ սրբոցն: (84 /5; 84 /6) Եւ դասս եպիսկոպոսաց, ևի երիցանց և այլ պատուական արանցն առեալ թագաւորին ընդ սրբոցն՝ տանէր մինչև ցՔարուէճ յօթի տեղ և անդ գոհացեալ զամենեցունց թագաւորն և երկրպագութիւն մատուցեալ և շնորհիս եկելոցն ի նորա հրամանսն և գործակցութեան խնդրոյն այնմիկ՝ մատուցանէր և ասէր. «Որոց բարեխօսութեամբ և ձեր աղօթիւք զցանկալին ինձ և ձեզ շնորհողին Քրիստոսի միշտ փառ և գոհութիւն»: (84 / 12) Եւ նոցա միաբան օրհնեալ զթագաւորն զթագուհեաւն հանդերձ և ամենայն դրամբն՝ ասեն. «Զամենայն բարի զոր խնդրեսցես դու յԱստուծոյ, ի ձեռն սրբոյն Գրիգորիսի տացէ քեզ և շնորհեսցէ մեզ լինել քեզ ընդ երկայն աւուրս խաղաղասէր ընդ աշխարհի, և ի փառազարդութիւն եկեղեցւոյ առաւելապէս յարդարելով օր ըստ օրէ. և զվախճանն քո Քրիստոսի խոստովանութեամբ կնքեսցէ կենարարն Քրիստոս և նորին հայրն երկնաւոր»: (84 /16; 84 /18) Եւ առեալ թագաւորին ընդ ինքեան զաւագ եպիսկոպոսապետն Շուփհաղիշոյ գնայր. և յորժամ գեղջ ուրեք ի յայտ ելանէր դեսպակ սրբոցն, իջանէր թագաւորն և հետևակ սպասաւորէր սրբոցն, մինչև տարեալ ընդ շինանիստն անցուցանէր. ոչ որպէս զօրէն թագաւորի փափկութեամբ յօրացելոյ հպարտացեալ, այլ իբրև զկիրթ և յոյժ հմուտ կարգի քրիստոնէութեան՝ արգելավարութեամբ վարեցեալ ի հանգստական փափկութիւնն, և երկասիրութեամբ հմտացեալ հպատակէր պատուիրանացն Աստուծոյ: (85 /2; 85 /5) Այս ձևով գային հասանէին ի սեպհական գիւղն Դիւտական և անդ

հանգուցանէին՝ կատարելով զյիշատակ նոցա մեծապէս. և մեծագնի իւղովք անուշիւք օծանել հրամայէր զնշխարս սրբոցն: (85 /12) Տայ նմա մասն մի հ սրբոյն նշխարացն և հ նմին դաստակերտին մեծապէս կատարի յիշատակ պէսպէս պատուով: (85 /16; 86 /1) Առնոյր և ինքեան մասն, զոր միշտ հ բանակին շրջեցուցանէր ընդ ինքեան: (86 / 2) Եւ զմնացեալն հ նշխարացն կնքեալ՝ մեծաւ զգուշութեամբ տայր պահել հ սուրբ և յազնուական սենեկի, մինչև կատարեսցի հիմնարկութիւն մատրանն, որ հ Դիւտական գեղջն՝ յանուն Պանդալիոնի. զի անդ փոխեալ զերանելին մեծարեսցէ յոյժ: (86 /3; 86 /3; 86 /4) Թողոյր երիցունս և սարկաւագունս և յոլովագոյն գունդ պաշտօնէից, և ինքն հ տարւոջն երկիցս անգամ կատարէր զյիշատակ սրբոցն զերիս երիս աւուրս. և միշտ անձանձրոյթ էր հ պահս և յաղօթս և հ տուրս աղքատաց: (86 /6; 86 /7; 86 /8) Իսկ որոց հ նշխարացն հրամայեաց տալ, պատուէր տայր մեծապէս կատարել զյիշատակ սրբոցն: (86 / 8) Ասէ արքա. «Հոգիք հրաժարեալք հ մարմնոյ զգայո՞ւն են, թէ անզգայ. կամ կենդանիքս ննջեցելոցն զիա՞րդ կարեմք օգնել»: (86 / 15) Եւ զոր օրինակ Դաւիթ զգեցեալ զսպառազինութիւնն Սաւուղայ՝ կաղալ և զթել սկսաւ, իսկ յորժամ մերկացեալ հ բաց ընկէց զծանրութիւն զինուցն և թեթևացեալ յիւրն դարձաւ բնութիւն, սոյնպէս և ոգիք: (87 / 2) Մինչդեռ զգեցեալ զսպառազինութիւն մարմնոյ՝ կան ի ծանրութեան, իսկ յորժամ զսա հ բաց դնիցեն, որպէս եղևն ասացեալ, սրատեսիկ և քաջիմաց և առաւել զգայուն լինին: (87 /3; 87 /5) Եւ որք ասացին անզգայ լինել զհոգին ելեալ հ մարմնոյն, յանդիմանեմ զնոսա Աստուածաշունչ գրոց վկայութեամբ, որ ասէ. «Մովսէս ծառայ իմ վախճանեցաւ, իսկ արդ եկեալ Մովսէս չքնաղագեստն փառօք առաջի Աստուծոյ, ոչ մարմին զգեցեալ, որում Պետրոս բաղձացեալ խնդրէր հ տեառնէ զանդէն բնակութիւնն»: (87 /6; 87 /9) Իսկ եթէ անզգայ էր հոգի մարգարէին, որ ասեն ելեալ հ մարմնոյն, ի՞րր գայր հ զգայութիւն և յայսպէս վայելուչ կերպարանս խօսել ընդ աստուածորդւոյն: (87 /10; 87 /10) Արդ՝ աղէ, ասա, անզգայացեալ հոգւոյն զի՞նչ մեծարանք էին վերակացու լինել քաղաքին նորա, այլ յաղագս կենդանի հոգւոյ մարգարէին արար շնորհս վերակացու լինել քաղաքին՝ փրկել զնոսա հ սրոյ թշնամւոյն: (87 / 18) Եւ առաքեալն Պօղոս ասէ, «Ելանել հ մարմնոյս և ընդ Քրիստոսի լինել՝ լաւ համարիմ». որ և նոյն իսկ կենարար Բանն ասէ ցհայրն. «Ջորս ետուր ցիս, կամիմ զի ընդ իս իցեն և զփառսն իմ տեսցեն»: (87 / 18) Արդ՝ ըստ քո բանիդ անզգայ հոգւոցն ո՞րպէս մարթ էր ընդ տեառն լինել կամ զանճառելի փառսն տեսանել, կամ մեռեալ մեծատանն հոգին հ տանջանարանէն հեռագոյն սրատես աչօք զԱբրահամ և զՂազար տեսանել կամ գիտել ուստի՞ էր. զի յայտնապէս փրկչին ձայն երևեցուցանէ ճշմարիտ առակաւն, եթէ առաւել քան հ մարմնի, յորժամ արտաքսանայ քան զմարմինն, լինի քաջատես և առաւել իմաստուն հոգին: (88 /1; 88 /4) Եւ մեզ ուսոյց ճշմարիտ հաւատն՝ իջումն Աստուծոյ հ դժոխս հ փրկել զնոսա, եթէ արդարև զգայուն են և առաւել իմաստագոյն հոգիք հրաժարելոցն հ մարմնոյ: (88 /8; 88 /8; 88 /9) Եւ տէր Աստուած մեր գթացեալ յայրին՝ յարոյց զմիամօր որդի նորա. և առաքելոցն յայրեացն արտասուս և հ հառաչանս նայելով յարուցին զՏաբիթայն և աւանդեցին զնա նոցա: (89 / 4) Արդ՝ եթէ ընտանեացն աղօթք հ մեռելութենէ հ կենդանութիւն գիտեն ածել, ապա աստուածային զօրութիւն կարի յոյժ. և մեղաց թողութիւն հաւատասցուք առնուլ յուսով

ննջեցելոցն, որք կենդանիքս նոցա խնդրեմք թողութիւն մեղաց, յԱստուծոյ ներողութենէն: (89 /6; 89 /6) ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆ ԿԱՆՈՆԱԿԱՆ Ի ՎԱՉԱԳԱՆԱՅ՝ ՅԱՂՈՒԱՆԻՑ ԱՐՔԱՅԷ, ԵԴԵԱԼ Ի ԺՈՂՈՎՈՅՆ, ՈՐ ՅԱՂՈՒԷՆՆ եղեի (89 /11; 89 /12) Յամս Վաչագանայ՝ Աղուանից արքայի բազում հակառակութիւն լինէին ի մէջ աշխարհականաց և եպիսկոպոսաց և քահանայից, քորեպիսկոպոսաց, ազատաց և ռամկաց: (89 /13) «Ես Վաչագան՝ Աղուանից արքայ, և Շուփհաղիշոյ՝ Պարտաւայ արքեպիսկոպոս, Մանասէ՝ Կապաղակայ եպիսկոպոս, Յունան Հաշուայ եպիսկոպոս, Անանիա և Սահակ, և Ուտոյ Փող եպիսկոպոս, Յովսէփ՝ Կաղանկատուաց երէց, Մատթէ՝ Պարտաւայ երէց, Թոմա՝ թագաւորի դրան երէց, Պօղոս՝ Գայեգուճու երէց, Շմաւոն՝ Ցրւոյ քորեպիսկոպոս, Մատթէ՝ Դարահոճոյ երէց, Աբիկազ՝ Բեդայ երէց, Ուրբաթայր Մանուշէից երէց, Յովէլ և Պարմիդէ ևթ Յակոբ երիցունք, ևթ ազատ մարդիկ, ևթ նահապետք Արցախայ, Բակուր՝ Կաղանկատուաց նահապետ և այլք բազումք, որք միաբան առաջի իմ եկին ի հանդէս ի հովոց՝ ի տեղւոջս յԱղուէն, կարգեցաք այսպէս. (90 / 6; 90 /6; 90 /6) ա. Երիցունք, որ ի շէնս լինին, երկիցս անգամ ի տարւոջն եպիսկոպոսին երկիր պագցեն, և զկարգս հոգևորս ուսցին ի նմանէն ըստ Գրոց. և որպէս կարգն է, ի տարւոջն եպիսկոպոսին ընծայ տարցի: (90 /7; 90 /7; 90 /8; 90 /8) գ. Ազատ մարդոյ և թագաւորազգւոյ որ ինչ հոգւոյ մասն է, տացէ իւրով ձեռամբ ի կենդանութեանն՝ ձի թամբօք և սանձիւք և զոր, ինչ կարողութիւն է իւր՝ տացէ. ապա եթէ ի կենդանութեանն չտայցէ, յետ մահուանն ընտանիքն տացեն: (90 / 2; 90 /13) դ. Պտուղ ի ժողովրդենէ երիցու՝ կարգ այս լիցի. թուանիկն Դ գրիւ ցորեան և Ջ գիւ գարի և ԺՋ փաս քաղցու և որ տառապեալն է հացոյ զկէսն տացէ, և գինի որչափ և կարող է: (90 / 15) Եւ ոյր ոչխարք են, ի տանէ ոչխար մի և Գ զզաթ բուրդ և մի պանիր և ոյր ձիք ի տան իցեն, մին յովանակ, և ոյր պախրէք իցեն, որթ մի: (91 /3; 91 /4) ե. Եթէ ազատ է, եթէ շինական և եթէ այլ ոք յաշխարհականաց ի տարւոջն զպատարագն մի խափանեսցէ, այս ինքն՝ զմեռելոց յիշասակն, որպէս և կարողն է. և անմասն միւթ արասցեն զմեռեալսն ի վաստակոց իւրեանց. և մեռեալ մարդոյն եթէ ձի է՝ մի ձի, զոր և կամի, և եթէ արջառ է՝ մի արջառ, զոր և կամի, յեկեղեցին տայցէ: (91 /6; 91 /8) զ. Վանաց երէց, կամ վանական ոք եթէ ի վանացն գայթանք առնէ, և ի վերայ յայտ լինի, անարգեսցեն զնա և ի տեղւոյն ի բաց հանցեն, և զխոստակն յեկեղեցի կալցին: (91 /10; 91 /10; 91 /11; 91 /11) է. Եթէ վանաց երիցունք բազումք են, և ժողովուրդք սակաւք և այլ վանաց ժողովուրդք բազումք են և երիցունք սակաւք, ի բազում ժողովրդենէն առցեն և տացեն վանացն, որոյ երիցունքն շատ են: (91 / 13) ժա. Եւ որ զկին թողու առանց պատճառանաց և առանց պսակ կին առնէ, ևթ որ անօրէն և մարդասպան է, ևթ կամ զգէտս հարցանէ, զայնպիսին կապեալ ի դուռն արքունի տարցին, և դառն մահ ի վերայ դիցեն: (92 /3; 92 /4) ժբ. Եւ այնք, որ կոծ դնեն, զտանուտէրն և զգուսանսն, կապեսցեն և ի դուռն արքունի տարցին և պատուհաս ի վերայ դիցեն, և ընտանիքն զհետ արտասուել միւթ իշխեսցեն: (92 /5; 92 /6) ժգ. Որ զմեռելոտի ուտէ, որ և ի քառասներորդսն միս ուտէ և որ ի կիւրակէի գործ ինչ գործէ և յեկեղեցի չերթայ, երէցն պատուհաս արասցէ ժողովրդեամբն հանդերձ: (92 / 7; 92 / 7) ժդ. Եւ որ ի չորեքշաբթի և յուրբաթի միս ուտէ յառաջ քան զաղուհացսն, մի

շաբաթ պահեսցէ. և եթէ երիցուն առաջի ոք գայ և վկայէ վասն մարդոյն, թէ չէ այդպէս, աւագն շինոյն կալցի զմարդոյն եզն մի և յերէցն տացէ: (92 / 9) ժե. Եթէ աշխարհական ոք *ի վերայ* երիցու կամ սարկաւագի բամբասանս դնիցէ, և նոքա խոստովանեսցին, եթէ այդպէս իցէ, եպիսկոպոսն դնիցէ *ի վերայ* նոցա կարգ, և յանապատի ապաշխարեսցեն: (92 /12; 92/13) Ապա եթէ ոչ խոստովանեսցին ճշմարտութեամբբ, և զոր այլքն ասեն ճշմարտութեամբ և *ի յայտ գայ*, որպէս *ի* կանոնսն է գրեալ, պատուհաս դիցեն և *ի* բաց հալածեսցեն *ի* շինէն. և եթէ մեղքն չեն յայտ, պատարագ հրամայեսցեն մատուցանել քահանային, և այն երդումն լիցի նմա: (92 /15; 92 /15; 92 /15; 92 /16) ժզ. Եւ եթէ ընկերք իւր և աշակերտք մեղս *ի վերայ* դնիցեն երիցուն և ինքեանք հաւատարիմ են, երէցն առաջի սեղանոյն կացցէ, և ամբաստանողք ժողովրդեանն առաջի *ի* բեմէն *ի վայր* առցեն և *ի* շինէն արտաքս հանցեն: (93 /1; 93 /3; 93 /3; 93 /3) Ապա եթէ ընկերք և աշակերտքն քինով լինին, և ժողովուրդքն գիտէին, եթէ յառաջ խռով էին, քահանայն պատարագ մատուսցէ, և ժողովուրդն անիծիւք *ի բաց* հալածեսցեն: (93 / 5) Եւ թէ խոստովանին, թէ սուտ ասացաք, ապաշխարութիւն *ի վերայ* դիցեն և *ի* վանաց մի հանցեն. իսկ եթէ յետ այնր վնաս ինչ գործեսցեն, կանոնօք դատեսցին: (93 /6; 93 /6) ժէ. Դարձեալ՝ եպիսկոպոսունք և երիցունք զազատ արանց առաջի արքայի եղեն տրտունջ, եթէ *ի* շինի երկուս կամ երիս եկեղեցիս առնեն վանս: (93 / 9) Եւ արքայի առաջի ազատ մարդիկ պայմանեցին, նի արքայի, նի եպիսկոպոսաց, նի ազատաց այսպէս հաճոյ թուեցաւ, եթէ զարարեալ եկեղեցիսն թողցեն և զպտուղ և զհաս եկեղեցւոյ *ի* վասն եկեղեցին տացեն: (93 / 11) ժը. Եւ որ տասնորդս տան ազատ մարդիկ, զկէսն *ի* բուն եկեղեցին տացեն, և զկէսն յիւրեանց եկեղեցին: (93 / 13) ժթ. Կիրակէին տէր և ծառայ *ի* վասն եկեղեցին երթիցեն յաղօթս և զյիշատակ յեկեղեցին արասցեն. այլ անաշխարհիկն զհոգեցատուրն յեկեղեցին տացէ: (93 /15) Եւ երիցուն եթէ յազատէ, կաթմ *ի* ժողովրդականէ վտանգ լինիցի, առանց եպիսկոպոսին գնալ միթ իշխեսցէ: (94 / 2) Եւ յետ այնր որչափ տուգանս տայցէ մարդն, որ *ի* կանոնսն գրեալն է, ընդ օրհնութեամբ արասցեն: (94 / 8) Եթէ *ի* մեր եպիսկոպոսաց, նի յերիցանց, նի յեկեղեցւոյ բերանոյ օրհնեալ լիցի թագաւորն թագուհեաւն և զաւակօքն հանդերձ, և ամենայն աշխարհաւս հանդերձ, որք յայս ժողովս են, օրհնեալ եղիցին: (94 / 10) Եւ վասն առաւել հաստատութեան գրոյս Վաչագանայ՝ Աղուանից արքայի մատանին եդաւ *ի վերայ:* (94/16) Եւ եղև յետ վկայութեանն Գրիգորիսի՝ Աղուանից կաթողիկոսի, բարբարոսական ազգք կողմանցն արևելից վերստին *ի* դիւցախելար կռամոլութիւնս կործանեցան. և բազում ուխտս ատրուշանաց կատարելով յարուցին հալածանս *ի վերայ* քրիստոնէից: (95 /5; 95 /6) Մի ոմն *ի* նախեղելոցն վարդապետաց, որ *ի* հոգւոյն սրբոյ խնամոցն նշանագիր երից ազգացն առնէր՝ Հայոց, Աղուանից և Վրաց. նա այնուհետև և *ի* սուրբն երթայր յԵրուսաղէմ՝ մատուցանել ուխտաւորութիւն: (95 /6; 95 /7; 95 /8) Անտի դարձեալ աշակերտօքն, ընդ ինքեան ունելով զխաչն արծաթեղէն՝ ոսկեխաղաց տեսակաւ, յորում *ի* տէրունեան խաչէն էր մասնաւորեալ: (95 /10) Անցանելով ընդ Հայաստան՝ ճանապարհորդէ հասանել *ի* սահմանս արևելից՝ *ի* գաւառն Ուտիական: (95 /11; 95 /12) Եւ մտեալ բնակէին *ի* ճախճախուտ տեղիս և *ի* լօռաբոյս մօրսն՝ առ տեղեաւն, որում Գիսն կոչեն: (95 /12; 95 /12) Եւ ձգէր

զքարոզութիւն աւետարանին յաշխարհին Ուտիացւոց և յԱղուանս, ևթ Լփինս, ևթ ի Կասպս, և՛ մինչև ի դուռն Չորայ. և զայլազգի ազգսն, զոր գերութեամբն էր ածեալ Աղեքսանդրի Մակեդոնացւոյ և նստուցեալ զմեծ լերամբն Կաւկասու, զԳարգարսն և զԿամիճիկ Հեփթաղսն դարձուցեալ ի հաւատս՝ զկարգ աստուածապաշտութեան ուսուցանէր, զոր ի վաղնջուց ուսեալն՝ էին մոռացեալ: (95 /15; 95 /15; 95 /18; 96 /1) Եւ անտի դարձեալ՝ ի Մօրսն երթեալ բնակէին՝ ղօղեալ ի սպառնալեացն դժնդակ իշխանացն. և անտի անառ, ծածուկ լեալ օր ըստ օրէ հաստատէր զեկեղեցիսն Աստուծոյ: (96 /4; 96 /5) Իսկ երանելւոյն Մաշտոցի ի հոգւոյն սրբոյ ազդեալ՝ փութացեալ փորէր փոս մի ըստ պիտոյից գործոյն և զաստուածային առեալ գանձ, որ է խաչն տէրունական, եդեալ ի տապանի՝ ծածկէր ի գետնափոր կայենի: (96 /8; 96 /10; 96 /10) Եւ այնուհետև հաւատարիմ և զուգակրօն աշակերտօքն միաբան յաղօթս և ի խնդրուածս ապաւինեալ՝ միմեանց կամաւ յերկուս բաժանէին ջոկս: (96 /11) Կէսն ի կոյս կողմանց գաւառացն ելանել խորհէին. կիսոցն բազում աշխարհս հատեալ անցեալ քարոզէին հաւատս: (96 / 12) Բայց մնացեալ դասն ի տեղւոջ կայենի խաչին՝ յետ սակաւ ինչ աւուրց զմարտիրոսական առնուին զպսակ: (96 / 14) Իսկ մի ոմն ի նորահաւատիցն, որ բազում անգամ տեսեալ էր զնշանն զայն, ի վերայ գետնափոր կայենի խաչին շինէ մատուռն մի հողեղէն չորեքկուսի և տապան տախտակամած արարեալ՝ ամփոփէր զնշխարս նոցա ի տապանի անդ և ամ յամէ ուխտաւորեալ կատարէին զյիշատակս նոցա: (96 /18; 97 /1; 97 /2) Եւ յոլովիցն լինէր բժշկութիւն ի տեղւոջն, յորս հաստատեալ նուաճեցան հաւատացեալքն: (97 / 3) Եւ նախ անդ եդեալ հիմունս՝ հաստատէին եկեղեցի Աստուծոյ ի կայարանի խաչին, զոր Հին եկեղեցի տեղւոյն անուանէին, որում Գիսն կոչեն: (97 / 5) Յետ սրբոյն Մաշտոցի սուղ ինչ անցեալ ժամանակ նորին աշակերտեալքն, որ ի կողմանս գաւառացն Աղուանից, գումարեալք ի մի վայր, յազդմանէ սուրբ հոգւոյն խորհրդազգածք լինելով՝ փութային հասանել գործոց բարեաց: (97 /13; 97 /14) «Զի՞նչ մեք արասցուք, ասեն, զի որ մերոյ լուսաւորութեանն էր առիթ, ննջեաց ի Քրիստոս: (97 / 16) Եւ ահա ի նմանէ մնացեալ եմք որբք, եկայք, եղբարք, յաստուածայինն երթիցուք ի քաղաքն Երուսաղէմ. և ի նոցանէ խնդրեսցուք մեզ առաջնորդս. զի բնական լուսաւորութեան երկրիս արևելեայցս ի ձեռն սրբոյն Եղիշայի յԵրուսաղէմէ եղեալ սկիզբն»: (97/16; 97/17; 97/17; 98/1) Յայնժամ հանդերձեցան կազմեցան յերիս բաժանեալ գունդս՝ համբարձեալ ի կողմանցն Աղուանից յառաջ խաղային առ սահմանօքն Ասորեստանի. երթեալ հետևողաբար յԵրուսաղէմեան հասանէին քաղաք: (98 /2) Եւ հանդիպեցան հոգեզուարճ աստուածազարդ հայրապետին՝ տուեալ ողջոյն կղերց եկեղեցւոյն խոնարհամիտ համբուրիւ, ընկալեալ ի նոցանէ լինէին: (98 / 7) Եւ եկեալ հասանէին ի սուրբ պահս քառասնորդացն յեւթներորդ շաբաթու պասեքի զատկին ի խորախոխմ անտառայար և ի մայրաստանիկ աշխարհն Արցախայ՝ գաւառն Մեծ Կուենից: (98 /18; 98 /19; 98 /19) Եւ ի կիրճս ճանապարհին երկաջոկեալ գունդն յերկուս բաժանելով նստէին գուպարս յայնմ տեղւոջ, որում Աստեղն կոչեն բլուր՝ ի հիւսիսոյ կողմանն. և գունդն երկրորդ յայնկոյս Տրտուական գետոյն, ի հարաւական կողմանն ի մայրոլորտ հովտի պուրակի բնակէին՝ Չղախն անուանեցելոյ: (98 /21; 99 /2; 99 /2; 99 /3) Զի ուխտիւք խոստացեալ էին առ միմեանս կատարել ի տեղւոջն զամենասուրբ

զատիկն: (99 / 4) Եւ ածեալ նստուցանէր զղակիշն իւր մերձ *ի* Խաղխաղն քաղաք: (99 / 11) Եւ անդէն արս երիս ընտրեալ և բովանդակեալ գումարէր *ի* ձեռս նոցա զմետասան զօրացն բազմութիւնս և հրամայէր յերիս առաջս առնել՝ ասպատակել *ի վերայ* աշխարհին Աղուանից, Հայոց և Վրաց: (99 /12; 99 /13) Իսկ երրորդ մասն զօրուն հասեալ *ի* մուտ զատկին յԱրցախական գաւառն՝ տայր ասպատակ *ի վերայ* Մեծ Կուենից: (99 / 14; 99 / 15) Ամապարեալ *ի մի վայր* ժողովէին զմասունսն նշխարացն ամենայն. և յերկուս ամփոփեալ արծաթեղէն կողոփս ծածկէին յերկրի: (100 / 2) Եւ զսպասսն ոսկւոյ և արծաթոյ աւար առեալ, ցիր և ցան զսրբութեանցն նշխարս ընդ բլուրն և վիժեալ ճապաղէին և զգլխաւորն քահանայից զերանելին Աթանաս անդրէն նահատակէին և զմնացեալսն գերի առեալ *ի* տեղւոջն բակարգել առնէին: (100 / 10) Բայց կին մի Թագուհի անուն՝ յՈւտի գաւառէ *ի* բնաշխարհիկ ազատաց, *ի* Բագնաց գեղջէ՝ մեծատուն յոյժ, որ նոյն ինքն ընդ երուսաղէմացիսն էր ցանկորդեալ: (100/12; 100/12) Զնա տեսեալ զօրավարին Հոնաց *ի մէջ* գերելոցն, դիւայորդոր բղջախոհական ախտիւն յեղազեղեալ տոփէր *ի* նա, զի գեղեցիկ էր յոյժ: (100 /14; 100 /15) Հրամայէր պահել զնա մեծաւ զգուշութեամբ՝ առնուլ *ի* կնութիւն իւր կամեցեալ: (100 / 15) Եւ զբազումս *ի* նոցանէ սպանանէին և զմնացեալսն գերի վարէին՝ ածելով յԱստեղն բլուր: (100 / 17) Եւ *ի մէջ* գերելոցն ունէին զերկուս քահանայսն՝ ընկերս Աթանասիոսի վկային: (101 / 1) Իսկ նա վառեալ զինու զօրութեամբ տեառն՝ այպանէր զնա, չանսայր, չհաւանէր, ծաղր իսկ առնէր զլկտի բարբարոսովն. «Քաւ լիցի ինձ, ասէ, տալ զզգաստութիւն պարկեշտութեան իմոյ շանազգի և խոզաբարոյ հեթանոսաց, կամ եթէ յերկիւղէ տանջանաց ինչ զանգիտել մինչև *ի* մահ, և փոխանակել զոչ ինչ կեանս ընդ այնմ, որ ոչն անցանէ»: (101 / 9) Եւ համբարձեալ զձեռս իւր առ Աստուած՝ բարբառէր ասելով. «Տէր տերանց և թագաւոր թագաւորաց, միթ յամօթ առնէր զիս՝ զյուսացեալս *ի* քեզ. ամբիծ և ուղիղ պահեաք յառժամանակեայ վտանգէս: (101 / 12) Որպէս շնորհեցեր ինձ զծնունդ աւազանին լուսոյ նորոգման ճանաչել զքեզ, արաթ և այժմ անարատ մնալ ինձ *ի* մեղաց հաւատովք և սրբութեամբ: (101 / 14) Ծագեաք զլոյս ճշմարտութեան քո *ի* սիրտ անզգայ բարբարոսացս. զի և սոքա ծանիցեն զքեզ, միայն ճշմարիտդ Աստուած»: (101 / 15) Իսկ զայն իբրև լուան անօրինացն ջոկք, չոգան պատմեցին իշխանին իւրեանց, զի թարգման կայր *ի միջի* նոցա, որ լսէր զամենայն խօսս նորա: (101 / 17) Եւ իբրև ոչ կարէին հաւանեցուցանել զանհրապուրելի Թագուհին, կապէին զձեռս նորա *ի* յետս և եդին զվարսից նորա, և դժնդակ փշովք անտառի յանապատին ծեծէին զերեսս նորա, և քանցէին մարմինք սրբոյն առհասարակ, և ապա բառնային զգլուխ երանելւոյն սուսերաւ: (102 / 1) Եւ յետ այնորիկ, *ի* նմին գիշերի մինչդեռ արթնական խնճոյիւքն դեգերէին այլազուն իշխանն հանդերձ զօրականօքն և առնէին ծաղրակատակ խնդութիւն, յանկարծակի նշան զարմանալի երևեալ նոցա *ի* տեառնէ: (102 /6; 102 /8) Զի ակն յայտնի ամենեքեան տեսանէին լոյս սաստիկ ծագեալ *ի* տեղւոջն, ուր սուրբն Թագուհի վկայեաց, և ուր ցրեալ պատառած հանդերձի նորա սփիւռ և տարած ընդ երեսս անտառին փայլէին իբրև աստեղս: (102 / 9) Եւ հարուստ ժամանակաւ լոյս աստեղանման ծագեալ *ի* տեղւոջն՝ փարէր *ի վերայ* սրբոցն նահատակացն, զոր տեսեալ բազմութեան մարդկանն, զանուն տեղւոյն Աստեղաբլուր անուանեցին մինչև

ցայսօր: (102 /11; 102 /11) Վասն որոյ յաւետասքանչ հրաշիւք հիանայր իշխանն. և *ի* մեծի ահի եղեալ՝ հրամայէր առ ինքն կոչել զքահանայսն տեառն: (102 / 13) Եւ ուսեալ *ի* նոցանէ զփրկութեանն ճանապարհ՝ հաւատաց յԱստուած կենդանի. և հրամայէր ամփոփել զցրուեալ նշխարս սրբոցն, և պատել սուրբ կտաւովք և ծածկել *ի* բլրին: (102 /14; 102 /16) Եւ անդէն կատարէին յոդեաց և յայծեաց պատարագս օրհնութեան. և զտէրունական զտօնն մեծապայծառ խմբէին յիշատակօք *ի* նոցին վկայելոցն: (102 / 18) ՀԱՒԱՏԱԼՆ ՄԵԾԻ ԶՕՐԱՎԱՐԻՆ ԹՈՒԲԵԼԵԱՆ *Ի* ՔՐԻՍՏՈՍ, ԵԹԷ ՆԱ Է ԱՍՏՈՒԱԾ. ԵԻ ՆԱՀԱՏԱԿԵԼ ԶՕՐՕՔՆ ԵԻ ՈՐԴԻՈՎՔՆ ԵԻ ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ԴԱՍՈՒՔ ՅԻՒՐՄԷ ԹԱԳԱՒՈՐԷՆ ՅԱՇԽԱՐՀԻՍ ԱՂՈՒԱՆԻՑ (103 / 2) *Ի* հասանելն ճշմարտութեանն լուսոյ *ի* սիրտ աստուածարեալ իշխանին Թէոփիլոսի՝ *ի քաց* արձակել զմարդագերիսն հրամայէր. և ինքն չուեալ զայգոյ զատկին հանդերձ քահանայիւքն սրբովքն և այլ բազում հաւատացելովք՝ խաղայր գնայր Ագիստոսեան գնդիւն: (103 /5; 103 /5; 103 /5) Եւ երթեալ, հասեալ յՈւտի գաւառն՝ իջեալ բանակէին առ ափն Կուրական գետոյն, մերձ *ի* նաւահանգիստն Զոմաքատակ կամուրջին: (103 / 9) Բազմահոյլ գերութեամբ և մեծամեծ աւարօքն անցեալ զԿուրական գետովն *ի* յարևելից կուսէ բանակէին յայն կոյս յանդիման նոցա: (103 /11) Զայն տեսեալ քրիստոսազարդին Թէոփիլեայ և Ագիստոսեան գնդին՝ մատուցանէին և նոքա պատարագս Աստուծոյ ըստ կարգի քրիստոսական կրօնից *ի ձեռն* օրհնութեան քահանայիցն սրբոց խաչազարդ յօրինէին զնշանս դրոշիցն իւրեանց: (103 /15) Եւ նախ ողոքանօք և ապա տրտմութեամբ խօսել սկսաւ ընդ նմա և ասէ. «Սիրելի գոլով մերոյս թագաւորութեանս, քաջութեամբ յաղթող երևեալ՝ մեծարեցար յոյժ *ի* մերմէ խնամակալութենէս. վասն որոյ նախապատիւ ես քան զամենեսեան, եռամասնեայ զօրավարութեամբ փառաւորեալդ. ընդէ՞ր դու թողեր զքաջատոհմիկ աստուածս ազգի քո, որ ետ մեզ յաղթութիւն ասպատակիս, և ապստամբեալ քո յինէն քոյովք զօրականօքդ՝ պաշտօն մատուցանէք աստուածոց մերոց, մահապարտ ես դու և զօրականքդ քո *ի միասին*»: (104 /3; 104 /7) Արդ՝ եթէ յառաւելութիւն փառացն Քրիստոսի ծնունդ միաւորեցաւ *ի* մերում բնութեանս շնորհօք լուսոյն գիտել, ճանաչել զԱստուած՝ զարարիչն երկնի և երկրի, զմիահասարակ սուրբ երրորդութիւնն, որ իւրով բարերարութեամբն կամեցաւ մերժել զմեզ *ի* չքոտի կռոցն վնասակարութենէ: (104 /11; 104 /13) Արդ՝ մի՞թէ արգելուլ ինչ կարասցես *ի* մէնջ զշնորհս երկնային, կամ համեմատել զձեր վայրկենի պատիւդ կամի՞ցիս ընդ աստուածային պատուոյն. կամ թէ սպառնալեօք քովք համարեսցիս զանգիտեցուցանել զմեզ և զառժամանակեայս ընտրել կեանս, թողլով զԱստուած՝ անմոնչոց մատուցանել պաշտօն»: (104 /14) Որոց արիաբար կատարեալ զնահատակութեանն մարտ բարեօք վկայութեամբ, ըստ մարտիրոսութեանն հանդիսի *ի* Քրիստոսէ զյաղթութեանն ընդունէին պսակ, սուրբ խոստովանողն Թէոփիլէ քահանայական դասուքն և երեսնեակ զինուորօքն հանդերձ յերկնայինսն փոխէին խորանս: (105 / 2) Յայնժամ չուեալ նոցա ընդ կողմանս հարաւոյ՝ երթեալ հասանէին *ի* բարձրաբերձ կատար լերինն մեծի, որ պարունակեալ շրջագայէ զբազմաւորական գաւառս աշխարհին: (105 / 10) Ապա *ի* հրամանէ անողորմ թագաւորին գունդս գունդս հատանէին, և զկնի լինէին նոցա զօրքն Հոնաց: (105 / 12) Եւ հասեալ նոցա *ի* գլուխ լերինն ջանային բազում ողոքանօք դարձուցանել զնոսա

յերկրպագութիւն կռոցն և *ի* հնազանդութիւն թագաւորին: (105 /13; 105 /14) Եւ ոչ կարացեալ հաւանեցուցանել զնոսա՝ հարկանէին սրովն սուսերի *ի* նմին տեղւոջն: (105 / 15) Ընկալեալ *ի* Քրիստոսէ զմարտիրոսական պսակն՝ փայլին անաղօտ փայլմամբ, *ի* ծագաց հիւսիսոյ յափշտակողք եղեալ անմահ առագաստին ընդ ամենայն սուրբս. ամէն: (105/18; 105/19) ՊԱՏՄՈՒԹԻՒՆ *Ի ԴԷՊ* ԳՐՈՑՍ (106 / 4) Գտանին զրոյցք Արևելից կողմանց, որ ոչ են անկեալ *ի* գիրս հնագիր պատմագրաց, զոր պատշաճ վարկաք մակագրել *ի* տառս տաղաչափութեան մերում: (106 /7; 106 /7) Իսկ զմուբիւտանն մուբիւտն *ի* սեղանն արքունի մեծապատիւ առնէր: (106 / 13) Եւ խոհուրդ բերեալ ընդ մեծամեծս իւր՝ ասէ. «ԶՊարսից և զՊարթևաց զբնական Պահլաւիկս և զազատ արանց զնախադրութիւն քաջ գիտեմ, իսկ զԱրմենու զազատատոհմ և զնոցին նախապատուութիւն ոչ կարացաք գիտել՝ ոչ *ի* հարցն մերոց թագաւորաց և ոչ *ի* մատենագրաց: (107 /1; 107 /2) Եւ արդ՝ մի յերկուց առաջի կայ ձեզ նախարարացդ Հայոց՝ ցուցանել զնախնական գիր, զիւրաքանչիւր տանց զաստիճան և զպատիւ և դարձեալ մեծագոյն ունել *ի* մէնջ շքեղաշուք մեծարանս: (107 / 4) Եւ հրամայեալ ընթեռնուլ և թարգմանել *ի* պարսիկ գիր և լեզու: (107 / 10) Եւ իմացեալ, եթէ սկիզբն յԱրտաշրէ առնէ՝ *ի* նախնւոյն իւրմէ, առաւել զուարճացեալ, և ներբողումն գրոցն առնելով՝ դնէր *ի վերայ* աչաց իւրոց խանդաղատելով: (107 /10; 107 /11) Եւ գտեալ *ի* նմա գիր տասնևեօթն բարձի: (107 / 12) սկսանէր ըստ այնմ յարդարել զնիստ իւրաքանչիւրոցն *ի* սեղանն արքունի: (107 / 13) Յայնժամ հասանէր համբաւ *ի* դուռն արքունի, եթէ Խազիրք բազմամբոխ գնդիւք ելին ընդ դուռն Չորայ յաշխարհս մեր: (107 / 15) Եւ ել գնաց անհամար զօրօքն *ի դիմի հարկանել* նոցա: (108 / 1) Հազար և եօթն հարիւր արամբք, ժիր և քաջագնաց երիվարօք հասանէր *ի* քաղաքն Տիզբոն և զզօրսն թաքուցանէր արտաքոյ քաղաքին, և պակաս վաշտկօք մտեալ *ի* քաղաքն՝ հարցանէր՝ *ի չքմեղս եղեալ*, եթէ ես առ Շապուհ եկի: (108 /6; 108 /7; 108 /7) Եւ քաղաքացիքն յոյժ պատուեալ զնա. և ընդ լուսանալ առաւօտուն դիմեաց զօրն *ի ներքս:* (108 / 8) Եւ առին զգանձս ուսկւոյ և արծաթոյ անհամարս, նի զոհարս ականց պատուականաց, նի զշաւարն բազմագինս, նի զոր ինչ բառնալն կարացին *ի* թագաւորական տանէն, և զամենայն մեծամեծաց տանց աւար առեալ յոյժ անբաւս, ժողովէ զամենայն *ի* Բաղաբերդ: (108 /10; 108 /11) Եւ զամենայն գաւառացն իւրոց դարմանս անասնոց այրել հրամայեաց, և զոր ինչ ուտելի է մարդոյ, *ի* բերդն հաւաքեաց, և զէն, օճառս, և զկազմածս հեծելոց: (108 / 13) Եւ ժողովեալ աշխարհին որ ինչ եկեղեցւոյ էր զարդ, զամենայն բերեալ *ի* Շաղատու եկեղեցին. հաւաքէին և զնշխարս սրբոց և լալով համբուրէին իւրաքանչիւր ոք: (108 / 15) Եւ Ը օր ցայգապաշտօն արարեալ՝ արարին հողաբլուր *ի վերայ* եկեղեցւոյն. և ինքեանք ցրուեցան ընդ ամենայն երկիր. և ոչ ոք իշխէր ասել զանուն Սիւնեաց, և ԻԵ տարի անմարդ, ապալեր կայր երկիրն ամենայն: (108 / 17) Ապա եկեալ Շապուհ արքայ *ի* վճարմանէ պատերազմին, ետես զաղէտսն, լի ցասմամբ ետ հրաման ամենայն զօրացն ելանել *ի* Սիւնիս, գերել զխօսուն և զանասուն: (108 / 21; 109 / 1) Եւ եկեալ ոչ ինչ գտանէին, և *ի* շրջելն հասին յԵկեղեցաբլուրն Շաղատու և ելեալ *ի վեր*: (109 /2; 109 /2) Շարժումն մեծ եղեալ ահացեալք *ի բաց* գնացին գունդն Պարսից հանդերձ Աթաշխոդաիւ՝ զօրապետիւն իւրեանց: (109 / 3) Յայնժամ Անդոկայ պարապ գտեալ ժամ՝ թողու զբերդն և մեծաւ աւարաւ

անցանէ ի Հռովմայեցւոց աշխարհն: (109 / 9) Եւ նորին որդին՝ Բաբիկ փափագեալ ի հող հայրենի. որպէս քաղցր են ծնողք, նոյն և գաւառք: (109 /11) Երթայ գնայ ի դուռն Շապհոյ արքային Պարսից և անդ ումեմն ի զօրականացն պատահեալ՝ զետեղի: (109 /12; 109 /12) Յայնժամ ելեալ հոնն ի Հոնաց՝ Հոնագուր անուն, աւար առեալ զաշխարհն Պարսից՝ յղեալ առ Շապուհ՝ ասէր. «Զի՞ է հեղումն արեանս. եկ մենամարտեսցուք դու և ես»: (109 / 15) Եւ ինքն հոնն վառեալ էր յիսնանիւթեայ զրահիւք զբարձր և զլայն հասակն և բևեռապինդ սաղաւարտիւ զահագին գլուխն և զերեքթզեան ճակատն պղնձեան տախտակաւ յօրինեալ և զանհեթեթ գեղարդն ի բարձրամայր փայտից, և զսուսերն բոցանշան ունելով՝ ահաբեկ զտեսողսն առնէր: (110 / 2) Եւ նոյնժամայն ապաւինեալ ի վերին օգնականութիւնն ասէ. «Եկեղեցիք Սիւնեաց, օգնեցէք ինձ»: (110 / 7) Եւ առեալ զիւրոյ զօրութեանն զզէն և ճաճանչաւոր մարգարտական զրահիւք արքունի զվայելչականն զայն՝ զարդարէր զհասակ, և վազրակերպեան սաղաւարտիւն զգեղեցիկ գլուխն հիւսեալ, սուսէր ընդ մէջ, զոսկիակապ վահանն յահեակ ուսն ընկեցեալ և զգեղարդն քաջամուխ յաջ բազուկն առեալ աշտանակէր ի սեաւն երիվար և խոյանայր ընդդէմ թշնամւոյն. յարձակէին ի միմեանս: (110 /12; 110 /13) Դատապարտիւր անհնարին հսկայն, և յաղթողանայր քաջն Բաբիկ, ածապարէր ի սուրն միասեռի, որով անդէն սատակէր զմարդախոշոշ զազանն: (110 /14) Եւ լցեալ Շապուհ մեծաւ ցնծութեամբ՝ կոչէ զԲաբիկ առ ի կատարել զառ ի նա խոստմունսն. և նորա բան խնդրեալ ասէ. «Բարձցի սանդն պղնձի ի դրանէ քումմէ»: (110 /16; 110 /16; 111 /1) Եւ սանդն էր լի մոխրով հնոցի. և որք գային ի տեղին յայն՝ կոփէին ի նմա և ասէին. «Սիւնեաց տէրութիւնն ընդ այս մոխիր ի վայր լիցի, և կեանքն և խորհուրդն»: (111/1; 111 /2; 111 /2) Եւ արքայ մեծաւ զարմացմամբ հրամայեաց բառնալ զսանդն ի տեղւոջէն: (111 / 3) Եւ ապա խնդրէր Բաբիկ յարքայէն զբնական աշխարհն իւր ի նա դարձուցանել. և շնորհեալ մնա արքայի՝ մեծաւ պատուով առաքէ զնա յաշխարհն իւր: (111 / 4) Եւ եկեալ էանց ընդ Երասխ գետ և շինեալ գիւղ մի Ակորզ անուն, այսինքն՝ է առաջին կորզեալ ի հայրենեացն: (111 / 8) Եւ յառաջին ամի տէրութեանն իւրոյ ելեալ յորս՝ շրջէր և տեսանէր ապալեր զերկիրն. և հասեալ ի Շաղատ՝ ելանէ ի բլուր մի, և անտի փախչի եղջերու մի, դէպ ելանէ յԵկեղեցաբլուրն: (111 / 9; 111 / 9) Եւ Բաբիկ զհետ մտեալ, եղջերուն ի բլրին աներևոյթ լինէր. և ոտք երիվարին խրեցան ի բլրին. որ իջեալ յերիվարէն՝ հազիւ ուրեմն քարշէր զերիվարն: (111 /10; 111 /11) Արտաքս պեղէին զհողն ի բլրէն և գտանէին զգեղեցկաշէն եկեղեցին՝ լի աստուածային գանձիւն և հոտ անոյշ բուրեալ: (111 /12) Զայն օր մեծապէս կատարեցին տօն. ժողովք լեալ և բազում բժշկութիւնք լինէին, որք ի ժամուն դիպեցան անդ: (111 /15) Որ և սուրբքն Վարդանանք նահատակեցան ի նմին Յազկերտէ ՌԿԶ արք ընտիրք: (112 / 3) ՈՐ ԻՆՉ ՅԱՆՕՐԷՆ ՅԱՋԿԵՐՏԷ ՎՏԱՆԳԷՐ ԱՂՈՒԱՆՔ ԵԻ ԳՏԱՆԵԼ ԶՓՐԿՈՒԹԻԻՆ Ի ՎԱՐԴԱՆԱՅ ՀԱՅՈՑ ԶՕՐԱՎԱՐԷ (112 / 8) Ի ժամանակս Յազկերտի ամբարշտի վառէր, բորբոքէր սատանայ ի միտս նորա բառնալ զքրիստոնէութեան կրօնս: (112 /9; 112 /9) Նոյն աղէտք և ի Հայս գործեցան ի նոյն թագաւորէն: (112 /11; 112 /12) Բայց դէմ եղեալ հազարապետն Աղուանից և սուրբ եպիսկոպոսապետն աշխարհիս՝ հասանեն ի միաբան յուխտ Հայաստանեայց՝ պատմել զանցս աղետին եթէ մեծաւ տագնապաւ փութացուցանէր զզօրսն իւր. և ասէին. «Գունդն Պարսից,

որ էր ի կողմանս աշխարհին Հոնաց, դարձաւ այսրէն, եկն եմուտ յաշխարհն մեր. և բազում ևս այլ այրևձի, որ ի դրանէ եկին: (112 /13; 112 /15; 112 /16) Եւ հրամանաւ արքայի ստիպեն զամենեսեան և ասեն. «Եթէ կամաւ յանձն առնուք զօրէնս, պարգևս և պատիւս գտանէք ի նմանէ, և թողութիւն հարկաց արքունի լինի ձեզ: (113 / 2) Ապա եթէ կամաւ զայդ ոչ առնէք, հրաման ունիմք ի գիւղս և յագարակս շինել ատրուշանս և զվռամական կրակն ի ներքս դնել և կացուցանել մոգս և մոգպետս օրէնսդիրս աշխարհիս: (113 /4; 113 /4) Յայնժամ գրեցին գունդն Հայոց առ Թէոդոս կայսր՝ օգնել նոցա ի մեծի վտանգին: (113 /10) Եւ ոչ ուստեք գտեալ օգնականութիւն քաջացն Հայոց՝ ի վերին ապաւինեալ յամենակալ զօրութիւն բարձրելոյն՝ յերիս բաժանեալ զզօրսն Հայոց, զառաջինն տան ցՆերշապուհ Ռմբոսեան պահապան Ասրպատական կողմանն, և զերկրորդ գունդն տան ի ձեռն Վարդանայ զօրավարին Հայոց՝ անցանել ընդ սահմանս Վրաց ի վերայ մարզպանին Չորայ, որ եկեալ էր աւերել զեկեղեցիսն Աղուանից: (113/12; 113/15; 113/16) «Արդ պատրաստ լեր ի դիմի ելանել, զի իսպառ սատակեացես զդոսա»: (114 /1) Զոր զգացեալ Մերսեբուխտայ զքաջալերսն ի Վասակայ՝ ոչ եկաց ի կողմանս Չորայ, այլ կուտեաց զամենայն բազմութիւն զօրաց իւոց և փութանակի գայ անցանէ ընդ գետն մեծ Կուր և պատահէ նմա ի սահմանս Վրաց հանդէպ Խաղխաղ քաղաքի, որ ձմերոց էր թագաւորացն Աղուանից: (114 /3; 114 /3; 114 /5) Ռազմ եղեալ՝ զբոլոր մեծութիւն դաշտին ի ներքս փակէր՝ զինեալք և վառեալք ի մարտ պատերազմի ընդդէմ գնդին Հայոց: (114 /6; 114 /7) Իսկ քաջն Վարդան և զօրքն, որ ընդ նմա, իբրև տեսին զբազմութիւն հեթանոսացն, նայեցան և յիւրեանց սակաւութիւնն, թէպէտև կարի իսկ նուազք էին քան զնոսա, ոչ ինչ զանգիտէին առ ի յոյժ բազմութենէն. այլ առհասարակ միաբանեցին և ամբարձեալ յերկինս զձայնս իւրեանց՝ ասեն. «Դատեաւ, տէր, զայնոսիկ, որ դատին զմեզ. մարտիքր ընդ այնոսիկ, որ մարտնչինն ընդ մոզ. զինու և ասպարաւ քո օգնեա մեզ, շարժեաւ և դողացո՛ զգունդ անօրինացն»: (114 / 11) Եւ այսպէս կացեալ յաղօթս և խումբ արարեալ յարձակէին քաջքն Հայոց և զաջ թևն բեկեալ զձախոյ կողմամբն արկանէին և սրոյ ճարակ զամենեսեան առնէին ընդ երեսս դաշտին. փախստականս արկանէին յամուր տեղիս մայրեացն առ խորագոյն դարիւք Լուբնաս գետոյ, ուր ընդդէմ դարձեալ թագաւորազանց ոմանց Բաղասական արքայի. անդ ընկեցին ի ձիոյ զոմն ի նախարարացն Հայոց ի գնդէն Դիմաքսենից, զՄուշն սպանէին, զԳազրիկն վիրաւորեցին: (114 /19; 114 /19; 114 /19) Յայնմ տեղւոջ զդետակն ի վեր ամբառնայր Արշաւիր Արշարունի, գոչէր առիւծաբար և յարձակէր վարազապէս. սատակէր զՎուրկն քաջ՝ զեղբայր թագաւորին Լփինաց և զայլս անհամարս, զորս յայսմ տեղւոջ սատակէր: (115 / 1) Եւ այնպէս ամենեքին այր զընկեր իւր ախոյեան կործանէր. առ յոյժ յանդուգն յարձակմանէն բազումք այն էին, զոր գետասույզ առնէին, քան զանկեալսն սրով ի ցամաքի: (115 / 5) Եւ ի բազմութենէ անկելոցն յստակ ջուր գետոյն յարիւն դառնայր. և ոչ գտանէր ոք ի նոցանէ ամենևին ապրեալ և թաքուցեալ յանտառախիտ մայրիսն դաշտաց: (115 /5; 115 /6) Իսկ մի ոմն ի զօրացն թշնամեաց զինու հանդերձ ելեալ ի նիստ երիվարին՝ անցանէր ընդ մեծ գետն մազապուրծ զերծեալ գոյժ տանէր ի բուն բանակն, որք փախստեայ անկանէին ի մեծ շահաստանն: (115 / 7; 115 /9; 115 /10; 115 /10) Եւ դարձեալ

յարձակէին քաջաբար *ի վերայ* բերդից և քաղաքաց, զոր ունէին պարսիկք յաշխարհիս Աղուանից: (115 / 14) Եւ բազումք *ի* նախարարացն Աղուանից և *ի* շինականաց, որք վասն անուանն Աստուծոյ ցրուեալք և վատնեալք էին յամուրս լերանց Կապկոհի, իբրև տեսին զմեծ յաղթութիւն գնդին Հայոց, գային ժողովէին և նոքա և խառնէին *ի* զօրս նոցա. և միաբանեալ կցորդ լինէին նահատակութեան նոցա: (116 /1; 116 /1; 116 /3) Խաղային գնային այնուհետև *ի վերայ* պահակին Հոնաց, զոր ունէին բռնութեամբ Պարսիկք, առնուին քանդէին զպահակն և կոտորէին զզօրսն որ բնակեալ էին *ի ներքս*. և զդուռն տային *ի* ձեռն Վահանայ ումեմն, որ էր յազգէ թագաւորացն Աղուանից: (116 /4; 116 /7; 116 /7) Եւ յայսր ամենայն քաջութեանց վերայ ոչ ոք անկաւ *ի* նոցանէ, բայց միայն Մուշն, որ նահատակեցաւն: (116 / 8) Իսկ նոքա իբրև զայն լուան, իսկոյն հասին *ի* տեղին, և ականատեսք լինէին յաջողմանն. և երդմամբ եդին ուխտ օրինօքն իւրեանց, յանձն առին զերդումն քրիստնէութեան՝ պահել ընդ նոսա հաստատուն միաբանութիւն և այսպէս կատարեալ զամենայն ըստ կարգի իւրեանց: (116 / 12) Եւ մինչդեռ *ի* տեղիսն էին, գուժական հասանէր յերկրէն Հայոց վասն ուրացողին Վասակայ՝ եթէ աւերեաց զբազում երկիրս Հայոց: (116 / 16) Այս եղև *ի* ժամանակս Յազկերտի արքայի *ի մէջ* Աղուանից և Հայոց վերնոյն օգնականութեամբ: (117 /2; 117 /2) Որոց կամաւ առեալ յանձն զվարդապետութիւնն նորա ըստ շնորհելոյ նմա յաստուածուստ պարգևին, որ Հայոց և Վրաց ետ նշանագիր *ի ձեռն* նորա հոգին սուրբ: (117 / 13) Հաճեցան և ետուն մանկունս ընտիրս յուսումն. և զԲենիամին թարգման կոչեալ *ի* Սիւնեաց, զոր Վասակ Մանուկ *ի ձեռն* Անանէի եպիսկոպոսին արձակեաց: (117 /15; 117 /15) Թողու աստ վերակացու զաշակերտն իւր Յովնաթան, և *ի* տան թագաւորի կարգեալ քահանայս՝ դառնայ *ի* Հայս: (117 /18; 118/1) Անցանէ *ի* Բիւզանդիոն առ Թեոդոս թագաւոր և դարձեալ անտի՝ շրջէր աշակերտօքն: (118 / 1) Եւ լուեալ եթէ *ի* Գարդման մնացեալ է հեթանոսական աղանդ, դառնայ *ի* Սիւնեաց և գայ առ Խուրս՝ Գարդմանայ իշխան և նովաւ ածէ յուղղութիւն, և ինքն գնայ *ի* կոչ բդեշխին Վրաց Աշուշայ վասն նորին գործոյ: (118 /2; 118 /3; 118 /4) *Ի* նմին ժամանակի երևեցաւ Նեստոր անիծեալ, որ նզովեցաւ յերկերիւրոցն յԵփեսոս: (118 / 5) Եւ յԵրկրորդ Յազկերտի արքայի յառաջին ամին փոխի սուրբն Սահակ յելս նաւասարդի ամսոյ. և յետ վեց ամսոյ անցանելոյ փոխի և երանելի վարդապետն Մեսրոպ *ի* Վաղարշապատ քաղաքի՝ հանգուցեալ ընդ սուրբս: (118 / 7) խոսրով ոմն՝ Գարդմանայ նախարար գնացեալ *ի* Հայս. եղև նմա լինել առաջի Շապհոյ՝ անարի թագաւորին. գինեզինեալ *ի* խնճոյսն՝ սեղեխաբար վաւաշէր *ի* կին մի. ընդ որ ցասուցեալ Շապհոյ՝ զնդանել զնա հրամայեաց. և նա *ի* վաղակաւորն յեցեալ՝ անց գնաց, և ոչ ոք իշխեաց ձգել *ի* նա ձեռն: (118 /9; 118 /10; 118 /10; 118 /11; 118 /12) ՓՈԽՈՒՄՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌՈՅՆ ԱՂՈՒԱՆԻՑ *Ի* ՉՈՐԱՅ ԵՒ ՆՍՏՈՒՑԱՆԵԼ *Ի* ՄԵԾ ՔԱՂԱՔԻՆ ՊԱՐՏԱՒ ԶԱԹՈՌԱԿԱԼՈՒԹԻՒՆՆ ՍԱԿՍ ԽԱԶՐԱՑ ՀԻՆԻՆ ԶՈՐ ՅԵԼՍՆ ԻՒՐԵԱՆՑ ԱՒԵՐԵՑԻՆ (118 /15; 118 /15) Յետ այսորիկ գերեցաւ *ի* Խազրաց աշխարհս Աղուաից. հրկէզ եղեն եկեղեցիք և կտակարանք: (118 / 18) Ապա յերկրորդ ամին Խոսրովու՝ արքայից արքայի, յորում զսկիզբն հայ թուականին եդին, *ի* սոյն ամի փոխեցին զաթոռ հայրապետութեանն Աղուանից *ի* Չորայ քաղաքէն *ի* մայրաքաղաքն Պարտաւ վասն հինահալած արշաւանաց թշնամեաց խաչին Քրիստոսի: (119 /2; 119 /3;

119 /3) Եւ նստուցին հայրապետ զտէր Աբաս ի գաւառէն Մեծիրանց, որ կալեալ զաթոռն ամս ԽԴ, սրբական վարուք կեցեալ փոխադրի յանմահ կեանսն: (119 / 4) ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻԻՆ ՎԿԱՅԵԼՈՅՆ Ի ԴԻՋԱՓԱՅՏ ԼԵՐԻՆՆ ԵԻ ԵՐԵՒՈՒՄՆ ՆՇԽԱՐԱՅՆ ՅԱՒՈՒՐՍ ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆՆ ԱԲԱՍԱՅ (119 / 8) Յառաջ քան զտեսչաւորելն տեառն Աբասայ Աղուանից աշխարհիս ի թշնամեաց հրդեհեցան վկայարանքն. ի Դիզափայտ լերինն ի Կատարոյ վանս, որ ի ժամանակս Վաչագանայ Աղուանից արքայի և Գառնիկայ՝ Ամարասայ եպիսկոպոսի, յայտնեցան, որոց անուանքն են այսոքիկ՝ սուրբն Մովսէս, սուրբն Դանիէլ, սուրբն Եղիա: (119/10; 119/11; 119 /11; 119 /11) Ամենեքեան սոքա ի լեառնն Դիզափայտ աճապարեալ խոտաբուտ կենօք, զորոց զհետ եկեալ արիւնարբուն Սանեսան՝ ի սուր սուսերի արկ զնոսա ի Թ նաւասարդի ամսոյ. որոց բարեխօսութեամբ միշտ գթասցի Աստուած Աղուանից աշխարհիս և Հայաստանեայց երկրին: (119 /15; 119 /16; 119 /16) Յառաջնումն ամի հայրապետութեանն տեառն Աբասայ տեսի ես անարժանս Վեհիկ ի տեսլեան այր մի անապատական, որ ունէր նշան աստուածային խաչին ընդգրկեալ. և ասէր ցիս անուն իմ: (120 / 4) Արդ եթէ երկրպագեաք խաչիս և միթ մերձեսցիս ի սա»: (120 / 7) Եւ ես զարթուցեալ ի քնոյն՝ ոչ ինչ փոյթ առնէի զիրացն: (120 / 7) Եւ յետ երկուց ամաց տեսանէի ի տեսլեան որպէս եթէ սուրբն Վարոս ի կերպ աբեղայի ասէր ցիս. «Մեք եմք նշխարք ծածկեալ ի գաւառին Արցախայ՝ ի Մխանց տոհմին ի վայրս Կաղսէտու: (120 /8; 120 /8; 120 /9; 120 /9; 120 /10) Նախավկայն է տէրն Ստեփաննոս և Թէոդորոս նահատակ, սուրբքն Վարոս, Մամաս, Մար, Սարգիս, Գէորգիոս վկայ, Կոզմաս և Դամիանոս և մասն մի ի սուրբ քառասնիցն»: (120 / 11) Եւ երեկր այր մի նոյն ձևով և ասէր ցիս. «Ես եմ Բասիրա՝ ծառայ Քրիստոսի, որ չարչարեցայ ի խաչի և խնդրեցի ի փրկչէն մի կորնչել նշխարաց իմոց. և որք մասին ցանկան ի սուրբ խաչէս, ընկալցին. և է մասն մի յայն խաչէն և մասն մի յաստուածընկալ նշանէն»: (120 /13; 120 /13; 120 /14) Եւ ես Վեհիկ հիացեալ կայի ընդ միտս իմ՝ մինչև ցեօթն անգամ խնդրելով յամենողորմէն Աստուծոյ և ի սուրբ վկայիցս՝ ստուգութեամբ և ճշմարտապէս ցուցանել զխորհուրդ տեսլեանն: (120 / 16) Եւ յաճախէր ևս առաւել նոյն տեսիլն, և ճեպէր զհանելն, զի դեռ ի նեղի եմք, ասէր: (121 / 1) Եւ երագութեամբ ընթացաւ այրն հաւատարիմ հանգերձ Բոհիւ քահանայիւ և Եզեկիէլիւ դպրաւ, որք փութանակի հասին ի վայրս Կաղսէտու առ իս Վեհիկս: (121 / 6) Հասին և այլքն ի հանդէսն գործակից մեզ. Աբաս՝ Մոմհարէից երէց հօտիւն իւրով և Մարկոս քահանայ իւրով եղբարբք և հայր Տիրիթ ի Յովհաննու վանից՝ յանապատէն Քարմեղինայ և այլ բազմութիւն յոյժ հաւատացելոց: (121 /7; 121 /8) Եւ յանկարծակի եղև բուրումն անուշահոտութեան ի տեղւոջն. և յայտնեցաւ ծածկեալ գանձն ըստ փրկչական բանին, եթէ չէ պարտ թաքչել լուսոյ և դնել ընդ գրուանաւ: (121 / 11) Որոց ի յայտնելն արար Աստուած ողորմութիւն աշխարհիս Աղուանից և քաղցրութիւն առողջական վայրին Կաղսէտու: (121 / 14) Եւ նոյնժամայն մեծապէս օրհնաբանութիւն Աստուծոյ և գովեստ սրբոցն տուեալ ժողովոյն՝ ամփոփեցին զնշխարսն ի պատուական ինչ տեղարանս՝ յիւրաքանչիւրոցն առեալ մասն: (121 / 17) Ընդ որ յոյժ հրճուեալ նորա, ի գալ սրբոցն տօնախմբէ զնոցին հիշատակ և դնէ ի մաքրագոյն յարկեղս: (122/1; 122/2) Ի Յովհաննիսէ՝ Հայոց կաթողիկոսէ, յԱբրահամէ՝ Տարօնոյ

եպիսկոպոսէ, ի Գրիգորէ՝ Մարդպետական եպիսկոպոսէ, ի Ստեփաննոսէ՝ Տայոց եպիսկոպոսէ, ի Մաշտոցէ՝ Խորխոռունեաց եպիսկոպոսէ, ի Գիւտայ՝ Վանանդայ եպիսկոպոսէ, յԱբղիշուէ՝ Ասորեաց եպիսկոպոսէ, ի Պապայ՝ Ամատունեաց եպիսկոպոսէ, ի Քրիստափորէ՝ Ռշտունեաց եպիսկոպոսէ, ի Սեկունդոսէ՝ Մոկաց եպիսկոպոսէ և յայլ ամենայն եպիսկոպոսաց Հայաստանեայց օրհնութեամբ ողջոյն: (122 /11; 122 /11; 122/12; 122 /12; 122 /13; 122 /14; 122 /14; 122 /15) Քանզի եհաս մեզ լուր դժնդակ համբաւու, եթէ են ոմանք գայլք հափշտակողք զգեստուք ոչխարաց, որ եկին յաշխարհիդ ձեր ի վանաց պղծոյն Պետրոսի, որ անուամբ աղքատասէրք կոչին և գործովք՝ քրիստոսատեացք և ուրացողք զսուրբ երրորդութիւնն, զչար որոմն անիծելոյն Նեստորի և զժողովոյն Քաղկեդոնի անարգելաբար սերմանեն ի հոգիս անմեղաց՝ թիւրելով զնոսա յուղղափառ հաւատոյն՝ մատնել ի յաւիտենական կորուստն: (123 /2; 123 /4; 123 /5) Վասն որոյ ամենայն հարկաւորութեամբ փութացաք կարեկից լինել ձեզ և գրել՝ յիշեցուցանելով ձեզ զբանս սրբոյ առաքելոյն զգուշանալ անձանց և հօտիդ, յորում եդ զձեզ հոգին սուրբ տեսուչս և վարդապետս՝ հաստատուն ունելով զհաւատս ուղղափառութեան, զոր ընկալան հարքն մեր ի Սրբոց գրոց՝ Հին և Նոր Կտակարանաց ի ձեռն սրբոյն Գրիգորի և յերից երանեալ ժողովոցն՝ ՅԺԸ –իցն ի Նիկիա, և ՃՁ-իցն ի Կոստանդնուպօլիս, և Մ-իցն յԵփեսոս, որոց ձայնակիցք և ժառանգորդք եղաք ուղղափառ նոցա հաւատոյն, այսինքն ամենայն եկեղեցիք Քրիստոսի Աստուծոյ: (123/10; 123/10; 123/11; 123/11) Խոստովանիմք զմի Աստուած հայր ամենակալ՝ զարարողն ամենայնի և զմի տէր Յիսուս Քրիստոս՝ որդի Աստուծոյ, ծնեալ ի հօրէ, Աստուած ճշմարիտ յԱստուծոյ ճշմարտէ, որով ամենայն: (123 / 15) Եւ սուրբ հոգին ելող ի հօրէ՝ ընդ հօր և ընդ որդւոյ երկրպագեալ և փառաւորեալ՝ արարչակից և հաւասար Երրորդութեանն, կատարեալ միով բնութեամբ, փառօք և զօրութեամբ՝ նախախնամելով զընդհանուր եղեալսս: (123 / 16) Իսկ ի վախճան յաւիտենիս Աստուած գոլով մշտնջենաւոր բանն Աստուծոյ՝ եղև մարդ կատարեալ անյեղապէս, մարմնացեալ անճառապէս ի սուրբ կուսէն, ոչ հեռացեալ ի բնութենէն, և ոչ քայքայեալ ի մարմնաւորութիւն, այլ եկաց մնաց որ էրն. նոյն անփոփոխելի Աստուած մարմնացեալ ոչ մասամբ, այլ բոլորովիմբ. ոչ երկուութիւն, այլ միութիւն անբաժանելի. ոչ հայր մարմնազգեաց, այլ որդի. ոչ սուրբ հոգին մարմնացեալ թանձրաձև, այլ միածինն ի հօրէ. բայց կամաւ և հօր զօրութեամբ և սուրբ հոգւոյն. այլ գոյութեամբ միայն բանն Աստուծ: (124/3; 124/4; 124/4; 124/5; 124/8) Նոյն ինքն անբովանդակելին խանձարրապատեցաւ, զի մեք զգեցցուք զանապականութիւն. եղաւ ի մսուր, զի մեք զանասնական բարսն ի բաց դիցուք. ի հրեշտակաց փառաւորեցաւ, զի մեք լիցուք նոցա երգակից. ընծայեցաւ ի մոգուց, զի պտղաբերեսցուք զհաւատս. կաթամբ բուծեցաւ, զի զանմեղութիւն ընկալցուք. զարգացաւ ըստ մարմնոյ ամենակատարն, զի ժամանեսցուք ի չափ հասակի լրմանն Քրիստոսի. եկն կամաւ ի չարչարանս, զի ի տանջանաց մեղացն զերծցուք. խաչեցաւ, զի ի կենդանութեան պտղոյն վայելեսցուք. մեռաւ, զի մահուամբն մեռուսցէ զմահ. եղաւ ի գերեզմանի, զի խորտակեսցէ զնիգս դժոխոց. յերրորդ աւուր յարեաւ, զի զմեզ ի կենդանութիւն փոխարկեսցէ. համբարձաւ յերկինս, նստաւ ընդ աջմէ հօր, զի դասեալ լիցուք և մեք ընդ աջմէ նորա: (124 /11; 124 /11; 124 /11; 124 /12;

124 /14; 124 /15; 124 /15; 124 /15; 124 /16; 124 /17) Իսկ զոչ այսպէս խոստովանողսն նզովեցին սուրբ հարքն, նմանապէս և մեք նզովեմք զհին զամենեսեան եղեալ հերձուածողսն և զնորս՝ զԱրիոս, զՊաւղոս Սամոստացի, զՄանի և զՄարկիոն, զպիղծն Նեստոր և զԹէոդորիտոս, ևի զսնոտի չար ժողովն Քաղկեդոնի, ևի զհրէական տոմարն Ղևոնի, որ լրբաբար յանդգնեցան ասել երկու բնութիւնս և երկու դէմս ի վերայ միոյ Քրիստոսի Աստուծոյ, և եթէ սուրբ կոյսն ոչ ծնաւ Աստուած, այլ՝ մարդ սոսկ ըստ մեզ և լոկ տաճար բանին Աստուծոյ: (125 / 6) Են և այլք ոմանք, որ ասեն, եթէ մինչ ի յերկրի էր տէրն Քրիստոս, յերկինս ոչ էր. և մինչ ի խաչին էր, չէր յաթոռ փառաց. և մինչ ի գերեզմանին էր, ոչ էր ընդ աջմէ հօր. զկորհեցողն այսպէս՝ նզովէ Աստուած, և մենք նզովենք զամենայն, որք այսմ հաւանեցան կամ հաւանին: (125 /8; 125 /8; 125 /9) Յիշեցուցանեմք և զբանն Յովհաննու աւետարանչի, որ ասէ. «Եթէ ոք եկեսցէ առ ձեզ և զվարդապետութիւն տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ոչ ունիցի, միւ ընդունիջիք զնա ի տունս և միւ բանիւք ողջոյն ասել նմա: (125 / 14) Զայնպիսին ի սահմանաց ձերոց հալածեսջիք և զմահաբեր վարդապետութիւն նորա ամենևին ոչ լսել»: (125 / 16) Արդ՝ վասն զի հարքն ձեր հաւատակից էին հարցն մերոց, և դուք մեզ, հաճոյ թուեցաւ գալ ի ձէնջ այսր եպիսկոպոսաց երից կամ աւելեաց լսելով ի մէնջ յանդիման զճշմարիտ վարդապետութիւնն, զի մի ոք կորիցէ ի հովուաց կամ ի հօտից, այլ ի վերայ բարւոյ գիւտի ձերոյ եղիցի ուրախութիւն հրեշտակաց յերկինս և մեզ՝ յերկրի, ծառայիցս և երկրպագուացս Քրիստոսի Աստուծոյ մերոյ. ողջ լերուք ի տէր: (125 /18; 125 /19; 126 /1; 126 /1; 126 /1; 126 /3) ՀԱԼԱԾՈՒՄՆ ՀԵՐՁՈՒԱԾՈՂԱՑՆ ՅԱՂՈՒԱՆԻՑ, ԶՈՐ ՏԷՐ ԱԲԱՍ՝ ԱՂՈՒԱՆԻՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴ ԳԱԼ ԹՂԹՈՅՆ Ի ՀԱՅՈՑ ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՑ (126 / 7) Զայն շփոթ աղմկի սփռեալ տարածեցաւ ընդ ոլորտս երկրի ի ժողովոյն Քաղկեդոնի ի սնոտի և ունայն չարափառաց պղտորմանէն, որ ի ներելն Աստուծոյ զօրացաւ սուտ վարդապետութիւն նոցա, և դիւրալուր ունկնդրութեամբն ներկեալ բազմաց ազանց հոգիքն՝ մշտնջենաւոր խաւարի կորստեան մատնեցան: (126 /8; 126 /9; 126 /9) Ի նոյն ժամանակս տեառն Աբասայ Աղուանից կաթողիկոսի յոյզ քննութեան առնելով իւրովք եպիսկոպոսօք, որ վերագոյնդ կան ի գրի, նոքօք հանդերձ հալածեաց ի տանէ Աղուանից զպիղծ վարդապետս աղանդոյն այնորիկ՝ զԹոմասն կեղծաւոր և զփսաղտն Եղիա և զԲնոտն և զԻբաս և զայլսն ընդ նոսա, զնմանողս նոցին արար տարաբնակ ի հեռաւոր վայրս: (126 /12; 126 /13; 126 /14; 126 /16) Եւ այնու եղև խաղաղութիւն ուխտի եկեղեցւոյ ի ժամանակին յայնմիկ ողորմութեամբ տեառն ամենակալի. այլ մարմնաւորական պատերազմունքն կարի յաճախէին: (126 / 16) Ոիվ սքանչելի պատմութեանս, զոր հանդերձեալ եմ հնչեցուցանել ի լսելիս տիեզերաց, մօտաւորաց և հեռաւորաց, որում համեմատ են ոիչ դարուցն առաջնոց նշանագիրք ազգի ազգի պատերազմաց և խռովութեանց, որք ի տեղիս տեղիս և յազգս ազգս գործեցան և ի հոգւոյն սրբոյ բազում մասամբք և բազում օրինակօք կանխաւ դրոշմեցան: (127/4; 127/6; 127/7) Զի եկն եհաս ի վերայ մեր միանգամայն և կատարեցան, զոր փրկիչն մեր ի կենսաբեր աւետարանի անդ ի ժամանակի չարչարանացն, ըստ հանդուրժելոյ լսելեաց ընտրեալ երկոտասանիցն մարդկօրէնս զիջանելով խօսէր. ասէ. «Լսելոց էք պատերազմունս և համբաւս պատերազմաց, ևի լինել սովուց յաճախութիւն, ևի սուրք, ևի սասանութիւնք, ևի նշանք յարեգակն,

նի *ի* լուսին, նի *ի* յաստեղս. նի խոռվութիւնք ժողովրդոց՝ որպէս ալեաց ծովու խոռվելոյ»: (127 /10; 127 /10; 127 /11; 127 /14; 127/14) Եւ արդ՝ քանզի ընկղմեցան միտք իմ և զմբաղեցան խորհուրդք իմ *ի* տիեզերական հարուածոցս, և մոռացայ զկարգ բանին, զոր հանդերձեալն էի արկանել հիմն և սկիզբն առնել ժամանակաց և անցից, որ անցին ընդ աշխարհս Աղուանից՝ ըստ բանի մարգարէին, որ սաէր, եթէ մոռացայ ուտել զհաց իմ *ի* ձայնէ հեծութեան իմոյ: (127 / 17; 128 / 1) Սակայն և այժմ առ անգամ մի թողեալ զահ և զերկիւղ, որ դեռ զմեզս ունի, *ի* նոյն կարգն դարձցուք. քանզի տեսանեմք զբազումս, զի կան և կամին լինել, եթէ զի՞նչ արդեօք կարիցէ բովանդակել, զի անթիւ հարուածս բարբարոսականաց թշնամեաց շուրջանակի զմեօք պատեալ: (128 / 2) Եւ զի անցեալ ժամանակն յետս յետս զիւրն պահանջէ *ի* մէնջ պատմել, սկսայց յառաջին ԺԸ է նահանջէն յայտնութեան տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի մեհեկանի ամսոյ *ի* ԼԵ ամին Խոսրովու Յորմզդեան՝ Պարսից արքայից արքայի: (128 /7; 128 /8) Իբրև լցաւ ժամանակ գերութեանն Երուսաղեմի, որ յաւուրս Փլաւոս Հերակլի քրիստոսասէր կայսերն, որպէս երբեմն եօթանասուն ամացն՝ յաւուրս Կիւրոսի պարսկի, այց արար Աստուած յանդիմանել զսէգ թագաւորն Պարսից՝ զմեծն Խոսրով, որ *ի* բազում ժամանակաց յաղթահարեալ վանեաց վարատեաց նա զտունն օգոստոսական մեծ աշխարհաւն իւրով հանդերձ Հռոմաւ և նշանաւոր քաղաքաւն Պաղեստինեայ: (128 / 14) Արդ՝ իբրև ետես նա եթէ յաջողեցաւ գործ մարտի պատերազմաց, զոր սկսաւ առնել ընդ արքային Յունաց *ի ձեռն* զօրավարին իւրոյ, զոր կացոյց *ի վերայ* զօրուն այնորիկ, զոր կազմեալ էր ընդդէմ արևմտից, որոյ բուն անուն իւր Խոռեան կոչէր: (129 /1; 129 /1) Սա առ և հրձիգ արար զսուրբ քաղաքն Երուսաղէմ և *ի* գերութիւն վարեաց զփայտն կենաց՝ զխաչն լուսատու տիեզերաց, որով դժոխք գերեցան, և զսպասսն ամենայն սրբութեանց կողմանցն այնոցիկ զոսկւոյ և զարծաթոյ և զականցն պատուականաց և զհանդերձս ծիրանիս ընդելուզեալ մեծագնի մարգարտով. նա և զկահ անգամ շինուածոց զարմանալի հոյակապ մայրաքաղաքաց, զսիւնս և զխոյակս կճեայս, նաև զչորքոտանիս և զթռչունս մեծամեծս, զորոց զանուանս անգամ ոչ էր լուեալ *ի* կողմանս արևելից: (129 /6; 129 /11) Եւ զմթերս գանձուցն, զոր աւարեաց և ետ բերել *ի* դուռն Պարսից արքայի: (129 / 13) Սակայն ոչ յագեցաւ և ոչ շատացաւ անթիւ կարասեաւն, և երգեցիկ ազգի ազգի արուեստաւորքն խրախճանականաց փափկասուն աղջկանց և մանկանց. այլ առաւել ևս ոգորէր ընդ ծով և ընդ ցամաք, և զզեղեցկաշէն քաղաքս Հռովմայեցւոց բնակչօքն իւրովք հանդերձ խաղացուցանէր *ի* կողմանս Պարսից վասն տենչանաց իւրոց: (129 / 17) Նմանապէս ճարտարօք *ի* նոյն ձև օրինակի նստուցանէր և անուանէր զոմն առաւել քան զԱնտիոք քաղաք. և զայլսն ամենայն *ի* նոյն օրինակի յիւր անուն՝ զառաւելն *ի վերայ* յաւելեալ: (129/18; 130/1; 130/1) Արդ՝ իբրև ելից յաղթութեամբն ըստ ցանկութեան զկամս իւր *ի* վերայ ամենայն ազգաց և թագաւորութեանց, մինչև ցայնչափ զօրանալ և հպարտանալ և կարծել անձին քաջութեամբ առնուլ զթագաւորութիւնն իւր ահեղ և զարմանալի և *ոչ հառ ի միտ*, եթէ տէր է բարձրեալն թագաւորութեան մարդկան և ում կամի, տայ զայն: (130 /2; 130 /4) Զի յանկարծակի ազդ արարեալ կայսերն ամենայն զօրավարաց և զօրագլխաց իւրոց զյաջողելն Աստուծոյ առաջի նորա, հրամայէր վաղվաղակի *ի մի վայր* գումարել հանդերձ ամենայն

զօրութեամբ, որ ընդ ձեռամբ իւրեանց և լսելի լինէր ամենեցուն ժամադիր գումարտակին այնորիկ: (130 / 10) Ոչ ժամանէր այր ընկերի իւրում, այլ առանց յապաղելոյ փութանակի կոտորէին զխոփս իւրեանց *ի* սուսերս և զզերանդիս իւրեանց *ի* գեղարդունս: (130/ 12; 130 /13) Եւ զդուռն պալատանն իւրոյ թողեալ *ի* ձեռս որդւոյն իւրոյ, թագ կապեալ նմա՝ նստուցանէր փոխանակ իւր յաթոռ թագաւորութեան իւրոյ: (130/16) Եւ ոչ հարկանէր ընդդէմ զօրացն Պարսից, որք պատեալ պաշարեալ *ի* հնազանդութեան ունէին զաշխարհս և զքաղաքս նորա. և ոչ անցանէր մօտ առ նոքօք, և ոչ գրգռէր զնոսա *ի* մարտ պատերազմի. այլ թողեալ զնոսա անդէն յերկրին իւրում, եկն ել ընդ ծով, ճանապարհ կազմեալ ընդ աշխարհն Եգերացւոց՝ գայ ընդ Հայս և անցանէ ընդ գետն Երասխ: (130 /18; 131 /1) Եւ խորհէր *ի* միտ իւրում յանպատրաստ ունել զմեծ թագաւորն Խոսրով: (131 / 3) Եւ իբրև ազդ լինէր Խոսրովու, հիանայր *ի* միտս իւր և ասէր. «Ո՞չ նա է սա, որ յերկիւղէն իմմէ յանդունդս վարեցաւ. իսկ արդ այս զի՞նչ»: (131 / 5) «Այնու քաւեսցի մեծ նախատինքս և ցասումնս իմ, եթէ այսպէս ժամանեսցես փութալ հասանել և ոչ թողուլ և ոչ զմի ոք *ի* մարդոյ մինչև յանասուն *ի* համարձակելոցդ յերեսս իմ»: (131 /10; 131 /11) Եւ *ի ձեռն առեալ* զօրավարին զհրամանն, ընթերցեալ և լուեալ զլուրն ահագին՝ վաղվաղակի հանդէս առնէր ամենայն զօրացն Պարսից: (131 /12) Եւ թողեալ *ի* ձեռս գումարտակաց զքաղաքսն Հռովմայեցւոց և Պաղեստինացւոց զեկեալսն *ի* հնազանդութիւն ծառայութեան. և զգուշութեամբ պատուիրէր ունել մինչև դառնալ նմա յիրացն հասելոց: (131/14; 131/14) Եւ ինքն շարժէր զզօրսն հանդերձ ընտիր սպառազինուք և քաջընթաց երիվարօք աճապարէր հասանել *ի* հրաման թագաւորին: (131 / 17) Իսկ կայսրն մեծ Հերակլիոս իբրև ետես եթէ խոյս ետ յերեսաց նորա թագաւորն Պարսից, դադարեաց *ի* պնդելոյ զհետ նորա: (131 /19) Եւ ասպատակ սփռեալ զկողմամբ Ատրպատականու մինչև ցտեղի ամուանեալն Գայշ աւան՝ տեղի ամարոցաց ամսոց ջերմութեան ընտրեալ յառողջութիւն հովասնութեան թագաւորացն Պարսից, որ է *ի* սահմանս Մարաց աշխարհին: (132 / 3) Աւերէր, քանդէր, գերէր զերկիրն ամենայն և անտի դարձեալ՝ կամէր ձմերել *ի* կողմանս Աղուանից, Վրաց և Հայոց աշխարհաց: (132 / 4) Ապա եթէ ոչ՝ համարեսցին առաջի նորա իբրև զհեթանոսս, և առցին ամուրք նոցա, և գերեսցին սահմանք աշխարհացն այնոցիկ *ի* զօրաց նորա: (132 / 8) Եւ իբրև լուան զայս ամենայն պետք և իշխանք աշխարհիս Աղուանից, *ի* նոյն ինքն *ի* հրամանէ Խոսրովու թողեալ զքաղաքն մեծ Պարտաւ և ելեալ գնացին ամրացան *ի* տեղիս տեղիս. և բազումք *ի* քրիստոնէից և *ի* հեթանոսաց, յարուեստագործաց բնակչաց քաղաքին, որք վասն անկարութեան և տկարութեան իւրեանց ոչ կարացին զերծանել փախչել առաջի նոցա, մնացին անդէն *ի* քաղաքի անդ: (132/9; 132/9; 132/10; 132 /10; 132 /11; 132 /13) Եւ քահանայ ոմն՝ անուն Զաքարիա՝ այր սուրբ, որ էր վանական Պարտաւայ եկեղեցւոյն, հեզ և հանդարտ, որ եդ զանձն իւր *ի վերայ* նոցա, և երդմամբք և ազգի ազգի հնարիւք զերծոյց զբազում անձինս քրիստոնէից՝ աղօթիւք իւրովք երաշխաւորեալ զնոսա: (132/15) Իսկ իբրև եկն եհաս զօրն Հռովմայեցւոց անթիւ բազմութիւն յոյժ յոյժ և բանակեցան յՈւտի գաւառի առ հեղեղատովն, որ *ի մէջ* սահմանացն գեղջն Կաղանկատուաց. և կոխեցին քանդեցին զգեղեցիկ ստացուածս այգեստանեացն և գիւղաստանեացն, ընդ որ անցանէին: (132 / 20) Եւ անտի

չուեալ բանակեցան առ հեղեղատովն Տրտուայ՝ մօտ ի գիւղն Դիւտական: (133 / 3) Եւ ի հաւատարիմ նախարարաց թագաւորին վերակացու և հրամանատար ի միջի նոցա՝ այր մի, զոր Գրանիկն Սաղար անուանէին, եկն էջ ընդդէմ նորա. և միւս զօրավարն Պարսից եկեալ ի Հռովմայ և դարձուցեալ զՀերակլիոսն ընդ կրունկն և վարեցին ընդ աշխարհն Սիւնեաց: (133 /5; 133 /6; 133 /7) Զի թէպէտ և հարուածք մեծամեծք եղեն զօրացն Պարսից, սակայն հանին տարան արկին զնա յաշխարհն իւր և անդէն կալան զքաղաքսն, զոր հանին բռնութեամբ ի նմանէ: (133 / 10) Եւ պատգամատարք առ նոսա Խոսրովու՝ Պարսից արքայի. «Եթէ դուք ո՞յր հրամանաւ եկիք յաշխարհս իմ. որ թափառական և փախստական շրջէր յերեսաց իմոց ի կղզիս ծովուն արևմտից: (133 / 17) Ապա եթէ կարօտեցար դու ի նմանէ ոսկւոյ կամ արծաթոյ, կամ ականց պատուականաց, կամ ոսկեման մարգարտայեռ հանդերձից, բեհեզից և ծիրանեաց, կարող էի ես առաւել կրկին քան զնա հաճել զմիտս քո: (134 / 1) Բայց ահա կանխաւ ասացից քեզ, զոր ինչ ես գործելոց եմ յառաջագոյն. ի թողացուցանել ինձ նմա ըստ բանիդ քում, կոչեցից ես յերկրէ նորա զյաղթող զմեծ զօրավարն իմ Շահ Վարազն հանդերձ երկու քաջ զօրականօքն իմովք՝ Շահենովն և Քրտիկարինաւն և զզօրսն իմ՝ զբիւրաւորս և զհազարաւորս զընտիր սպառազէնսն իմ, զոր յօրինեցի ընդդէմ արևմտից կորուսանել և ջնջել զնա յերկրէ իմմէ: (134 / 5) և յարեայց ամենայն զօրութեամբ իմով ի վերայ քո (134 / 10) Ապա գիտասցես և ի միտ առցես զանիմացական, զտրտմեցուցիչ անձին քո խնդիրս, զոր առնես. զի ուր տարայց, հանգուցից, յորժամ հանից ես անտի զայն ամբոխ բազմութեան. և կամ ո՞ր իցէ երկիր, որ բաւիցէ առաջի նոցա. եթէ ոչ արարից ըստ բանիդ ըստ այդմիկ»: (134 / 11) Ապա իբրև ետես իշխանն՝ տէրն նոցա զայն ամենայն աղխ գերութեան աւարացն մարդոյ և անասնոյ և անօթոց, արծաթեղինաց և ոսկեղինաց և հանդերձից պատուականաց, խորհեցաւ ի մտի իւրում յայն կոյս ինքն իսկ իւրովի գալ ելանել: (134 / 19) Իբրև եհաս յերկիրս Աղուանից բօթն ահագին, կամեցեալ ամրացուցանել զաշխարհս մեր ի մեծ մայրաքաղաքին Պարտաւայ բերդին. և լինէր այն ի հրամանէ առն միոյ, որում անուն էր Գայշաք, որ առաքեալն էր ի Խոսրովայ պետ և իշխան աշխարհիս. որ փակեաց ի ներքս զբազմութիւն շրջակայից գաւառաց և կամէր պնդել զինքն միաբանութեամբ հանդերձ մեծամեծաց աշխարհիս և բնակչաց քաղաքին կալ ընդդէմ նոցա: (135 /8; 135 /9; 135 /10; 135 /10) Բայց հայէր տեսանել, եթէ զինչ ինչ անցք անցանիցեն ընդ պահապանս մեծ քաղաքին Չորայ. և ընդ զումարտակս սքանչելի պարսպացն, զոր բազում ծախիւք թագաւորացն Պարսից մաշեալ էր զաշխարհ իւրեանց՝ գումարել ճարտարապետս և հնարելով ազգի ազգի նիւթս ի շինուածս մեծասքանչ գործոյն, զոր փակեցին աղխեցին ընդ լեառն Կաւկաս և ընդ մեծ ծովն Արևելից: (135 / 15) Արդ՝ ի մօտել տիեզերական ցասմանն, որ առաջի էր մեզ ամենեցուն, նախ՝ զնա բախեցին ալիք ծովուն ծաւալեալ և ի հիմանց տապալեալ: (135 / 18; 135 / 20) Քանզի տեսանելով զահն սաստկացեալ ժանտատեսիլ, ժպրհերես, լայնադէմ անարտևանուն բազմութեանն ի ձև իգական զիսարձակս դիմեալս ի վերայ՝ դողումն կալաւ զնոսա առաջի նոցա. մանաւանդ ի տեսանել զպնդաքարշ կորովաձիգսն, որ իբրև զկարկուտ սաստիկս տեղայր ի վերայ նոցա: (136 /1; 136 /1; 136 /2; 136 /3) Իբրև զգայլս գիշախանձս անամօթացեալ դիմեցին ի վերայ նոցա և անխնայ կոտորեցին

յանցս և ի փողոցս քաղաքին. և ոչ խնայէր ակն նոցա ի գեղեցկատես, պայծառագեղ, մանկահասակ արուի կամ իգի, և ոչ յանպիտանս և յանօգուտս. և ոչ թողուին զհաշմս կամ զծերս, և ոչ գթային կամ գալարէին աղիք նոցա ի խանդաղատանս տղայոց, որք զկոտորեալ մարդքն փարէին և դիէին զարիւն ստեանց նոցա իբրև զկաթն: (136/4; 136/5; 136/5; 136/7) Այլ իբրև զհուր վառեալ յեղէգն՝ մտանէին ընդ դուռն և ելանէին ընդ միւսն՝ գործ գազանաց երկրի և թռչնոց երկնից թողեալ ի նմա. ապա տակաւ տակաւ շարժէին ալիք ընդդէմ մեր: (136 / 10) Արդ՝ իբրև լսէր զայս ամենայն պետ և իշխանն մեր, որ պահէր և ունէր զքաղաքն Պարտաւ, կամէր խօսել առ ամբացեալ բազմութիւնն, որք էին ժողովեալ ի մեծ բերդին, վասն սաստկացեալ ահին, եթէ զինչ իցէ արժան գործել: (136 / 13) Եւ իբրև գիտաց բազմութիւնն զանչափ վատասրտեալ առնն, զաղաղակ բարձին և ասեն, «Ընդէ՞ր բնաւ արգելեր զմեզ պահել ի ժամս յայս՝ տալ զմեզ կանամբք և որդւովք մերովք ի ձեռս արիւնարբու գազանացն: (136 /18; 136 /18) Եւ դէմ եղեալ առ հասարակ ընդ չորս դրունս քաղաքին՝ աճապարէին անկանել ի լեռնակողմն Արցախայ գաւառին: (137 / 5) Եւ իբրև իրազգած եղեն թշնամիքն եղելոցն՝ պնդեցան զհետ փախստէիցն. և հասեալ ի մասն ինչ առ ստորոտով լերինն, որ է յանդիման գեղջն մեծի կողմանն Կաղանկատուաց, որ է ի նմին յՈւտի գաւառի, յորմէ և ես: (137 /7; 137 /9) Եւ ի նսեմանալ աւուրն ոչ կարացին ժամանել ի բազում ինչ ի վնաս, այլ զանկեալսն փոքր ի շատէ ի ձեռս, զորս կոտորեցին և զորս զհետ կահուց, սայլիցն և գրաստուցն անկելոցն ի բուռն՝ դարձուցին անդրէն ի բանակն իւրեանց: (137/9; 137/9; 137/10; 137/10; 137/10; 137/11; 137/11) Եւ ի խնամակալութենէն Աստուծոյ ոչ ևս յաւելին պնդել զհետ բազմութեան փախստէիցն: (137 / 12) Եւ ի գիշերի յայնմիկ անցին ամենեքեան, որպէս երբեմն եբրայեցիքն ընդ ծովն Կարմիր, և անկան յամուր գաւառն Արցախայ: (137 / 13) Եւ նոյնպէս և այն իշխանն՝ Գայշաք անուն զերծաւ համօրէն տամբ իւրով և անկաւ ի կողմանս Պարսից. և այլ ոչ ևս կարաց կարգել զինքն ի նոյն իշխանութիւն: (137 /15; 137 /15) Ժողովեալ և նորա զամենայն զօրս զօրութեան իւրոյ, գայր վաղվաղակի հասանէր առ նիզակակից օգնականն իւր. և ի մատուցանել զօժիտս և զընծայս թագաւորական ընկալեալ, յոյժ բերկրեցան ի տեսանել զմիմեանս: (138 /2; 138 /3) Ապա այնուհետև անդ էր տեսանել զաղէտս եղկելի անձանցն, որ փակեալն էին ի բերդին: (138 / 4) Հասեալ ի վերայ նոցա թշուառութիւն ի վերայ թշուառութեանն. բայց վասն զի չև ևս էր հասեալ ժամանակն, որ առաջի կայր: (138 / 4; 138 / 5) Եղև այսպէս, զի իմացեալ Խոսրովու զժամադիր մեծ թագաւորացն երկոցունց ի քաղաքն յայն, յառաջ քան զպաշարելն զօր փութանակի առաքէր յօգնականութիւն նոցա և ի պահպանութիւն քաղաքին, զյօժարն և զքաջ պատերազմող զզօրագլուխն իւր զՇարհապաղ և յընտիր հեծելոց թիկնապահաց և դռնապահաց իւրոց ընդ նմա իբրև արս հազարս: (138 /7; 138 /8) Զոր իբրև տեսին բնակիչք քաղաքին զզօրավիգն առաքեալ հանդերձ յաղթանդամ և կիրթ պատերազմակցօքն, յոյժ զօրացն յանձինս իւրեանց. և սկսան ծաղր առնել զերկուս թագաւորսն, զի թէպէտ և տեսանէին զանթիւ բազմութիւն զօրացն հիւսիսոյ և արևմտից, զի ի նմանութիւն լերանց ճակատեալ շուրջ զքաղաքաւն, թնդայր, դողայր երկիրն ի բազմութենէն, նա և ընդ նմին զմեքենայսն և զչորեքանիւսն և զայլ ազգի ազգի հնարս յօրինեալ ի ձեռաց ճարտարացն Հռովմայեցւոց, որով

անվրէպ առնէին զքարաձիգսն ի փլուզանել զպարիսպն քարամբք մեծամեծօք: (138 /14; 138 /15; 138 /16; 138 /18) Նա և զուռուցիկ տիկսն մեծամեծս, քարալիցս, աւազալիցս, որով զգետն մեծ՝ զԿուր, որ պատէ զկողմն քաղաքին՝ ուռուցեալ յետս ընդդէմ ընդ պարիսպն դիմեցուցանէին. այլ նոքա ոչ ինչ վատեալք և յոչ մի ինչ իրաց, այլ քաջալերէին զմիմեանս. և զբեկեալսն ի պարսպէն անդէն շինէին և կանգնէին: (139 / 1) Ապա իբրև լքան վատեցան վաստակացան զօրք երկոցունց թագաւորացն, և ոչ սակաւ էր թիւ անկելոցն ի մարտի հետևակացն, խորհեցան առ միմեանս թագաւորքն և ասեն. «Ընդէ՞ր է այս կորուստ զօրաց մերոց. ո՞չ ապաքէն յորժամ կապիցեմք զհզօրն, զտուն նորա, որպէս և կամիցիմք, աւար հարկանիցեմք»: (139 / 3) Եւ ասէ ցայրն այն, որ եկեալ էր յօգնականութիւն նմա. «Դարձիքր, դու, մոխուտ խաղաղութեամբ զօրօք քովք յամիս յայսմիկ ի տեղի քո. զի տեսանեմք զհովասնութիւնդ ձեր, և ահա ոչ կարէք տոկալ՝ ի հասանել ամառնային տապախառն ջերմութեան աշխարհին Ասորեստանի, ուր է թագաւորանիստն Պարսից առ գետովն մեծ, որ է Տիգրիս: (139 / 9; 139 /10) Բերին դդում մի մեծ, նկարէին ի վերայ նորա զպատկեր թագաւորին Հոնաց՝ կանգուն մի յերկայնն և կանգուն մի լայնն. և զտեղի արտևանաց աչացն յօտ մի ծրագրեալ, զոր ոչ ոք կարէր նշմարել: (139 / 18) Եւ ի գալ միւս ամին և ի նուազել ամսոցն ջերմութեան վաղվաղեսցես ելանել այսրէն, զի կատարեսցուք զկամս մեր, և ես ոչ դադարեցից ոգորել ընդ թագաւորին Պարսից և վտանգեալ նեղեցից զաշխարհս և զծառայս նորա. և այնչափ հնարեցայց խելամտութեամբ. մինչև յիւրոցն վճարեսցի»: (139 /12; 139 /12) Եւ բերեալ զայն եդին ի վերայ պարսպին յանդիման նոցա և աղաղակէին առ զօրսն և ասէին. «Ահաւասիկ կայսր թագաւորս ձեր, ուր կայս. դարձարոքիք, երկիքր պագէք սմա. Ջերու խաքան է այս»: (140 / 2) Եւ առեալ գեղարդ ի ձեռն՝ ծակոտէին յանդիման նոցա զդդումն՝ զնմանեցուցեալն ի պատկեր նորա: (140 /5; 140 /5) Զայս տեսեալ և լուեալ թագաւորացն՝ քինանային, փքանային, ոխս մթերեալս ժողովէին ի սիրտս իւրեանց, շարժէին զգլուխս իւրեանց և մեծաւ նզովիւք նզովէին զանձինս իւրեանց, զի եթէ ոչ մի հոգի չապրեսցի յամենեցունց, որ են ընդ թագաւորութեամբ նոցա, մինչև խնդրեսցի վրէժ նախատանացն այնոցիկ, որ ձաղեցանն նոքա ի նոցանէ: (140/8; 140/11) Ապա այնուհետև յամին երեսներորդի վեցերորդի Խոսրովու եղ ի մտի իւրում կայսրն օգոստոսական՝ հնարել հնարս, թէ զիաթրդ արդեօք կարիցէ բուժել յանհնարին տրտմութենէն և ի նախատանացն: (140 /15; 140 /17) Յայնժամ հանդերձէր կազմէր զոմն ի նախարարաց իւրոց Անդրէ անուն՝ այր հանճարեղ և իմաստուն, առաքէ զնա բազում խոստմամբք անթիւ և անհամար գանձուց, թէ միայն ձեռնտու լինիցին ինձ ի մեծ նախանձուէս յանձն առնում և ես լնուլ զպասքումն գազանաբարոյ ոսկեսէր ազգին գիսաւորաց: (141 /5; 141 /7) Յայնժամ առաքէր ընդ նախարարն ընդ այնմիկ առ ի հաստատել զխորհուրդ պայմանին այնորիկ արս հեծեալս ընտիրս, զօրաւորս զօրութեամբ, աղեղնաւորս կորովաձիգս թուով իբրև հազար մի. որք դիմեալք յանկարծակի ընդ դրունս Չորայ՝ առ ոչինչ համարեալ զքաղաքապահսն և զգումարտականս Պարսից արքային, որք էին կարգաւորեալք ի մեծի դրանն. այլ սլացեալք որպէս զարծուիս առ ի մեծ գետովն Կուրայ՝ յոք ոչ խնայելով, որ հասանէր ընդդէմ նոցա: (141 /16; 141 /22; 142 /1) Ճանապարհ կալեալ ընդ աշխարհն Վրաց և Եգերացւոց՝ հատին անցին ընդ ծովն մեծ մինչև ի պալատն արքունի.

եւ յանդիման լեալ մեծի կայսերն Հերակլեայ հաստատեն առ միմեանս զերդմունս ըստ իւրաքանչիւր օրինաց: (142 / 3) Եւ առեալ ի նմանէ զիրաման վասն ելիցն իւրեանց՝ դարձան անդրէն ընդ նոյն ճանապարհ աշխարհին իւրեանց. ոչ ինչ կասկածեալ յումեքէ: (142 / 4) Իսկ ի մտանել ամին երեսներորդի եօթներորդի նոյն ինքն Խոսրովու առաքեաց թագաւորն հիւսիսոյ զխոստացեալ զօրն պատերազմող՝ զօրավար կարգեալ զեղբօրորդին իւր, որում ի պատիւ իշխանութեանն իւրեանց Շաթ անուն կարդային: (142 /7; 142/10) Որ եկեալ՝ արշաւեաց ընդ ամենայն սահմանս աշխարհիս Աղուանից և ընդ մասն ինչ Ատրպատականու. որ մաշեաց ի տուր տուսերի զբազում անձինս քրիստոնէից նաև հեթանոսաց: (142 / 13) Իսկ զթիւ նոցա, որ գերեցանն ի նոցանէ, ո՞ կարիցէ հասու լինել և ընդ գրով արկանել: (142 / 14) Եւ բանակեալ նոցա առ գետովն Երասխայ՝ առաքէր ի ձեռն պատգամաց առ մեծ թագաւորն Խոսրով՝ յայտ առնելով զմիաւորելն իւրեանց ընդ կայսերն և զգալ նորա յօգնականութիւն: (142 / 15) Եւ են պատճէնք պատգամացն առ միմեանս այսպէս. «Եթէ ոչ դարձուցանես զերեսս քո ի թագաւորէն Հռովմայեցւոց և թողցես ի նա զամենայն աշխարհս և զքաղաքս, զոր առէր բռնութեամբ քոյով և յուղարկեսցես զամենայն գերեալսն յերկրէ նորա, զոր այժմդ ունիս ընդ ձեռամբ քոյով հանդերձ փայտիւն խաչի, զոր ամենայն ազգ քրիստոնէից երկիր պագանեն և փառաւորեն, և կոչեսցես արտաքս քան զսահմանս նորա զամենայն զօրս քո. այսպէս ասէ արքայն հիւսիսոյ՝ տէրն ամենայն երկրի, թագաւորն քո և ամենայն թագաւորաց, հաստատեցից և ես զերեսս իմ ի վերայ քո, կուսակալդ Ասորեստանեայց. և փոխանակ միոյ չարեացն, զոր ընդ նա անցուցեր, կրկին հատուցից քեզ. և խաղացից ընդ ամենայն սահմանս քո սրով իմով, զորօրինակ խաղացեր դու սրով քով ընդ սահմանս նորա: (142 /18; 142 /18; 143 /3) Թէպէտ և ինքն միաբանեալս և յարուցեալս ի վերայ իւր տեսանէր, սակայն ըստ խորագիտութեանն իւրում ոչ յայտնէր զերկնչելն ր զղօղելն յերեսաց նորա. այլ հպարտութեամբ և մեծաւ սաստիւ առնէր զպատասխանիսն. «Եթրթ, ասաի թագաւորին քում և եղբօրն մերում խաքանայ, եթէ ի վաղնջուց հետէ ի նախնեացն իմոց և յինէն մեծարեալ և պատուեալ էր տունդ ձեր իբրև եղբօր մերոյ սիրելւոյ. վասն որոյ ուստերօք և դստերօք ընդ միմեանս պատուաստեալ էաք ի խնամութիւն: (143 / 10; 143 /13; 143 /13; 143 /15) Արդ՝ ոչ էր պարտ և արժան քեզ թողուլ զանդամս քո և խոտորել ի բանս ծառային իմոյ՝ կտրճին Հռովմայեցւոց»: (143 / 16) Իսկ կայսերն առեալ զզօրս իւր՝ դիմեաց ի կողմանս Պարսից. և համառեալ, պնդեալ հասանել ջանայր ի դուռն Պարսից արքային: (143 /18; 143 /19) Իսկ իբրև ետես արքայն Պարսից, եթէ և այնպէս ոչ վճարեցաւ, այլ համարձակեալ դիմեալ գայ ի վերայ նորա, փախստական գնայ առաջի նորա, անկանի ի բուն թագաւորանիստն իւր՝ ի մեծ Տիզբոն. և զկանայս և զհարճս իւր և զորդիս անցուցանէ յայնկոյս գետոյն Դկլաթու: (144 /1; 144 /2; 144 /3) Եւ զպատրաստական զօրն իւր, որ էին փոքր ի շատէ, մօտ առ ինքն ժողովէր, կազմէր, առաքէր ընդդէմ կայսերն: (144 / 4) Եւ յօժարեցուցեալ զոմն բազում մեծարանօք և կարասեաւ, որ վկայեալ էր ի դրան նորա քաջութեամբ. և փոխէր այլ անուն նմա, Ռոճվեհ անուանէր. հրապուրելով զնա մղէր, հարկանէր ընդդէմ ալեացն, զօրավար զօրուն առաքեցելոցն ի նմանէն զնա կացուցանէր: (144 /6; 144 /7) Եւ առաքէր միանգամայն և երկիցս, և չորրորդէր գրով զգուշութեամբ առ թագաւորն իւր

Խոսրով և ասէր. «Եթէ ոչ միայն մահուն իմոյ, այլ վասն կորստեան զօրաց քոց յառաջագոյն ծանուցից քեզ. զի եթէ ոչ փութանակի յաւելցես ինձ զօր ի թիկունս իմ, ես ոչ զանգիտեմ ի մեռանելոյ, բայց ապա գիտասջիր»: (144 /13; 144 /13) Եւ ապա անդէն հրամայէր թագաւորն գրել զպատասխանիսն, եթէ միթ երկիցես յերեսաց նոցա, այլ մարտիքր և յաղթեաք, իսկ ի վերջնում նուագին յոյժ խրոխտացեալ գրէր առ նա՝ ասելով. «Զի եթէ յաղթել ոչ կարասցես, իսկ մեռանել ընդէ՞ր ոչ»: (144 / 16) Տեսեալ նորա զհրամանն զայն խիստ, վերացուցեալ զձեռս իւր հանդերձ զօրօքն իւրովք յարեգակն և ի լուսին՝ աղաղակեաց մեծաձայն և ասէ. «Աստուածք իմ, դատ արարէիք ընդ իս և ընդ թագաւորն իմ անողորմ»: (144 / 18) Եւ մխեալ ի պատերազմն՝ անկան առաջի զօրացն Յունաց ինքն և զօրքն իւր և եղեն իբրև զփոշի, զոր տանի մրրիկ: (145 / 1) Արդ՝ իբրև տեսին նախարարքն Պարսից զայն ևս բեկումն մեծ, որ եղև զօրացն Պարսից, սկսան քրթմնջել ընդ միմեանս և ասեն. «Մինչև ցե՞րբ հոսեսցեն վտակք արեանցն այսոցիկ ի տեղիս տեղիս պատերազմաւ անձանց Արեաց աշխարհիս. մինչև ցե՞րբ իցեմք յահի և ի դողման արիւնահեղ թագաւորիս. մինչև ցե՞րբ ժողովեսցին ինչք և ստացուածք մեր յարքունիս, ոսկի և արծաթ մեր ի գանձս նորա, մինչև յե՞րբ պնդեալ, կապեալ կայցեն կիրճք ճանապարհաց՝ յարգելուլ զշահս վաճառաց կողմանց կողմանց. մինչև յե՞րբ սարսեալ թափեալ կան որդիք մեր յանձանց մերոց յահագին հրամանէ նորա: (145/5; 145/5; 145/7) Ո՞չ ապաքէն սպառեաց և եկուլ որպէս ծով զընտիր ընտիր ընկերս մեր՝ զառաջնորդս աշխարհաց. ո՞չ ապաքէն բազում եղբարք մեր ի ժամանակս ժամանակս երամ երամ, դասք դասք ի պէս պէս տանջանս հրամանաւ նորա վճարեցան, և ոմանք խորասոյզ իսկ եղեն. ո՞չ ապաքէն զայր ի կնոջէ և զհայր յորդւոյ եհան բաժանեաց յազգս հեռաւորս ի ծառայութիւն և յաղախնութիւն և ի գումար տայ բնակութեան ընդ երեսս չարաշուք թշնամեաց»: (145 /12; 145 /12; 145 /13; 145 /14; 145 /15) Ապա յարեաւ ոմն մի ի հաւատարիմ ընտանեաց նորա նախարար մի, որ էր դայեակ անդրանկանն Խոսրովու, որ Կաւատն կոչիւր: (145 / 17) Եւ խոտորեաց յանկարծակի զսիրտ ամենեցուն զհետ սանուն իւրոյ Կաւատայ՝ առ ի թագաւորեցուցանել զնա փոխանակ հոր իւրոյ: (146 / 3) Բայց անսացէք ինձ սակաւիկ մի, և պատմեցից կարճառօտիւ զխորագիտութիւն առնն, եթէ զիա՞րդ կամ որո՞վ օրինակաւ կարաց արգելուլ ի գառագեղն մահու զահեղ որսորդն՝ զառիւծն արևելից, որ ի գոչելն միայն ազգք հեռաւորք սարսեալ դողային (146 /7; 146 /8) Եւ նա այնպէս ի վայրկեան ժամանակի զողացաւ զամենեցուն սիրտ. և յարեաւ ի վերայ նորա իբրև յորբոյ միոյ: (146 / 9; 146 / 10) Եւ առնելով զայս ամենայն՝ ոչ այլ թագաւոր և իշխան ի թիկունս կոչէր, և ոչ ազգս և զլեզուս հեռաւորս զօրավիգն օգնականութեան սանուն իւրոյ ընդդէմ նորա պատրաստէր: (146 / 11) Եւ հրամայէր գրել հրովարտակս յերեսաց Կաւատայ առ մեծամեծս և առաջնորդս գնդից գնդից մեծի դրանն թագաւորութեանն Պարսից, եթէ բարձաւ ի հօրէ իմմէ և ինձ տուաւ իշխանութիւն թագաւորութեանս, պատրաստական լերուք սակաւ ինչ հեծելովք: (146 / 17) Եւ քարոզն մեծաբարբառ աղաղակէր յաջմէ և յահեկէ Կաւատայ և ասէր. «Ով է մարդ, որ սիրէ զկեանս և կամի տեսանել զաւուրս իւր ի բարութեան, վաղվաղեսցէ ելանել ընդ առաջ նորոգ թագաւորութեանս Կաւատայ, զի սա է արքայից արքայ»: (147 / 3) Եւ բացին զդրունսն Անյուշն բերդի. և յախուռն կոչէր

արտաքս զամենայն կալանաւորս արքային, որք էին ի բազում ժամանակաց արգելեալք ի ստուերս մահու անթիւ բազմութեամբ յոյժ յոյժ: (147 /5; 147 /6) Եւ ասէր ցնոսա. «Եկայք, ելէք, թշուառականք՝ սրտառուչք ի Խոսրովայ. զի բացան դրունք կենաց ձեզ ի նորընծայ թագաւորէս՝ յորդւոյ նորա Կաւատայ»: (147 /7; 147 /8) Եւ մխեալ յընտիր յընտիր երիվարս ասպաստանացն Խոսրովու. շղթայք իւրեանց ի ձեռս իւրեանց հեծեալք արշաւէին յայս կոյս, յայն կոյս արհամարհելով զԽոսրով: (147 / 11) Ապա և բազումք ի գնդից գնդից դռնապահաց և թիկնապահաց և անուանակրացն դրանն Խոսրովու առեալ զնշանս դրօշից իւրեանց՝ դիմեցին առ Կաւատ՝ որդի նորա: (147 / 13) Եւ որ մնացին անդրէն ի դրանն, ճեպէին զնոսա պատգամաւորքն Կաւատայ զգուշութեամբ ունել պահել զԽոսրով, ապա եթէ ոչ՝ մահու մեռանիցին: (147 / 15) Արդ՝ իբրև լսէր Խոսրով զբարբառ աղաղակին այնորիկ, ասէ ցայնոսիկ, որ ի մօտն կային. «Զի՞նչ են ձայնք գոչմանցն այնոցիկ»: (147 /17) Եւ նոքա ասեն. «Քանզի կամի թագաւորել փոխանակ քո որդի քո Կաւատ. և ամենեքեան ընթանան առ նա. և ահա ճակատեալ է յանդիման քաղաքիս առ եզերբ գետոյն. և արձակեաց զամենայն կալանաւորս մեծի բանտին զարգելեալսն ի հրամանէ քումմէ. և ցնծալով ամենեքեան օրհնեն զնա՝ արքայ կարդալով»: (148 / 3) Իբրև լուաւ զայս ամենայն աղէտս գուժին, մանաւանդ զարձակումն կալանաւորացն, հաչէր հառաչէր, վայէր վարանէր յանձն իւր. ոչ ի նստելն իմանայր, նի ոչ ի յառնելն զգայր ամենևին, քանզի ետես զզօրն ահագին հասեալ ի վերայ իւր: (148 /6; 148 /6; 148 /7) Եւ ելեալ հետիոտս ընդ դուռն բուրաստանին իւրոյ՝ գնաց և թաքեաւ ընդ ծառովք բուրաստանին, և կայր ղօղեալ՝ թափեալ ոգի իւր յանկարծ երկիւղէն. և դիտէին աչք իւր վերանալոյ ի վերայ նորա անողորմ սրոյն: (148 / 9) Ապա եկին հասին ի վերայ նորա գունդն ամենայն շուրջ զապարանօքն: (148 / 10) Եւ զհետ մտեալ խնդրակքն՝ գտին զնա ի տեղւոջն, ուր նստէր վարանեալ: (148 / 12) Եւ ածեալ զնա արտաքս քան զապարանսն՝ մուծին ի սրահ մի, զոր Քատակի Հնդուկն կոչեն՝ յապարանսն Մարասպանդ կոչեցելոյ: (148 / 13) Եւ իբրև եմուտ ստուգեաց զտեղւոջէն և զտանուտեառնէն, բախեալ զկուրծս իւր՝ հեծեծելով ասէր. «Վա՛յ ինձ, եղուկ եմ ես. որպէ՛ս հրապուրեցայ ի կախարդացն, որք ըղձային ինձ ի Հնդիկս ի Մարասպան տեղւոջ ըմբռնել: (148 /15; 148 /16; 148 /16) Եւ պահեալ զնա առ այն օր՝ ի վաղիւն բառնային սրով զգլուխն. և բարձաւ չարն ի միջոյ: (148 /18; 148 /18) Նոյնպէս և զեղբարս իւր Կաւատ արքայ յոտից և ի ձեռաց անպիտանս արարեալ՝ կամէր խեղութեամբ շնորհել նոցա կեանս. ապա յամբաստանութենէ բազմաց բարձան և նոքա սրով: (148 / 19) Եւ արձակեաց յիւրաքանչիւր տեղիս զամենայն կալանաւորս, որք էին ի դիպահոջ դրան հօր իւրոյ: (149 / 3) Կարճեցաւ կէտ կենաց նորա, տնեալ ամիսս Է. յաւելաւ առ հարս իւր հայրասպանն այն, քանզի բառնալոց էր թագաւորութիւնն ի տանէ Սասանականացն, և տալ ի ձեռս որդւոցն Իսմայելի: (149 /11; 149 11) Ապա ի գտանել ամենեցուն զթողութիւն յանցանաց իւրեանց ի նորընծայ թագաւորէն Կաւատայ՝ շնորհելով զմիւս ևս պարգևսն, որ կարի իմն ախորժելի թուէր կալանաւորացն և այնոցիկ, որք ի դիպահոջ էին միայն պահել ի մեծի դրանն, որոց մոռացեալ էր յոյս իւրեանց դառնալ յիւրաքանչիւր աշխարհ և յերկիր ծննդեան: (149 /15; 149 /15; 149 /17; 149/17) Որք փութանակի յուղարկէին ի հրամանէ նորա, և մեծաւ փափագանօք

գնացին ի տուն հայրենի: (149 / 19) Ընդ որս էր և կաթողիկոսն մեծ իշխանութեանն Աղուանից՝ Վիրոյ անուն նորա. այր հանճարեղ և իմաստուն, զօրաւոր ի բանս իմաստութեան, և լեզու նորա իբրև զգրիչ երազագրի ի պատմութիւնս խօսից խորհրդականաց և ի մտավարժութիւն գովութեանց թագաւորաց և մեծամեծաց, նա և խոնարհախօսութիւն նորա քաղցրալուր ռամկաց և խառնիճաղանճ ժողովրդոց: (150 /2; 150 /3; 150 /3) Մանաւանդ ի թարգմանութիւն լեզուին Պարսից վարժեալ նորա ամս քսան և հինգ ի դիպահոջ առ դրանն Խոսրովու՝ յանցական գտեալ զնա ընդ ապստամբողս մեծամեծացն իշխանաց աշխարհիս Աղուանից. որք ապստամբեցան յարքայէն Պարսից և կորեան անկան բազումք ի նոցանէ՝ ոմանք ի սուր և ոմանք ի խեղութիւնս անդամոց, ոմանք տարագրեալք յաշխարհս հեռաւորս: (150 /7; 150 /8; 150 /10; 150 /10; 150 /10) Իսկ նա փախստեայ անկանէր ի դուռն արքունի. և յաջողեցաւ առաջի նորա, զի շնորհք սրբոյ նշանի նորա յորդեցին նմա ճանապարհ ի դուռն թագուհւոյն, որ մեծաւ ջանիւ կարաց գտանել ի պարգևի զկեանս նորա ի թագաւորէն: (150 /12; 150 /13; 150 /14; 150/14) Բայց մեծաւ երդմամբ հաստատէր յանձն իւր թագաւորն վասն նորա՝ զամս կենաց նորա ոչ դառնալ նմա յերկիր իւր. այլ կալ մնալ նմա ի դիպահոջն, որ առ դրանն: (150 /16) Եւ ոչ արգելոյր ի նմանէ զհաս իշխանութեան աթոռոյ նորա, և ոչ զանուն կաթողիկոսութեան նորա երբարձ ի նմանէն. այլ պահէր զնա իբրև զանօթ ինչ ընտիր և խնայէր ի նա իբրև յերիվար ինչ ընտիր քաջընթաց յօր մարտի և պատերազմի. մինչև լցաւ ժամանակ խանդխտութեան նորա, և մերձեցան երկունք հարուածոց անողորմ տանջանաց ի ձեռն չար թշնամեաց աշխարհիս Աղուանից: (150 /17; 150 /18; 150 /18; 150 /20) Եւ առաքէ զնա որպէս երբեմն զՄովսէս ի Մադիամայ, զի եկեալ կորզեսցէ, հանցէ ի ձեռաց արուասպան և իգաչար ազգին՝ առ ի բուծանել զաւակ ի վերայ երկրի զսակաւ մնացեալսն՝ մի յազգէ և երկու ի քաղաքէ: (150 /21; 150 /22; 151 /1; 151 /1; 151 /3) Արդ իբրև ել նա յարքունուստ անտի և եկն ի սահմանս երկրի ծննդեան իւրոյ. փարէր, անկանէր նա ամենայն ուրեք զդրամբք և զհատակօք եկեղեցեաց իւրոյ վիճակին, հեղոյր, յորդէր զարտասուս. և կրկնել զծունր թանայր զգետինն: (151 / 4) Եւ դարձեալ ի յառնելն քաջալերէր զինքն և մխիթարէր, զորս ընդ ինքեան էին՝ գոհանալով զԱստուծոյ, որ եզերծ զնա ի ժանեաց առիւծուն և շնորհեաց նմա տեսանել միւսանգամ զարկս սրբոց եկեղեցեաց: (151 / 6; 151 /8) Եւ մինչդեռ սփռեալ էր զանձուկ սիրոյ իւրոյ ի տեղիս տեղիս ծննդեան իւրոյ, յանկարծակի երկրորդեաց, ինչեաց հողմն հիւսիսային և բախեաց զծովն մեծ Արևելեան: (151 / 12) Եւ նախ՝ նա հաստատէր զերեսս իւր ընդդէմ Վրաց աշխարհին՝ քաղաքին Տփղեաց. և ոչ զոք գտեալ ի ներքս յառաջին քաջ արանցն, տեղի գտեալ սփռելով զոխսն մթերեալս սակս առաջի նախատանացն ի նոցանէ: (151 /16; 151 /18) Եւ իբրև պաշարեաց զքաղաքն և սկսաւ մարտնչել, նեղել զբնակիչսն, որ ի նմա. դարձան և նոքա ընդդէմ նորա: (151 / 19) Յայնժամ գոչեաց գազանն ահագին ի վերայ նոցա, որսացաւ և հեղձոյց բաւական կորեանց իւրոց. և ելից զմորիս իւր որսով և զզօրս իւր յափշտակութեամբ: (152 / 1) Եւ վերացուցեալ զսուրս իւրեանց առ հասարակ դիմեցին ի պարիսպն և զմիմեամբք դիզանալով այնչափ բազմութեանն՝ վերանային քան զպարիսպն գեր ի վերոյ: (152 /3; 152 /5) Եւ անկանէր ստուեր խաւարային և ահ ի վերայ եղկելի բնակչաց քաղաքին: (152 / 5) Լուծան յօդք

անդամոց նոցա, թուլացան բազուկք նոցա, մատնեցան ի պարտութիւն, անկան յետս ի պարսպէն և խուճապեալք որպէս ճնճղուկս ըմբռնեալս ի գործիս որսորդաց, ոչ ոք կարելով ժամանել ի տուն իւր՝ ձայն տալ գուժին ահագին, հրամայել սիրելւոյ ամուսնոյ իւրոյ, կամ գթալով ի ծնունդս որովայնի իւրոյ, կամ զմտաւ ածել զծնողաց զծնողական գութս, այլ պակուցեալք՝ ջանային ծածկել զանձինս իւրեանց. ոմանք ի վերայ տանեաց և ոմանք ի ներքոյ խողովակաց. իսկ բազումք դիմեցին ի սուրբ յարկս եկեղեցեաց և բուռն հարեալ զեղջերաց սեղանոյն: (152/6; 152/7; 152/7; 152/8; 152/9; 152/10; 152/11; 152/11) Ածին և զեկոսին իշխանսն՝ զմի իշխանն պետ կողմնակալ թագաւորութեանն Պարսից, և զմիւսն ի բուն բնակչաց իւրոց, ի տոհմէ իշխանութեանն աշխարհին Վրաց՝ զերկոսեան ունելով: (153 /2; 153 /2) Որք իբրև ածան ձերբակալք առաջի թագաւորին՝ հրամայեաց փորել զաչս նոցա՝ փոխանակ զի կոյր նկարեցին զպատկեր նորա ի նախատել նոցա զնա: (153 / 4) Եւ դառն չարչարանօք հեղձամահ արարեալ զնոսա, ողջոյն վարեցին զմորթս նոցա յանդամոց նոցա. և պրկեալ, հագնեալ, լցեալ զնոսա խոտով՝ կախեցին ի վերուստ զպարսպէն: (153 / 7) Իսկ զզարդուց եկեղեցեաց, զականակապ, զմարգարտայեռ սպասուցն ո՞վ իցէ բաւական առ ի պատմել: (153 / 12) Արդ՝ իբրև արար և կատարեաց նա ըստ կամս իւր և հրամայեաց բառնալ անտի զաւարն ամենայն, ինքն չուեալ անտի հանդերձ գանձիւքն՝ դառնայ ի տեղի իւր. և թողեալ զօրս պատերազմողս ի ձեռն որդւոյն իւրոյ Շաթայ՝ հանդերձ դաստիարակօք արամբք քաջօք, երթալ հրամայէր ի սահմանս Աղուանից: (153 /14; 153 /15; 153 /16) Եւ պատուիրէր նոցա զայս ինչ. ասէ, թէ ելցեն մեծամեծք, առաջնորդք նոցա աշխարհին ընդ առաջ որդւոյ իմոյ և տացեն ի ձեռս զաշխարհն իւրեանց ինձ ի ծառայութիւն և ընդարձակեսցեն զքաղաքս և ամրոցս իւրեանց և զվաճառս առաջի զօրաց իմոց, թողացուցէք և դուք նոցա կեալ և ծառայել ինձ. ապա եթէ ոչ միթ խնայեսցէ ակն ձեր ի նոսա յամենայն հասակ արուի ի հնգետասանամենից ի վեր. և զմատաղատունկս արուացն և զազգն իգականացն պահեցէք ինձ և ձեզ ի ծառայութիւն և յաղախնութիւն: (153 /17; 153 /18; 154 /2; 154 /2; 154 /3; 154 /5) Եւ մեկնեալ ի միմեանց զօրացն՝ արարին ըստ բանին ըստ այնմիկ. ապա եկին հասին /ի տեղին յայնմիկ/ ի հրամայեալսն: (154 /6; 154 /7; 154 /7) Եւ առեալ զաղխն իւր ընդ իւր, յափշտակեալ զբազում ինչս յաշխարհէս աստի՝ զերծաւ գնաց անկաւ ի կողմանս Պարսից: (154 / 12) Իսկ հայրապետն Աղուանից՝ Վիրոյ, որպէս լուաւ, եթէ եհաս լուծ ծանրութեան ի պարանոց իւր միայն, վարանէր յանձն իւր, կասկածէր, երկնչէր ի Պարսից թագաւորէն, քանզի վասն նորին իսկ անուան ապստամբութեան պանդխտեալ էր նա յօտարութեան յաքսորս ի բազում ժամանակս և անսալ պատգամացն և կալ առաջի թշնամւոյն վասն բեկման և կորստեան աշխարհիս կամէր յանձն առնուլ: (154 /13; 154 /14; 154 /16) Ապա ըստ խորագիտութեանն իւրում գրէր թուղթ ի ծածուկ առ թագաւորն Պարսից՝ զսպառնալիս թշնամւոյն, եթէ ներեսցէ նմա թագաւորն, հաճեսցէ առ անգամ մի զմիտս թշնամւոյն իւր առաջի կալով: (154 / 18) Ապա եթէ ոչ ի բաց գնասցէ ի սահմանաց աշխարհացս: (155 /1; 155 /2) Եւ մինչ դեռ նա ակն ունէր պատասխանւոյն ի թագաւորէն, և կամէր հրապուրել պահել ինչ զպատգամաւորսն, որք առաքեցանն առ նա ի թշնամւոյն՝ կալեալ զաչս նոցա

սակաւ ինչ արծաթով: (155 /3; 155 /4) Եւ տանէր բերէր զնոսա պատճառս կազդուրելով. երբեմն ասէր. «Կոչեցից զգլխաւորս, զառաջնորդս ամենայն գաւառաց աշխարհացս, զի միաբանեսցին և նոքա ընդ իս ի պատասխանիս հրամանի թագաւորին ձերոյ». և երբեմն ասէր. «Ոչ ինչ է պիտոյ յամել մնալ ինձ բազմացն խորհրդակցութեան, այլ ես ինձէն պատասխանեցից և յօրինեցից ըստ պատշաճի թագաւորական ընծայիցն ընծայս ի պատիւ ողջունի թագաւորին ձերոյ»: (155 /8; 155 /10) Արդ՝ եթէ ոչ կամիցիս առնել ըստ հրամանի նորա, աճապարեաք փախչել զերծանել, քանզի գտին անձինք մեր մեծարանս և տուրս ի ձեռաց քոց: (155 / 15) Եւ երկնչիմք մեք յաստուածոյ մերոյ, և չկարեմք նենգել քեզ և տեսանել, թէ մխեսցին ձեռք բազմութեան զօրաց մերոց ի քեզ և ի մերձակայ բանակդ և ի ժողովուրդ քո»: (155 /16; 155 /16; 155 /17) Մինչ դեռ նոքա զայս խօսէին, յանկարծակի պատեաց մէգ և մառախուղ զամենայն երեսս երկրիս մերոյ առ հասարակ, զդաշտս և զգլուխս լերանց, զբլուրս և զխորս ձորոց. և ոչ ուրեք մնաց և ոչ քայլ մի ոտին յամենայն սահմանս երկրիս մերոյ, ի շէնս և յագարակս, ի տունս և յանցս ճանապարհաց: (156 / 3; 156 / 4) Եւ այն ի միում աւուր, ի միում ժամու: (156 /6; 156 /6) Ի ծագաց մինչև ի ծագս դողային սահմանքս մեր: (156 /9; 156 /10) Ապա այնուհետև անդ էր տեսանել նմանապէս կատարեալ ըստ բարբառոյ մարգարէին. «Եթէ զոր օրինակ փախնուցու մարդ յերեսաց առիւծու, և պատահիցի նմա արջ, և զերծեալ ի նմանէ՝ անկանիցի ի տուն իւր և յեցուցեալ զձեռս իւր յորմն, և հարկանիցէ զնա օձ»: (156 /13; 156 /13) Այնպէս հասին ի վերայ մեր աւուրքն այնոքիկ, զի յերեսաց սրոյն, որպէս յահեղ առիւծէ ի մագիլս գիշաքարշս բեկանող արջոյ՝ ի ժանիս սովոյն մատնէին: (156 /14; 156 /15; 156 /15) Եւ անտի լքեալք, յօդալոյծք, սովաբեկք, ակամայ դիմեալք ի գերութիւն, որպէս ի չարաթոյն օձից ի յահէ տեսլեան դառնաշունչ թշնամւոյն խածանէին: (156 /16; 156 /16; 156 /17) Ապա ի ծածկել զմեզ ծովային ալեացն այնոցիկ, զհետ մտեալ և կաթողիկոսին մերոյ, հանեալ զնա ի տեղւոջէ ապառաժից վիմայատակ լերանցն ի գեղջն, որ կոչի Կողթագարակ. թողեալ նորա զկահ և զկարասի իւր և զսպաս գանձուցն՝ հեծեալ ի ձի փախստական լինէր առաջի նոցա: (156 /18; 156 /19; 156 /19; 157 /1) Եւ ոչ ոք կարաց ընդ նմա ելանել ի սպասաւորաց իւրոց, բայց մի ոմն յապաեկաց աշխարհիս՝ անուն նորա Գադվշնասպ, այր յաղթանդամ և զօրեղ՝ ի տոհմէ գնդապետութեան ազգին իւրոյ. նա միայն ժամանեաց ելանել ընդ նմա: (157 /2; 157 /3) Եւ ոչ արգելին զարշաւանս թշնամւոյն վիմախառն, ձորախիտ ապառաժք լերանց Արցախական ամուր գաւառացն. այլ գործեցին մեղք մեր առաջի նոցա զդժուարինսն ի դիւրինս և առանց գայթակղութեան էին գնացք ընթացից երիվարաց նոցա ի վերայ գլխոց լերանց: (157 /6; 157 /7) Հասին զկնի կաթողիկոսին թշնամիքն, լարեցին զաղեղունս ի վերայ նորա յիրս դառնութեան: (157 / 8) Յայնժամ սքանչելի շնորհք սուրբ խաչին, զոր ունէր ընդ իւր, անջրպետեաց ի մէջ նորա և թշնամեացն, և ոչ մխեցաւ ի նա ձեռն յաւուրն յայնմիկ: (157 /10; 157 /10) Եւ ի նսեմանալ աւուրն զերծեալքն ախտիւք խնդրէին զխաւար գիշերոյն առաւել, քան զլոյս տուընջեան: (157 / 10) Եւ ի գիշերին յայնմիկ ընդարձակէր ճանապարհ փրկութեան մեծի հայրապետին և ամենայն ապրելոցն: (157 /11) Եւ ժաղովեալ առ ինքն կաթողիկոսին զամենայն գլխաւորս, զորդիս թագաւորազանց մեծաց աշխարհիս, զգաւառապետս և զգիւղապետս, զերիցունս և զսարկաւագունս և

զդպիրս, որ *ի* ժամուն անդ հանդիպեցան յամրոցին Չարաբերդոյ. և ասէ ցնոսա. «Արք եղբարք, դուք ինքնին գիտէք զհարուածս մեծամեծս, զահ և զդողումն անյագ և անողորմ սրոյն, որ վասն մեղաց մերոց առաքեցաւ մեզ և ընկղմեաց յանկարծակի զանձինս մեր: (157 / 18) Եւ ահա եմք *ի* տարակուսանս, և ոչ գիտեմք յո՞ երթիցուք, կամ ո՞ւր փախիցուք յերեսաց նոցա: (157 / 22) Եւ արդ՝ եթէ արասցուք ըստ կամաց նոցա և եթէ ոչ, սակայն օր մահուան մերոյ *ի* ձեռս նոցա յամենայն ժամ նկարեալ է առաջի աչաց մերոց. խորհելով վաղվաղակի արարէք ինձ պատասխանի, որում և ես անսացից տեսեալ զօգուտն, քանզի ստիպէ զիս եկեալ պատգամն. և սա զի ոչ *ի* ռամկաց, այլ նախարարաց *ի* զօրս թշնամեացն և հաւատարիմ դայեակ և դաստիարակ թագաւորորդւոյն Շաթայ»: (158 /2; 158/4; 158 /5) Եւ իբրև զայս խօսեցաւ, ձայն բարձին միաձայն և ասեն. «Ընդէ՞ր խօսի տէր մեր ըստ այդմ բանի այպանել զթշուառացեալ անձինս մեր. իսկ արդ գուցէ՞ ոք *ի* մէնջ իմաստնագոյն քան զքեզ ճանաչել զիմաստութիւն և զխրատ. և կամ համարձակիցի՞ ոք առաջի քո բանալ զբերան իւր և խօսել զբանս հանճարոյ: (158 / 7) Արդ՝ եթէ երկայնամտեսցէ մարդասէրն Աստուած, միթ յապաղեր որպէս հովիւ քաջ դնել զանձն քո *ի վերայ* մեր. վասն որոյ և մեք ըստ կարի մերում դիցուք զանձինս *ի վերայ* քո»: (158 /11; 158 /12) Յայնժամ ասէ ցնոսա. «Եթէ միայն տէր հաճեսցի, ես ոչ զանգիտեմ յերկիւղէ նոցա. բայց դուք զայս արարէք, զոր ասեմս ձեզ. իւրաքանչիւր ոք *ի* ձէնջ ըստ կարի իւրում բերցէ արծաթ և ոսկի և հանդերձս. և միթ ագահեսցեն սիրտք ձեր յինչս ձեր. զի կարասցուք ցածուցանել զերեսս նոցա պատարագօք»: (158 / 14) Յայնժամ բերեալ յօժարութեամբ ամենեցուն եղին առաջի նորա. ապա եհան և նա բազում ինչս *ի* գանձուց իւրոց, որ ինչ պատշաճ էր *ի* պատիւ ընծայից նոցա պարգևաց: (158 /18; 158 /18) Եւ զեկեալն առ ինքն՝ զդայեակ արքայորդւոյն հարցեալ և ստուգեալ *ի* նմանէ զանուանս մեծամեծացն՝ իշխանաց և զօրավարաց, նախարարաց և պետաց, ցեղից ցեղից ամենայն զօրուն իւրեանց՝ ըստ առաւելութեան և ըստ խոնարհութեան նոցա, զի գիտասցէ ինքն պատուել կարասեաւն: (159 / 2) Եւ հրամայեաց կահավարից և սայլից բառնալ. և ասէ ցորս անդն կային. «Իրաւունս համարիմ ես, բայց *ի* խառնաղանճ ժողովրդոց, ձեզ ամենեցուն յայտնի անձանց գալ ընդ իս *ի* բանակն այլազգւոյն, զի հաւատարմագոյն լիցի յաչս նոցա երթն իմ ձեօք հանդերձ *ի* հնազանդութիւն նոցա»: (159 /6; 159 /7; 159 /8) Եւ թոյլ տուեալ ոչ զոք բռնադատէր, այլ օրհնեաց զնոսա, որք ելին ընդ նմա և ասէ. «Քաջալերեցարուիք, որդեակք իմ, միթ երկնչիք, քանզի առաջնորդ մեր է հոգին սուրբ ճշմարտութեան և գաւազանն Մովսեսի, շնորհք սուրբ խաչին Քրիստոսի, առ *ի* հարկանել զալիս ծաւալեալ ծովուն առաջի մեր»: (159 / 13) եւ իբրև անցին ընդ ձորս լերանց և թափեցան *ի* գեղեցկատես, վայելուչ, հարթ հաւասար յուռթի դաշտն Ուտի գաւառի, ոչ կարէին իմանալ նշմարել զտեղիսն ընդ որ անցանէին յանթիւ բազմութենէ զօրացն Շաթայ: (159 / 14) Այլ որպէս երբեմն *ի մէջ* Կարմիր ծովուն, նոյնպէս և սահմանք անթիւ բանակին, մինչև հասանել նոցա *ի* դուռն արքայորդւոյն, պարիսպ էին ընդ աջմէ և ընդ ահեկէ իւրեանց: (159 /16; 159 /17) Գտին զնա բանակեալ *ի* նմին գաւառի ըստ հիւսիսոյ կողմանէ, մերձ *ի* մեծ քաղաքն Պարտաւ՝ *ի մէջ* յորդաբուղխ մօրաջուրցն: (159 /18; 159 /19; 159 /19) Եւ *ի* հասանել նոցա *ի* դուռն նորա էին մեծամեծք և նախարարք առաջի նորա. անդ տեսաք զբազմոցս

նոցա՝ *ի* գուճ *ի վերայ* ծնգաց ըստ նմանութեան փաղանգաց ծանրաբեռն ուղտուց: (160 /1; 160 /1; 160 /2; 160 /2) Եւ զբաժակս և զըմպելիս արծաթեղէն քանդակունս յոսկի համակեալս, զոր բերեալն էր յաւարէն Տփղեաց. ըստ նմին և զըմպոցս եղջիւրեղէնս և շորոմաձևս փայտեղէնս մեծամեծս, որով զարգանականն լափէին և նովին պարարտական սառոյց, անլուայ աղտեղեաւքն յաբխառն յանզգայս *ի* միոյ միոյ բաժակէ երկու երկու կամ երեք երեք *ի* նոցանէն զանապակ գինին կամ զկաթն ուղտուց և ձիոց անյագ յորովայնս իւրեանց իբրև *ի* տիկս ուռուցիկս չափէին: (160 /7; 160 /8; 160 /9) Ոչ օրինաւոր մատռուակք էին առաջի նոցա, ևի ոչ սպասաւորք *ի* թիկանց կողմանէ: (160 / 10) Եթէ ոչ անգամ որդւոյ թագաւորին, բայց *ի* զինուորաց, որք զդուռն նորա պահէին. շուրջանակի ասպարափակ, նիզակախիտ զգուշութեամբ: (160 / 11) Եւ իբրև մուծին զնոսա *ի ներքս* ըստ մի դռնապահսն մինչև ցերկրորդսն, և զընծայ ողջունին, որ բարձեալ *ի վերայ* բազկաց մերայնոցն զկնի կաթողիկոսին. ապա ընթացան ընդ առաջ նորա և հրամայեցին ամենեցուն փոխել ոտն ոտն և երկիր պագանել երիցս անգամ, և զայլսն արգելեալ յերկրորդ դրանն, և փոխեալ *ի* նոցանէ զօժիտսն *ի* բազուկս իւրեանց, տարան զկաթողիկոսն միայն *ի* ներքսագոյն խորանն, ուր նստէր արքայորդին: (160 /13; 160 /14; 160 /16; 160 /16; 160 /17) Եւ *ի* յանդիման լինելն երկիր եպագ կաթողիկոսն *ի վերայ* երեսաց իւրոց. և մատոյց նմա զպատարագսն. նոյնպէս և մեծամեծացն ամենեցուն: (160 /18; 160 /18) Եւ ընկալեալ *ի* ձեռաց նորա և յոյժ բերկրեալ *ի* տեսանելն զնա, հանդերձ բազմութեամբն երթալ առ նա նստել, հրամայեաց նմա մերձ առ ինքն *ի* խորանի անդ: (161 /2; 161 /2; 161 /3) Եւ հայեցեալ ընդ երեսս կաթողիկոսին իբրև ժամ մի, ասէ. «Հայր իմ ես դու, և տեսիլ քո իբրև զտեսիլ Աստուծոյ. և զի՞ յամեցեր գալ առ իս. զի ոչ լինէր այդ շտապ տագնապի *ի* զօրաց իմոց աշխարհիդ քում: (161 / 5) Եւ արդ *ի* գալդ քո ելցեն հրամանք յերեսաց իմոց առ ամենայն զօրս զօրութեան իմոյ, զի դարձցին անդրէն *ի* բանակս իւրեանց և ոչ ևս ելցեն ասպատակ սփռել ընդ սահմանս երկրի քոյ. և բերանոյ քո հնազանդ լիցի ամենայն զօրութիւն իմ. և ուխտ եդից քեզ երդմամբ յարևն հօր իմոյ Ջերու խաքանայ, զի զոր ինչ խնդրեսցես յինէն, անվրէպ կատարեցից: (161 /6; 161 /7) Եւ դու պատուէր տացիր ամենայն իշխանութեան քում, զի դարձցին յիւրաքանչիւր տունս և *ի* վաստակս իւրեանց և *ի* գործս ձեռաց: (161 /12; 161 /12) Եւ ասատակեցից ես ընդ աշխարհս, որ շուրջ զքև և բերեալ հանգուցից զաւարն և զկապուտն *ի* սահմանս քո. և փոխանակ միոյ բեկմանն կրկին հատուցից քեզ զլիութիւն մարդոյ և անասնոյ, զի ստացաւ հայր իմ զաշխարհս զայսոսիկ զերեսին՝ Աղուանից, Լփնաց և Չոբայ իւր սեպհական ժառանգութիւն յաւիտենական»: (161 / 13) Յարեաւ կաթողիկոսն և երկրպագեաց նմա և ասէ. «Ծառայք քո և հօր քոյ եմք ես և ամենայն բնակիչք երկրիս. խնայեաւ այսուհետև յանձինս ծառայից քոց և դարձոյ զսուր քո *ի* մէնջ, զի քեզ ծառայեսցուք և հօր քում, զոր օրինակ ծառայեցաք Սասանականին»: (161 / 18) Ապա հրամայեցաւ նոցա նստել՝ յուտել ընդ ինքեանս. և իջուցին զնոսա *ի վերայ* ծնգաց ըստ օրինին իւրեանց՝ եդեալ առաջի զամանս լցեալ *ի* մսոյն պղծոյ. և ոչ կամեցան ճաշակել, զի էին աւուրք պահոց քառասներորդացն: (162 /6; 162 /7) Եւ թոյլ տուեալ ըստ կամաց ծառայիցն Աստուծոյ՝ բարձին զմիսն և բերին եդին հացս սակաւս անօսրունս

խարշեալս *ի* տապակի: (162 / 9) Եւ յարուցեալ յընթրեաց անտի՝ հրամայեաց յուղարկել զկաթողիկոսն հանդերձ իւրայնովքն մեծաւ պատուով, զի երթիցէ *ի* քաղաքն և հեշտութեամբ ազգի *ի* տան իւրում: (162 /12; 162 /12) Ապա յայնմ օրէ հետէ էր ընդ նոսա *ի* բանակս նոցա՝ *ի* չուել նոցա և *ի* նստել: (162 /13; 162 /13; 162 /13) Եւ իբրև հաստատեցան սիրտք նոցա *ի* նա, ապա և նա սկսաւ համարձակապէս առնել զինդիր իւր և ասէ առաջի արքայորդւոյն. «Որովհետև ծառայք քո եմք, խօսեցայց զօգուտն առաջի քո, տէր իմ: (162 / 14) Զի միթ խոպանացեալ անապատասցի երկիրս, առաքեսցես *ի* քէն գործակալս արս հաւատարիմս յամենայն տեղիս, *ի* շէնս և յագարակս, *ի* բերդս և յաւանս, զի դարձցին բնակիչք երկրիս և գործեսցեն առաց երկիւղի և պահեսցին նոքօք յամենայն բռնութենէ զօրաց քոց: (162 /16; 162 /17; 162 /17) Եւ եթէ միամտութեամբ ստացայք դու և հայր քո զերկիրս *ի* ծառայութիւն, խոնարհեաթց /ճիշտը՝խոնարհեա՝/ դու մեծամեծօքդ յաղաչանս իմ և հրամայեաթ արձակել զամենայն անձինս գերեալս *ի* զօրաց քոց՝ զարս և զկանայս, զաղջկունս և զմանկունս, զոր ունին արգելեալ *ի* խորանս իւրեանց, զի միթ քեցեսցին բաժանեսցին հարք յորդւոց իւրեանց, և մարք *ի* դստերաց, և սարտուցեալ ելանիցեն ըստ երկիրս, որպէս եղինք գործովեալք յորսորդաց յորթուց իւրեանց»: (162 / 21; 163 /2; 163 /2; 163 /3) Այսպէս մեղմ և ողոք բանիւք ըստ հոգևոր իմաստութեան իւրոյ, դարձոյց զսիրտս նոցա *ի* խնդիրս իւր: (163 / 7) Եւ առաքեաց *ի վերայ* այսոցիկ արս յայտնիս, *ի* մօտակայից իւրոց, զորս թնդիւնս անուանէին ընդ արամբք սպասաւորօք կաթողիկոսին: (163 /9; 163 /9) Եւ ելեալ *ի* բանակս նոցա՝ քննէին և յուզէին *ի* խորանս և *ի* վրանս նոցա. և զթաքուցեալսն *ի ներքոյ* կարասւոյ կամ գրաստու պատանաց զմատաղ մանկունսն նոցա քարշէին, ածէին արտաքս, և ոչ ոք իշխէր հարկանել ընդդէմ նոցա: (163 /11; 163 /11; 163 /11; 163 /12) Եւ ժողովեալ երամ երամ՝ ածէին *ի* դուռն կաթողիկոսին: (163/13) Եւ նա, իբրև հաւ *ի վերայ* ձագուց գթացեալ, զգեցուցանէր զմերկսն և կերակրէր զկարօտեալսն, և առաքէր յիւրաքանչիւր տունս: (163 / 14) Եւ շնորհք Աստուծոյ էին ընդ նմա. և յաջողէր յամենայն ճանապարհս և *ի* խորհուրդս իւր: (163 / 16) Եւ մեծացաւ անուն նորա *ի* մէջ բազմութեան թշնամեացն մինչև յօրն, յորում այց արար Աստուած *ի* ձեռաց նոցա ժողովրդեան իւրում *ի* փրկութիւն: (163 /16; 163 /17; 163 /18) ՎԱՍՆ ՍԱՍՏԿԱՑԵԱԼ ՍՈՎՈՅՆ, ՍՐՈՅՆ ԵԻ ԳԵՐՈՒԹԵԱՆՆ *Ի ՄԻԱՍԻՆ* (164 / 2) Պարտ և արժան է մեզ այսուհետև յիշել վասն ժամանակի նեղութեան սովոյն, զի եկն եհաս, եռացոյց *ի ներքոյ* ոտից մերոց զմուկն ծախող. և եկեր զամենայն բոյսս և սպառեաց զամենայն պտուղ անդաստանաց մերոց: (164 / 4) Ապա *ի մի վայր* գումարեալք սոսկալի զօրավարքն երեքին՝ սովն, նի սուրն, նի մահն՝ գործակիցք նոցա զոյգ ընթացեալք *ի* միմեանս խուճապէին, և յանխնայ վիրաւորէին և դիաթաւալ տարածանէին: (164 / 5; 164 / 6) Չուառացեալ զերծեալքն աղերսէին լերանց, եթէ անկերուք *ի վերայ* մեր. ահաբեկեալք *ի* նոցանէն *ի* տերևոյ նեթ խարշափելոյ սրտաթափք: (164 /10; 164 /11; 164/11) Եւ *ի* ժամանակի նեղութեան յաւուրս քառասներորդացն պահոցն յախուռն, անխտիր մերձեցեալ *ի* գէշ մեռելոտեաց անսրբոց, այլ և զարմատս բանջարոց և զկեղևս ծառոց հանեալք և զծայրս ոստոցն ծամէին. և ոչ ինչ լինէր օգուտ ուժի ինչ յուտելն: (164 /11; 164 /13) Եւ բազմութիւն սովածացն ժողովեալ *ի մի վայր* դիմէին *ի վերայ* այնպիսեացն, որ ունէին.

յափշտակէին *ի* նոցանէ և պատուհասակոծ ևս առնէին վասն ընչիցն: (164 /16; 164 /16; 164 /16) Եւ լուայ *ի* հաւատարիմ մարդոց, եթէ տեսաք մեք զոմանս յուտել զմեռելոցն անդամս, այլ և զբազմաժամանակեայ մորթս արջառոց և զպարկս ծխակերս և զօդս կօշկաց հնացեալս եփէին և ուտէին: (164 / 18) Այլ օրինակ մերոցն փորձութեանց ոչ կարեմք գտանել, բայց միայն զաւերն Երուսաղեմի *ի* Վեսպիանոսէ և *ի* Տիտոսէ: (165 /4; 165 /5) Եւ կատարէր բանն մարգարէական, եթէ՝ «թաղումն իշոյ թաղեսցի, և հաց սգոյ միւթ բեկցի *ի* տան ձերում»: (165 / 7) Եւ *ի* ժամուն յայնմիկ և *ի* խառնել դալարտոյն առաւել էր թիւ սատակելոցն, քան զամենայն աւուրս ձմերայնոյն: (165 /7; 165 /8) Եւ մանաւանդ որք կարևոր էին *ի* լսել և *ի միտ առնուլ*, որ է այս ինչ. մօտ *ի* վախճան ժամանակին կատարածի սովոյն այլ իմն ախտք հիւանդութեան տարածեցան ընդ սահմանս աշխարհիս, որ ոչ էր ըստ բնութեան այլոց ցաւոց: (165 /9; 165 /9; 165 /10) Զորս ողբալ *ի սուգ առի* աւուրս բազումս *ի վերայ* անթիւ խայտամահացն՝ աղաչելով զամենողորմն Աստուած, զի յանգումն արասցէ անտանելի հարուածոցն: (165 /20; 165 /21) Ես Վիրոյ Աղուանից և Լփնաց և Չորայ կաթողիկոս թողում ասել զայլն ամենայն զպէսպէս զազրալիս՝ զմարմնոց սևութիւն և զկնտութիւն գլխոց, զի յայսմ ևս յայտնի լիցի բան մարգարէական, եթէ՝ «Ածից *ի վերայ* ամենայն հասակաց քարձ և *ի վերայ* ամենայն գլխոց կնտութիւն, և արարից նմա իբրև զսուգ սիրելւոյ»: (166 /5; 166 /5) Ապա իբրև ետ Աստուած կատարել զամենայն կամս իւր, յիշեաց իբրև զՆոյ *ի* ջուրցն հեղեղէ *ի* տապանի անդ: (166 /7; 166 /7) Եւ գթացեալ ետ նոցա զինդրուածս նոցա, առաքեաց լիութիւն յանձինս նոցա. յագեցոյց զքաղցեալս և լի արար զկարօտեալս բարութեամբ, զի վայելեալք յաւելցեն *ի* փառաւորութիւն Աստուծոյ: (166 / 9) ՍԱԿՍ ՄԵԾ ՍՔԱՆՉԵԼԵԱՑՆ ՈՐ ԽՆԴՐԵՑԱՒ ՎՐԷԺ *Ի* ԹՇՆԱՄԵԱՑՆ (166 / 11) Եւ եդ զահ և զերկիւղ ընդ երեսս երկրի. և առաքեաց գործակալս *ի վերայ* ազգի ազգի արուեստագործաց, որք զգիտութիւն ոսկեձնութեան, ևի արծաթահալութեան, ևի երկաթահանութեան, ևի պղնձագործութեան ունէին: (166 /14) Եւ իբրև ստուգեաց զամենայն բարութիւնս երկրիս և հաստատեաց *ի* միտս իւր զոչ ծածկեալն *ի* նմանէն, եդ *ի* մտի իւրում *ի* ժամանակս ամառնային վարել յաշխարհին Հայոց, և զնոսա ևս սահմանակցօք իւրեանց ածել *ի հնազանդութիւն*: (167 /3; 167 / 3; 167 /3; 167 /3; 167 /4) Եւ ընտրեալ *ի* զօրաց իւրոց արս զօրաւորս իբրև երիս հազարս և իշխան նոցա Չորպան Թարխան կոչեցեալ՝ այր ժպիրհ և արիւնարբու: (167 / 5) Արդ՝ իբրև եհաս իշխանն առաջապահ նորա յաշխարհին Հայոց, լսէր այնուհետև զգալն ընդդէմ նորա զօրավարին Պարսից՝ ընկճեալ կայր իբրև զօձ *ի* ճանապարհին դարանակալ և պահէր առաջի նորա զճանապարհն: (167 / 12) Յայնժամ և նա հրապարակախօս լինէր *ի մէջ* իւրոց և կարծիս տայր կտրել զշառաւիղս Սասանականին և իւր՝ զթագաւորելն: (167 / 15) Եւ զիա՞րդ ոչ փրկեաց զնոսա դիեցիկն իւրեանց, յոր յուսացեալն էին, որում և եդեալն է խաղալիկ *ի* ձեռին, և զգուէին *ի* գիրկս որպէս մանուկ ընդոծնի իւրեանց: (168 /1; 168 /1) Այլ անկան պարտեցան առաջի սակաւաւորացն, որոց և անմարդի գտեալ զձեզ՝ հաստատեցան *ի* սիրտս իւրեանց ժառանգել զփառս Արեաց աշխարհիս»: (168 / 3) Եւ զայս ասացեալ՝ հպարտութեամբ բարբառէր առ մի ոմն քաջարանց զօրուն իւրոյ, զոր Հոնահն կոչէին՝ իշխան գնդին տաճկաձիաց. «Արիի, ասէ, անց *ի մէջ*, ընտրեաւ դու քեզ գունդս՝ արս արիս իբրև տասն

հազարս և դիմեաք *ի վերայ* նոցա: (168 /5; 168 /6) Եւ միւք ընտրեսցես վասն նոցա տեղի պատերազմի. և միւք ճակատեսցիս ընդ նոսա. և միւք ձգեսցես զսուր քո *ի* պատենից իբրև վրէժխնդիր *ի վերայ* թշնամեաց իւրոց, զի միւք պարծեսցին յազգս իւրեանց. եթէ սրով իւրեանց սատակեցին զնոսա. այլ ընդ ոտս և ընդ լանջս երիվարաց քոց կոխեսցես զնոսա և հոսեսցես զնոսա իբրև զփոշի առաջի հողմոյ: (168 /7; 168 /8) Այլ և զայս արասցես ընդ նոսա, զի *ի* սպառել զառաջինսն՝ յառաջեսցես մխել *ի* պատերազմ թագաւորին և *ի* բանակս նորա և քեզէն միայն վճարեսցես զգործ պատերազմին ընդ նմա: (168 /11; 168 /11; 168 /11) Արդ իբրև լուաւ զայս հպարտն *ի* հպարտէն, պանծացեալ յանձն իւր. ելանէր ճոխութեամբ յերեսաց նորա. և հանդէս արար զօրուն նորա և եհաս ընդդէմ թշնամւոյն: (168 / 15) Եւ իբրև եղեն իրազէկ թշնամիքն, յառաջ քան զգալ նոցա դարան գործեալ *ի* ճանապարհին՝ կէսն ընդդէմ նոցա ճակատեալ կային: (168 / 18) Եւ բախեալ ընդ միմեանս՝ իսկոյն *ի* փախուստ դառնային առաջի նոցա: (168 / 19) Եւ յարուցեալք աստի անտի գոչէին *ի վերայ* նոցա. և շուրջ պատեալ որպէս հուր յեղէգն զեզերք ծովուն Գեղամայ, ոչ թողին *ի* նոցանէ և ոչ մի. և ոչ ոք էր, որ գուժկան լինէր այնչափ արանց: (168 /20; 169/1) Արդ՝ իբրև պարտեցաւ այն ևս հպարտութիւն, գիտաց *ի* միտս իւր ամենայն պատերազմող և որ կապէր զսուր իւր յազդեր, եթէ ոչ ինչ համարի առաջի նոցա իշխանութիւն թագաւորաց և զօրութիւն զօրավարաց: (169 / 11) Այնուհետև դարձոյց զերեսս իւր կատասյն հիւսիսոյ՝ անդրէն յետս ընդդէմ որդւովքն իւրովք. և սկսաւ ոգորել իւրովի ընդ ինքն և ցանել զեռանդն բարկութեան իւրոյ *ի վերայ* կորեանց իւրոց, և տուժել ընդ միոյ հազարս և ընդ երկուց՝ բիւրս: (169 / 16) Քանզի սկսայ ասել վասն ահագին և սոսկալի հատուցմանն, որ հատուցաւ *ի* գլուխ թշնամեաց մերոց: (169 / 18) Եւ յուլին միտք իմ բազում ճառօք ածել օրինակս. մի՞թէ առաւել իցէ քան զընկղմելն Փարաւնի, կամ ամբառնալ խաչանման ձեռացն Մովսեսի *ի* հարկանելն զԱմաղէկ, կաթմ մեծ, զոր Գեդէոնն կոտորեաց, կաթմ սկայազօր քաջութիւն որդւոյն Յեսսեայ, կաթմ սոսկալի ահ գիշերոյն, որ եհաս *ի վերայ* Ասորեստանոյն և որ սոցին նման: (170 /1; 170 /2) Այլ մեք *ի* նոյն դարձցուք *ի* կարգ բանիցն, զի մեծ արար տէր զյառնելն իւր ընդ մեզ, և մեք ոչ նայեցաք: (170 /3; 170 /3) Դիմեցին նոքա *ի* կիրճս ճանապարհաց երից աշխարհացն՝ Հայոց, Վրաց և Աղուանից: (170 / 5) Եւ անդ ընկճեալ վաղվաղակի հասանէր բօթն ահագին *ի* հիւսիսական օձտող առիւծէն, որ էր նա ինքն Ջերու խաքան, առ գիշախանձ կորիւնն իւր՝ Շաթ, թէ հասին *ի վերայ* իմ հէնք, և ոչ յաւելուս տեսանել զերեսս իմ. փոխանակ զի ոչ կացի ես յակաստանի, այլ ձգտեցայ յանպատշաճ թագաւորութիւնս, որ ոչն էր ինձ անկ: (170 /6; 170 /7) Եւ արդ՝ դու մի՛ յապաղէր զազգդ ամենայն սատակել, որ ընդ մեզդ են և ջանա՛յ ապրել *ի* ձեռաց դոցա. զի յառաջագոյն լսել դոցա զեղեալքս, վաղվաղեսցեն պատառելզքեզ. այլ ես կորեայ և անզաւակացայ: (170 / 11) ՎԱՍՆ ՄԻՀՐԱԿԱՆ ՏՈՀՄԻՆ՝ ԼԻՆԵԼ *Ի* ՍԱՍԱՆԵԱՆ ԽՈՍՐՈՎՈՒ ՑԵՂԷՆ ԵԻ ԼԻՆԵԼ ՆԱԽԱԳԱՀ ԱՂՈՒԱՆԻՑ ՏԱՆՍ (170 / 14) *Ի*ստոյգ և *ի* բուն օրինակս պատմագրաց այսպէս ծանեաք, եթէ Բնդոյ և Վստամ եղբարք՝ ազգայինք Պարսից թագաւորին, յարեան *ի վերայ* Որմզդի արքայի՝ հօր Խոսրովու, և սպանին զնայ և ինքեանք զնացին զհետ քեռորդւոյն իւրեանց Խոսրովու՝ որդւոյ Որմզդի, փախստեայք եղեալ *ի* ձեռաց Վահրամայ Չոբինն կոչեցելոյ՝ անկանին *ի* Յոյնս առ Մօրիկ թագաւորն Հռոմոց: (170 /16; 170 /16;

170 /17; 171 /2; 171 /3) կոտորէ զերկոսեան զքեռիս իւր՝ զԲնդոյ և զՎստամ և ի նոյն ազգէ իբրև արս վաթսուն: (171 / 7) Ուստի լեալ փախստական Միհրանայ՝ ազգակցին Խոսրովու, միաբանէ ընդ իւր զկողմանս աշխարհացն. և առեալ երդս իբրև երեսուն հազար՝ անցանէ ի կողմանս Աղուանից, հասանէ յՈւտի գաւառ՝ մերձ ի քաղաքն մեծ Պարտաւ: (171 /9; 171 /9) Կամէր անտի ևս մտանել ի Խազիրս և յաւելուլ ի թշնամիսն: (171 /10; 171 /10) Իսկ արքային Խոսրովու լինին մեղադիր պատուաւորքն իւր, թէ ընդէ՞ր ոչ է քեզ փոյթ վասն Միհրանայ ազգակցին քո, որ յերկիւղէ քումմէ յաւելաւ ի թշնամիս քո և յարուցանէ ի վերայ քո խռովութիւն: (171 /12; 171 /12) Նա իսկ և իսկ առաքէ գիր խոնարհութեան զկնի Միհրանայ. «Եղբայր իմ և հարազատ, մի՛ լիցի քեզ հեռանալ յինէն թշնամութեամբ. և եթէ ոչ հաճեցար ընդ իս բնակել, ուր հրովարտակդ իմ հասանէ, երկիրդ այդ քեզ լիցի ի բնակութիւն, որչափ և հասանեն գնացք ոտից քոց»: (171 / 15) Եւ ի գալ հրովարտակին՝ պատահի նմա ի սարոտն գաւառին Գարդմանայ. զոր առեալ ընթերցաւ և լի եղև ուրախութեամբ: (171 /17; 171 /17) Եւ տեսեալ զբարելաւութիւն աշխարհին՝ հաճեցաւ ի նմա լինել բնաբար: (171 / 18) Իսկ ի գալ գարնանային աւուրցն՝ ելանէ ի վերկոյս Գարդման գաւառի. դաւով առ ինքն կոչէ ի գլխաւորացն արս երկոտասանս, սրով բառնայ և տիրէ աշխարհին: (172 /1; 172 /1; 172 /2) Եւ նենգեալ ի սիրտ իւր զնախնական ազգն Հայկազնեանց՝ Եռանշահիկս, զոր վերագոյն գրեցաք ի մատենիս, կոչէ որպէս ի սէր իմն ի ճաշ, և հաց կորստեան գործեալ նոցա՝ տալ ուտել ի ճաշի անդ արեամբ իւրեանց: (172 /5; 172 /6; 172 /6; 172 /6; 172 /7) Արար գլխատումն արանց վաթսնից, միայն թողոյր ի նոցանէն զփեսայացեալն իւրում ցեղին Զարմիհրն Եռանշահիկ: (172 / 7) Սորա լինի որդի Վարդ. Վարդ ծնանի զՎարազման և զՇուշիկ տիկին և զՎարազ Գրիգոր՝ առաջին իշխանն Աղուանից, որ էառ զմկրտութիւն ի Վիրոյէ՝ Աղուանից կաթողիկոսէ: (172 / 11) Վարազ Գրիգորի լինին որդիք չորք՝ Վարազ Փերոժ, Ջուանշիր, Յեզուտ Խոսրով, Վարազման. այս կացցէ ի պատշաճն: (172 / 13) ԳՈՐԾՔ ԵԻ ՔԱՋՈՒԹԻԻՆ ՄԵԾԻ ԻՇԽԱՆԻՆ ՋՈՒԱՆՇԻՐԻ՝ ԵՐԿՐՈՐԴ ՈՐԴՒՈՅՆ ՎԱՐԱԶ ԳՐԻԳՈՐԻ ՈՐ Ի ՊԱՐՍԻԿՍ ԵՑՈՑՑ ԱՐՈՒԹԻԻՆ ՔԱՋՈՒԹԵԱՆ (172 / 17) Զօրանայ ազգն Հագարու՝ միաբանեալ իբրև ցեղս տասն. խրոխտ և ահեղ յոլովութեամբ յերկրէ հեռաստանէ դիմեալ գան իբրև մրրիկ ընդ անապատ, անցանեն ընդ կողմանս Ասորեստանի և ելանեն տագնապաւ ի վերայ տէրութեանն Պարսից: (173 / 4) Յայնժամ, որ միանգամայն ի ձեռս թագաւորութեան Պարսից էինն, զօրավարք և իշխանք, տեարք և բնաշխարհիկ ազատք կողմանց կողմանց զօրաժողով լինէին կալ ընդդէմ օտարազգւոյ թշնամւոյն: (173 / 5) Եւ ի լինել այսորիկ՝ Վարազ Գրիգոր՝ իշխանն Աղուանից, ըստ սեպհականն իւր լինելոյ յԱրտաշրական տոհմէ՝ տեսեալ զերկրորդ որդին իւր Ջուանշիր խրոխտ և սիգողաճեմ, չքնաղագեղ ունելով տիպ: (173 / 8) Դեռ ևս կամէր ծաղկել և ի ծնօտսն տէգ մօրուացն, սիրեցեալ յաչս հօր, պատրաստ ի սպառազինութիւն, քաջասլաց իբրև արծուի: (173 /10; 173 /11) Վստահ եղեալ հօրն յամենայաջողն Ջուանշիր՝ հաստատէր ի միտս իւր լինել նմա հնարաւոր ի կեանս աշխարհիս հաւասարել զինքն ի մեծամեծս և կալ առաջի թագաւորաց: (173 /12; 173 /12; 173 /13) Վասն այսորիկ յորդւոց անտի փոխանակ իւր պատշաճ համարէր զնա առաքել ի դուռն արքունի: (173 / 14) Որոյ առեալ զգունդն ի հօրէն՝ նախքան զիշխանն Սիւնեաց և սպարապետն

Հայոց յառաջէր հասանել ի համաշխարհականն յայն բիւրաւոր ժողովս: (173/15; 173/16) Անդ առնոյր զօրավարն զյոգնահազարս հեծելոց, գայր հասանէր ի Տիզբոն քաղաք առ թագաւորն Յազկերտ և յանդիման առնէր զմանուկն Ջուանշիր: (173 / 19) Նոյնժամայն եդեալ արքային զձեռն ի գլուխ նորա գովեաց և կոչեաց զնա սպարապետ Աղուանից: (174 / 1) Եւ անցեալ ընդ գետն Դկլաթ՝ եհաս ի Վեհկաւատ գաւառ. ի բազումս պարծեցեալ զօրս՝ մեծամեծս խրոխտանայր՝ առաթուր հարկանել զհարաւայինսն ամենայն: (174 /3; 174 / 4) Եւ յորժամ ելանէին ասպատակք ի նոցանէն, ելանէր և սպարապետն Աղուանից և զյաջողութիւն ցուցանէր արիաբար: (174 / 6) Եւ յետ սուղ ինչ աւուրց յամսեանն մեհեկանի, որ օր ծննդեանն էր Քրիստոսի, երեսուն հազար հեծելոց և տասն հազար հետևակաց զինեալ ընդդէմ նոցա ճակատեցան, և որդիքն Հազարու եկեալ ի Կատշանէ՝ բազմութիւն հեծելոց և քսան հազար հետևակաց՝ ասպարախիտ շարժմամբք յառաջ խաղացեալ նախաձեռն լինէին՝ հարկանել զզօրն Պարսից: (174 / 10) Իսկ սպարապետն Աղուանից ընդ արս զօրութեան միջամուխ լեալ՝ զերկուսն ի դիմամարտիցն հարեալ ընկենոյր, և գայր ելանէր երիս վէրս դժնդակս յանձին բերելով և զերիվարն ի չորս վայրս խոցեալ. ուստի մինչև ցգետն Եփրատ հինահալած արարեալ՝ արշաւանօք զհետ ընթանայր թշնամին: (174 /13; 174 /15) Իսկ իբրև ետես զմեծամեծսն և զզօրսն ամենայն իբրև զխոտ հնձեալ, աճապարէր անդէն ի դուռն արքունի: (174 / 18) Ապա գտեալ զառողջութիւն՝ մտանէ առ արքայ, և արքայ դնէ զձեռն ի գլուխ նորա և բանս բարեաց ի լուր ամենեցուն զնմանէն խօսէր: (175 /4; 175 /5) Եւ ըստ զօրավարաց կարգի տայր նմա նշանակս և փողս ազդեցութեան՝ երկուս նիզակս ոսկիս և երկուս վահանս ոսկեքանդակս, զոր միշտ առաջի շրջեցուցանէին և նախամեծար քան զամենեսեան առնէին. ընդ մէջ ածեալ զօտի ոսկի ընդելուզեալ մարգարտով, և սուսեր ոսկեստրեայս, ապարանջանս բազկացն և պսակ ցանկալի ի գլուխ նորա. ետուն նմա զանկապանս մարգարտով և գումարտակ նոյնգունակ՝ շուրջ զպարանոցան: (175 / 9) Քանզի Իմայ և Ահմատան երկու զօրավարք սաստիկ վրդովմամբ զմիմեանս բախէին ի կռիւ: (175 / 15) Եւ ինքն որպէս զիմաստուն ոք զնոսա ի խաղաղութիւն վարեաց. ուստի և զօրավարն Խոռազատ բազմամեծար յարգանօք ընդ իւր առեալ ածէր: (175 /17) Իսկ յութերորդ ամին Յազկերտի ել միւս անգամ թշնամին և պաշարեաց զարքայ ի Տիզբոն քաղաքի զամիսս վեց: (176 / 2) Անդ ակն ի վեր եղեալ արին Ջուանշիր՝ երիւք հազարօք նախընթաց լինէր ի վերայ և հինահալած արշաւանօք տարեալ նոցա անցուցանէր ընդ գետնն ոչ տայր նոցա թոյլ զամիսս վեց անցանել ընդ Դկլաթ գետն, մինչև առեալ զթագաւորն ելանէին ի Դաստակերտն Մեծ: (176 /3; 176 /4; 176 /7) Եւ ահեղ յոլովութեամբ դիզանայր թշնամին ի վերայ նորա. և անտի շարժէին զթագաւորն ի Բեկղաղ. և որդիքն Հազարու յոգնահազար բռնութեամբ նմանեալ ալեաց ծովու զհետ շարժեալ խաղային: (176 / 7; 176 / 8) Յետ այսորին ճակատ առ ճակատ պատերազմ խմբեալ. և եղև բեկումն չար ի տեառնէ Պարսից զօրուն ի լրման ժամանակի նոցա. և վերնառաք հրամանն երթայր կործանէր զթագաւորութիւն նոցա: (176 /13; 176 /14) Արդ՝ զամս եօթն ի պատերազմունս յայսոսիկ տարժանեալ մրցէր քաջն Ջուանշիր մետասան դժնդակ վէրս յանձն առեալ՝ գայր հրաժարեալ ի նոցանէ յԱտրպատական գաւառ: (176 /17; 176 /19) Եւ տեսեալ զայնքան հռչակեալ նորա անուն՝ զօրապետն Պարսից

ստիպէր զնա՝ առնուլ զքոյր իւր ի կնութիւն: (176 /21) Նմանեալ նահապետին Յակոբայ՝ ի տեսանել զանդրանիկն Հռաքելի, առ որ հոգին արծարծեալ. այսպէս փարէր զորդւովն իւրով՝ զգոյն երեսաց ալեծաղիկ զարդարեալ: (176 / 23) Եկեալ մեծապանծ անուամբ ամենապայծառն Ջուանշիր ի Պարսկաստանացն մարտից՝ հանդիսացուցանէ ընդ ինքն զբովանդակ տունն Աղուանից ըստ թագաւորական հրամանին: (177 / 6) Եւ քաջքն Պարսից շարժեալ գային ի վերայ աշխարհիս սակս ապստամբմանն Ջուանշիրի: (177 / 9) Եւ մինչդեռ առաջք թշնամեացն զառ ստորին կոյս նորին գաւառի ճեպով ելանէին՝ անդէն վաղագոյն ճեպով ի վերայ զինեալ ինքնաձեռն լինէր հարկանել անդ զգիւղմնազգի ոմն հեղինակ զօրուն: (177 / 11) Առ որ սրահար ճարակմամբ ինքն և զօրքն իւր անկումն բազմաց առնէին. այլ և ձերբակալս ի նոցանէ ևի ձիս, ևի ջորիս, ևի կապուտս յոլով առեալ դառնային: (177 / 13) Լինէր միւս անգամ ի լեռնավայրի անդ բախումն ընդ միմեանս. յաջողեցաւ ևս այն օր նմա ի տեառնէ առնելով զյաղթութիւն: (177 /15; 177 /15) Եւ իսկոյն եհաս գեղուր գուժի, եթէ մտին զօրքն Պարսից ի Պերոզ Կաւատ և զմայրն հանդերձ եղբարբքն գերի առեալ վարեցին: (178 / 1) Եւ դառնացեալ ճեպով անցանէր զհայրենի վիճակին իւր սահմանս յայնկոյս գետոյն Կուրայ ի Կապիճանն գաւառ և անդ դնէր ընդ նոսա ոչ վարկպարազի, այլ խոհականապէս դէմ առ դէմ ռազմ պատերազմի: (178/4) Եւ անզանգիտող մրցմամբն իւր առնոյր վէր ի գլուխն, այլ բաւական աջոյն Քրիստոսի օգնութեամբ սաստիկ և զօրեղ զինքն եցոյց, մինչև որ միոյ առն մնալ ի թշնամեացն, որ ոչ սատակեցան: (178 /6; 178 /7) Եւ անդ մեծապատիւ այրն Ատրներսեհ՝ իշխան աշխարհին, որ երրեակ իշխանութեան գահերիցութիւն ի Հռովմայեցւոց թագաւորութենէն ունէր, գայր առ նա և իւրովի պատէր զվէրս նորա. և զմեծ քաջութեան նորա զյաղթութիւն խնդութիւն համարեալ: (178 / 10) Յայնժամ խաղաղական և անքակ միաբանութիւն հաստատեալ ընդ միմեանս՝ առնու յօգնականութիւն զզօրսն Վրաց, աճապարէր նախարշաւ յՈւտիականն գաւառ. և ուր միանգամայն գտանէր զոք ի զօրացն Պարսից սրոյ ճարակ առնէր: (178 / 14) Եւ նոյնգունակ հասեալ շտապ տագնապի ի վերայ ձմեռնահանգիստ քաղաքին իւր առնէր, մինչև զհասականծին և արգանդակիցս մանկունս պահանջմամբ թափէր: (178 / 15) Իսկ նա ոչ ինչ կասկածէր ի նոցանէ, զի բնութիւն էր ի նմա, որ առ բազումս խիզախող լինէր առաւել, քան, առ սակաւս: (178 /18; 178 /18) Որ և ի Շակաշէն գաւառի յերկու իմն պատերազմունս զհազարաւորս հանդերձ իւրեանց գնդիւն քաջավրիժակ խոցոտմամբ կենազրաւէր: (178 / 19) Եւ եթէ զորս յետ այսր եղեալ ի տեղիս տեղիս անթիւս սրահար ջարդմունս պարսկացն ի Ջուանշիրէ անտեղի է ասել: (179 /2; 179 /3) Յայսոսիկ նայելով նախարարացն Հայոց և Վրաց աշխարհին՝ խորհէին ի ծննդոց իւրեանց տալ նմա կին: (179 / 4) Իսկ զօրավարն Պարսից գիտացեալ զմեծ պարտելն իւր ի նմանէ և զկործանումն զօրացն՝ շրջեալ ի սէր խաղաղութեան. գրէր թուղթ և արձակէր զմեծագահ իշխանն Սիւնեաց մեծաւ երդմամբ գալ նմա ի միաբանութիւն, զոր հազիւ ուրեմն հաւանեցուցանէր միջնորդն՝ առնել զմիակամ սէր և խաղաղութիւն: (179 /7; 179 /8; 179 /9) Զայս կնքեալ խորհրդաբար ի մտի իւրում՝ դառնայր, և սպարապետն Աղուանից մարբն և եղբարբքն հանդերձ դառնայր յաշխարհն իւր: (179 / 11) Եւ ահա յիշեցեալ զնուազելն մեծ թագաւորութեանն Պարսից, և զառաջնոց թագաւորացս

արևելեացս ինքնակալութիւնս և զիւրն նմանեցուցեալ արքայաբար շուք՝ դնէր ի մտի զիշխանութեանն իւրոյ վիճակ ոչ ումեք լինել ընդ ձեռամբ: (179 / 14) Խիզախէր և առ Պարսիցն զօրապետ իւրաքանչիւր կողմանցն իշխել առանձնակի, և ինքն եղբարբքն հանդերձ ելանէր ի հայրենի գաւառն: (179 / 17) Իսկ զօրագլուխն Պարսից դաւաճանեալ կոչէ պատճառաւոր բանիւք զհայր նորա, զի ի հնազանդութեան կացցէ նմա. և արձակէր գունդս և կարգէր կողմնակալս Աղուանից նահանգիս: (180 / 1) Արդ զի՞նչ արասցէ արին այն Ջուանշիր և անդրանիկ եղբայրն իւր. արք չառանձնողք քինախնդիր եղեալ, զէն զանձամբ արկեալ՝ հեծան յարագընթաց երիվարս, և զերկայն զայն ուղի և կարճ բերելով գային շրջագայութեամբ անդ ի Պերոզ Կաւատ քաղաք՝ ի զուարափակ և յանտառախիտ տեղւոջ զառաջին քնովն ղօղեալ: (180 /5; 180 /5) Եւ ընդ ծագել արեգականն ձիարձակք եղեալք որպէս կորիւնք առիւծու զքաղաքն յափշտակէին, և զորս ի քաղաքին կամ յամենայն սահմանս ընդ հրամանաւ զօրավարին Պարսից գտանէին, չարաչար պատժէին: (180 / 8) Եւ ի քսաներորդի ամի թագաւորութեանն Յազկերտի համօրէն ի բաց բառնայր ի միջոյ տէրութիւնն Պարսից. և այն երեսուն և մի ամի էր տիեզերամարտութեանն Հազարացւոց և տեառն իմոյ Ջուանշիրի հնգետասան ամ: (180 /11; 180 /11; 180 /11) Եւ այսպէս տաճիկք յարձակեցան ի կողմանս հիւսիսոյ և արևելից. և վտանգէին զտեարս տոհմից տալ ի ձեռս զտեղիս ապաւինութեան և պատանդս առնուլ զզաւակս և զկանայս՝ չապստամբելոյ ի նոցանէն: (180 /14; 180 /15; 180 /16) Իբրև տեսանէր զզաւազանն խստութեան հարայնոյն Ջուանշիր փոքր ինչ ժամանակ դաւաճանեալ զնոսա. էանց յայնկոյս գետոյնն, ուստի անվեհերն իւր սիրտ վառէր, բորբոքէր վերստին առնել առ նոսա պատերազմ, զի զհայրն իւր ի նոցանէ ևս թափեսցէ: (181 / 2) Եւ հայր նորա արգելոյր զնա ի խորհրդոյն և գնայր կամաւորաբար ի թշնամիսն: (181 /3; 181 /3) Իսկ բազմիմաստս Ջուանշիր ընդ զօրավարին Հայոց դնէր ուխտ և քաջալերէր դառնալ ի հնազանդութիւն կայսերն Հոռոմոց. եղեալ միակամն եղբայրութեան՝ գրէ առ թագաւորն Յունաց օրինակ զայս: (181 /4) Հաճոյ թուեսցի քրիստոսասէր տէրութեանդ ախորժելով ընդունել ի հեռաւոր անձանց զնորընծայ հնազանդութիւնս. զի ի մեծ վայելչութենէ փառացդ պարգևեսցի և պսակաբաղձիկ խոնարհութեանս մերում աստուածաշնորհ բարերարութիւն»: (181 /12; 181 /13) Եւ որ ի կենեղուտ խաչէն Քրիստոսի մասն, զոր միշտ ի ծոց իւր կրէր, հանեալ յիւրմէ առաքէ նմա: (182 /4; 182 /5) «Քեզ տեառնդ Ջուանշիրի՝ Գարդմանայ տեառնդ և Աղուանից իշխանիդ, ապուհիպատ և պռոտոն պատրիկ և արևելից կուսակալ, ի փրկական խաչիս աստուածային զօրութենէ շնորհք և ողորմութիւն, և ի մերմէ օգնստոսական թագաւորութենէս խաղաղական և մեծ սիրով ողջոյն: (182 /9; 182 /10) Ընկալաք զգիր ողջունի, որ եցոյց մեզ զառ Աստուած բարեպաշտութեան քո սէր, և ուրախ եղաք փոխանակ զի առեր յանձն հանդերձ արևելեայց աշխարհաւդ նուաճել մեզ ի հնազանդութիւն. վասն որոյ մեք և որդիք մեր ընդ քեզ և ընդ ծնունդս քո մտերմաբար անքակ սիրով ազգէ յազգ մինչև յաւիտեան քաղցրութեամբ եղիցուք»: (182 / 13) Իբրև լսէր նա զբանս թղթոյն, հրաշալի խնդութեամբ զուարճանայր, մանաւանդ զնշանին զամենազօր գալստենէն առաւել լինէր գոհացող. ուստի անկեալ ի վերայ երեսացն առաջի փրկական խաչին՝ փառաւոր առնէր զԱստուած, որ ամենայն բարութեանց տուողն է:

(182 / 17) Որ և զգիշերն զայն փակեալ զինքն ի քնոյ՝ անցուցանէր խորհելով զաշխարհին իւրոյ զօգուտն: (183 / 3) Եւ ի ծագել Արուսեկին մեծի առնոյր զարքունական զարդն իւր և նստէր ի գահոյս իւր. և դրունք բանային, և զինուորքն մտեալ՝ ունէին զզէնս իւրեանց աստի անտի շուրջ զնովաւ պարախմբեալք: (183/4; 183/5) Դատաստան արդար և իրաւունք անկաշառ ի դրանն նորա հասարակաց լինէին շնորհակալ: (183 / 7) Եւ ոչ զբաղմունք պագշոտելիք, այլ զօրն ողջոյն աշխարհական հոգւոց պարապէր. և զորս առ լերամբն Կովկասու զվայրագասունսն իմաստաբար ածէր ի զգայութիւն: (183 / 9) Այսպէս ի սահմանացն Վրաց մինչև ի դրունս Հոնաց՝ միահեծան ճոխութեամբ եղև տէր մինչև ցգետն Երասխ: (183 /10; 183 /10) ԿԱՅՍԵՐՆ ՅՈՒՆԱՑ ԳԱԼՆ Ի ՊԱՐՍՍ Ի ԿՈՉԵԼ ՋՋՈՒԱՆՇԻՐ (183 /13; 183 /13) Իսկ յինն և ի տասաներորդի ամի թագաւորութեանն իւրոյ Կոստանդիանոս՝ թոռն Հերակլի բազմամբոխ զօրօք և ընտիր ընտիր գլխաւորօքն Յունաց հանդերձեալ եկն յաշխարհն Պարսից՝ կորզել ի տաճկաց զկողմանս աշխարհին զճառագայթաւէտ զլոյս աշխարհաց ընդ իւր ունելով: (183 /14; 183 /16) Յայնժամ առաքեաց զմի ոմն ի գլխաւորացն առ Ջուանշիր՝ գալ նմա ի տեսութիւն: (184 /1; 184 /1) Զորոյ զգալն լուեալ ընդ առաջ նմա ինքն ելանէր ի Քունգր գիւղ և ողջամբ ընկալեալ զնա: (184 / 3) Եւ նոյնժամայն հրամայէր փոխել ի նմանէն զտխրականն զգեստ, զոր սակս մահուան ամուսնոյն իւրոյ էր զգեցեալ. և ագուցին նմա զարքունական զգեստն: (184 / 4) Ընդ որս առեալ համարձակութիւն՝ խնդրէր ի կայսերէ զմասն յաւիտենից թագաւորին նշանի: (184 / 5) Տեսեալ զայսպիսի և երկնաւոր պարգևս առ նա եղեալ, նախարարացն Հայոց և զօրավարին Համազասպայ ի նախանձ մեծ բրդեցան. և նմա ոչ էր փոյթ այն. և այնուհետև խնդրէր հրաժեշտ ի բարեսէր տեառնէն: (184 /10; 184 /11) Զայս լուեալ զնորայն գալուստ հոգեզուարճ հայրապետին Աղուանից Ուխտանիսի՝ հանդերձ բազում ժողովով օրհնեաց զնա ի ձայն մեծ ասելով. «Ահա առաքեաց մեզ տէր ի Սիօնէ գաւազան զօրութեան, և սովաւ տիրեսցուք մերոց թշնամեաց»: (184 /15; 184 /15) Խորհի մեծիմաստն Ջուանշիր տեղի հանգստեան տէրունական նշանին գտանել. և ի բնական գաւառին ի Գարդման բերդին հիմն արկեալ տուն Աստուծոյ մեծապէս գեղազարդէ ի հրճուանս և ի փառս Քրիստոսի Աստուծոյ: (184/17; 184 /18; 184 /19; 184 /19) Եւ ի փոխանորդել գարնանային ժամուն հանդերձաւ, կազմեցաւ մեծարգի իշխանն Աղուանից միւսանգամ տեսանել զկայսրն՝ հանդիպել նմա ի Վաղարշապատ քաղաքի: (184 /20; 185 /1) Յայնժամ հրամայի ի թագաւորէն, զի մեծամեծք պալատանն և վեհանձունքն ընդառաջ նորա ելցեն: (185 / 2) Եւ այնպէս արքայաբար մտանէ ի կայսերական մարզարանն: (185 / 3) Եւ ի վերայ այնոցիկ զքաջ հաւուն իւրոյ Հերակլի և զՆիկիտայ հանւոյն զարքունական գօտին ածին ընդ մէջ նորա, և զիւրն պատմուճան և դրօշս երկուս. և զորդիս նորա առնէր պատրկունս զտղայականս: (185 /7) Եւ որ միանգամ առաջին թագաւորացն Աղուանից գիւղաստանեայք և սահմանք լեալ էին, զամենայնն ի նա ընձեռեաց ազգաց յազգս և արևելեայցս ամենեցուն արքայաբար առնել տեսչութիւն: (185 / 11) Եւ ոչ էր խորհուրդ կայսերն ծածկեալ ի նմանէ, և ի նմանէն լսելով հանճարեղ խորհրդականութիւնս բազումս հիանայր. և ողջունեալ զնա՝ ասէ. «Անձն քո ընդ անձին իմոյ, և սիրտ իմ որպէս զսիրտ քո. եթրթ ի խաղաղութիւն»: (185 /13;

185 /13; 185 /15) Եւ վերստին առնէր հրամանս ընդ որս իւրն է աշխարհս՝ շինել, տնկել, վայելել և կեալ ի խաղաղութեան: (185 /17) Եւ իւր շինեալ բազում ապաստանս. և որ ինչ մարդկան է վայելուչ, և ամենապայծառ իրք անկարօտ էր նմա ի փառացն Աստուծոյ, մինչ զի և թուրքաստանեայց թագաւորն խնդրէր ի նմանէ սէր և խաղաղութիւն. և ընծայաբերս նմա առնէին երիվարս ընտիրս, ծառայս և աղախնեայս և զանազան զեռնոց մորթս. այլ և յԱսորեաց և յԱտրպատական գաւառէ և յայրարատեան կողմանցն և ի Վրաց աշխարհէն. մինչև ի հնդկաց ևս գային առ նա լսել և տեսանել: (186 /1; 186 /1; 186 /4; 186 /4) ՎԱՍՆ ԵԼԻՑՆ ԽԱԶՐԱՑ ԵԻ ՅԱՂԹԱՀԱՐԵԼՆ Ի ՋՈՒԱՆՇԻՐԷ ՅԱՅՆԿՈՅՍ ԳԵՏՈՅՆ ԿՈՒՐԱՑ (186 /10) Յայնժամ իշխանին Աղուանից զինեալ զինքն՝ մտանէ առաջի ամենայաղթ նշանին. և կացեալ ի վերայ ծնկաց իւրոց զարքային Իսրայելի երգէր երգս, եթէ՝ «տէր իմ, առ զզէն և զասպար քո, արի օգնել ինձ և արգել զեկեալսն ի վերայ իմ»: (186 /14; 186 / 15) Եւ ետ ընդ նոսա պատերազմ, և ոչ վրիպեցաւ ի խնդրոյն. զի ի խոնել պատերազմին գթեալ քաջասլաց նորայն երիվարն գլորեցոյց զնա, սակայն ոչ կործանեցաւ, զի տէր ետ ձեռն և կանգնեաց զնա: (186 /17; 186 /17) Որ ի յառնելն եհար զընդդիմամարտն: (187 / 1) ԿԱՏԱՐՈՒԻՄՆ ՏԱՃԱՐԻՆ ՏԵԱՌՆ Ի ԲԵՐԴԻՆ ԳԱՐԴՄԱՆԱՅ, ԵԻ ՆԱԻԱԿԱՏԻՔՆ ի ՋՈՒԱՆՇԻՐԷ, ԵԻ ՕՐՀՆԱԲԱՆՈՒՄՆ ՆՈՐԻՆ Եւ ԿԱՆԳՆԵԼՆ Ի ՆՄԱ ԽԱՉԻՆ ՔՐԻՍՏՈՍԻ (187 /5; 187 /6; 187 /7) Ի յաղթահարելն Ջուանշիրի զԽազիրսն և երկուց ամաց անցելոց զկնի վանելոյն զզօրսն Խազրաց կատարի գեղեցկայարմար շինումն տաճարի անուան Աստուծոյ: (187 /8) Եւ նորա յարուցեալ անկանի առաջի մշտնջենաւոր լուսոյն կալով յաղօթս. «Այժմ արիի, տէր, ի հանգիստ քո, զոր շինեցի անուան քոյ և ի յարկ քոյոյ կենդանուտ փայտիս»: (187 /11; 187 /11) Յայնժամ առնու զկաթողիկոսն հանդերձ եպիսկոպոսօքն և ամենայն նախարարօքն իւրովք՝ ելանէ իբրև աւուր միոյ ճանապարհ ի վեր կոյս Պերոժ Կաւատ քաղաքի. անկեալ աղօթէր նախ ի վանս մի. զոր շինեալ էր յանշէն վայրս ի մէջ երկուց գաւառաց, ամենալի բարեօք ի հանգիստ իջևանի իւր և ամենայն եկելոց անդր: (187 /13; 187 /14; 187 /15; 187 /15) Եւ հրաման կարգեալ ի վերայ թէ միթ ևս լիցի անընդունելի ումեք ի ձէնջ մնալ: (187 /16; 187 /17) Եւ անտի յարուցեալ բազմախումբ կարճառաւն մտանէ ի Գարդման գաւառ. որ օր մետասան էր արաց ամսոյ, զխաչն լուսոյ տարեալ հանգուցանէ ի տանն, զոր շինեաց: (187/18; 188/1) Եւ անդ կացեալ ի վերայ ծնկաց իւրոց թախծալից զղջմամբ և արտասուօք դնէր աղերս ամենահաստչին և ասէր: (188 / 1) Տէր իմ, տէր, որովհետև եղեր անհիշաչար ծառայի քում բազմամեղի և պարգևեցեր ինձ զխաչս այս զորմէ զքեզ բևեռեալ կախեցեր յերկրի, առաքեաք ի տաճարս յայս զշնորհիդ սուրբ հոգւոյդ և հանգոյն Սողոմոնի տաճարին հոգեխառն ամպով փառաց քոց իբրև միգով զսա զարդարեալ վայելչացո: (188 /6) Զի որք միանգամ պատարագօք զերեսս քո պաշտեսցեն ի տեղւոջս յայսմիկ, լուիցես դու ի բարձանց, և տացես զխնդրուածս նոցա: (188 /9; 188 /10) Եւ եթէ ամենայն աշխարհս Աղուանից միաբան գայցեն փառաւորել զանուն քո ի տանս յայսմիկ, աստուածընկալ զօրութեամբ խաչիս աղխեսցես զդրունս թշնամեացն, և խափամեսցես զմարտիցն հէնս. զոդս քաղցրաբերս հրամայեսցես հեղուլ ի վերայ երկրի, զի լիապատար բերմամբ որթ և թզենի և ամենայն բոսք անդաստանաց պտղաւէտք լիցին, և յրղձալի երկրիս անվրդով հանգիցեն: (188 /11; 188 /13)

Իսկ զիս զՋուանշիր, որ ծանրաբեռնեալս եմ յանցանօք, *ի* քո, տէր, ամենազօր նշանիս օգնականութիւն, որպէս կարօտագոյն ոք հիւանդ *ի* բժիշկ բարի անձկացեալ ապաւինեցայ, միթ դարձուցաներ ունայն և ամաչեցեալ. և զտուընս զոր շինեցի, արա՛ զսա հովանի գլխոյ իմոյ յօր մարտի, և զյարուցեալսն *ի վերայ* իմ, *ի ներքոյ* իմ արասցես. և զուստերս և զդստերս իմ աներկիւղ արասցես *ի* չարէ և զօրաւոր պահեսցես յամենայնի: (188 /16; 188 /17; 188 /19; 188 /19; 189 /1) Եւ դու, տէր իմ, տէր, որ պահեցեր զիս *ի* մանկութենէ իմմէ և *ի* շրջապատեալ փորձութեանց փրկեցեր, հաճախեցեր ինձ ոսկի և արծաթ, ծառայս և աղախնեայս, և ետուր ինձ իշխանութեամբս իմով արքայաբար առնել տեսչութիւն, ընկաճել և այժմ զծառայս քո *ի* բարի և *ի վերայ* ծնողաց իմոց հեթղ զհանճար գիտութեան՝ գնալ *ի* ճանապարհս քո, և հնազանդ կալ առ *ի* քէն պսակելոյ կայսերն Յունաց աներկբայաբար: (189 /2; 189 /2; 189 /4; 189 /4; 189 /5; 189 /5) Իսկ *ի* համաշխարհական աւուրն յարութեան հասանելոյ, յորժամ աներևոյթքն զերևելիս փոխանորդեն, և փողագոչ հնչմունքն զննջեցեալսն կոչեն *ի* քնոյ, և հրեղէն ջոկքն *ի* ծագաց երկրէ առ ամենակալ թագաւորդ հաւաքին, յայնժամ *ի ձեռն* կարապետի խաչի քո, յոր ապաւինեալ եմ, ողորմութեամբ այց արասցես ինձ և զուգակցի իմոյ Խոսրովանուշի և նախահարց իմոց, մանաւանդ ծաղկեալ ալեօք հօր իմոյ Վարազ Գրիգորի և մօր իմոյ՝ Գորիդխտոյ և եղբարց իմոց Վարազ Փերոժի և Յեզուտ Խոսրովու և զաւակաց իմոց: (189 /7; 189 /8; 189 /8; 189 /9) Փրկեաւ զիս *ի* յաւիտենից փորձանաց և փոխանակ տաճարիս այսորիկ, զոր շինեցի անուան քում յերկրի, պատրաստեաւ մեղուցելոյս հոգւով օթևանս *ի* տան հօր քում, Քրիստոս»: (189 /15; 189 /16) Եւ իբրև կատարեաց զաղօթս, մատոյց և զայն, որ յաղագս նորահրաշ տօնին էին պատարագք, և ուխտեաց անդ ուխտ փրկութեան, եթէ սա եղիցի ինձ և որդւոց իմոց տեղի՝ տալոյ երախայրիս առաջի տեառն և գտանել ողորմութիւն *ի* քէն: (190 / 2) Եւ յետ այսորիկ իջանէ անտի աստուածավայելուչ աւետեօքն *ի* ձմեռնահանգիստ քաղաքն Պերոզ Կաւատ. և զամն ողջոյն յղղձալի և *ի* խաղաղաւէտն անցուցանէ հանգիստ: (190 /2; 190 /3) Մինչդեռ նստէր խաղաղացեալ *ի* գահոյս իւր արին Ջուանշիր, *ի* միւս ամին լինէ ձմեռնային եղանակի հասարակաւորութիւն, ել թագաւորն Հոնաց յոգնահազար հեծելովք: (190 / 8; 190 / 8) Եւ թէպէտ և յառաջագոյն զգուշանալ և ամրանալ աշխարհին հրամայեալ լինէր *ի* նմանէ, սակայն ասպատակաւորքն Հոնաց յայսկոյս գետոյն Կուրայ և զեզերբքն Երասխայ ոչ միայն զբնաշխարհիկսն, այլ որ զԱյրարատեան գաւառացն և *ի* Սիւնեստանեայց աշխարհէն հօտք և անդեայք *ի* ձմեռնաճաշակ դաշտն եկեալ էին յարօտ, գերի վարեալ զամենայն *ի* բանակետղն ժողովէին: (190 /10; 190 /12; 190 /13; 190 /14) Ապա եղև թագաւորին Հոնաց ցանկութիւն տեսանել զերեսս Ջուանշիրի. և արձակեալ զեղբարս իւր՝ թախանձեցուցանէր զնա տեսանել զմիմեանս և *ի մէջ* իւրեանց առնել սէր եղբայրական: (190 / 16) Իսկ քաջ և արի տէրն ոչ ինչ ածել զմտաւ զարհուրէր, կամ թէ ոք ոք յարքայիցն Պարսից որ կարաց յանդիման իւր տեսանել զթուրքաստանեայցն թագաւոր. այլ նա աներկիւղաբար և անվեհեր սրտիւ անկեալ առաջի փրկչական խաչին, ասէ. «Թէպէտ և գնացից *ի մէջ* ստուերաց մահու, ոչ երկեայց *ի* չարէ, զի դու, տէր, ընդ իս ես»: (191 / 1; 191 / 1) Իսկ թագաւորն Հոնաց ընդ առաջ նմա ելեալ՝ գայր հանդերձէր *ի* նաւ և յայսկոյս խաղացեալ դադարէր յեզր

գետոյն *ի վերայ* նարմաշարժ և խորասոյզ ջրոյն: (191 /3; 191 /4) Դնէին առ միմեանս խորհուրդս խաղաղականս *բառնալ ի միջոյ* զանմիաբանութիւնս երկոցունց և մանաւանդ գրաւելով *ի* համակամ եղբայրութիւնս. որոց կնքեալ զգալիւն՝ դարձան իւրաքանչիւր տեղիս: (191 /5; 191 /5) Եւ զի՞նչ քաջասիրտ տէրն իմ և միւսում աւուրն եցոյց. ԺԷ արամբք էանց յայն կոյս գետոյն *ի* բանակն Հոնաց. անդ առնոյր զդուստր թագաւորին իւր *ի* կնութիւն և դարձուցանէր յաւարէ անտի հարիւր և քսան հազար հօտից և եօթն հազար ձիոց և արջառոց բազմութիւն, և ոչ ինչ նուազ քան զհազար և երկերիւր արանց գերելոց: (191 /8; 191 /8) Աստ իմն դարձեալ խաղաղութեամբ գայ *ի* տեղի իւր բարգաւաճեալ սրտիւ: (191 / 11) Լայր առաջի տեառն, կարդայր և ասէր. «Ոչ եթէ յաղեղն իմ յուսացեալ եմ, այլ դու, տէր, փրկեցեր զիս և պարծանք իմ *ի* քեզ, տէր, են»: (191 / 13) Եւ ահա այս երկու ամք պակաս յերից տասներեկաց, յորս աշխարհակալ սպարապետութեամբն իւրով *ի* տիոց անտի երիտասարդականաց մինչև ցմիջակ արբունս ժամանակի՝ դրուատայեղց, համաշխարհալուր կատարեաց զերիս *ի* չորից անտի, նախ *ի* Պարսս, ապա *ի* դրունս Հոնաց անվեհեր քաջութիւնս՝ անսխալ գոլով, մինչ զի արևելից և արևմտից, հիւսիսոյ և հարաւոյ, յԱրիս և յԱնարիս հրատարակաւոր ամենեցուն և քաջափարթամ եցոյց ծանոթութիւն: (191 15; 191/17; 191/17; 191/17) Արդ՝ ձեռնարկեցից և զայն ասել, եթէ որպէիս կամ զինչ պատճառաւ շնորհատուն այն խաչ ծագեաց նմա *ի* խաւարէ լոյս կամ քաղել ծաղիկ *ի* հրոյ: (192 /3; 192 /3) ՈՐ ԻՆՉ *Ի* ԹԱԳԱՒՈՐԷՆ ՀԱՐԱՒՈՅ ՄԵԾԱՐԱՆՔ ԱՐԵՒԵԼԻՑ ԻՇԽԱՆԻՆ ԵՂԵՒ, ԱՍՏԱՆՕՐ ԳՏՑԵՍ (192 / 6) Լերինք մշտնջենաւորք և ծովք անդնդայինք ալեկոծեալք հնազանդեալ կան բանին Աստուծոյ, քանզի վերնառաք հրամանն յորժամ հայի յերկիր, դողացուցանէ զնա, և *ի* մերձելն *ի* լերինս՝ ծխին: (192 /9; 192 /10) Լռեցին թևաւորք արձագանք խորոց *ի* հողմուռոյց եռանդանէ, եւ փուշք ագարակի օդասլաց թռչմամբ եկեալ տաղաւարեցան *ի վերայ* մկանանց լայնատարած ծովուն: (192 /13; 192 /14) Իսկ այժմ այն աթոռոյն ամբարձեալ զօրութիւնք այնքան *ի վայր* ցնդեալ՝ զիջան, մինչ զի որ միանգամ ընդ ձեռամբ նորա էին մարդկային անտառք՝ գնացեալ յարեցան ընդ հովանեաւ այնր, որ ըստ Գեդէոնեան դժնկին՝ էր պատաղիճ, զոր *ի* նուս բարձեալ բանաւորաց՝ շառավիղքն և խլրտալ անգամ ոչ կարէին: (192 /18; 193 /2) Զի իբրև ետես քօշն արևմտեան, թէ դարձոյց տէր զօգնականութիւն *ի* սրոյ նորա և կինճ վայրենի գազանանայ փշրել զեղջիւրս նորա. առեալ զլրումն ժամանակի ըստ կանխասաց մարգարէութեանն և խոստմանցն Աբրահամու, եթէ ձեռք Իսմայելի յամենեսին, և ձեռք ամենեցուն *ի* դա. և եթէ առաջ նորա հուր ծախիչ, և վերջ նորա բոց բորբոքեալ: (193 /3; 193 /6) Յայնժամ առեալ կայսերն՝ Հոռոմոց զսինլքորս զորացն՝ աճապարէր ընդ ծով եւ ընդ ցամաք անցանել *ի* սահմանս հեռաւոր կղզեացն արևմտից: (193 / 8) Այն վեցերորդ ամ էր հարաւայնոցն փոխելոյ զթագաւորութիւնն իւրեանց յաշխարհին Ասորեստանի. զի թողեալ զերկիր աղախնոյն՝ արկանէին զաթոռ տէրութեանն *ի* Դամասկոս: (193 / 10) Քանզի տուաւ նմա անընդդիմակաց զօրութիւն, աշխարհավար իմաստ, երկրավար քաղցրութիւն և հեզութիւն մարդկային, ուստի չորիւքս այսոքիւք և չորից անկեանց աշխարհիս հասարակաց կալով իշխանութիւն՝ տեսանելով զանհնարին տկարանալն կայսերն Հոռոմոց *ի* թագաւորէն Հարաւայնոյ, որ իբրև զբոց ճարակեաց

զբազմամարդ հրապարակս և զքաղաքս նորա սրով: (193 / 14) Արդ՝ իբրև լսէր բռնակալն հարաւոյ սակս մերոյ իշխանին ի ծայրափառելի բարելաւութեանն, զոր առ կայսրն ունէր Հոռոմոց, կամ եթէ նա ինքն է երասանակալ թուրքաստանեայցն ազգաց՝ հանել և արգելուլ կարող է յաղագս մարմնական խնամաւորութեանն, անդանօր անըմբերելի նախանձ ի միտս տիեզերակալ պարծողին բորբոքէր: (194 /2; 194 /4) Ուստի ի ձեռն հաւատարիմ պատգամաւորաց առաքէր երդմունս մեծամեծս և խոստմունս անչափ պարգևաց, զի առ նա երթիցէ: (194 / 5) Իսկ նա ըստ մեծայոյս բարութեանցն ի խաչն Քրիստոսի վստահ եղեալ՝ կազմէ ընծայս բազմապատիկս և հանդերձի նոքօք յողջոյն տիեզերակալին: (194 / 7) Եւ նախ ժամանէ ի տուն տեառն, զոր յապաւինութիւն իւր շինեալ էր ի բերդն Գարդման: (194 /8; 194 /9) Եւ անդ սրտառուչ հառաչմամբ ի ծածկագիտէն խնդրէր այցելութիւն, որպէս մեծն Դաւիթ ասէ. «Արարիչ իրաւանց և արդարութեան, միթ մատներ զիս ի ձեռս նեղչաց իմոց»: (194 /10; 194 /11) Եւ այսու մտօք հրաժարեալ մեծայաղթ լուսոյն՝ զինեցաւ չուել ի տար աշխարհ: (194 / 12) Իբրև իջանէր յերկիրն Ասորեստանեայց, տեսանէր զի ահա հրամանաւ թագաւորին պետք գաւառաց և ճոխք քաղաքաց ըստ իւրաքանչիւր սահմանս պատուիչք լինէին. երիվարք պատրաստք, օթևանք կազմք, մինչև եհաս ի դուռն թագաւորին մեծաւ շքով: (194 / 17) Եւ այնպէս շքեղաշուք պատուով մուծանէին ի բանակն յոգնահոյլ գուպարից: (195 / 1) Վասն որոյ ի հոյակապ նորա անուն խառնիճաղանճն ամենայն ի տես ճեպէին՝ համախմբեալ ի ճանապարհին: (195 /1; 195 /2; 195 /2) Իսկ թագաւորն հարաւոյ ընդ ծագել արևուն՝ նախքան զսովորական ժամն՝ յարուցեալ ի քնոյ՝ հրճուալից մտօք և բարի ողջունիւ զիշխանն արևելից տեսանէր. և յարազուարճ վասն գալստեանն նորա լինէր: (195 / 3) Ուստի անմենակատար ընդունելութեամբ և ոչ առ մի ոք ի կողմնակալաց երկրի այնպէս եղև փաթշաբար մեծագրութիւնք. մանաւանդ յորժամ զփորձ ևս առնոյր խոհական հանճարամտութեան նորա: (195 / 5) Վասն զի թէպէտ և բազում տեարք և յոլով ազգաց հեղինակք ընդ ձեռամբ անկեալ կային հնազանդեալք, այլ ոչ ումեք ի նոցանէ աներկևան խորհուրդ որպէս Ջուանշիրի տայր, յորոյ վերայ և պարգևս մեծամեծս շնորհէր նմա և որոց ընդ նմայն էին: (195 / 8) Այսոցիկ այսպէս եղելոց, մեծավայելուչ փառօք յուղարկիւր ի համաշխարհական մարզարանէն: (195 / 14) Գայր հասանէր յԱյարատեան գաւառն, ուր ընդ առաջ լինէր նմա ի Մամիկոնեան տոհմէն քաջն Գրիգոր համօրէն ազատօքն և ածէր զնա ի գիւղաքաղաքն իւր Արուճ: (195 /15; 195 /16) Զնա տեսեալ մեծահաւատ իշխանին՝ հոգեզուարճ բերկրանօք լցեալ, խոնարհեցուցեալ զինքն՝ օրհնեցաւ ի նմանէ որպէս ի հրեշտակէ սրբոյ: (196 /1; 196 /1) Եւ նովին բարեզարդութեամբ գայր, իջանէր ի գաւառն Գարդման. իսկ և իսկ մտանէր ի յարկ ապաւինին իւրոյ: (196 /2; 196 /2) Սկսանէր այնուհետև զոր ինչ ազնուական նիւթեղինացն էր, առ ի զարդ յօրինել նորահրաշ գեղեցկութեանն անճառելի լուսոյն: (196 / 3) Եւ ծախս մեծս արարեալ դեղագեղիչս ի գործ արկեալ՝ նկարեաց ի գմբեթէն մինչև ի բարաւորս դրանն պատաղահիւթ կերպասագործեալ. և զդուռն սենեկին՝ զլոյսն տիեզերաց ունողին արծաթապատ հրաման տայր քանդակել: (196 /4; 196 /5; 196 /5) Դարձեալ թագաւորն հարաւոյ կոչէ պարգևախոստ հրաւիրանաւ զհոչակելին Ջուանշիր՝ արևելից իշխանն, զի ի նախկին պատիւ ևս առաւել արասցէ

յաւելուած փառաց. սակս զի ճոխք քաղաքին Բիւզանդեայ եկեալ էին յանձն առնուլ զլուծ հարկատրութեան որդւոցն Հագարու, վասն այնորիկ, որ էր յեօթներորդի ամի թագաւորութեան Կոստանդնի, ինքնաձեռն եղեն ներքինիքն սպանանել զնա. որոց ի թագաւորէն լինէր հրաման մնալ մինչև եկեսցէ անդ իշխանն արևելից: (196 / 14; 197 / 1) Իսկ բազմագով տէրն Ջուանշիր ըստ առաջնում նուագին կազմութեամբ անյապաղ անդ հասանէր, որում ի վեր քան զառաջինն անհամեմատ մեծարանս և պատիւս հանդիպէր. զի զհարազատ եղբօր իւրոյ ապարանս ի հանգիստ նմա յօրինել հրամայէր. և յընթրիս միշտ ընդ իւր նստել ի սեղանն. ուստի և եկելոցն ի կայսերական քաղաքէն պատուական արանց, նմա հրամայէր, առ նոսա բանս խաղաղականս դնէր: (197 / 3; 197 /4; 197 /5; 197 /5) Ընդ որ յոյժ զարմացեալ լինէր թագաւորն յաղագս տրամախոհ խորագիտութեան նորա, որում և ոչ սակաւ լինէր շնորհակալութիւն, որ ի թագաւորութենէն Հռոմայեցւոց անդ պատգամաւորաց. քանզի բազում իրօք և յօգուտ նոցա զթագաւորին հնարէր հաւանեցուցանել զմիտս: (197 / 8) Եւ յետ այսորիկ գերահռչակ ևս պատուով ըստ թագառիկն՝ արքայից զարևելից իշխանն ծայրափառեալ թագաւորն հարաւոյ հրամայեաց շնորհել նմա զայն, որ ի Հնդկաց աշխարհէն քաջահրահանգ, առատուսն փիղն խրոխտաձև, որով դրունք թագաւորաց ահեղագոյն և բազմաշուք զարդարին: (197 / 12) Զորմէ յաւիտեան ոք մինչև ցայսօր ոչ լուաւ, թէ առ ի մեծարգոութենէ ինչ կրտսերագունից շնորհեցաւ: (197 / 15) Զկնի այսորիկ և զպապկայն, որ պատուականն ևս է, քան զամենայն թռչունս, զոր ի նախավաղն ժամանակի ոչ գոյր հնար յայլում ուրեք տեսանել վայրի, բայց միայն ի Հռովմայեցւոցն թագաւորութեան: (197 /16; 197 /17) Գայր, հասանէր յաշխարհն իւր, փութայր ժամանել ի տուն տեառն. անկանէր ի վերայ երեսաց իւրոց. գահանայր զանպատում պարգևացն Աստուծոյ և ասէր. «յԱստուծոյ է զօրութիւն իմ և փառք իմ»: (199 /2; 199 /3) Տեսանէաք զթագաւորական հաւ, որոյ տեսակն ցանկալի էր. զի ընդ դեղնագոյն փետուրսն փոքր ինչ կանաչութիւն համավար խառնեալ արտաքս ճողճայր. և լանջացն կարմրանիշագոյն այսր անդր տրոհէր շուրջ զպարանոցաւն առ միմեանս պատուածեալ նման գարնանային առաւօտու ցօղոյ կայլակաց յանդաստանս, զոսկեծայր քստից մարգարտաձև ի վայր կախեալ բոլորովիմբ: (199 / 11) Այսպէս և բիբք աչացն, որ և սոնքաձև կտցոյն փողորտաձգութիւն ի վայր կոյս դարձեալ զբերանովն կռանայր, յորում բոլորատեգ լեզուոյն ծայր իբրու դանդանաց ցցեալ զբարակավանգ ճռուողումն ձայնի ըստ մարդկային բնութեանս խօսից ստէպ ստէպ առ բան հոլովէր: (199 / 12) Եւ սա զորօրինակ յառաջինսն անդ Ներոնի ումեմն կայսեր ի սենեակսն լինէր գովող. այսպէս և ի վերջնումն աստ յոգնաբաստիկ իշխանիս մերոյ տեսաք օրինիչ: (199 /15; 199 /15) Ընդ որ թէպէտ առաւելասքանչ զարմանք, սակայն ոչ այնչափ զոր հանդերձեալ եմ ասել, զի յորժամ կամէր յորս ինչ ելանել կամ ի զբօսանս խաղու, տեսանէաք յելս արքայաչու կազմութեանն արտաքոյ պարսպին ի նախադրան ճանապարհին, որպէս առն թագաւորի. երկրպագութիւն եկեալ անարի, անբարի անհեդեդ կանդանին՝ վիմահասակն փիղ, որոյ գերանաձև սրունք որպէս զլեառն ինչ ի վեր բարձեալ ունէին, և զիւելապատակէ անտի ըստ չարաթոյն սողնոյն նմանութեան ի վայր կոյս կախեալ ձևանայր պատիճ, զոր առ գետնովն շրջշրջելով այսր անդր ստէպ ստէպ դարձուցանելով և

ուղղորդաձև *ի վեր* կանգնելով և մերթ *ի* յինքն քնթռնեցուցանելով, և ուժգնակի մռնչմամբ զտուր և առութիւն շնչոյն ընդ խոչափողն արտաքս հոսելով, արդարև ասեմ թէ իբրև բեհմութ *ի* շարժելոյն գլխոյ ահաբեկ զարհուրանօք դողումն լինէր բնութեան մարդոյ: (200 /1; 200 /2; 200 /4; 200 /5; 200 /6; 200 /7; 200 /8) Աստանօր և արդ զի՞նչ ասացից և կամ զո՞ր խօսեցայց, զի աստուածային նախախնամութեամբ *ի ծնէ* իսկ սա *ի* փառս և *ի* մեծութիւն ստեղծաւ, և մինչև ցայսօր ժամանակի ընդարձակեաց սմա տէր լինել առ ամենայն ամենափառ: (200 /13; 200 /13; 200 /13) Արդ՝ այս երրեակք տասներրեակք և տարիք երեք, յոր սկսաւ տէր բազմամեծար զբարեյաղթ իշխանն Աղուանից առնել, *ի* չորից ազգաց թագաւորաց աշխարհակալաց պատուել և մեծարել յոյժ, ոչ ինչ նուազ գոլով, քան զբռնակալսս զասոսիկ, այլ յամենայնի վեհ և մեծ գալով: (201 / 1) Միթ ոք տղայական բարուք և անիմաստ խորհրդով փոքր վարկանելով զսորայս տիրողութիւնս յաղագս ոչ ունելոյ թագ և եթ *ի* գլուխ, ծայրայապաւիչ թագաւորական պատուոյ, յոգնավայելուչ մեծութեան: (201/4) Այոթ, արդարև զքեզ ինքն բազմամեծար իշխանդ արևելից՝ լծորդեալ բարգաւաճեցուսցուք, քանզի զինչ խնդրէ *ի* քէն տէր մեր Յիսուս Քրիստոս, որ զքեզ ստեղծ, տէր իմ Թէոդորոս, եթէ ոչ՝ հրաժարել *ի* մեղաց և սիրել զԱստուած, երկնչել *ի* նմանէ և գնալ *ի* ճանապարհս նորա. զի քեզ բարի լիցի և որդւոց քոց ազգէ յազգ մինչև յաւիտեանս: (201 /10; 201 /11; 201 / 11; 201 /12) ՏԵՍԻԼ ՄԻԱՆՁՆԱՅԵԼՈՅ ԱՌՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԻՍՐԱՅԵԼԻ *Ի ՎԵՐԱՅ* ՄԱՇՏՈՑԻ ՍՐԲՈՅ, ԵԻ ՆԱՀԱՏԱԿՈՒԹԵԱՆ ԱՇԱԿԵՐՏԱՑՆ, *Ի* ԳԻՏՏ ՍՐԲՈՅ ԽԱՉԻՆ, ՈՐ *Ի* ԳԻՄՆ ԷՐ (201 /16; 201 /17; 201 /17) Կատարեալ ամ մի *ի* լերինն ննջէր *ի* յերկրի *ի վերայ* ծնգաց իւրոց. *ի* չորրորդում պահու զիշերոյն յեղակարծումն երևեալ ահա նմա տեսիլ հրաշալի, զարմանազան, լուսեղէն փայլատակեալ, և ընդ նմին ծաւալեալ հոտ անուշից և առլցեալ պարարէր զնորա հոտոտելիսն, և իմաստութիւն յաւելեալ *ի* նմա՝ խելամուտ նմա առնելով, զամենայն *ի միտ առնուլ* զասացեալսն, զմեծ խորհուրդ ցուցակութեանն զանցեալ ժամանակաց. զմեծաց նախապարգև աւետեացն քարոզութիւն, թէ ի՞բր արդեօք կամ զի՞արդ ընկալան, որպիսի՞ արամբք, և կամ ո՞ ուստեք էին, որք արեամբ պատերազմեալք՝ վկայ անուն ժառանգեցին և կամ ուր ուրեք զաստուածային ծածկեցին զգանձ. և թէ զի՞նչ պարտ իցէ քեզ առնել: (202 /1; 202 /1; 202 /1; 202 /2; 202 /4; 202 /5) Եւ *ի վաղիւ* անդր իբրև զմտաւ ածէր զաստուածային բանն, թե՝ «Վա՛յ, որ գործէ զգործս տեառն հեղգութեամբ», փութացեալ իջանէր *ի* լեռնէ անտի՝ առնելով ընդ ինքեան զիւրն արբանեակ, ճեպով հասանէր յեկեղեցւան եպիսկոպոսանոցն. և մտեալ մեծաւ զգուշութեամբ, ասաց մանրամասնաբար զերևումն ցուցակութեան խորհրդոյն եպիսկոպոսին ճշգրտիւ զբովանդակն: (202 /12; 202 /13) Զայսոսիկ զամենայն լսելով եպիսկոպոսին Դաւթայ, որ Մեծ կողմանցն էր տեսուչ. մտախոհ եղև իբրև ժամ մի. խորհէր ընդ միտս իւր՝ առնուլ ընդ իւր արս ոմանս *ի* քորեպիսկոպոսաց անտի պարկեշտից, և նոքօք հանդերձ պատմեաց հայրապետին Աղուանից Ուխտանիսի: (203/5) Յայնժամ պատասխանեալ առ նա սրբոյ հայրապետին՝ ասէ. «Ըստ Գրոց իմանալի է այս. բայց զի նոր իմն և չքնաղ է պատմութիւն տեսլեանս, գուցէ յԱստուծոյ իցէ, և մեք այնմ ընդդիմամարտեալ՝ իբրև զլացողս դատապարտիմք. և չէ պարտ հակառակել, գուցէ աստուածամարտք գտանիցիմք. զի ոչ է պարտ *ի մտաց ասել* զերևումն,

որ յետ առաքելոցն ամենայն սրբութիւնք սուրբ խաչիւն հանդերձ և գանձք երկնայինք ծածկեալք՝ ընդ վերջին ժամանակս տեսլեամբ *ի ձեռն* մարդկան *ի տեղիս տեղիս* երևեալ յԵրուսաղէմ սուրբ քաղաք և *ի* բազում քաղաքս, որ այժմ լցեալ տիեզերք և պայծառացեալ եկեղեցիք: (204 /2; 204 /4; 204 /4; 204 /5) Զի աստէն իսկ յԱղուանից աշխարհիս *ի* բազում տեղիս երևեալ են նշխարք սրբոց. և չէ ինչ այս նոր զարմանք, որ այժմս երևի, զի ոչ ինչ է *ի* գանձուց Աստուծոյ, որ ծածկեսցի յերկրի. և չէ իսկ պարտ զճշմարտութիւն ընդ ստութեան և ընդ խաբէութեան *ի բաց* ընկենուլ, և զգործ Աստուծոյ սատանայի լլկանս համարել, այլ ստուգիւ քննել և ճշմարտիւ *ի վերայ* հասանել, որպէս սուրբ առաքեալն ասէ, թէ զամենայն ինչ փորձեցէք և զբարին ընկալարուք: (204 / 6; 204 /7; 204 /9; 204 /10) Եւ դարձեալ *ի* կաթողիկոսէն ասէ, թէ միթ ամենայն հոգւոյ հաւատայք, այլ ընտրեցէք, որ յԱստուծոյ հոգին: (204 / 11) Արդ երթայք դուք յաջորդեալք եպիսկոպոսք կողմանցն այնոցիկ, երկաքանչիւր ոստիկանաբար *ի վերայ* հասջիք քննութեամբ, առաւել խնդրեսջիք յԱստուծոյ, թէ աստուածային իցէ, թէ այլ ազգ ինչ բաջաղանաց. զի սատանայի փորձանք և մարդկան խաբէութիւնք յայտ են, և Աստուծոյ շնորհք առաւել ևս յայտնի: (204 / 14) Արդ՝ որպէս տէր Աստուած երևեցուցանէ և յայտնէ զխորհուրդ ձեզ *ի* տեղւոջն, օր ըստ օրէ և մեզ ուսուսջիք»: (204 /17) Յայնժամ կամաւորութեամբ յանձն առեալ զհրամանս հայրապետին եպիսկոպոսացն երկոցունց՝ Դաւթի և Յովէլեայ և տուեալ ողջոյն՝ գային հոգւոյն սրբոյն առաջնորդելով հասանէին յՌոստակ գաւառն Մեծ Կողմանց, *ի* Չղախեան հովիտն յասպարիսաձև դաշտակն առ ափն Տրտուական գետոյն, որ է *ի* վիճակին Մեծիրանց: (205 / 1; 205 / 2) Եւ եկեալ բանակէին *ի* նշանաւոր պրակին *ի* խունաբեր տեղւոջն *ի* սարաւանդակ վայրի: (205 /3; 205 /3; 205 /3) Արդ՝ *ի* լինել համբաւոյն այնմիկ՝ վաղվաղակի ճեպով ժամանեալ գումարէին արք պատուականք, քորեպիսկոպոսունք, երիցունք, սարկաւագունք, հարիւրաւորաց գաւառապետք, գլխաւորք և մեծամեծ գործակալք, բազմութիւն ժողովրդոց արանց և կանանց, զի մասնաւորեսցին ամենեքեան տեսակի սքանչելեացն Աստուծոյ: (205 /6) Ապա հրամայեալ եպիսկոպոսացն՝ քարոզ հնչեցուցին *ի* հանդիսաւոր ժողովրդարանին, զի եռօրեայ պահք և աղօթք պնդութեամբ կատարեսցին, զի ոչ կայր սակաւ ինչ *ի* նոսա երկպառակութիւն. ոմանք հաւանէին, և կէսք չհաւանէին. և *ի* նոյն ինքն գլխաւոր եպիսկոպոսն Յովել պատրանս համարէր: (205 /10; 205 /11; 205 /12) Եւ *ի* լնուլ կիտին եռօրեայ պահոցն, աբասուն Իսրայէլի առեալ բահ *ի* ձեռն և եղեալ համօրէն ծունր ամենեցուն դիտել ուղղորդաբար *ի* նկատեալ տեղին՝ հրամայէր անվեհեր բրել. զոր *ի* նմին գործ դասահոյլ մարդկան բազմութիւնն զհողն զգեստուք իւրեանց *ի բաց* պեղէին. և մեծ ջանիւ վաստակաբեկ եղեալ ոչ կարէին զտենչալի և զփափագելի գանձն գտանել: (205 /13; 205 /14; 205 /15; 205 /15; 205 /16) Անդ անկեալ *ի* խոյզ և *ի* խնդիր՝ իբր կանգունս երիս փորեցին *ի* ներքոյ սեղանոյն: (206 /1; 206 /1; 206 /1) Ահա յանկարծակի բուրեալ *ի* տեղւոջէ անտի հոտ անուշից սաստիկ համեղութեան. և առլցեալ քմազարդ պարարտութիւն յաւէտաբար զոլովիցն քաղցրացուցանէր զճաշակս, որպէս թէ ճշգրտեալ նմանիւր ազնուական հոտն բիւրուց խնկոց և ծաղկանց զանազանաց մինչև զարմանալ ամենեցուն առ հասարակ: (206 / 2) Եւ իբրև փորեցին թիզս տասն, գտին կողոպս երկուս արծաթեղէնս՝ կապարի

կնիք *ի վերայ* եդեալ. զորմէ տախտակ մի ոսկեձոյլ հաստահեղոյս բևեռեալ. և *ի* նմա գրեալ ասորերէն և հայերէն գրով: (206 /6; 206 /7) Քանզի որպէս *ի մէջ* բազմամբոխ հրապարակին այնպիսի հրաշագործութեան Աստուծոյ լինէր երևումն, այր առ այր և մարդ առ մարդ զարմացումն յոյժ յաճախէր: (206 / 7) Եւ զմիմեամբք կուտակեալ զեղուին, փութային զսրբութեանցն տեսանել զտապանակս, զի հաւատովք էին վառեալ *ի* սէր սրբոցն: (206 / 10) Ապա առանձնացեալ եպիսկոպոսացն Իսրայէլիւ հանդերձ և պատուաւոր քահանայիւք՝ բացեալ զկնիք մատանւոյն *ի* սրբութեան տապանակացն. զտանէին անդ զփրկագործ խաչին մասն, ընթերցեալ զգիր ոսկեձոյլ տախտակին նորին իսկ արքիդիակոն քորեպիսկոպոսին: (207 / 1) Իսկ զայն աստուածային նշանն իբրև տեսանէր Մեծիրանց հայրն հովուապետն Յովէլ, նմանապէս բազմաբեղուն ծաղկէր իւրով սաղարթածաւալ գիտութեամբն և *ի բոլոր սրտէ* գոհացող լինէր զԱստուծոյ և հաստատեալ ճշմարտութեամբ զտեսիլ աբաւուն՝ հոչակեցուցանէր յականջս ամենեցուն շինող այնմ լինելով, զոր երբեմն քակտէր. նմին իրի իսկ և վասն առաջին դիմամարտն լինելոյ յանցաւոր և դատապարտ զինքն վարկանէր զոլ: (207 / 6) Եւ վասն զի յիւր նահանգին էր նախավիճակեալ վայրն, ուր կենսատու լոյսն էր ծածկեալ, վասն այնորիկ ոչ որպէս առ ուղեկան ինչ կամ անցաւոր շնորհել յումեքէ անսայր. այլ ինքն լինէր իբրև *ի վերայ* իւրոց գանձուց հրամանատարութեան մատակարար: (207 / 11) Եւ զմի *ի* տապանակացն առեալ *ի* պատիւ՝ յինքեան տեսանէր յեպիսկոպոսանոցն: (207 /12; 207 /12) Այլ ընդ այն թէպէտ և կարի յոյժ դժկամակ այրն Աստուծոյ լինէր, զի որ ինչ նմայն հաւատացաւ յԱստուծոյ, և որում ինքն եղեալ էր գիտակ, *ի դէպ էր* ընդ նորին ձեռն և մատակարարեալ սրբութեանն Աստուծոյ: (207 / 15) Սակայն նորա թոյլ տուեալ առ մի նուագ, ըստ իւրում հեզութեանն չլինէր զումեքէ ամբաստան, այլ առնոյր զմնացեալ տապանակն կամակցութեամբ եպիսկոպոսին Դաւթի հանդերձ քորեպիսկոպոսաջոկ և երիցախումբ պաշտօնէիւք տեառն և ամենայն ժողովրդովք տանէին *ի* տեղի բնակութեան իւրոյ և սաղմոսիւք և օրհնութեամբ յուղարկեալ հանգուցանէին զսրբութիւնն տեառն լապտերօք լուցելովք և մոմեղինօք վառելովք *ի* Գլխոյ վանաց սուրբ եկեղեցւոջն, և միմեանց հոգևոր ողջունիւ համբոյր տուեալ դառնային յիւրաքանչիւր տեղիս: (208 /1; 208 /3) ՊԱՏՃԷՆ ԹՂԹՈՅՆ, ՈՐ ԳՐԵՑԱՒ ՅԵՊԻՍԿՈՊՈՍԱՑՆ *Ի* ԴԱՒԹԱՅ ԵՒ *Ի* ՅՈՎԵԼԱՅ ԵՒ *Ի* ՄԵԾ ԺՈՂՈՎԱՐԱՆԷՆ, ԹԷ ՈՐՊԷՍ ԵՑՈՑՑ ԱՍՏՈՒԱԾ ԶՄԵԾ ՍՔԱՆՉԵԼԻՍՆ (208 /6; 208 /6; 208 /7) Ուղփաճեմ, հոգեճաշակ համբուրիւք առլցեալ և *ի* շնորհաց հոգւոյն ընկալեալ պարգև, ոիվ աստուածազան արևելեայց արքեպիսկոպոս Ուխտանէս, և բարեխնամող, քաջազնեայ, յաւէտաբարգաւաճ զօրավար ապուհիպատ պատրիկ տէր Ջուանշիր՝ Աղուանից իշխան, ամենայն նախարարօքդ, որ համանգամայն ընդ ձեզ են, Դաւիթ և Յովէլ նուաստ եպիսկոպոսունք *ի* տէր խնդալ: (208 /8; 208 /12) Աւետաբեր հնչմամբ հանդիսացուցանել ձեզ պարտիմք և ձեռն հրովարտակ պատճենիս զհրաշափառ ծածկելոցն երևումն և զգիւտ սրբոյն խաչին, որ առաւել քան զառաւելն յաճախեաց յոգնայեղց զարմացումն *ի* մեր միտս, զոր երբեմն անհաւան և անհաւատ մտօք ճառել իսկ վասն իրացն չառնուաք յանձն, այժմ ահա տեսաք. տեսողք եղեալ յաւէտասքանչ ցուցակութեան

խաչիս, աչօք մերովք պիտառապէս վկայեմք ճշմարտութեամբ, թէ սա է պարծանք պարծանաց. և զիա՞րդ զայս տալ լռութեան մարթիցէ, և կամ զարփիափայլ լապտեր դնել ընդ դրուանաւ. այլ յայտ է, թէ *ի վերայ* կարգաց լուսեղէն աշտանակի, այսինքն՝ *ի* սրբումն կոչարանի լուսատու յԱմարասումն լինել զսա: (208 /15; 209 /2; 209 /3) Զի որ երբեմն դատապարտութեան էր անուն խաչն, այժմ հաւատացելոցս իրք եղեն փրկութեան. որով *ի ձեռն* սորա *ի ներքս* յարքայականին գտաք յառագաստումն և չերկնչիմք այսուհետև *ի* բոցեղէն նետից, զի զթագաւորականի նշան յանձինս մեր բարձեալ բերեմք. ունկնդիր լերուք մտադիւրութեամբ բանիս, զոր լսէքդ: (209 /8; 209 /8; 209 /9) Սակայն ճշդիւ քննեալ շնորհիւն Աստուծոյ գտաք ճշմարտութիւնն *ի* գալն մեր *ի* հովիտ մի Արցախայ՝ եզր գետոյ ինչ՝ *ի* տեղի մի Չղախ անուն կոչեցելոյ, ուր կայր մատուռն մի: (209 /13; 209 /14; 209 /14) Եւ ահա համբաւն հռչակէր երթալոյն մերոյ. և բազմութիւն շրջակայիցն յոյժ շեղջակուտեալ. անդ հասանէին քահանայական դասք և այլք *ի* պատուական արանց, յորս ոչ սակաւ կայր հակաճառութիւն դիմամարտելոյ: (209 / 16) Ուստի յանկարծակի հոտ անոյշ բուրեաց, յաճախապէս զմեր լցոյց հոտոտելիս. որով և յետ սուղ ինչ վաստակոցն գտաք զփափագելին *ի ձեռն* շնորհաց բարձրելոյն և յաղօթից սրբոյ հօրն Իսրայէլի՝ կողոփս երկուս արծաթեղէնս՝ կապարեայ կնիք *ի վերայ* պնդեալ հոռոմափակ. զորմէ տախտակ մի ձոյլ ոսկի՝ հաստահեղոյս բևեռեալ. և *ի* նմա գիր ասորի և հայ: (210 /3; 210 /4; 210 /5) Ընդ որս ես իսկ Յովէլ՝ նուաստ եպիսկոպոս, մեծապէս գոհացեալ զբոլորից պարգևատուէն, զամենայն երկբայութիւն *ի բաց* ընկեցեալ յիմոց մտացս և հաւատով ընկալեալ զտեսիլ աբասուս: (210 / 9) Վասն լինելոյ գիւտիս այսորիկ յիմում վիճակիս՝ մեծաւ ցանկութեամբ զմի *ի* տապանակացս յիմ սեպհական եկեղեցին առեալ տարայ, և զայլ սրբութիւնսն յուղարկեցաք *ի ձեռն* քորեպիսկոպոսաց և քահանայից և դասու պաշտօնէից մեք՝ Դաւիթ և Յովէլ եպիսկոպոսունք *ի* տեղի մենաստանաց աբասուս շնորհօքն Աստուծոյ, ցնծալից ուրախութեամբ, հոգևորական երգով: (210 /11; 210 /12; 210 /13) Եւ տէր Աստուած զօրութեամբ և փառօք զձեզ պահպանեսցէ *ի շնորհս* աստուածընկալ խաչիս երևման և բազմաւոր կենօք խաղաղականօք. *ի* ցօղոյ երկնից և *ի* պարարտութենէ երկրի տացէ զանհամեմատութիւն երկաքանչիւրովք *ի* վայելումն հոգեծաղիկ տեսողիդ և թագազարմ ժառանգօք մեծահագ հեղինակիդ՝ Ջուանշիրի. ոքղջ լերուք *ի* Տէր: (210 /15; 210 /16; 210 /16; 210 /17; 210 /18) ԱՌ ԱՅՆ ՊԱՏԱՍԽԱՆԻՔ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՅՆ *Ի* ՀԱՅՐԱՊԵՏԷՆ ԵԻ ՅԻՇԽԱՆԷՆ (211 / 2) Տառայարեալ պատճէն՝ հրովարտակիս, զոր շարաքերեալ և կարգեալ էր, տեսաք. յորմէ մեծապէս զանզեղջականէն գոհացաք զԱստուածոյ, որ իւրով ողորմութեամբն օր ըստ օրէ հրաշագործէ յարարածս իւր, առաւել *ի* մեզ *ի շնորհս* ձերոյ սրբութեանց, Դաւիթ և Յովէլ եպիսկոպոսունք: (211 / 5; 211 /5) Ուխտանէս՝ նուաստ կաթողիկոս և Ջուանշիր՝ Աղուանից զօրավար և իշխան *ի* տէր խնդալ: (211 / 7) Վասն կենսատու փրկութեանդ հասելոյ մեզ յԱստուծոյ յաւէտապէս գոհացաք զԱստուծոյ անսպառ պարգևացն և վասն սրբոյ խաչիդ, որ *ի միջի* մերում երևեցաւ, ծագեաց, եբաց, լուսաւորեաց զխաչս մեր. վասն այսորիկ անդադար բերանով և անհանգիստ լեզուաւ զտէր մեր Յիսուս Քրիստոս՝ զբարերարն, զսքանչելագործն և

զպարգևաբաշխն օրինեցաք, որ շնորհեաց մեզ զանապական պարգևս սուրբ հոգւոյն:(211/10) Եւ դուք զառաքինազգեստ և զսրբասնեալդ Իսրայէլ և զգանձդ շնորհաց հանդերձ սրբոյ նշանիւդ այսր առեալ առ մեզ հասուցէք մեծաւ զգուշութեամբ, զի և մեք երկրպագեսցուք երանաւէտ համբուրիւ հանդերձ տիեզերական ժողովովս. ո՛ղջ լերուք ի Տէր: (211 / 17) Նմանապէս իսկ երջանիկ վերադիտող և տեսուչ եպիսկոպոսացն տեսեալ զդրուագ նամակին արևելից զօրապետին և սրբոյ կաթողիկոսին՝ այնուհետև շեշտակի ճեպով առեալ զգտեալ գանձ սրբութեանցն եպիսկոպոսքն հանդերձ Իսրայէլիւն անյապաղ ժամանէին ի մեծ քաղաքն Պերոժ Կաւատ, վասն զի արևելեայցս մեծ իշխանն Ջուանշիր և եպիսկոպոսապետն Ուխտանէս անդ նստէին ամենայն նախարարօքն: (212/2) Որոց ընկալեալ զլուսապայծառ շնորհս հոչակաւոր հանդիսիւ՝ մերկարէին զերկրպագութիւնն ի բազմախումբ հոլարանին: (212 / 5) Ապա հրաման տայր յուղարկել զնա խաչապայծառ տապանական անդրէն ի վերնակողմն գաւառն Մեծ Կուենից՝ ի բարձրաւանդակ լեառնն՝ ի տեղի մենաստանին իւրոյ ի Գլխոյ վանս: (212 /8; 212 /9; 212 /9; 212 /9) Եւ ողջոյն տուեալ հոգևոր համբուրիւ երանելիքն միմեանց խնդամիտ յիւրաքանչիւր ոք դառնային ի նաւահանգիստն: (212 / 10) Ընդ այսոսիկ ապա ժամանակ տարօրէն խառնակութեամբ գլխաւորք ազգաշաղախ Աղուանից աղծապիղծք եղեալ. նախ՝ թագաւորազինն Կողթայ տեառն տունն, ապա յԱրշակաշէն գաւառի երեք տունք՝ Դաստակերայն, Ճնշմիայն, Մամշեղուն և Կուր գետոյն յայնկոյս տունն Հեջերւոյ, և յՈւտի գաւառի ի Գիս Վարազ Պերոժի տունն, որ ղաքնար ունէր պատիւ, և Վարաժնու սպասատունն, որ յԱրաժականի նստէր, և Տուերակու տունն: (213 / 1) Զսոցա անազդակ լրբութիւնն և զանօրէն ամուսնութիւնն երանելի հայրապեսն Ուխտանէս անիծիւք փակեաց. և անդարձ լեալ ի գտեալ չարեացն ամենքին առ հասարակ բնաջինջ եղեալ սատակեցան ի յերկրէ, որ և յետոյ փոխի ի Քրիստոս սուրբ հայրապետն. և յաջորդէ զաթոռ նորին Եղիազար՝ այր բարի և ազնուական: (213 / 4; 213 / 4; 213 /5) Սա էր եպիսկոպոս ի Շաքւոյ, որ ի վախճանելն Ուխտանիսի ի ժողովի անդ դիպեալ կոչմանն ընդ այլ եպիսկոպոսունսն, զորոյ չարափառ ոմանք զգալն նորա ի ժողովն պարսաւէին: (213/6; 213 /6; 213 /7) Յայնժամ զգետնեաց զնա այսն պիղծ ի տեսիլ ամենեցուն զամբաստանութեանն կտակ ի մէջ բերեալ: (213 /10; 213 /10) Եւ անդէն վիճակադրեալ որպէս զՄատաթիայն պարկեշտն այն Եղիազար ի նոյն ժողովոյն առնու առաքելական պատիւ, մինչդեռ բարեբաստիկն Ջուանշիր զաշխարհական տէրութիւնն վարէր յանհաստատելի կենցաղումս ի կամս Աստուծոյ: (213 /11; 213 /13) Այլ քանզի աղբիւր ուղիաճեմ իջիւք էր այրն երանելի՝ ի յորդահոս քաղցր իւրոց յոգունց արբուցանէր վտակաց, սաստկացեալ ունելով միշտ պատերազմ ընդդէմ Ենիբայ թշնամւոյն, որով սովոր իսկ են առաքինազունքն ախոյեան քաջ և ընտիր ընդդէմ նորա գտանիլ: (213 / 17) Նոյն օրինակ և սա գեղեցկազարդ արդարութեամբ էր վայելչացեալ անուանելով յաշխարհի. բղխեաց, արձակեաց եղակարծ ի յոլովից ճաշակելիս զհոտ անուշից սրբութեանց սրբոց: (214 / 3) Յետուստ ուրեմն յակնարկել հոգւոյն սրբոյ ի սիրտ վերադիտողին Դաւթայ՝ տուելովն նմա զմեծն քահանայապետութիւն՝ ձեռնադրէ, զի կալցի իշխանութիւն շահել զոգիս կորուսելոցն, որպէս մեծն Պետրոս, և զանարատն մատուցանէ պատարագ

որպէս զարին Ահարոն: (214 / 5) Եւ մերձաւորք և հեռաւորք խրախճանակիցք ընդ այն լինելով՝ *ի* սրբական աջոյ նորա առցեն օրհնութիւն: (214 / 8) Սակս որոյ *ի դէպ էր* առ նա առաքելական ձայնն, թէ՝ «Զնախահիրաւէր կոչեցեալսն արդարացոյց Աստուած և զարդարսն փառաւոր արար»: (214 / 11) Արդ յետ անցանելոյ ամ մի *ի վերայ* այնորիկ, սակս նախագուշակ հրամանին, որ *ի վերուստ* եղև նմա ազդումն, ցանկութիւն յոյժ՝ սուրբ երէցն ունէր խնդրել զփափագելի խաչն՝ զծածկեալն սրբոյն Մաշտոցի *ի* Գիս անուանեալ գիւղ, որ յՈւտի գաւառի: (214 /13; 214 /13; 214 /15) Եւ վասն զի ինքն առաջնորդ բարի եղբարց՝ զսիրոյն խորհելով կատարել առ ամենեսեան զպատուիրանն և զգեցեալ էր զճշմարտութիւնն Աստուծոյ *ի ծածուկ:* (214 / 17) Վասն այնր բարեխնամաբար հոգացեալ զբոլորիցն օգուտ, ոչ հոչակելով զծածուկ խորհուրդ *ի* հանդէս ամբոխից և խուսափել ջանայր *ի* մարդկան գովեստից՝ փախչել *ի* փառամոլ և *ի* սնապարծիկ ախտից: (215 /1; 215 /1; 215 /1; 215/2) Վասն այսորիկ զմի ոմն *ի* սրբասնելոցն քահանայից նախամեծար պատուաւորաց հետևող իւրումն միայն զնա առաքէր գիւտին այնմիկ, և ոչ ժողովով կամէր զերթն: (215 / 3) Եւ նովաւ հանդերձ հասանէր *ի* նախասացեալ վայրն՝ *ի* հինն եկեղեցի, և ոչ գիտելով ստուգել և նշմարել զտեղին: (215 /5; 215 /5) Նոյնժամայն նշան զարմանալի լինէր *ի վերայ* սաղարթապատ ծառոցն նոճից, որք երկաքանչիւր աստի և անտի միջաւորեալ ունէին յինքեանս զկոչարանն սուրբ, որ իբրև եթէ ծագումն երևեալ բոցաճաճանչ *ի վերոյ* <u>ունել</u> կամարաձև. և *ի* նոյն միացեալ հաւասար գերակատար գմբեթին, բովանդակապէս սահեալ ճառագայթէր *ի* ծայրս ծառոցն նոճից ճշգրտապէս աղեղանդ, որ յամպսն լինի. փայլականաբար ցայտէր *ի* ստորադրեալ քարատող և աղիւսաշար պուրակին, ուր կայր դադարեալ անդ խաչն Քրիստոսի: (215 /6; 215 /8; 215 /8; 215 /9; 215 /10) Առնոյր *ի* ձեռն բրիչ՝ պարեգօտեալ իբրև զարին Աբրահամ, սկսաւ բրել զնկատեալ տեղին իւրով համահաւանեալ արամբն: (215 / 12) Եւ որպէս վայրապիտէր, հինգ էր քիլ կամ թէ աւելի ինչ՝ յանկարծակի երևեալ տապան մի արծաթի՝ ժանգառագոյն, հնացեալ, որ և ունէր առ հասարակ հայ, հռոմ և ասորի գիր. և ցուցանէր *ի* նմա գոլ զմասն *ի* կենդանարմատ փայտէն: (215 /16; 215 /16) Կայր անդ նշանն Քրիստոսի արծաթաձոյլ, գեղազանեալ ոսկիազօծ տեսակաւ, որ յաւէտ է *ի* խաչէն Քրիստոսի: (215 / 18) Ապա այնուհետև հրճուալից եղև յոլովակի խնկարկութեամբ այրն Աստուծոյ՝ զուարթանայր հոգեծաղիկ պայծառութեամբ, յարակցաբար լեալ մարմնաքնարն Դաւթի երգոյն, յօրինէր նուագս երաժշտականս. «Օրհնեցից զՏէր յամենայն ժամ» և որ *ի* կարգին է. վասն շնորհելոյ երկիւղածաց իւրոց զնշանն, որ միշտ ապրեցուցանէ *ի* թշնամւոյն: (216 /3; 216 /4) Յաւուրսն յայնոսիկ յերևել նշանին և *ի* գալ հասանել *ի* հանգստարանն՝ մեծ և հրաշալի զարմացումն լինէր, որ լոյս անհնարին էր զահեղ, զմեծ փառացն Աստուծոյ: (216 / 6; 216 / 6) Զի որպէս Կիւրղի, որ յԵրուսաղէմ էր հայրապետ, գրութեամբ *ի* Կոստանդիանոս վասն երևման խաչին ասէ. «Եթէ ցոլքն լուսոյ մինչ *ի* Զիթաստանեաց լեառնն ոչ միում կամ երկրորդում երևեալ, այլ ամենայն բազմութեան քաղաքին ակն յայտնի ցուցեալ», - նոյնգունակ եղև արևելեայց աշխարհիս լուսոյ խաչիս երևումն. զի հարթ առ հասարակ ամենեցուն տեսեալ զսաստկութիւն լուսոյն բոցաճաճանչ փայլմամբ եկեալ ընդ ամպս երկնից՝ սլացեալ յայտ յանդիման: (216 /8; 216 / 9) Ամենեցուն

տեսեալ զել և զէջ սուրբ շնորհացն *ի վերայ* ամենասուրբ խաչին, երբեմն *ի* նմանութիւն հրոյ, երբեմն *ի* նմանութիւն լուսոյ, երբեմն *ի* տեսիլ աստեղն, որ ծագէ յառաւօտուն, զոր ոչ մի ոք, այլ աշխարհի ամենայն եղեն տեսողք մեծապայծառ սքանչելեացն ճառագայթից: (216 / 13; 216 /13; 216 /14; 216 /14) Ջի մինչ ընդ երկինս ցոլացեալ էր մերձ առ տեղեաւն *ի* տաճարին տեառն ոչ միայն բնակչաց քաղաքին, այլ շրջակայ համասփիւռ և համատարած ամենայն գիւղից և քաղաքաց, արանց և կանանց, այլ և հովուաց *ի* լերինս և անդիորդաց *ի* փոսս ճարակողաց և արդիւնարարաց *ի* դաշտս, որք աշխարհասէրք զպտուղս կապտէին, և բազում ճանապարհորդաց բացօթէից: (216 / 16; 217 /2; 217 /2; 217 /2) *Ի* հինգերորդում պահու գիշերոյն, այդոքիկ ամենեքեան տեսանէին զարփիահրաշ սքանչելիսն: (217 / 3) Եւ եկեալ բազում ճեպով ընդ այլ բազում տեսողսն՝ ահիւ քաջասլաց քայլարանօք առ *ի* տես յախուռն խմբելոցն հոյլս հոյլս *ի* հանդիսի յօթարձակ տեսարանին: (217 /6; 217 /6) Եւ լցեալ զցանկութիւն փափագանացն համբուրելով զսուրբ խաչն Քրիստոսի, ընկալեալ զշնորհս և զողորմութիւն *ի* նոյն ինքն *ի* տենչալի զինէն՝ զհանդերձեալ վայելուչ զյաղթութեանն առեալ ընդունէին պարգևս: (217 /8; 217 /8) Եւ զի բազումք *ի* գլխաւորաց աշխարհիս կողմանց կողմանց եկեալ էին *ի* տօնն տէրունական նշանին, և վասն այնորիկ սաստիկ և ահեղ նշանացն, որ երևէին *ի վերայ* խաչին, ոչ ոք իշխէրն զգիշերն *ի* յարկսն յայն մտանել կամ *ի* քաղաքի գաւթին օթել. այլ այնուհետև ելեալ արտաքս *ի* սարաւանդակ վայրսն և զգիշերն ամենայն անդ աղօթէին մինչև ցառաւօտն: (217 /9; 217 /10; 217 /11; 217 /11; 217 /12; 217 /12) Եւ *ի* ծագել արեգական մտանէին *ի* գաւիթ եկեղեցւոյն առաջի խաչին ահիւ և երկիւղիւ. և իսկոյն յարուցեալ *ի* հսկումն խաչապայծառ տօնին կատարէին գոհացողական պատարագ *ի վերայ* սեղանոյն: (217 /13; 217 /13; 217 /14; 217 /15) Ապա յետ երևելոյ հրաշիցս այսոցիկ՝ իբրև վերստին ընձիւղեալ վերածաղկէր հզօրեղ, աստուածընկալ խաչ աշտարակին մեծի, յորժամ դաւանել հաւատացաւ յԱստուծոյ արժանաւորել մեզ միշտ զմեւք պահպանութեամբ պարունակեալ զիւրոյ արարչութեան գութ խնամոյ անվթար առտուեաց մեզ տէրն նեցուկ զփրկական կայմն զպարզողն *ի* մեզ աստուածգիտութեանն առագաստ: (218 / 2) Թանց գիտութեանց դպրոցն ջոկք և ուխտի մանկանցն դասք մնային. զի *ի* նոցանէ էր ծածկեալ խորհուրդն: (218 / 3) Ապա զգացեալ Աստուծոյ սպասաւորին, որ էր *ի* հին եկեղեցւոջ անդ, ծագումն խաչին: (218 / 5) Վասն որոյ իբրև գիտակ լինէր այսմ այրն՝ քաջայօժար կամաւ երթայր *ի* Մեծ Կուենից գաւառն՝ *ի* Գլխոյ վանաց եկեղեցին: (218 / 6; 218 / 7) Եւ նորա դարձեալ *ի* տեղի իւր: (218 / 10) Եւ *ի վաղիւն* առ նոյն այրն նոյն երկրորդեր տեսիլն՝ առնելով ձեռագիր նշան, զոր նա բերեալ տայր առնն Աստուծոյ: (218 / 10) Որոյ զայն ահա տեսեալ սրբոյն՝ հմտաւորեալ թէ *ի վերուստ* է ազդեցութիւնն, յայտնէ նմա զիսորհուրդն, և զնոյն ինքն զկենսատու խաչն ցուցանէ և երդմնապատիժ սահմանադրութեամբ պատուէր տայր նմա միթ ումեք պատմել: (218 /12) Իսկ նորա հնազանդեալ հայրապետական հրամանին՝ փութով հասանէր *ի* սուրբ եկեղեցին: (219 / 3) Եւ ինքնին մեծ իշխանն և սուրբ հայրապետն ամենայն մեծամեծօքն անդ հասանէին և ակն յայտնի զնորոգափայլ խաչն Քրիստոսի տեսանէին, զոր սրբոյն Մաշտոցի իւր իսկ ձեռամբն եդեալ էր *ի* պահեստի, որով դարձուցանէր իսկ զաշխարհս

Աղուանից հ կռոցն մոլորութենէ լուսաճնութեամբ աւազանին շնորհաց: (219 /6; 219 /6) Յայնմհետէ մեծարու եղեալ քահանայն Աստուծոյ Իսրայէլ առաջի կաթողիկոսին և իշխանին և յաչս մեծամեծացն. առնոյր և հրաման հ նոցանէ գործել զամենայն համարձակապէս: (219/11) Եւ յետ սուղ ինչ աւուրց վասն առաւել հրաշիցն և մեծամեծ սքանչելեացն, որ բազում անգամ եղեալ էր հ վերայ ծառոցն նոճից, կամեցաւ զի հ նուէր նշանին ձօնեսցէ հ պատկեր տեառնանման խաչին: (219 /13; 219 /13; 219 /14) Զայսոսիկ լուեալ եպիսկոպոսապետին և Ջուանշիրի՝ նոյնժամայն գրեն առ այրն Աստուծոյ Իսրայէլ, զի և նոքա հաղորդեսցին հասանել հ ժամադրութիւն նաւակատեաց նշանին և յօծումն սրբոյ խաչին: (219 /18) Յայնժամ տեսիլ յԱստուծոյ երևեր հ վերայ սրբոյ պատրիարքին Եղիազարու, զի մի յապաղեսցէ երթալ օծանել զխաչն Քրիստոսի: (220 / 2) Որոյ պարառաբար յարուցեալ յառաւօտուն՝ փութապէս հասանէր հ կարգեալ եկեղեցին՝ հ վիճակ Գիսաւան նահանգին: (220 /4; 220 /4) Քանզի յայնժամ իշխանն մեծ չուեալ էր հ կողմանս հարաւոյ հ Սիսաւանացն գաւառ, և վասն զի հայրապետն Եղիազար նմանակիր առաքելոցն էր բանիւք և գործովք՝ զպատրանաց ինչ ցնորս վրէժխնդրութեամբ վանէր, և զոր ինչ ճշմարտութիւն ծաղկէր, պսակ պարծանաց իւրոց վարկանէր, ջատագով այնմ լինէր խնդրոյ: (220/6; 220/6) Ծանուցեալ այնուհետև երջանիկ առն, եթէ աստուածապաշտութեան է խորհուրդս զարմանագործ տեսանս, որ երբեմն առ Իսրայէլ քահանայ. ընդունէր զնա իբրև զԱստուծոյ սպասաւոր և առհանեալ մասն հ սրբոյ խաչէն Մաշտոցի նորին կամաւ եղեալ հ փայտակերտ նորոգաշէն նշանին՝ օծանէր զխաչն իւղովն օրհնութեան. և կանգնեալ հ մէջ եկեղեցւոյն՝ առնէր նաւակատիս մեծապէս խնճոյիւք, հոչակաւոր հանդիսիւք, եկեղեցական ուխտիւ և հաւատացելոց դասուք: (220 /13; 220 /14; 220 /15) Եւ եղև հ ժամանակին յայնմիկ խաղալ գնալ մեծի իշխանին Ջուանշիրի հ կողմանս լեռնականացն հ զբօսանս բոլոր տարեկան աւուրց հրճուական անցուցանելով երկրաչափութեամբ: (221 /3; 221 /3; 221 /4) Բայց ապա ըղձալի հոչակաւորն հ ձեռն խարդաւոնող ախտին, զի ընդդէմ Աստուծոյ երկասիրէր պատուիրանին, թափուր և ունայն գոլով՝ մերկ հ յայնցանէ երևեր փառաց: (221 / 9; 221 / 10) Եւ ահա ամենայն սարդի ոստայն եղև. վաղվաղակի չքնաղն այն քակտէր վայելչութիւնք, զի հ ժամ տապակէզ աւուրցն առեալ գերահրաշապետաւորին զազատասուն տոհմն հանդերձ Նամեսական գնդիւն հ հովիտս բարձրաբերձ լերանցն բերկրէին ծաղկատեսակ հանգստեամբ, հ գեղեցիկ մարգս պերևետեալ յոլովէին աւուրս բարեկեցիկ յղփութեամբ: (221 /11; 221 /13; 221 /14) Իսկ իբրև անցանէին աւուրք խորշակայեղց տօթանացն՝ հ ժամանել բարձրութեան տօնին մեծի նաւակատեաց խաչին՝ համբարձեալ հ կողմանցն յայնցանէ՝ գայ անցանէ յՈւտի գաւառ հ Պարտաւ քաղաք յիւրականն գեղազարդեալ տաճարս, զի անդ պարգևաձիր մեծարանօք հ հանդիսաւոր տօնին Աստուծոյ մատուսցէ երկրպագութիւն: (221 /15; 221 /16; 222 /1; 222 /2) Եւ մինչդեռ հանգուցեալ էր մեծաւ ուրախութեամբ մեծահռչակն Ջուանշիր, այր ոմն տարօրէն և վատանշան հ Կայենեան ընկղմեալ ախտ, արկեալ հ հրապոյրս խարդախութեան ընկերս իւր համահաւանս արարեալ, որ ոչ զսէր նորա յիշեալ և ոչ զպատիւ տան զհօր իւրոյ, զոր գտեալ էր հ նմանէ մեծաւ բարգաւաճանօք, այլ մահ խորհեալ հ վերայ նորա խորհուրդ վատ հ միտս

արկանէր և հրապուրեալ զնա ի պատճառս բղջախոհութեան, փաստապատիր բանիւք զնա հաւանեցուցանէր՝ ելանել ի զբօսանս խոհերական: (222 /4; 222 /4; 222 /6; 222 /7; 222 /7; 222 /7; 222 /8) Եւ մինչ դեռ ի տաճարէ անտի ելանէր իշխանն ընդ ճանապարհ պարտիզայար ծաղկոցացն, յայնժամ ի գիշերի յառաջին պահուն՝ անվահան, ունելով թուր. որ և սպառազինեալ սուրհանդակ պահապանացն ջոկք անհոգ և անվեհեր ի դրունս արքունի պաղատանն կային անկեալ ընդ քնով: (222 /9; 222 /10; 222 /11) Եւ ինքն անօրէն նենգաւորն վառեալ ի ծածուկ՝ ագեալ էր զզրահիսն ի ներքոյ պատմուճանին: (222 /15; 222 /15) Ապա իբրև հասանէին ի միջնավայր անդր բուրաստանին և մերձ էին ի պարոյկ որմոյն, որ պարունակեալ էր զայնատարածն արքունական բակին, և որպէս այլով ամենայնիւ էր իմաստայեղց անվկանդն Ջուանշիր՝ յայնմ ևս գիտաց զնենգութիւն սպանողին պիտակահոյլ դաւոյն: (222 /16; 222 /17) Եւ ի հնչիւն ձայնից վառելոյ զրահին պակուցեալ իշխանն սրտաբեկ լինէր՝ համարելով, թէ աշխարհախումբ խորհուրդն է վասն իւրոյ սպանմանն: (223 / 1) Եւ լռելեայն ի տաճարն կամեցաւ դառնալ: (223 / 3) Իսկ անօրէն սպանողն զսուսերն թերաքամեալ ունելով՝ յանկարծակի յետուստ կողմանէ հարկանէր զիշխանն արի՝ սաստիկս վիրաւորեալ, զի մերկ էր ի զրահից: (223 / 5) Աճապարէր և նա որպէս առիւծ մռնչող, կամեցեալ զձեռն ի գործ արկանել սուսերաւն, բայց զի զօրութիւն բարձրելոյն հեռացեալ էր ի նմանէ՝ մատնելով զնա ի ձեռս ձեռնասուն սիրելւոյն իւրոյ: (223 /7; 223 /7; 223 /8) Յառաջնում նուագին իբրև յարձակէր սուսերաւն ի վերայ անօրինին, նորա յասպարն առեալ ընդդիմամարտեալ արձանանայր. և խրեալ զզէնն ի սեռ վահանին՝ ոչ կարէր հանել զսուրն և անդէն ամփոփի ամենևին: (223 /9; 223 /10) Եւ նա լցեալ վիրագային գազանութեամբ՝ զայրագնեալ վիրաւորէր զամենայն մարմինս նորա իբրև զթունաւոր օձ և խածանող սրտմտութեամբ նրանակոտոր և վաղակաւոր խոցոտմամբ անխնայաբար յերկիր ընկենոյր զիւր տէրն՝ ոգւոյն ի ծոցոյն թափիլ գոլ վարկանելով տիրասպանին. և կարծեցեալ կիսամահ զնա արարեալ՝ զանխլաբար արտաքս ելանէր յիւր երթալով տուն՝ կեղծաւորեալ ոչ ունել կարծիս, թէ յանգետս ի տան ննջիցէ: (223 /14; 223 /16) Յայնժամ պատրիկ ոմն՝ քեռորդի իշխանին, զիւր Նամեսականն առեալ լեզէոն գնդի յիսնեակսն զկնի ելանէր մահապարտին. բայց ոչ զգացին վասն նախափախուստ լինելոյն հասանել, այլ ի վերնակողմն երթային յԱրցախունեաց գաւառն՝ նմին իրաց քինախնդիր: (224 / 6) Այլ դեռ շունչն ի նմա կայր. զի սուղ ինչ աւուրս տևեաց կենդանի, որդւոց իւրոց իւրաքանչիւրումն զգանձս և զպատիւ յայտ առնելով՝ կարգէր զնոսա ի բաժինս իւրեանց և ի դժնդակ վիրացն պակասեալ վախճանէր: (224 /10; 224 /11; 224 / 12)Յայնժամ ճարտասան ոմն ի մէջ անցեալ, որ տեղեակ էր արհեստական իմաստից, Դաւթակ անուն կոչեցեալ, հնարագիւտական վարժիւք յաջողակ և վերծանական քերթութեամբ յառաջադէմ: (224 / 17) Որ և յառատաբար ի բանից պաճուճանս ճարտարութեամբ նուագէր, քաջապէս հրատարակող լեզու ունելով նման երագագիր գրչի: (224 / 19) Սա յոլովիւք աւուրբք ժամանեալ՝ յամէր ի դրան արքունի: (225 / 2) Իսկ իբրև հասանէր օրհասական շշուկն ի վերայ արևելից աշխարհիս սակս յանկարծահաս սպանման մեծի զօրավարին, յայնժամ սկսաւ նա երգել ըստ ալփափետաց գլխակարգութեանց զողբս

զայս *ի վերայ* բարեացապարտն Ջուանշիրի և ասէ այսպէս. (225 /2; 225 /4) ՈՂԲՔ *Ի* ՄԱՀՆ ՋՈՒԱՆՇԻՐԻ ՄԵԾԻ ԻՇԽԱՆԻՆ (225 / 7) Աստուածային բանին արուեստաւոր հոգի, Յօրինեաք իմաստիւ զտխրական երգմունս, Զի սգալի ձայնիւ անդադար ողբասցուք *Ի վերայ* դժնդակ կորստեանս մերոյ: (225 / 11) Դարձաւ *ի* դառնութիւն խաղաղութիւն մեր, Եւ դրունք հինից տեղասցին *ի* մեզ. Զի մեծասքանչ տէրութիւնն կործանեցաւ, Եւ հրաշալի պետութեանն շիջաւ ճառագայթ: (226 / 1; 226 / 2) Եկին հասին *ի վերայ* մեր անէծք, Զորս կանխագոյն սպառնայր Եսայի մարգարէն, Զի զաւուրս տօնի տէրունեան նշանին Դարձուցին մեզ *ի* սուգ և *ի* լալիւն դառնութեան: (226 /5; 226 /8; 226 /8) Զանգիւտ կորստեան փորեցին խորխորատ, Զի հովիւն բարի ընկլուզեսցին *ի* նա. Հոգի մոլորութեան շնչեաց *ի* նոսա, Եւ *ի* նանիր թաքուցին զորոգայթն մահու: (226 / 10; 226 / 11; 226 / 12) Էր նստեալ որպէս զառիւծ *ի* մուրջ, Եւ լրեալ՝ *ի* նմանէն սարսէին թշնամիք. Տեարք տոհմից և իշխանք ամենայն Երկիւղիւ և սիրով հնազանդէին նմա: (226 /13; 226 /14) Ընդ ամենայն երկիր ել համբաւ նորա, Եւ *ի* ծագս աշխարհի ծաւալեցաւ անուն նորա. Զի գինարիմաց զօրութիւն նորա և գհանճարեղ իմաստն Հանդիսաւոր հնչմամբ գովեցին տիեզերք: (226 / 18 Ժամանեցին առժամայն չարիքն մեր, Եւ զաւզեղջ մոլորութիւնն յանդիմանեաց. Բարկացուցաք զարարիչն գործովք մերովք, Եւ մատնեաց *ի* կորուստ զնախագահ տէրութիւնն: (227 / 4) *Ի բաց* մեկնեցան *ի* նմանէ պահապանքն, Եւ օգնութիւնք վերնայինք հրաժարեցան *ի* նմանէ. Զի տէր հեռացաւ յաւուրն չարի Եւ եթող զնա *ի* կոխան ժանտից: (227 /5; 227 /5; 227 /6; 227 /8) Լարեաց զաղեղն իւր բանսարկու թշնամին, Եւ սրեաց որպէս զսուր զնենգիչ սիրոյն, Չարաչար խոցոտմամբ հասոյց *ի վերայ.* Որպէս յազգին Մովաբու *ի* գիշերի սատակումն: (227 /11; 227 /12) Խրոխտ էիր դու *ի վերայ* ազգաց տիեզերաց, Եւ խորագոյն խոցէիր, որք զքեզ արթնացուցանէին. Իսկ արդ դարձաւ արփին յայլ ճանապարհ, Եւ խիզախեցին *ի վերայ* քո որդիք ծառայիցդ: (227 /15; 227 /18) Կապեսցին շաւիղք փախստեան նորա, Եւ թռչունք երկնից ճախրեսցին *ի վերայ* նորա. Ագռաւ ձորոց սլասցին *ի* նա, Եւ գազանք վայրի սպասեսցեն նմա: (228 /1; 228 / 2) Հուրն Հերովդի առաքեսցի նմա, Եւ ծնցին նմա որդունք և մունք. Աղեկէզ տոչորմունք բորբոքեալ *ի* նմա՝ Կերիցեն առժամայն զտիրապան մարմին նորա: (228/5; 228/6) Զեռն որ ձգեցաւ *ի* սպանանել զտէրն, Եւ ոտք, որ կոխեցին զիրաշագեղ պատկերն, Ուրկածին ախտիւն եռացմամբ զօսացեալ՝ /ճիշտը՝ գօսացեալ/ Յարեսցին *ի* նա ցեցք չարակեղ խոցոտմամբ: (228 / 8; 228 / 11) Յառնէր *ի* քնոյ իբրև զկորիւն առիւծուց՝ Ուժեալ զայգուն յափշտակէր և զբլթակս ոչխարաց բաշխէր: (228 / 22) Նիրհէր *ի* մարմին, այլ հոգւոյն արթնութեամբ Վարէր զկառս զԱրէսի *ի մէջ* աստեղացն, Քաջութեամբ՝ բերելով զուշիմութեան ծաղիկն: (229 /1; 229 /2) Շնորհք աստուածապաշտութեան Յորդահոս շարժմամբ *ի* կայլակաց կողիցն Յիսուսի. Ծոց ծովասարաս զհոգւոյն առակ եղեալ Յանուշիցն արտահոսէր յախորժացն Հոտոտելեաց զհոտ անմահութեան: (229 / 5) Սիրով քո այրին սիրելիք քոյին. Եւ զսէր քո անմոռաց *ի* մտի ունին. Ոթի, թէ խունկ անուշութեան Բուրեալ լինէաք քո գերեզմանին: (229 / 26) Տիբերական ծոցք Լիբանոս լերամբք Յագուրտ առնուին քև *ի* տես միակի Ականէ կալեալ զօձիսն հողմոյն հիւսիսոյ Զքեզ միշտ խնդրեն՝ առ ոչ երևելդ Տապարաւ Հոնաց զկոտորումն նոնենեաց առնեն:

(230 / 4) Եւ մտադիւր մտածութեամբ հոգացեալ սակս իշխանութեան երկրի, հաճեցան առժամայն հաւանութեամբ ընտրել զնախարար ոմն աւագ, որ մեծարեալն էր կայսերական պատուով զապուհիւպատ պատրակութեան ստացեալ պատիւ. որոյ անուն էր Վարազ Տրդատ՝ որդի Վարազ Փերոժի՝ եղբօր Ջուանշիրի, որք սրտայօժար կամակցութեամբ իշխանք աշխարհին և կաթողիկոսն ճեպէին մեծաւ փութով հասանել ի կատարումն գործոյն: (231 / 6) Եւ անդէն ամենայն մեծամեծքն առ հասարակ զնշան կենդանատեսակ դրօշուց վառելոց, ի ձայն փողոյ հոչակեալ՝ առեալ կացուցանէին զնա ի վերայ ոսկեհանգոյց վահանին երիցս վերաբերելով, ներբողականս հնչէին բարբառս: (231 / 7; 231 / 8) Նախ յառաջ իսկ քան զայս արի այրն Վարազ Տրդատ՝ հնարիմաց հանճարով գերագոյն էր՝ յոյժ ցուցանելով ամենեցուն սէր խնամակալ բարեկամութեան. և իբրև յայն իսկ հասանէր իշխանութեանն գահ, թէպէտ և անբեղուն միտս ունէին ընդ նմա ոմանք ի մախայորդոր տոհմակցացն. այլ նա ի ձեռն իմաստակիր և քաղցրահամբոյր խօսից նուաճէր և յանկուցանէր յինքն զամենեցուն սիրտ: (231 /14; 231 /15) Յայնմ ժամանակի զօրավարի և մեծի իշխանին Հոնաց՝ Ալփ Իլիթուերու առեալ զբազմութիւն զօրաց իւրոց, և որ ուստեք ուստեք եկեալ էին առ նա յաժխուժազնեան յաշխարհէն Գովգայ, ի զէն և ի զարդ վառելոց զօրապետաց, դրօշուք և գնդիւք մկնդազգեստ աղեղնաւորաց և սպառադէն հեծելոց զրահեալք և սաղաւարտեալք, իբրև թէ վրէժխնդիրք արեանն իցեն Ջուանշիրի՝ ասպատակ սփռեալ յաշխարհին Աղուանից՝ առ ստորոտով մեծ լերինն Կաւկասու և յաւանս Կապաղակայ գաւառին: (232 /5; 232 /5) Եւ ինքն իւրով յօգնական գնդիւն ի հովիտս դաշտացն ճախր առեալ՝ անցանէր յՈւտի գաւառ ընդ գետն Կուր, և ահա սաստիկ ամփոփէր զմարդ և զանասուն աշխարհին այնորիկ, աւար առեալ գերէին զամենայն: (232 / 9) Եւ ինքեանք անդրէն դարձեալ բանակէին ի կողմանս դաշտին առ սահմանօքն Լփնաց: (232 / 11) Ապա առաքէր պատգամ առ իշխանն Հոնաց զմեծ եպիսկոպոսապետն Եղիազար՝ ցուցանելով ի ձեռն նորա զիւրն հաւատարմութիւն միամիտ և զսէրն, զոր ունէր առ նա մտերմաբար իբրև եղբօր սիրելւոյ, թէ չէաք մեք հաղորդ սպանմանն Ջուանշիրի. այլ ի ձեռն վատանշան առն միոյ նուազագունի եղեն ոճիրք անհնարինք չարեաց: (232 /16; 233 / 1) Զայս ամենայն խօսեցաւ կաթողիկոսն Աղուանից առաջի հիւղականին Հոնաց. որոյ յաւելեալ և այլ բանս աստուածայինս զանգիտականս՝ մերձեցուցանէր զնա յերկիղ և ի սէրն Աստուծոյ և նուաճէր զմիտս նորա ի հաշտութիւն և ի սէր անքակտելի: (233 /3; 233 /4; 233 /4) ՎԱՍՆ ՅԱՌԱՋԱԴԻՄՈՒԹԵԱՆՆ ՎԱՐԱԶ ՏՐԴԱՏԱՅ ԵԻ ԸՆԴՈՒՆԵԼ ԳԱՀ ԵԻ ՊԱՏԻԻ Ի ԿՈՂՄԱՆՑ ԿՈՂՄԱՆՑ, ԵԻ ՎԱԽՃԱՆ ԴԱԻԹԻ՝ ՄԵԾ ԿՈՒԵՆԻՑ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ. ԵԻ ԻՍՐԱՅԷԼԻ ՓՈԽԱՆՈՐԴԵԼ ԶԱԹՈՌ ՆՈՐԻՆ, ՈՐ ԵՂԵԻ ԱՌԱՋՆՈՐԴ ԲԱՐԻ (233 / 9) Այնուհետև աստուածարեալ իշխանն Վարազ Տրդատ օր ըստ օրէ յառաջատէր ի պետաւորութեանն իւրում: (233 / 11) Եւ յետ այսորիկ ընդունէր զգերագոյն գահն ի հզօր և յարքայակերպ իշխանէն Տաճկաց սահմանակալ լինել կողմանն արևելից, և իշխել ամենայն թագաւորութեանն Աղուանից և Ուտիացւոց գաւառին, նուաճեալ ընդ ինքեամբ զամենեսեան՝ յարագուարճ ցնծութեամբ յաղթող և հզօր գոլով ի վերայ սահմանաց իւրոց: (233 /12; 233 /15) Ընդ ժամանակս ընդ այնոսիկ ապա և երջանիկ հայրապետն Մեծ Կուենից՝ Դաւիթ յաւելաւ առ

հարս իւր, որոյ զբարիոքն պատերազմեալ՝ յաստեացս բարի անուանեցաւ և ի հանդերձեալսն հրանիւթիցն գտաւ հանդիսակից: (234 / 2) Յայն ամ խորհուրդ ի միտ առեալ բարեպաշտ իշխանին Աղուանից ընդ հարազատ զօրավարին և ընդ կաթողիկոսին ամենայն եպիսկոպոսօք և նախարարօքն հանդերձ՝ փութով հասանել ի կատարումն աստուածային խորհրդոյն: (234 / 4; 234 / 6) «Եկաքյք, ասէ, զընտրեալս զայս յԱստուծոյ զԻսրայէլ՝ զառաքինազգեստ այրս, յաթոռ աստուածազան վերադիտողութեան գաւառին Մեծ Կողմանց կարգեցուք տեսուչ, զի լուսաւորեսցէ զնոսա օրէնսուսոյց խոհականութեամբ ի բանս արարչին»: (234 / 9) Կամ զվաղնջուցն յիշատակել ի միտս՝ զհամբակական տիոց զտեսիլ ցուցակութեան նմա ի սուրբ եկեղեցւոջն ի Վաղարշապատ քաղաքի: (234 /12; 234 /13; 234 /13) Ապա յայնժամ շեշտակի ճեպով յղեալ զնմանէ իշխանն արս աւագ ի գլխաւոր նախարարացն, զի փութով առ նա հասուսցեն: (234 / 15) Ապա՝ եկեալ հասեալ նոքա ի Միջնարցախն գաւառ՝ գտանէին զնա ի Գլխոյ վանս՝ յիւրում մենաստանին, որով եղև ժողով վիճակելոցն քահանայից: (234 /16; 234/16) Եւ նոքա եկեալ ի նախնականն հասանէին եպիսկոպոսանոցն, որում Տաղձանսն անուանէին: (235 / 6) Եւ մեծաշուք մեծարանօք յաթոռակցաց և ի գլխաւորաց և ի ժողովրդականաց առաւել քան զամենեսեան լաւ ցուցանէր զիւր վարդապետութիւնն: (235/7; 235/8) ՅՈՒՂԱՐԿՈՒՄՆ ԻՍՐԱՅԷԼԻ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՅԱՅՐԱՐԱՏԵԱՆ ԳԱՒԱՌ Ի ՄԵԾ ԻՇԽԱՆԷՆ ՎԱՐԱՋ ՏՐԴԱՏԱՅ ԱՌ ՄԵԾ ՀԱՅՐԱՊԵՏՆ ՀԱՅՈՑ ՍԱՀԱԿ ԵՒ ԱՌ ԲԱՐԵՊԱՇՏ ԻՇԽԱՆՆ ՎԱՍՆ ՍԻՐՈՑ (235 / 17) Ընդ այն իսկ ժամանակս լինէր խորհուրդ բարեպաշտ իշխանին Վարազ Տրդատայ ի գործ ինչ խորհրդական և ի սէր արձակել զեպիսկոպոսն Իսրայէլ առ մեծ կաթողիկոսն Հայոց և առ բարեպաշտ իշխանն Այրարատեան գաւառին: (236 /1; 236 /1) Եւ տուեալ նմա հանգիստ՝ շնորհէին նմա յամել ժամանակս ինչ ի տիեզերական աշխարհին: (236 / 4) Եւ ի ժամանակսն յայնոսիկ բերեալ էր իշխանին մեծ զօրավարին Հայոց ի Թորդանայ՝ ի Դարանաղեաց գաւառէն, զպատուական նշխարս խոստովանողին Քրիստոսի՝ սրբոյն Գրիգորի բոլորովին ամենայն ոսկերօքն հանդերձ յաշխարհն Հայոց՝ յԱյրարատեան գաւառ ի Վաղարշապատ քաղաք՝ հանգուցեալ ի նորաշէն յարկս եկեղեցւոյն, զոր մեծին Ներսիսի շինեալ է յանուն սրբոյն Գրիգորի:(236/4; 236/5; 236/5; 236/8; 236/8) Ապա մեծաւ աղաչանօք անկեալ եպիսկոպոսին Իսրայէլի առաջի կաթողիկոսին և զօրավարին Հայոց, մաղթէր, եթէ հնար ինչ իցէ լնուլ զկարօտանս սրտին և զխնդրուածս նորա. «Տուք, ասէ, ի նշխարաց սրբոյն Գրիգորի»: (236 / 11) Եւ նոքա ոչ առնուին յանձն, եթէ ոչ երբէք ուրեք բաշխեալ են նշխարք սրբոյն Գրիգորի, և ոչ մեք ունիմք իշխանութիւն հանել մասն ի նմանէ և տալ քեզ: (236 / 13) Նոյնպէս և զզօրավարի Հայոց՝ զիւր տէրն, հաւանեցուցանէր տալ զնշխարիսն, թէ՝ «Տուք զբաժին իմոյ աշխարհին և տան հօր իմոյ ի մեծէն Գրիգորէ և կատարեցէք զխնդրուածս եպիսկոպոսին, որ առաքեցաւ յիմոյ աշխարհէն, զի լցեալ նորա փափագն՝ զուարթամիտ հրաժարեալ յուղարկեսցի ի մէնջ»: (236 /18; 237/1) Եւ մարդասիրին Աստուծոյ արկեալ ի սիրտ նոցա միակամութեամբ տալ մասն յօրէնսուսոյց ծնօտէն խոստովանողին Քրիստոսի՝ մեծին Գրիգորի: (237 /1) Գային անցանէին լուսաչու փառօք. անցեալ զսուղ ինչ օթևանօք առողջութեամբ, բազմուրախ և հոգեզուարճ հասանէր յաշխարհն իւր. և զբերեալ սրբութիւնսն հանգուցանէր

յիւրում մենաստանին ի Գլխոյ վանս: (237 / 7) Ապա ի վաթսներորդ երկրորդ ամի հարաւայնոյ իշխանութեանն գոռոզին Մահմատայ խորհուրդ լինէր հաւանութեամբ Վարազ Տրդատայ՝ Աղուանից իշխանի ընդ ազգակից նախարարս իւր և ընդ կաթողիկոսին Եղիազարու և ասէ. «Ահա հարկք, որ եղան ի վերայ մեր ի դժնդակ ազգէն Տաճկաստանեայց, յոյժ վտանգեալ տարակուսեսցէ զմեզ: (237 /12; 237 /14; 237 /15) Եկայք, մերձաւոր իմք և սիրելիք, զի ընտրեսցուք եպիսկոպոս մի ի մերմէ աշխարհէս վասն մերոյ խաղաղութեան. զի երթեալ հաճեսցէ շնորհիւն Աստուծոյ զմիտս երկուց աշխարհակալաց ի հաշտութիւն և յանքակտելի սէր, զի միթ լիցի յայսմհետէ խէթ իմն ունել մեզ ի մեր միտս թշնամութեան խորհուրդ»: (237 / 19; 238 / 1; 238 /2) Վասն զի ողջախոհ վարուք և իմաստութեամբ հոգւոյն բացափայլեալ առ ամենեսեան ճշգրտապէս հրաշանայր՝ շահելով իւր զհոգիսն և զբազմաց զհնազանդութիւն և զսիրոյն կատարէր պատուիրան, յանձն առնոյր վաղվաղակի ճանապարհորդել գնալ ի հեռաբնակ աշխարհն Հոնաց: (238 / 9) Եւ յուղարկեալք խաղաղութեամբ ի Պերոզ Կաւատ քաղաքէ՝ վտարեալք անցանէին ընդ գետն մեծ Կուր. հատեալ անցանէին ընդ սահմանս Աղուանից մինչև յերկոտասան օր: (238 / 12) Գային հասանէին ի քաղաքն Լփնացւոց, ուր ընդ առաջ ելեալ նմա ամենայն քաղաքացիքն՝ ընդունէին զնա խաղաղութեամբ ըստ կարգի եպիսկոպոսաց, մանաւանդ զի մերձեալ էր տէրունական տօն աստուածայայտնութեանն: (238 / 14) Մտեալ ի քաղաքն, երեկօթս արարեալ՝ անդէն կատարէին զտօնն: (239 / 1) Յայնժամ ձմեռային հողմոցն հիւսիսային բախմունքն ձիւնախառն անհնարին փոթորիկս յարուցին մերձ ի սարաւանդակ լերինն Կաւկասու: (239 / 4) Արհաւիրք և բոմբիւնք զարթուցեալք, սակայն ոչ կարէին զայրն Աստուծոյ զարհուրեցուցանել, զի նշան խաչին առեալ ի ձեռն հրամայէր դնել ծունր ամենեցուն. և նոքօք հանդերձ ելեալ ի լեառնն, որում Վարդէդրուակ անուն էր: (239 /8; 239 / 8) Եւ յետ այնորիկ ոչ արև և ոչ աստեղք ի բազում աւուրս երևէին. և դառնաշունչ օդն ոչ սակաւ կայր ի վերայ: (239 /12; 239 /13) Դէմ եղեալ ակամայ, տարադէմ գնացեալ, լքեալք և աշխատեալք, բազում աւուրս երթեալք ի վաղնջուցն թագաւորանիստ հասանէին կայեանս, յայն տեղի, ուր վկայեաց սուրբն Գրիգորիս՝ թոռն մեծի Գրիգորի, կաթողիկոս Աղուանից: (239 / 14) Որ և անտի յետ աւուրց ինչ հասանէին ի դուռն Չորայ, որ է մերձ ի Դարբանդ: (239 /16; 239 /16) Եւ անդ նպաստամատոյց մեծարանս գտեալ ի քաղաքացեացն: (239 / 17) Այնպէս բազմապատիւ ճանապարհ ելեալ նոցա՝ գային հասանէին ի հոյակապ քաղաքն Վարաչան, ի մուտս քառասներորդացն: (239 /18; 239 /18) Եւ եղև իբրև պայծառապէս ծագեցան աւուրք քառասներորդացն սրբոց, մեծաւ սիրով ընկալեալ զնա քաղաքացեացն, զուարճացեալք և պատուեալք լինէին յամենեցունց, մանաւանդ առաւել ի բարեխնամ իշխանէն և յազնուական մեծամեծացն:(240/5) Եւ այսպէս բազմօրեայ հանգուցեալ ի վաստակաբեկ աշխատութեանցն, լսէր և տեսանէր անդ ամբաստանութիւն և կրօնս մարդահաճոյս ազգին թշուառացելոյ: (240 / 8) Ողբայր և տրտմէր վասն անհնարին չարեացն և երկմիտ հաւատոցն. որք զանձինս իւրեանց պերճացեալ աստուածապաշտ անուանէին, և նոքա էին, որք ի զօրութենէ անտի նորա ուրացեալք և օտարք գտանէին: (240 / 12) ՀԱՍՏԱՏԵԼՆ Ի ՀԱԻԱՏՍ ՋՀՈՆԱՍՏԱՆՍՆ ԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ ԻՍՐԱՅԷԼԻ

ՎԱՐԴԱՊԵՏԱԿԱՆ ՇՆՈՐՀԻ, ԵԻ ՆՈՑԱ ՔԱՂՑՐՈՒԹԵԱՄԲ Ի ՀԵՌՆ ՍՔԱՆՉԵԼԵԱՑՆ ԼՍԵԼ (240 /14; 240 /16) Նա և զորոտընդոստ հրատեսակ շանթիցն ցայտմունս և զեթերակէզ այրեցմունս, թէ մարդոյ դիպեսցի, թէ այլ ինչ նիւթեղինաց. ձօնեալ իմն, զնա ի պաշտօն առեալ՝ նուիրեալ Քուար Աստուծոյն համարէին: (241 / 2) Թմբուկք և շռինչք ի վերայ դիականցն և նրանակոտոր և դանակացիտ զայտիւքն և զանդամամբքն արիւնահոս գծմունք և մերկանդամ սրակոծութիւնք՝ դժոխոց տեսարան, որ առ գերեզմանօքն յածին այր առ այր և ջոկ առ ջոկ մարտատեսիկ հոլարանին: (241 / 6) Զխաղս խաղային և զկաքաւսն յորդորէին զազիր գործովքն ընկղմեալք ի խոհերս խաւարայինս, կուրացեալք ի լուսոյ արարչին, քանզի կրակաց և ջրոց զոհէին և ճանապարհաց աստուածոց ոմանց, երկիր պագանէին լուսնի և ամենայն արարածոց, որ ինչ թուէր յաչս նոցա զարմանալի: (241 /12; 241 /13) Ապա ի հրամանէ նորա ժամ լինէր աստուածարեալ իրին և ամենայն ազատակոյտ նախարարացն և ռամկացն Հոնաստանեայց գալ յերկրպագութիւն պաշտաման սրբոյ եկեղեցւոյ, և լսել զպատգամս աստուածայինս: (242/4) Որոց անդէն ժողովեալք այնուհետև տէրունական տունն, իշխանն և աշխարհախումբ բանակն խնդրէին լսել բանս յեպիսկոպոսէն և ասէին զմիմեանս. «Եկաթյք լուարուքք ի սմանէ բանս մխիթարութեան, զի սա է առաջնորդ սուրբ հաւատոց քրիստոնէից, որ աւանդէ աշխարհի զպատգամս հոգւոյն սրբոյ»: (242 / 9) Ապա իբրև տեսանէր զյօժարամտութիւն նոցա և զմտադիւր ունկնդրութիւնն, սկսաւ ճառել նոցա ի վարդապետութենէ Գրոց աստուածայնոց և ասէ. «Որդեակք, դարձարուքք առ տէր և ծաներուքք զտէր Աստուած, զի ողորմեսցի և կեցուսցէ զձեզ. զի նա ինքն է տէր և արարիչ ամենայնի: (242 / 12) Ի բաց թողէք այսուհետև զպղծութեան պաշտամունսդ, միթ մատուցանէք երկրպագութիւն արարածոց, զի սատանայական է ամենայնդ և կորուսիչ հոգւոց: (242 / 14) Զի ոչ ոք կարէ երկուց տէրանց ծառայել, և ոչ ոք կարէ զբաժակն տեառն ըմպել և զբաժակն դիւաց, և չիք հնար ի սեղանոյ տեառն վայելել և ի սեղանոյ դիւաց: (242 /17; 242 /17) Այլ զգիտութեան և զանգիտութեան մեղս ձեր միթ յիշեսցէ Աստուած, այլ արկցէ զձեզ ի բովս գիտութեան և ի խրատ արդարութեան: (242 /18; 242 /19) Որ լուսաւորեաց իսկ զամենայն տիեզերս աստուածընկալ աւազանաւն և մերժեալ զմէգ և զմառախուղ ի խաւարչական ազգացն հեթանոսաց՝ ծագելով ի նոսա զհաւատոյ ճշմարտութեան լոյս. նոյնպէս և զձեզ լուսաւորեսցէ իւրով ճառագայթաարձակ շնորհօքն, միայն թէ զանձինս ձեր մատուսջիք առաջի աստուածութեանն՝ աներկևան մտօք, սիրով՝ արմատացեալք և հաստատեալք ի փառս աստուածորդւոյն՝ խոստովանութեամբ սրբոյ երրորդութեանն հաւատացէք: (243 /2; 243 /2; 243 /5) Տեսանեխս զերից անձնաւորութեանցն և զմի աստուածութեանն Զօրութիւն, որպէս և յառաջընծայ աւանդեցին մեզ աստուածազան առաքեալքն և խոստովանողն Քրիստոսի Գրիգորիոս, թէ հայր յանձնէ որդի ի հօրէ, հոգին սուրբ ի նոցունց էութենէ: (243 /10; 243 /11) Եւ լի է ամենայն երկիր փառօք նորա, այսինքն է քարոզութիւն աւետարանին. ըստ փրկչական բանին ի վկայութիւն ամենայն հեթանոսաց, որ ելից, տարածեցաւ ընդ տիեզերս ըստ սաղմոսին ձայնի, թէ՝ «Ընդ ամենայն երկիր ել բարբառ նորա, և մինչև ի ծագս աշխարհի են խօսք նորա»: (243 /12; 243 /14) Ահաւադիկ տեսանեմք այսօր, զի և ի ձեզ թագաւորի

աստուածային բանն և ծաւալեալ արդիւնանայ յանդաստանս սրտից ձերոց որայն բազմաբեղուն խայրի ընծայելով ի ձեռն ճարտարապետ մշակացն հարիւրաւոր, վաթսնաւոր և երեսնաւոր: (243 /16; 244 /1) Արդ՝ այդչափ քաջապտղութիւն ի ձեզ լինելով՝ զի՞ հարկաւորիք մահացան թռչնոյն մուտ առնել յողջախոհ և ի ծաղկազարդ ձերոց մտացդ անդաստան. ո՞չ գիտէք եթէ նախահայրն մեր Ադամ սակս սորա ելեալ ի դրախտէն զփշաբեր և զտատասկածին ժառանգէր երկիր: (244 /2; 244 /3; 244 /4) Որ և նախանձաբեկ եղեալ առ ի մախանս նախաստեղծին՝ ի ներհակային յորդորելով ախտս, ածեալ ի հրապուրանս խարդախութեան զԿայէնն անօրէն սպանանել զեղբայրն. վասն այնր սպանութեան ամենայն մարմնական ախտից, երերմանց և նզովից սերմանց լինէր հայր ինքն և ամենայն ազգ իւր թշուառական»: (244 /7; 244 /7; 244 /8) Որպէս և ասէ իսկ ի Ծննդոց պատմութեանն, թէ՝ և էառ իւր Ղամէք երկուս կանայս, թէ՝ և Յոբաղ՝ որդին Ղամեքայ եհան զերգս և զքնարս, մանաւանդ թէ զփողս և զտաւիղս և զթմբուկս և զամենան ձայն արուեստական, որ են յօրինիչք կռապաշտութեան և յորդորիչք իգամոլ ախտից. զոր և Նաբուգոդոնոսոր յայն հրաւիրելով ձայնս զմետասան խեղայեղ կաճառոն կոչէր ի կռապաշտութիւն, անարի, ոսկիաստեղծ անդրտյն զոհարան ձօնէր, նմա նուիրական տօն լինել տեսարանին: (244 /10; 244 /14) Զի որպէս սպանումն ի սատանայէ էր, նոյնպէս և երկուս կանայս առնել և դաշնակաւոր նուագս յօրինել լինէր ի նորին բանսարկուին ուսմանց, որ և անդէն իսկ ընկղմեալք ի շնութիւն և յայլանդակ միտս Սեթեան ազգին խառնակեցան ընդ դստերս նզովից. և փոխանակ բարի խոստմանցն ած ի վերայ նոցա Աստուած զանձրևասաստ պատիժն և զհամաշխարհական կատարածն: (244/16; 244/18; 245/1; 245/2) Եւ Նոյ քանզի յարդարացեալ տոհմէն արդար գտաւ յազգին յայնմիկ ի ձեռն հաւատարիմ սրբութեանն իւրոյ, հրամանաւ Աստուծոյ պահեալ լինէր իւրայնովքն հանդերձ ի ջրահեղձ պատուհասէն: (245 / 4; 245 / 5) Տեսանեմք զի յազգէ նորա ելեալ Նեբրովթ սկայ, որ դիւցազնային կախարդութեամբ զբոլորս հրապուրէր ազինս աշտարակաշէն առնել քարակոյտս. և ինքն ամբարտաւանեալ ամբարհաւաճութեամբ յաղագս յաղթանդամ տեսակին և սկայազօր մեծութեանն՝ թագաւորէր ի վերայ ամենեցուն, որպէս և գրեալ է. «Եթէ եղև սկիզբն թագաւորութեան նորա ի Բաբելովն»: (245 /12; 245 /13) Նա և յետ այնորիկ յետ կործանման աշտարակին աշխարհաշէն և խառնափնդոր լեզուացն, լուաք մեք ի ժամանակագիր պատմութենէ ոմանց, եթէ աստուածոց նմանեցուցեալ զինքն Նեբրովթայ՝ ամբարտաւանեալ հպարտանայր, մինչև զպատկերն իւր անդրիագործ ճարտարաց ոսկիապաճոյճ նկարօք քանդակել հրամայէր յարծաթս կամ ի պղինձս՝ անուն կոչելով ինքեան նկարագրին: (245 /14; 246 /1) Նոյնպէս և եթերացայտ կայծականց, որ ի ձայնից որոտմանց փայլատակէ, Աստուած կարդացեալ՝ փրկիչ անուանէք: (246 /10) Ո՞չ ապաքէն յակնարկել արարչին մերոյ Աստուծոյ զփայլատակելն փայլատակեն, և ի հրամանէ նորա դադարեն զդադարելն և ոչ իշխեն երևել ի ձմեռնային ժամանակի: (246 /14; 246 /15) Եւ որդին միածին Աստուած, որ ի հօրէ ծնեալ, և հոգին սուրբ, որ ի նոցունց յէութենէ, որով և աշխարհ եղև: (247 /4; 247 /4) Մերկացարոիք այսուհետև զհին մոլորութիւնն և զապականեալ կռապաշտութիւնն և նորոգեցարոիք ի նորոգումն սրտից ձերոց առ ի ընտրել ձեզ զլաւն. զի Քրիստոս Յիսուս եկն յաշխարհս փրկել զմեղաւորս, եկաքյք

դարձարոիք առ նա ի ձեռն ապաշխարութեան: (247 / 7; 247 /7; 247 /8) Միթ երկրպագէք արեգական և լուսնի, այլ Աստուծոյ, որ զարեգակն և զլուսին արարեալ է և զերկինս և զերկիր և զծով և զամենայն, որ ի նոսա: (247 / 10) Իսկ որ ջրոց զոհեն, իջցեն որպէս վէմս ի ջուրս բազումս: (247 / 11) Իսկ որ ձօնեն զվարսաւոր ծառս՝ նուէրս նոցա մատուցանելով, այսպէս ասէ վասն նոցա աստուածային Գիր, եթէ՝ «Հուր վառեսցի ի վերայ ամենայն փայտի ազարակի և կերիցէ զամենայն ամբարիշտս և միթ շիջցի»: (247 / 13) ՀԱԻԱՏԱԼՆ ՀՈՆԱՅ Ի ՔՐԻՍՏՈՍ Ի ՀԵՌՆ ԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ ԻՍՐԱՅԷԼԻ ԵԻ ԿՈՐՇԱՆՈՒՄՆ ՋՈՀԱՐԱՆԱՅՆ ԵԻ ԿԱՆԳՆԵԼ ԽԱՉԻՆ ՔՐԻՍՏՈՍԻ (248 /4; 248 /4) Քանզի յորդորեալ էին յոյժ յունկնդրութիւն բանից առնն Աստուծոյ բարեմիտ իշխանն մեծագահ Ալփիղութուէր մեծամեծօքն հանդերձ և աշխարհախումբ բանակօքն, որոց ախորժաբար լուեալ զծաղկազարդ նորա վարդապետութիւնն և զքաղցրուսոյց խրատն, փառաւոր առնէին զԱստուած և ասէին. «Արդ՝ հաւատամք ճշմարտութեամբ, եթէ առաքեաց տէր ի ձեռն սորա զմխիթարութիւն շնորհաց իւրոց առ մեզ, զի ապրեցուսցէ զմեզ ի խաւարային գործոց և յամենայն սատանայական գնացից»: (248 /10; 248 /10) Ապա այնուհետև մխիթարութեամբ հնազանդեցուցեալ զանձինս միամտութեամբ լծոյ ծառայութեանն Քրիստոսի՝ սրբութեամբ և պարկեշտութեամբ զարդարէին զանձինս ի պահս քառասներորդացն պահօք և աղօթիւք զցայգ և զցերեկ ըստ հոգևոր նախանձուն այր քան զընկեր փութային յերկրպագութիւն սրբոյ եկեղեցւոյն՝ մոռանալով զառաջին որկորստութեանն մոլորութիւնն. զայն ևս շնորհօք լուսատու խրատու սրբոյ եպիսկոպոսին ի բաց քերեալ ի մտաց նոցա: (248 /13; 248 /17; 248 /17) Այլ և ինքն ուժով պնդութեամբ հարստութեանն քաջ և անուանի եղեալ ի մարտ պատերազմաց, /որպէս Ուղումպ ազգք Յունաց հզօր երևեալ առ ամենեսեան/ զհոյակապ քաջութեանն անուն ժառանգէր՝ բազում գործս արութեան ցուցեալ և անդ ի Թուրքաստանին առ Խազր խաքանին: (249 /8; 249 /10) Վասն որոյ հարկաւորեալ ի սէր նորա խաքանայ տայ զդուստր իւր նմա կնութեան, և ինքն զլիթուերութեանն բերելով պատիւ՝ փառաւորեալ լինէր ի մէջ երից աշխարհաց, քանզի իբրև զպսակ պարծանաց ընդունէր զխրատն ի լուսաւոր վարդապետութենէ եպիսկոպոսին: (249 /11; 249 /13; 249 /13) Առ սակաւ սակաւ ջանայր խափանել ի վերայ մեռելոցն զմոլեկան լալիսն և զդիւական սրակոծութիւնսն՝ գարշելի և պիղծ համարելով զհայրենի պաշտամունս, ուխտէր առ ամենեսեան զԱսպանդիատայ զզոհարանսն և զայլոց չաստուածոցն խափանել զնուէրս և պաշտել զԱստուած կենդանի՝ զարարիչն երկնի և երկրի, և զորդին միածին, և զհոգին համազօր: (249 / 14) Եւ զամենայն յաւելուածս չարեաց հերքելով ի բաց ի մտաց իւրոց, իբրև զորդի ծնեալ մանուկ անխարդախ կաթինն փափագէր: (250 /2; 250 /2) Շինէր ի տեղիս տեղիս եկեղեցիս և մեծացուցանէր զպատիւ քահանայիցն Աստուծոյ: (250 / 3) Քանզի ի վարսաւոր ծառոցն կաղնեաց բարձրագունից, զորս ձօնեալ էին Ասպանդիատայ գարշելոյ առ ի զոհս մատուցանելոյ նմա ձիովք, զորոց զարիւնն հեղուին զծառովքն և զգլուխն և զկաշին արկանէին զոստովք ծառոցն, հրամայէր եպիսկոպոսն հատանել զմի ի նոցանէ, որ գլուխ և մայրն էր ամենայն ծառոցն բարձրագունից, ձօնելոցն յանուն դիցն սնոտեաց, զոր պաշտէին յոգումբք աշխարհն Հոնաց, իշխանն և ազատքն ամենայն, զի համարէին զնա աստուածոց փրկիչ և կեցուցիչ և տուող ամենայն բարեաց:

(250 /4; 250 /5; 250 /7) Եւ իբրև լսէին զայն, թէ հրամայէր հատանել զսկայաձիր դիւցազանց ծառն, որով գայթակղեալ և կործանեալ էին ամենեքեան զճիչ բարձեալ, զօձիսն հարեալ ի ձայն բարձր աղաղակէին կախարդքն և քաւդեայքն, վիուկքն և քրմապետքն հանդերձ ռամկօքն առ իշխանն Հոնաց և առ մեծամեծսն աշխարհին և ասէին. եթէ՝ «Զիարդ մարթէք և իմանայք և գիտէք առնել զայդ, զոր հակառակորդն մեր և թշնամի աստուածոցն մերոց ասէ ընդ ձեզ հատանել զծառն զայն: (250 / 12) Եւ ընդէ՞ր իսկ բնաւ անսայք նմա և լսէք քանդել և աւերել, կործանել զբագինս մեհանաց մերոց, զոր հարքն ձեր կանգնեցին՝ թագաւորք և իշխանք, և աշխարհս մեր բոլորովին պաշտեցին մինչև ցայժմ և գտին զպարգևս բարեաց ի նոյն ինքն ի դիցն մեհենաց և ի ծառոցն ձօնելոց շնորհեցին զմարդաշատութիւն աշխարհիս՝ զօրաւոր և յաղթող լինել ձեզ ի պատերազմունս թշնամեաց ձերոց: (251 /1; 251 /1; 251 /1; 251 /2) Ո՞չ ապաքէն յորժամ պաշտէիք և մատուցանէիք զզոհս և զնուէրս առաջի ծառոցն յանուն սկայազօր քաջին Ասպանդիատայ, զոր ինչ խնդրէիք, առնուիք և գտանէիք զբարիսն. հիւանդաց առողջութիւն պարգևէր, չքաւորաց՝ հարստութիւն, յարեգակնակէզ երաշտոցն և ի տոթախառն ջերմութեանցն անձրև ածէաք ձեզ նոցա զօրութեամբն, որ զտապ խորշակին զովացուցանէին և զբոյսս և զտունկս դալարեցուցանէին, և զպտուղս պարարեցուցանէին ի վայելումն և ի կերակուր ձեզ: (251 /7; 251 /9; 251 /9) Նոյնպէս և ի սաստիկ անձրևաց և յամպոց, յեթերական փայլակնացայտ օդոց որոտընդոստ խռովութեանցն խաղաղութիւն առնէաք ձեզ: (251 / 10) Բայց արդ՝ թէ և այլ մոլորական բանից դորա հաւատայք և պաշտէք զԱստուածն, զոր դայն քարոզէ ձեզ, սակայն զբնական աստուածսն ձեր, զոր նախնիք ձեր և դուք պաշտեցիք, ոչ է պարտ ձեզ թողուլ և ուրանալ և ի բաց ընկենուլ, և մատնել ի ձեռս դորա, որ ընդ ոտն արկեալ մանրեսցէ: (251 /14; 251 /14) Այլ և ո՞վ իշխեսցէ իսկ մօտել, հպել և մերձենալ ի յայն վայրն, ուր սկայազօրին Ասպանդիատայ մեհեանքն և բագինքն շինեալ և հաստատեալ են, կամ ի ծառն գեղեցկաբոյս, որ պահիչ և կեցուցիչ է աշխարհիս այսորիկ. ո՞չ ապաքէն որք անգիտութեամբ ի ծառոյն յայնմանէ յանկելոց տերևոց և կամ փայտից ինչ, որ ի նմանէ, առնուին ի պէտս ինչ իւրեանց, չարաչար կեղովք և այսահարութեամբ այլ և մահուամբ իսկ յանդիմանէր զնոսա, և տունն, և ազգն հատանէր: (252/1; 252/2; 252/3; 252/4; 252/4) Արդ գիտեմք զայս, եթէ յամառեալ պնդի և մերձեսցի առ նոսա, յանդիմանի չարաչար ցաւովք, այլ և ի կենաց իսկ հանէ զնա»: (252 / 8) Յայնժամ պատասխանեալ իշխանն Հոնաց առ քաւդեայսն և առ կախարդսն և առ վիուկսն և առ պաշտօնեայս բագնացն և ծառոցն և ասէ. «Մեք հաւանեալ հաւատացաք առնս այսմիկ և պաշտեմք և երկրպագեմք Աստուծոյն, զոր դայն քարոզէ մեզ. և ոչ արգելումք զդա յաւերելոյ և ի քանդելոյ զմեհեանս, և ի խլելոյ և ի կտրելոյ զծառն և այրել ի հուր: (252 / 12; 252 / 12; 252 /12; 252 /12) Արդ՝ եթէ դուք կարող ինչ էք բագնօք և մեհենօք և ծառովքն ձօնելովք զարհուրեցուցանել ինչ զդա, և կամ ի ցաւս ծանրութեան ախտի ինչ արկանել, և կամ մահ իսկ հասուցանել դմա, հաւատամք ի ձեզ և հաստատիմք անդրէն շինել և պաշտել մեհեանս, նի՛ զբագինս, նի՛ զանդրիագործ պատկերսն. և երկիր պագանեմք ծառոցն և մատուցանեմք զոհս և նուէրս, որպէս մինչև ցայժմ: (252 /14; 252 /15) Ապա եթէ դուք ոչ կարէք յանդիմանել զդա և զարհուրեցուցանել ինչ, և դա աւերեալ քանդէ զբագինս և զմեհեանս, և հատանէ զծառս և ի հուր այրէ, և ոչ ցաւք ինչ

հասանեն դմա և ոչ մահ, մեք նոյնպէս հաւանեալ հաւատամք *ի* դա, եթէ յԱստուծոյ առաքեցաւ դա մեզ և երկրպագեմք միոյ Աստուծոյ, որ արար զերկինս և զերկիր, զարեգակն և զլուսին և զաստեղս. և զձեզ կապեալ ոտիւք և ձեռօք՝ մատնեցից *ի* ձեռս դորա, որ ընդ նոյն ծառովքն և ընդ մեհենօքն զձեզ այրեսցէ: (253 /4; 253 /5; 253 /7) Եւ ոչ ինչ կարէին գործել *ի* սուտ և *ի* մոլար արուեստիցն իւրեանց: (253 /11; 253 /11) Զի երբեմն յառաջ քան զայս կապէին զմարդիկ անյայտ կապանօք և զոր կամէին *ի* ծանր ցաւս արկանէին այս առաքելով *ի* նոսա. և ապա քարոզէին նոցա փաստապատիր բանիւք, եթէ պարտ էր ձեզ զոհս և նուէրս մատուցանել մեհենացն և ծառոց և ոչ մատուցէք, փոխանակ այնորիկ եղև այդ առ ձեզ յանդիմանութիւն *ի* մեծէ աստուածոցն մերոց: (253 / 12; 253 /13; 253 /15) Բայց արդ առէք զոհս և նուէրս և մատուցէք առաջի ծառոցն և մեհենացն. ապա ապրիք *ի* ցաւոց և *ի* հարուածոց այտի: (253 / 17; 253 /17) Ապա յայնժամ ոչ կարացեալ յայսցանէ զմի ինչ *ի գործ և ի կիր արկանել* և զարհուրեցուցանել զայրն Աստուծոյ և յաղթեալ նմա, զի կապեցան և փակեցան *ի* նշանէ սուրբ խաչին ամենայն զօրութիւնք նոցա: (254 / 5; 254 /5; 254 /6) Ապա սկսաւ խօսել եպիսկոպոսն սուրբ օրէնսուսոյցն առ իշխանն Հռոնաց և առ մեծամեծսն, ասէ զնոսա. «Ես ոչ ինչ զարհուրիմ և երկնչիմ կամ զմտաւ ինչ ածեմ յաղագս դոցա զրախօսութեանդ. զի են իսկ դոքա անյոյսք *ի* ճշմարիտ կենացն Աստուծոյ, որ կամին դիւապաշտ կախարդութեամբն զարհուրեցուցանել զիս, որպէս և զայլս *ի* մարդկանէ մոլորամիտս: (254 /10; 254 /11) Եւ ոչ *ի* ծառոցդ բարձրագունից մեհենացն զմտաւ ինչ ածեալ զանգիտեմ կերպ *ի* կերպս լինելով դոցա առաջի իմ. այլ ևս յայտ յանդիման ամենեցուն ձեր գործեմ աներկիւղաբար՝ յուսալով *ի շնորհս* սուրբ խաչին Քրիստոսի: (254 /12; 254 /13; 254 /14) Եւ բառնամ զկարծիս սրտից ձերոց և զծառագոթի մոլորութիւնդ, որ ոչ ինչ իսկ են, և ոչ չար ինչ կամ բարի առնել կարեն, և ոչ զպաշտօնեայսն պատուել կարեն և ոչ անարգել զթշնամադիրսն իւրեանց, զոր այժմ դուք աչօք ձերովք տեսանէք առ կուռս համերս, թէ որպէս մանրեալ փշրեսցի *ի* ձեռաց իմոց և ընդ ոտն անկեալ կոխեսցի *ի* գնացս աշխարհի»: (255 /1; 255 /1) Յայնժամ հրամայէր եպիսկոպոսն քահանայիցն առնուլ փայտատ *ի* ձեռն, դնել ծունր և աղօթել՝ կարդալով առ Աստուած զսաղմոսս զայս. «Յարիցէ Աստուած, և ցրուեսցին ամենայն թշնամիք նորա. փախիցեն ատելիք նորա յերեսաց նորա»: (255 / 3) Եւ ապա արարեալ զնշան խաչին *ի վերայ* ծառոցն բարձրագունից, զորս ձօնեալ էր յանուն Ասպանդիատայ զարշելւոյն: (255 / 6) Եւ դիմեալ *ի ներքս* քահանայիցն առ հասարակ՝ կտրեցին զծառսն. և նոյնժամայն հրամայէր բերել *ի* քաղաքն Վարաչան: (255 /7; 255 /8) Եւ կոչեալ առ ինքն *ի* ճարտարագործ հիւսանց քաղաքին՝ հրամայէր առնել զնա խաչ պայծառակշիռ բոլորագուլ. և յօրինուածովք նկարակերպ և պէս պէս կենդանագիրս հաստատեաց և սոսնձեալ *ի վերայ* բոլորովին ծածկելով գեղեցկութեամբն պատկերագործ նմանահանութեամբն ճշգրտեալ, *ի* ծայրից մինչև *ի խոնապհ* համանման դեղովքն պաճուճեալ: (255 /8; 255 /10; 255 /12; 255 /12) Նոյն օրինակ և յաջող կողմանէ գեղեցկագոյն իմն լուսեղէն խաչս մի զմիոյ զկնի *ի վերուստ ի վայր* տողեալ՝ պնդէր հաստահեղոյս բևեռօք. և առ ստորևն դռնակ մի երկբացիկ քանդակագործ, շուշանաձև, չորեքկուսի, յորում կայր խաչ մի արծաթեղէն՝ մասնաւորեալ *ի* տէրունական խաչէն: (255 /13; 255 /13; 255 /15) Այսպիսի օրինակաւ կարգեալ և հարմարեալ զանազան և

հրաշալի գեղեցկութեամբ կանգնէր զնա յուխտի և *ի* խնդրուածոց տեղի յարքունական դրանն ընդ արևելս և ասէ. «Առաջի այսր ամենակեցոյց նշանիս երկրպագեցէք տեառն արարչին ձերոյ, զի որք սովորն էիք երկիր պագանել ծառոյդ այդմիկ մոլեկան մտածութեամբ, սովորական ընդելութեամբն երկիր պագէք խաչիդ և անտեսանելւոյ պատկերի աստուածութեանն, քանզի ուտէիք և ըմպէիք զմիս և զարիւն զոհիցն անասնոց, և զոր դիւացն առաջի ծառոցն մատուցանէիք: (255 / 18) Վասն այնորիկ փոխանակ արեանցն զոհից զարիւնն իւր ետ *ի* քաւութիւն մեզ ամենեցուն: (256 / 6) Բայց արդ՝ այսուհետև մատուցէք զանձինս ձեր առաջի աթոռոյ շնորհացն Աստուծոյ՝ *թօթափելով ի բաց* զամենայն ախտս չարեաց անօրէնութեան ձերոյ և զփառացն լուսոյ պատմուճանն արժանի լիջիք զգենուլ յանձինս ձեր»: (256 / 8) Իսկ բարեպաշտ իշխանն Հռնաց իբրև լսէր զայն մեծամեծօքն հանդերձ՝ յորդորեալ *ի* սէր և յերկիւղ Աստուծոյ: (256 / 10) Եւ զայն ևս տեսանէր, թէ ոչ յայնցանէ, զոր քաւդեայքն ասէին յանդիմանել ինչ նմա *ի* ծառոցն մեհենից և անկանել *ի* ցաւս ծանունս և հասանել *ի* մահ, ոչ ինչ դիպեալ նմա յայսցանէ չար. այլ ևս քան զևս առաւել պայծառացեալ զուարթանայր և զօրանայր *ի* գործ մշակութեանն Քրիստոսի: (256 /12; 256 /12; 256 /12; 256 /14) Եւ նոքա առաւել ևս հաստատէին *ի* հաւատսն, և լսէին զբան վարդապետութեան նորա: (256 / 14) Ապա յայնժամ մեծասաստ իշխանութեամբ տայր հրաման զսատանայակուր և զդիւամոլ ազգ կախարդացն և քաւդեայցն գլխաւոր քրմապետօքն հանդերձ ունել և կապել ոտիւք և ձեռօք. և ածեալ առաջի առնն Աստուծոյ՝ տայր *ի* ձեռս նորա: (257 / 1) Իսկ նա հրամայէր զոմանս *ի* հուր ընկենուլ *ի* յանցս ճանապարհացն, յելս և *ի* մուտս փողոցացն՝ *առ ի* տեսիլ առնել զսնոտի զօրութիւն կախարդութեանն և զոմանս բանտարգելս արարեալ և զերծեալ զաշխարհն ամենայն յունայնակրօն պաշտամանցն, և հնազանդեալ ամենահեշտ լծոյ ծառայութեանն Քրիստոսի: (257 /2; 257 /2; 257 /2; 257 /3) Քանզի ոմանց, որոց կապեալ ունէին յանձինս իւրեանց զոսկեղէն հեթանոսական ձուլածոյսն, հրամայէր զերծուլ և հանել *ի* նոցանէ և ինքն իւրովք ձեռօքն խորտակէր յանդիման ամենեցուն առնելով և զայս նշան տէրունական խաչին: (257 / 6) Եւ կարգեցաւ այս ամենայն կարգաւորութիւնս *ի* սուրբ քառասներորդսն *ի* բիւրաւոր արքունական Հռնաստանեայցն բանակս, կազմեցաւ, պատրաստեցաւ կամօք տեառն Աստուծոյ *ի ձեռն* եպիսկոպոսին, ազդեցութեամբ հոգւոյն սրբոյ, որով ծաւալէր շնորհք պարգևաց անպատում փառացն Քրիստոսի: (257 /10; 257 /10; 257 /12) Իսկ ծագումն արփիափայլ լուսոյ պասեքին սրբոյ իբրև հասանէր, բազումք *ի* քրմապետացն և *ի* գլխաւոր կախարդասար քաւդէիցն դեռ ևս *ի* դժնդակ կապանս անկեալ դնէին: (257 / 14; 257 /14; 257 /5) Սկսաւ եպիսկոպոսն յաստուածային գրոց ձեռն *ի* գործ արկանել վարդապետական բանին և սաստկագոյն յանդիմանէր զնոսա և *ի* նախատինս դսրովանաց արկանէր: (257 /18; 257 /19) Եւ զրապարիշտ և թշուառական քուրմքն յամօթ եղեն *ի* տէրունական խաչէն, զոր միշտ *ի* ձեռին ունէր եպիսկոպոսն, պակուցեալ սրտաբեկք լինէին: (258 /1; 258 /2) Եւ ինքեանք իսկ զանձինս դսրովէին՝ խոստովանեալ զիւրեանց մեղս, դարձան *ի* հաւատս ճշմարիտս: (258 / 3) Զքուէս կորուսիչ հմայիցն *ի* ձեռն տուեալ եպիսկոպոսին *ի* նիւթ հրոյ ծախէին՝ արժանի լինելով վերստին ծննդեանն *ի ձեռն* սրբոյ աւազանին: (258 /4; 258 /4; 258 /5) Իսկ իբրև ետես

իշխանն զայն Հոնաց, ամենայն բազմութեամբն հանդերձ առաւել ևս հաստատեցան *ի* սէր հաւատոցն Քրիստոսի՝ հեռացեալ *ի* սնոտի դիւագործ պղծութեան պաշտամանցն, քանզի յաւուր նաւակատեաց նորոգազարդ նշանի խաչին, զոր կանգնեալ էր եպիսկոպոսին յարքունական դրանն, արարեալ իշխանին զենմունս պատարագաց՝ և ամենայն մեծամեծացն: (258 /7; 258 /7) Մինչդեռ զօրհնութիւնսն կամէին երգել քահանայքն *ի վերայ* ընծայիցն առաջի խաչին, ասէ եպիսկոպոսն ցիշխանն. «Ահա զխոստմունս սիրոյ քո, զոր ունիս առ Աստուած, այսօր հատոյ տեառն հաշտեցուցանել զնա ընդ ձեզ՝ *ի բաց բառնալով* զանօրէնութիւն *ի* ձէնջ, զի յայսմ հետէ միի լիցի խէթ և խութ ընդ ոտն, մանաւանդ զայս քրմապետունս յայսմ նուագի փորձէ հոգին սուրբ, որով և դուք եղերութիք կատարեալք որպէս և հայրն ձեր երկնաւոր կատարեալ է: (258 /10; 258 /12; 258/13) Արդ՝ հաւանեցարուիք այսմ բանի. որոտընդոստ չոփայիցդ շիրիմք Դարքունանդ կոչեցեալ. նախ՝ նա այրեսցի յայսմ մեծի աւուր *ի ձեռն* խոստովանող քրմապետացդ այդոցիկ, որոց երթեալ նզովելով նզովեսցեն և ապա ապրեսցեն յետ այնր և մկրտեսցին և ճաշակեսցեն կերակուր: (258 / 17) Իբրև լուաւ զայս բարեպաշտ իշխանն Հոնաց, փութով տայր *ի* ձեռս նորա քանդել զմեհեանսն: (258 / 19) Ինքնին եպիսկոպոսն ելեալ *ի* բարձրաւանդակ տեղի հանդէպ կոռոցն՝ եդեալ ծունր և արարեալ զնշան խաչին տէրունական՝ հողմն ուժգին սաստկապէս հասեալ վառէր զայրեցումն բարձու մեհենիցն և զչոփայսն զազիր մորթովքն հանդերձ զոհարանօքն: (259 / 4) Անտի դարձեալք մեծաւ ուրախութեամբ *ի* քաղաքն՝ լուսազգեստ մկրտութեամբն լինէին. և զօրն զայն տօնից տօն և ժողովոց ժողով առնէին իշխանն և մեծամեծքն: (259 / 7) Մտանէ մեծ իշխանն Հոնաց ընդ ամենայն մեծամեծս և նախարարս իւրոյ տէրութեանն *ի* խորհուրդ բարի և ասէ. «Խաւար ուրեմն տգիտական մթացուցիչ ոգւոց զմեօք պարփակեալ ունէր *ի վաղնջուց*, որով նկատել ուրեմն ոչ կարէաք զարդարութեան զլոյսն բոլոր տիեզերաց: (259 /14; 259 /15) Եւ ահա հաւատացաք *ի* մի Աստուած արարիչ երկնի և երկրի: (260 / 2) Առաջին զնա ասեն լեալ քրիստոնեայ թագաւորութեանն այն, և այնչափ հաւատարիմ այր եղեալ, որ հրեշտակ Աստուծոյ կայր *ի* սպասու նմա, և այսու հաւատով հզօր յաղթութեամբ զամենայն թշնամիսն իւր կործանեաց: (260 / 6) Արդ՝ *ի ձեռն* քրիստոսական հաւատոցն այնպէս փառաւոր և յաղթող մարթէ լինել, մեք զի՞ հեղգասցուք հաւատալ յԱստուած կենդանի: (260 / 8) Եւ նոքա *ի* գալն առ նա՝ պատմեն զխորհրդոյն զօրութիւն: (260 / 14) Եթէ, - ասաց մեծ իշխանն Հոնաց և ամենայն մեծամեծքն, - «Հայր մեր ծանեաք զտէր զարարիչն մեր *ի ձեռն* քո՝ հաւատացեալ երկրպագեմք միշտ սրբոյ երրորդութեանն: (260 / 15) Աղաչեմք զքո սրբութիւնդ, զի հաւանեսցիս լինել մեր տեսուչ և վարդապետ՝ կանգնելով *ի* Վարաչան քաղաքիս մերում զաթոռ հայրապետական: (260 / 17) Եւ յուխտ տեառն մտից ես Իլութուեր ընդ մեզ և զամենայն հեթանոսական պաշտամունս բնաջինջ խլեցից յերեսաց Հոնաց երկրիս, և զկախարդասար քաւդեայս, որ ոչ զան *ի* հաւատս, հրով այրեցից: (260 / 20) Եւ ոչ է իմ պատիւդ այդ, զոր խոստանայք, այլ եթէ չարամահ տանջանօք *ի* ձէնջ տանջիմ, փառս և պատիւս ինձ զայն համարիմ վասն տեառն խնդամիտ յոյժ լինելոյ: (261 / 12) Բայց պարտ է ձեզ զայդ խորհուրդ մտածութեան գրով ծանուցանել առ համօրէն աշխարհն Աղուանից և առ հայրապետն Եղիազար. որ *ի* սրբոյն Եղիշայէ մինչև ցայսօր արևելից

հիւսիսականաց միայն վիճակեալ է առաքելական աթոռ յաստուածաբնակ քաղաքէ՝ յԵրուսաղէմէ և ի սրբոյն Յակոբայ՝ յեղբօրէ տեառն՝ ընկալեալ ձեռնադրութիւն: (261 /15; 261 /17) ԳԱԼՈՒՍՏ ԻՍՐԱՅԷԼԻ ՄԵԾ ԿՈՂՄԱՆՑ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ Ի ՀՈՆԱՑ ԵՒ ԵՐԿՈՒ ԳԼԽԱՒՈՐԱՑ ՋԿՆԻ ԵԿԵԱԼ ԽՆԴՐԵԼՈՎ ՋՆԱ ՅԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ԻՐԵԱՆՑ (262 / 6) Մեծ և բարեպաշտ իշխանն Հոնաց Իլութուեր հանդերձեալ կազմէր ի գլխաւորաց աշխարհին իւրոյ Զիթգինն Խուրսունաց և զՉաթն Խազր զկնի սրբոյն Իսրայէլի պատգամատարս սիրոյ և խնդրել զնոյն Իսրայէլ յառաջնորդութիւն Հունաստանեայցն: (262 / 8) «Իմանալի աչաց տեսութեամբ ընկալաք զառաքեալդ ի ձէնջ՝ այրդ Աստուծոյ Իսրայէլ եպիսկոպոս (262 / 12) Վասն զի խնդրէիք մարմնաւոր խաղաղութիւն ի մէնջ, և մեք հոգևոր ողջունիւ տեսաք զդա որպէս պատկեր Աստուծոյ և ի ձեռն դորա սրբական վարուց և նորահրաշ սքանչելեաց. զոր եցոյց բարձեալն, ծանեաք զարարիչն մեր, և ստացաք խաղաղութիւն հոգւոց մերոց: (262 /14; 262 /15) Եւ արդ խնդրեմք ի ձէնջ զնոյն ինքն զԻսրայէլդ տեսուչ և առաջնորդ մեզ շնորհեցէք, յորոյ ձեռն գտաք բազումք զփրկութիւն յաւիտենից, զի և մեր ընդ ձեզ անքակ սէր հաստատեսցի: (262 / 17) Ոիթղջ լերուք ի տէր»: (263 / 2) ԹՈՒՂԹ ԻՇԽԱՆԻՆ ՀՈՆԱՑ Ի ՆՈՅՆ ԽՈՐՀՈՒՐԴ ՅԱՇԽԱՐՀՆ ՀԱՅՈՑ (263 / 4) Իսկզբան լինելութեան երկրի անգիտութեամբ խաւարեալք մառախլապատ միգով հարքն մեր ննջեցին: (263 / 7) Իսկ զեկեալ փրկութիւնն աշխարհի, զվերինն Աստուած, յերկիր եկեալ զՔրիստոս ի լուր ականջաց լուաք իբրև ընդաղօտ: (263 /9) Եւ յարշաւանաց մերոց յայդ աշխարհ, և որ մօտ առ մեզ տունդ Աղուանից, զմի հաւատ ունողք դուք այժմ և ամենայն տիեզերք՝ նախանձ բարի և մեր տնկեցաւ ի սրտի: (263 /11) Եւ բան Քրիստոսի Աստուծոյ մերոյ լցեալ կատարեցաւ և ի ծագս հիւսիսայնոցս քարոզեցաւ աւետարան նորա զորս բովանդակապէս ուսաք ի լաւագոյն առնէ միջօէ յԻսրայէլէ Մեծ Կողմանցդ եղելոյ եպիսկոպոսէ: (263 12; 263 /13) Եւ ի սրբոյ հայրապետէդ Աղուանից յԵղիազարէ խնդրեալ է մեր. և զձեզ գործակից և հաւատակից նմա գիտացեալ աղերսեմք յերկաքանչիւրոցդ կատարել զմեր հոգևոր խնդիր. զի սակս նորա լինելոյ առ մեզ արշաւանք զօրացս խուժադուժ ազգաց յաշխարհ ձեր արգելեալ փակեալ լինիցին մեր մի հաւատ ունելով և ձեզ. ողջ լրուք»: (263 / 16) Արդ իբրև եկին հասին նոքա յաշխարհս Աղուանից և Հայոց և տուեալ ողջոյն՝ պատմելով զամենայն, զոր ինչ արար Աստուած ի ձեռն նորա յաշխարհին Հոնաց, և մատուցին զհրովարտակն մեծի իշխանին Հոնաց առաջի քահանայապետին սրբոյն Սահակայ և Գրիգորի իշխանին Հայոց, և մեծաւ խնդութեամբ ընկալեալ նոցա և ամենայն աշխարհին՝ առնէին պատասխանի զայս: (264 /5) Ի Սահակայ Հայոց կաթողիկոսէ և յամենայն քահանայական ուխտէ, և ի Գրիգորէ՝ Հայոց իշխանէ, և ի համօրէն եկեղեցեացս ժողովրդականաց ի տէր խնդալ: (264 /11; 264 /11; 264 /12; 264/12) Վասն կենաստու փրկութեան հասանելոյ ի ձեզ յԱստուծոյ, որպէս մեզ պատմեցաւ, անպայման ուրախութեամբ գոհացաք զանզեղջ պարգևացն Քրիստոսի և զթուղթ, զոր նորընծայ ծառայիցդ Աստուծոյ գրեալ էր առ մեզ, տեսաք. յորմէ իմացաք զբարերարութիւն արարչին, որ ծագեաց յաշխարհդ ձեր զլոյս աստուածածանօթութեան, որպէս և զամենայն աշխարհս առաւել փառաւորեցաք զմարդասէրն Աստուած, որ ոչ եթող զձեզ յընդունայն պաշտամունս հարցն ձերոց առաջնոց, այլ ծանոյց ձեզ զանուն իւր սուրբ և

եղէք ճշմարիտ երկրպագուք արարչին մերոյ Աստուծոյ: (264 / 13) Ահա գիտացաք, եթէ անուն նորա տարածեալ՝ ելից զտիեզերս. որպէս *ի* ձերոցս գրելոց և *ի* պատգամաւորացս լուաք, եթէ որպէս դարձայք բոլորիւ սրտիւ *ի ձեռն* երանելի եպիսկոպոսիդ Իսրայէլի: (265 /3; 265/4; 265 /4) Այլ զոր խնդրեցէքդ *ի* մէնջ զեպիսկոպոսդ Իսրայէլ, մեծ է այդ խորհուրդ ձեր, զի չէ մարթ հօտի առանց հովուի լինել: (265 / 6) Եւ նոյն շնորհք սուրբ հոգւոյն հաստատեսցէ զձեզ յերկիւղն Աստուծոյ և *ի* պահպանութիւն պատուիրանաց նորա: (265 /13) Եւ մեք կարօտութեամբ սրտից անմոռաց յիշեսցուք զձեզ *ի* մեր եկեղեցիս. ոքղջ լերուք: (265 / 14) Իսկ իբրև դարձան *ի* Հայոց Զիթգինն Խուրսան և Չաթն խազր և կացին առաջի կաթողիկոսին Եղիազարու և իշխանին Վարազ Տրդատայ *ի* մայրաքաղաքն Պարտաւ, խնդրէին հրաժեշտ *ի* նոցանէ տալ զեպիսկոպոսն: (265 /16; 265 /17; 265 /18) Ասեն. «Ոչ է պարտ դմա զհաւատացեալ դմա յԱստուծոյ զհօտն իւր թողուլ միանգամայն և լինել ընդ ձեզ. այլ երթալ և գալ դմա ըստ կարի իւրում հրամայեմք հաստատել զձեզ *ի* հաւատս Քրիստոսի և ողջ պահել զանխախտելի սէր մեր, որ առ միմեանս է: (266 / 1) Այնմ և մեք կամակիցք եմք. զի լինելով դորա միջնորդ ընդ մեզ և ընդ ձեզ, բարձի թշնամութիւն *ի* միջոյ մերմէ, և տնկեսցի սէր և խաղաղութիւն»: (266 / 3) Զայս ամենայն լուեալ իշխանացն՝ խոռվամիտ ընդ իրսն եղեալ զարհուրէին և անյօժար կամաւորութեամբ հաւանեալ ասեն. *«Ի*գալն և յերթալն առ մեզ մի յապաղեսցի, և զեղեալ հիմն հաւատոյ անդրէն մի քակտեսցի և թողցէ զմեզ որբս, զի այլում վարդապետի ոչ անսամք և հնազանդիմք»: (266 /5) Եւ երանելի եպիսկոպոսն ըստ քաղցր բարուցն՝ առնէր շինութիւն երկոցունց կողմանցն, յանձն առնոյր զերթալն *ի* Հոնս քաջայօժար կամաւորութեամբ և յանձանձել զնորընծայ հօտն Քրիստոսի, ունել և հաստատուն զուխտ և զպայման դաշնաւորութեան նոցա: (266 /9) Այսմ հաւանեալ բանից մեծաշնորհ եպիսկոպոսին՝ լնուին ուրախութեամբ և դառնային խաղաղութեամբ *ի* տեղի իւրեանց՝ փառաւոր առնելով զամենասուրբ Երրորդութիւնն: (266 / 12) ԴԱԻԹԱՅ՝ ՄԵԾ ԿՈՂՄԱՆՑ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՎԱՍՆ ՊԱՏԿԵՐԱՑ ԵԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹԵԱՆՑ ՀԱՅՑՈՒԱԾ *Ի* ՅՈՀԱՆՆԷ ՄԱՅՐԱԳՈՄԵՑԻՈՑ (266 /15) Ընդ այն իսկ ժամանակս, որ դեռ ևս վարէր զհայրապետութիւնն Աղուանից տէր Ուխտանէս և զկնի նորա՝ Եղիազար, և խռովութիւն և հերձուած բազում *ի կողմանս կողմանս* գիտնաւորաց և տգիտաց լինէր, մարտ և մրցումն Յոնաց և Հայոց: (266 / 17) Եւ աշխարհս Աղուանից անվրդով յայսցանէ մնայր. եհաս համբաւ իմն *ի* նոսա, եթէ ոմանք պատկերս ոչ ընդունին, ոմանք մկրտութիւն ոչ առնեն, ոչ աղ օրհնեն, ոչ պսակ դնեն հարսանեաց. յայս պատճառս, եթէ քահանայութիւն բարձեալ է յերկրէս: (267 / 2) Վասն այսորիկ Դաւիթ՝ եպիսկոպոս Մեծ Կողմանց, խնդրեաց գրով *ի* Յոհաննէս վարդապետէ Հայոց զպատճառ իրացն: (267 / 5) Եւ նա արար հմուտ իրացն ճշմարտապէս՝ այսպէս ասացեալ. «Աղանդդ, այդ յետառաքելոցն երևեցաւ. և պատկերամարտութիւն նախ *ի* Հռոմս երևեցաւ, վասն որոյ ժողով մեծ եղև *ի* Կեսարիա. հրամայեցին նկարել զպատկերս *ի* տան Աստուծոյ. վասն որոյ բարձրամտեալ նկարչաց՝ զինքեանս գերագոյնս կամէին առնել, քան զամենայն արուեստս եկեղեցականս: (267 / 7; 267 /7; 267 /8) Միթ գիրս, միթ պատկերս, միթ նշխարս *ի* նոցանէ ընդունել: (268 /1) Յայնժամ Թէոդորոս ետ հրաման ժողովել եպիսկոպոսացն Հայոց,

որ *ի* նորայն կողմանն՝ *ի* Կարնոյ քաղաք, և ասէ. «Պարտ է մեզ առնել կաթողիկոս»: (268 /3; 268 /4) Եւ ոչ ոք *ի* նոցանէ եղև խնդրող ուղղափառ հաւատոյն, քաց *ի* յԵնոսայ երանելւոյն, որ գնաց *ի* նոցանէ և եկն առ Մովսէս կաթողիկոս, զոր ուրախութեամբ ընկալան: (268 /5; 268 /6; 268 /6) Մովսէս նստէր *ի* Դուին կաթողիկոս. պատշաճեցան և նոքա Հռովմայեցիքն Յոհաննու կաթողիկոսարան յԱւանին, մօտ առ միմեանս: (268 / 7) Եւ էր խռովութիւն *ի միջի* նոցա՝ չընդունելով զՅոհաննու ձեռնադրեալսն»: (268 / 9) Ապա Յեսու անուն քահանայ ևի Թադէոս ևի Գրիգոր, որ *ի* Մովսէսի կողմանէն էին, գնացին *ի* Դունայ և ելին *ի* Սոթից գաւառն: (268 /10; 268 /10; 268 / 11) Եթէ զպատկերս, որ յեկեղեցիս են նկարեալ, *ի քաց* ջնջեցեք և ընդ աշխարհական քահանայս միւթ հաղորդիք: (268 / 12) Եղև խռովութիւն *ի* գաւառին, և համբաւն եհաս առ Մովսէս հայրապետն: (268 / 13) Նոքա ոչ անսացին հրամանին, այլ անտի գնացեալ բնակեցան *ի* ձերում Արցախական գաւառս: (268 / 15) Եւ *ի* վախճանել հայրապետին Մովսէսի և տիրել Խոսրովու Հայոց՝ միաւորեցաւ երկիրն: (269 / 1) Իսկ պատկերամարտքն, որ իջին յԱղուանս, պղտորեցին զերկիրդ ձեր. ապա Գարդմանայ տէրն կալեալ զերեսին արսն, որոց անուանքն *ի* թղթիդ են, ետ կապանօք ածել *ի* Հայս: (269 /6; 269 /6) Եւ եղեալ նոցա յանդիման մեզ՝ հարցաք, թէ յո՞ր պատճառս չընդունիք զմարմնացելոյ Աստուծոյ զպատկերն. ետուն պատասխանի, եթէ արտաքոյ է պատուիրանաց, և եթէ կռապաշտից է գործդ այդ, որոց զամենայն արարածս *ի* պաշտօն էր առեալ. մեք ոչ պագանեմք երկիր պատկերաց, զի ոչ ունիմք հրաման *ի* Գրոց: (269 /9; 269 /10) Ապա մեր յայտ արարեալ զմովսիսականն *ի* խորանին նկարակերտութիւն և զՍողոմոնեան տաճարին զանազան քանդակագործութիւնսն զնոյն կերպագրեալ և *ի* մեր եկեղեցիս: (269 /10; 269 /12) ԽՈՐՀՐԴԱԶԳԱԾՈՒԹԻՒՆ, ԹԷ ՈՐՈՎ ԺԱՄԱՆԱԿԱՒ ԱՆԻԾԱՒ ՉԱՐ ԺՈՂՈՎՆ ՔԱՂԿԵԴՈՆԻ. ԵՒ ԱՂՈՒԱՆԻՑ ՄՆԱԼՆ ԱՆԽԱՌՆ ՅԱՂԱՆԴԷՆ, ԿԱՄ ԲԱԺԱՆՄԱՆՆ ՎՐԱՑ *Ի* ՀԱՅՈՑ. ԵՒ ՋԻՒՆՉ ԱԲՐԱՀԱՄՈՒ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՎԱՍՆ ԱՂՈՒԱՆԻՑ (269 /17) Քառասներորդ երրորդ ամ էր թուականին Հռոմոց, յորժամ լուսաւորեցան Հայք *ի* հաւատս (270 /1) Յետ ՃՉ ամի լնլոյ հաւատալոյն Հայոց յաղագս տիեզերակործան ժողովոյն Քաղկեդոնի եղև հանդէս ժողովոց *ի* ժամանակս Բաբգենայ՝ Հայոց կաթողիկոսի: (270 / 3) Եւ յետ ՃԷ ամի անցանելոյ *ի* ժամանակս Աբրահամու՝ Հայոց կաթողիկոսի, բաժանեցան Վիրք *ի* Հայոց միաբանութենէ *ի ձեռն* անիծելոյն Կիւրիոնի. այլ և Յոյնք և Իտալիա ընդ նոսա: (270 /6; 270 /6; 270 /7) Զորոց *ի* շրջաբերական թղթին վասն Կիւրիոնի դիմադարձութեան Աբրահամ զամբաստանականս վասն նորա գրէ յազգ ամենայն՝ *ի քաց* կտրելով սրով հոգւոյն: (270 /8; 270 /10) Ազդէ նախ յԱղուանս, տայ զգիտութիւն և գրէ այսպէս *ի* թղթին. «Յառաջագոյն քան զմեզ կացեալքն յաստիճանի կաթուղիկոսութեան Աղուանից և նորին աթոռակիցս ընդ մեզ համաձայն գոլով և նոցա կամակցութեամբ նզովեցաք և արտաքս ընկեցաք զԿիւրոն ըստ կանոնական հրամանի հարցն զոր հատին *ի վերայ* Հռոմին և կացցէ մինչև ցբուն մեք և Աղուանք: (270 /11; 270 /14) Զնոյնն *ի վերայ* Վրաց հրամայեցաք՝ ամենևին միւթ հաղորդել ընդ նոսա միւթ յաղօթս, մի՛ *ի* կերակուրս, միւթ յըմպելիս, միւթ *ի* բարեկամութիւն, միւթ *ի* դայեկութիւն. միւթ աղօթիւք երթալ *ի* խաչն, որ Մցխիթայի տեղեօքն համբաւի, միւթ *ի* Մանգլեաց խաչն և միւթ *ի* մեր եկեղեցիս զնոսա ընդունել, այլ

և ամուսնութեամբ ամենևիմբ հեռանալ. միայն գնել ինչ կամ գնոյ տալ որպէս Հրէից: (270 /14; 270 /15; 270 /16; 270 /16; 270 /16; 270 /17; 270 /17) ՅԱՂԱԳՍ ՅՈՒՆԱՑ ԱՌ ՀԱՅՍ ՎԱՍՆ ՈՉ ՈՒՆԵԼՈՑ ԻՆՆ ԴԱՍ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԿԱՐԳԱՒՈՐՈՒԹԵԱՆ. ԵՒ ՀԱՅՈՑ ՋԱՆՔ ԱՂՈՒԱՆԻՑ ԼԻՆԵԼ ԱՌ ՆՈՔՕՔ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ, ՈՐՈՒՄ ՈՉ ՀԱՒԱՆԵԱԼ ԱՂՈՒԱՆԻՑ. ԵՒ ԴԱՌՆԱԼ ՍԻՒՆԵԱՑ Ի ՀԱՅՈՑ ՅԱՂՈՒԱՆՍ ԱՌՆՈՒԼ ՁԵՌՆԱԴՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՁԷԹ (271 / 10) Ի թագաւորելն չարագլուխն Մարկիանոսի Հռոմայեցւոց անդէն հրապուրեալ ի պղծոյն Պողքերայ կնոջէն իւրմէ՝ կարգընկէց նեստորականէ, վաղվաղակի պատառեալ ելոյծ զսահման ուղղափառ հաւատոյ քաղկեդոնական հաւաքմամբն: (271 /11; 271 /11) Էր որ թղթովք բազում անգամ. դէմ յանդիման ժողովովք կոչեցին մի անգամ ի Կոստանդնուպօլիս, և երկիցս ի Թէոդոսիոպօլիս: (271/15; 271 /16) Այլ թէպէտ թագաւորական հրամանաւ յարակիրթ ճարտարքն Յունաց վստահանային ի սուր լեզուս հելլենական յորդաբանութեամբ յաղթող լինել, սակայն ըստ նմին և պատասխանիս լսէին: (271 / 17) Քանզի նորոգ էր ի Հայաստան եկեղեցիս ուսմունք, և յոյն լեզուին տեղեկագոյնք: (272 / 1) Այլ Հայք համբաւէին զՅոհաննու Մայրագոմեցւոյ, եթէ ի Յունաց կողմն ելեալ հակառակ բերէր. զորոյ զրպարտութեանն պատճառ Սողոմոն ոմն միանձնեայ, որ և յետոյ Հայոց եղև կաթողիկոս: (272 / 3) Նորա հարցեալ զվարդապետն իւր Սողոմոն, որ Մաքենացւոցն էր հայր. և նա զրով ուսոյց զայս, եթէ ոչ պարտեցան Հայք ի հաւատոյ մասին. այլ այսուիկ յոյժ եղեն պարտեալք, զի ասացին Յոյնք, եթէ կարգաւորեաց Աստուած զեկեղեցի ինն դասուք. որպէս ի վեր անդ երկնայինքն, նոյնպէս գահակալեցան ներքին խորանիս պատրիարք, որ է հայրապետ, և արքեպիսկոպոս, քահանայք և սարկաւագունք, կէսսարկաւագք և ընթերցողք և փսաղտք: (272 /5; 272 /7) Արդ՝ եթէ ողջամտութեան հաւատոյ էք, խոստովան լերուք, եթէ ոխվ է պատրիարքն ձեր, զի չորք միայն կացին ի վերայ երկրի. Աղեքսանդրին՝ Մարկոսի աթոռն, Անտիոքայն՝ Մատթէոսին, Հռոմայն՝ Ղուկասուն, Եփեսոսին յԱսիա՝ Յովհաննուն. ըստ չորեքկերպեան տիեզերաց, ըստ քառավտակ գետոցն աղենականի, ըստ չորեքկերպեան կենդանեացն, ըստ չորից աւետարանչացն, ըստ չորից մովսիսական օրինացն, զի երկրորդումն օրինացն որիշ համարի: (272 / 12) Եւ մեք ամենեցուն հնազանդիմք, հնազանդեցարուիք դուք միում ի նոցանէ կամ ամենեցուն, որ մտահաւատ լինիմք. քանզի ձեր ի Կեսարիա եպիսկոպոսապետ միայն ձեռնադրեցաւ սուրբն Գրիգոր և որք յետ նորա մինչև ցայսօր: (273 /2; 273 /2) Իսկ ի թագաւորելն Յուստիանոսի փոխեաց զնշխարս սրբոյն Յովհաննու աւետարանչի ի Կոստանդնուպօլիս. և հաստատեաց անդ աթոռ հայրապետական. և բուն աթոռն մնաց անդէն յԵփեսոս: (273 /9; 273 /10) Անդանօր ապա մերոյս քերաւ բան ի քերան յետ զկարգ նոցա դնելոյն: (273 / 14) Եւ զՀայս Պարսիկք և Յոյնք բաժանեալ էին. և տէր Մովսէս էր յաթոռ սրբոյն Գրիգորի ի Դուին, և ի կողմն Յունաց հակառակ նմա նստուցին յաթոռ զՅովհան ոմն մերձ առ նա: (273 /15; 273 /16) Իսկ զերկուանալն հայրապետութեանն խոտեցին տեարքն Սիւնեաց, և ոչ հաւանեցան ընդ մի ոք յերկուցն. հրամանաւ եպիսկոպոսին իւրեանց առաքինւոյն Պետրոսի, որ հասեալ ի վախճան, պատուէր ետ վիճակին իւրում առնուլ ձեռնադրութիւն յԱղուանս և զմիւռոնն օրհնութեան, մինչև միասցի աթոռ սրբոյն Գրիգորի: (274 / 3) Վասն այսորիկ ձեռնադրեցաւ Վրթանէս

յեպիսկոպոսութիւն Սիւնեաց *ի* Զաքարիայ սուրբ հայրապետէն Աղուանից: (274 / 6) Յայսմ մաքառմանէ և *ի* խնդիր ուղղափառ հաւատոյ դարձան Վիրք և եղեն քաղկեդոնիկ: (274 / 13) Իսկ յունական զորավարացն գրգռեալ զնա՝ խնդրել զգահերիցութիւնն *ի վերայ* Աղուանից. որում ոչ հաւանեալ Աղուանից՝ զայլ ոմն երևեցուցին, կանխաւ առաքեալ եկեալ յաշխարհն Աղուանից, Եղիշայ անուն՝ յաշակերտացն տեառն, ձեռնադրեալ *ի* սրբոյն Յակոբայ՝ եղբօր տեառն, քարոզեալ անդ և եկեղեցիս շինեալ նախկին քան *ի* Հայս: (274 /15; 274 /17; 274 /18) Առաջինն մայր եկեղեցեացն արևելեայց Գիսոյ եկեղեցին նորին հիմնադրեալ և զինքեանս նմա աւանդեալ. դարձան *ի* Հայոց առ ինքեանս՝ չլինել ընդ ումեք իշխանութեամբ: (275/1) Վասն այնորիկ չքարոզեն եպիսկոպոսապետ Սիւնիք և ոչ գրեն *ի* պատասխանին Հայոց եպիսկոպոսապետ, զի թէ քարոզելի էր, ապա և գրելի էր. բայց ոչ քարոզելն մեծութիւն է, որպէս ոչ գրելն. և զնաչն առաջի ունել *ի* փառս տէրունեան է, և անունն լոկ խաչիւն և քարոզովն է բնաւորեալ յիշատակ ոչ ուրուք ընդ նովաւ եղելոյ: (275 / 13; 275 / 15) Այսպէս զետեղեցին զինն դասս. և տէրունիք *ի* Սիւնիս «հոգևոր տէր» գրէին, և նոքա *«ի* ծառայէ»: (275 /17; 275 /17) Ապա տեառն Եղիայի խակագործութեան յԵրիցու վանս, յորժամ յԱղուանս երթայր. սակս այնր ոչ գրեցին *«ի* ծառայէ», արգելին և նոքա «զհոգևորն». այդպէս է ստուգութիւն իրացդ: (276 / 1) ՊԱՏԱՍԽԱՆԻ ԹՂԹՈՅՆ ՄԽԻԹԱՐԱՅ՝ ԱՄԱՐԱՍԱՅ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ *Ի* ՀԱՅՈՑ, ԶՈՐ ՀԱՅՀՈՅԱԿԱՆՍ ԷՐ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ *Ի* ԳՐԵԱՆՍՆ (276 /5; 276 /6) Պատուական գտելոցդ և վեհ հոչակելոցդ, որք զտկարութիւն բերեալ յօժարութեամբ յառարկութեանն և զանտեղիս բացասողք. նաև նմանողք թուեցեալք – *ի դէպ է* ինձ ասել – կամօք հաւասար ընդ հարց ջանի աթենականաց. նորագոյն *ի* լսողս և պատմիչս յարդեան ժամանակիս *ի մէջ* հիւսիսական կողմանցս տօղավարողք զբոլոր լսողս տարբերմամբ *ի* մանաւանդն սակս ջամբոցեալ զխորհրդոյդ զսևեռութիւն, տէր Մխիթար՝ Ամարասայ եպիսկոպոս, Սիմէոն՝ Մեծիրանց եպիսկոպոս և թէ այլ եպիսկոպոսունք նոցին համախոհակք սրբոյ եկեղեցւոյ, և ազատ մարդիկ և այլք *ի* ժողովրդականաց Աղուանից: (276 /8; 276 /9; 276 /10; 276 /10; 276/13) ՅԱբրահամայ՝ Հայոց կաթողիկոսէ, *ի* Թէոդորոսէ՝ Մարդպետական եպիսկոպոսէ, *ի* Ստեփաննոսէ՝ Բագրևանդայ եպիսկոպոսէ, *ի* Դաւթայ՝ Սիւնեաց եպիսկոպոսէ, *ի* Մովսիսէ՝ Խոռխոռունեաց եպիսկոպոսէ, *ի* Քրիստափորէ՝ Ապահունեաց եպիսկոպոսէ և յայլ եպիսկոպոսաց և յուխտէ եկեղեցեաց և յազատ մարդկանէ. ըղձամբ աղօթալիր և ուժգին խնդրուածովք սրտի զտէրունեան հոգեխառն ողջոյն համարձակապէս մեզ առ ձեզ ասել: (276 /14; 276 /14; 276 /15; 276 /15; 276 /16) Քանզի գրելով ձեր առ մեզ՝ պատմեցէք զձեր որպէսպաշտութիւնն և զկամս և թէ անհակառակք արդեօք զստեղծեալ հակառակութիւնս, զոր ընկալաք *ի* նախարարէ միոյ Սիւնեցւոյ Գրիգոր անուն: (277 / 3) Քանզի և զարբանեկէն ձերոյ ասացի *ի* կերտողէն հրաժարեալ, բայց մեզ բարեպաշտութիւն խնդրել գուշակեցաւ և կամաց շարժութիւն *ի* կատարեալ խոստովանութիւն երանելի նախահարցն: (277 /4; 277 /5) Թէպէտ և զլուրս *ի* նմանէ զանազանեալս տեղեկացաք, այլ ըստ նախնեացն ձեր հարազատ եղբայրութեան գութ բռնաձգեալ էած զմեզ յայս. զի զգրեալսն ձեր համառօտ խոստովանութիւն հաւատոյ կամեցաք յիշատակել և առ նմին զհոգւոյն սրբոյ վարդապետութիւնն դնել մերձ՝ ըստ մասին *ի* ճշմարտութենէն

հեռանալ և կամ միաբանել յետ ծանօթանալոյն բազմաց: (277 /6; 277 /9) Տոքւր ինձ զքո միտդ ոչ զեանալն, զուղիղն և միթ դասիլ ի հակառակող կամս, զի եկեղեցւոյ Աստուծոյ այս ոչ է սովորութիւն: (277 / 11) Քանզի ի ձէնջ գիրն ծանոյց մեզ յետ դուզնաքեայ զմէնջ գոհութեանն ամբաստանութեան ճառ զմարդոյ, որ տկարագունի էր նշանակեալ և զմեր նմա հաւատալն իբր անիմաստ, անտեղի. զիմն համբաւեալ, թէ ոչ թերի, այլ լի նման ձեզ եմք ի հաւատս, զի առաքեալքն և վարդապետքն հասարակ և միապէս աւետարանեցին, և ապա յետ սակաւ ինչ բանից զսրբոյ Երրորդութեանն զյառաջ քան զյաւիտեանս զէութիւնն էր աստուածաբանեալ տարաբերմամբ: (277 /12; 277 /15) Եւ յետ յոլովից զմարմնաւորութիւնն բանին մեզ պատմեցէք զանազանեալ մտօք, զոր վարդապետութեան միտս եկեղեցի Քրիստոսի չէ առեալ յառաքելոցն, և ոչ զբանս գրոց ի նոյնս բռնաձգեալ այլ գայլոցն յափշտակեալ ի նմանէ արս, որ խօսին թիւրս՝ ձգել զկնի իւրեանց զաշակերտեալսն. իսկ զայլ խօսսն, որք ոչ ըստ սուսյն միաբանին, իբրև զպարզամիտս խաբելոյ կեղծաւորութեան դուռն առ մեզ հաւատացեալ փակի. և զի այսդէս է, ո՛վ պատուականքդ, միտ դիք խոստովանութեան ձերում, թէ ուր ձգէ և որպէս մեկուսացուցանէ ի հոգւոյն սրբոյ վարդապետութենէ: (277 /19; 277 /19; 278 /4) Արդ՝ բան առ բան բազմաւորական և հատու պատասխանեօք զլոյսն առ խաւար ծաներոքիք խորագոյնս քննելով. և դու՝ բարեաց ցանկացողդ, վերացոյ ընդ իս սրագոյն զհայեցուածս ի սահմանս սրբոյ Երրորդութեանն, զոր Պօղոս վարդապետէ առ Հռոմայեցիսն. «Աղաչեմ զձեզ, ասէ, ի ձեռն տեառն Հիսուսի Քրիստոսի և սիրով հոգւոյն պատերազմակից լինել ինձ յաղօթս առ Աստուած: (278 /7; 278 /8) Արդ ընդէ՞ր տամք տեղի Րոբովամու պատառել զեկեղեցի Աստուծոյ, զորս որդին Աստուծոյ ժողովեաց ի մի գաւիթ. միթ ի մէնջ երևեսցին Նադաբ և Աբիուդ զօտար հուր մատուցանել անհաւատապէս, զի միթ հրատոչոր լիցուք. զմեզ վերստին զերկնողն զՔրիստոս միթ անարգեսցուք՝ այլաձևելով զհաւատ, և միթ զՆոյանն առ Քանան անէծս յորոշողէն զօդիսն ի յայծեաց մեք առցուք, քանզի ընդ ձեզ է ձայնս, և քեզ, Մխիթարր, որ կացեալ ես գլուխ Ամարասայ եկեղեցւոյդ և համբաւես, եթէ Գրիգոր եդեալ է հիմն, զնոյն հաւատն ունող և զաւակ բարեխօս առ Քրիստոս Աստուած վասն մեզ ժառանգակից նմա լինել. միթ լիցի լսել, գուցէ եթէ դուք զաւակ Քանանու էք ծառայելոյն մեղաց և ոչ Յուդայի խոստովանողի, և հրամայեսցի կտրել ընդ մէջ և կեղծաւորացն մասն: (278 / 14; 278 / 14; 278 / 17) Եթէ որդիք այնց հարցն եմք, որ ոչ անզանազան առաքելոցն են հաւատ, զնոցին ուսուցեալս պինդ կալցուք և միթ ջուր ընդ բուռխառնելով՝ զնմանութիւն անխարդախ կաթին արասցուք, զի որոյ անուամբ մեք պարծիմք, նա իսկ չարախօս լինի զմէնջ առ երկնաւոր հայրն, այլ և ո՛չ յոլովութեամբ եխից հրապուրեսցուք. բայց ըստ առակողին խրատու մի՛ միտել ընդ բազումս ի չարիս: (279 / 7) Ընդ ութ հոգիսն տապանափակ ջանասցուք լինել ի բազմամբոխ ձգողացն և ի ջրահեղձոյցն պատուհասէն, ընդ Ղովտայ զերծանել ի հրակէզ անձրևաց, ընդ երկուսն ի պարգևականն մտանել երկիր ի ՋՌ-սն տապաստելոց. Քանզի և այժմ ցանգ բարի հովիւն զլերինս հնչեցուցանելով՝ ասէ. «Մի՛ երկնչիր, հօտ փոքրիկ, զի հաճեցաւ հայր ձեր տալ ձեզ զարքայութիւն». և զյամառեալսն յայսցանէ յորդորեսցուք ի նոյնս: (279 /8; 279 /8; 279 /9; 279/9; 279/9; 279/12) Ի թագաւորութեանն Հերակլի և ջախջախ թագաւորութեանն Պարսից

Յազկերտի, *ի* կաթողիկոսութեանն Հայոց Եզրի և *ի* սպարապետութեանն Մուշեղի, *ի* Սիւնեաց տէրութեանն Գրիգորի, յեպիսկոպոսութեանն Մաթուսաղայի և յԱղուանից իշխանութեանն Վարազ Գրիգորի՝ Գարդմանայ տեառն՝ գնացի ես Յովսէփ անապատական *ի* գաւառէ Գեղամայ՝ յանապատէ Բրտի այրեաց վասն չար նեղութեան ժամանակի, որ անիրաւք զայրացեալք առ ոտսն կոխեցին զեկեղեցիս և զտառապեալսն հարկապահանջ և անառակ գնացիւք աւերեցին. մանաւանդ արիւնարբու ազգն Տաճկաց սկսաւ զօրանալ և եդ զամենայն աշխարհս իբրև զհող *ի* կոխումն: (280 /4; 280 /5; 280 /5; 280 /5; 280 /7; 280 /11) Յայսպիսի նեղութեանց խոյս տուեալ իմն՝ եկի *ի* գաւառս Արցախայ, *ի* գիւղս Յերկս առ ծերունի եպիսկոպոսն Միհր: (280 /12; 280 /12) Եւ նորա ընկալեալ զիս զանարժանս՝ խնդրեաց *ի* գեղջէիցն զայս տեղի, շինեաց զեկեղեցիս. և կացեալ իմ *ի* սմա ամս երկոտասան. ապա զնա Աստուած յաւել առ հարս իւր: (280 /13; 280 /13) Բայց ոչ կային նշխարք սրբոցս *ի* վայրքս: (280 / 17) Իսկ Մխիթար ոմն անապատական *ի* Տանձեաց՝ ցանկացեալ սրբոյ քաղաքին Երուսաղէմի՝ երկու ընկերօք գնացեալ երկրպագէ ամենայն սրբութեանցն և զմի ամ կացեալ անդ շնորհեաց նմա Քրիստոս *ի* նշխարաց սրբոյն Ստեփաննոսի և սրբոյն Գէորգայ *ի ձեռն* հաւատաւորի միոյ՝ Հռոմայ շինացւոյ, որ սակս իւր մերձաւորաց էր պահեալ. և *ի* սպառել նոցա՝ ետ զսուրբսն ցՄխիթար և ասէ. «Տարցես զսոսա աշխարհին մեր և յարժանաւոր բնակեցուսցես տեղւոջ»: (280 /17; 281 /1; 281 /2; 281/3) Եւ նորա մեծաւ փութով առեալ զգանձն՝ չոգաւ ընդ Հռոմս կոյս յերկիւղէ թշնամւոյն. հասանէր *ի* լեառն Տօրոսի, *ի* վկայարանս սրբոյն Անդրէի, որ բազում ընկերօք վկայեաց *ի* Սելևկիոսէ թագաւորէ. և անդ մեծահայց եղեալ նմա՝ խնդրեաց *ի* նշխարաց Անդրէի *ի* սպասաւորէն Թումասայ. հաւանեալ և նա աղաչանացն՝ տայ նմա զխնդիրն: (281 /5; 281 /5; 281 /6; 281 /7; 281 /7) Յայնժամ ընկալեալ զպատուական գանձն՝ գայ հասանէ *ի* կողմանս Արցախայ. զորոյ լուեալ զհամբաւն իմ Յովսեփայ՝ ելի ընդ առաջ նոցա. ըստ արժանի սրբոցն հանգուցի զայն օր և *ի վաղիւն* հարցի զՄխիթար, թէ ո՞ւր կամիս զսուրբսն տանել: (281 /9; 281 /11) Եւ նա ասէ. «Գիտեմ, զի անարժան եմ *ի* սպասաւորել դոցա, այլ քն հանդերձ, Մխիթար, վստահ լինիմ *ի* սպասաւորել զամենայն աւուրս կենաց մերոց: (281 /12; 281 /13) Յայնժամ հաւանեալ նորա՝ հանգուցանէ զսուրբսն *ի* վկայարանի, զոր շինեաց փոքրիկ հիւսն և որդի իւր Յոհան՝ նպաստաւորեալ և Բախդանէր դարբին զամս երիս՝ ըստ կանոնաց զնոցայն կատարեցաք զյիշատակ: (281 / 14) Յետ այսորիկ տնկեցաւ *ի* սիրտ իմ ցանկութիւն ստանալ *ի* նշխարաց սրբոյն Յովհաննու, որ մեծ *ի* ծնունդս կանանց *ի* փրկչէն վկայեալ. և հանդերձեալ իմ աշակերտօք՝ Քրիստոսատրով և Գրիգորով և Սարգսով, գնացի *ի* խնդիր Կարապետին, հրամանաւ և թոշակաւ Անդրէ երիցու և հաւանութեամբ ընտանեացն իմոց Յովհաննու և Մխիթարայ կրօնաւորաց: (281 /16; 281 /16; 281 /17; 281 /17; 282 /1) Եւ չոգայ հասի *ի* սուրբ քաղաքն Երուսաղէմ, և զերկրպագութիւն անդ կատարեալ՝ մեծաւ տրտմութեամբ դարձայ, վասն զի ամենեքեան էին ներկեալ և հաւանեալ աշխարհակործան ժողովոյն. որոց ողջոյն անգամ ոչ տուեալ՝ եկի *ի* գաւառն իմ Գեղարքունի՝ *ի* Պուհավանս, որոյ տեղեակ *ի* մանկութենէ էի՝ լինել անդ մասին *ի* նշխարացն Յովհաննու, և յոյժ տենչանօք հայցեցի *ի* Գրիգորիկայ՝ սպասաւորէն սրբոյն: (282 /3; 282 /6; 282 /6;

282 /6; 282 /7; 282 /7) Ընկալեալ իմ Յովսեփայ՝ բերի ի նոյն վկայարան. և մեծապէս լցեալ խնդութեամբ մեր՝ ընդ առաջ մեր եկին: (282 / 11) Եւ այսպէս հանգուցաք ի տեղիս և կարգեցաք զյիշատակ սոցա ըստ հրամանի Կիւրղի Երուսաղէմացւոյ, որ զընթերցուածսն եցոյց ի փառս Քրիստոսի Աստուծոյ մերոյ: (282 /12; 282 /13) Յետ այսր եղելոյ հաճեցան սուրբքն ամենայն, որ ի գաւառին Գեղամայ. բերին իւրաքանչիւր ոք անուամբ և գրով և եդին ի նմին եկեղեցւոյ, որոց բարեխօսութեամբն տէր Աստուած աշխարհի ողորմեսցի: (282 /14; 282 /15) ՎԱՍՆ ՈՐ Ի ՍՈՒՐԲՆ ԵՐՈՒՍԱՂԷՄ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՇԻՆՈՒԱԾՔ ԹՈՒՈՎ ԵԻ ՉԱՓՈՎ ՀԻՄՆԱԴՐԵԼՈՎ. ԵԻ ՁՍՏՈՅԳՆ ԳՏՑԵՍ ԱՍՏԱՆՕՐ (283 / 2) Անձնաչափ կենարարին Քրիստոսի լայնութիւն տապանափորած վիմին գիրկ և կէս հեռի են ի միջի գմբեթէն սրբոյ փրկչին մերոյ կենարար գերեզմանէն. և ի վերայ սեանցն գմբեթաձև, ի վերայ եկեղեցւոյն, որ շինեալ է հարիւր կանգուն բարձրութիւնն և հարիւր լայնութիւնն. բոլոր յայն և յայն երկոտասան սիւնք ներքոյ և երկոտասան վերոյ վերնատանն. և յայն վերնատանն գեղարդն և սպունգն և սկաւառակն Քրիստոսի պատեալ ոսկւով: (283 / 5; 283 / 5; 283 /6) Իսկ եկեղեցին կաթողիկէ, որ Մատուռն անուանի, որ է գիւտ խաչի, քսան կանգուն հեռագոյն ի Յարութենէն, վաթսուն և հինգ սիւն վեր և ի ներքոյ երկայնութիւն: (283 /10; 283 /10) Իսկ սուրբ Գողգոթայի եկեղեցին տասն քայլ հեռի էր ի Յարութենէն, որ Աղամայ գերեզման կոչի. ներքոյ և ի վերոյ սեղան խորհրդոյ, յորում խաչեցաւ Քրիստոս ի վիմին վերայ: (283 /11; 283 /12; 283 /12) Իսկ սուրբ Սիօնի եկեղեցին միով ասպարիզաւ բացագոյն ի Յարութենէն, հարիւր կանգուն ի յերկայնն և եօթանասուն ի լայնն, ութսուն սեամբք կամարակապօք. և չէ վերնատամբ, այլ թարբ կապեալ է փայտեայ, և պսակ փշոյն կայ ի կախ զթարբէն, զոր եդին կենարարին ի գլուխ: (283 /13; 283 /13; 283 /14; 283 /15; 283 /16) Եւ յաջմէ եկեղեցւոն վերնատունն խորհրդոյ և փայտեայ գմբէթ, յորում նկարեալ է զընթերացն խորհուրդ Փրկչին, յորում է սեղան խորհրդոյ և պատարագ մատչի ի վերնայարկն Սիօնի և վերնատուն մի լինի: (283 / 17) Եւ յայնմ տեղւոջ, ուր զսուրբ կուսին դազաղն կալաւ հրեայն արտաքոյ քաղաքին՝ չտալ թաղել՝ գմբէթ կապեալ ի չորից սեանց և սեանցն պղնձի խաչ զգեցուցեալ, որ են մարմարիոնք. և անտի ցվայր երկուհարիւր և յիսուն քարեայ աստիճանք մինչև ցսուրբ գերեզման կուսին, որ ի ձորն Գեթսեմանի. և անտի մինչև ի լեառն Ձիթենեաց, ուստի վերացաւ Քրիստոս, ութ հարիւր աստիճանք: (284 /6; 284 /8; 284 /8) Իսկ ի տեղւոջն Համբարձմանն ըստ Յարութեան եկեղեցւոյ ձևոյ գեղեցկահիւս գմբէթաձև շինուածն հարիւր կանգուն յերկայնն և հարիւր ի լայնն. անտի երևի Յորդանան գետ և Հովր լեառն և բազում գաւառք: (284 /10; 284 /11) Իսկ Բեթղեհէմ հեռագոյն ի Յարութենէն երկու հարիւր քսան հրասախ յարևմտից կողմանէ: (284 / 12) Չափ մեծութեան եկեղեցւոյն երկու հարիւր կանգուն յերկայնն և հարիւր ի լայնն իննսուն սեամբք մարմարիոնովք, քարեայ կամարակապօք. և ի նմա է կրկին այրն, զոր Աբրահամ գնեաց ի կալուածս շիրմացն: (284 /14; 284 /15; 284 /15) Եւ յաջմէ եկեղեցւոյն մատուռն, յորում մանկանց սպանելոցն ի Հերովդէէ նշխարք պահին. և անտի յարևելից կուսէ ըստ Յորդանանու կողմանէ երեք ասպարիզօք հեռի ի Բեթղեհեմէ հովանոցն, ուր երկու եկեղեցի, և պատարագ մատչի, և Յորդանան գետ հինգ հրասախ հեռի՝

յԵրուսաղեմէ յարևելից կուսէ, ուր խրկիչն մկրտեցաւ. յորում եկեղեցի սագաշէն խաչանման յարմարեալ՝ ութսուն կանգուն երկայն, ութսուն՝ լայն, երեք սեղան խորհրդոյ, և պատարագ մատչի. և լեառն Ձիթենեաց Երուսաղէմի յարևելից կուսէ լինի: (284 /17; 285 /1) ԱՆՈՒԱՆՔ ՎԱՆՈՐԱՅԻՑՆ, ՈՐՔ ՅԵՐՈՒՍԱՂԷՄ ԵՆ ՇԻՆԵԱԼ ՅԱՂՈՒԱՆԻՑ ԱՆՈՒՆ, ԶՈՐ Ի ԹՂԹՈՑ ԵՐԱՆԵԼԻՈՅՆ ԱՆԱՍՏԱՍԱՅ ԱՌ ՎԱՀԱՆ ՄԱՄԻԿՈՆԵԱՆ ԱՌԵԱԼ ՈՒՍԱՔ, ԱՅՍ ԵՆ (285 / 8) Պանդավանքն, որ յարևելից կողմանէ Ի Ձիթենեաց լերինն կայ, Պանոն ոմն ճգնաւոր յԱղուանից եղեալ նախաշինող, և այժմ Պետրոս Աղուանից/գրքում՝ Աղուան/ քահանայ ունի: (285 / 10) Մրուոյ վանք Սուրբ քառասունքն Ի նոյն կողման, մերձ Ի նա, զոր այժմ տաճիկ ունի: (285 /12; 285 /12) Կաղանկատուաց վանք Ի նոյն կողմանն, այժմ Թէոդորոս ունի. սա քրիստոնեայ տաճիկ է, աբրահամեան դպիր: (285 / 14) Աբուղկամեա՝ յԱղիովիտեայ, Ի Զարիշատայ ունի անիրաւ և չար տաճիկ: (286 / 2) Արցախայ վանք Սուրբ Աստուածածին Ի հարաւոյ սրբոյն Ստեփաննոսի. այժմ տաճիկ ունի զամենայն: (286 / 3) Միւս ևս այլ վանք Աղուանից ընդ Առաւելից վանօքն, որ Ի շուկամիջին է, զոր այժմ տաճիկք ունին: (286 /6) Այսպէս՝ առ նախանձու հայրապետքն Երուսաղէմի խանգարեցին զՀայոց և զԱղուանից անդ ձեռնտուութիւն Ի վանորայիցն. զի Ճ աւելի վանք, որ կան անդ, զորոց փոյթ կալեալ իշխանացնՀայոց, Է կենդինար տուեալ թագաւորին Յուստիանոսի, որ է ՀՌ դահեկան, թափեցին Ի բռնութենէ հայրապետացն զամենայն վանորայսն. ապա յետոյ յանհոգանալոյ մերոցս՝ ամենեքեան այլայլեցան: (286 /8; 286 /10) ՆԱԽ ՍԱԿՍ ԻՍՄԱՅԵԼԵԱՆ ԱԶԳԻՆ ՅԱՐՁԱԿՄԱՆՆ Ի ՀԱՐԱՒՈՅ ԵՐԿՐԷ՝ ՈՒՆԵԼ ԶԾԱԳՍ ՏԻԵԶԵՐԱՑ, ԵԻ ԵԹԷ Ի ՄԱՀՄԵՏԷ ՍՈՒՏ ՄԱՐԳԱՐԷԷՆ ԵՂԵԻ ՍԿԻԶԲՆ (287 /4; 287 /5) Զորս ընկալաք Ի հոգեզուարճ վարդապետաց զմակերևումն ապառնեաց արտաճառել ուսցուք՝ յիշելով զնահապետական բանն առ Իսմայէլ մարգարէացեալ, եթէ ձեռք դորա յամենեսեան, և եղիցի յազգ մեծ: (287 / 6) Ընդ նուազել թագաւորութեանն Պարսից սասանական ազգին՝ վերերևեալ այր մի Մահմետ անուն՝ Ի սուտ մարգարէիցն, զոր Ի Փրկչէն ուսաք, դիւական ոգւով, վայրագ և աղեղնաւոր, յանապատս կեայր: (287 /10; 287 /10) Եւ Ի միում աւուր կերպարանեալ սատանայի Ի ձև էրէոյ վայրւոյ դիպեցուցանէ զնա Արիոսի կեղծոյն միայնակեցի ումեմն՝ անուն Բահիրայ. և չարն չիք եղեալ Ի տեղւոջն. և լիալիճ աղեղն Ի Մահմետէ գեղապարիւր մարդոյն: (287 /11; 287 /11; 287 /13; 287 /13) Ասէ առ նա Մահմետն. «Զի՞ մարդ ես, վասն է՞ր կաս Ի քարանձաւդ»: (288 / 1) Յայնժամ կոչեցեալ առ ինքն զնա՝ սկսաւ ուսուցանել Ի Հին և Ի Նոր կտակարանաց ըստ Արիոսի, որ արարած զորդի Աստուծոյ ասաց. և նա, զոր ինչ Ի նմանէ, լինէր ուսեալ Ի պիղծ վարդապետէն, հրամայէր նմա զնոյն խուժադուժ ազգին տաճկաց պատմել. և բողոքէ առ նա, զի միթ ոք գիտասցէ զնորա տեղին: (288 / 2; 288 /2; 288 /3; 288 /3) Եւ անիմաստ, հեթանոսամիտ և մարդահաճոյ ազգն այն Ի զարմանս եղեալ սակս հրաշաբանութեանն՝ ասեն ցՄահմետ. «Ուստի՞ է քեզ զայդ գիտել: (288 / 6) Եւ նոցա գաղտնի լրտես կացուցեալ առ Ի գիտել թէ ով պատմէ նմա զայն կամ ուստի գիտէ նա զայս ամենայն: (288 / 9) Եւ Ի նմին տեղւոջ նստեալ ինքն լրտեսացն ասէ. «Յայսս տեղւոջ հրեշտակ ինձ երևեալ մեծամեծ սքանչելիս պատմէ»: (288 /11) Եւ անդէն և անդ հրամայեաց կոտորած առնել. և զօրն զայն Աբրահամու անուանեաց. և հրաման ետ չորեքկուսի Ի զոհանոցն աղօթել.

քարարձան տայր կանգնել և համբուրել յանուն Աբրահամու: (289 / 4) Իսկ Տալբն այն զկին իւր ածեալ _ի մէջ_ հրապարակին՝ երդմամբ կացուցեալ վկայս՝ եհան արձակեաց յիւրմէ: (289 / 9) Եւ այն օրէնք տաղտկալի յազգ նոցա եմուտ, եթէ զկին թողեալ _ի_ կնութենէ, ապա առ այլում եղեալ _ի_ քուն՝ առ ինքն առնու: (289 /13; 289 /13) Առ նոսա ասէ օրինեալն Պօղոս. «Մարդք ապականեալք մեղօք, անպիտանք _ի_ հաւատս, որոց անմեղութիւնն յայտնի լիցի յաւուր մեծի դատաստանին Աստուծոյ», և այլուր. «Լալով իսկ ասեմ զթշնամեաց խաչին Քրիստոսի, որոց կատարածն կորուստ է»: (289 / 18) _Ի_ լնուլ ԿԵ թուականին Հայոց երևեցաւ մոլարն Մահմետ _ի_ Մեդին շահաստանի. և իբրև եղև Հ, եկն _ի_ Գմբէթն Աբրահամու և անտի ել յայն շահաստան, որ այժմ կոչի յիւր անուն Մահմետայ յամսեանն սաւփար: (290 /1; 290 /1; 290 /2) Եղև անդ ամ մի և զողջոյն ամն _ի_ շահաստանէն ասպատակ արարեալ. յամսեանն շահր ռաբի ղովաղ սկսեալ թափեաց զԳմբէթն Աբրահամու _ի_ ռամազան ամսոյ ԺԹ անն, այն ութերորդ ամ էր նորա իշխանութեանն: (290 /3; 290 /5; 290 /5) _Ի_ շաւաղ ամսոյ ԺԵ ին կռուեցաւ ընդ Րեփ պարսկի. յաղկաթ ամսոյ _ի_ հասարակել տուընջեան և զիշերոյ եկն _ի_ Մաքա և անտի դարձեալ յիւր շահաստանն, մինչդեռ Զ օր կայր _ի_ աղկադէէ ամսոյ _ի_ նոյն ամին: (290 / 5; 290 /6; 290 /7; 290 /8; 290 /8) Եւ եթող ամիրայ _ի_ Մաքա զՍէդ՝ Աբուսիդայ որդի, և դարձան նորա ընկերքն _ի_ Մաքա: (290 /8; 290 /9) _Ի_ Ժ երորդ ամին մեռաւ յաւուր երկշաբաթի՝ յամսեանն շահ ռիաբիալուլ յերկուսն՝ կալեալ զիշխանութիւնն ամս Ժ: (290 / 10) Ի ամ ունէր, մինչ երևեցաւ և _ի_ վաթսուն և երրորդ ամին մեռաւ: (290 / 13) _Ի_ սորա աւուրս էր Հաջաջ Իբն Յուսուփ: (291 / 7) Եկն Աբլ Աբաս _ի_ Մարաց օգնականութեամբ և զօրօք Աբու Մսլիմայ Խորասանայ իշխանին և սպան զՄրուան և կալաւ զիշխանութիւնն Աբլ Աբաս ամս Է. և Աբլ Աբաս Աբդլա, Մահմետայ որդի, Աղայի որդի, Աբդլայի որդի, Աբասայ որդի, Աբդլ Մուտաղիբայ որդի, որ այժմ ազգաւ կոչի հեշամիկք. և սպան գաղտուկ զԱբու Մսլիմ, յորժամ եհաս յիշխանութիւնն. և յետ նորա սպանմանն և ինքն վախճանեցաւ: (291 / 13) Նա մեռաւ _ի_ Գումբէթն Աբրահամու: (292 / 3) Սա նեղութիւն անչափ հասոյց աշխարհի և վասն այնր բազում գաւառք Հայոց փախեան _ի_ Հոռոմս: (292 / 6) Մահմատ՝ որդի Հարունայ, ամս Գ. Հարուն մինչ կենդանի էր, բաժանեաց զիշխանութիւնն իւր երկուց որդուց իւրոց՝ Մահմատայ և Մայմունայ. և ըստ երիցութեանն ունել զիշխանութիւն Մահմատայ _ի_ Բաղդատ և _ի_ Խորասան. և Մայմուն ընդ հակառակս նմա ելեալ պատերազմաւ՝ մեռանի Մահմատ. և Աբդլա, որ և Մայմունն կոչիւր, իշխեաց ամենայնի: (292 / 9; 292 /9) Իբրայիմ, ամս Ժ. Հարուն՝ _Ի_ և Բ երրորդ նստաւ _ի_ Մահմատայ ամիրմոմնի, և հայ թուականն էր ՄՉ: (292 /11; 292 /11) _Ի_ վախճանելն երանելւոյն Եղիազարու՝ Աղուանից կաթողիկոսի, ոմն յերկաբնակ աղանդոյն Քաղկեդոնի Բակուր անուն, երբեմն եղեալ եպիսկոպոս Գարդմանայ և Ներսէս յորջորջեալ: (293 / 4) Սա ուխտադրեալ Սպրամայ Աղուանից տիկնոջ՝ կնոջ Վարազ Տրդատայ, որ էր _ի_ նոյն աղանդն հետևեալ, կնքէր դաշինս վասն փառամոլ տիրողութեանն՝ ասելով. «Եթէ կամ է քո, կոչեաք զիս _ի_ հայրապետութիւն Աղուանից, և ես արարից զամենայն Աղուանս խոստովանութեամբն Քաղկեդոնի»: (293 /7; 293 /8) Իսկ ամենակար հոգին սուրբ ազդեալ եպիսկոպոսին Մեծիրանց՝ Յովելայ. առաջի մեծախումբ ժողովոյն խնդրեաց _ի_ Ներսիսէ ձեռնարկ նզովել զժողովն Քաղկեդոնի և զտոմարն զԼևոնի՝ նովին մատանեաւ. և ընկալեալ զնամակն՝ _ի_ ժողովումն

արևելից ըստ կանոնական հրամանի ընկալեալ եղև. և նոյն ինքն Յովել եպիսկոպոս հանդերձ այլ եպիսկոպոսօք վերակոչէն զնա ի հայրապետական շնորհս սուրբ աթոռոյն Աղուանից: (293 /13; 293 /14; 293 /16) Եւ նոյնժամայն Յովէլ եպիսկոպոս առ ինքն առեալ զնզովից գիրն՝ դնէր ի պահեստի. և յետ այնր կեցեալ ամս ԺԴ փոխադրիւր ի Քրիստոս: (293 /17; 293 /18) Յայնժամ գտեալ տեղի Ներսէսի կատարել զկամս իւր իսկոյն, փութայ ի գաւառն Մեծիրանց և գործակից իւր գտեալ զԶաքարիա վանաց հայր՝ տայ նմա խորհուրդ առնել զնա եպիսկոպոս և շնորհեալ նմա զտէրունի հասն, միայն եթէ տացէ զնորին ձեռնարկն՝ զի այրեսցէ: (294 / 1) Ու նորա տուեալ զսուրբ ուխտին գիրն ի նա. առ և անդէն ի տեղւոջն հրկիզեաց. և զԶաքարիա ձեռնադրեաց եպիսկոպոս Մեծիրանց. և ի կարևոր բարեկամութիւն զնա ընկալեալ՝ դարձաւ ի հին փսխածն, զոր ի ժամանակաց սպասէր: (294 /4; 294 /4; 294 /5; 294 /6; 294 /6) Տիկնոջն Սպրամայ զնա ստիպեալ նորին օգնութեամբ և այլոց նախարարաց, որոց զորումն էր ընկալեալ, քակեալ աւերեաց զբազում սեղանս եկեղեցեաց, որում յաղթողն եղև. և զարժանաժառանգ մանկունս եկեղեցւոյ զուղղափառս հալածեալ տարաբնակ արար նախ՝ զերանելին Իսրայէլ նշանագործ եպիսկոպոսն Մեծ Կողմանց հալածեաց, որ զբազում աշխարհս Խազրաց և Հոնաց դարձոյց ի քրիստոնէութիւն, ընդ նմին և զԵղիազար Գարդմանայ եպիսկոպոս: (294/11) Իսկ ոմանք յեպիսկոպոսաց նշկահեցին ի նմանէ՝ Յովհաննէս Կապաղակայ եպիսկոպոս, Սահակ Ամարասայ եպիսկոպոս, Սիմէոն Հոշոյ եպիսկոպոս, Շերոյ՝ մեծ իշխանն Աղուանից հանդերձ իւր ազատօքն, և բազմութեամբ ուխտից եկեղեցւոյ գումարեալ հանդէս ժողովոյ՝ նզովեցին զՆերսէս ընդ ամենայն հերձուածողս և գրեցին ի Հայս զանցս աղետից: (294 /12; 294 /16) «Տեառն Եղիայի Հայոց կաթողիկոսի ի միաբան ժողովոյս Աղուանից երկրպագութիւն: (295 / 3) Վասն զի զնի հաւատ ունող հարքն մեր ընդ հարսն ձեր զմիմեանց հոգային զհոգւոցն փրկութիւն, և ի ներել Տեառն Աստուծոյ՝ զօրացեալ տիեզերակործան զեղխ կրօնն Քաղկեդոնի, որ ելից զտիեզերս. և մեր կողմանքս մինչև ցայսօր ժամանակի անխառն յայնմ աղանդոյ էր մնացեալ: (295 / 5) Ողջ լերուք ի Տէր»: (295 / 10) ԹՈՒՂԹ ԵՂԻԱՅԻ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՌ ԱԲԴԼՄԵԼԻՔ ԱՄԻՐՄՈՄՆԻ ՒՆՈՅՆ ԽՈՐՀՈՒՐԴ (295 / 13) Իսկ այժմ որ Աղուանիցն է կաթողիկոս նստեալ ի Պարտաւ, խորհուրդ արարեալ ընդ կայսրն Յունաց՝ զնա քարոզէ յաղօթս և զաշխարհս ստիպէ, զի ի հաւատ և ի միաբանութիւն նմա եկեսցեն: (295 /17; 296 /1; 296 /1) «Զառնդ Աստուծոյ զԵղիայի զԱրմենեան ազգի ջաթլկիդ կարդացի զգիր մտերմութեան, և ի շնորհս քեզ առաքեցի զծառայ իմ հաւատարիմ բազում զօրօք: (296 / 9) Եւ վասն ապստամբացն Աղուանից ի մերմէ տէրութենէս հրամայեալ եմք ըստ քո կրօնիցդ առնել առ նոսա ուղղութիւնս, և զմեր պատուհասդ քո առաջի ի Պարտաւ արասցէ ծառայդ մեր. զՆերսէս և զկինն համախոհ նմին ի շղթայս երկաթիս հարեալ՝ անարգանօք ածցէ ի դուռն արքունի, զի ի տեսիլ ամենայն ապստամբացն նշաւակս զնոսա արարից»: (296 /10; 296 /11; 296 /12; 296/12; 296 /13) ԳԱԼՆ ԵՂԻԱՅԻ՝ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ Ի ՊԱՐՏԱՒ ԵՒ ՊԱՏԺԵԼ ԶՆԵՐՍԷՍ, ԵՒ Ի ՏԵՂԻ ՆՈՐԻՆ ՆՍՏՈՒՑԱՆԵԼ ԶՍԻՄԷՈՆ ՍԱՐԿԱՒԱԳԱՊԵՏՆ ԿԱՄՕՔ ԺՈՂՈՎՈՅՆ ԱՂՈՒԱՆԻՑ (296 /15; 296 /16) Եկեալ հասանէ մեծ հայրապետն Հայոց Եղիա ի մեծ քաղաքն Աղուանից՝ Պարտաւ, և նստեալ ի մեծ

եկեղեցւոջն՝ հրամայէ ածել զՆերսէս առաջի իւր. և նա ի թաքստի լեալ ոչ գտանիւր: (296 /18; 297 /1; 297 /1) Յայնժամ մեծահաւատն Շերոյ՝ Աղուանից իշխան, ըմբռնեալ զմօտակացս նորա՝ սաստէր ածել զՆերսէս. և կացուցեալ զնա ի մէջ բազմամբոխ ատենին առաջի Եղիայի: (297 / 3) Զի ոտն ընդ ոտն բաղազանեալ կապեցաւ ընդ կնոջն. և հանդերձեալ էր վարել ի տաք աշխարհ, որ սակս այնորիկ անսուաղ եղեալ զաւուրս ութ՝ վախճանեցաւ. և ետ թաղել զինքն նովին երկաթովք և նզովեաց զՇերոյ, զի նա եղև առաջնորդ չարի նորա և Սպրամայ, վասն հակաճառութեանն որ ընդ նա և ընդ Սպրամ ի վերայ իշխանութեանն: (297 /6; 297 /8) Եւ Ներսէս կալաւ զաթոռն ուղղափառութեամբ ամս ԺԴ և ի չարափառութեանն ամս Գ և կէս, նմանեալ Դերաքրիստոսի Նեռինն, որ հանդերձեալ է լինել ի յետին աւուրսն: (297 /9; 297 /11) Այսոցիկ այսպէս եղելոց՝ ընտրեցաւ ի նմին ժողովոյն Սիմէոն այր պարկեշտ և սուրբ և ձեռնադրեցին զնա ի հայրապետութիւն Աղուանից, որ զպղտորումն Ներսիսի եբարձ յաշխարհէն, և բազում կարգս ուղղութեան աւանդեաց եկեղեցւոյ վրիպելոյ. և զեղկելոյն Ներսիսի գրեանն, զորս լցեալ էր յարկեղս լի հերձուածովք, առեալ զամենայն ետ ի գետն Տրտու յիւր հովոյ տեղւոջն, որ Բերդակուրն կոչի. կացեալ յաթոռն ամ մի և կէս: (297 /12; 297 /13; 297 /15) ՁԵՌՆԱՐԿ, ՁՈՐ ԽՆԴՐԵԱՑ ԵՂԻԱ՝ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ Ի ԺՈՂՈՎՈՑՆ ԱՂՈՒԱՆԻՑ ՎԱՍՆ ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆ ԵԻ ՈՒԽՏԻ ՀԱՍՏԱՏՈՒԹԵԱՆ ՀԱՅՈՑ ԵԻ ԱՂՈՒԱՆԻՑ (298 / 3) Քանզի բազում և ազգի ազգի չարութեամբ, որպէս սովորն է յամենայն ժամ բարիատեաց թշնամին մեր և հասարակաց փրկութեան հակառակորդն՝ սատանայ, որսալ զպարզամիտս ի մարդկանէ և ընդդէմ մրցել մանկանց եկեղեցւոյ ըստ իւրում բնածին բարուցն, հնարել և յղտրեալսն կամեցեալ, ըստ բանին՝ «եթէ ոսոխն մեր սատանայ իբրև զառիւծ գոչէ և շրջի, եթէ զո՞ կլանիցէ», քանզի նոյն չարութիւն ապստամբին ի սկզբանն արտասահմանեաց զնախաստեղծ հայրն մեր զմեզ ի կենաց փայտէն և յանուշակ ի հեշտալի փափկութեան դրախտէն: (298 /7; 298 /9; 298 /10; 298 / 10) Եւ սատանայ ի սկզբանէ մեղանչէ՝ մանաւանդ ի թոյլ և յողդողդ խորհուրդս դիւրամոլար անմիտ մարդոց, որոց կուրացեալ են միտք ըստ ծամանակաց չարութեամբ գնացելոց, զի միթ ծագեսցէ առ նոսա լոյս փառացն Քրիստոսի: (298 /11; 298 /11) Զի որովք զրկեցաւ բանսարկուն սկզբնատիպ չարութեամբն ի մոլար խաբէութենէ կռոցն երկրպագութեան, շահել կամեցաւ այժմ զնոյն ի ձեռն անիմաստ մարդոց պառակտողաց զեկեղեցի Աստուծոյ նորաձայնութեամբ և ձևով անսրբով՝ զշահս և զգլուխս: (298 /14; 298 / 15) Սակս որոյ և ի միջի մերում երևեալ այժմ չարարմատ դառնութեան աղանդոյն Նեստորի և Մաքսիմոսի ի ձեռն Ներսէսի ամբարշտեցելոյ, որ ներողութեամբն Հոգւոյն Սրբոյ կարգեցաւ յառաջնորդութիւն տանս Աղուանից, և խորամանկութեամբն եղև հաւատակորոյս և մոլորեցուցիչ հոգւոց մերոց: (298 /17; 298 /18) Վասն զի զփրկական աւանդութիւնն առաքելաքարոզ հարցն մերոց՝ որ անարատ ձեռօք հաստատեալ էին յեկեղեցիս՝ անարժան ձեռօք ի բաց կործանեաց. և զբարենախանձ եպիսկոպոսունս ուղղափառութեան հաւատոյն և զաւանդապահս քայքայեաց. զոմանս բամբասանօք հալածեաց յօտար երկիր, զոմանս տրտմութեամբ լցեալ վտանգեաց. զպատուական աթոռոսն քակտեաց. և զբանակս ճգնաւորական կրօնաւորացն այլայլեալ շփոթեաց. յորմէ ցրուեալ եղեն Քրիստոսի սուրբ մարմնոյ պատուական անդամք. և որդիք Սիոնի

բովանդակ մոլորեցան խաբէութեամբ. և տաճար սրբութեան մերոյ եղև յապականութիւն՝ ըստ ողբերգութեան Երեմիայի. «Բարձան փառք սրբութեան մերոյ, և ի չորեքեզերեան տիեզերս պարծանք պարծանաց մերոց շիջեալ կործանեցաւ»: (299 /3; 299 /10) Այլ սակայն յայսմ վայրի օրհնութիւն և գոհութիւն եղիցի Փրկչին մերոյ Աստուծոյ, որ ոչ ետ թոյլ թշնամւոյն մարդկան յառաջել ի սպառ: (299 / 13) Եւ գթացեալ ի տկարութիւնս մեր և ողորմեալ ժողովրդեան իւրում առաքեաց առ մեզ զպատուական հայր զԵղիա շնորհիւն Աստուծոյ Հայոց կաթողիկոս, զայր սուրբ և ճշմարիտ՝ զուգաթոռ սրբոյն Գրիգորի, ձերովք եպիսկոպոսօք և վարդապետօք՝ Սիմէոն Խոռխոռունեաց եպիսկոպոս, Սարգիս Ամատունեաց եպիսկոպոս, Սարգիս Ռոստակայ եպիսկոպոս, Յովհաննէս վարդապետ և այլ բազում աշակերտօք ձերովք եկիք հասիք ի մայրաքաղաքս մեր՝ Պարտաւ, և ձերով քաղցրուսոյց վարդապետութեամբ բարձէք զչարն ի միջոյ մերմէ. և յիշելով զառաջնոց հարցն մերոց զաւանդութիւնս՝ վերանորոգեցէք զաթոռ հայրապետութեանս մերոյ ի ձեռն սրբասնեալ առն, որոյ մեք եմք վկայք ճշմարտութեանն: (299 /13; 300 /1; 300 /2; 300 /3) Այլև քրիստոսասէր ամենագով ազատք՝ Աստուածապահ Շերոյ պատրիկ և Աղուանց իշխան, իշխան Ջուանքո պատրիկ՝ Աղուանից սպարապետ, Վարդան պատրիկ և նորին եղբայր տէր Գագիկ, Բաբ ի Հրահատեան, Վախտանգ ի Վարազմանեան, Պատրիկ ի Քարոյեան յազգէ թագաւորաց, Վահան ի Վարագ Յոհաննեան, Թէոդորոս յԱնաստասեան, Ռոստոմ ի Վարազ Աքոյեան, Ջարմիհր ի Վարազ Քուրդաքեան յազգէ թագաւորաց, Մահմատ ի Շերոյեան և այլ ամենայն ազատք աշխարհիս օրհնեցան և ընկալաք միաբանութեամբ հոգևորաց և մարմնաւորաց զառաքելական հաւատն մեր, որ նախ ի սրբոյն Եղիշայէ հիմնադրեալ և ապա ի սրբոյն Գրիգորիսէ հաստատեալ, որ ցայժմ ոչ էր ստերիւրեալ: (300 /11; 300 /12; 300 /12; 300 /13; 300 /13; 300 /14; 300 /14; 300 /16; 300 / 6) Եւ ի հասանել փորձանացս՝ հասոյց Աստուած զօգնութիւն իւր ի ձեռն փոխանորդիդ սրբոյն Գրիգորի, որոյ ուղղափառութեանդ եղաք աշակերտք և եղիցուք տեառնդ Եղիայի Հայոց կաթողիկոսի, որ եղեր վրէժխնդիր թշնամւոյն արդարութեան: (300 /17; 301 /1) Եւ զնոյն կանոնս առաջի Աստուծոյ և ձեր սրբութեանդ պայմանեցաք, զի յայսմհետէ մի ոք իշխեսցէ ի մէնջ արտաքս ելանել յաւանդութենէ հարցն մերոց և ձերոց: (301 / 9) Եւ եթէ յանդուգն ոք գտցի, որ վերստին զնորաձևութիւն բերցէ ի մէջ՝ այնպիսիքն նզովեալ եղիցին ի սրբոյ երրորդութենէն և ի մերմէ միաբանութենէս, և ի շնորհաց հոգւոյն անմասն եղիցին և խոստացեալ արքայութեանն մի հասցեն: (301 /10; 301 /11; 301 /11; 301 /11) Եւ եթէ յեպիսկոպոսաց ոք իցէ, լուծեալ լիցի ի պատուոյն և ի բարձրութենէ աթոռոյն անկցի. և եթէ ի քահանայից իցէ, զնոյնս կրեսցէ և եթէ ի կրօնաւորաց ոք իցէ, նզովեալ հալածեսցի, և եթէ յազատաց ոք իցէ, արգելեալ յեկեղեցւոյ, յընկերս միւթ խառնեսցի մինչև ի կարգ ուղղութեան եկեսցէ: (301 /13; 301 /13; 301 /13; 301 /14; 301 /15) Նոյնպէս և վասն ձեռնադրութեան կաթողիկոսացս Աղուանից այսպէս կանոնեցաք. քանզի ի սուղ ինչ ժամանակ կաթողիկոսքս մեր զկարգն յեպիսկոպոսացս մերոց առին, իսկ այժմ զի անփորձ և անընտրող գործով եղև և հերձուածեցաւ աշխարհս, վասն այդորիկ պայմանեցաք առաջի Աստուծոյ և ձերոյ հայրութեանդ, եթէ ձեռնադրութիւն հայրապետութեանս Աղուանից ի սուրբ

Գրիգորի աթոռոյն լիցի՝ միաբանութեամբ աշխարհիս՝ որպէս և էրն *ի* սրբոյն Գրիգորայ անտի, զի անդ ընկալաք զլուսաւորութիւն. և ճշմարտութեամբ գիտեմք, թէ զոր դուք ընտրէք, հաճոյ Աստուծոյ է և մեզ: (302 /2; 302 /5; 302 / 6) Արդ՝ որք երկիւղիւն Աստուծոյ մերոյ սահմանադրութեանս կատարիչք լինին, *ի* սրբոյ երրորդութենէ օրհնեալք լիցին և յամենայն ծառայից Աստուծոյ ուղղափառաց. իսկ եթէ ոք ընդդիմացեալ թիւրեսցի *ի* ճշմարտութենէ աստի, ինքն տացէ Աստուծոյ պատասխանի՝ ոյք և իցեն: (302 /10; 302 /12) «Գրեցաւ գիրս այս միաբանութեամբ և Աստուծոյ միջնորդութեամբ վասն հաստատութեան հաւատոյ անշարժ լինելոյ *ի մէջ* երկոցունցս: (302 / 15) ՁԵ երորդ ամին Տաճկաց և *ի* հայ թուականիս ՃԽԸ յամսեանն հրոտից: (302 / 16) «Զշարժումն չարափառին Ներսիսի, որ յԱղուանս էր, սակս հաւատոյ. և զներկումն երկաբնակ աղանդոյն Քաղկեդոնի *ի* բազմաց սերմանեալ յոգիս, և խորամանկ չարութեամբն իւրով վտանգեալ զեպիսկոպոսունս, զքահանայս և զկրօնաւորս. վասն որոյ զգացեալ իմ Եղիայի՝ Հայոց կաթողիկոսի, եկի հանդերձ իմովք եպիսկոպոսօք յԱղուանս *ի* գերահռչակ քաղաքդ Պարտաւ: (303 / 4; 303 / 6) Եւ ժողովեցան առ իս հոգևորք և մարմնաւորք, և ցուցին ինձ զայն գիր, որ յառաջ նզովեալ և *ի բաց* ընկեցեալ էր զՆերսէս *ի* յԱղուանից կաթողիկոսութենէն: (303 /8; 303 /8) Թէպէտ և նա բռնակալութեամբ կացեալ էր յաթոռն, սակայն նոյն եպիսկոպոսունքն և բովանդակ ուխտ եկեղեցւոյ վերստին նզովեցին գրով և կնքով, Աստուծոյ միջնորդութեամբ և մեօք հանդերձ և պայմանեցին, եթէ կամք *ի* նոյն հաստատութեանս և ոչ խառնիմք *ի* պիղծ աղանդն Քաղկեդոնի և ընդ չար վարդապետութիւնն Բակուրայ: (303 /11; 303 /12) Արդ՝ եթէ կան *ի* նոյն պայմանի և յաւանդութեան սուրբ հարցն, ընկալարուք զդոսա և սիրեցէք որպէս զհոգևոր տեսուչս ձեր. ապա եթէ թիւրեսցի ոք յայսմ պայմանէս, կաթողիկոս կամ եպիսկոպոս, չունի իշխանութիւն *ի* ձեր *վերայ.* այլ կալ ձեզ յեկեղեցիս ձեր և հանապազ անդադար աղօթս մատուցանել առ Աստուած. *ի* ձեր *վերայ* իշխան Աստուած լիցի և ուղղափառ վարդապետք: (303 /13; 303 /15; 303 /16) Ես Եղիայ՝ Հայոց կաթողիկոս հանդերձ իմովք եպիսկոպոսօքս առի զմիաւորութեան գիրդ *ի* ժողովոյդ Աղուանից, և ետու զայս պայմանի գիր ձեզ. զի միթ ոք յանդգնեսցի թիւրել ինչ զեղեալ ուխտադրութիւնդ: (303 / 20) Եւ զերկոսեան նամակսդ կնքեալ իմով մատանեաւ ետու *ի* պահեստի Ներսմերհի ուխտի *ի ձեռն* սրբասիրի Քշկայ հօր՝ պայման անհոգութեան»: (304 / 2; 304 / 2) ԳԻՐ ԱՆՈՒԱՆՑ ՆԱԽԱՐԱՐԱՑ ԱՂՈՒԱՆԻՑ ԸՍՏ ՆԱԽԱԴԱՍՈՒԹԵԱՆՆ ԶՈՐ ՆԵՐՔԻՆԻՆ ԱԲԴԼՄԷԼԻՔ ԱՄԻՐՄՈՄՆԻ ՏԱՐԱԻ ԵԻ ԵԴ *Ի* ԴԻՒԱՆԻ ԱՐՔՈՒՆԻ (304 /6) Զայս սուրբ հաւատոյ խոստովանութիւն, զոր խնդրեցաք *ի* ժողովոյն Պարտաւայ գրով ծանուցանել մեզ զճշմարտութիւնն, զերկեկի հերիւեսութեանցն դաւող բանս, և զհոգեզուարճ վարդապետացն զընդդիմակսն և նոյնժամայն իմացաք զստոյգն. նախ՝ ես Շերոյ Աղուանից իշխան և Ջուանքոյ Աղուանից սպարապետ, Վարդան պատրիկ և նորին եղբայր Գագիկ, Վախտանգ *ի* Վարազմանեան և նախնի է սոցա քաջն Վարդան *ի* Միհրական տոհմէն, որ յաւուրս Վաչագանայ Աղուանից արքայի յԱղուէն ժողովոյն յարքայէն նախագահ եղեալ՝ բնաւորեցաւ *ի* Գարդման, Պատրիկ *ի* Քարոյեան՝ յարքայիցն զարմից, որք *ի* նորին հրամանէ Վաչագանայ արքայի բնակեցան յԱղբերդ գաւառի և սորա նախնիք՝ քաջն Վաչագան և Վաչէ և որք ըստ կարգի

կան *ի* գրիդ, Բաբ *ի* Հրահատեան, որք յԱտրպատականու իշխանացն են՝ բնաւորեալք *ի* Կապաղակ և *ի* Կողթ. Վահան *ի* Վարազ Յոհաննեան *ի* Մադիամացւոցն զարմից՝ յակոբիկ հաւատով, որք եկեալ *ի* Կամբիճան բնակեցան. Ռոստոմ *ի* Վարազ Աքոյեան, որք *ի* Ստահր գաւառէ Պարսից բնակեցան յՈւտի գաւառի յաւանին Կաղանկատուաց. Զարմիհր *ի* Վարազ Քուրդակեան, և Մահմատ *ի* Շերոյեան՝ Դղմանցն տեարցն որդիք. սոքա բնակեալ էին *ի* Դղմահողսն արքայատուր Աղուանից աշխարհիս: (304 /7; 304 /11; 304 /11; 304 /13; 304 /13; 304 /14; 304 /15; 304 /15; 304 /16; 304 /16; 304 /16; 304 /17; 305 /1; 305 /1; 305 /1; 305 /2; 305 /3; 305 /3) Այսք ամենեքեան որ գրեցան *ի* դիւանին Աբդլմէլքի ամիրմոմնւոյ սակս այսորիկ, եթէ ոք *ի* սոցանէ գտանիցի երկաբնակ եղեալ՝ սրով և գերութեամբ սպառեսցի: (305 /4; 305 /5) Այս կանոնադրութիւն եդաւ *ի* Սիմէոնէ Աղուանից կաթողիկոսէ, յորժամ նստաւ յաթոռն *ի* ժողովումն, որ վասն անիծելոյն Ներսիսի եղև, զի զկարգս եկեղեցւոյ այլայլեաց. վասն որոյ հարկ եղև վերստին առնել ուղղութիւն: (305 /11; 305 /11) Զի կամեցաւ գթալ *ի* մեզ քաղցրութեամբն իւրով բարերար և մարդասէր ամենակալն Աստուած ըստ մեծի ողորմութեանն իւրում և վասն բազում սիրոյն իւրոյ կարգեաց զմեզ հովիւս, տեսուչս և առաջնորդս բանաւոր հօտի իւրոյ, որ է սուրբ և առաքելական եկեղեցի. և շնորհեալ մեզ Քրիստոսի՝ զայս աստուածային և զմեծ պատիւս, ոչ յաղագս մերոյ ինչ բարեգործութեան և արժանաւոր լինելոյ, այլ ըստ բազում ողորմութեան իւրում կամեցաւ ինքն և պարգեւեաց մեզ շնորհիւն իւրով: (305 / 14) Ըստ նմին օրինակի և *ի ձեռն* այլոց մարգարէից և զմեզ զգուշացուցանէ տէրն՝ որդի մարդոյ. «Դէտ կացուցի զքեզ *ի վերայ* ժողովրդեան իմոյ. զգուշացուցէք նոցա պատգամս որպէս յինէն՝ դառնալ մեղաւորին և անօրինին *ի* չար ճանապարհէ իւրմէ և կեալ: (306 /8; 306 /9; 306 /10) Եւ եթէ ոչ զգուշացուցանիցէք զարիւն նոցա *ի* ձեռաց ձերոց խնդրեցից»: (306 / 11) Զայս ահագին և սոսկալի պատուէր ունիմք *ի* տեառնէ, այլ և զայս. եթէ «Ետու ձեզ իշխանութիւն թողուլ զմեղս և արձակել *ի* կապանաց մեղաց զմարդիկ»: (306 /12; 306 /13) Վասն որոյ սիրելիք և եղբարք իմ պատուականք և ընտիր աշակերտք Քրիստոսի և ճշմարիտ ծառայք պատուիրանաց նորա, պարտ և արժան է մեզ պտղաբերել Աստուծոյ պտուղ բարի և քաղցր *ի* հաճոյս նորա և շինել *ի վերայ* հիմանն առաքելական, որ է Յիսուս Քրիստոսի՝ ոսկի, արծաթ, ականս պատուականս, այսինքն՝ զզանազան առաքինութիւնս և զամենայն գործս բարիս, զի յերևել Փրկչին մերոյ Աստուծոյ՝ ընդունիցիմք զանթառամ փառաց պսակն: (306 /19; 307 /1) Արդ ընտրեսցուք զբարին և մերժեալ անարգեսցուք զչարն շնորհիւ սուրբ հոգւոյն և պատուիրանօք նորա, որպէս հրամայեաց մեզ տէր և ձեռն մարգարէից և առաքելոց և վարդապետաց. նախ սիրել զԱստուած *ի* բոլոր սրտէ և պահել զպատուիրանս նորա. զընկալեալ *ի* ճշմարիտ և յաստուածարեալ հարցն մերոց՝ անշարժ և հաստատուն ունել. նոյնպէս զեկեղեցւոյ սրբոյ կարգս անխափան պահել, *ի ձեռն* անարատ քահանայից և սպասաւորաց պայծառացուցանել, զմիմեանս որպէս զանձն սիրել. և միաբանութեամբ կրօնաւորել ըստ կանոնական հրամանի, և միթ թողացուցանել և ոչ տալ անարժանից և զինուորական մարդկան զեկեղեցւոյ ունել իշխանութիւն. միթ պոռնկորդեաց, միթ շնացելոց, միթ սպանողաց, միթ գողոց, միթ ստոց և սուտերդմանց, միթ զրկողաց և չարակն ագահից, միթ

զօշաքաղաց և միք ամենևին զինուոր մարդկան հեծելոց և մաքսապետաց միք ոք իշխեսցէ տալ զեկեղեցւոյ իշխանութիւն և միք զհարցն և զհասն տալ այնպիսեացն. զի աստուածային օրինօքն, զոր մատուցանէին ժողովուրդն ի տան Աստուծոյ վասն մեղաց՝ զայն քահանայքն, անարատք մատուցանողք և սպասաւորք սեղանւոյն՝ վայելէին. զի նոցա է հասն և խնդրել յԱստուծոյ զտիւ և զգիշեր զքաղցրութիւն և զհաշտութիւն վասն աշխարհի, զթողութիւն մեղաց և զառողջութիւն հոգւոց և մարմնոց. և ոչ անարժանից կամ զինուորաց հրամայեալ է ունել զիշխանութիւն եկեղեցւոյ և շարժել զբարկութիւն ի վերայ աշխարհի և անձանց իւրեանց: (307 /6; 307 /7; 307 /8; 307 /15; 307 /19) Զի տէրն փառաց յորժամ պատուիրէր Մովսիսի յաղագս խորանին՝ ասէր. «Զքահանայս սուրբս և անարատս ընտրեսցես յազգէն Ղևտայ, և միք այլ ազգացն Իսրայելի զինուոր կամ անարժան յանցաւոր ոք կամ արատաւոր». որպէս օրէնքն իսկ ասեն. «Թէ միք իշխեսցեն անարժանքն կալ առաջի սեղանոյ իմոյ և միք ի հասիցն իշխեսցեն ուտել»: (308/4) Այլ և քահանայքն, որ անարժան վարուք իցեն՝ մերժեալ հեռասցին ի ժառանգութենէն. և թէ սովորական ժողովուրդն ամենևին միք մերձեսցին՝ միք ի պաշտօն, միք ի կարգ և միք ի տեղի քահանայիցն. և որ ոք յանդգնեսցի, պատուհասեալ սատակեսցի՝ որպէս Կորխն, Դաղան և Աբիրոն, որք խորասոյզ եղեն, կամ նոյն ինքն Ոզիա, նոյնպէս և այլք բազումք, որք քան զկարգ իւրեանց յանդգնեցան պաշտել զԱստուած: (308 /5; 308 /6; 308 /6; 308 /6) Ըստ որում և երջանիկ հարցն մերոց հաստատեալ է. «Թէ միք ումեք լիցի իշխանութիւն զեկեղեցի Աստուծոյ ընձեռել անարժանից և զինուորաց, կամ վաճառել որպէս զստացուած, կամ իշխանաց տալ, կամ նոցին դայեկաց ի պարգև: (308 / 16) Նոյնպէս և քահանայք միք իշխեսցեն զհասն կամ զհացն տալ եղբարց և որդւոց անարժանից, և միք վաճառել իշխեսցեն զժառանգութիւն եկեղեցւոյն. այլ թէ՝ քահանայքն ևի եղբարքն և որդիքն նոցա յանարժանութեան գտցին՝ մերժեալ լիցին ի ժառանգութենէն. և որք յանդգնինն, նզովեալ լիցին»: (308 / 19) Զայդ հրաման ունիմք մեք յԱստուծոյ և ի նորին պատուիրանացն, և ոչ է պարտ Աստուծոյ հակառակ լինել: (309 /1) Զի հակառակ Աստուծոյ պատուիրանացն է և կորուստ հոգւոյ և մարմնոյ՝ զազատութիւն եկեղեցւոյ ի ձեռն անարժանից մատնել: (309 / 8) Վասն որոյ լսեմ ի բազմաց տրտնջելոյ, թէ ի յոլով տեղիս զեկեղեցիս Աստուծոյ վանականութեամբ զինուոր մարդիկ ունին, որք սակս չար գործոց իւրեանց չեն արժանի մտանել յեկեղեցի, թող թէ զեկեղեցականն ուտել զհասն կամ զհացն: (309 /8; 309 /9) Վասն որոյ և սրբասնեալ Քշիկայ Ներսմիհրի՝ հայր վանից տանուտեառն գրեալ է, թէ Վարազ Տրդատայ՝ Աղուանից իշխանի, տուեալ է գեղիկ փոքրիկ Սրբոյ Խաչիս ի սպասաւորութիւն սակս հոգւոյն մասին: (309 / 13) Արդ այժմ ի Փուսան Վեհ անուն հեծելակ, աշխարհավար, կեցեալ անառակութեամբ, գրածս բերէ յառաջ, թէ ինձ տուեալ է զեկեղեցիդ Աղուանից իշխանի վանականութեամբ վասն դայեկութեան իմոյ. վասն այդորիկ, սիրելիք, այս իրաւունք կացցեն յայսմհետէ և առ յապա, և միք լիցի ունել Փուսանու Վեհին այն զայն եկեղեցին ըստ սուրբ հոգւոյն հրամանի. այլ անբիծ և անարատ քահանայքն իշխեսցեն յեկեղեցւոյ վերայ, զի իշխանութիւն ոչ ունի նա յԱստուծոյ և ոչ ի մէնջ: (309 /14; 309 /19) Արդ՝ ես Սիմէոն շնորհիւն Աստուծոյ Աղուանից կաթողիկոս ըստ աստուածային պատուիրանացն և կանոնացն այսպէս հրամայեցի, զի զիրաւունս եկեղեցւոյ Աստուծոյ

քահանայք կալցեն ճշմարիտք և ուղղափառք, որք զեղկելոյն Ներսիսի ոչ ընկալան աղանդս և միթ լիցի զինուորաց և աշխարհականաց յեկեղեցւոյ վերայ ունել իշխանութիւն, և միթ *ի* շնորհէն առնուլ բռնութեամբ. և եթէ յանդգնի ոք, յԱստուծոյ և *ի* մէնջ ընդ պատուհասիւ եղիցի: (310 /5; 310 /5) Արդ պատուիրեմ ամենեցուն՝ զգոյշ կացէք պատուիրանացն Աստուծոյ և զոհութիւն անսպառ մատուսջիք ողորմածին Աստուծոյ, որ խնդրեաց զվրէժ երկաբնակութեան Ներսիսի պղծոյն և զչար որոմն նորա եբարձ *ի* մէնջ՝ տնկելով զխաղաղութեան արմատ *ի մէջ* եկեղեցւոյ սրբոյ իւրոյ: (310 21; 311 /1) ՀԱՐԿԱՊԱՀԱՆՋԵԼՆ ՎԱՐԱԶ ՏՐԴԱՏԱՅ՝ ԱՂՈՒԱՆԻՑ ԻՇԽԱՆԻ ԵՒ ԵՐԹՆ *Ի* ՅՈՅՆՍ, ՏԱԼ ՊԱՏԱՆԴ ԶՈՐԴԻՍՆ ԻՒՐ ԵՒ ԳԱԼ ՅԱՇԽԱՐՀ ԻՒՐ, ԵՒ ՄԻՔԱՅԵԼԻ ՓՈԽԱՆՈՐԴԵԼ ԶԱԹՈՌՆ ԱՂՈՒԱՆԻՑ ԶԿՆԻ ՍԻՄԷՈՆԻ (311 / 7) Ընդ նուազել *ի սպառ* թագաւորութեանն Պարսից և զօրանալ ազգին հարաւային Տաճկաց՝ սաստկանային սակք հարկահանաց աշխարհի, առաւել կողմանցս արևելից. զի իշխանն Աղուանից՝ Վարազ Տրդատ ընդ երիցս հարկէր՝ Խազրաց, Տաճկաց և Հոռոմոց: (311 /10) Իսկ խստագոյն նեղութիւն *ի* Հոռվմայեցւոցն հասեալ նմա հանդիպիւր. զի հանդերձ որդւովք իւրովք յարքայաբնակ քաղաքի անդ արգելեալ լինէր *ի* կայսերէն. և տուեալ *ի* պատանդ զորդիսն՝ և ինքն իշխանն խօթացեալ մնայր: (311 /13; 311 /14; 311 / 14) Եւ *ի* յերկարելն Վարազ Տրդատայ *ի* միում աւուր եղև թագաւորին Հոռվմայեցւոց ընտրել ակունս պատուականս, և կոչեալ զիշխանն Աղուանից՝ ցուցանէր նմա. և նորա խորամանկեալ ասէ. «*Ի* տան իմում պատուականագոյնք գտանին քան զայդոսիկ, տաց զայնս ձերոյդ աստուածապսակեալ անձինդ, զի վայել է իսկ ձեզ»: (311 /17; 311 /18; 312 /2) Եւ այն ամ հինգ էր իշխանին կալն *ի* Հոռոմս: (312 / 4) Եւ վասն այսր իրի զերծեալ Աստուծոյ օգնականութեամբն՝ եկն եհաս յաշխարհն իւր, և յայնմհետէ ետ զաշխարհս արևելից *ի* Տաճիկս, և նոցա միայն հարկէր: (312 / 5) Եւ եղև *ի* նմին աւուրս Վարազ Տրդատայ սով անտանելի յԱղուանից սահմանս. վասն որոյ առասպելաբանիւր յոմանց եթէ. «Ես կորեակ *ի* Շակաշէն գաւառի ծածկեալ կայի *ի* վայրին Կակուայ, և զանց առնէին զինև բազմութիւնք գնողաց և ոչ գնէին զիս. եկն ժամ բարի, որ եղբայրն իմ Սով տիրանայր. և ահա գտայ ես ելեալ *ի* սեղանն Վարազ Տրդատայ իշխանի և Եղիազարու կաթողիկոսի: (312 /7; 312 /8; 312 /8; 312 /10) Իսկ Վարազ Տրդատայ՝ Աղուանից իշխանի որդիքն՝ Գագիկ և Վարդան, որք *ի* Յոյնս էին պատանդք, վասն խռովութեան թագաւորին կացին *ի* մթին տան ընդ երկրաւ զամս ԺԲ և պատճառք հօր նոցա զաշխարհս արևելից *ի* Տաճիկս տալն եղև: (312 /13; 312 /14; 312 / 15) Եւ *ի* վախճանելն Յուստիանոսի Հոռոմոց թագաւորի, Վարդան Փիլիպիկոս թագաւորեաց, որ էր յազատացն Հայոց. և յիշեաց զորս *ի* խաւարային բերդին էին արգելեալ կենդանւոյն. և հրամայեաց թագաւորն հանել զնոսա յանտանելի տանջանացն, որոց տեսութեան աչացն խաւար էր ծածկեալ: (312 /15; 312 /17) Ապա առ փոքր փոքր աճեալ *ի* լոյս՝ ետ պարգևս թագաւորն և արձակեաց զնոսա յաշխարհին իւրեանց. շնորհեալ Գագկայ մասն *ի* կենսատու խաչէն՝ զլոյսն տիեզերաց: (312 /19; 313 /1) Եւ նորա եկեալ ետ զմեծ պարգևն ցՄիքայէլ՝ Աղուանից կաթողիկոս. և կանգնեցին նշան տէրունական, յորում կայ գիր այսպէս. «Քրիստոս Աստուած, յիշեա զկամաւոր չարչարանս քո *ի վերայ* սորա, որ վասն մերոյ փրկութեան. և ընկալ զնշանս զայս, զոր

ետուր երկիւղածաց քոց. և ներեա յանցանաց իմոց՝ Միքայէլի՝ Աղուանից կաթողիկոսի. և ողորմեա Աղուանից աշխարհիս՝ փրկելով յամենայն փորձութեանց, զի յաւուր գալստեան քո արժանի լիցուք կալ ընդ աջմէ քումմէ: (313 / 3) Եւ գումարեալ զնոսա ամենեսին ի Շամքոր ի Բերդոյ վանս՝ միաբան ժողովով նզովեցին զտունն Վարազոյի. և ի նոյն ժամու հասանեն Տաճիկք և ի գոգ մօրն փողոտեն զորդի նորա սրով, և զմիւս որդին ձի տարեալ սպան: (314 /2; 314 /2; 314 /3; 314 /4) Եւ գրեցին թուղթ ժողովելքն առ Վրացն Թալիլէ. «Եթէ զի՞ յշխեցեր լուծանել զկանոնեալսն սուրբ առաքելոցն աշակերտաց, որք յԱնտիոք ժողովեալ տարագրեցին զՊօղոս Սամոստացին ի սուրբ եկեղեցւոյ և սահմանեցին տառս կանոնականս. «Թէ միթ ոք իշխեսցէ զազգայինս առնել կին. և սրբոյն Աթանասի կանոնական հրաման է, «եթէ չէ ամուսնութիւն, այլ պոռնկութիւն». և երանելւոյն Բարսղի վասն սորին գործոյ ասացեալ: (314 / 7)Մովսէս տօնս կարգեաց Իսրայէլացւոցն յեօթներորդում ամսեանն, որ է թշրին առաջին օրն՝ տօն փողոցն, տասներորդ օրն՝ տօն քաւութեան. հնգետասաներորդ օր՝ տօն տաղաւարահարացն, եօթնևտասներորդն՝ պապանձումն եղև Զաքարիայ մինչև ի քսաներկու նոյն թշրին ամսոյ: (314 / 19) Ապա գնաց ի տուն իւր, և յղացաւ Եղիսաբեթ կին նորա, որպէս Ղուկաս աւետարանիչն ասէ. «Եթէ թաքուցանէր զանձն ամիսս հինգ, և յամսեանն վեցերորդի առաքեցաւ Գաբրիէլ հրեշտակ յԱստուծոյ»: (315 / 1) Տեսաք զտոմարն և գտաք այսպէս. ի թշրին ամսոյ քսան և երկուսն լինի ըստ Հռոմին հոկտեմբեր ամսոյ ինն: (315 / 4) Արդ՝ ի տասնէն յառաջ սկսանիմք լնուլ զվեց ամիսն և լինի յապրիլի եօթանն, ըստ հրեշտակին, թէ այս վեցերորդ ամիս է նորա, Եբրայեցւոցն նիսանի ի տասն և եօթանն աւետիք կուսին: (315 / 5; 315 / 7) Անտի յառաջ մինչև ի հինգն յունուարի լինի ՄՀ օր, որ է ինն ամիս, և ծնունդն նորին Քրիստոսի: (315 / 8) Որպէս ոմն ի յաստուածազան վարդապետացն ասաց. «Երիս ծնունդս մեզ գիտէ բանն՝ զմին փչմամբ, զերկրորդն մարմնանալով և մկրտութեամբ, և մի ծնունդ թուէ և զերրորդն յարութեամբն: (315 / 11) Նոյնպէս Մարկոս հայրապետն Երուսաղէմի, որ մի էր ի Նիկիական հարցն, որ յիւրում խրատական թղթին գրեաց ի Հայս յաղագս մկրտութեանն, եթէ ի միում աւուր տօնեմք զծնունդն և զմկրտութիւնն: (315 / 14; 315 / 15; 315 / 15) Եւ զորօրինակ մահն և թաղումն անկատար է առանց յարութեանն. և որպէս յարութեան աւետարանն նախ զխաչն և զթաղումն յայտնէ և ապա ի վերայ ածէ զյարութիւնն, նոյնպէս և կատարէ զփրկութիւնն, զոր դարձեալ ասէ Աստուածաբանն. «Բայց այժմ Աստուծոյ յայտնութեանս տօն է, քանզի երևեցաւ Աստուած մարդ ծննդեամբ»: (315 / 18) Երուսաղէմայ եպիսկոպոսքն մինչև ցԿիւրէղ՝ ԽԲ եպիսկոպոսք, և յետ նոցա այլք տօն ծննդեան և յայտնութեան կատարէին ի յունուարի ամսոյ Զ ին մինչև ցՅոբնաղիոս, որ թուին լինել ամք ի յարութենէն ցՅոբնաղիոս չորեքհարիւր: (316 / 2; 316 / 3) Դարձեալ որ յընթերցուածին ասէ վասն Դաւթի և Յակոբու տօնին աւուրն, եթէ յայլ քաղաքս առնեն զծնունդն Քրիստոսի, որ է դեկտեմբերի քսան և հինգն. յայլ քաղաքս այսպէս ասեն, եթէ ի հեթանոսաց անտի հաւատացեալք էին, ոչ եթէ ի թլփատութենէն, և ի հեթանոսութեանն սովոր էին ծնունդ արեգականն կատարել այնմ աւուր, վասն այնորիկ ոչ հաւանէին թողուլ զտօնն: (316 /6; 316 /6; 316 /7) Իսկ որք թլփատութեան են, ամենայն ուրեք ի յունուարի վեցին կատարեն, որ և մեր նախնեացն աւանդեցաւ, նոյնպէս և ունիմք այժմ, որպէս ասէ, «Եթէ Օրէնքն ի Սիոնէ

այլ զբնութիւն նորա պատմեցից քեզ. շեղագնաց, թիւրընթաց …կենդանահալած ի ստուերս ի միջօրէի, կիսաբաժին յաւուրն ողջունի. (24 / 15)

ԿԻՍԱԳՈՒՆԴ - 2

Եւ եթէ զլուսին ածից քեզ յօրինակ, յոյժ ծիծաղելի է իմաստնոց. երկոտասան անգամ ի տարւոջն վիժած, ժանգահոծ, մանգաղաձև, կիսագունդ, խոնաւալից, կիսալոյս (24 / 7) Եւ ահ անկաւ ինձ մեծ և ահագին և բարձրագոյն քան զերկինս երկնից և խորագոյնս քան զներքին կիսագունդն: (18 / 2)

ԿԻՍԱԼՈՅՍ - 1

Եւ եթէ զլուսին ածից քեզ յօրինակ, յոյժ ծիծաղելի է իմաստնոց. երկոտասան անգամ ի տարւոջն վիժած, ժանգահոծ, մանգաղաձև, կիսագունդ, խոնաւալից, կիսալոյս (24 / 7)

ԿԻՍԱԿՏՈՒՐ - 1

ԿՐԿՆԱԿԻ ԵՐԹՆ ՋՈՒԱՆՇԻՐԻ ԱՌ ԲՌՆԱԿԱԼՆ ՀԱՐԱՒՈՅ ԵԻ ՕԳՆԵԼՆ ՅՈՒՆԱՑ ԻՄԱՍՏԱԲԱՐ ՕԺԱՆԴԱԿՈՒԹԵԱՄԲ ԵԻ ԿԻՍԱԿՏՈՒՐՋՀԱՐԿՍ ԱՌՆԵԼ (196 / 12)

ԿԻՍԱՄԱՀ - 1

և կարծեցեալ կիսամահ զնա արարեալ՝ զանխլաբար արտաքս ելանէր յիւր երթալով տուն (223 / 15)

ԿԻՍՕՐԵԱՅ - 1

և որդի նորին Ստեփաննոս կիսօրեայ վախճանեալ. (325 / 17)

ԿԻՏԻԱՑԻՔ - 2

Ի Կիտիացւոց որդիք Յաբեթի, իսկ որ ի կողմանս հիւսիսոյ են, ազգակից են Կիտիացւոցն, ուստի Աղուանք. և ազգք են, որ ի Հեղայս աշխարհի են յայնցանէ, որ յետոյ փոխեցան անդր, որպէս Այետացիքն: (5 / 1)

ԿԻՏ - 1

Եւ ի լնուլ կիտին եռօրեայ պահոցն, աբասուն Իսրայէլի առեալ բահ ի ձեռն և եղեալ համօրէն ծունր ամենեցուն դիտել ուղղորդաբար ի նկատեալ տեղին՝ հրամայէր անվեհեր բրել. (205 / 13)

ԿԻՏՐԻՍ - 1

Որդիք Յաւանայ՝ Եղիսա … Թարշիշ … և Կիտրիս (4 / 13)

ԿԻՐ - 1

ոչ կարացեալ յայսցանէ զմի ինչ ի գործ և ի կիր արկանել (254 / 5)

ԿԻՐԱԿԷ - 1

Կիրակէին տէր և ծառայ ի վսամ եկեղեցին երթիցեն յաղօթս և զյիշատակ յեկեղեցին արասցեն. (93 / 15)

ԿԻՐԹ - 2

Զոր իբրև տեսին բնակիչք քաղաքին զզօրավիգն առաքեալ հանդերձ յաղթանդամ և կիրթ պատերազմակցօքն, յոյժ զօրացն յանձինս իւրեանց. (138 / 11) կիրթ և յարավարժ ի խոկումն գրոց եղեալ (321 / 1)

ԿԻՐՃՍ - 3

Եւ ի *կիրճս* ճանապարհին երկաջոկեալ գունդն յերկուս բաժանելով նստէին գուպարս յայնմ տեղւոջ (98 / 21) Դիմեցին նոքա ի *կիրճս* ճանապարհաց երից աշխարհացն՝ Հայոց, Վրաց և Աղուանից: (170 / 5) մինչև յե՞րբ պնդեալ, կապեալ կայցեն *կիրճք* ճանապարհաց՝ յարգելուլ զշահս վաճառաց կողմանց կողմանց. (145 / 8)

ԿԻՑ - 1

ի *կից* գետոցն, զութ հարիւր վրան խաշնարածաց տարաւ (333 / 2)

ԿԻՒՂԱԴԷՍ - 1

Իսկ կղզիք՝ Սիկիլիա, Եւբիա, Ռոդոս, Քիոս, Ղեսբոս, Կիթերա, Զակինթոս, Կեփազենիա, Իթակէ, Կորկիրիա և *Կիւրադէս* (6 / 11)

ԿԻՒՐԱԿԷ - 3

լինէր օրն *կիւրակէ:* (339 / 11) Եւ յամենայն *կիւրակէի,* զաստուածեղէն խորհուրդն հանդերձեալ էին կատարել (64 / 5) և որ ի *կիւրակէի* գործ ինչ գործէ և յեկեղեցի չերթայ, երէցն պատուհաս արասցէ ժողովրդեամբն հանդերձ: (92 / 7)

ԿԻՒՐԻՈՆ, ԿԻՒՐՈՆ - 3

բաժանեցան Վիրք ի Հայոց միաբանութենէ ի ձեռն անիծելոյն *Կիւրիոնի.* (270 / 7) Զորոց ի շրջաբերական թղթին վասն *Կիւրիոնի* դիմադարձութեան Աբրահամ զամբաստանականս վասն նորա գրէ յազգ ամենայն (270 / 9) որում *Կիւրոն* կոչէին (274 / 11)

ԿԻՒՐԷՂ - 3

Երուսաղէմայ եպիսկոպոսքն մինչև *ցԿիւրէղ* ՚ԽԲ եպիսկոպոսք: (316 / 1) Զի որպէս *Կիւրղի,* որ յԵրուսաղէմ էր հայրապետ, գրութեամբ ի Կոստանդիանոս վասն երևման խաչին ասէ. (216 / 7) Եւ այսպէս հանգուցաք ի տեղիս և կարգեցաք զյիշատակ սոցա ըստ հրամանի *Կիւրղի* Երուսաղէմացւոյ (282 / 12)

ԿԻՒՐԷՂ ԵՐՈՒՍԱՂԷՄԱՑԻ Տե՛ս ԿԻՒՐԷՂ

ԿԻՒՐՈՆ - Տե՛ս ԿԻՒՐԻՈՆ

ԿԻՒՐՈՍ - 1

Իբրև լցաւ ժամանակ գերութեանն Երուսաղեմի, որ յաւուրս Փլաւոս Հերակլի քրիստոսասէր կայսերն, որպէս երբեմն եօթանասուն ամացն՝ յաւուրս *Կիւրոսի* պարսկի, այց արար Աստուած յանդիմանել զսէգ թագաւորն Պարսից՝ զմեծն Խոսրով (128 / 13)

ԿԼԱՆԵՄ - 2

Ո՞չ ապաքէն սպառեաց և *եկուլ* որպէս ծով զընտիր ընտիր ընկերս մեր՝ զառաջնորդս աշխարհաց. (145 / 11) «եթէ ոսոխն մեր սատանայ իբրև զառիւծ գոչէ և շրջի, եթէ զո՞ *կլանիցէ»* (298 / 9)

ԿԿԵԼ - 1

զի և ոչ նիւթ ինչ ճարտարեալ իմաստութեամբ իմով համբարել կարացից՝ *կկել* զգեստ ինչ գովութեան քում ազնուականութեանդ: (27 / 13)

ԿՂԵՐ - 2

Ապա եթէ պատրիարք որ ունիք, և ոչ զայլ *կղերս* եկեղեցւոյ բովանդակ, յայտնի է՝ խոտորեալ հերձուածողք էք ընդ Արիոսս և ընդ Խուժաստանս և ընդ այլ չարափառս»: (273/6) Եւ հանդիպեցան հոգեզուարճ աստուածազարդ հայրապետին՝ տուեալ ողջոյն *կղերց* եկեղեցւոյն խոնարհամիտ համբուրիւ (98 / 6)

ԿՂՋԻ - 7

աճապարէր ընդ ծով եւ ընդ ցամաք անցանել ի սահմանս հեռաւոր *կղզեացն* արևմտից: (193 / 8) ԱՌ ՈՐՍ ԴԱՌՆԱԼ ԱՆՏԻ ԵԻ ԳԱԼ ՋՍԵԻԱՆ ԾՈՎԱՊԱՏ *ԿՂՋԻՆ* ԱՌՆՈՒԼ (317 / 14) որ թափառական և փախստական շրջէր յերեսաց իմոց ի *կղզիս* ծովուն արևմտից: (133 / 17) Աստ կատարին սահմանք Յաբեթի մինչև *ցկղզիսն* Բրիտանիկեացւոց: (6 / 3) Եւ ի սոցանէ ելին մեկնեցան *կղզիք* հեթանոսաց (4 / 15) Իսկ *կղզիք*՝ Սիկիլիա, Եւբիա, Ռոդոս, Քիոս, Ղեսբոս, Կիթերա, Զակիւնթոս, Կեփազենիա, Իթակէ, Կորկիւրիա և Կիւղադէս (6 / 10) Անդ ի միջի գետոյն ծառ մի *կղզւոջ* դիպեալ. (52 / 8)

ԿՃԵԱՅ - 1

Սա առ և հրձիգ արար զսուրբ քաղաքն Երուսաղէմ և ի գերութիւն վարեաց զփայտն կենաց … նա և զկահ անգամ շինուածոց զարմանալի հոյակապ մայրաքաղաքաց, զսիւնս և զխոյակս *կճեայս* (129 / 10)

ԿՆԻՔ - 7

Եւ իբրև փորեցին թիզս տասն, գտին կողոփս երկուս արծաթեղէնս՝ կապարի *կնիք* ի վերայ եդեալ. (206 / 6) գտաք … կողոփս երկուս արծաթեղէնս՝ կապարեայ *կնիք* ի վերայ պնդեալ հռոմափակ. (210 / 4) առնոյր զքրիստոսական *կնիքն* և անդէն աշակերտէր երիցոյն: (39 / 15) տուեալ զքրիստոնէական *կնիքն*՝ առնէր ուսեալս աստուածագիտութեան ճանապարհին: (50 / 7) և զայլն մեծաւ զգուշութեամբ և զանազան սպասուք ինքն իսկ սպասաւորեալ՝ պահէր թագաւորական *կնքով* կնքեալ: (83 / 1) Թէպէտ և նա բռնակալութեամբ կացեալ էր յաթոռն, սակայն նոյն եպիսկոպոսունքն և բովանդակ ուխտ եկեղեցւոյ վերստին նզովեցին գրով և *կնքով* (303 / 10) զոր գտեալ երիցուն՝ քրիստոսական *կնքովն* էր վերծանեալ: (39 / 14)

ԿՆՏՈՒԹԻՒՆ - 1

՝ «Ածից ի վերայ ամենայն հասակաց քարձ և ի վերայ ամենայն գլխոց *կնտութիւն* (166 / 6)

ԿՆՈՒԹԻՒՆ - 6

Վասն որոյ հարկաւորեալ ի սէր նորա խաքանայ տայ զդուստր իւր նմա *կնութեան* (249 / 12) Եւ այն օրէնք տաղտկալի յազգ նոցա եմուտ, եթէ զկին թողեալ ի *կնութենէ*, ապա առ այլում եղեալ ի քուն՝ առ ինքն առնու: (289 / 13) Հրամայէր պահել զնա մեծաւ զգուշութեամբ՝ առնուլ ի *կնութիւն* իւր կամեցեալ: (100 / 16) Եւ տեսեալ զայնքան հռչակեալ նորա անուն՝ զօրապետն Պարսից ստիպէր զնա՝ առնուլ զքոյր իւր ի *կնութիւն:* (176 / 22) անդ առնոյր զդուստր թագաւորին իւր ի *կնութիւն* (191 / 8) նոյնժամայն էառ Բաբան զդուստրն Վասակայ Սիւնեաց տեառն ի *կնութիւն:* (326 / 12)

ԿՆՔԱՒՈՐ - 1

եկեղեցիք շէն մնացին, վկայարանք ի խաղաղութեան, քահանայք ի քահանայութեան … *կնքաւորք* ի սրբութեան և ամենայն ոք յիւրաքանչիւր կարգի: (26 / 2)

ԿՆՔԵԱԼ - 10

կնքեալ զինքեանս նշանաւ տէրունեան խաչիւն (59 / 9) զոր ունէր նորին մատանեաւն *կնքեալ* (67 / 4) և *կնքեալ* արքունի մատանեաւն՝ հրամայէր մեծաւ զգուշութեամբ պահել մինչև ցառաւօտն: (81 / 18) և զայլն մեծաւ զգուշութեամբ և զանազան սպասուք ինքն իսկ սպասաւորեալ՝ պահէր թագաւորական կնքով *կնքեալ:* (83 / 1) Եւ զմնացեալն ի նշխարացն *կնքեալ* մեծաւ զգուշութեամբ տայր պահել ի սուրբ և յազնուական սենեկի (86 / 3) Եւ արքայն արքայից կոչէ առ ինքն Բաբիկ և տայ վճիռ թագաւորութեան՝ *կնքեալ* վարազագիր մատանեաւ (110 /4) Զայս *կնքեալ* խորհրդաբար ի մտի իւրում՝ դառնայր (179 / 11) որոց *կնքեալ* զդաւիլն՝ դարձան յիւրաքանչիւր տեղիս: (191 / 6) Իսկ արքայն հարաւոյ վասն սեռն և սերտ սիրոյն հաստատութեան երդմունս *կնքեալ* տայր նմա և զաջ իւր (195 / 12) Եւ զերկոսեան նամակսդ *կնքեալ* իմով մատանեաւ ետու ի պահեստի Ներսմերհի ուխտի ի ձեռն սրբասիրի Քշկայ հօր՝ պայման անհոգութեան»: (304 / 2)

ԿՆՔԵՄ - 8

Եւ այսպէս բաժանեալ զինչսն ըստ անուանց տոհմից նոցա, և գրով նշանակեալ *կնքեաց:* (159/5) և զվախճանն քո Քրիստոսի խոստովանութեամբ *կնքեսցէ* կենարարն Քրիստոս և նորին հայրն երկնաւոր»: (84 / 20) Եւ *կնքեցաւ* կամօք մերովք և մատանեօք, որոց անուանք վերագրեալ են»: (302 / 16) Որոց առեալ ամենեցուն զգիր գովութեան՝ մուրհակ *կնքէին* նմա յիւրաքանչիւր կողմանց զօրավարն նախարարօքն հանդերձ: (235 / 3) անսուտ երդմունս *կնքէր* և տայր տանել առ նա (17 / 10) Իսկ զբոլոր աշխարհին Հայոց ուսուցանէր և խրատէր և *կնքէր* կենսատու խաչիւն (34 / 21) և *կնքէր* Խոճկորիկն իւրով մատանեաւ. (60/4) *կնքէր* դաշինս վասն փառամոլ տիրողութեանն (293/7)

ԿՇՌԵԼ - 1

որ նստի յերկնից երկինս և տեսանէ զաշխարհս ամենայն ականելով և *կշռելով* զբարի օրէնս (21 / 18)

ԿՇՌԵՄ - 1

Ընդ արուսեկին *կշռեցից* զքեզ՝ դու պայծառագոյն քան զարուսեակդ նշոյլս արձակես: (24 / 1)

ԿՇՏԱՄԲԵԱԼ - 1

որ բանիւք և գործովք *կշտամբեալ* յանդիմանեաց զանօրէնութիւնս մեր (259 / 17)

ԿՈՁՄԱՍ - 1

Նախավկայն է տէրն Ստեփաննոս և Թէոդորոս նահատակ, սուրբքն Վարոս, Մամաս, Մար, Սարգիս, Գէորգիոս վկայ, *Կոզմաս* և Դամիանոս և մասն մի ի սուրբ քառասնիցն»: (120 / 11)

ԿՈՒԽԱՆ - 1

Զի տէր հեռացաւ յաւուրն չարի Եւ եթող զնա ի *կոխան* ժանտից: (227 / 8)

ԿՈՒԽԵԼ - 1

և հրամայեմ քաջ զօրաց իմոց ընդ ոտս երիվարաց *կոխել* զԳողեստանս (167 / 18)

ԿՈՒԽԵՄ - 9

Զի թէ մինչ տղայն էիր, յաղթեցեր նմա, ի չափ հասեալ, գիտեմ, թէ առ ոտն *կոխես* զամենայն մենքենայս չարեաց նորա: (26 / 12) նախ զգաստ լինէր, թէ գուցէ ամբոխն հարաւոյ ընդ ոտս առեալ զերկիրն *կոխեսցեն:* (193 / 18) այլ ընդ ոտս և ընդ լանջս երիվարաց քոց *կոխեսցես* զնոսա (168 / 10) ընդ ոտն անկեալ *կոխեսցի* ի գնացս աշխարհի»: (255 / 1) Եւ *կոխեցաք* զդիակունս սովամահաց (165 / 5) և *կոխեցին* քանդեցին զգեղեցիկ ստացուածս այգեստանեացն և գիւղաստանեացն, ընդ որ անցանէին: (133 / 1) Զեռն որ ձգեցաւ ի սպանանել զտէրն, Եւ ոտք, որ *կոխեցին* զհրաշագեղ պատկերն (228 / 9) որ անիրաւք զայրացեալք առ ոտսն *կոխեցին* զեկեղեցիս (280 / 9) և ոտք իւրեանց *կոխէին* զդիակունսն (152 / 15)

ԿՈՒԽՈՒՄՆ - 1

և եղ զամենայն աշխարհս իբրև զհող ի *կոխումն:* (280 / 11)

ԿՈՇ - 3

Եւ այնք, որ *կոծ* դնեն, զտանուտէրն և զգուսանսն, կապեսցեն և ի դուռն արքունի տարցին և պատուհաս ի վերայ դիցեն (92 / 5) Այլ զորդւոցն համբարուց *կոծ* կսկծագին Առ զատեալ մնացելոցդ քաղաք մենացեալ: (229 /11) Ոմանց սուգ և *կոծ,* և ոմանց խաղ ըստ այսմիտ սովորութեանն: (241 / 11)

ԿՈՇԵՄ - 1

Եւ ոմանք իբրև մոլեգին վարսամնահարք՝ ելեալք յանկողնոցն մերկք և խայտառակք՝ ընդ որմս խօսէին և ընդ հողմս *կոծէին.* (165 / 17)

ԿՈԿՈՐԴԱԽՕՍ - 1

Եւ նոքա եկեալ առ Մեսրոպ և նոքօք ստեղծ զնշանագիրս *կոկորդախօս,* աղխազուր, խժական, խեցբեկազունի լեզուին Գարգարացւոց: (117 / 16)

ԿՈՀԱԿ - 1

Բարեվայելուչ և ցանկալի է աշխարհն Աղուանից ամենագիւտ շահիւք և բարձրաբերձ *կոհակօք* Կաւկասայ: (9 / 5)

ԿՈՀԱԿԱՇԱՐԺ - 1

որ *կոհակաշարժ* բռնութեամբ ծաւալասոյզ առնէին զերկիր (192 / 15)

ԿՈՂ - 2

Շնորհք աստուածապաշտութեան Յորդահոս շարժմամբ ի կայլակաց *կողիցն* Յիսուսի. (229 / 5) Եւ նորա ձայնեալ անդրէն ասէր. *«Կողս* և զտկունքս աստ են, ի ձեզ առէք»: (71 / 10)

ԿՈՂԹ - 2

որք յԱտրպատականու իշխանացն են՝ բնաւորեալք ի Կապաղակ և ի *Կողթ.* (304 /16) Ընդ այսոսիկ ապա ժամանակ տարօրէն խառնակութեամբ գլխաւորք ազգաշաղախ Աղուանից աղծապիղծք եղեալ. նախ՝ թագաւորազինն *Կողթայ* տեառն տուն, ապա յԱրշակաշէն գաւառի երեք տունք (212 / 15)

ԿՈՂԹԱԳԱՐԱԿ - 1

որ կոչի *Կողթագարակ.* (156 / 20)

ԿՈՂՄԱՆՑ ԿՈՂՄԱՆՑ - Տե՛ս ԿՈՂՄՆ

ԿՈՂՄՆ - 101

բայց սխալեալ առ *կողմամբն* առնէին զբրածն. (80 / 10) և զաջ թևն բեկեալ զձախոյ *կողմամբն* արկանէին և սրոյ ճարակ զամենեսեան առնէին ընդ երեսս դաշտին. (114 / 16) Մրուոյ վանք Սուրբ քառասունքն ի նոյն *կողման,* մերձ ի նա, զոր այժմ տաճիկ ունի: (285 / 12) Անդ եղեալ առ եկեղեցւոյն՝ հուպ ի բեմն ի հիւսիսոյ *կողմանէ.* (39 / 3) Գտին զնա բանակեալ ի նմին գաւառի ըստ հիւսիսոյ *կողմանէ* (159 / 19) Ո՛չ օրինաւոր մատռուակք էին առաջի նոցա, և՛ ոչ սպասաւորք ի թիկանց *կողմանէ:* (160 / 10) Ապա այնուհետև յարևելից *կողմանէ* զփայտաշար յարկն քակէին (205 / 17) Իսկ անօրէն սպանողն զսուսերն թերաքամեալ ունելով՝ յանկարծակի յետուստ *կողմանէ* հարկանէր զիշխանն արի (223 / 4) Նոյն օրինակ և յաջող *կողմանէ* գեղեցկագոյն իմն լուսեղէն խաչս մի զմիոյ զկնի ի վերուստ ի վայր տողեալ՝ պնդէր հաստահեղոյս բևեռօք. (255 / 13) Իսկ Բեթղեհէմ հեռագոյն ի Յարութենէն երկու հարիւր քսան հրասախ յարևմտից *կողմանէ:* (284 / 13) և անտի յարևելից կուսէ ըստ Յորդանանու *կողմանէ* երեք ասպարիզօք հեռի ի Բեթղեհեմէ հովանոցն, ուր երկու եկեղեցի, և պատարագ մատչի (285 / 1) Պանդավանքն, որ յարևելից *կողմանէ* ի Չիթենեաց լերինն կայ, Պանոն ոմն ճգնաւոր յԱղուանից եղեալ նախաշինող, և այժմ Պետրոս Աղուանից/գրքում՝ Աղուան/ քահանայ ունի: (285 / 10) Աստ իմն հնարեալ նաւորդացն՝ գումարեալք ի մի վայր՝ յօշեն զնա ի տտնոյն *կողմանէ* սրով մինչև սատակիլ նմա (330 / 1) Ապա Յեսու անուն քահանայ և՛ Թադէոս և՛ Գրիգոր, որ ի Մովսէսի *կողմանէն* էին, գնացին ի Դունայ և ելին ի Սոթից գաւառն: (268 / 10) որում Աստեղն կոչեն բլուր՝ ի հիւսիսոյ *կողմանն.* (99 / 2) և գունդն երկրորդ յայնկոյս Տրտուական գետոյն, ի հարաւական *կողմանն* ի մայրոլորտ հովտի պուրակի բնակէին՝ Չղախն անուանեցելոյ: (99 /3) զառաջինն տան ցՆերշապուհ Ռմբոսեան պահապան Ատրպատական *կողմանն* (113 / 14) որ է յանդիման գեղջն մեծի *կողմանն* Կաղանկատուաց (137 / 8) Եւ յետ այսորիկ ընդունէր զգերագոյն գահն ի հզօր և յարքայակերպ իշխանէն Տաճկաց սահմանակալ լինել *կողմանն* արևելից (233 / 13) Եւ առնէր ժողով Մովսէս իւր *կողմանն* վարդապետացն (267 / 17) Յայնժամ Թէոդորոս ետ հրաման ժողովել եպիսկոպոսացն Հայոց, որ ի նորայն *կողմանն* ՝ի Կարնոյ քաղաք (268 /3) Կաղանկատուաց վանք ի նոյն *կողմանն,* այժմ Թէոդորոս ունի. (285 / 14) յաջակողմն դրանն նստի շուրտայաց աւագն, որ մեծ է քան զայլսն դահճապետաց աւագ, և ձախոյ *կողմանն* դատաւորն և գանձու ամիրայն (330 / 8) իսկ որ ի *կողմանս* հիւսիսոյ են, ազգակից են Կիտիացւոցն (5 / 1) նորին աշակերտեալքն, որ ի *կողմանս* գաւառացն Աղուանից,

գումարեալք ի մի վայր…փութային հասանել գործոց բարեաց: (97 / 14) Յայնժամ չուեալ նոցա ընդ կողմանս հարաւոյ՝ երթեալ հասանէին ի բարձրաբերձ կատար լերինն մեծի (105 / 9) «Գունդն Պարսից, որ էր ի կողմանս աշխարհին Հոնաց, դարձաւ այսրէն, եկն եմուտ յաշխարհն մեր. (112 / 15) Զոր զգացեալ Մերսեբուխտայ զքաջալերսն ի Վասակայ՝ ոչ եկաց ի կողմանս Չորայ (114 / 3) զորոց զանուանս անգամ ոչ էր լուեալ ի կողմանս արևելից: (129 / 11) և զգեղեցկաշէն քաղաքս Հռովմայեցւոց բնակչօքն իւրովք հանդերձ խաղացուցանէր ի կողմանս Պարսից վասն տենչանաց իւրոց: (129 / 17) Աւերէր, քանդէր, գերէր զերկիրն ամենայն և անտի դարձեալ՝ կամէր ձմերել ի կողմանս Աղուանից, Վրաց և Հայոց աշխարհաց: (132 / 4) Եւ նոյնպէս և այն իշխանն՝ Գայշաք անուն զերծաւ համօրէն տամբ իւրով և անկաւ ի կողմանս Պարսից. (137 / 15) Իսկ կայսերն առեալ զզօրս իւր՝ դիմեաց ի կողմանս Պարսից. (143 / 18) Եւ առեալ զաղխն իւր ընդ իւր, յափշտակեալ զբազում ինչս յաշխարհէս աստի՝ զերծաւ գնաց անկաւ ի կողմանս Պարսից: (154 / 12) և առեալ երդս իբրև երեսուն հազար՝ անցանէ ի կողմանս Աղուանից (171 / 9) անցանեն ընդ կողմանս Ասորեստանի և ելանեն տագնապաւ ի վերայ տէրութեանն Պարսից: (173 / 4) Եւ այսպէս տաճիկք յարձակեցան ի կողմանս հիւսիսոյ և արևելից. (180 / 14) Քանզի յայնժամ իշխանն մեծ չուեալ էր ի կողմանս հարաւոյ ի Սիսաւանացն գաւառ (220 / 6) Եւ եղև ի ժամանակին յայնմիկ խաղալ գնալ մեծի իշխանին Ջուանշիրի ի կողմանս լեռնականացն ի զբօսանս բոլոր տարեկան աւուրց հրճուական անցուցանելով երկրաչափութեամբ: (221 /3) Եւ ինքեանք անդրէն դարձեալ բանակէին ի կողմանս դաշտին առ սահմանօքն Լփնաց: (232 / 11) և խռովութիւն և հերձուած բազում ի կողմանս կողմանս գիտնաւորաց և տգիտաց լինէր (266 /17; 266 /18) Յայնժամ ընկալեալ զպատուական գանձն՝ գայ հասանէ ի կողմանս Արցախայ. (281 / 9) Իսկ որ ի Յաբեթէ մինչև ցՏիգրան՝ թագաւորք ԽԴ և կողմանց Պարսից թագաւորք յԱրշակայ մինչև ցԱրտաւան՝ ԾԴ և ամք ՆԾ: (7 /4) Եւ յամենայն կողմանց շուրջ պաշարեաց զինն ի վեր և ի վայր, ի վերջ և յառաջ, յաջ և յահեակ. (18 / 2) յամենայն կողմանց աչացար սրատես ես քան զարծուի և երագալուր քան զմի ի հանդարտ անասնոց. (25 / 4) Սոյնպէս և ամենասուրբն Գրիգոր զերծեալ ի սրոյ Հայաստան նախարարացն՝ ի փրկութիւն պահէր նորին Հայոց աշխարհին և ամենայն Արևելից Կողմանց (32 /10) հրաման տայր ամենայն կողմանց իւրոյ թագաւորութեանն (47 / 16) Եւ դասք եպիսկոպոսաց իւրաքանչիւր հանդերձ մեծագոյն ժողովովն երթային ի չորեցունց կողմանց դեսպակի սրբոցն սաղմոսելով և բարեբանելով զմիածինն Աստուած (69 / 11) Կէսն ի կոյս կողմանց գաւառացն ելանել խորհէին. (96 / 12) Գտանին զրոյցք Արևելից կողմանց, որ ոչ են անկեալ ի գիրս հնագիր պատմագրաց (106 / 6) մինչև յե՞րբ պնդեալ, կապեալ կայցեն կիրճք ճանապարհաց՝ յարգելուլ զշահս վաճառաց կողմանց կողմանց, (145/9; 145/9) զօրավարք և իշխանք, տեարք և բնաշխարհիկ ազատք կողմանց կողմանց զօրաժողով լինէին կալ ընդդէմ օտարազգւոյ թշնամւոյն: (173 /6; 173 /6) Եւ յաղագս նորին իրաց հրամայէր կաթողիկոսն ժողով մեծ լինել, և կոչել նաև զմիւս եպիսկոպոսն Արցախական կողմանց (203 /9) գային հոգւոյն սրբոյն առաջնորդելով հասանէին յՌոստակ գաւառն Մեծ Կողմանց (205 / 1) Եւ զի բազումք ի

գլխաւորաց աշխարհիս *կողմանց* կողմանց եկեալ էին ի տօնն տէրունական նշանին: (217 /10; 217 / 10) ՎԱՍՆ ՅԱՌԱՋԱԴԻՄՈՒԹԵԱՆՆ ՎԱՐԱՋ ՏՐԴԱՏԱՅ ԵՒ ԸՆԴՈՒՆԵԼ ԳԱՀ ԵՒ ՊԱՏԻՒ *Ի ԿՈՂՄԱՆՅ ԿՈՂՄԱՆՅ* (233 /9; 233 /9) «Եկա՛յք, ասէ, զընտրեալս զայս յԱստուծոյ զԻսրայէլ՝ զառաքինազգեստ այրս, յաթոռ աստուածազան վերադիտողութեան գաւառին Մեծ *Կողմանց* կարգեցուք տեսուչ (234 / 8) Որոց առեալ ամենեցուն զգիր գովութեան՝ մուրհակ կնքէին նմա յիւրաքանչիւր *կողմանց* զօրավարն նախարարօքն հանդերձ: (235 /4) Ապա առեալ զնա կաթողիկոսին՝ ձեռնադրէ յեպիսկոպոսութիւն գաւառին Մեծ *Կողմանց* (235 / 5) Եւ յերկաքանչիւր *կողմանց* բռնութենէ թշնամանեաց աւերեալ պակասեցաւ երկիրս: (237 /17) առժամայն ընտրեցին և արձակեցին մեծաւ աղաչանօք զիմաստուն և պարկեշտ եպիսկոպոս գաւառին Մեծ *Կողմանց,* որում Իսրայէլ կոչիւր: (238 / 6) ԳԱԼՈՒՍՏ ԻՍՐԱՅԷԼԻ ՄԵԾ *ԿՈՂՄԱՆՅ* ԵՊԻՍԿՈՊՈՍԻ Ի ՀՈՆԱՅ (262 / 6) ԴԱԻԹԱՅ՝ ՄԵԾ *ԿՈՂՄԱՆՅ* ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՎԱՍՆ ՊԱՏԿԵՐԱՅ ԵՒ ՆԿԱՐԱԳՐՈՒԹԵԱՆՅ ՀԱՅՑՈՒԱԾ Ի ՅՈՀԱՆՆԷ ՄԱՅՐԱԳՈՄԵՑԻՈՅ (266 / 14) Վասն այսորիկ Դաւիթ՝ եպիսկոպոս Մեծ *Կողմանց,* խնդրեաց գրով ի Յոհաննէս վարդապետէ Հայոց զպատճառ իրացն: (267 / 4) զերանելին Իսրայէլ նշանագործ եպիսկոպոսն Մեծ *Կողմանց* հալածեաց (294 / 10) Եւ իսկոյն գայր Ատրներսեհ զերծեալ *ի կողմանց* Տաճկաց. (340 / 16) զորս բովանդակապէս ուսաք ի լաւագոյն առնէ միոջէ յԻսրայելէ Մեծ *Կողմանցդ* եղելոյ եպիսկոպոսէ: (263 / 13) որ միանգամայն տիրեաց *կողմանցն* Աղուանից: (9 /15) Եւ եղև յետ վկայութեանն Գրիգորիսի՝ Աղուանից կաթողիկոսի, բարբարոսական ազգք *կողմանցն* արևելից վերստին ի դիւցախելար կռամոլութիւնս կործանեցան. (95/5) Յայնժամ հանդերձեցան կազմեցան յերիս բաժանեալ գունդս՝ համբարձեալ *ի կողմանցն* Աղուանից յառաջ խաղային առ սահմանօքն Ասորեստանի. (98 / 2) Սա առ և հրձիգ արար զսուրբ քաղաքն Երուսաղէմ և ի գերութիւն վարեաց զփայտն կենաց… և զսպասսն ամենայն սրբութեանց *կողմանցն* այնոցիկ զոսկւոյ և զարծաթոյ և զականցն պատուականաց (129 / 8) Խիզախէր և առ Պարսիցն զօրապետ իւրաքանչիւր *կողմանցն* իշխել առանձնակի (179 / 16) այլ և յԱսորեաց և յԱտրպատական գաւառէ և յԱյրարատեան *կողմանցն* և ի Վրաց աշխարհէն. մինչև ի Հնդկաց ևս գային առ նա լսել և տեսանել: (186 / 4) Իսկ նա ոչ հաւանէր տիեզերական *կողմանցն* միահեծան իշխանութեամբ ճոխանալ: (198 / 10) որ Մեծ *կողմանցն* էր տեսուչ. (203 / 4) Արդ երթայք դուք յաջորդեալք եպիսկոպոսք *կողմանցն* այնոցիկ, երկաքանչիւր ոստիկանաբար ի վերայ հասջիք քննութեամբ (204 /13) համբարձեալ *ի կողմանցն* յայնցանէ՝ գայ անցանէ յՈւտի գաւառ ի Պարտաւ քաղաք յիւրականն գեղազարդեալ տաճարս (221 / 16) Եւ երանելի եպիսկոպոսն ըստ քաղցր բարուցն՝ առնէր շինութիւն երկոցունց *կողմանցն* (266 /8) զօրաժողով լինի որդին Շեխայ *ի կողմանցն* Ասորեստանեայց՝ միակամութեամբ Աշոտի իշխանի (334 /7) Ընդ նոյն ժամանակս բախի *ի կողմանցն* հիւսիսոյ այլադէմ, օտարանշան ազգ իմն, զոր Ռուզիկ կոչեն …իբրև զմրրիկ ընդ համատարած աշխարհաձով ելիցն Կասպից՝ յանկարծ հասանէին ի մայրաքաղաքն Աղուանից Պարտաւ (338 / 1) նորագոյն ի լսողս և պատմիչս յարդեան ժամանակիս *ի մէջ* հիւսիսական *կողմանցս* տօղավարողք զբոլոր լսողս

տարբերմամբ ի մանաւանդն սակս ջամբոցեալ զխորհրդոյդ զսեռութիւն (276 /10) սաստկանային սակք հարկահանաց աշխարհի, առաւել *կողմանցս* արևելից. (311 / 11) և պատուաստութեամբս այսուիկ առ ի զոյգ ունել զպետութիւն արևելեայց *կողմանցս* Աղուանից: (338 / 15) և մեր *կողմանքս* մինչև ցայսօր ժամանակի անխառն յայնմ աղանդոյ էր մնացեալ: (295 / 6) Սահմանք Յաբեթի այս են …ի Մարաց մինչև ցԳաղիրովն *կողմն* հիւսիսոյ և ցգետն Դկղաթ, որ մեկնէ ընդ Մարս և ընդ Բաբելովն: (4 / 6) Եւ են սահմանք սոցա ի Մարաց ընդ *կողմն* հիւսիսոյ մինչև ի Գաղիրովն (6 / 7) և ի *կողմն* արևմտից երթան հասանեն ազգքս այս մինչ ի Տրապիզոնտ: (7 / 2) Եւ յերկարել պաշարմանն՝ Մեծ *Կողմն* աշխարհին աւերեցաւ (17 / 3) և զՎարդան պակաս զօրօք յայդ *կողմն* հանին: (114 / 1) Այլ Հայք համբաւէին զՅոհաննու Մայրագոմեցւոյ, եթէ ի Յունաց *կողմն* ելեալ հակառակ բերէր. (272 / 3) և ի *կողմն* Յունաց հակառակ նմա նստուցին յաթոռ զՅովհան ոմն մերձ առ նա: (273 / 16) Եւ ի նոյն ամի էանց Աբդլ Ազիզ զԿուր գետով յայն *կողմն:* (319 / 21) Այսպէս զերծեալ Մսլիման ելանէր ընդ Վրաց *կողմն:* (320 / 5) Եւ ի նոյն ամի էանց Բաբան զգետովն Երասխ ի Պարսից յայս *կողմն* (327 / 14) և իսկոյն աճապարեալ ընդ այլ *կողմն* ծովուն արտաքս՝ պատեալ պաշարեն զթշնամիսն խաչին Քրիստոսի (329 / 3) Գրիգոր շինէ զՀաւախաղացին բերդն, և յայն *կողմն* ձգէ զձեռն իւր իշխանութեանն. (340 / 18)

ԿՈՂՄՆԱԿԱԼ - 5

Ածին և զերկոսին իշխանսն՝ զմի իշխանն պետ *կողմնակալ* թագաւորութեանն Պարսից, և զմիւսն ի բուն բնակչաց իւրոց (153 / 1) Ուստի անմենակատար ընդունելութեամբ և ոչ առ մի ոք ի *կողմնակալաց* երկրի այնպէս եղև փաթշաբար մեծագրութիւնք. (195 / 5) և կարգէր *կողմնակալս* Աղուանից նահանգիս: (180 / 2) Ի սորա՝ Առանայ ծննդոց, ասեն, արք անուանիք և քաջք կարգեցան *կողմնակալք* բիւրաւորք ի Պարթևէն Վաղարշակայ: (8 / 15) յայնժամ տեարք տոհմից, կուսակալք, *կողմնակալք …*ժողովեալք առ մեծ արքեպիսկոպոսն Եղիազար՝ խորհուրդ բարեաց վասն խաղաղութեան խորհէին (230 / 24)

ԿՈՂՄՆԱՊԱՀ - 1

ՈՐ ԷՐ ԿԱՐԳԵԱԼ *ԿՈՂՄՆԱՊԱՀ.* (78 / 4)

ԿՈՂՄՆԱՒՈՐ - 1

այլ զբնութիւն նորա պատմեցից քեզ. շեղագնաց, թիւրընթաց, *կողմնաւոր* ստուերաշուք (24 / 12)

ԿՈՂՈՊՏԵՄ - 1

կողոպտեցին զդիակունսն և ժողովեցին զզարդս երիվարացն (169 / 4)

ԿՈՂՈՓ - 3

և յերկուս ամփոփեալ արծաթեղէն *կողոփս* ծածկէին յերկրի: (100 / 3) Եւ իբրև փորեցին թիզս տասն, գտին *կողոփս* երկուս արծաթեղէնս (206 / 5) գտաք զփափագելին ի ձեռն շնորհաց բարձրելոյն և յաղօթից սրբոյ հօրն Իսրայէլի՝ *կողոփս* երկուս արծաթեղէնս (210 / 3)

ԿՈՂՔԻՍ - 1

Այս է երկիր նոցա՝ Ատրպատական, Աղուանք, Ամազոնիա, Հայք Մեծ և Փոքր, Կապադովկիա, Գաղատիա, *Կողբիս,* Հնդիկք (5 / 9)

ԿՈՅՍ[1] - 21

Այլ յոր ժամանակս այց արար Աստուած ազգի մարդկան՝ ընդհանուր ծաղկեցոյց զարևմտեայ *կոյս* մեծ կայսերբն Կոստանդիանոսիւ (14 / 7) և անցոյց յայն *կոյս* զզօրսն Մասքթաց: (16 / 7) Եւ ապա ողորմութեամբն Աստուծոյ յարևելս *կոյս* արարեալ զբրածն՝ գտին զամենասուրբ նշխարս երանելւոյն ըստ եկեալ ձայնի հնչմանն: (70 /12) իսկ երանելւոյն նշխարքն յարևելս *կոյս* մնայր: (80 / 11) Կէսն ի *կոյս* կողմանց գաւառացն ելանել խորհէին. (96 / 12) ժողովեաց զամենայն զօրս Հոնաց և անց յայս *կոյս* Կուրական գետոյն (99 / 9) Բազմահոյլ գերութեամբ և մեծամեծ աւարօքն անցեալ զԿուրական գետովն ի յարևելից կուսէ բանակէին յայն *կոյս* յանդիման նոցա: (103 / 12) խորհեցաւ ի մտի իւրում յայն *կոյս* ինքն իսկ իւրովի գալ ելանել: (134 /19) շղթայք իւրեանց ի ձեռս իւրեանց հեծեալք արշաւէին յայս *կոյս,* յայն *կոյս* արհամարհելով զԽոսրով: (147 /12; 147 /12) Եւ մինչդեռ առաջք թշնամեացն զառ ստորին *կոյս* նորին գաւառի ճեպով ելանէին՝ անդէն վաղագոյն ճեպով ի վերայ զինեալ ինքնաձեռն լինէր հարկանել անդ զգիւղմնազգի ոմն հեղինակ զօրուն: (177 /10) ելանէ իբրև աւուր միոյ ճանապարհ ի վեր *կոյս* Պերոժ Կաւատ քաղաքի. (187 /13) ԺԷ արամբք էանց յայն *կոյս* գետոյն ի բանակն Հոնաց. (191 /7) Այսպէս և բիբք աչացն, որ և սոնքաձև կտցոյն փողորտաձգութիւն ի վայր *կոյս* դարձեալ զբերանովն կռանայր (199 / 12) որոյ գերանաձև սրունք որպէս զլեառն ինչ ի վեր բարձեալ ունէին, և զխելապատակէ անտի ըստ չարաթոյն սողնոյն նմանութեան ի վայր *կոյս* կախեալ ձևանայր պատիճ (200 / 5) Եւ նորա մեծաւ փութով առեալ զգանձն՝ չոգաւ ընդ Հոռոմս *կոյս* յերկիւղէ թշնամւոյն. (281 / 5) Բազմահոյլ գերութեամբ և մեծամեծ աւարօքն անցեալ զԿուրական գետովն ի յարևելից *կուսէ* բանակէին յայն կոյս յանդիման նոցա: (103 / 11) Եւ յաջմէ եկեղեցւոյն մատուռն, յորում մանկանց սպանելոցն ի Հերովդէէ նշխարք պահին. և անտի յարևելից *կուսէ* ըստ Յորդանանու կողմանէ երեք ասպարիզօք հեռի ի Բեթղեհեմէ հովանոցն, ուր երկու եկեղեցի, և պատարագ մատչի, և Յորդանան գետ հինգ հրասախ հեռի է յԵրուսաղէմէ յարևելից *կուսէ,* ուր փրկիչն մկրտեցաւ. յորում եկեղեցի սագաշէն խաչանման յարմարեալ՝ ութսուն կանգուն երկայն, ութսուն՝ լայն, երեք սեղան խորհրդոյ, և պատարագ մատչի. և լեառն Զիթենեաց Երուսաղէմի յարևելից *կուսէ* լինի: (284/17; 285/2; 285/5) Եւ յայնմ ամի ել մարախ ի Խազրաց *կուսէ* զարմանալի մեծ քան զճնճղուկ և եկեր զմասն ինչ Աղուանից աշխարհիս: (331 / 3)

ԿՈՅՍ[2] - 6

և եթէ սուրբ *կոյսն* ոչ ծնաւ Աստուած, այլ՝ մարդ սոսկ ըստ մեզ և լոկ տաճար բանին Աստուծոյ: (125 / 6) Իսկ ի վախճան յաւիտենից Աստուած գոլով մշտնջենաւոր բանն Աստուծոյ՝ եղև մարդ կատարեալ ամբեղապէս, մարմնացեալ անճառապէս ի սուրբ *կուսէն* (124 / 4) Քոյին իսկ աշխարհիդ հայրենի հաւատքն պահեցան, եկեղեցիք շէն մնացին … *կուսանք* ի կուսութեան, կնքաւորք ի սրբութեան և ամենայն ոք յիւրաքանչիւր կարգի:

(26 /2) Եւ յայնմ տեղւոջ, ուր զսուրբ կուսին դագաղն կալաւ հրեայն արտաքոյ քաղաքին՝ չտալ թաղել՝ գմբէթ կապեալ ի չորից սեանց և սեանցն պղնձի խաչ զգեցուցեալ, որ են մարմարիոնք. և անտի ցվայր երկուհարիւր և յիսուն քարեայ աստիճանք մինչև ցսուրբ գերեզման կուսին, որ ի ձորն Գեթսեմանի. (284/5; 284 /8) Արդ՝ ի տասնէն յառաջ սկսանիմք լնուլ զվեց ամիսն և լինի յապրիլի եօթանն, ըստ հրեշտակին, թէ այս վեցերորդ ամիս է նորա, Եբրայեցւոցն նիսանի ի տասն և եօթանն աւետիք կուսին: (315 / 7)

ԿՈՅՏ - 2

Յայնժամ արկին զձեռս իւրեանց յարկեղս գանձուցն մթերեալս, և ծանրաբեռնեալք ամենայն բազմութիւն զօրացն բերէին դնէին առաջի իւրեանց բռնաւորին շեղջս շեղջս և կոյտս կոյտս: (153 / 10; 153 /10)

ԿՈՅՐ - 3

զի մի դնն կոյր առնէր, և միւսն՝ պիսակ (55 / 3) Որք իբրև ածան ձերբակալք առաջի թագաւորին՝ հրամայեաց փորել զաչս նոցա՝ փոխանակ զի կոյր նկարեցին զպատկեր նորա ի նախատել նոցա զնա: (153 / 4) Արդարև սա իսկ է քրիստոնէից յոյս, մեռելոց յարութիւն, կուրաց առաջնորդ: (209 / 7)

ԿՈՆՔ - 1

Իւրաքանչիւր կոնք մի լցեալ մսով յանսուրբ անասնոց. (160 / 3)

ԿՈՉ - 1

և ինքն գնայ ի կոչ բդեշխին Վրաց Աշուշայ վասն նորին գործոյ: (118 / 4)

ԿՈՉԱՐԱՆ - 1

այսինքն՝ ի սրբումն կոչարանի լուսատու յԱմարաստումն լինել զսա: (209 / 3)

ԿՈՉԵԱԼ - 4

և զԲենիամին թարգման կոչեալ ի Սիւնեաց (117 /15) զոր կոչեալ յօգնականութիւն (141 / 2) Եւ կոչեալ առ ինքն ի ճարտարագործ հիւսանց քաղաքին՝ հրամայէր առնել զնա խաչ պայծառակշիռ բոլորագուլ. (255 / 8) և կոչեալ զիշխանն Աղուանից՝ ցուցանէր նմա. (312 / 1)

ԿՈՉԵԼ - 10

Ապա սիւն առ ծովակին կանգնեալ և առիւծ ի վերայ՝ մատակ ընդ ոտիւքն ունելով՝ նշան իմն կոչել առիւծ զՊարսս և մատակ՝ զՀռովմայեցւոց տէրութիւնն: (31 1) հրամայէր առ ինքն կոչել զքահանայսն տեառն: (102 / 14) հրամայէր առ ինքն կոչել զսուրբ զօրավարն Թէօփիլոս երեսուն արամբք: (103 / 19) ԿԱՅՍԵՐՆ ՅՈՒՆԱՑ ԳԱԼՆ Ի ՊԱՐՍՍ Ի ԿՈՉԵԼ ԶՋՈՒԱՆՇԻՐ (183 / 13) Եւ յաղագս նորին իրաց հրամայէր կաթողիկոսն ժողով մեծ լինել, և կոչել նաև զմիւս եպիսկոպոսն Արցախական կողմանց (203 / 9) որպէս կամ եղև Աստուծոյ կոչել սրբութիւն սրբութեանց և զնոյն ինքն անարատ քահանայից, և ոչ անարժանից և աշխարհականաց զինուորաց: (310 / 16) այլ զոյժ ահեղ զօրութիւնն Քրիստոսի քեզ յօգնականութիւն կոչելով՝ վերագոյն գերազանցեալ, քան զբոլոր աշխարհս բարձրագոյն գտար: (27 / 6) Եւ շինեաց յիւր անուն քաղաք մի՝ կոչելով զնա Միհրաւան: (171 / 19) աստուածոց նմանեցուցեալ զինքն Նեբրովթայ՝ ամբարտաւանեալ հպարտանայր, մինչև զպատկերն իւր անդրիագործ ճարտարաց ոսկիապաճոյճ նկարօք քանդակել հրամայէր յարծաթս կամ ի պղինձս՝ անուն կոչելով ինքեան նկարագրին:

(246 / 1) Իսկ զերէց որդին Իշխանաննոյ զՅովհաննէս … ընտրեաց աջ բարձրելոյն՝ կոչելով ի թագաւորութիւն. (341 / 10)

ԿՈՉԵՄ - 67

«Եթէ կամ է քո, կոչեա՛ զիս ի հայրապետութիւն Աղուանից(293 / 8) կոչեաց զվայրենի եկամուտ ազգս, որ ի դաշտին հիւսիսոյ (8 / 6) Վասն զի ի գումարելն նորա զբիւրաւորսն Ատրպատականայ անդ կոչեաց զհզօր ազգս լերինն Կաւկասու և զզօրս Աղուանից և Վրաց (12 / 15) և կոչեաց զնա սպարապետ Աղուանից: (174 /1) և ի նաւակատիս կոչեաց զթագաւորն Հոռոմոց (317 / 7) որում Գիսն կոչեն: (95 /13) որում Գիսն կոչեն: (97 / 6) որում Աստեղն կոչեն բլուր՝ ի հիւսիսոյ կողմանն. (99 / 2) զոր Քատակի Հնդուկն կոչեն՝ (148 / 13) և փողագոչ հնչմունքն զննջեցեալսն կոչեն ի քնոյ (189 / 8) զոր Մեծիրանցն կոչեն (203 /10) որում պարսիկք Ասպանդիատն կոչեն: (241 /5) Կոչեն յօգնականութիւն զշրջակայսն ամենայն. (323/3) զոր Դելեմիկք կոչեն (337 /16) զոր Ռուզիկ կոչեն (338 / 2) և կոչեսցես արտաքս քան զսահմանս նորա զամենայն զօրս քո (143 /1) կոչեսցես զտեղի պատերազմին Գերեզմանս թշնամեաց: (168 / 13) որ արասցէն և ուսուսցէն, նա մեծ կոչեսցի յարքայութեանն Աստուծոյ: (46 / 6) Աբու Ջափր, որ կոչեցաւ Աբսլա, նորին եղբայր, ամս ԻԲ: (292 / 3) որ և Սևադայ կոչեցաւ: (341 / 2) որ և Սենեքերիմ կոչեցաւ (341 /9) դէմ յանդիման ժողովրդովք կոչեցին մի անգամ ի Կոստանդնուպօլիս, և երկիցս ի Թէոդոսիոպօլիս: (271 / 15) կոչեցից ես յերկրէ նորա զյաղթող զմեծ զօրավարն իմ Շահ Վարազն (134 /5) «Կոչեցից զգլխաւորս, զառաջնորդս ամենայն գաւառաց աշխարհացս (155 / 5) Եւ արքայն արքայից կոչէ առ ինքն Բաբիկ (110 / 4) Եւ լցեալ Շապուհ մեծաւ ցնծութեամբ՝ կոչէ զԲաբիկ առ ի կատարել զառ ի նա խոստմունսն. (110 / 16) դաւով առ ինքն կոչէ ի գլխաւորացն արս երկոտասանս (172 / 2) կոչէ որպէս ի սէր իմն ի ճաշ: (172 /6) Իսկ զօրագլուխն Պարսից դաւաճանեալ կոչէ պատճառաւոր բանիւք զհայր նորա (179 / 17) Դարձեալ թագաւորն հարաւոյ կոչէ պարգևախոստ հրաւիրանաւ զհռչակելին Ջուանշիր՝ արևելից իշխանն (196 /13) և կոչէ առ ինքն զհռչակելի այրն՝ զՍողոմոն (313 / 19) Ապա կոչէ ամիր մոմնին զՋափր Ասորեաց եպիսկոպոսն (332 / 13) զոր Հոնահն կոչէին՝ իշխան գնդին տաճկաձիաց. (168 / 5) զոր փիլիսոփայապետն կոչէին: (267 / 15) որում Կիւրոն կոչէին (274 / 11) կոչէր Հրաչեայ՝ թագաւոր Հայոց, որդի Հայկայ (7 / 13) Եւ մտեալ յեկեղեցին՝ կոչէր առ ինքն զվանաց երէցն (77 /7) որոյ բուն անուն իւր Խոռեան կոչէր: (129 /2) ո՛չ այլ թագաւոր և իշխան ի թիկունս կոչէր (146 / 11) և յախտէն կոչէր արտաքս զամենայն կալանաւորս արքային (147 / 5) զոր և Նաբուգոդոնոսոր յայն հրաւիրելով ձայնս զմետասան խեղայեղ կաճառոն կոչէր ի կռապաշտութիւն (244 / 14) որ Մահդիւնն կոչէր (292 / 5) որ կոչի Յովանիա. (6 / 11) որ կոչի Հոմէնք (11 / 3) որ այժմ կոչի Ջրվշտիկ ի փառս տեառն Աստուծոյ ամենակալի: (12/3) որ այժմ կոչի Պարտաւ: (42/5) որ կոչի Կողթագարակ. (156 / 19) որ կոչի եպիսկոպոսապետ (272 / 8) որ Ադամայ գերեզման կոչի. (283 / 11) որ այժմ կոչի յիւր անուն Մահմետայ յամսեանն սաւփար: (290 / 2) Մահադի, որ կոչի Մահմատ (292 / 4) որ Բերդակուրն կոչի. (297 / 16) որ կոչի Իտալիա: (324 / 1) որ այժմ կոչի Կոստանդնուպօլիս: (324 / 9) որ կոչի Շիկաքար:

(326 / 3) որ Ամիր Մոմնի *կոչի.* (329 / 10) որ *կոչի* Եղջիւր խոյի. (331 / 18) որ *կոչի* Դաղոյի վանք: (340 / 5) որ *կոչի* Վայունիք (340 / 12) որ անուամբ աղքատասէրք *կոչին* և գործովք՝ քրիստոսատեացք և ուրացողք զսուրբ երրորդութիւնն (123 / 3) որ այժմ ազգաւ *կոչին* հեշամիկք. (292 / 1) որ Կաւատն *կոչիւր:* (145 / 19) որում Իսրայէլ *կոչիւր:* (238 / 6) որ և Մայմունն *կոչիւր* (292 / 10) որ *կոչիւր* Եմէմիկ (334/6) որ իմաստասէրն *կոչիւր* (334/2) որ Իշխանանուն *կոչիւր* (341/7)

ԿՈՉԵՑԵԱԼ - 16

Եւ *կոչեցեալ* զվանաց երէցն գեղջն հարցանէր, եթէ նշան ինչ ուրեք է՞ առ եկեղեցեաւն ի գերեզմանին վերայ, թէ ոչ. (65 / 8) զոր էր բերեալ երիցուն Մատթէ անուն *կոչեցեալ* ի Յոհաննէ Մանդակունւոյ՝ Հայոց կաթողիկոսէն (67 / 3) Եւ ընտրեալ ի զօրաց իւրոց արս զօրաւորս իբրև երիս հազարս և իշխան նոցա Չորպան Թարխան *կոչեցեալ* ՝այր ժպիրի և արիւնարբու: (167/7) Յայնժամ ճարտասան ոմն ի մէջ անցեալ …Դաւթակ անուն *կոչեցեալ,* հնարագիւտական վարժիւք յաջողակ և վերծանական քերթութեամբ յառաջադէմ: (224 / 17) Արդ՝ հաւանեցարուք այսմ բանի. որոտընդոստ չոփայիցդ շիրիմք Դարքունանդ *կոչեցեալ.* նախ՝ նա այրեսցի յայսմ մեծի աւուր ի ձեռն խոստովանող քրմապետացդ այդոցիկ (258 / 16) Յայնժամ *կոչեցեալ* առ ինքն զնա՝ սկսաւ ուսուցանել ի Հին և ի Նոր կտակարանաց ըստ Արիոսի (288 / 2) գայ իջանէ յԱղահէջ գաւառ՝ յաւան մի՝ Արքուգետ *կոչեցեալ* (331 / 14) որ Յունացն էր մագիստրոս՝ Դաւիթ *կոչեցեալ* անուն (341 / 13) Տէր Աբաս …կացեալ ամս ԽԴ յեպիսկոպոսութեանն Մեծիրանց *կոչեցեալ:* (343 /2) Տէր Յոհան, ամս ԻԵ, յեպիսկոպոսութենէն Ամարասայ *կոչեցեալ* յաթոռն: (344 / 2) սորա *կոչեցեալ* զՄաքենոցացն հայր Սողոմոն և անէծ զտեարս Աղուանից (344 /14) «Զնախահիրաւէր *կոչեցեալսն* արդարացոյց Աստուած և զարդարսն փառաւոր արար»: (214 / 11) Եւ ածեալ զնա արտաքս քան զապարանսն՝ մուծին ի սրահ մի, զոր Քատակի Հնդուկն կոչեն՝ յապարանսն Մարասպանդ *կոչեցելոյ:* (148 / 14) փախստեայք եղեալ ի ձեռաց Վահրամայ Չոբինն *կոչեցելոյ* ՝անկանին ի Յոյնս առ Մօրիկ թագաւորն Հռոմոց: (171 / 3) Սակայն ճշդիւ քննեալ շնորհիւն Աստուծոյ զտաք ճշմարտութիւնն ի գալն մեր ի հովիտ մի Արցախայ՝ եզր գետոյ ինչ՝ ի տեղի մի Չղախ անուն *կոչեցելոյ* (209 / 14) Եկն ել գազանն ապականիչ հանդերձ արիւնարբու կորեամբն իւրով՝ Շաթն *կոչեցելով:* (151 / 14)

ԿՈՉՈՒՄՆ - 1

Սա էր եպիսկոպոս ի Շաքւոյ, որ ի վախճանելն Ուխտանիսի ի ժողովի անդ դիպեալ *կոչմանն* ընդ այլ եպիսկոպոսունսն, զորոյ չարափառ ոմանք զգալն նորա ի ժողովն պարսաւէին: (213 / 7)

ԿՈՌՆԱԿ - 1

Գիր անուանց նախագան կարգելոց … Յաբեթ, Գամեր … *Կոռնակ,* Փաւոս (41 / 10)

ԿՈՍՏԱՆԴԻԱՆՈՍ - 7

զորոյ գովութիւնն ոչ ինչ նուազ գոլ վարկանիմ, քան զարևմտականին տիրող *Կոստանդիանոս* կայսր (83 / 15) Իսկ յինն և ի տասաներորդի ամի

թագաւորութեանն իւրոյ *Կոստանդիանոս …* եկն յաշխարհին Պարսից (183 / 14) Զի որպէս Կիւրղի, որ յԵրուսաղէմ էր հայրապետ, գրութեամբ ի *Կոստանդիանոս* վասն երևման խաչին ասէ. (216 /8) քանզի թագաւոր ոմն եղեալ, ասեն, անուն *Կոստանդիանոս,* որ զԿոստանդնուպօլիսն շինեաց: (260 /5) Եւ երբ Ռ ամ էր Հռոմայ շինելոյն՝ և անտի փոխեաց զթագաւորութիւնն ի Բիւզանդիա *Կոստանդիանոս,* որ այժմ կոչի Կոստանդնուպօլիս: (324 / 9) Վասն որոյ ամենանուաստ ծառայիցս ընդարձակ եղիցի ոչ ընդ Օգոստի ումեմն կամ ընդ Տիբերի կայսեր, այլ ընդ աստուածաշնորհ բարերարութեանն՝ ահեղագոյն գերազանցելումն ընդ երանելոյն *Կոստանդիանոսի* (201 /8) Այլ յոր ժամանակս այց արար Աստուած ազգի մարդկան՝ ընդհանուր ծաղկեցոյց զարևմտեայ կոյս մեծ կայսերբն *Կոստանդիանոսիւ* (14 / 8)

ԿՈՍՏԱՆԴԻՆ - 5

ԹՈՒՂԹ ՋՈՒԱՆՇԻՐԻ ԱՌ ԹԱԳԱՒՈՐՆ ՅՈՒՆԱՑ *ԿՈՍՏԱՆԴԻՆ* (181 / 8) «Ամենայաղթ տէր, հզօր և ողորմած թագաւոր Հռոմոց Օգոստոս *Կոստանդին* ՝ծովու և ցամաքի աստուածաբար իշխան. Ջուանշիր սպարապետ և իշխան Աղուանից հանդերձ արևելեացս ծառայական աշխարհաւ նուաստաբար ողջունելով երկրպագէ: (181 / 9) Եւ զկնի նորին նստի թագաւոր Հռովմայեցւոց որդի նորա *Կոստանդին* ՝ամս Գ: (316 / 17) որ էր յեօթներորդի ամի թագաւորութեան *Կոստանդնի* (196 / 16) Սա էր հայրագիր նորին *Կոստանդնի* (317 / 5)

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼԻՍ - 6

զոր ընկալան հարքն մեր ի Սրբոց գրոց՝ Հին և Նոր Կտակարանաց ի ձեռն սրբոյն Գրիգորի և յերից երանեալ ժողովոցն՝ ՅԺԸ –իցն ի Նիկիա, և ՃՕ-իցն ի *Կոստանդնուպօլիս,* և Մ-իցն յԵփեսոս (123 / 11) դէմ յանդիման ժողովովք կոչեցին մի անգամ ի *Կոստանդնուպօլիս,* և երկիցս ի Թէոդոսիոպօլիս: (271/15) Իսկ ի թագաւորելն Յուստիանոսի փոխեաց զնշխարս սրբոյն Յովհաննու աւետարանչի ի *Կոստանդնուպօլիս.* (273 / 10) որ այժմ կոչի *Կոստանդնուպօլիս:* (324 / 9) կամէր պաշարել զմեծ քաղաքն *Կոստանդնուպօլիս:* (329 / 2) Զի նոցա ուսեալ ի խնդրոյն Պրոկղի *Կոստանդնուպօլսի* հայրապետին, որ երկերիւր սուրբ հարքն յԵփեսոսի ժողովոյն տպաւորեցին ի սուրբ երրորդութիւնն. (343 / 5)

ԿՈՍՏԱՍ - 1

Իսկ *Կոստաս* սորին որդի՝ ամս ԻԹ. (317 / 2)

ԿՈՎԿԱՍ - Տե՛ս ԿԱԻԿԱՍ

ԿՈՏՈՐԱԾ - 1

Եւ անդէն և անդ հրամայեաց *կոտորած* առնել.: (289 / 3)

ԿՈՏՈՐԵԼ - 1

ԱՌ ՈՐՍ ԴԱՌՆԱԼ ԱՆՏԻ ԵԻ ԳԱԼ ՋՍԵԻԱՆ ԾՈՎԱՊԱՏ ԿՂՋԻՆ ԱՌՆՈՒԼ ԵԻ ՋՋՕՐՍ ՀԱՅՈՑ ԵԻ ՀՈՌՈՄՈՑ *ԿՈՏՈՐԵԼ* (317 / 15)

ԿՈՏՈՐԵԼՈՑ - 1

այլ դու անկցիս ի վերայ լերանց իբրև զմեռեալ գարշելի ի մէջ բազում դիականց *կոտորելոց* սրով և իջելոց ի դժոխս (44 / 15)

ԿՈՏՈՐԵՄ - 11

զոր Գեդէոնն *կոտորեաց* (170 / 1) Եւ ել Եսայի անուանեալն Աբու Մուսէ ի վերայ նոցա և *կոտորեաց* զնոսա: (331 / 8) զի ապականեցեր զերկիր իմ և զժողովուրդ իմ անողորմ *կոտորեցեր.* (44 / 16) Իբրև զգայլս գիշախանձս անամօթացեալ դիմեցին ի վերայ նոցա և անխնայ *կոտորեցին* յանցս և ի փողոցս քաղաքին. (136 / 4) զորս *կոտորեցին* և զորս զհետ կահուց, սայլիցն և գրաստուցն անկելոցն ի բուռն՝ դարձուցին անդրէն ի բանակն իւրեանց: (137 / 10) որ ի սուր նիզակաց *կոտորեցին* զԲերձոր գաւառ և զաւանսն զՈւռեաց (327 / 7) *կոտորէ* զերկոսեան զքեռիս իւր՝ զԲնդոյ և զՎստամ (171 / 6) Եւ կրկին և երեքկին տուեալ սաստկագոյն պատերազմ, ոչ ինչ կարէին առնել, այլ բազումք *կոտորէին:* (109 / 6) առնուին քանդէին զպահակն և *կոտորէին* զզօրսն որ բնակեալ էին ի ներքս. (116 / 6) Ոչ ժամանէր այր ընկերի իւրում, այլ առանց յապաղելոյ փութանակի *կոտորէին* զխոփս իւրեանց ի սուսերս և զգերանդիս իւրեանց ի գեղարդունս: (130 / 12) որոց իմացեալ զդաւաճանութիւնն՝ անխնայ *կոտորէին* զկանայսն և զմանկունս նոցա: (338 / 8)

ԿՈՏՈՐՈՒՄՆ - 1

Եւ վարէ Տրդատիոս զնոսա *կոտորմամբ* մինչև ցՀոնս. (29 / 8)

ԿՈՐԱՑՈՒՑԵԱԼ - 1

և զբարձրութիւն ամբարտաւանիդ *կորացուցեալ* յերկիր կործանեսցէ: (44 / 6)

ԿՈՐԵԱԿ - 1

«Ես *կորեակ* ի Շակաշէն գաւառի ծածկեալ կայի ի վայրին Կակուայ (312 / 8)

ԿՈՐՁԵԱԼ - 1

Եւ եկեալ էանց ընդ Երասխ գետ և շինեալ գիւղ մի Ակորզ անուն, այսինքն՝ է առաջին *կորզեալ* ի հայրենեացն: (111 / 8)

ԿՈՐՁԵԼ - 1

եկն յաշխարհն Պարսից՝ *կորզել* ի տաճկաց զկողմանս աշխարհին զճառագայթաւէտ զլոյս աշխարհաց ընդ իւր ունելով: (183 / 16)

ԿՈՐՁԵՄ - 2

զի եկեալ *կորզեսցէ,* հանցէ ի ձեռաց արուսպան և իգաչար ազգին՝ առ ի բուծանել զաւակ ի վերայ երկրի զսակաւ մնացեալսն՝ մի յազգէ և երկու ի քաղաքէ: (150/22) և որպէս յառիւծու ժանեաց զգերեալսն ի բաց *կորզէին:* (326 / 6)

ԿՈՐԻԻՆ - 6

Եկն ել զազանն ապականիչ հանդերձ արիւնարբու *կորեամբն* իւրով՝ Շաթն կոչեցելով: (151 / 14) Յայնժամ գոչեաց գազանն ահագին ի վերայ նոցա, որսացաւ և հեղձոյց բաւական *կորեանց* իւրոց. (152 / 2) և սկսաւ ոգորել իւրովի ընդ ինքն և ցանել զեռանդն բարկութեան իւրոյ ի վերայ *կորեանց* իւրոց: (169 / 17) Եւ անդ ընկճեալ վաղվաղակի հասանէր բօթն ահագին ի հիւսիսական օձտող առիւծէն, որ էր նա ինքն Ջերու խաքան, առ գիշախանձ *կորինն* իւր՝ Շաթ, թէ հասին ի վերայ իմ հէնք, և ոչ յաւելուս տեսանել զերեսս իմ. (170 / 7) Եւ ընդ ծագել արեգականն ձիարձակք եղեալք

որպէս *կորիւնք* առիւծու զքաղաքն յափշտակէին (180 / 7) Ղօղեալ հանգիցէ ընդ հովանեաւ դժնկի Եւ *կորիւնք* իժից մեղիցեն նմա. (228 / 13)

ԿՈՐԽ - 1

և որ ոք յանդգնեսցի, պատուհասեալ սատակեսցի՝ որպէս *Կորխն,* Դադան և Աբիրոն (308 / 7)

ԿՈՐԾԱՆԵԱԼ - 1

որով գայթակղեալ և *կործանեալ* էին ամենեքեան (250 / 11)

ԿՈՐԾԱՆԵԼ - 1

Եւ ընդէ՞ր իսկ բնաւ անսայք նմա և լսէք քանդել և աւերել, *կործանել* զբազինս մեհենաց մերոց (250 / 16)

ԿՈՐԾԱՆԵՄ - 13

Եւ բազում նախարարս Հայոց, Վրաց և Աղուանից ի մոգութիւն դիւապաշտութեանն առածեալ *կործանեաց* (42 / 18) և այսու հաւատով հզօր յաղթութեամբ զամենայն թշնամիսն իւր *կործանեաց:* (260 / 7) Վասն զի զփրկական աւանդութիւնն առաքելաքարոզ հարցն մերոց՝ որ անարատ ձեռօք հաստատեալ էին յեկեղեցիս՝ անարժան ձեռօք ի բաց *կործանեաց.* (299 / 4) և զբարձրութիւն ամբարտաւանիդ կորացուցեալ՝ յերկիր *կործանեսցէ:* (44/6) բարբարոսական ազգք կողմանցն արևելից վերստին ի դիւցախելար կռամոլութիւնս *կործանեցան.* (95 /5) զի ի խռնել պատերազմին գթեալ քաջասլաց նորայն երիվարն գլորեցոյց զնա, սակայն ոչ *կործանեցաւ* (186/18) Զի մեծասքանչ տէրութիւնն *կործանեցաւ* (226 /3) «Բարձան փառք սրբութեան մերոյ, և ի չորեքեզերեան տիեզերս պարծանք պարծանաց մերոց շիջեալ *կործանեցաւ»:* (299 / 11) Եւ յետ այնորիկ զսպանողսն Աբլ Ասադայ կալեալ մերձաւորացն՝ չարաչար *կործանեցին:* (327 /12) Եւ այնուամենայնիւ գայթակղեցուցանէին և *կործանէին* զաշխարհն նոցա (254 / 3) և ուղղեալ զնիզակն ընդ գաւակ ձիոյն յերկիր *կործանէր* զահագին վիրագն: (30 / 6) Եւ այնպէս ամենեքին այր զընկեր իւր ախոյեան *կործանէր.* (115 / 4) և վերնառաք հրամանն երթայր *կործանէր* զթագաւորութիւն նոցա: (176 / 14)

ԿՈՐԾԱՆՈՒՄՆ -4

Բեկումն մեծ, որ եղև արևելից աշխարհիս, Եւ աղաղակ *կործանման* հնչեաց ընդ երկիր. (225 / 13) Նա և յետ այնորիկ յետ *կործանման* աշտարակին աշխարհաշէն և խառնափնդոր լեզուացն, լուաք մեք ի ժամանակագիր պատմութենէ ոմանց (245 /13) ԿԱՆՈՆՔ ՏԵԱՌՆ ՍԻՄԵՈՆԻ ԱՂՈՒԱՆԻՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՅԵՏ *ԿՈՐԾԱՆՄԱՆՆ* ՆԵՐՍԻՍԻ (305 / 10) ՀԱՒԱՏԱԼՆ ՀՈՆԱՑ Ի ՔՐԻՍՏՈՍ Ի ՁԵՌՆ ԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ ԻՍՐԱՅԷԼԻ ԵԻ *ԿՈՐԾԱՆՈՒՄՆ* ԶՈՀԱՐԱՆԱՑՆ ԵԻ ԿԱՆԳՆԵԼ ԽԱՉԻՆ ՔՐԻՍՏՈՍԻ (248 / 5)

ԿՈՐԿԻՐԻԱ - 1

Իսկ կղզիք՝ Սիկիլիա, Եւբիա, Ռոդոս, Քիոս … Իթակէ, *Կորկիրիա* և Կիւղադէս (6 / 11)

ԿՈՐՆՉԵԼ - 1

«Ես եմ Բասիլրա՝ ծառայ Քրիստոսի, որ չարչարեցայ ի խաչի և խնդրեցի ի փրկչէն մի *կորնչել* նշխարաց իմոց. (120 / 13)

ԿՈՐՆՉԻՄ - 7

այլ ես *կորեայ* և անզաւակացայ: (170 /12) ընդունայն *կորեան* խորհուրդք նորա: (149 / 9) և *կորեան* անկան բազումք ի նոցանէ (150 / 10) իսկ պաղանաւորքն և առապուրք ի լերանց վերայ *կորեան.* (332 / 1) յորոց բազումք *կորեան* զանմահն մահ՝ թողլով զանկողոպտելի գանձն հաւատոյ սրբոյ: (332 / 6) Եւ դուք յոյժ մոլորեալ էք՝ ոչ լսելով զբանն զայն, եթէ «աստուածքն, որ զերկինս և ոչ զերկիր ոչ արարին, *կորիցեն* յերկրէ»: (247 /1) զի մի ոք *կորիցէ* ի հովուաց կամ ի հօտից (125 / 20)

ԿՈՐՈՎԱԶԻԳ - 2

Յայնժամ առաքէր ընդ նախարարն ընդ այնմիկ առ ի հաստատել զխորհուրդ պայմանին այնորիկ արս հեծեալս ընտիրս, զօրաւորս զօրութեամբ, աղեղնաւորս *կորովագիգս* թուով իբրև հազար մի. (141 / 19) մանաւանդ ի տեսանել զպնդաքարշ *կորովագիգսն,* որ իբրև զկարկուտ սաստիկս տեղայր ի վերայ նոցա: (136 / 2)

ԿՈՐՈՎ - 1

նետ ի *կորովից* քոց թռչէր ուղղակի (23 / 6)

ԿՈՐՈՎԻ - 1

զԵռանշահիկն զՎաչագան ի Պատրիկեան Աղուանից իշխան զքաջ *կորովի* աջողակ աղեղնաւորն հանդերձ զօրօքն իւրովք յետոյ իւր արարեալ …դարձեալք ի փախուստ: (320/3)

ԿՈՐՈՒՍԱՆԵԼ - 2

Հողեղենքն զհոգեղէնսդ երկեցուցանէին, և ապականացուքն զանապականսդ կամէին *կորուսանել* (21 / 15) զոր յօրինեցի ընդդէմ արևմտից *կորուսանել* և ջնջել զնա յերկրէ իմմէ: (134 / 8)

ԿՈՐՈՒՍԱՆԵՄ - 2

և *կորուսից* զանուանս նոցա յերկրէ և զզարմ և զզաւակ: (44 / 12) և *կորուսցէ* զիպարտութիւն անօրինիդ (44 / 5)

ԿՈՐՈՒՍԵԱԼ - 2

սրով խողխողեալ ի մէջ անթիւ դիականցն լինէր *կորուսեալ* (45 / 5) զի կալցի իշխանութիւն շահել զոգիս *կորուսելոցն* (214 / 6)

ԿՈՐՈՒՍԻՉ - 2

զի սատանայական է ամենայնդ և *կորուսիչ* հոգւոց: (242 / 15) Զքուէս *կորուսիչ* հմայիցն ի ձեռն տուեալ եպիսկոպոսին ի նիւթ հրոյ ծախէին՝ արժանի լինելով վերստին ծննդեանն ի ձեռն սրբոյ աւազանին: (258 / 4)

ԿՈՐՈՒՍ - 20

Յայնժամ ահ և երկիւղ սաստիկ զամենեսեան լնոյր, մինչև մնային *կորստեան* կենաց աշխարհին: (33 / 19) այց արար ամենողորմն Աստուած հեղման արեան սրբոց վկայիցն Քրիստոսի և աւերածոյ սրբոյ եկեղեցւոյ … և գերութեան կանանց և տղայոց և *կորստեան* հոգւոց անմեղաց (43 / 11) որք ի տղայութենէ իսկ երթեալ էին զհետ *կորստեան* ճանապարհին

(47 / 5) և դիւրալուր ունկնդրութեամբն ներկեալ բազմաց ազանց հոգիքն՝ մշտնջենաւոր խաւարի *կորստեան* մատնեցան: (126 / 11) և սկսան զպատճառ *կորստեան* իւրեանց զխաղն խաղալ: (139/17) վասն *կորստեան* զօրաց քոց յառաջագոյն ծանուցից քեզ. (144 / 12) և անսալ պատգամացն և կալ առաջի թշնամւոյն վասն բեկման և *կորստեան* աշխարհիս կամէր յանձն առնուլ: (154 / 17) և հաց *կորստեան* գործեալ նոցա՝ տալ ուտել ի ճաշի անդ արեամբ իւրեանց: (172 / 6) Զանգիւտ *կորստեան* փորեցին խորխորատ (226 / 9) և ծով և ցամաք ունկնդիր եղև կարապետաց Նեռինն՝ որդւոցն *կորստեան:* (325 / 1) որ և որդիք քո ոմանք զքո անլրութեանդ չարութիւն *կորստեան* տառապելոց առնուն գաւազան (339 / 15) կամեցեալ իւրն ծառայել ի խորխորատ *կորստեանն* դիցն աղտեղութեան պաշտամանն: (33 / 1) Եւ այսմ *կորստեանն* նոցա պատճառ եղև այն (318 / 8) Զի սգալի ձայնիւ անդադար ողբասցուք Ի վերայ դժնդակ *կորստեանս* մերոյ: (225 / 11) «Ընդէ՞ր է այս *կորուստ* զօրաց մերոց. (139 / 5) Եւ մատնեաց ի *կորուստ* զնախագահ տէրութիւնն: (227 / 4) որոց կատարածն *կորուստ* է»: (289 / 20) Զի հակառակ Աստուծոյ պատուիրանացն է և *կորուստ* հոգւոյ և մարմնոյ՝ զազատութիւն եկեղեցւոյ ի ձեռն անարժանից մատնել: (309 / 7) ԵԻ ՄԱՀՆ ԱՐՇԱԿԱՅ ԵԻ ՊԱՊԱՅ ԹԱԳԱԻՈՐԵԼՆ. ԵԻ *ԿՈՐՈՒՍՏՆ* ՄԵՀՐՈՒԺԱՆԱՅ. (30 /10) թիւրելով զնոսա յուղղափառ հաւատոյն՝ մատնել ի յաւիտենական *կորուստն:* (123 / 5)

ԿՈՓԵՄ - 1

և որք գային ի տեղին յայն՝ *կոփէին* ի նմա և ասէին. (111 / 2)

ԿՌԱՄՈԼՈՒԹԻՒՆ - 1

բարբարոսական ազգք կողմանցն արևելից վերստին ի դիւցախելար *կռամոլութիւնս* կործանեցան. (95 / 5)

ԿՌԱՆԱՄ - 1

Այսպէս և բիբք աչացն, որ և սոնքաձև կտցոյն փողորտաձգութիւն ի վայր կոյս դարձեալ զբերանովն *կռանայր* (199 / 13)

ԿՌԱՊԱՇՏ - 2

ետուն պատասխանի, եթէ արտաքոյ է պատուիրանաց, և եթէ *կռապաշտից* է գործդ այդ (269 / 8) Եւ անտի անցեալ ընդ դաշտակն Զերգունի՝ ի տեղի զոհարանի դիւցամոլ *կռապաշտիցն.* անդ էառ զնահատակութեան պսակն: (11 / 1)

ԿՌԱՊԱՇՏՈՒԹԻՒՆ -4

Եհաս հրաման սաստկագոյն յաշխարհս Աղուանից՝ թողուլ զհաւատս և հնազանդ կալ մոգական աղանդոյն՝ *կռապաշտութեան:* (112 / 11) որ են յօրինիչք *կռապաշտութեան* և յորդորիչք իգամոլ ախտից. (244 / 13) զոր և Նաբուգոդոնոսոր յայն հրաւիրելով ձայնս զմետասան խեղայեղ կաճառն կոչէր ի *կռապաշտութիւն* (244 / 14) Մերկացարո՛ւք այսուհետև զհին մոլորութիւնն և զապականեալ *կռապաշտութիւնն* (247 / 6)

ԿՌԻԻ - 3

Քանզի Իմայ և Աիմատան երկու զօրավարք սաստիկ վրդովմամբ զմիմեանս բախէին ի կռիւ: (175 / 16) ի սորա հինգ ամին յԱրաբիա կռիւն եղև (317 / 3) էր որ կռուով և էր որ չարաչար ախտիւք ծիւրեցան: (17 / 2)

ԿՌՈՒԻՄ -5

Եւ բացին զդրունս Ալանաց և հանին գունդ բազում ի Հոնաց և կռուեցան զմի ամ ընդ Աղուանից արքային: (16 / 16) Ի շաւաղ ամսոյ ԺԵ ին կռուեցաւ ընդ Րեփ պարսկի. (290 / 6) և ընդ հակառակս լեալ երկու որդիքն նորա ի վերայ տէրութեանն կռուէին: (15 / 9) Իսկ երանելի այրն ոչ ի վերայ տէրութեանն կռուէր, այլ յաստուածապաշտութեանն մրցէր: (17 / 7) Քրիստոնեայ մարդ, որ կռուի և արիւն հեղու, տարցի առաջի եպիսկոպոսին և ըստ օրինացն պատուհաս արասցեն: (91 / 15)

ԿՌՓԵՄ - 1

այլք զհիւանդապաշտս կռփէին: (165 / 18)

ԿՍԿԾԱԳԻՆ -1

Այլ զորդւոցն համբարուց կոծ կսկծագին Առ զատեալ մնացելոցդ քաղաք մենացեալ: (229 / 11)

ԿՍԿԾԱՆՈՂ - 1

Ընդ ժամանակս ընդ այնոսիկ սփռեցաւ տարածեցաւ յոլորտս երկրի բռնութիւն հարաւայնոցն ազգի խիստ և կսկծանող (324 / 14)

ԿՏԱԿ - 1

Յայնժամ զգետնեաց զնա այսն պիղծ ի տեսիլ ամենեցուն զամբաստանութեանն կտակ ի մէջ բերեալ: (213 / 10)

ԿՏԱԿԱՐԱՆ - 7

Բայց արևելեայցս բազմազգութիւն մատենից և կտակարանաց հրկիզութիւնք ամբոխեալ ցուցանեն զորպէսն: (12 / 12 Եւ հրամայէր առնել խորան փայտեղէն ծալածոյ և շիկակարմիր կազմել մորթով և սպիտակ կտաւովք և ի ներքոյ դրուագել զհանգստարան սրբոցն և զբոլոր կտակարանաց կայեանս: (61 / 7) զոր ընկալան հարքն մեր ի Սրբոց գրոց՝ Հին և Նոր Կտակարանաց ի ձեռն սրբոյն Գրիգորի և յերից երանեալ ժողովոցն՝ ՅԺԸ –իցն ի Նիկիա, և ՃՕ-իցն ի Կոստանդնուպօլիս, և Մ-իցն յԵփեսոս (123 / 10) Յայնժամ կոչեցեալ առ ինքն զնա՝ սկսաւ ուսուցանել ի Հին և ի Նոր կտակարանաց ըստ Արիոսի (288 / 2) հրկէզ եղեն եկեղեցիք և կտակարանք: (119 / 1) և կտակարանք և սպասք և տեղիք կալոյ նոցա անյայտք մեզ. (342 / 2) ամենայն առաքելական Կտակարանքն լի են այսու բարբառով (278 / 11)

ԿՏԱՒ - 6

Եւ բէժ կտաւով զմեծ խորանաւն շուրջ որմափակաբար պատեալ (61 / 12) հրամայէր դեսպակ առնել յանուն սրբոցն և նոյնպէս շիկակարմիր մորթովք կազմեալ և սպիտակազգեստ պատուական կտաւով ի վերայ յարմարեալ (61 / 18) Եւ յորժամ չու լինէր բանակին, յառաջ սրբոցն դեսպակ ելանէր առաջի՝ սպիտակազգեաց կտաւով ծածկեալ (62/11) զոր շիկակարմիր մորթով կազմեալ և սպիտակ կտաւով ի վերայ յարմարեալ և ոսկի խաչ ի պատուականագոյն ականց քանդակեալ, ի վերայ դեսպակին հարեալ (69 / 4) Եւ հրամայէր առնել խորան փայտեղէն ծալածոյ և շիկակարմիր

կազմել մորթով և սպիտակ *կտաւուվք* (61 6) և հրամայէր ամփոփել զցրուեալ նշխարս սրբոցն, և պատել սուրբ *կտաւուվք* և ծածկել ի բլրին: (102/16)

ԿՏՐԵԼ - 6

և անաստուածքն զաստուածային շառաւիղդ կամէին յարմատոցն *կտրել* (21 /16) Յայնժամ և նա հրապարակախօս լինէր ի մէջ իւրոց և կարծիս տայր *կտրել* զշառաւիղս Սասանականին և իւր՝ զթագաւորելն: (167 / 16) Եւ արդ՝ դա կարէ՞ հպել, մօտել և *կտրել* զդա, և կամ աւերել զմեհեանսն աստուածոց մերոց: (252/6) և հրամայեսցի *կտրել* ընդ մէջ և կեղծաւորացն մասն: (279 / 2) և ոչ արգելումք զդա յաւերելոյ և ի քանդելոյ զմեհեանս, և ի խլելոյ և *ի կտրելոյ* զծառն և այրել ի հուր: (252 /12) Զորոց ի շրջաբերական թղթին վասն Կիւրիոնի դիմադարձութեան Աբրահամ զամբաստանականս վասն նորա գրէ յազգ ամենայն՝ ի բաց *կտրելով* սրով հոգւոյն: (270 / 10)

ԿՏՐԵՄ - 3

Եւ նորա առեալ զփրկութեան արեգակն՝ յանդիման իւր *կտրեաց* և ետ նմա զայրիչն մեղաց ասելով. (184 / 7) Եւ դիմեալ ի ներքս քահանայիցն առ հասարակ՝ *կտրեցին* զծառսն. (255 / 7) *կտրէին* և զվարսս պարանոցացն և ճակատուցն (169 / 8)

ԿՏՐԻՃ - 1

Արդ՝ ոչ էր պարտ և արժան քեզ թողուլ զանդամս քո և խոտորել ի բանս ծառային իմոյ՝ *կտրճին* Հռովմայեցւոց»: (143 / 16)

ԿՏՈՒՑ - 1

Այսպէս և բիբք աչացն, որ և սոնքաձև *կտցոյն* փողորտաձգութիւն ի վայր կոյս դարձեալ զբերանովն կռանայր (199 / 12)

ԿՐԱԿԱԼՈՅՑ - 1

զօրանայր *կրակալոյց* պաշտամունք դիցն աղտեղութեան: (43 / 2)

ԿՐԱԿ - 2

քանզի *կրակաց* և ջրոց զոհէին և ճանապարհաց աստուածոց ոմանց (241 / 13) հրաման ունիմք ի գիւղս և յագարակս շինել ատրուշանս և զվռամական *կրակն* ի ներքս դնել (113 / 4)

ԿՐԵԱԼ - 1

Գնայ փախստեամբ յերեսաց նորա, ըստ չար բարուցն չար *կրեալ* անցս՝ (117 / 1)

ԿՐԵՄ - 8

յայնժամ չարաչար տանջանօք և գանիւք, կապանօք ի դուռն արքունի հասուցեալ՝ մեծագոյն պատուհաս *կրեսցեն:* (50 / 5) ապա եթէ ոչ՝ պատիժս մեծամեծս *կրեսցեն:* (163 / 9) և եթէ ի քահանայից իցէ, զնոյնս *կրեսցէ* (301 / 14) Եւ թէպէտ *կրեցին* Հայաստանեայքն զհարուածն զայն, սակայն ոչ եթող տէր Աստուած Մահմետի զվրէժն զայն. (318 / 11) Յայնժամ եպիսկոպոսունք, և՛ երիցունք, և՛ նախարարք, և՛ կանայք նախարարացն իւրաքանչիւր զգեստիւք մեծաւ փափագանօք *կրէին* ի դուրս զհող բրածին. (80 / 9) Եւ քանզի միշտ ընդ իւր առեալ *կրէր* զնշխարս երանելեացն (61 / 16) Եւ բարեսէր և յոյժ

հաւատացեալ թագուհին զխինձ մատուցեալ թագաւորական զգեստու՝ ի հողոյն կրէր փութապէս: (80 / 8) զոր միշտ ի ծոց իւր կրէր (182 / 5)

ԿՐԹՈՒԹԻՒՆ - 1

եւ անդէն ի տղայական տիոցն վարժէր զինքն Աստուածաշունչ գրոց կրթութեամբ (36 / 15)

ԿՐԿԻՆ - 10

Ամենայն ինչ քո գնդին կրկին է. (23 / 2) ոչ հեստել և համառել առ խոնարհութեան կարգին, այլ յայսմ քաջանալ և առնուլ կրկին զանանցական պատիւն (35 /2) Եւ կրկին և երեքկին տուեալ սաստկագոյն պատերազմ, ոչ ինչ կարէին առնել (109 / 5) կարող էի ես առաւել կրկին քան զնա հաճել զմիտս քո: (134 / 2) և փոխանակ միոյ չարեացն, զոր ընդ նա անցուցեր, կրկին հատուցից քեզ. (143 / 4) և փոխանակ միոյ բեկմանն կրկին հատուցից քեզ զլիութիւն մարդոյ և անասնոյ (161 / 14) Աստանօր աղմկեալ կրկին ժողով լինի. (267 / 11) և ի նմա է կրկին այրն, զոր Աբրահամ գնեաց ի կալուածս շիրմացն: (284 / 15) ի սոյն ամի տերանց տէրն Յովհաննէս, որ Հայոց, Վրաց և Աղուանից եղև տէր, խնդրեաց յարքունեացն կրկին անգամ զԲուլխար, Խոյտա, Փատգոս երիցս այսոցիկ աշխարհաց: (331 /1) զոր նոյն ինքն Գէորգ և զսա կրկին ձեռնադրէ: (346 / 8)

ԿՐԿՆԱԲԱՆՈՒԹԻՒՆ - 1

ԿՐԿՆԱԲԱՆՈՒԹԻՒՆ ԱՋԳԱՇԱՐ ԱՆՈՒԱՆՑ ՀԱՄԱՌՕՏԱԲԱՐ (338 / 12)

ԿՐԿՆԱԿԻ - 2

Կրկնակի ընդ ձեռն Ուռնայրի գերագոյն լուսաւորեցան: (14 / 10) ԿՐԿՆԱԿԻ ԵՐԹՆ ՋՈՒԱՆՇԻՐԻ ԱՌ ԲՌՆԱԿԱԼՆ ՀԱՐԱՒՈՑ ԵԻ ՕԳՆԵԼՆ ՅՈՒՆԱՑ ԻՄԱՍՏԱԲԱՐ ՕԺԱՆԴԱԿՈՒԹԵԱՄԲ ԵԻ ԿԻՍԱԿՏՈՒՐ ՋՀԱՐԿՍ ԱՌՆԵԼ (196 / 10)

ԿՐԿՆԵԱԼ - 3

Եւ իբրև կրկնեալ և երեքկնեալ զտեսիլն. (34 / 1) կրկնեալ և երեքկնեալ նոյն տեսիլ: (57 / 6) Եւ կրկնեալ անդրէն հասին պատգամաւորքն թշնամւոյն (157 / 13)

ԿՐԿՆԵԼ - 3

Վասն որոյ ասեմ քեզ, մի՛ կրկնել առ իս վասն դորին ունայն խնդրոյ. (134 / 3) Եբաց զբերանն իւր և յերկիւղէն մեծէ անդրէն զբանն կրկնել ոչ կարաց (136 / 15) և կրկնել զծունր թանայր զգետինն: (151 / 6)

ԿՐՏՍԵՐ - 2

որ էր դայեակ կրտսեր որդւոյն Յազկերտի. (16 / 2) որոց արկեալ վիճակ Բաբկայ՝ հասանէ Գորայ աւանն Խոտայ, և կրտսերոյն Գազանայ գիւղն ցանկալի Շաղատ վիճակեցաւ: (111/18)

ԿՐՏՍԵՐԱԳՈՅՆ - 1

Զորմէ յաւիտեան ոք մինչև ցայսօր ոչ լուաւ, թէ առ ի մեծարգոութենէ ինչ կրտսերագունից շնորհեցաւ: (197 / 15)

ԿՐՈՒԿ - 1

և միւս զօրավարն Պարսից եկեալ ի Հռովմայ և դարձուցեալ զՀերակլիոսն ընդ *կրունկն* և վարեցին ընդ աշխարհին Սիւնեաց: (133 / 8)

ԿՐՕՆ - 10

մատուցանէին և նոքա պատարագս Աստուծոյ ըստ կարգի քրիստոսական *կրօնից* ի ձեռն օրհնութեան քահանայիցն սրբոց (103 / 15) Եւ վասն ապստամբացն Աղուանից ի մերմէ տէրութենէս հրամայեալ եմք ըստ քո *կրօնիցդ* առնել առ նոսա ուղղութիւնս (296 / 10) Եւ ածին զՅոհան ոմն սիւնական, ձեռնադրեցին և հնազանդեցան քաղկեդոնական *կրօնիցն:*(268/5) ըստ հիւսիսական ցրտամիտ մորոսութեանն առասպելայօդ և ստապաճոյճ *կրօնիւք* զհեթանոսական պղտոր պաշտամունսն մեծ գոլ կարծէին: (240 / 18) Վասն զի զնի հաւատ ունող հարքն մեր ընդ հարսն ձեր զմիմեանց հոգային զհոգւոցն փրկութիւն, և ի ներել Տեառն Աստուծոյ՝ զօրացեալ տիեզերակործան զեղխ *կրօնն* Քաղկեդոնի (295 / 5) և մի՛ զոք վտանգեալ՝ դարձուցանել ի մոգութեան *կրօնս:* (48 / 12) Ի ժամանակս Յազկերտի ամբարշտի վառէր, բորբոքէր սատանայ ի միտս նորա բառնալ զքրիստոնէութեան *կրօնս:* (112 /10) լսէր և տեսանէր անդ ամբաստանութիւն և *կրօնս* մարդահաճոյս ազգին թշուառացելոյ: (240 / 9) զի զաշխարհս յայնմ գրեթոյն ի *կրօնս* դարձուսցեն: (321 / 12) Սոքա և ուղղափառքս աղարտէին զՀոռոմոց ամենայն *կրօնսն:* (267 / 16)

ԿՐՕՆԱՒՈՐ - 5

Զգաստացեալ *կրօնաւոր* վարուք յառաջադէմ լինէր (235 / 10) գնացի ի խնդիր Կարապետին, հրամանաւ և թոշակաւ Անդրէ երիցու և հաւանութեամբ ընտանեացն իմոց Յովհաննու և Մխիթարայ *կրօնաւորաց:* (282 / 3) և եթէ ի *կրօնաւորաց* ոք իցէ, նզովեալ հալածեսցի (301 / 14) և զբանակս ճգնաւորական *կրօնաւորացն* այլայլեալ շփոթեաց. (299 / 7) զի *կրօնաւորք* էին, սկսան ուսուցանել: (268 / 11)

ԿՐՕՆԱՒՈՐԱԶԳԵՍՏ - 1

յանդիման ունէին առաջի նոցա զսրբասնեալն Իսրայէլ *կրօնաւորազգեստ* կարգաւ: (235 / 2)

ԿՐՕՆԱՒՈՐԵԼ - 1

և միաբանութեամբ *կրօնաւորել* ըստ կանոնական հրամանի (307 / 10)

ԿՑՈՐԴ - 2

և միաբանեալ *կցորդ* լինէին նահատակութեան նոցա: (116 / 4) Եւ եթէ ոք տացէ այնպիսւոյն ողջոյն, *կցորդ* լիցի չար գործոց նորա. (125 / 15)

ԿՑՐԵՄ - 1

Այլ յանկանել յախտէ անտի անզգայեալք իբրև աւուրս ամսոյ միոյ կամ երկուց կարկափեալք *կցրէին* զատամունս իւրեանց և յեղուին զաչս իւրեանց. (165 / 13)

ԿՈՒՌՔ - 7

զոր էր բերեալ երիցուն *Մատթէ* անուն կոչեցեալ ի Յոհաննէ Մանդակունւոյ՝ Հայոց կաթողիկոսէն (67 /3) «Ես Վաչագան՝ Աղուանից արքայ, և Շուփհաղիշոյ՝ Պարտաւայ արքեպիսկոպոս…*Մատթէ* Պարտաւայ երէց, Թոմա՝ թագաւորի դրան երէց …*Մատթէ* Դարահոճոյ երէց … և այլք բազումք, որք միաբան առաջի իմ եկին ի հանդէս ի հովոց՝ ի տեղւոջս յԱղուէն, կարգեցաք այսպէս. (90 /2; 90 /3) նիրհ անկանէր երիցուն *Մատթէի.* (70 / 9)

ՄԱՏԹԷՈՍ - 3

առաջին պատճառ լուսաւորութեան մերոյ է սուրբն Եղիշայ … Եւ ապա տէր սուրբն Գրիգորիս Պահլաւիկ … տէր *Մատթէոս,* տէր Սահակ, տէր Մովսէս

(342 / 11) Տէր *Մատթէոս* ՝ամ մի և կէս, յեպիսկոպոսութենէն Կապադակայ (345/9) զի չորք միայն կացին ի վերայ երկրի. Աղեքսանդրին՝ Մարկոսի աթոռն, Անտիոքայն՝ *Մատթէոսին,* Հռոմայն՝ Ղուկասուն, Եփեսոսին յԱսիա՝ Յովհաննուն. (272 / 13)

ՄԱՏՆ - 1

Եւ եկեալ դևն զգենու զհանդերձն և նստի ի վերայ աթոռոյն. և առեալ զինն մարդոյն զմորթն *մատամբքն* հանդերձ տեսանէ: (54 / 4)

ՄԱՏՆԱՀԱՏ - 1

Յաստուածուստ պսակեալն այն Վաչագան հրամայէր ժողովել զմանկունս կախարդացն, և՛ դիւթաց, և՛ քրմաց, և՛ *մատնահատաց,* և՛ դեղատուաց. (50 / 18)

ՄԱՏՆԱՀԱՏՈՒԹԻՒՆ - 3

ՎԱՍՆ ԿԱՐԳԵԼՈՅ ԴՊՐՈՑՍ ԱՐՔԱՅԻՆ ՎԱՉԱԳԱՆԱՅ ՉԱՐԱԾՆՈՒՆԴ ՄԱՆԿԱՆՑՆ ԴԻՒԹԱՑ ԵՒ ԳՏԱՆԵԼՈՅ ՋՊԻՂԾ ԱՂԱՆԴՆ *ՄԱՏՆԱՀԱՏՈՒԹԵԱՆ* ԵՒ ՎԱԽՃԱՆԻ ՆՈՑՈՒՆ (50 /16) Այլ և ձեռն ևս արկանէր յուզել և՛ քննել, և՛ խնդրել զչար աղանդսն *մատնահատութեան* և դեղատուութեան (51/12) կատարէին զչար գործ *մատնահատութեան* յամուր մայրւոջն առ ափն Կուր գետոյ (52/3)

ՄԱՏՆԵԱԼ - 2

Եթէ զայլ ոք *մատնեալ* կախարդութեամբ չար դիւացն, զնոյն աղէտս կուրութեան և պիսակութեան ի վերայ հասուցանէին: (55 / 4) և ի սուր սուսերի *մատնեալ* զքաղաքն՝ թափեցին յինքեանս զվայելչութիւն ամենայն կազմութեան բնակչացն (338 / 5)

ՄԱՏՆԵԼ - 4

զչար որոմն անիծելոյն Նեստորի և զժողովոյն Քաղկեդոնի անարգելաբար սերմանեն ի հոգիս անմեղաց՝ թիւրելով զնոսա յուղղափառ հաւատոյն՝ *մատնել* ի յաւիտենական կորուստն: (123 / 5) սակայն զբնական աստուածսն ձեր, զոր նախնիք ձեր և դուք պաշտեցիք, ոչ է պարտ ձեզ թողուլ և ուրանալ և ի բաց ընկենուլ, և *մատնել* ի ձեռս դորա (251 / 14) Զի հակառակ Աստուծոյ պատուիրանացն է և կորուստ հոգւոյ և մարմնոյ՝ զազատութիւն եկեղեցւոյ ի ձեռն անարժանից *մատնել:* (309 / 8) զօրութիւն բարձրելոյն հեռացեալ էր ի նմանէ՝ *մատնելով* զնա ի ձեռս ձեռնասուն սիրելւոյն իւրոյ: (223 / 8)

ՄԱՏՆԵՄ, ՄԱՏՆԻՄ -10

Բարկացուցաք զարարիչն գործովք մերովք, Եւ *մատնեաց* ի կորուստ զնախագահ տէրութիւնն: (227 / 4) զի նոյն ինքն զմեծ թագաւորն Սմբատ յետ սակաւ ժամանակի *մատնեաց* աստուածահաս պատուհասն (337 / 6) Քանզի որ ըմբռնեսցին ի չար զաւակէն, ի պարտութիւն *մատնեսցին* (44 / 7) և դիւրալուր ունկնդրութեամբն ներկեալ բազմաց ազանց հոգիքն՝ մշտնջենաւոր խաւարի կորստեան *մատնեցան:* (126 / 11) Լուծան յօդք անդամոց նոցա, թուլացան բազուկք նոցա, *մատնեցան* ի պարտութիւն (152 / 6) և զձեզ կապեալ ոտիւք և ձեռօք՝ *մատնեցից* ի ձեռս դորա (253 / 7) Այնպէս հասին ի վերայ մեր աւուրքն այնոքիկ, զի յերեսաց սրոյն, որպէս յահեղ առիւծէ ի մագիլս գիշաքարշս բեկանող արջոյ՝ ի ժանիս

սովոյն *մատնէին:* (156 / 15) *մի՛ մատներ* զիս ի ձեռս նեղչաց իմոց»: (194 / 11) մտանէ բազմութիւն զօրացն ի քաղաքն և *մատնի* քաղաքն ի բերան սրոյ (323 / 14) զոր անդ ոտնակապեալ զնա տեառն, որ դատի զերկիր, *մատնի* ի ձեռն Արաբացւոցն իշխեցողի և կենդանւոյն թաղեալ սատակի: (337 / 14)

ՄԱՏՈՒՑԱՆԵՄ - 4

Իսկ սուրբ հայրապետն եկեալ ի Գիս՝ կանգնեաց եկեղեցի և *մատոյց* զանարիւն պատարագ: (10 / 16) և *մատոյց* նմա զպատարագսն. (161/1) Եւ իբրև կատարեաց զաղօթս, *մատոյց* և զայն, որ յաղագս նորահրաշ տօնին էին պատարագք (189 / 18) և գտեալ անդ ոսկետիպ մի մատեան սակս հաւատոյ՝ *մատոյց* առաջի նորա: (321 / 9)

ՄԱՏՉԻ - 5

յորում է սեղան խորհրդոյ և պատարագ *մատչի* ի վերնայարկն Սիոնի (283 / 17) անդ սեղան է և պատարագ *մատչի:* (284 / 4) Եւ ներքոյ բեմին սուրբ այրն և մսուրն, ուր սեղան է, և պատարագ *մատչի:* (284 / 16) և անտի յարևելից կուսէ ըստ Յորդանանու կողմանէ երեք ասպարիզօք հեռի ի Բեթղեհեմէ հովանոցն, ուր երկու եկեղեցի, և պատարագ *մատչի,* և Յորդանան գետ հինգ հրասախ հեռի է յԵրուսաղեմէ յարևելից կուսէ, ուր փրկիչն մկրտեցաւ. յորում եկեղեցի սագաշէն խաչանման յարմարեալ՝ ութսուն կանգուն երկայն, ութսուն՝ լայն, երեք սեղան խորհրդոյ, և պատարագ *մատչի.* (285 / 2; 285 / 4)

ՄԱՏՌՈՒԱԿ - 1

Ո՛չ օրինաւոր *մատռուակք* էին առաջի նոցա, և՛ ոչ սպասաւորք ի թիկանց կողմանէ: (160 / 10)

ՄԱՏՈՒՌՆ - 8

Եւ ի վերայ գերեզմանին հրամայէր հիմն արկանել *մատրան* և փութապէս աւարտել և անուանել մատուռն սուրբ Գրիգորիսի: (83 / 1) Եւ զմնացեալն ի նշխարացն կնքեալ՝ մեծաւ զգուշութեամբ տայր պահել ի սուրբ և յազնուական սենեկի, մինչև կատարեսցի հիմնարկութիւն *մատրանն* (86 / 4) և անուանել *մատուռն* սուրբ Գրիգորիսի: (83 / 2) ի վերայ գետնափոր կայենի խաչին շինէ *մատուռն* մի հողեղէն չորեքկուսի (97 / 1) Անդ կայր *մատուռն* մի փայտեղէն կազմեալ (205 / 4) ուր կայր *մատուռն* մի: (209 / 15) Իսկ եկեղեցին կաթողիկէ, որ *Մատուռն* անուանի, որ է գիւտ խաչի, քսան կանգուն հեռագոյն ի Յարութենէն, վաթսուն և հինգ սիւն վեր և ի ներքոյ երկայնութիւն: (283 / 9) Եւ յաջմէ եկեղեցւոյն *մատուռն,* յորում մանկանց սպանելոցն ի Հերովդէէ նշխարք պահին. (284 / 16)

ՄԱՏՈՒՍԻԱ - 1

Եւ են սահմանք սոցա ի Մարաց ընդ կողմն հիւսիսոյ մինչև ի Գաղիրովն, որ ձգին ի Պարգամիդոս գետոյ մինչև ի *Մատուսիա,* որ է Իլիոն: (6 / 8)

ՄԱՏՈՒՑԱՆԵԼ - 11

Ընդ աւուրսն ընդ այնոսիկ առաքեաց արքայ զՄատթէ երէցն Դարահոջու՝ հանդերձ պաշտօնէիւք ի Սուհառ՝ պաշտօն առնել և պատարագս *մատուցանել* յանուն սրբոցն (70 / 7) և եթէ մեղքն չեն յայտ, պատարագ հրամայեսցեն *մատուցանել* քահանային (92 /16) նա այնուհետև և ի սուրբն երթայր յԵրուսաղէմ՝ *մատուցանել* ուխտադրութիւն: (95/9) կամ թէ

սպառնալեօք քովք համարեսցիս զանգիտեցուցանել զմեզ և զառժամանակեայս ընտրել կեանս, թողլով զԱստուած՝ անմռնչոց *մատուցանել* պաշտօն»: (104 /17) և *ի մատուցանել* զօժիտս և զընծայս թագաւորական ընկալեալ, յոյժ բերկրեցան ի տեսանել զմիմեանս: (138 / 2) պարտ էր ձեզ զոհս և նուէրս *մատուցանել* մեհենացն և ծառոց (253 /14) մի՛ ի մէնջ երևեսցին Նադաբ և Աբիուդ զօտար հուր *մատուցանել* անհաւատապէս, զի մի՛ հրատոչոր լիցուք. (278 /15) այլ կալ ձեզ յեկեղեցիս ձեր և հանապազ անդադար աղօթս *մատուցանել* առ Աստուած. (303 / 16) զորս ձօնեալ էին Ասպանդիատայ գարշելւոյ առ ի զոհս *մատուցանելոյ* նմա ձիովք (250 / 5) Առեալ զնշան խաչին պարծանաց յանձն իւր բազկատարած պաղատանս առ Աստուած *մատուցանելով* վասն իւրոյ աշխարհին: (235 / 10) Իսկ որ ձօնեն զվարսաւոր ծառս՝ նուէրս նոցա *մատուցանելով* (247 / 12)

ՄԱՏՈՒՑԱՆԵՄ - 26

միայն թէ զանձինս ձեր *մատուսջիք* առաջի աստուածութեանն՝ աներկևան մտօք, սիրով (243 / 4) և գոհութիւն անսպառ *մատուսջիք* ողորմածին Աստուծոյ (310 / 20) Ապա եթէ ընկերք և աշակերտքն քինով լինին, և ժողովուրդքն գիտէին, եթէ յառաջ խռով էին, քահանայն պատարագ *մատուսցէ,* և ժողովուրդն անիծիւք ի բաց հալածեսցեն: (93 / 4) զի անդ պարգևաձիր մեծարանօք ի հանդիսաւոր տօնին Աստուծոյ *մատուսցէ* երկրպագութիւն: (222 / 2) և արդարադատին Քրիստոսի *մատուսցուք* բազմապատիկ փառս»: (314 / 11) և երկիր պագանեմք ծառոցն և *մատուցանեմք* զոհս և նուէրս, որպէս մինչև ցայժմ: (253 / 2) գարշելի և պիղծ են առաջի Աստուծոյ ամենեքեան, որ Ասպանդիատայն *մատուցանեն* պաշտօն և զանարատն *մատուցանէ* պատարագ որպէս զարին Ահարոն: (214 / 7) Եւ ցայգն բոլոր ամենայն բազմութիւն ժողովելոցն անդադար խնդրուածս և պաղատանս *մատուցանէին* առ Աստուած (79 / 11) Զայն տեսեալ քրիստոսազարդին Թէոփիլեայ և Ագիստոսեան գնդին՝ *մատուցանէին* և նոքա պատարագս Աստուծոյ ըստ կարգի քրիստոսական կրօնից (103 / 14) Նոյնպէս սկայի ումեմն վայրագի անճոռնւոյ ձիախորով զոհիւք պաշտօն *մատուցանէին* կարդալով նմա Թանգրի խան Աստուած (241 / 4) Որոց բազում ազգք մոլորեալք նուիրական ձօնիւք զոհս *մատուցանէին* առաջի այնր պատկերին (246 / 2) զոր *մատուցանէին* ժողովուրդն ի տան Աստուծոյ վասն մեղաց (307 / 15) Ո՞չ ապաքէն յորժամ պաշտէիք և *մատուցանէիք* զզոհս և զնուէրս առաջի ծառոցն յանուն սկայազօր քաջին Ասպանդիատայ, զոր ինչ խնդրէիք, առնուիք և գտանէիք զբարիսն. (251 / 4) քանզի ուտէիք և ըմպէիք զմիս և զարիւն զոհիցն անասնոց, և զոր դիւացն առաջի ծառոցն *մատուցանէիք:* (256 / 5) և երկրպագութիւն մատուցեալ և շնորհիս եկելոցն ի նորա հրամանսն և գործակցութեան խնդրոյն այնմիկ՝ *մատուցանէր* և ասէր. (84 / 13) Եւ երանելի հայրապետն Հայոց …ցայգապաշտամամբ մաղթանս առ Աստուած *մատուցանէր* առ ի լուծանել զանէծս առաջնոց հայրապետացն: (325 /12) և ապստամբեալ քո յինէն քոյովք զօրականօքդ՝ պաշտօն *մատուցանէք* աստուածոց մերոց (104 /6) Ի բա՛ց թողէք այսուհետև

զպղծութեան պաշտամունսդ, մի՛ *մատուցանէք* երկրպագութիւն արարածոց (242 /15) և Ասպանդիատայ ումեմն վայրագ սկայի ձիովք այրեցելովք զոհ *մատուցանէք.* (246 /5) Արդ իբրև *մատուցաւ* հրովարտակն առաջի ամենաբարեպաշտ կայսերն, զուարճանայր, զուարթանայր (181 / 15) պարտ էր ձեզ զոհս և նուէրս մատուցանել մեհենացն և ծառոց և *ոչ մատուցէք.* փոխանակ այնորիկ եղև այդ առ ձեզ յանդիմանութիւն ի մեծէ աստուածոցն մերոց: (253 / 15) Բայց արդ առէք զոհս և նուէրս և *մատուցէք* առաջի ծառոցն և մեհենացն. ապա ապրիք ի ցաւոց և ի հարուածոց այտի: (253 / 16) Բայց արդ՝ այսուհետև *մատուցէք* զանձինս ձեր առաջի աթոռոյ շնորհացն Աստուծոյ՝ թօթափելով ի բաց զամենայն ախտս չարեաց անօրէնութեան ձերոյ (256 / 7) Եւ նոյնժամայն խորհուրդ բերեալ իշխանացն Հայոց Մեծաց՛ *մատուցին* առաջի թագաւորին զԱգաթանգեղայ Պատմութիւնն ցանկալի: (107/8) և *մատուցին* զհրովարտակն մեծի իշխանին Հոնաց առաջի քահանայապետին սրբոյն Սահակայ և Գրիգորի իշխանին Հայոց (264 / 5)

ՄԱՏՈՒՑԱՆՈՂ - 1

զայն քահանայքն, անարատք *մատուցանողք* և սպասաւորք սեղանւոյն՝ վայելէին. (307 / 16)

ՄԱՏՈՒՑԵԱԼ - 2

Եւ բարեսէր և յոյժ հաւատացեալ թագուհին զխինձ *մատուցեալ* թագաւորական զգեստու՝ ի հողոյն կրէր փութապէս: (80 /7) և երկրպագութիւն *մատուցեալ* և շնորհիս եկելոցն ի նորա հրամանսն և գործակցութեան խնդրոյն այնմիկ՝ մատուցանէր և ասէր. (84 / 12)

ՄԱՐ - 1

Նախավկայն է տէրն Ստեփաննոս և Թէոդորոս նահատակ, սուրբքն Վարոս, Մամաս, *Մար ...* և մասն մի ի սուրբ քառասնիցն»: (120 / 11)

ՄԱՐԱԽ - 1

Եւ յայնմ ամի էլ *մարախ* ի Խազրաց կուսէ ...և եկեր զմասն ինչ Աղուանից աշխարհիս: (331 / 3)

ՄԱՐԱՍՊԱՆ, ՄԱՐԱՍՊԱՆԴ - 1

«Վա՛յ ինձ, եղուկ եմ ես. որպե՞ս հրապուրեցայ ի կախարդացն, որք ըղձային ինձ ի Հնդիկս ի *Մարասպան /հավանաբար դ-ը տառը բաց է թողնված/* տեղւոջ ըմբռնել: (148 / 16) Եւ ածեալ զնա արտաքս քան զապարանսն՝ մուծին ի սրահ մի, զոր Քատակի Հնդուկն կոչեն՝ յապարանսն *Մարասպանդ* կոչեցելոյ: (148 / 13)

ՄԱՐԱՑ ԱՇԽԱՐՀ - Տե՛ս ՄԱՐՔ

ՄԱՐԳ - 1

զի ի ժամ տապակէզ աւուրցն ... ի հովիտս բարձրաբերձ լերանցն բերկրէին ծաղկատեսակ հանգստեամբ, ի գեղեցիկ *մարգս* պերևետեալ յոլովէին աւուրս բարեկեցիկ յղփութեամբ: (221 / 14)

ՄԱՐԳԱՐԷ - 16

ՆԱԽ ՍԱԿՍ ԻՍՄԱՅԵԼԵԱՆ ԱԶԳԻՆ ՅԱՐՁԱԿՄԱՆՆ Ի ՀԱՐԱԻՈՅ ԵՐԿՐԷ՝ ՈՒՆԵԼ ՋՕԱԳՍ ՏԻԵԶԵՐԱՑ, ԵՒ ԵԹԷ Ի ՄԱՀՄԵՏԷ

ՍՈՒՏ *ՄԱՐԳԱՐԷԷՆ* ԵՂԵՒ ՍԿԻԶԲՆ (287 / 5) և առանց առաջնորդի և *մարգարէի* ուրուք և կամ երկնաւոր հրեշտակի աստուածատեսք եղեն: (18 / 9) Եւ փրկչական բանն անդանօր կատարիւր՝ յառնել սուտ *մարգարէի,* զոր դիւապատիր Մահմետն առնել սկսաւ մարգարէութիւն: (288 / 16) անզգայ էր հոգի *մարգարէին* (87 / 10) այլ յաղագս կենդանի հոգւոյ *մարգարէին* արար շնորհս վերակացու լինել քաղաքին՝ փրկել զնոսա ի սրոյ թշնամւոյն: (87 / 17) զոր հանդերձեալն էի արկանել հիմն և սկիզբն առնել ժամանակաց և անցից, որ անցին ընդ աշխարհս Աղուանից՝ ըստ բանի *մարգարէին,* որ ասէր, եթէ մոռացայ ուտել զհաց իմ ի ձայնէ հեծութեան իմոյ: (127 / 19) Ապա այնուհետև անդ էր տեսանել նմանապէս կատարեալ ըստ բարբառոյ *մարգարէին.* (156 / 11) ԵԹԷ ՈՅՔ ԷԻՆ, ՈՐՔ ՅԵՏ ՄԱՀՄԵՏԻ՝ ՍՈՒՏ *ՄԱՐԳԱՐԷԻՆ* ԵՂԵՆ ԱՄԻՐՄՈՄՆԻՔ (291 / 3) Ըստ նմին օրինակի և ի ձեռն այլոց *մարգարէից* և զմեզ զգուշացուցանէ տէրն՝ որդի մարդոյ. (306 / 8) Արդ ընտրեսցուք զբարին և մերժեալ անարգեսցուք զչարն շնորհիւ սուրբ հոգւոյն և պատուիրանօք նորա, որպէս հրամայեաց մեզ տէր ի /գրքում «և» է/ ձեռն *մարգարէից* և առաքելոց և վարդապետաց. (307 / 5) Ընդ նուազել թագաւորութեանն Պարսից սասանական ազգին՝ վերերևեալ այր մի Մահմետ անուն՝ ի սուտ *մարգարէիցն* (287 / 10) «Հրեշտակ խօսի ընդ իս, որպէս ընդ մի ոք յաստուածախօս առաջին *մարգարէիցն»:* (288 / 8) Եկին հասին ի վերայ մեր անէծք, Ջորս կանխագոյն սպառնայր Եսայի *մարգարէն* (226 / 6) Եւ միւս *մարգարէն* ասէ. (243 / 14) Եւ առ նա երանելի *մարգարէն* առնէր զմարգարէութիւնն. (289 / 5) Քոյին իսկ աշխարհիդ հայրենի հաւատքն պահեցան, եկեղեցիք շէն մնացին, վկայարանք ի խաղաղութեան …*մարգարէք* յընթերցուածս … և ամենայն ոք յիւրաքանչիւր կարգի: (26 / 1)

ՄԱՐԳԱՐԷԱԿԱՆ - 4

ինքն իսկ ի խոր վիրապին *մարգարէական* ակամբն տեսանէր զնահատակութիւն երանելեաց վկայիցն Քրիստոսի (34 / 12) Եւ կատարէր բանն *մարգարէական* (165/7) զի յայսմ ևս յայտնի լիցի բան *մարգարէական* (166/5) և ապա ի ծայրս ծագաց հասին *ի մարգարէականն,* յառաքելականն, յաւետարանականն, որ է սկիզբն և ընձիւղումն: (23 / 15)

ՄԱՐԳԱՐԷԱՆԱՄ - 1

Եւ թերևս ի վերայ սորա *մարգարէանայր* երջանիկն Եւայիաս, զտեսիլն, զոր ետես ի վերայ Բաբելոնի. (43 / 16)

ՄԱՐԳԱՐԷԱՑԵԱԼ - 1

Ջորս ընկալաք ի հոգեզուարճ վարդապետաց զմակերևումն ապառնեաց արտաճառել ուսցուք՝ յիշելով զնահապետական բանն առ Իսմայէլ *մարգարէացեալ,* եթէ ձեռք դորա յամենեսեան, և եղիցի յազգ մեծ: (287 / 7)

ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՆ - 4

առեալ զլրումն ժամանակի ըստ կանխասաց *մարգարէութեանն* և խոստմանցն Աբրահամու, եթէ ձեռք Իսմայելի յամենեսին, և ձեռք ամենեցուն ի դա. (193 / 5) «Եթէ դուք անսայք իմում *մարգարէութեանս* և քարոզութեանս և առնէք, մեծ իշխանութիւն ազգիս մերոյ հասանէ (288 / 17) զոր դիւապատիր

Մահմետն առնել սկսաւ *մարգարէութիւն:* (288 /17) Որում արդարև երկրորդեալ կատարեցաւ *մարգարէութիւնս* այս ի վերայ Պարսից թագաւորին՝ ամենաչարին Պերոզի (44 / 18)

ՄԱՐԳԱՐԻՏ - 4

զսա տեսաք՝ լի ամենայն ընչիւք, ոսկի և արծաթ բազում յոյժ … և լուսափայլ *մարգարիտք* ոչ սակաւք. (200 / 17) ի գերութիւն վարեաց զփայտն կենաց՝ զխաչն լուսատու տիեզերաց, որով դժոխք գերեցան, և զսպասսն ամենայն սրբութեանց կողմանցն այնոցիկ զոսկւոյ և զարծաթոյ և զականցն պատուականաց և զհանդերձս ծիրանիս ընդելուզեալ մեծագնի *մարգարտով.* (129 / 9) ընդ մէջ ածեալ գօտի ոսկի ընդելուզեալ *մարգարտով,* և սուսեր ոսկեստրեայն, ապարանջանս բազկացն և պսակ ցանկալի ի գլուխ նորա. ետուն նմա զանկապանս *մարգարտով* և գումարտակ նոյնգունակ՝ շուրջ զպարանոցաւն: (175 /8; 175 /9)

ՄԱՐԳԱՐՏԱԿԱՆ - 1

Եւ առեալ զիւրոյ զօրութեանն զզէն և ճաճանչաւոր *մարգարտական* զրահիւք արքունի զվայելչականն զայն՝ զարդարէր զհասակ (110 / 8)

ՄԱՐԳԱՐՏԱՀՈԾ - 1

Ըստ նմին և այլ ևս մեծութիւն շնորհէր նմա. սուսեր պողովատիկ, ոսկեպատեան, *մարգարտահոծ,* գեղաշարեալ պատմուճանս (198 / 1)

ՄԱՐԳԱՐՏԱՉԵՒ - 1

զի ընդ դեղնագոյն փետուրսն փոքր ինչ կանաչութիւն համավար խառնեալ արտաքս ճողճայր. և լանջացն կարմրանիշագոյն այսր անդր տրոհէր շուրջ զպարանոցաւն առ միմեանս պատուածեալ նման գարնանային առաւօտու ցօղոյ կայլակաց յանդաստանս, զոսկեծայր քստից *մարգարտաձև* ի վայր կախեալ բոլորովիմբ: (199 / 11)

ՄԱՐԳԱՐՏԱՅԵՌ - 2

Ապա եթէ կարօտեցար դու ի նմանէ ոսկւոյ կամ արծաթոյ, կամ ականց պատուականաց, կամ ոսկեման *մարգարտայեռ* հանդերձից, … կարող էի ես առաւել կրկին քան զնա հաճել զմիտս քո: (134 / 2) Եւ պարզևս մեծամեծս շնորհէր և գահոյս արծաթիս քանդակակերտ թիկամբ ոսկեզօծ, և հանդերձ ոսկեմանեալս և զիւրոյ անձինն *մարգարտայեռն* պատենիւք սուսեր: (182 / 1)

ՄԱՐԳԱՐՏԱՇԱՐ - 1

Մարգարտաշարք էին յեռեալ բանք բերանոյ նորա, Եւ մաքրափայլ կեանք վարուց նորին: (228 / 20)

ՄԱՐԴ - 84

որ եթող զանթիւ բիւր բազում զօրս հրեշտակաց և եկն ի գձուձ կերպարանս մարդկան, գտաւ *մարդ:* (25 /14) էիր *մարդ,* և եղեր հրեշտակ: (28 / 5) «Մերոյ աշխարհիս *մարդ* ես, զմեր կամս արա՛ (40 /3) Քրիստոնեայ *մարդ,* որ կռուի և արիւն հեղու, տարցի առաջի եպիսկոպոսին և ըստ օրինացն պատուհաս արասցեն: (91 / 15) Եւ ազատ *մարդ* ոք յիւր եկեղեցւոջ թէ սեղան կանգնէ, կա՛մ նշխարս ինչ բերէ, կա՛մ պատարագ առնէ, եպիսկոպոսին հրամանաւ արասցէ (94 / 4) Իսկ ի վախճան յաւիտենիս Աստուած գոլով մշտնջենաւոր բանն Աստուծոյ՝ եղև *մարդ* կատարեալ անյեղապէս (124 / 3) և եթէ սուրբ կոյսն ոչ

ծնաւ Աստուած, այլ՝ *մարդ* սոսկ ըստ մեզ և լոկ տաճար բանին Աստուծոյ: (125 / 6) «Ով է *մարդ,* որ սիրէ զկեանս և կամի տեսանել զաւուրս իւր ի բարութեան (147 / 2) «Եթէ զոր օրինակ փախնուցու *մարդ* յերեսաց առիւծու, և պատահիցի նմա արջ, և զերծեալ ի նմանէ՝ անկանիցի ի տուն իւր և յեցուցեալ զձեռս իւր յորմն, և հարկանիցէ զնա օձ»: (156 / 12) զի ոչ եթէ իւրով զօրութեամբ զօրանայր *մարդ,* այլ տէր տկար առնէ զհակառակորդն: (169 /3) Քանզի որպէս ի մէջ բազմամբոխ հրապարակին այնպիսի հրաշագործութեան Աստուծոյ լինէր երևումն, այր առ այր և *մարդ* առ *մարդ* զարմացումն յոյժ յաճախէր: (206 /9; 206 /9) «Մի՛ մեղանչեր, որդեա՛կ, զի իբրև զքեզ *մարդ* եմ»: (288 /1) «Զի՞ *մարդ* ես, վասն է՞ր կաս ի քարանձաւդ»: (288/1) «Բայց այժմ Աստուծոյ յայտնութեանս տօն է, քանզի երևեցաւ Աստուած *մարդ* ծննդեամբ»: (316 /1) Ահա նմանութիւն խոտոյ ասի *մարդ:* (333 /10) չար և դիւապաշտ *մարդիկ* ժողովեալք բազմութիւն յոյժ առ ի սպանանել զերանելին Վրթանէս խորհրդեամբ կնոջ թագաւորին: (35 /13) Եւ ազգի ազգի աղանդք չարախոհն սատանայի յոլովեալ թշուառացուցանէին զհիքացեալ *մարդիկ* աշխարհիս Աղուանից (43 / 3) անկարելի ումեք էր զչար աղանդոյն *մարդիկ* ի խոստումն ածել: (52 /16) Յայնժամ հրամայեաց թագաւորն ունել զմարդիկն, զորս ի խողխողմանն իսկ տեսին և յոլովագոյն այլևս *մարդիկ,* զորս համբաւաւ գիտէին (53/1) «Ես Վաչագան՝ Աղուանից արքայ, և Շուփհաղիշոյ՝ Պարտաւայ արքեպիսկոպոս … և՛ ազատ *մարդիկ,* և՛ նահապետք Արցախայ … և այլք բազումք, որք միաբան առաջի իմ եկին ի հանդէս ի հովոց՝ ի տեղւոջս յԱղուէն, կարգեցաք այսպէս. (90 /4) Եւ արքայի առաջի ազատ *մարդիկ* պայմանեցին (93 / 10) Եւ որ տասնորդս տան ազատ *մարդիկ,* զկէսն ի բուն եկեղեցին տացեն, և զկէսն յիւրեանց եկեղեցին: (93 /13) Զայս պայման արարին եպիսկոպոսունք, և՛ քահանայք, և՛ ազատ *մարդիկ* առաջի արքայի: (94 /9) «Անօրէն իշխանն յորժամ աստուածանալ կամեցաւ՝ ձեռն արկանէր և զամենայն *մարդիկ* մեղօք կապէր: (244 /6) Պատուական գտելոցդ և վեհ հռչակելոցդ … տէր Մխիթար՝ Ամարասայ եպիսկոպոս, Սիմէոն՝ Մեծիրանց եպիսկոպոս և թէ այլ եպիսկոպոսունք նոցին համախոհակք սրբոյ եկեղեցւոյ, և ազատ *մարդիկ* և այլք ի ժողովրդականաց Աղուանից: ՅԱբրահամայ՝ Հայոց կաթողիկոսէ … և յազատ մարդկանէ. ըղձամբ աղօթալիր և ուժգին խնդրուածովք սրտի զտէրունեան հոգեխառն ողջոյն համարձակապէս մեզ առ ձեզ ասել: (276 / 13) Վասն որոյ լսեմ ի բազմաց տրտնջելոյ, թէ ի յոլով տեղիս զեկեղեցիս Աստուծոյ վանականութեամբ զինուոր *մարդիկ* ունին (309 / 9) Եւ *մարդիկն* զարմացեալ ասէին. (34 /14) ՅՈՒՅՈՒՄՆ ԲԵՐՄԱՆՑ ԵՒ ՊԱՐԱՐՏՈՒԹԵԱՆՑ ՍԱՀՄԱՆԱՑՆ ԱՂՈՒԱՆԻՑ, ԹԷ ՋԻՆՋ ՈՒՆԻ Ի ՊԷՏՍ *ՄԱՐԴԿԱՆ* (9 /3) Այլ յոր ժամանակս այց արար Աստուած ազգի *մարդկան* ընդհանուր ծաղկեցոյց զարևմտեայ կոյս մեծ կայսերբն Կոստանդիանոսիւ, լուսաւորեաց և զՄեծ Հայս երանելեաւն Տրդատաւ: (14 /7) Ապա եթէ արասցէ ոք, որպէս և արարերդ, *մարդկան* անհաւատալի, հրեշտակաց զարմանալի, Աստուծոյ նմանելի, որ եթող զանթիւ բիւր բազում զօրս հրեշտակաց և եկն ի գետս կերպարանս *մարդկան,* գտաւ մարդ: (25/12; 25/14) Ցանկալի ես հրեշտակաց, փափագելի ես *մարդկան* (28/9) տէր է բարձրեալն թագաւորութեան *մարդկան* և ում կամի, տայ զայն: (130 / 6) Եւ իւր շինեալ բազում ապաստանս. և որ ինչ *մարդկան* է վայելուչ, և ամենապայծառ իրք

անկարօտ էր նմա ի փառացն Աստուծոյ (185 / 18) զի ոչ է պարտ ի մտաց ասել զերևումն, որ յետ առաքելոցն ամենայն սրբութիւնք սուրբ խաչիւն հանդերձ և զանձք երկնայինք ծածկեալք՝ ընդ վերջին ժամանակս տեսլեամբ ի ձեռն *մարդկան* ի տեղիս տեղիս երևեալ յԵրուսաղէմ սուրբ քաղաք և ի բազում քաղաքս (204 / 4) զի սատանայի փորձանք և *մարդկան* խաբէութիւնք յայտ են (204 / 15) զոր ի նմին գործ դասահոյլ *մարդկան* բազմութիւնն զհողն զգեստուք իւրեանց ի բաց պեղէին. (205 / 15) և խուսափել ջանայր ի *մարդկան* գովեստից՝ փախչել ի փառամոլ և ի սնապարծիկ ախտից: (215 /1) կաճառ ամբոխ *մարդկան* բազմանայր: (224 / 1) Արդ՝ ծաներուք զԱստուած կենդանի, որ տայն կեանս *մարդկան,* մեռուցանէ և կեցուցանէ: (265 / 12) Եւ հարցեալ հայրապետին զգիտնաւորսն իւր, եթէ զիա՞րդ է այն *մարդկան* գործ. (268 / 16) Այլ սակայն յայսմ վայրի օրհնութիւն և գոհութիւն եղիցի Փրկչին մերոյ Աստուծոյ, որ ոչ ետ թոյլ թշնամւոյն *մարդկան* յառաջել ի սպառ: (299 / 13) և մի՛ թողացուցանել և ոչ տալ անարժանից և զինուորական *մարդկան* զեկեղեցւոյ ունել իշխանութիւն. (307 / 11) և մի՛ ամենևին զինուոր *մարդկան* հեծելոց և մաքսապետաց մի՛ոք իշխեսցէ տալ զեկեղեցւոյ իշխանութիւն (307 / 13) վասն զի զեկեղեցի սուրբ յԱստուծոյ եպիսկոպոսաց և քահանայից հրամայեալ է հոգալ, և ոչ զինուորաց և հեծելոց անարժան *մարդկան:* (310 / 10) որ իբրև զհուր լափեաց զամենայն գեղեցկութիւն և զփառս *մարդկան.* (324 /15) և *մարդկան* զօգտակարն մատակարարեն: (330/10) որ զամ մի ողջոյն դողացուցեալ խորասուզեաց յանդունդս անձինս իբրև երկոտասան բիւր *մարդկան:* (333 / 9) «Մի՛ եկեսցէ և մի՛ լիցի այսպիսի տարի ի վերայ երկրի, որչափ ազգ *մարդկան* է»: (337 /4) որ եհան ճաղք գլխոյն *մարդկան* և հօտիքս արար. (339 / 8) որ ոչ ի *մարդկանէ* առեր քաջալերութիւն (27/5) որ կամին դիւապաշտ կախարդութեամբն զարհուրեցուցանել զիս, որպէս և զայլս ի *մարդկանէ* մոլորամիտս: (254/12) ՅԱբրահամայ՝ Հայոց կաթողիկոսէ, ի Թէոդորոսէ՝ Մարդպետական եպիսկոպոսէ … և յայլ եպիսկոպոսաց և յուխտէ եկեղեցեաց և յազատ *մարդկանէ.* ըղձամբ աղօթալիր և ուժգին խնդրուածովք սրտի զտէրունեան հոգեխառն ողջոյն համարձակապէս մեզ առ ձեզ ասել: (276 / 17) որսալ զպարզամիտս ի *մարդկանէ* (298 / 7) զոր տեսեալ բազմութեան *մարդկանն,* զանուն տեղւոյն Աստեղաբլուր անուանեցին մինչև ցայսօր: (102 / 12) Աստուածաստեղծ *մարդն* առաջին՝ հայրն մեր Ադամ եկեաց ամս ՄԼ և ծնաւ զՍէթ: (3 / 5) Եւս ի ներքս նոյնպէս առնել և զոտիցն, մինչդեռ կենդանի կայ *մարդն,* և ապա սպանանել և զմորթն սնուցանել և՛ կազմել, և՛ դնել ի սապատի: (53 / 17) Եւ յետ այնր որչափ տուգանս տայցէ *մարդն,* որ ի կանոնսն գրեալն է, ընդ օրհնութեամբ արասցեն: (94 / 8) «Դևն յայտնապէս գայ ի կերպարանսն *մարդոյ* (53 / 14) և ոտք են ոտից *մարդոյ* նման (54 /2) զոր դիւին հրամայեալ ի տարւոջն միում *մարդոյ* տալ /դեղ/ և սպանանել. (54 / 18) Եւ գիտացեալ ի տեսլեանն, որպէս պատմեացն, թէ ես յԱմարաս երթամ. և որ անդ, ասէ, երևելոց ումեք իցէ անդ *մարդոյ:* (72 / 20) Ազատ *մարդոյ* և թագաւորազգւոյ որ ինչ հոգւոյ մասն է, տացէ իւրով ձեռամբ ի կենդանութեանն՝ ձի թամբօք և սանձիւք և զոր, ինչ կարողութիւն է իւր՝ տացէ. (90 / 12) «Իմաստութիւն կենաց *մարդոյ* ծնունդ է առաքինութեան. (104 / 9) և զոր ինչ ուտելի է *մարդոյ,* ի բերդն հաւաքեաց (108 / 13) Սոքօք հանդերձ կացեալ մեր յաղօթս մեծահայց խնդրուածովք՝

սկսաք զբրածն առնել որպէս չափ *մարդոյ:* (121 /11) «Այնու քաւեսցի մեծ նախատինքս և ցասումնս իմ, եթէ այսպէս ժամանեսցես փութալ հասանել և ոչ թողուլ և ո՛չ զմի ոք *ի մարդոյ* մինչև յանասուն ի համարձակելոցդ յերեսս իմ»: (131 /11) Ապա իբրև ետես իշխանն՝ տէրն նոցա զայն ամենայն աղխ գերութեան աւարացն *մարդոյ* և անասնոյ … խորհեցաւ ի մտի իւրում յայն կոյս ինքն իսկ իւրովի գալ ելանել: (134 / 17) և փոխանակ միոյ բեկմանն կրկին հատուցից քեզ զլիութիւն *մարդոյ* և անասնոյ (161 / 14) արդարև ասեմ թէ իբրև բեհմութ ի շարժելոյն գլխոյ ահաբեկ զարհուրանօք դողումն լինէր բնութեան *մարդոյ:* (200 / 9) Նա և զորոտընդոստ հրատեսակ շանթիցն ցայտմունս և զեթերակէզ այրեցմունս, թէ *մարդոյ* դիպեսցի, թէ այլ ինչ նիւթեղինաց. ձօնեալ իմն, զնա ի պաշտօն առեալ՝ նուիրեալ Քուար Աստուծոյն համարէին: (241 / 1) Ըստ նմին օրինակի և ի ձեռն այլոց մարգարէից և զմեզ զգուշացուցանէ տէրն՝ որդի *մարդոյ.* (306 / 9) Վիշապն, որ հինն էր յաւուրցն առաջին *մարդոյն,* ետես զչքնաղ ծնունդ քոյոյ բնութեանդ առաջինն ի հայրենի հաւատոյն, երկրորդ որ ի գոռոզ վիճակէն: (20 / 14) տկար գաւազանաւն առաջին *մարդոյն* յաղթեցեր, մեծ թագաւորաւս տղայոցն չկարե՞ս կալ առաջի»: (21 / 6) Եւ եկեալ դնն զգենու զհանդերձն և նստի ի վերայ աթոռոյն. և առեալ զինն *մարդոյն* զմորթն մատամբքն հանդերձ տեսանէ: (54 / 4) և անմասն մի՛ արասցեն զմեռեալսն ի վաստակոց իւրեանց. և մեռեալ *մարդոյն* եթէ ձի է՝ մի ձի, զոր և կամի, և եթէ արջառ է՝ մի արջառ, զոր և կամի, յեկեղեցին տայցէ: (91 / 8) Եւ որ ի չորեքշաբթի և յուրբաթի միս ուտէ յառաջ քան զաղուհացսն, մի շաբաթ պահեսցէ. և եթէ երիցուն առաջի ոք գայ և վկայէ վասն *մարդոյն,* թէ չէ այդպէս, աւագն շինոյն կալցի զմարդոյն եզն մի և յերէցն տացէ: (92 / 10) և լիալիճ աղեղն ի Մահմետէ գեղապարիւր *մարդոյն:* (287 / 13) Եւ լուայ *ի* հաւատարիմ *մարդոց,* եթէ տեսաք մեք զոմանս յուտել զմեռելոցն անդամս (164 / 19) Եւ սատանայ ի սկզբանէ մեղանչէ՝ մանաւանդ ի թոյլ և յողդողդ խորհուրդս դիւրամոլար անմիտ *մարդոց* (298 / 12) շահել կամեցաւ այժմ զնոյն ի ձեռն անիմաստ *մարդոց* պառակտողաց զեկեղեցի Աստուծոյ նորաձայնութեամբ և ձևով անսրբով՝ զշահս և զզլուխս: (298 / 15) «Դևն յայտնապէս գայ ի կերպարանսն մարդոյ և հրամայէ երիս դասս լինել, և մէն երիս *մարդս* ունել և մի՛ խոցել, և մի՛ սպանանել (53 / 14) Առ նոսա ասէ օրհնեալն Պօղոս. *«Մարդք* ապականեալք մեղօք, անպիտանք ի հաւատս, որոց անմեղութիւնն յայտնի լիցի յաւուր մեծի դատաստանին Աստուծոյ» (289 / 17)

ՄԱՐԴԱԲԱՐ - 1

այլ վաստակել ձեռօք և վայելել *մարդաբար* և երանելի լինել Աստուծոյ: (38 / 11)

ՄԱՐԴԱԽՈՂԽՈՂԴ - 1

զի ահաւասիկ օր տեառն հասեալ է ի վերայ քո, *մարդախողխողդ,* անհնարին, անբժշկելի բարկութեամբ անզաւակեցուցանել զքեզ յերկրէ (44 / 3)

ՄԱՐԴԱՀԱՃՈՅ - 2

Եւ անիմաստ, հեթանոսամիտ և *մարդահաճոյ* ազգն այն ի զարմանս եղեալ սակս հրաշաբանութեանն՝ ասեն ցՄահմետ. (288 / 5) լսէր և տեսանէր անդ ամբաստանութիւն և կրօնս *մարդահաճոյս* ազգին թշուառացելոյ: (240 / 10)

ՄԱՐԴ ԱՌ ՄԱՐԴ - Տե՛ս ՄԱՐԴ

ՄԱՐԴԱՍԷՐ - 9

որով զթշնամիս մեր պարտեաց հզօր և *մարդասէր* աջն Աստուծոյ (128 / 5) Զի կամեցաւ գթալ ի մեզ քաղցրութեամբն իւրով բարերար և *մարդասէր* ամենակալն Աստուած ըստ մեծի ողորմութեանն իւրում (305 / 14) Եւ մինչդեռ յայսմ խնդրի էր, *մարդասէրն* Աստուած կամեցաւ յայտնել սմա ի ձեռն աստուածասէր արքային բառնալ զչար աղանդն յաշխարհէ: (51 / 14) և *մարդասէրն* Աստուած ... լուեալ աղօթից նորա՝ շնորհէր նմա զաւակ արու: (63 / 8) յուշ լիցի ամենեցուն ձեզ անյապաղ պաշտել և պահել և առնել խնդրուածս առ *մարդասէրն* Աստուած առ ի շնորհել մեզ զնշխարիս երանելւոյն Գրիգորիսի. (66 / 7) և որպէս եղևն ասացեալ, պահք և աղօթք և խնդրուածք յամենայն ժողովելոցն լինէին առ *մարդասէրն* Աստուած: (70 / 17) Արդ՝ եթէ երկայնամտեսցէ *մարդասէրն* Աստուած, մի՛ յապաղեր որպէս հովիւ քաջ դնել զանձն քո ի վերայ մեր. (158 / 10) զի հաշտեսցի ընդ մեզ *մարդասէրն* Աստուած և ողորմեալ փրկեսցէ զմեզ յամենայն նեղութեանց:(310/14) Եւ *մարդասիրին* Աստուծոյ արկեալ ի սիրտ նոցա միակամութեամբ տալ մասն յօրէնսուսոյց ծնօտէն խոստովանողին Քրիստոսի՝ մեծին Գրիգորի: (237 / 1)

ՄԱՐԴԱՍԻՐՈՒԹԻՒՆ - 1

Այլ տէր Քրիստոս ըստ *մարդասիրութեանն* իւրոյ զձեզ հոգասցէ, աճեցուսցէ և օրհնեսցէ (261 / 6)

ՄԱՐԴԱՍՊԱՆ - 1

Եւ որ զկին թողու առանց պատճառանաց և առանց պսակ կին առնէ, և՛ որ անօրէն և *մարդասպան* է, և՛ կամ զգէտս հարցանէ, զայնպիսին կապեալ ի դուռն արքունի տարցին, և դառն մահ ի վերայ դիցեն: (92 / 3)

ՄԱՐԴԱՍՊԱՆՈՒԹԻՒՆ - 1

քանզի երկոքեան *մարդասպանութեան* են աղանդք: (51 / 13)

ՄԱՐԴԻԿ - Տե՛ս ՄԱՐԴ

ՄԱՐԴԿԱՅԻՆ - 3

Իսկ այժմ այն աթոռոյն ամբարձեալ զօրութիւնք այնքան ի վայր ցնդեալ՝ զիջան, մինչ զի որ միանգամ ընդ ձեռամբ նորա էին *մարդկային* անտառք՝ գնացեալ յարեցան ընդ հովանեաւ այնր, որ ըստ Գեդէոնեան դժնկին՝ էր պատաղիճ (192 / 19) Քանզի տուաւ նմա անընդդիմակաց զօրութիւն, աշխարհավար իմաստ, երկրավար քաղցրութիւն և հեզութիւն *մարդկային* (193 / 13) յորում բոլորատեգ լեզուոյն ծայր իբրու դանդանաց ցցեալ զբարակավանգ ճռռուղումն ձայնի ըստ *մարդկային* բնութեանս խօսից ստէպ ստէպ առ բան հոլովէր: (199 / 14)

ՄԱՐԴԿՈՒԹԻՒՆ - 2

Եւ առ սա գրեցին ի ժողովոյն Դունայ՝ ասել մի բնութիւն աստուածութեան և *մարդկութեան* (343/4) զի յսկզբանն աշխարհագրութեան *մարդկութեանս* ... չունիմք ինչ ասել զստոյգն ի պէտս լսողաց մինչև ցՎաղարշակ արքայն Հայոց (8 / 4)

ՄԱՐԴԿՕՐԷՆ - 1

ըստ հանդուրժելոյ լսելեաց ընտրեալ երկոտասանիցն *մարդկօրէնս* զիջանելով խօսէր. (127 / 12)

ՄԱՐԴՊԵՏԱԿԱՆ - 2

Ի Յովհաննիսէ՝ Հայոց կաթողիկոսէ, յԱբրահամէ՝ Տարօնոյ եպիսկոպոսէ, ի Գրիգորէ՝ *Մարդպետական* եպիսկոպոսէ ...և յայլ ամենայն եպիսկոպոսաց Հայաստանեայց օրհնութեամբ ողջոյն: (122/12) ՅԱբրահամայ՝ Հայոց կաթողիկոսէ, ի Թէոդորոսէ՝ *Մարդպետական* եպիսկոպոսէ ...և յայլ եպիսկոպոսաց և յուխտէ եկեղեցեաց և յազատ մարդկանէ. ըղձամբ աղօթալիր և ուժգին խնդրուածովք սրտի զտէրունեան հոգեխառն ողջոյն համարձակապէս մեզ առ ձեզ ասել: (276 / 14)

ՄԱՐԴՊԵՏԱԿԱՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ - Տե՛ս ՄԱՐԴՊԵՏԱԿԱՆ

ՄԱՐԵՐԻ - 1

Ապա կամ եղև արքայի առնել ժողով յԱղուէնն բազմամբոխ ատեան յամսեանն *մարերի* (89 / 16)

ՄԱՐԶԱՐԱՆ - 2

Այսոցիկ այսպէս եղելոց, մեծավայելուչ փառօք յուղարկիւր ի համաշխարհական *մարզարանէն:* (195/15) Եւ այնպէս արքայաբար մտանէ ի կայսերական *մարզարանն:* (185 / 4)

ՄԱՐԶՊԱՆ - 4

որ էր *մարզպան* Աղուանից աշխարհիս (154 / 8) և զերկրորդ գունդն տան ի ձեռն Վարդանայ զօրավարին Հայոց՝ անցանել ընդ սահմանս Վրաց ի վերայ *մարզպանին* Չորայ (113 / 16) Եւ երանելին Վարդան ոչ գիտէր զդարանագործութիւն անիծելոյն Վասակայ ուրացողի, որ յառաջ քան զգալն զօրուն Հայոց յԱղուանս՝ ազդէ Վասակ *մարզպանին* Պարսից (113 / 18) իսկ անիծեալ և չար պարսիկ *մարզպանքն* շատ անգամ ըմբռնեալ զնոսա՝ կաշառօք կուրացեալ ի բաց թողուին: (52 / 1)

ՄԱՐԹ - Տե՛ս ՄԱՐԹ Է

ՄԱՐԹԵՄ - 9

որով *մարթասցէ* ի բաց թողուլ զաստուածուրաց մոգութեանն դէն (48 / 6) զցայգ և զցերեկ խնդրէր յԱստուծոյ վասն աշխարհին փրկութեան, թերևս դարձի հնար գտանել *մարթասցէ:* (242 / 4) «Ընդէ՞ր հեղգամբ առնել զքաղաքս զզերեզման անձանց մերոց, թողցուք զկահ և զկարասի մեր, ելցուք գնասցուք, թերևս զերծնուլ *մարթասցուք».* (137 / 4) այլ իբրև *ոչ մարթացաք* դառնալ ընդդէմ ձերոց հրամանացդ (209 /11) զիա՞րդ *մարթացից* թողուլ զիօտն իմ, զոր Աստուած շնորհեաց ինձ հովուել: (261 / 5) Արդ՝ ի ձեռն քրիստոսական հաւատոցն այնպէս փառաւոր և յաղթող *մարթէ* լինել (260 / 8) և զայն ոչ *մարթէք* գիտել, թէ անմաքրոցն սիրող զիա՞րդ լինիցի սուրբ: (246 / 6) «Զիարդ *մարթէք* և իմանայք և գիտէք առնել զայդ (250 / 14) և զիա՞րդ զայս տալ լռութեան *մարթիցէ* (209 / 1)

ՄԱՐԹ Է - 3

և *մարթ էր* զայն բանիւ ընդ պատմութեամբ արկանել (26 / 13) Արդ՝ ըստ քո բանիդ անզգայ հոգւոցն ո՞րպէս *մարթ էր* ընդ տեառն լինել կամ զանճառելի փառսն տեսանել (87 / 21) զի *չէ մարթ* հօտի առանց հովուի լինել: (265 / 7)

ՄԱՐԻԱՄ - 2

Պարտաւայ վանք Խուրբ Աստուածածինն … այժմ ունի կին ոմն *Մարիամ* անուն Շամքորեցի, և զկէսն տաճիկ ունի: (285 /13) Եւս աղաչեմ վասն Գագկայ ծառայի քո և քեռ սորա *Մարիամայ* (313 / 7)

ՄԱՐԿԻԱՆՈՍ - 2

և անօրէնն *Մարկիանոս* թագաւորեալ՝ ոչ պահէր զուխտն (113 / 11) Ի թագաւորելն չարագլուխն *Մարկիանոսի* Հռոմայեցւոց անդէն հրապուրեալ ի պղծոյն Պողքերայ կնոջէն իւրմէ՝ կարգընկէց նեստորականէ, վաղվաղակի պատառեալ ելոյծ զսահման ուղղափառ հաւատոյ քաղկեդոնական հաւաքմամբն: (271 / 11)

ՄԱՐԿՈՍ - 3

Հասին և այլքն ի հանդէսն գործակից մեզ. Աբաս՝ Մոմհարէից երէց հօտիւն իւրով և *Մարկոս* քահանայ իւրով եղբարբք (121 / 8) Նոյնպէս *Մարկոս* հայրապետն Երուսաղէմի …որ յիւրում խրատական թղթին գրեաց ի Հայս յաղագս մկրտութեանն (315 / 14) զի չորք միայն կացին ի վերայ երկրի. Աղեքսանդրին՝ *Մարկոսի* աթոռն, Անտիոքայն՝ Մատթէոսին, Հռոմայն՝ Ղուկասուն, Եփեսոսին յԱսիա՝ Յովհաննուն. (272 / 12)

ՄԱՐՄԱՐԻՈՆ - 2

Չափ մեծութեան եկեղեցւոյն երկու հարիւր կանգուն յերկայնն և հարիւր ի լայնն իննսուն սեամբք *մարմարիոնովք,* քարեայ կամարակապօք. (284 / 14) որ են *մարմարիոնք.* (284 / 7)

ՄԱՐՄԻՆ - 40

«Մովսէս ծառայ իմ վախճանեցաւ, իսկ արդ եկեալ Մովսէս չքնաղազգեստն փառօք առաջի Աստուծոյ, ոչ *մարմին* զգեցեալ (87 / 8) Աղեկէզ տոչորմունք բորբոքեալ ի նմա՝ Կերիցեն առժամայն զտիրասպան *մարմին* նորա: (228 / 7) Նիրհէր *ի մարմին,* այլ հոգւոյն արթնութեամբ Վարէր զկառս զԱրէսի ի մէջ աստեղացն (229 / 1) Եւ *մարմին* անլոյս զդէմ քո մեզ կալաւ՝ Անփարատ ստուեր զքոյայնօքս արկեալ: (229 / 18) միայն զճանապարհն գնայր և անդէն վախճանեալ ըստ բանի հօրն Սիմէոնի՝ անշնչացեալ լոկ *մարմին* բերաւ ի հող իւր: (340 / 2) որ յիւր *մարմինն* առեալ է դժնդակութիւն սրոյ խոցման (49 / 10) մեռեալ *մարմինն* ո՞չ ապաքէն անզգայ է (87 / 12) երկիր ոչ ընդունէր զնորա գարշելի *մարմինն:* (318 / 15) Ապա կալեալ շուն մի շամփրեցին ընդ *մարմինն* Մահմետի (318 / 15) զորոյ *մարմինն* առեալ բերին յԱրկազեան սենեակն և անտի փոխեցին ի Թանատաց վանս ի հանգիստ: (321 / 16) Եւ առեալ Գրիգորի՝ պատէր իւրեանց իսկ պատառոտուն հանդերձիւքն չարարեալ ուրուք ինչ արժանի յերանելեացն մերձեցուցանել *ի մարմինս*: (34 / 18) Եւ նա լցեալ վիրագային գազանութեամբ՝ զայրագնեալ վիրաւորէր զամենայն *մարմինս* նորա իբրև զթունաւոր օձ (223 / 12) Նոքին իսկ դևքն, զորս նուիրօքն և զոհիւք մեծարէին, իբրև ի վերայ թշնամեաց հասեալ՝ տային նոցա մոլեգնել և ուտել զիւրեանց *մարմինսն.* (33 / 16) Եւ երանելեացն

լինէին *մարմինք* բացընկեցիկ: (33 / 10) և՛ քանցէին *մարմինք* սրբոյն առհասարակ, և ապա բառնային զգլուխ երանելւոյն սուսերաւ: (102 / 3) հալէին *մարմինք* նոցա և լուծանէին յօդքն և ճողէին մազք հերացն և մօրուացն: (165 / 19) զի յայտնապէս փրկչին ձայն երևեցուցանէ ճշմարիտ առակաւն, եթէ առաւել քան ի *մարմնի,* յորժամ արտաքսանայ քան զմարմինն, լինի քաջատես և առաւել իմաստուն հոգին: (88 / 4) Ամենայն ինչ քո գնդին կրկին է. եթէ զրահք էին պահապանք *մարմնոյ,* ընդ նմին և զրահքն հաւատոյ. (23 / 2) և արժանաւորս առնէր զանճառելի հոգւոյն ընդունել շնորհս և ճաշակմամբ կենսատու *մարմնոյ* և արեան տեառն: (34 / 23) և որք ի տղայութենէ իսկ երթեալ էին զհետ կորստեան ճանապարհին, հրամայէր լուսաւորել աւազանին փրկութեամբ և արժանաւորս առնէր ճաշակման կենդանացուցիչ *մարմնոյ* և արեան որդւոյն Աստուծոյ: (47 / 6) «Հոգիք հրաժարեալք ի *մարմնոյ* զգայո՞ւն են, թէ անզգայ. (86 / 15) Մինչդեռ զգեցեալ զսպառազինութիւն *մարմնոյ* ՝կան ի ծանրութեան (87 / 3) արդարև զգայուն են և առաւել իմաստագոյն հոգիք հրաժարելոցն ի *մարմնոյ:* (88 / 9) Զորմէ լսելով թէ վնասակար հոգւոյ և *մարմնոյ* եղեն անբժշկելի ցաւք: (123 /6) զարգացաւ ըստ *մարմնոյ* ամենակատարն (124 / 14) յորմէ ցրուեալ եղեն Քրիստոսի սուրբ *մարմնոյ* պատուական անդամք. (299 /8) Զի հակառակ Աստուծոյ պատուիրանացն է և կորուստ հոգւոյ և *մարմնոյ* ՝զազատութիւն եկեղեցւոյ ի ձեռն անարժանից մատնել: (309 / 7) Եւ որք ասացին անզգայ լինել զհոգին ելեալ ի *մարմնոյն,* յանդիմանեմ զնոսա Աստուածաշունչ գրոց վկայութեամբ (87 / 6) որ ասենդ ելեալ ի *մարմնոյն* (87 / 10) «Ելանել ի *մարմնոյս* և ընդ Քրիստոսի լինել՝ լաւ համարիմ». (87 / 19) Զի այն, որ արարն զհեզ ողջ հոգւով և առողջ *մարմնով* և իւրում որդեգրութեանն արժանաւոր, նոյն և շնորհեացէ մեզ՝ զքեզ առողջ հոգւով և *մարմնով* տեսանել յաշխարհի և վայելել ի քո շնորհալից վարդ առաքինութեան: (28 /16; 28 /17) Եւ քարոզէր զանճառելի երրորդութեանն զմի արարչական զօրութիւնն և զմարմնանալն Աստուծոյ բանին, զբազում և զզանազան նշանագործութիւնս յերկրի առնել, զխաչելն և զմեռանելն և յերիր աւուր յառնել և նովին *մարմնով* ի յերկինս վերանալ (38 / 5) զի որ ոչ խոստովանի զտէր Յիսուս *մարմնով* եկեալ, նա ինքն իսկ է Նեռնն մոլորեցուցիչ: (125 / 15) Եւ մեք թէպէտ և հեռի եմք *մարմնով* ՝մերձ համարեալ հոգւով յիշեսջիք առաջի նորագիւտ խաչիդ: (211 / 14) Եւ արդ՝ մեք և աշխարհս մեր թէպէտ և *մարմնով* հեռի եմք, սրտի սիրով մերով համարիմք, թէ յանդիման տեսաք զձեզ: (265 / 5) Արդ՝ որ ոք անխտրաբար հաղորդեսցի՝ կամակից լինելով անհաւատութեան նոցա, նզովեսցի հոգւով և *մարմնով.* և ամենայն կենցաղով իւրով որոշեսցի յեկեղեցւոյ Աստուծոյ. (271 /2) կապեալ *մարմնով* և ոգւով յանէծս որոշեալ եղև ի փառաց որդւոյն Աստուծոյ Աղուանիւք և Հայովք՝ (344 / 10) նովին կենսաբեր դեղով՝ խոստովանութեամբ և ապաշխարութեամբ կարէ և այլոց ևս առողջացուցիչ և նորոգիչ զոլ հոգւոց և անմահացուցիչ *մարմնոց* (49 / 16) և խնդրել յԱստուծոյ զտիւ և զգիշեր զքաղցրութիւն և զհաշտութիւն վասն աշխարհի, զթողութիւն մեղաց և զառողջութիւն հոգւոց և *մարմնոց.* (307 / 18)

ՄԱՐՄՆԱԶԳԵԱՅ - 1

այլ եկաց մնաց որ էրն. նոյն անփոփոխելի Աստուած մարմնացեալ ոչ մասամբ, այլ բոլորովիմբ. ոչ երկուութիւն, այլ միութիւն անբաժանելի. ոչ հայր *մարմնազգեաց,* այլ որդի. (124 / 7)

ՄԱՐՄՆԱԿԱՆ - 3

և անդէն վաղվաղակի ընդունէին ի ձեռն սրբոյն աղաչանաց զբժշկութիւն *մարմնական* տանջանացն, ընդ նմին և զհոգւոյն լուսաւորութիւն: (34 / 10) նա ինքն է երասանակալ թուրքաստանեայցն ազգաց՝ հանել և արգելուլ կարող է յաղագս *մարմնական* խնամատուրութեանն: (194 / 4) վասն այնր սպանութեան ամենայն *մարմնական* ախտից, երերմանց և նզովից սերմանց լինէր հայր ինքն և ամենայն ազգ իւր թշուառական»: (244 / 9)

ՄԱՐՄՆԱՆԱԼ - 1

Որպէս ոմն ի յաստուածազան վարդապետացն ասաց. «Երիս ծնունդս մեզ գիտէ բանն՝ զմին փչմամբ, զերկրորդն *մարմնանալով* և մկրտութեամբ, և մի ծնունդ թուէ և զերրորդն յարութեամբն: (315 / 12)

ՄԱՐՄՆԱՑԵԱԼ - 4

և կատարէր զիրաման *մարմնացեալ* աստուածորդւոյն՝ շրջեալ ընդ ամենայն հեթանոս, մկրտեալ յանուն հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ: (37 / 5) Իսկ ի վախճան յաւիտենից Աստուած գոլով մշտնջենաւոր բանն Աստուծոյ՝ եղև մարդ կատարեալ ամէեղապէս, *մարմնացեալ* անճառապէս ի սուրբ կուսէն, ոչ հեռացեալ ի բնութենէն, և ոչ քայքայեալ ի մարմնաւորութիւն, այլ եկաց մնաց որ էրն. նոյն անփոփոխելի Աստուած *մարմնացեալ* ոչ մասամբ, այլ բոլորովիմբ. ոչ երկուութիւն, այլ միութիւն անբաժանելի. ոչ հայր մարմնազգեաց, այլ որդի. ոչ սուրբ հոգին *մարմնացեալ* թանձրաձև, այլ միածինն ի հօրէ. բայց կամաւ և հօր զօրութեամբ և սուրբ հոգւոյն. այլ գոյութեամբ միայն բանն Աստուծ: (124 /4; 124 /6; 124 /7)

ՄԱՐՄՆԱՒՈՐ - 5

հեզագոյն քաջութեամբ ծառայել տեառն զօրութեանց *մարմնաւոր* տերանց (32 / 18) Վասն զի խնդրէիք *մարմնաւոր* խաղաղութիւն ի մէնջ (262 / 14) Իսկ եթէ զիր ոք բերէ յառաջ վասն եկեղեցւոյ ըստ *մարմնաւոր* աշխարհական իրաւանց և ոչ ըստ աստուածային պատուիրանաց և կանոնաց, անվաւեր և անհաստատ է(310/6) և ընկալաք միաբանութեամբ հոգևորաց և *մարմնաւորաց* զառաքելական հաւատն մեր (300 / 15) Եւ ժողովեցան առ իս հոգևորք և *մարմնաւորք* (303 / 7)

ՄԱՐՄՆԱՒՈՐԱԿԱՆ - 1

այլ *մարմնաւորական* պատերազմունքն կարի յաճախէին: (126 / 17)

ՄԱՐՄՆԱՒՈՐՈՒԹԻՒՆ - 2

Քաջալերէր զնա սուրբն Գրիգորիոս ի գալուստ *մարմնաւորութեան* որդւոյն Աստուծոյ (19 /11) եղև մարդ կատարեալ ամյեղապէս, մարմնացեալ անճառապէս ի սուրբ կուսէն, ոչ հեռացեալ ի բնութենէն, և ոչ քայքայեալ ի *մարմնաւորութիւն,* այլ եկաց մնաց որ էրն. (124 / 5)

ՄԱՐՄՆԱՔՆԱՐ - 1

յարակցաբար լեալ *մարմնաքնարն* Դաւթի երգոյն, յօրինէր նուագս երաժշտականս. (216 / 2)

ՄԱՐՏ - 13

Որոց արիաբար կատարեալ զնահատակութեանն *մարտ* բարեօք վկայութեամբ, ըստ մարտիրոսութեանն հանդիսի ի Քրիստոսէ զյաղթութեանն ընդունէին պսակ (105 / 1) Ռազմ եդեալ՝ զբոլոր մեծութիւն դաշտին ի ներքս փակէր՝ զինեալք և վառեալք ի *մարտ* պատերազմի ընդդէմ զնդին Հայոց: (114 / 8) և ոչ անցանէր մօտ առ նոքօք, և ոչ գրգռէր զնոսա ի *մարտ* պատերազմի. (131 / 1) Այլ և ինքն ուժով պնդութեամբ հարստութեանն քաջ և անուանի եղեալ ի *մարտ* պատերազմաց (249 / 8) խռովութիւն և հերձուած բազում ի կողմանս կողմանս գիտնաւորաց և տգիտաց լինէր, *մարտ* և մրցումն Յոնաց և Հայոց: (266 / 18) Ապա ընդ երկուանալ հայրապետութեանն Հայոց էր մեծ *մարտ* ընդ Մովսէս և ընդ Թէոդորոս՝ Կարնոյ եպիսկոպոս (267 / 14) յաջողեցաւ գործ *մարտի* պատերազմաց: (128 / 17) ոչ սակաւ էր թիւ անկելոցն ի *մարտի* հետևակացն (139 / 3) Եւ ոչ արգելոյր ի նմանէ զհաս իշխանութեան աթոռոյ նորա, և ոչ զանուն կաթողիկոսութեան նորա եբարձ ի նմանէն. այլ պահէր զնա իբրև զանօթ ինչ ընտիր և խնայէր ի նա իբրև յերիվար ինչ ընտիր քաջընթաց յօր *մարտի* և պատերազմի. (150 / 19) և զտունս զոր շինեցի, արա՛ զսա հովանի գլխոյ իմոյ յօր *մարտի* (188 /19) և քաջամուխ կացին ի *մարտի* զամիսս ԺԳ: (334 / 9) Եկեալ մեծապանծ անուամբ ամենապայծառն Ջուանշիր ի Պարսկաստանացն *մարտից* ՝հանդիսացուցանէ ընդ ինքն զբովանդակ տունն Աղուանից ըստ թագաւորական հրամանին: (177 / 6) Որպէս սուրբ տիկնոջն Հռիփսիմէի՝ լինէր *մարտն,* և աստուածայաղթ պսակօքն Քրիստոսի պսակեալ լինէր մեծն այն Թագուհի: (102 / 4)

ՄԱՐՏԱԿԻՑ - 3

Ցանկալի ես հրեշտակաց, փափագելի ես մարդկան, առաւել անձկալի ինձ՝ հեռացելոյս, չլինելոյս *մարտակից* քեզ յաներևոյթ պատերազմիդ ամենաչար սատանայի: (28 / 10) և զթագաւորն Բասլաց *մարտակից* իւր ունելով, որ ձգեալ զճոպան արւոյն Տրդատայ և ոչ զօրեալ ընկճել զնա՝ ինքն լինի միջակտուր ի նմանէն: (29 / 6) որք են կարապետք և զօրք Նեռինն և լինելոց են երկրպագուք նմա և *մարտակիցք* նորա լինին: (289 / 17)

ՄԱՐՏԱՏԵՍԻԿ - 1

Թմբուկք և շռիչք ի վերայ դիականցն և նրանակոտոր և դանակացիտ զայտիւքն և զանդամամբքն արիւնահոս գծմունք և մերկանդամ սրակոծութիւնք՝ դժոխոց տեսարան, որ առ գերեզմանօքն յածին այր առ այր և ջոկ առ ջոկ *մարտատեսիկ* հոլարանին: (241 / 9)

ՄԱՐՏԻՐՈՍ - 2

Յայսմ բոլորից զգուշանալով՝ երանելւոյն առեալ ընդ իւր վայելուչ և յոյժ պատուականագոյն թոշակ, զմեծ քահանայապետին և *մարտիրոսին* Զաքարիայ …և պսակեցաւ ի Նիկոմիդիա քաղաքի: (37/10) Այլ՝ որ ողորմածն էր և գթած, զնա ընդ *մարտիրոսս* ընկալեալ. (319 / 19)

ՄԱՐՏԻՐՈՍԱԿԱՆ - 1

Իսկ երանելի ոմն Շապուհ Արծրունի և միւս այլ այրընտիր յազատացն Հայոց՝ յանձն առին զմահ *մարտիրոսական* և ոչ զկեանս սնոտիս: (332 /8)

ՄԱՐՏԻՐՈՍՈՒԹԻՒՆ - 3

անդ առնու վախճան *մարտիրոսութեան* ի Սանատրկոյ արքայէն Հայոց: (10/4) Գրեցաւ անուն *մարտիրոսութեան* քոյ յոսկի տախտակսն (26/5) Որոց արիաբար կատարեալ զնահատակութեանն մարտ բարեօք վկայութեամբ, ըստ *մարտիրոսութեանն* հանդիսի ի Քրիստոսէ զյաղթութեանն ընդունէին պսակ (105/2)

ՄԱՐՏՆՋԵԼ - 1

Եւ իբրև պաշարեաց զքաղաքն և սկսաւ *մարտնչել,* նեղել զբնակիչսն, որ ի նմա. (151 / 18)

ՄԱՐՏՆՋԻՄ - 4

մարտի՛ր ընդ այնոսիկ, որ մարտնչինն ընդ մեզ. (114 /13) մի՛ երկիցես յերեսաց նոցա, այլ *մարտի՛ր* և յաղթեա՛ (144 / 16) Հզօրապէս *մարտնչէին,* այրէին զամուրս արգելանոցաց նոցա (115 / 15) մարտի՛ր ընդ այնոսիկ, որ *մարտնչինն* ընդ մեզ. (114 / 13)

ՄԱՐՏՈՒՑԵԱԼ - 2

Սա և *մարտուցեալ* ընդ նոսա՝ գայր և զգետովն անցանէր արիւնազանգ լեալ՝ զգեստն և զէնքն շաղախիւր: (174 /16) ընդ որում և բազմաջան հնարիւք թագաւորն Հայոց Սմբատ *մարտուցեալ* ոչ ինչ կարաց ստերիւրել զնա ի կամս իւր: (341 / 6)

ՄԱՐՈՒԹ - 1

Եւ զայս հրաման մատանեցին Մուծիկ՝ արքայի հրամանատար, Միրհօրիկ՝ հազարապետ, ազգապետք՝ *Մարութ,* Տիրազդ … և ամենայն ազատք Աղուանից: (94 / 13)

ՄԱՐՔ - 11

Սահմանք Յաբեթի այս են … *ի Մարաց* մինչև ցԳադիրովն կողմն հիւսիսոյ և ցգետն Դկղաթ, որ մեկնէ ընդ Մարս և ընդ Բաբելովն: (4 / 5) Իսկ ի խառնակել լեզուացն՝ ելին ի Յաբեթէ ազգք հնգետասան, *ի Մարաց* մինչև ցՍպարիովն, որ ձգի ցովկիանոս և հայի ընդ հիւսիսի: (5 / 7) Եւ են սահմանք սոցա *ի Մարաց* ընդ կողմն հիւսիսոյ մինչև ի Գադիրովն … Իսկ կղզիք՝ Սիկիլիա, Եւբիա, Ռոդոս, Քիոս … և գետն Դկղաթ, որ մեկնէ ի մէջ *Մարաց* և Բաբելովնի: (6/7, 6/12) Եւ խոյս տուեալ յերեսաց նորա յամրոցացն սահմանացն *Մարաց* գնաց անդէն յաշխարհն Ասորեստանեայց: (131 / 7) որ է ի սահմանս *Մարաց* աշխարհին: (132 / 3) Եւ վաղվաղակի աճապարեալ հասանէր յաշխարհին *Մարաց* առ մեծ կայսրն: (184 / 2) Եկն Աբլ Աբաս *ի Մարաց* օգնականութեամբ և զօրօք Աբու Մսլիմայ Խորասանայ իշխանին (291 / 13) Սահմանք Յաբեթի այս են … ի Մարաց մինչև ցԳադիրովն կողմն հիւսիսոյ և ցգետն Դկղաթ, որ մեկնէ ընդ *Մարս* և ընդ Բաբելովն: (4 / 6) Եւ որդիք Յաբեթի՝ Գամեր, և ի նմանէ Գամիրք. Մագոգ, և ի նմանէ Կեղտք և Գաղատացիք. Մադա, և ի նմանէ *Մարք.* (4 / 8) Եւ ի սոցանէ, որ գիտեն դպրութիւն՝ Եբրայեցիք, Լատինացիք, որով և Հռոմքն վարին, Սպանիացիք, Յոյնք, *Մարք,* Հայք, Աղուանք: (6 / 7)

ՄԱՔԱ - 3

յաղկաթ ամսոյ ի հասարակել տուընջեան և գիշերոյ եկն ի *Մաքա* և անտի դարձեալ յիւր շահաստանն (290 / 7) Եւ եթող ամիրայ ի *Մաքա* զՍէդ՝ Աբուսիդայ որդի, և դարձան նորա ընկերքն ի *Մաքա:* (290 / 8; 290 / 9)

ՄԱՔԱՌՈՒՄՆ- 1

Յայսմ *մաքառմանէ* և ի խնդիր ուղղափառ հաւատոյ դարձան Վիրք և եղեն քաղկեդոնիկ: (274 / 13)

ՄԱՔԵՆԱՑԻՔ - 3

զմեծ մայրաքաղաքն *Մաքենացւոց* այրեաց (327 / 1) որ *Մաքենացւոցն* էր հայր. (272 / 5) որ *Մաքենացւոցն* սուրբ ուխտին էր առաջնորդ (314 / 1)

ՄԱՔԻ - 1

Եւ ելանէր գոչիւն հառաչման նոցա ըստ նմանութեան բազմամբոխ հօտից *մաքեաց* առ գառինս և մօր առ մանուկն իւր: (152 / 13)

ՄԱՔՍԱՊԵՏ - 1

մի՛ զօշաքաղաց և մի՛ ամենևին զինուոր մարդկան հեծելոց և *մաքսապետաց* մի՛ ոք իշխեսցէ տալ զեկեղեցւոյ իշխանութիւն (307 / 13)

ՄԱՔՍԻՄՈՍ - 1

Սակս որոյ և ի միջի մերում երևեալ այժմ չարարմատ դառնութեան աղանդոյն Նեստորի և *Մաքսիմոսի* ի ձեռն Ներսէսի ամբարշտեցելոյ (298 / 17)

ՄԱՔՐԱԳՈՅՆ - 1

Ընդ որ յոյժ հրճուեալ նորա, ի գալ սրբոցն տօնախմբէ զնոցին հիշատակ և դնէ ի *մաքրագոյն* յարկեղս: (122 / 2)

ՄԱՔՐԱՓԱՅԼ - 1

Մարգարտաշարք էին յեռեալ բանք բերանոյ նորա, Եւ *մաքրափայլ* կեանք վարուց նորին: (228 / 21)

ՄԱՔՐԵՄ - 1

Ընդ որս և բարեպաշտ թագաւորն՝ Վաչագան հայեցեալ՝ սրբեալ *մաքրեաց* զինքն յստակ հաւատոցն առաքինութեամբ ճշմարիտ դարձին առ ճշմարիտ աստուածութիւնն: (49 / 5)

ՄԵԴԻՆ - 1

Ի լնուլ ԿԵ թուականին Հայոց երևեցաւ մոլարն Մահմետ ի *Մեդին* շահաստանի. (290 / 1)

ՄԵԼԻՔ - 1

Աբդլ *Մելիք* Ջահաբայ որդի սրով սատակիւր. (330 / 4)

ՄԵԾ - 262

Այս է երկիր նոցա՝ Ատրպատական, Աղուանք, Ամազոնիա, Հայք *Մեծ* և Փոքր … Իբերիա, Սպանիա *Մեծ:* (5 /8; 6 /2) Եւ գետն *մեծ* Կուր հեզասահ գնացիւք բերելով յինքեան ձկունս մեծամեծս և մանունս՝ ճեմելով գայ անցանէ անկանի ի ծովն Կասպից. (9 /5) Եւ եղև յառաւօտուն շարժումն *մեծ,* մինչև որ անդն կային անկանել յերկիր: (11 / 11) Այլ յոր ժամանակս այց արար Աստուած ազգի մարդկան՝ ընդհանուր ծաղկեցոյց զարևմտեայ

կոյս մեծ կայսերբն Կոստանդիանոսիւ (14 / 7) Եւ յերկարել պաշարմանն՝ Մեծ Կողմն աշխարհին աւերեցաւ (17 / 3) Եւ ահ անկաւ ինձ մեծ և ահագին (18 /1) այլ ինքնին մեծ թագաւորն մեծամեծօք նախարարօք և բազմագունդ զօրօք գայր հասանէր յաշխարհն Հայոց յանդիման լինէր հսկայազօր թագաւորին Տրդատայ: (19 / 4) տկար գաւազանաւն առաջին մարդոյն յաղթեցեր, մեծ թագաւորաւս տղայոցն չկարե՞ս կալ առաջի»: (21 /6) Լինի զօրաժողով Տրդատիոս՝ մեծ թագաւորն Հայոց և իջեալ ի դաշտն Գարգարացւոց՝ պատահէ հիւսիսականացն սաստիկ պատերազմաւ. (29 / 5) լինի մեծ պատերազմ ի մէջ Պապայ և Մեհրուժանայ: (31 / 3) Անդ առնու խոց մեծ արքայն Աղուանից Ուռնայր ի Մուշեղէ Մամիկոնենէ՝ Վասակայ որդւոյ. (31 / 6) և պատուհաս մեծ հասուցանէր ի վերայ աշխարհին Հայաստանի: (33 / 12) Եւ տարեալ զամենասուրբ նշխարս վկայիցն ի մեծ քաղաքն Ցրի Աղուանից իշխանութեանն՝ շինէր փոքրիկ եկեղեցի և դնէր անդ մեծ զգուշութեամբ մասն ինչ յարենէն Զաքարիայ և ի նշխարաց սրբոյն Պանդալիոնի. (37 /13; 37 /14) և թիւ անուանցն յԱռանայ մինչև զքաջն Վաչագան, որ էր ի մեծ ազգէն Արշակունեաց, չէ յայտ. (41 /12) Եւ ի հրամանէ Պերոզի՝ պարսից արքայի, շինեցաւ ի Վաչէէ Պերոզապատ մեծ քաղաքն, որ այժմ կոչի Պարտաւ: (42 / 4) որ արասցէն և ուսուսցէն, նա մեծ կոչեսցի յարքայութեանն Աստուծոյ: (46 /6) Պատուհաս մեծ և տուգան ի վերայ ածէր և կարգէր (49 / 18) Եւ փախստեայ եղեալ մանկանն՝ անկանէր ի գետն մեծ Կուր: (52 /8) Անտի զերծեալ անցանէր ընդ մեծ գետն և եկեալ փութապէս պատմէր արքային: (52 / 10) «Արի երթ յեկեղեցին և տեսանես լոյս մեծ յեկեղեցւոջն (58 / 13) Եւ յորժամ բանակել կամէին, յառաջ սրբոցն հարկանէր շիկակարմիր խորանն և խաչ ոսկի ի վերայ. և ապա սպիտակ մեծ խորանն ի վերայ նորա (63 / 1) բարեսէր թագաւորին թակոյկ մի մեծ արծաթի յարքունի սպասէն լցեալ արքայի ըմպելի գինի և երկուս արծաթի մեծագոյն սեղանս լցեալ արքունական հացիւ՝ հանապազ առաջի արքունական սեղանոյն դնել հրամայէր: (63 / 13) Եւ որ սպուժեալ յամեսցի ոք, մեծ պատուհաս ի վերայ հրամայէր դնել: (66 /12) Եւ ի գալ մեծին Գրիգորի հանդերձ պատերազմակից պսակելովքն Հռիփսիմեաւ և Գայիանեաւ ի մեծ ժողովն Դիւտականու, ընդառաջ ելանէր թագաւորն հանդերձ թագուհեաւն և ամենայն մեծամեծ նախարարօքն հեռագոյն ի գեղջէն (67 / 6) զի մեծ սքանչելիս տեսանեմ ի տեղւոջն»: (76 / 4) Ահ մեծ յայնժամ անկանէր ի վերայ գործօնէիցն և գործակալացն. (82 / 14) զի մեծ վիհ ընդ մէջ կարել ճանաչել զԱբրահամ: (88 / 7) Երէց, որ զշէն մեծ պահէ, զայլ շէն միթ պահեսցէ. (91 /17) Եւ եկեալ հասանէին ի սուրբ պահս քառասնորդացն յեւթներորդ շաբաթու պասեքի զատկին ի խորախոխոմ անտառայար և ի մայրաստանիկ աշխարհն Արցախայ՝ գաւառն Մեծ Կուենից: (98 / 20) Իսկ երրորդ մասն զօրուն հասեալ ի մուտ զատկին յԱրցախական գաւառն՝ տայր ասպատակ ի վերայ Մեծ Կուենից: (99 / 15) Քանզի մեծ զօրավարն Հոնաց անդէն բանակեալ կայր իւրովն զօրօք զայն գիշեր: (101 / 2) Եւ ինքն իսկ մեծ թագաւորն Ռոսմոսոքեան դարձեալ լինէր, ամենայն զօրօք իւրովք ասպատակէր: (103 / 9) Շարժումն մեծ եղեալ ահացեալք ի բաց գնացին գունդն Պարսից հանդերձ Աթաշխոդախւ՝ զօրապետիւն իւրեանց: (109 /3) «Թէ մեծ քինուս այսմիկ յանգումն արասցես, մեծագոյն խոստմանց հասանիցես»: (110 / 5) այլ կուտեաց զամենայն բազմութիւն զօրաց իւոց և

փութանակի գայ անցանէ ընդ գետն մեծ Կուր (114 / 4) Իսկ մի ոմն ի զօրացն թշնամեաց զինու հանդերձ ելեալ ի նիստ երիվարին՝ անցանէր ընդ մեծ գետն մազապուրծ զերծեալ գոյժ տանէր ի բուն բանակն, որք փախստեայ անկանէին ի մեծ շահաստանն: (115 /9; 115 /10) ՓՈԽՈՒՄՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌՈՅՆ ԱՂՈՒԱՆԻՑ Ի ՉՈՐԱՅ ԵԻ ՆՍՏՈՒՑԱՆԵԼ Ի ՄԵԾ ՔԱՂԱՔԻՆ ՊԱՐՏԱՒ ԶԱԹՈՌԱԿԱԼՈՒԹԻՒՆՆ ՍԱԿՍ ԽԱԶՐԱՑ ՀԻՆԻՆ ԶՈՐ ՅԵԼՍՆ ԻՐԵՐԱՆՑ ԱՒԵՐԵՑԻՆ (118 /15) որ ի բազում ժամանակաց յաղթահարեալ վանեաց վարատեաց նա զտունն օգոստոսական մեծ աշխարհաւն իւրով հանդերձ Հռոմաւ և նշանաւոր քաղաքաւն Պաղեստինեայ: (128 /15) Եւ վաղվաղակի առաքէ սուրհանդակս երագահասս և գրէ առ մեծ զօրավարն իւր Շահ Վարազ երդմունս մեծամեծս և սպառնալիս: (131 /8) «Այնու քաւեսցի մեծ նախատինքս և ցասումնս իմ (131 / 9) Իսկ կայսրն մեծ Հերակլիոս իբրև ետես եթէ խոյս ետ յերեսաց նորա թագաւորն Պարսից, դադարեաց ի պնդելոյ զհետ նորա: (131 /18) Եւ իբրև լուան զայս ամենայն պետք և իշխանք աշխարհիս Աղուանից, ի նոյն ինքն ի հրամանէ Խոսրովու թողեալ զքաղաքն մեծ Պարտաւ և ելեալ գնացին ամրացան ի տեղիս տեղիս. (132 /10) Իբրև եհաս յերկիրս Աղուանից բօթն ահագին, կամեցեալ ամրացուցանել զաշխարհս մեր ի մեծ մայրաքաղաքին Պարտաւայ բերդին. (135 / 8) Բայց հայէր տեսանել, եթէ զինչ ինչ անցք անցանիցեն ընդ պահապանս մեծ քաղաքին Չորայ. (135 /13) զոր փակեցին աղխեցին ընդ լեառն Կաւկաս և ընդ մեծ ծովն Արևելից: (135 / 16) որք էին ժողովեալ ի մեծ բերդին (136 / 13) և պատեալ պաշարէին զփափկասուն, վաճառաշահ, հռչակաւոր մեծ քաղաքն Տփղիս: (137 / 18) Եղև այսպէս, զի իմացեալ Խոսրովու զժամադիր մեծ թագաւորացն երկոցունց ի քաղաքն յայն, յառաջ քան զպաշարելն զօր փութանակի առաքէր յօգնականութիւն նոցա (138 / 6) Նա և զուռուցիկ տիկսն մեծամեծս, քարալիցս, աւազալիցս, որով զզետն մեծ՝ զԿուր, որ պատէ զկողմն քաղաքին՝ ուռուցեալ յետս ընդդէմ ընդ պարիսպն դիմեցուցանէին. (138 / 19) Յայնժամ կարգէր, յօրինէր նախանձախնդիր մեծ կայսրն Հերակլիոս, եթէ զինչ ինչ արժան իցէ գործել: (139 /7) ուր է թագաւորանիստն Պարսից առ գետովն մեծ, որ է Տիգրիս: (139 / 12) Բերին դդում մի մեծ, նկարէին ի վերայ նորա զպատկեր թագաւորին Հոնաց (139 / 18) առաքէ զնա բազում խոստմամբք անթիւ և անհամար գանձուց, թէ միայն ձեռնտու լինիցին ինձ ի մեծ նախանձուէս (141 / 7) այլ սլացեալք որպէս զարծուիս առ ի մեծ գետովն Կուրայ՝ յոք ոչ խնայելով(142 /1) Ճանապարհ կալեալ ընդ աշխարհին Վրաց և Եգերացւոց՝ հատին անցին ընդ ծովն մեծ մինչև ի պալատն արքունի. (142 / 2) Եւ բանակեալ նոցա առ գետովն Երասխայ՝ առաքէր ի ձեռն պատգամաց առ մեծ թագաւորն Խոսրով (142 /15) Յայնժամ, իբրև լսէր զայս ամենայն մեծ թագաւորն Խոսրով՝ յարուցեալ իբրև զհեղեղ անհուն և կամ որպէս առիւծ ընդդէմ որսորդաց և իբրև զարջ որդեկոտոր, այսպէս և նա: (143 / 8) այլ համարձակեալ դիմեալ գայ ի վերայ նորա, փախստական զնայ առաջի նորա, անկանի ի բուն թագաւորանիստն իւր՝ ի մեծ Տիզբոն. (144 / 3) Արդ՝ իբրև տեսին նախարարքն Պարսից զայն ևս բեկումն մեծ, որ եղև զօրացն Պարսից, սկսան քրթմնջել ընդ միմեանս և ասեն. (145 / 3) Ընդ որս էր և կաթողիկոսն մեծ իշխանութեանն Աղուանից՝ Վիրոյ անուն նորա. (150 /1) յանկարծակի երկրորդեաց, հնչեաց հողմն հիւսիսային և բախեաց զծովն մեծ Արևելեան: (151 / 13) Գտին զնա բանակեալ ի նմին

Ի թագաւորելն *չարագլուխն* Մարկիանոսի Հռոմայեցւոց անդէն հրապուրեալ ի պղծոյն Պողքերայ կնոջէն իւրմէ՝ կարգընկէց նեստորականէ (271 / 11)

ՉԱՐԱԳՈՐԾ - 3

և զյոլով աշխարհս ի դիւական *չարագործ* պաշտամանէն ի սուրբ և յուղիղ աստուածապաշտութեանն դարձուցանէր ի պողոտայն (46 / 9) անշէջ հրով դառն դատաստան յանանց յաւիտենին յաւիտենից ուրացողաց և ոչ խոստովանողաց և ամբարիշտ *չարագործաց* (47 / 1) և ի լուռ անցեալ ելանէր ի ծառն՝ չգիտելով *չարագործացն:* (52 / 9)

ՉԱՐԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ - 2

Քանզի հասեալ յաթոռ քահանայապետութեան հօրն՝ յանդիմանէր զթագաւորն վասն մեղսասէր *չարագործութեանն.* (36 /10) վարէր *չարագործութիւնս* այս յաշխարհիս Աղուանից: (51 / 17)

ՉԱՐԱԹՈՅՆ - 2

որպէս ի *չարաթոյն* օձից ի յահէ տեսլեան դառնաշունչ թշնամւոյն խածանէին: (156 / 16) որոյ գերանաձև սրունք որպէս զլեառն ինչ ի վեր բարձեալ ունէին, և զխելապատակէ անտի ըստ *չարաթոյն* սողնոյն նմանութեան ի վայր կոյս կախեալ ձևանայր պատիճ (200 / 5)

ՉԱՐԱԽՈՂ - 1

Եւ ազգի ազգի աղանդք *չարախոհն* սատանայի յոլովեալ թշուառացուցանէին զհիքացեալ մարդիկ աշխարհիս Աղուանից: (43 / 2)

ՉԱՐԱԽՕՍ - 1

նա իսկ *չարախօս* լինի զմէնջ առ երկնաւոր հայրն (279 / 5)

ՉԱՐԱՇՆՈՒՆԴ - 1

ՎԱՍՆ ԿԱՐԳԵԼՈՅ ԴՊՐՈՑՍ ԱՐՔԱՅԻՆ ՎԱՉԱԳԱՆԱՅ *ՉԱՐԱՇՆՈՒՆԴ* ՄԱՆԿԱՆՑՆ ԴԻՒԹԱՑ (50 / 15)

ՉԱՐԱԿԵՂ - 1

Ուրկածին ախտիւն եռացմամբ զօսացեալ՝ Յարեսցին ի նա ցեցք *չարակեղ* խոցոտմամբ: (228 / 11)

ՉԱՐԱԿՆ - 1

մի՛ զրկողաց և *չարակն* ագահից, մի՛ զօշաքաղաց և միւթ ամենևին զինուոր մարդկան հեծելոց և մաքսապետաց մի՛ ոք իշխեսցէ տալ զեկեղեցւոյ իշխանութիւն (307 / 12)

ՉԱՐԱՄԱՀ - 3

Այլ և զնոյն ինքն զպիղծն հանդերձ չար զաւակաւն սրախողխող *չարամահ* դառնութեամբ բառնային յաշխարհէ: (45 / 16) զի եթէ ոչ եկեսցէ շքով և պատուով, անհնարին տանջանօք *չարամահ* արասցեն զնա: (101 / 20) *չարամահ* տանջանօք ի ձէնջ տանջիմ (261 / 12)

ՉԱՐԱՆԱԼ - 1

Իսկ ամենաչարն սատանայ մտեալ ի սիրտս նոցա՝ գրգռէր *չարանալ* ընդ կենսատուր հրամանին բանիցն տեառն: (38 / 8)

ՉԱՐԱՇՈՒՔ - 1

ո՞չ ապաքէն զայր ի կնոջէ և զհայր յորդւոյ եհան բաժանեաց յազգս հեռաւորս ի ծառայութիւն և յաղախնութիւն և ի գումար տայ բնակութեան ընդ երեսս *չարաշուք* թշնամեաց»: (145 / 15)

ՉԱՐԱՉԱՐ - 16

հարուածք մեծամեծք հասին ի վերայ նոցա՝ էր որ կռուով և էր որ *չարաչար* ախտիւք ծիւրեցան: (17 / 2) որ *չարաչար* մահուամբ վերացան ի կենցաղոյս: (45 /14) Եւ յետ բառնալոյ չարին Պերոզի *չարաչար* մահուամբ յաշխարհէս թագաւորէ Վաղարշակ՝ հօրեղբայր նորա ընդ նորա: (46 /4) յայնժամ *չարաչար* տանջանօք և գանիւք, կապանօք ի դուռն արքունի հասուցեալ՝ մեծագոյն պատուհաս կրեսցեն: (50 /4) և բազում գանիւք և *չարաչար* տանջանօք ի փորձ առեալ՝ ոչ կարէին խոստացուցանել զչարագործսն (53 / 2) Զորս ի բուռն առեալ թագաւորին *չարաչար* տանջանօք բառնայր յաշխարհէս: (55 /6) *չարաչար* տանջանօք ելանէր ի կենցաղոյս: (56 / 12) և զորս ի քաղաքին կամ յամենայն սահմանս ընդ հրամանաւ զօրավարին Պարսից գտանէին, *չարաչար* պատժէին: (180 /9) Լարեաց զաղեղն իւր բանսարկու թշնամին, Եւ սրեաց որպէս զսուր զնենգիչ սիրոյն, *Չարաչար* խոցոտմամբ հասոյց ի վերայ, Որպէս յազգին Մովաբու ի գիշերի սատակումն: (227 / 11) Այլ նոյնպէս պաշտեցէք, զի մի՛ սրտմտեալ բարկասցին և յանդիմանեսցեն զաշխարհս մեր մեծամեծ և *չարաչար* հարուածովք: (251 / 16) ո՞չ ապաքէն որք անգիտութեամբ ի ծառոյն յայնմանէ յանկելոց տերևոց և կամ փայտից ինչ, որ ի նմանէ, առնուին ի պէտս ինչ իւրեանց, *չարաչար* կեղովք և այսահարութեամբ այլ և մահուամբ իսկ յանդիմանէր զնոսա (252 / 5) Արդ գիտեմք զայս, եթէ յամառեալ պնդի և մերձեսցի առ նոսա, յանդիմանի *չարաչար* ցաւովք, այլ և ի կենաց իսկ հանէ զնա»: (252 / 8) ԵՒ ԱՆՏԻ ԳՆԱԼ ՅԱՍՈՐԻՍ, ՅՈՐՈՒՄ *ՉԱՐԱՉԱՐ* ՄԱՀՈՒԱՄԲ ՍԱՏԱԿԵԼ ԵՒ ԱՅԼ ԶՐՈՅՑՔ ՊԻՏԱՆԻՔ (317 / 17) Եւ յետ այնորիկ զսպանողսն Աբլ Ասաղայ կալեալ մերձաւորացն՝ *չարաչար* կործանեցին: (327 / 11) և սակս

հաւատոցն, որ ի Քրիստոս, *չարաչար* տանջեալ նահատակի ի սուրբ քառասունսն (329 / 11) և երկոքինն *չարաչար* մեռանէին ի նմանէ: (337 / 2)

ՉԱՐԱՍԷՐ - 1

Յոյժ կասկած ի միտ անկաւ *չարասէր* թշնամւոյն (20 / 16)

ՉԱՐԱՐՄԱՏ - 1

Սակս որոյ և ի միջի մերում երևեալ այժմ *չարարմատ* դառնութեան աղանդոյն Նեստորի և Մաքսիմոսի ի ձեռն Ներսէսի ամբարշտեցելոյ (298 / 17)

ՉԱՐԱՓԱՌ - 6

զորոյ *չարափառ* ոմանք զգալն նորա ի ժողովն պարսաւէին: (213 / 7) Եւ ունկնդիր եղեալ նմա *չարափառ* կնոջն՝ խորհուրդ բերեալ ընդ եպիսկոպոսունս և ընդ մեծամեծս աշխարհին Աղուանից (293 / 9)Զայն շփոթ աղմկի սփռեալ տարածեցաւ ընդ ոլորտս երկրի ի ժողովոյն Քաղկեդոնի ի սնոտի և ունայն *չարափառաց* պղտորմանէն (126 /9) «Զշարժումն *չարափառին* Ներսիսի, որ յԱղուանս էր (303 /3) Եւ *չարափառն* այն այր այսպէս հրամայեաց. (313 / 17) Ապա եթէ պատրիարք որ ունիք, և ոչ զայլ կղերս եկեղեցւոյ բովանդակ, յայտնի է՝ խոտորեալ հերձուածողք էք ընդ Արիոսս և ընդ խուժաստանս և ընդ այլ *չարափառս»:* (273 / 7)

ՉԱՐԱՓԱՌՈՒԹԻՒՆ - 1

Եւ Ներսէս կալաւ զաթոռն ուղղափառութեամբ ամս ԺԴ և ի *չարափառութեանն* ամս Գ և կէս (297 / 10)

ՉԱՐԻՔ - 16

Զի թէ մինչ տղայն էիր, յաղթեցեր նմա, ի չափ հասեալ, գիտեմ, թէ առ ոտն կոխես զամենայն մենքենայս *չարեաց* նորա: (26 / 13) Եւ արդարապէս յագեցուցին զսրտմտութիւն բարկութեան տեառն, և հատուցումն *չարեաց* (45 /8) ի ձեռն վատանշան առն միոյ նուազագունի եղեն ոճիրք անհնարինք *չարեաց:* (233 /1) Որ իբրև լսէր և տեսանէր զայն ևս *չարեաց* պաշտամունսն զկռակործան անուղղայ սովորութիւնն, զցայգ և զցերեկ խնդրէր յԱստուծոյ վասն աշխարհին փրկութեան (242 / 2) Եւ զամենայն յաւելուածս *չարեաց* հերքելով ի բաց ի մտաց իւրոց (250 / 2) այսուհետև մատուցէք զանձինս ձեր առաջի աթոռոյ շնորհացն Աստուծոյ՝ թօթափելով ի բաց զամենայն ախտս *չարեաց* անօրէնութեան ձերոյ (256 / 8) և փոխանակ միոյ *չարեացն,* զոր ընդ նա անցուցեր, կրկին հատուցից քեզ. (143 / 4) և անդարձ լեալ ի գտեալ *չարեացն* ամենքին առ հասարակ բնաջինջ եղեալ սատակեցան ի յերկրէ (213 / 4) Ողբայր և տրտմէր վասն անհնարին *չարեացն* և երկմիտ հաւատոցն (240 / 10) Եւ *չարեօք* չորասցի, որ զքեզ չարչարեացն: (229 / 15) բայց ըստ առակողին խրատու մի՛ միտել ընդ բազումս ի *չարիս:* (279 / 7) Ժամանեցին առժամայն *չարիքն* մեր, Եւ զաւզեղջ /ծն. անզեղջ / մոլորութիւնն յանդիմանեաց. (227 / 1) Որ պարծէր ի *չարն,* տագնապեցաւ. որ խիզախէր ի մոլորութիւնն, յիմարեցաւ: (23 / 1) և դարձաւ *չարն* ի գլուխ նորին: (45 / 11) և բարձաւ *չարն* ի միջոյ: (148 / 18) և *չարն* չիք եղեալ ի տեղւոջն. (287 / 12)

ՉԱՐՉԱՐԱԿԻՑ - 2

Վկայդ Քրիստոսի, *չարչարակից* խաչին, ի հրեշտակաց փառամատոյց պատմուճանաւ զարդարեալ, անգարշ որդեակ իմ Վաչէ՝ Աղուանից արքայ, Գիւտ եպիսկոպոս ի տէր բերկրիլ: (27 / 1) Դու եղեր *չարչարակից* Քրիստոսի, նմանեա նմա ամենայնիւ. (28 / 13)

ՉԱՐՉԱՐԱՆՔ - 6

Զի եկն եհաս ի վերայ մեր միանգամայն և կատարեցան, զոր փրկիչն մեր ի կենսաբեր աւետարանի անդ ի ժամանակի *չարչարանացն,* ըստ հանդուրժելոյ լսելեաց ընտրեալ երկոտասանիցն մարդկօրէնս զիջանելով խօսէր. (127 / 11) Եւ զերկոսեանն զոսսա ի կապանս և *ի չարչարանս* արկեալ՝ ստիպէին լինել մոխրապաշտ դիւացն աղտեղութեան: (40 / 1) եկն կամաւ *ի չարչարանս* (124 / 15) Քրիստոս Աստուած, յիշեա՛ զկամաւոր *չարչարանս* քո ի վերայ սորա, որ վասն մերոյ փրկութեան. (313 / 3) Լաւ լիցի ինձ *չարչարանօք* մեռանել, քան ուրացութեամբ կեալ: (16/13) Եւ դառն *չարչարանօք* հեղձամահ արարեալ զնոսա, ողջոյն վարեցին զմորթս նոցա յանդամոց նոցա. (153 / 5)

ՉԱՐՉԱՐԵԱԼ - 1

Բազում և զանազան տանջանօք *չարչարեալ* զսուրբն ոչ ինչ կարաց գամագիւտ լինել յանշարժելի հաւատս երանելւոյն (33 / 2)

ՉԱՐՉԱՐԵՄ - 3

Ծնունդ չար, որ մեղաւ նմա Եւ որդի անօրէնութեան, որ *չարչարեաց* զնա. (227 / 20) Եւ չարեօք չորասցի, որ զքեզ *չարչարեացն:* (229 / 15) «Ես եմ Բասիրա՝ ծառայ Քրիստոսի, որ *չարչարեցայ* ի խաչի և խնդրեցի ի փրկչէն մի կորնչել նշխարաց իմոց. (120 / 13)

ՉԱՐՈՒԹԻՒՆ - 13

և իջուցանել հնացեալ *չարութեամբ* զանձդ ի դժոխս սրախողխող տրտմութեամբ. (44 / 4) բազում և ազգի ազգի *չարութեամբ* ... որսալ զպարզամիտս ի մարդկանէ (298 / 5) որոց կուրացեալ են միտք ըստ ժամանակաց *չարութեամբ* գնացելոց (298 / 12) Զի որովք զրկեցաւ բանսարկուն սկզբնատիպ *չարութեամբն* ի մոլար խաբէութենէ կռոցն երկրպագութեան (298 / 14) և խորամանկ *չարութեամբն* իւրով վտանգեալ զեպիսկոպոսունս, զքահանայս և զկրօնաւորս. (303 / 5) Ընդ նոսին և Վաչագան առ բուռն և սաստիկ *չարութեան* թագաւորին յակամայ հաւանէր մոգութեանն (43 / 7) Եւ զկախարդս և զդիւթս և զքուրմս յետ միանգամ և երկիցս խրատելոյ և դարձեալ ի նմին *չարութեան* գտանիցի ի գործ (50 / 3) Եւ եցոյց զայր և զկին աղանդոյն *չարութեան.* (54 / 9) որք հեղգային առնել զպաշտօնն *չարութեան:* (55 / 4) քանզի նոյն *չարութիւն* ապստամբին ի սկզբանն արտասահմանեաց զնախաստեղծ հայրն մեր զմեզ ի կենաց փայտէն (298 / 9) որ և որդիք քո ոմանք զքո անլրութեանդ *չարութիւն* կորստեան տառապելոց առնուն գաւազան, ո՞չ ապաքէն դու իցես Ներսեհ, որ դիմեալ երթաս յատելիս Քրիստոսի՝ յաւելադրել զնոյն *չարութիւն* արևելեայցն եկեղեցեաց: (339 /15; 339 /16) Տեսանե՞ս զանոպայ *չարութիւնն* դիւամոլ ազգին Կայենի: (244 / 16)

ՉԱՓ - 8

Զի թէ մինչ տղայն էիր, յաղթեցեր նմա, ի չափ հասեալ, գիտեմ, թէ առ ոտն կոխես զամենայն մենքենայս չարեաց նորա: (26 / 12) Սոքօք հանդերձ կացեալ մեր յաղօթս մեծահայց խնդրուածովք՝ սկսաք զբրածն առնել որպէս չափ մարդոյ: (121 / 11) զի ժամանեսցուք ի չափ հասակի լրմանն Քրիստոսի. (124 /14) Չափ մեծութեան եկեղեցւոյն երկու հարիւր կանգուն յերկայնն և հարիւր ի լայնն իննսուն սեամբք մարմարիոնովք, քարեայ կամարակապօք. (284/13) Քսան կանգուն էր չափ բարձրութեան երիվարացն (323 /12) և տեսանէաք անդ ոչ միայն սովորական չափով, այլ առաւել և բազմապատիկ արքայական շքով պատուեալ և պճնեալ պերևետեալ: (199 / 6) ՎԱՍՆ ՈՐ Ի ՍՈՒՐԲՆ ԵՐՈՒՍԱՂԷՄ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՇԻՆՈՒԱԾՔ ԹՈՒՈՎ ԵԻ ՉԱՓՈՎ ՀԻՄՆԱԴՐԵԼՈՎ. (283 / 3) և հրամայեաց երկակիսել զհարկացն լուծ թեթևացուցանել յառաջին երրեակն չափուց մասն մի: (198 / 15)

ՉԱՓԱԻՈՐ - 1

Անդ այնուհետև ոչ լինէր գործ աննկարգ խօսից կամ արբեցութիւնք կամ կատակերգութիւնք, այլ չափաւոր վայելմունք: (183 / 2)

ՉԱՓԵՄ - 1

զանապակ գինին կամ զկաթն ուղտուց և ձիոց անյագ յորովայնս իւրեանց իբրև ի տիկս ուռուցիկս չափէին: (160 / 9)

ՉԻՔ - 6

«Չիք հնար բուժել քեզ ի տանջանացդ (77 / 4) չիք ինչ բնաւ այնպէս տխմար քան զոչ հանգուցեալքն: (88 /17) և չիք վախճան նորա թագաւորութեանն: (124 / 19) և չիք հնար ի սեղանոյ տեառն վայելել և ի սեղանոյ դիւաց: (242 / 17) և յառաջ քան զնա չիք ոք. (247 / 3) և չարն չիք եղեալ ի տեղւոջն. (287 / 13)

ՉՂԱԽ - 2

Սակայն ճշդիւ քննեալ շնորհիւն Աստուծոյ գտաք ճշմարտութիւնն ի գալն մեր ի հովիտ մի Արցախայ՝ եզր գետոյ ինչ՝ ի տեղի մի Չղախ անուն կոչեցելոյ (209 / 14) և գունդն երկրորդ յայնկոյս Տրտուական գետոյն, ի հարաւական կողմանն ի մայրոլորտ հովտի պուրակի բնակէին՝ Չղախն անուանեցելոյ: (99 / 3)

ՉՂԱԽԱԿԱՆ - Տե՛ս ՉՂԱԽԱԿԱՆ ԳՈՒՆԴ

ՉՂԱԽԱԿԱՆ ԳՈՒՆԴ - 1

Զայն հէն համբաւու լուեալ Չղախական գնդին Երուսաղէմեան՝ զահի հարեալ մեծաւ երկիւղիւ: (100 / 1)

ՉՂԱԽԵԱՆ - Տե՛ս ՉՂԱԽԵԱՆ ՀՈՎԻՏ

ՉՂԱԽԵԱՆ ՀՈՎԻՏ - 1

գային հոգւոյն սրբոյն առաջնորդելով հասանէին յՌոստակ գաւառն Մեծ Կողմանց, ի Չղախեան հովիտն յասպարիսաձև դաշտակն: (205 / 1)

ՉՂՋԱՆՄԱՆ - 1

Եւ եթէ զլուսին ածից քեզ յօրինակ …գիշերագնաց, խաւարասէր, լուսատեաց, չղջանման, պակասընթաց: (24 / 8)

ՉՈԲԻՆ - 1

փախստեայք եղեալ ի ձեռաց Վահրամայ *Չոբինն* կոչեցելոյ՝ անկանին ի Յոյնս առ Մօրիկ թագաւորն Հոռոմոց: (171 / 2)

ՉՈՂ - 2

Սկիզբն առնէ քարոզութեան ի *Չորայ* (10 / 11) Իսկ արքայն Աղուանից ոչ կամեցաւ նուաճել անդրէն ի ծառայութիւն, այլ խրամատեաց զպահակն *Չորայ* և անցոյց յայն կոյս զզօրսն Մասքթաց: (16 / 7)

ՉՈՐ - 19

և աճապարեալ ընդ աշխարհն Աղուանից՝ մտանէ ի *Չոր:* (317 / 19) Եւ ձգէր զքարոզութիւն աւետարանին յաշխարհն Ուտիացւոց և յԱղուանս, և՛ Լփինս, և՛ ի Կասպս, և՛ մինչև ի դուռն *Չորայ.* (95 / 15) Յայնժամ հասանէր համբաւ ի դուռն արքունի, եթէ Խազիրք բազմամբոխ գնդիւք ելին ընդ դուռն *Չորայ* յաշխարհս մեր: (107 / 16) և զերկրորդ գունդն տան ի ձեռն Վարդանայ զօրավարին Հայոց՝ անցանել ընդ սահմանս Վրաց ի վերայ մարզպանին *Չորայ* (113 / 16) ոչ եկաց ի կողմանս *Չորայ* (114 / 3) ՓՈԽՈՒՄՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌՈՅՆ ԱՂՈՒԱՆԻՑ Ի *ՉՈՐԱՅ* (118 / 15) ի սոյն ամի փոխեցին զաթոռ հայրապետութեանն Աղուանից ի *Չորայ* քաղաքէն ի մայրաքաղաքն Պարտաւ (119 / 3) Բայց հայէր տեսանել, եթէ զինչ ինչ անցք անցանիցեն ընդ պահապանս մեծ քաղաքին *Չորայ.* (135 / 13) բանալ զդրունս *Չորայ.* հանել զազգս ազգս բարբարոսաց և նոքօք վանել զթագաւորն Պարսից՝ զիպարտն Խոսրով: (141 /3) որք դիմեալք յանկարծակի ընդ դրունս *Չորայ* ՝առ ոչինչ համարեալ զքաղաքապահսն և զզումարտակսն Պարսից արքային (141 /20) զի ստացաւ հայր իմ զաշխարհս զայսոսիկ զերեսին՝ Աղուանից, Լփնաց և *Չորայ* իւր սեպհական ժառանգութիւն յաւիտենական»: (161 /15) Ես Վիրոյ Աղուանից և Լփնաց և *Չորայ* կաթողիկոս թողում ասել զայլն ամենայն զպէսպէս զազրալիս՝ զմարմնոց սևութիւն և զկնտութիւն գլխոց (166 / 2) «Գնա՛, մո՛ւտ ընդ դուռն *Չորայ* (187 / 3) Որ և անտի յետ աւուրց ինչ հասանէին ի դուռն *Չորայ* (239 / 16) ՅԱՂԱԳՍ ԳԱԼՍՏԵԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՄԱՀՄԵՏԱՅ Ի ՀԱՅՍ ԶՈՐՍ ԵՒ ՀՆԱԶԱՆԴԵՑՈՒՑԱՆԵԼ ԵՒ ԱՆՏԻ ԸՆԴ ԱՂՈՒԱՆՍ ԱՃԱՊԱՐԵԼ, ՄՏԱՆԵԼ ԸՆԴ ԴՈՒՌՆ *ՉՈՐԱՅ* ԵՒ ԱՆԴ ԼՍԵԼ ԶԱՊՍՏԱՄԲԵԼՆ ՀԱՅՈՑ. (317 / 13) Եւ դարձաւ Մահմետն ի *Չորայ.* զայ պաշարէ զՍևան ծովապատն բերդ ամս Գ (318 /3) Սա եկն լուսաւորիչ երից աշխարհացս՝ *Չորայ.* Լփնաց և Աղուանից (342 /8) որ ի սկզբանն թուականիս Հայոց փոխեաց զաթոռ հայրապետութեանն ի *Չորայ* ի Պարտաւ: (343 / 1) Առ սովաւ կալան սովորութիւն գրել ի պատրուակ թղթի՝ Աղուանից, Լփնաց և *Չորայ* կաթողիկոսի: (343 / 3)

ՉՈՐԱՆԱՄ -2

Եւ չարեօք *չորասցի,* որ զքեզ չարչարեացն: (229 / 15) «Լեզուդ, որ օրհնեաց, մի՛ խօսեսցի, և աջդ *չորասցի»* (346 / 2)

ՉՈՐԵՔԵԱՆ - 1

Եւ դասք եպիսկոպոսաց իւրաքանչիւր հանդերձ մեծագոյն ժողովովն երթային ի *չորեքունց* կողմանց դեսպակի սրբոցն (69 / 11)

ՉՈՐԵՔԵՋԵՐԵԱՆ - 1

«Բարձան փառք սրբութեան մերոյ, և ի *չորեքեզերեան* տիեզերս պարծանք պարծանաց մերոց շիջեալ կործանեցաւ»: (299 / 10)

ՉՈՐԵՔԿԵՐՊԵԱՆ - 3

Արդ այսուհետև պարտ է մեզ փատռղագոյն հրատարակել զառիթս գոլոյ մերոյ փրկութեան՝ զգեղաղէշ, յարավայելուչ, *չորեքկերպեան* զտիրականն յաղագս մեր ընդունելով յինքեան զանհամեմատ նախակրթութիւնն: (209 / 5) խոստովան լերուք, եթէ ոիվ է պատրիարքն ձեր, զի չորք միայն կացին ի վերայ երկրի. Աղեքսանդրին՝ Մարկոսի աթոռն, Անտիոքայն՝ Մատթէոսին, Հռոմայն՝ Ղուկասուն, Եփեսոսին յԱսիա՝ Յովհաննուն. ըստ *չորեքկերպեան* տիեզերաց, ըստ քառավտակ գետոցն աղենականի, ըստ *չորեքկերպեան* կենդանեացն, ըստ չորից աւետարանչացն, ըստ չորից մովսիսական օրինացն, զի երկրորդումն օրինացն որիշ համարի: (272 / 13; 272 / 14)

ՉՈՐԵՔԿՈՒՍԻ - 3

Իսկ մի ոմն ի նորահաւատիցն ... ի վերայ գետնափոր կայենի խաչին շինէ մատուռն մի հողեղէն *չորեքկուսի* (97 / 1) և առ ստորևն դռնակ մի երկբացիկ քանդակագործ, շուշանաձև, *չորեքկուսի* (255 / 15) և հրաման ետ *չորեքկուսի* ի զոհանոցն աղօթել. (289 / 4)

ՉՈՐԵՔՀԱՐԻՒՐ - 1

որ թուին լինել ամք ի յարութենէն ցՅոբնաղիոս *չորեքհարիւր:* (316 / 4)

ՉՈՐԵՔ ՀԱՐԻՒՐ - 1

Եւ այս յետ *չորեք հարիւր* ԽԱ ամաց եղև, յետ առնլոյն զՂիոն: (324 / 6)

ՉՈՐԵՔՆԻՒԹԵԱՅ - 1

Բանս *չորեքնիւթեայս աշխարհս* կարէ ասել: (23 / 12)

ՉՈՐԵՔՇԱԲԹԻ - 1

Եւ որ *ի չորեքշաբթի /ճիշտը՝ չորեքշաբաթի, ծն. չորեքշաբաթու/* և յուրբաթի միս ուտէ յառաջ քան զաղուհացսն, մի շաբաթ պահեսցէ. (92 / 9)

ՉՈՐԵՔՏԱՍԱՆԵՐՈՐԴ - 1

Հասանէ *չորեքտասաներորդ* բարձն Անդոկայ Սիւնեաց տեառն: (107 / 13)

ՉՈՐՊԱՆ - Տե՛ս ՉՈՐՊԱՆ ԹԱՐԽԱՆ

ՉՈՐՊԱՆ ԹԱՐԽԱՆ - 1

Եւ ընտրեալ ի զօրաց իւրոց արս զօրաւորս իբրև երիս հազարս և իշխան նոցա *Չորպան Թարխան* կոչեցեալ (167 / 6)

ՉՈՐՔ - 16

Յետ ամաց *չորից* մահուան մեծին Խոսրովու ... թագաւորէ որդի նորա Յազկերտ: (172 / 18) Եւ ահա այս երկու ամք պակաս յերից տասներեկաց ... դրուատայեղց, համաշխարհալուր կատարեաց զերիս *ի չորից* անտի, նախ ի Պարսս, ապա ի դրունս Հռնաց անվեհեր քաջութիւնս՝ անսխալ գոլով (191 /17) ուստի չորիւքս այսոքիւք և *չորից* անկեանց աշխարհիս հասարակաց կալով իշխանութիւն՝ տեսանելով զանհնարին տկարանալն կայսերն Հռոմոց ի թագաւորէն Հարաւայնոյ (193 /13) Արդ՝ այս երբեակք տասներրեակք և տարիք երեք, յոր սկսաւ տէր բազմամեծար զբարեյաղթ իշխանն Աղուանից

առնել, ի *չորից* ազգաց թագաւորաց աշխարհակալաց պատուել և մեծարել յոյժ (201 /1) խոստովան լերո՛ւք, եթէ ո՛վ է պատրիարքն ձեր, զի չորք միայն կացին ի վերայ երկրի. Աղեքսանդրին՝ Մարկոսի աթոռն, Անտիոքայն՝ Մատթէոսին, Հռոմայն՝ Ղուկասուն, Եփեսոսին յԱսիա՝ Յովհաննուն. ըստ չորեքկերպեան տիեզերաց, ըստ քառավտակ գետոցն աղենականի, ըստ չորեքկերպեան կենդանեացն, ըստ *չորից* աւետարանչացն, ըստ *չորից* մովսիսական օրինացն (272 /15; 272 /15) գմբէթ կապեալ ի *չորից* սեանց և սեանցն պղնձի խաչ զգեցուցեալ (284/6) *չորիւք* ցցովք պրկելով զչորեցունց բութոցն՝ կապեալ մանուկ մի և մորթէին կենդանւոյն: (52 /4) Ագուցին նմա արջնաթոյր ստորս *չորիւք* դրօշակօք (175 / 10) ուստի *չորիւրս* այսոքիւք և չորից անկեանց աշխարհիս հասարակաց կալով իշխանութիւն՝ տեսանելով զանհնարին տկարանալն կայսերն Հռոմոց ի թագաւորէն Հարաւայնոյ (193 / 13) որք ամս *չորս* բնակեալ յԱղուանս նեղէին զՀայս: (30 / 13) Եւ դարձեալ ցուցանէր նոյն Յովէլայ սարկաւագի ի նմին տեղւոջ արս *չորս* աւագագոյնս աբեղայս (72 / 6) Եւ դէմ եղեալ առ հասարակ ընդ *չորս* դրունս քաղաքին՝ աճապարէին անկանել ի լեռնակողմն Արցախայ գաւառին: (137 / 5) և գայր ելանէր երիս վէրս դժնդակս յանձին բերելով և զերիվարն ի *չորս* վայրս խոցեալ. (174 / 15) Վարազ Գրիգորի լինին որդիք *չորք* ՝ (172 / 12) զի *չորք* միայն կացին ի վերայ երկրի. (272 / 12)

ՉՈՐՐՈՐԴ - 4

ի սորա *չորրորդ* ամին լցաւ թիւն Հայոց Ն: (346 /12) և յերրորդում գիշերին, յորում *չորրորդն* մերկանայր տիւ ի կատարել պաշտամանն, կատարէին զտէրունեան և զկենդանական ահաւոր խորհուրդն: (83 / 5) ի *չորրորդում* պահու գիշերոյն յեղակարծումն երևեալ ահա նմա տեսիլ հրաշալի (202 /2) Ապա ի *չորրորդում* ամին եղև գալն Մահմատայ՝ Խաղթի որդւոյ (333 / 6)

ՉՈՐՐՈՐԴԵՄ - 1

Եւ առաքէր միանգամայն և երկիցս, և *չորրորդէր* գրով զգուշութեամբ առ թագաւորն իւր Խոսրով (144 / 11)

ՉՈՓԱՅ - 1

որոտընդոստ *չոփայիցդ* շիրիմք Դարքունանդ կոչեցեալ. (258 / 16)

ՉՈՒ - 3

Եւ յորժամ *չու* լինէր բանակին, յառաջ սրբոցն դեսպակ ելանէր առաջի (62 / 10) *չու* արարեալ թագաւորն ի Դիւտականէ բազմութեամբ ժողովոյն, եպիսկոպոսօք, երիցամբք և ամենայն պաշտօնէիւք յոլովութեամբ (70 / 14) *Չու* արարեալ Վարդանայ մեծաւ աւարաւն (116 / 17)

ՉՈՒԱՌԱՑԵԱԼ - 1

Չուառացեալ զերծեալքն աղերսէին լերանց, եթէ անկերուք ի վերայ մեր. (164 / 10)

ՉՈՒ ԱՐԱՐԵԱԼ - Տե՛ս ՉՈՒ

ՉՈՒԵԱԼ - 10

Եւ *չուեալ* յԱրաժանից սրբոյն Զաքարիայի և երանելւոյն Պանդալիոնի և յոյժ վայելչականին Գրիգորի և առաւել հոչակելեացն պատերազմողին

Հոիփսիմեայ Գայիանէիւ հանդերձ, թագաւորաւն և յոլովազոյն ժողովով և եպիսկոպոսօքն և քահանայիւք և պաշտօնէիւք: (72 / 1) Յորժամ *չուեալ* ի Քարուիճէ՝ կանայք յառաջ ելանէին ի գիւղաքաղաքէն Ամարասայ: (73 /6) և ինքն *չուեալ* զայգոյ զատկին հանդերձ քահանայիւքն սրբովքն և այլ բազում հաւատացելովք՝ խաղայր գնայր Ազիստոսեան գնդիւն: (103 / 6) Յայնժամ *չուեալ* նոցա ընդ կողմանս հարաւոյ՝ երթեալ հասանէին ի բարձրաբերձ կատար լերինն մեծի (105 / 9) Եւ անտի *չուեալ* բանակեցան առ հեղեղատովն Տրտուայ՝ մօտ ի գիւղն Դիւտական: (133 / 2) ինքն *չուեալ* անտի հանդերձ գանձիւքն՝ դառնայ ի տեղի իւր. (153 / 14) Եւ *չուեալ* անտի՝ գնաց յառաջ ելանել: (159 / 13) Քանզի յայնժամ իշխանն մեծ *չուեալ էր* ի կողմանս հարաւոյ ի Սիսաւանացն գաւառ (220 / 6) և ինքն *չուեալ* անտի՝ անցանէր գնայր յաշխարհին իւր: (233 / 5) Յանկամական մտաց *չուեալ* երթայ ի Դուին (335 / 5)

ՉՈՒԵԼ - 2

Ապա յայնմ օրէ հետէ էր ընդ նոսա ի բանակս նոցա՝ *ի չուել* նոցա և ի նստել: (162 / 13) Եւ այսու մտօք հրաժարեալ մեծայաղթ լուսոյն՝ զինեցաւ *չուել* ի տար աշխարհ: (194 / 12)

ՉՈՒԵՄ - 2

Եւ ինքն տակաւ *չուեաց* զհետ նորա ըստ կազդուրելոյ աղխի բազմութեան զօրուն իւրոյ: (167 / 10) Ապա *չուէր* բանակն ամենայն առաջին կարգադրութեամբն և սրբոցն դասուք: (83 / 8)

ՉՔԱՑԵԱԼ - 1

և ապա ինքն *չքացեալ* աներևութանայ: (54 / 7)

ՉՔԱՒՈՐ - 3

հիւանդաց առողջութիւն պարգևէր, *չքաւորաց* հարստութիւն (251/6) մեծագոյն բարեգործութիւնս առ եկեղեցիս և առ ամենայն կարօտեալս և *չքաւորս* առատագուարթ անսպառ կատարէր (336 / 2) Եւ այնպէս սատակէին և նոքա ընդ *չքաւորսն:* (164 / 18)

ՉՔՄԵՂՍ - 1

և պակաս վաշտկօք մտեալ ի քաղաքն՝ հարցանէր՝ *ի չքմեղս* եղեալ, եթէ ես առ Շապուհ եկի: (108 / 7)

ՉՔՆԱՂ - 2

բայց զի նոր իմն և *չքնաղ* է պատմութիւն տեսլեանս (203 / 16) վաղվաղակի *չքնաղն* այն քակտէր վայելչութիւնք (221 / 11)

ՉՔՆԱՂԱԳԵՂ - 1

տեսեալ զերկրորդ որդին իւր Ջուանշիր խրոխտ և սիգադաճեմ, *չքնաղագեղ* ունելով տիպ: (173 / 10)

ՉՔՆԱՂԱՋԳԵՍՏ - 1

իսկ արդ եկեալ Մովսէս *չքնաղազգեստն* փառօք առաջի Աստուծոյ (87 / 8)

ՉՔՈՏԻ - 1

որ իւրով բարերարութեամբն կամեցաւ մերժել զմեզ ի *չքոտի* կոծոյն վնասակարութենէ: (104 / 13)

ՉԵԻ ԵԻՍ - 1

Հասեալ ի վերայ նոցա թշուառութիւն ի վերայ թշուառութեանն. բայց վասն զի չև ևս էր հասեալ ժամանակն, որ առաջի կայր: (138 / 5)

/ չ - տառով սկսվող բառեր, որոնք բառասկզբում ունեն գ-ը նախդիր /

-

-

ՉՉԱԹ - 1

Մեծ և բարեպաշտ իշխանն Հոնաց Իլութուեր հանդերձեալ կազմէր ի գլխաւորաց աշխարհին իւրոյ Զիթգինն Խուրսունաց և զՉաթն Խազր զկնի սրբոյն Իսրայէլի պատգամատարս սիրոյ և խնդրել զնոյն Իսրայէլ յառաջնորդութիւն Հունաստանեայցն: (262 / 9)

ՉՉԱՐ - 14

Եւ հարցեալ զպատճառս՝ խոստովանէին զչար խորհուրդն իւրեանց (36 / 3) Զի նախ զորդիս նորա առաջի նորա հարեալ սատակեցին սրով բերանոյ, զչար զաւակսն և զբովանդակ նախարարսն և զկուսակալս աշխարհին (45 /2) զի զչար մանկունս նոցա զայրացուցիչս կալեալ հարին ոչ զքարի, այլ զբերանոյ սրոյ թշնամեացն (45 / 12) Այլ և ձեռն ևս արկանէր յուզել և՛ քննել, և՛ խնդրել զչար աղանդսն մատնահատութեան և դեղատուութեան (51 / 12) մարդասէրն Աստուած կամեցաւ յայտնել սմա ի ձեռն աստուածասէր արքային բառնալ զչար աղանդն յաշխարհէ: (51 / 15) կատարէին զչար գործ մատնահատութեան (52 / 3) անկարելի ումեք էր զչար աղանդոյն մարդիկ ի խոստումն ածել: (52 / 15) բառնալ զչար աղանդն յաշխարհէս (53 / 8) զչար որոմն անիծելոյն Նեստորի և զժողովոյն Քաղկեդոնի անարգելաբար սերմանեն ի հոգիս անմեղաց (123 / 3) Իսկ զայս իմացեալ Մահմետի զդաւաճանսն ծածկաբար զչար վարդապետն իւր սպանեալ ընդ աւազեաց:/ճիշտը՝ ընդաւազեաց/ (288 /10) և զչար որոմն նորա եբարձ ի մէնջ (310 /21) և ձերով քաղցրուսոյց վարդապետութեամբ բարձէք զչարն ի միջոյ մերմէ. (300 / 2) Արդ ընտրեսցուք զբարին և մերժեալ անարգեսցուք զչարն (307 / 4) Ապա կալեալ շուն մի շամփրեցին ընդ մարմինն Մահմետի և այնպէս ծածկեաց երկիր զչարն զայն: (318 / 16)

ՉՉԱՐԱԳՈՐԾ - 2

ոչ կարէին խոստացուցանել զչարագործսն (53 / 3) ապա բարկ քացախ և բորակ խառնեալ և զերկրեալ զչարագործսն արկանել հրամայէր ընդ ունչսն (53 / 3)

ՉՉԱՐԱՓԱՌ - 1

Յոյնք և ամենայն Իտալիա, Հայք և Աղուանք և Վիրք միաբանեալ նզովեցին զչարափառ ժողովն Քաղկեդոնի (270 / 4)

ՉՉԱՐՉԱՐԱՆՔ - 1

Յիշեցուցանէր և զմահ նախարարացն և *զպարսպարանս* կապելոցն (16 / 11)

ԶՉԱՓ - 1

քանզի անցանել զանցանէ *զպատի* կարգի տեսութեանս իմոյ գործն, զոր գործեաց նա: (129 / 12)

ԶՉՄԱՐԴ - 1

որ զշան և *զմարդոյ* բերելով զբարս (337 / 8)

ԶՉՈՐ - 1

Այլ և *զոր* խիզ խաղողոյ ո՞ տայր անձանց թշուառականացն յաղալ և յուտել: (164 / 14)

ԶՉՈՐԵՔԻՆ - 1

չորիւք ցցովք պրկելով *զչորեքունց* բութոցն՝ կապեալ մանուկ մի և մորթէին կենդանւոյն: (52 / 4)

ԶՉՈՐԵՔԱՆԻԻ - 1

նա և ընդ նմին զմեքենայսն և *զչորեքանիւսն* և զայլ ազգի ազգի հնարս յօրինեալ ի ձեռաց ճարտարացն Հռովմայեցւոց (138 / 15)

ԶՉՈՐՔՈՏԱՆԻ - 1

ի գերութիւն վարեաց զփայտն կենաց՝ զխաչն լուսատու տիեզերաց …նաև *զչորքոտանիս* և զթռչունս մեծամեծս (129 / 10)

ԶՉՈՓԱՅ - 1

հողմն ուժգին սաստկապէս հասեալ վառէր զայրեցումն բարձու մեհենիցն և *զչափայսն* զազիր մորթովքն հանդերձ զոհարանօքն: (259 / 6)

ԶՉՔՆԱՂ - 1

ետես *զչքնաղ* ծնունդ քոյոյ բնութեանդ (20 / 14)

ԶՉՔՆԱՂԱԳԻՒՏ - 1

զչքնաղագիւտ զխաչն Քրիստոսի առ նա հասուցանել: (219 / 2)

Պ

ՊԱԳԱՆԵԼ - 2

և հրամայեցին ամենեցուն փոխել ոտն ոտն և երկիր *պագանել* երիցս անգամ (160 / 15) զի որք սովորն էիք երկիր *պագանել* ծառոյդ այդմիկ մոլեկան մտածութեամբ, սովորական ընդելութեամբն երկիր պագէք խաչիդ (256 / 2)

ՊԱԳԱՆԵՄ - 9

Եւ ի յանդիման լինելն երկիր *եպագ* կաթողիկոսն ի վերայ երեսաց իւրոց. (160 / 18) և երկիր *պագանեմք* ծառոցն և մատուցանեմք զոհս և նուէրս(253 / 1) մեք *ոչ պագանեմք* երկիր պատկերաց (269 / 9) զոր ամենայն ազգ քրիստոնէից երկիր *պագանեն* և փառաւորեն (143 / 1) Զի որք արեգական և լուսնի երկիր *պագանեն,* բաժին է նոցա հուրն անշէջ: (247 /11) Եւ մտեալ

յաստուածաբնակ եկեղեցին՝ երկիր պագանէին ամենակեցոյց փայտին կենաց: (98 / 5) երկիր պագանէին լուսնի և ամենայն արարածոց, որ ինչ թուէր յաչս նոցա զարմանալի: (241 /14) երկի՛ր պագէք սմա. (140 / 4) սովորական ընդելութեամբն երկիր պագէք խաչիդ և անտեսանելւոյ պատկերի աստուածութեանն (256 / 3) Երիցունք, որ ի շէնս լինին, երկիցս անգամ ի տարւոջն եպիսկոպոսին երկիր պագցեն (90 / 7)

ՊԱԳԱՆԵՄ ԵՐԿԻՐ - Տե՛ս ՊԱԳԱՆԵՄ

ՊԱԳՇՈՏԵԼԻ - 1

Եւ ոչ զբաղմունք պագշոտելիք. այլ զօրն ողջոյն աշխարհական հոգւոց պարապէր. (183 / 8)

ՊԱԶԿԱՆՔ - 3

ԵՐԱՆԵԼԻՈՅՆ ՅՈԲԱՅ ՃԳՆԱԻՈՐԻ ՀԱԻԱՏԱՑՈՒՑԱՆԵԼՆ ՋՄԵԾԱԳՈՅՆՆ ԱՐՑԱԽԱՅ ԳԱԻԱՌՆ ՊԱԶԿԱՆՅ (75 / 6) մեծագոյն աշխարհ մի Արցախայ՝ Պազկանք անուն, դարձուցանէր ի մոլորութենէ (75 / 9) որք են այսոքիկ՝ Վերին Վայկունիք, Բերձոր, Սիսական, Հաբանդ, Ամարաս, Պազկանք. Մխանք և Տրի գաւառ: (327 / 10)

ՊԱԼԱՏՆ - 4

Եւ զդուռն պալատանն իւրոյ թողեալ ի ձեռս որդւոյն իւրոյ, թագ կապեալ նմա՝ նստուցանէր փոխանակ իւր յաթոռ թագաւորութեան իւրոյ: (130 / 15) Յայնժամ հրամայի ի թագաւորէն, զի մեծամեծք պալատանն և վեհանձունքն ընդառաջ նորա ելցեն: (185 / 2) զի զնոյնաձևն յարմարեսցէ ի պալատանն: (317 / 8) հատին անցին ընդ ծովն մեծ մինչև ի պալատն արքունի. (142 / 3)

ՊԱԼԱՐԱՓԱՅԼ - 1

Անդ կայր մատուռն մի փայտեղէն կազմեալ և խեցայարկ վերտաւորեալ և խաչանիշ զարդու յարմարեալ պալարափայլ զորմոցն յօրինեալ գեղեցկութիւն: (205 / 5)

ՊԱԽՐԷ - 1

Եւ ոյր ոչխարք են, ի տանէ ոչխար մի և Գ զզաթ բուրդ և մի պանիր և ոյր ձիք ի տան իցեն, մին յովանակ, և ոյր պախրէք իցեն, որթ մի: (91 / 4)

ՊԱԿԱՍ - 3

և զզօրսն թաքուցանէր արտաքոյ քաղաքին, և պակաս վաշտկօք մտեալ ի քաղաքն(108 / 6) և զՎարդան պակաս զօրօք յայդ կողմն հանին: (114 / 1) Եւ ահա այս երկու ամք պակաս յերից տասներեկաց … դրուատայեղց, համաշխարհալուր կատարեաց զերիս ի չորից անտի, նախ ի Պարսս, ապա ի դրունս Հոնաց անվեհեր քաջութիւնս՝ անսխալ գոլով (191 / 15)

ՊԱԿԱՍԵԱԼ - 1

և ի դժնդակ վիրացն պակասեալ վախճանէր: (224 / 12)

ՊԱԿԱՍԻՄ - 3

Եւ թէպէտ պակասեցան և ցրուեցան զօրք նորա, սակայն զնա ոչ կարացին ածել ի հաւանս (17 / 1) Եւ յերկաքանչիւր կողմանց բռնութենէ թշնամանեաց

աւերեալ պակասեցաւ երկիրս: (237 /18) և մօտաւորք յերեսաց նորա իբրև զմոմ հալեալ պակասէին: (146 / 9)

ՊԱԿԱՍԸՆԹԱՑ - 1

զլուսին ածից քեզ յօրինակ …գիշերագնաց, խաւարասէր, լուսատեաց, չղջանման, պակասընթաց, խաւարատանջ, բազում անգամ ի թաքուստ մտեալ: (24 / 8)

ՊԱԿՈՒՑԵԱԼ - 3

Եւ ի հնչիւն ձայնից վառելոյ զրահին պակուցեալ իշխանն սրտաբեկ լինէր (223 / 2) Եւ զրապարիշտ և թշուառական քուրմքն … պակուցեալ սրտաբեկք լինէին: (258 / 2) այլ պակուցեալք՝ջանային ծածկել զանձինս իւրեանց. (152 / 10)

ՊԱՀ - 4

Արուսեակն յայգուն պահու և եթ երևի, իսկ դու ի քսան և ի չորս ժամս՝ ի տուընջեան և գիշերի: (24 /3) ի չորրորդում պահու գիշերոյն յեղակարծումն երևեալ ահա նմա տեսիլ հրաշալի: (202 /2) Ի հինգերորդում պահու գիշերոյն, այդքիկ ամենեքեան տեսանէին զարփիահրաշ սքանչելիսն: (217 / 4) Եւ մինչ դեռ ի տաճարէ անտի ելանէր իշխանն ընդ ճանապարհ պարտիզայար ծաղկոցացն, յայնժամ ի գիշերի յառաջին պահուն՝անվահան, ունելով թուր. (222 / 10)

ՊԱՀԱԿ - 1

Խաղային գնային այնուհետև ի վերայ պահակին Հոնաց (116 / 5)

ՊԱՀԱՆՋԵՄ - 4

և երդումն իսկ պահանջեաց ի մէջ եղբարցն՝ չզրկել եղբարցն զմիմեանս (4 / 5) և մի՛ ճշդիւ պահանջէր: (189 / 14) անցեալ ժամանակն յետս յետս զիւրն պահանջէ ի մէնջ պատմել (128 / 7) Նա և զանցս վաճառաց և զկարթընկէցս ձկնորսութեան մեծամեծ գետոցն Կուրայ և Երասխայ՝ զամենայն ճշդիւ պահանջէր (167 / 1)

ՊԱՀԱՆՋՈՒՄՆ - 1

մինչև զհասակածին և արգանդակիցս մանկունս պահանջմամբ թափէր: (178 / 16)

ՊԱՀԱՊԱՆ - 5

զառաջինն տան ցՆերշապուհ Ռմբոսեան պահապան Ատրպատական կողմանն (113 /14) որ և սպառազինեալ սուրհանդակ պահապանացն ջոկք անհոգ և անվեհեր ի դրունս արքունի պաղատանն կային անկեալ ընդ քնով: (222 / 11)Բայց հայէր տեսանել, եթէ զինչ ինչ անցք անցանիցեն ընդ պահապանս մեծ քաղաքին Չորայ. (135 / 13) Ամենայն ինչ քո գնդին կրկին է. եթէ զրահք էին պահապանք մարմնոյ, ընդ նմին և զրահքն հաւատոյ. (23 /2) Ի բաց մեկնեցան ի նմանէ պահապանքն (227 / 5)

ՊԱՀԵԱԼ - 3

Եւ պահեալ գնա առ այն օր՝ ի վաղիւն բառնային սրով զգլուխն. (148 / 18) հրամանաւ Աստուծոյ պահեալ լինէր իւրայնովքն հանդերձ ի ջրահեղձ պատուհասէն: (245 / 5) որ սակս իւր մերձաւորաց էր պահեալ. (281 / 3)

ՊԱՀԵԼ - 16

ուսուցանէր և խրատէր պահել զպատուիրանս Որդւոյն Աստուծոյ. (35 / 5) Եւ տայր ուսանել պահել զամենայն տէրունեան պատուիրեալսն (37 / 7) և հրամայէր ուխտի եկեղեցւոյն պահել և պաշտօն առնել առ Աստուած խնդրուածովք (52 / 13) յուշ լիցի ամենեցուն ձեզ անյապաղ պաշտել և պահել և առնել խնդրուածս առ մարդասէրն Աստուած առ ի շնորհել մեզ զնշխարիս երանելւոյն Գրիգորիսի. (66/7) հրամայէր մեծաւ զգուշութեամբ պահել մինչև ցառաւօտն: (81 / 19) Եւ զմնացեալն ի նշխարացն կնքեալ՝ մեծաւ զգուշութեամբ տայր պահել ի սուրբ և յազնուական սեռեկի (86 / 3) Հրամայէր պահել զնա մեծաւ զգուշութեամբ (100 /15) յանձն առին զերդումն քրիստոնէութեան՝ պահել ընդ նոսա հաստատուն միաբանութիւն (116 / 13) «Ընդէ՞ր բնաւ արգելեր զմեզ պահել ի ժամս յայս՝ տալ զմեզ կանամբք և որդւովք մերովք ի ձեռս արիւնարբու գազանացն: (136 /18) Եւ որ մնացին անդրէն ի դրանն, ճեպէին զնոսա պատգամաւորքն Կաւատայ զգուշութեամբ ունել պահել զխոսրով (147 / 16) որ կարի իմն ախորժելի թուէր կալանաւորացն և այնոցիկ, որք ի դիպահոջ էին միայն պահել ի մեծի դրանն (149 / 17) և կամէր հրապուրել պահել ինչ զպատգամաւորսն (155 /3) և ողջ պահել զանխախտելի սէր մեր, որ առ միմեանս է: (266 / 1) «Յարուցից զքեզ գլուխ և առաջնորդ ժողովրդեան իմոյ՝ զգուշացուցանել նոցա պահել զպատուիրանս իմ (306 / 7) նախ սիրել զԱստուած ի բոլոր սրտէ և պահել զպատուիրանս նորա … նոյնպէս զեկեղեցւոյ սրբոյ կարգս անխափան պահել (307 / 6; 307 / 8)

ՊԱՀԵՄ[1] - 26

«Տէր տերանց և թագաւոր թագաւորաց, մի՛ յամօթ առնէր զիս՝ զյուսացեալս ի քեզ. ամբիծ և ուղիղ պահեաք յառժամանակեայ վտանգէս: (101 / 12) և ձի թամբեալ և սանձեալ կազմ պահեն. (54 / 7) որ մինչ յահեղ անունն Աստուծոյ երդնուն, ստեն, և մինչ յառականս կանանց երդնուն, զայն անսուտ պահեն: (289 / 15) զիւրաքանչիւր օրէնս հաստատուն պահեսցեն ըստ իւրաքանչիւր ախորժելոյ կամացն. (48 / 10) և զուստերս և զդստերս իմ աներկիւղ արասցես ի չարէ և զօրաւոր պահեսցես յամենայնի: (189 / 1) զկարգս քրիստոնէութեան ամբողջ և հաստատուն ոչ պահեսցէ: (50 / 2) Երէց, որ զշէն մեծ պահէ, զայլ շէն մի՛ պահեսցէ: և որ մօտ երկու ագարակք են, մի երէց պահեսցէ (91 /17; 91 /18) զի դարձցին բնակիչք երկրիս և գործեսցեն առանց երկիւղի և պահեսցին նոքօք յամենայն բռնութենէ զօրաց քոց: (162 / 19) Քոյին իսկ աշխարհիդ հայրենի հաւատքն պահեցան (25/16) որք անխառն յաղանդոյն պահեցան (300 /7) որ պահեցեր զիս ի մանկութենէ իմմէ (189 /2) և զմատաղատունկս արուացն և զազգն իգականացն պահեցէք ինձ և ձեզ ի ծառայութիւն և յաղախնութիւն: (154 /4) զդոյն աստուածային կանոնական իրաւունս պահեցէք յիւրաքանչիւր վիճակի (310 / 12) Երէց, որ զշէն մեծ պահէ (91 / 17) որք զդուռն նորա պահէին. (160 /11) Սոյնպէս և ամենասուրբն Գրիգոր զերծեալ ի սրոյ Հայաստան նախարարացն՝ ի փրկութիւն պահէր նորին Հայոց աշխարհին և ամենայն Արևելից Կողմանց (32 / 10) և յանձրևաբեր խոնաւէն ցամաք պահէր: (61 / 12) և՛ երիցունս բազումս, և՛ սարկաւագունս, և՛ գրակարդացս, և՛ փսաղտս պահէր յարքունի դրանն (62 /9) Աստանօր հրամայէր թագաւորն տալ մասն իւրաքանչիւրում

եպիսկոպոսաց՝ առ ի բաշխել և զայլն մեծաւ զգուշութեամբ և զանազան սպասուք ինքն իսկ սպասաւորեալ՝ *պահէր* թագաւորական կնքով կնքեալ: (82/20) Իսկոյն հասանէր նմա վախճան, և անօրէնն Մարկիանոս թագաւորեալ՝ *ոչ պահէր* զուխտն (113 / 11) որ *պահէր* և ունէր զքաղաքն Պարտաւ (136 / 11) այլ *պահէր* զնա իբրև զանօթ ինչ ընտիր և խնայէր ի նա իբրև յերիվար ինչ ընտիր քաջընթաց յօր մարտի և պատերազմի. (150 / 18) ընկճեալ կայր իբրև զօձ ի ճանապարհին դարանակալ և *պահէր* առաջի նորա զճանապարհն: (167 / 13) ի բաց ընկեցեր զոսկիակուռ թագ թագաւորին և ահա կայ *պահի* քեզ անձեռագործ պսակն (25 / 7) Եւ յաջմէ եկեղեցւոյն մատուռն, յորում մանկանց սպանելոցն ի Հերովդէէ նշխարք *պահին.* (284 / 17)

ՊԱՀԵՄ² - 2

Եւ որ ի չորեքշաբթի և յուրբաթի միս ուտէ յառաջ քան զաղուհացսն, մի շաբաթ *պահեսցէ* (92 / 10) Իսկ դրան երիցունքն արքունի յոյժ ջերմագոյն *պահէին* (69 / 16)

ՊԱՀԵՍՏ - 3

զոր սրբոյն Մաշտոցի իւր իսկ ձեռամբն եդեալ էր *ի պահեստի* (219 / 6) Եւ նոյնժամայն Յովէլ եպիսկոպոս առ ինքն առեալ զնզովից գիրն՝ դնէր *ի պահեստի.* (293 / 17) Եւ զերկոսեան նամակսդ կնքեալ իմով մատանեաւ ետու *ի պահեստի* Ներսմերհի /ճիշտը՝ Ներսմեհրի/ ուխտի (304 / 2)

ՊԱՀԻՉ - 1

որ *պահիչ* և կեցուցիչ է աշխարհիս այսորիկ. (252 / 2)

ՊԱՀԼԱԻԻԿ¹ - 1

Եւ ապա տէր սուրբն Գրիգորիս *Պահլաւիկ* ՝թոռն մեծին Գրիգորի Հայոց լուսաւորչին երկատեսակ փառօք կացեալ ի նոյն աթոռ: (342 / 9)

ՊԱՀԼԱԻԻԿ² - 1

«ԶՊարսից և զՊարթևաց զբնական *Պահլաւիկս /ճիշտը՝պահլաւիկս /*և զազատ արանց զնախադրութիւն քաջ գիտեմ (106 / 15)

ՊԱՀՊԱՆԵԱԼ - 1

ուր էր հայրն նորա Խոսրով՝ *պահպանեալ* մերձակայ զօրօքն իւրովք: (147 / 1)

ՊԱՀՊԱՆԵՄ - 1

Եւ տէր Աստուած զօրութեամբ և փառօք զձեզ *պահպանեսցէ* ի շնորհս աստուածընկալ խաչիս երևման և բազմաւոր կենօք խաղաղականօք. (210 / 15)

ՊԱՀՊԱՆՈՒԹԻՒՆ - 4

յորժամ դաւանել հաւատացաւ յԱստուծոյ արժանաւորել մեզ միշտ զմեւք *պահպանութեամբ* պարունակեալ զիւրոյ արարչութեան գութ խնամոյ (217/18) և հաստատէր զնոսա վարդապետական շնորհօք՝ կալ նոցա յուղղափառ հաւատս պատուիրանին *պահպանութեան:* (235 / 13) զօր փութանակի առաքէր յօգնականութիւն նոցա և ի *պահպանութիւն* քաղաքին (138 / 8) Եւ նոյն շնորհք սուրբ հոգւոյն հաստատեսցէ զձեզ յերկիւղն Աստուծոյ և *ի պահպանութիւն* պատուիրանաց նորա: (265 / 13)

ՊԱՀՔ - 16

զի էին աւուրք պահոց քառասներորդացն: (162 / 8) Եւ ի ժամանակի նեղութեան յաւուրս քառասներորդացն պահոցն յախուռն, անխտիր մերձեցեալ ի գէշ մեռելոտեաց անսրբոց, այլ և զարմատս բանջարոց և զկեղևս ծառոց հանեալք և զծայրս ոստոցն ծամէին. (164 / 12) Եւ ի լնուլ կիտին եռօրեայ պահոցն, աբասուն Իսրայէլի առեալ բահ ի ձեռն և եդեալ համօրէն ծունր ամենեցուն դիտել ուղղորդաբար ի նկատեալ տեղին՝ հրամայէր անվեհեր բրել. (205 /13) այլ գաղտ յաղօթս և ի պահս և ի Քրիստոսի խոստովանութեանն կանխէր հանապազ (43 / 7) Եւ ինքն ի պահս և յաղօթս և յողորմութիւնս աղքատաց առատապէս կանխէր (48 / 17) և ջերմախանդ սիրով փութայր հանապազ ի պահս և յաղօթս (64 / 9) այլ ապաստան պարտ է լինել ի պահս և յաղօթս (65 / 14) և միշտ անձանձրոյթ էր ի պահս և յաղօթս և ի տուրս աղքատաց: (86 / 7) Եւ եկեալ հասանէին ի սուրբ պահս քառասնորդացն յեւթներորդ շաբաթու պասեքի զատկին (98/ 8) սրբութեամբ և պարկեշտութեամբ զարդարէին զանձինս ի պահս քառասներորդացն (248 /14) Զայս ամենայն իբրև լսէր թագաւորն ծեր, ինքն և ամենայն զօրքն, որ ընդ նմա, զաւուրս քառասունս պահուց աւանդէին զանձինս իւրեանց (19 / 14) և որպէս եղևն ասացեալ, պահք և աղօթք և խնդրուածք յամենայն ժողովելոցն լինէին առ մարդասէրն Աստուած: (70/17) զի եռօրեայ պահք և աղօթք պնդութեամբ կատարեսցին (205 / 11) եւ անդէն ի տղայական տիոցն վարժէր զինքն Աստուածաշունչ գրոց կրթութեամբ և զմարմնական զգայութիւնս պահօք և աղօթիւք պարկեշտացուցանէր (36 /15) Լուծումն. «Աղաչելով զԱստուած պահօք և աղօթիւք և պատարագօք և կամ այլ ինչ բարի յիշատակօք, որ յանուն նոցա կատարի: (86 / 17) պահօք և աղօթիւք զցայգ և զցերեկ ըստ հոգևոր նախանձուն այր քան զընկեր փութային յերկրպագութիւն սրբոյ եկեղեցւոյն (248 / 14)

ՊԱՂԱՆԱՒՈՐՔ - 1

իսկ պաղանաւորքն և առապուրք ի լերանց վերայ կորեան. (331 / 20)

ՊԱՂԱՏԱՆՔ - 3

ԹՈՒՂԹ ԱՐՔԱՅԻՆ ՎԱՉԱԳԱՆԱՅ ԱՌ ԱՄԵՆԱՅՆ ԵՊԻՍԿՈՊՈՍՈՒՆՍ ԵԻ ՔԱՀԱՆԱՅՍ ԱՌ Ի ՇՆՈՐՀԵԼ ՆՄԱ Ի ՁԵՌՆ ԱՂՕԹԻՑ ԵԻ ՊԱՂԱՏԱՆԱՅՆՈՑԱ ՁԾԱԾԿԵԱԼ ԳԱՆՁՆ (66 /3) Եւ ցայգն բոլոր ամենայն բազմութիւն ժողովելոցն անդադար խնդրուածս և պաղատանս մատուցանէին առ Աստուած (79 / 11) Առեալ զնշան խաչին պարծանաց յանձն իւր բազկատարած պաղատանս առ Աստուած մատուցանելով վասն իւրոյ աշխարհին: (235 / 9)

ՊԱՂԱՏՆ - 1

որ և սպառազինեալ սուրհանդակ պահապանացն ջոկք անհոգ և անվեհեր ի դրունս արքունի պաղատանն /ծն. պալատանն/կային անկեալ ընդ քնով: (222 / 12)

ՊԱՂԵՍՏԻՆ - 1

որ ի բազում ժամանակաց յաղթահարեալ վանեաց վարատեաց նա զտունն օգոստոսական մեծ աշխարհաւն իւրով հանդերձ Հռոմաւ և նշանաւոր քաղաքաւն Պաղեստինեայ: (128 / 16)

ՊԱՂԵՍՏԻՆԱՅԻՔ - 2

Եւ թողեալ ի ձեռս զումարտակաց զքաղաքսն Հռովմայեցւոց և Պաղեստինացւոց զեկեալսն ի հնազանդութիւն ծառայութեան. (131 / 14) որ դեռ ևս ունէր զաշխարհին Պաղեստինացւոց: (167 / 9)

ՊԱՃԱՐԱՆՔ - 2

որ յիւր մարմինն առեալ է դժնդակութիւն սրոյ խոցման և զառողջութիւն ի ձեռն հնարից և բազում պաճարանաց բժշկական դեղոց ընկալեալ (49 / 11) ոչինչ կարացեալ պաճարանս գտանել (33 / 4)

ՊԱՃՈՅՃ - 1

Գիր անուանց նախագահ կարգելոց …Յաբեթ, Գամեր, Թիրաս, Թորգոմ …Պաճոյճ … (41 / 10)

ՊԱՃՈՅՃ- 1

Որ և յառատաբար ի բանիցն պաճուճանս ճարտարութեամբ նուագէր (224 / 19)

ՊԱՃՈՒՃԵԱԼ - 1

ի ծայրից մինչև ի խոնարհ համանման դեղովքն պաճուճեալ: (255 / 12)

ՊԱՅԾԱՌ - 4

Իսկ դու լիալայն, բարձր լուսասարաս, աւետաբեր … պայծառ և գեղեցիկ քան զամենայն հասակակից ընկերս քո: (24 / 10) և եկեալ երրորդ անգամ նոյն արքն լուսազգեստք, յոյժ պայծառ կերպարանօք շքեղացեալք և ասեն. (58 / 12) Որքան պայծառ են երկինք աստեղօք և երկիրս բուսովք, այսպէս է և ջան աշխարհագիր պատմողի՛ յայլոց նիւթոց պարազարդեալ: (106 / 5) Պայծառ քո ափին էր մեզ լոյս անմուտ, Ո՛հ թէ զինչ գիշեր խաւար թխպահոծ Եւ մարմին անլոյս զդէմ քո մեզ կալաւ՝ Անփարատ ստուեր զքոյայնօքս արկեալ: (229 / 16)

ՊԱՅԾԱՌԱԳԵՂ - 1

և ոչ խնայէր ակն նոցա ի գեղեցկատես, պայծառագեղ, մանկահասակ արուի կամ իգի (136 / 5)

ՊԱՅԾԱՌԱԳՈՅՆ - 3

Ընդ արուսեկին կշռեցից զքեզ՝ դու պայծառագոյն քան զարուսեակդ նշոյլս արձակես: (24 / 1) Եւ նոցա զօրացեալ ի շնորհաց բարձրելոյն, կնքեալ զինքեանս նշանաւ տէրունեան խաչիւն, մտանեն յեկեղեցին՝ ի լցեալն պայծառագոյն լուսով և պաշտէին մինչև զառաւօտն: (59 / 10) յոյժ պատուական թագ խաչին նշանարձակ ի վերայ դեսպակին լեալ իբրև զաստղ պայծառագոյն լուսով (74 / 7)

ՊԱՅԾԱՌԱԿՇԻՌ - 1

Եւ կոչեալ առ ինքն ի ճարտարագործ հիւսանց քաղաքին՝ հրամայէր առնել զնա խաչ պայծառակշիռ բոլորագուլ. (255 / 9)

ՊԱՅԾԱՌԱՆԱՄ - 2

և պայծառանայր սիրովն Քրիստոսի: (235 /14) օր ըստ օրէ պայծառանայր սիրովն Քրիստոսի (249 / 5)

ՊԱՅԾԱՌԱՊԷՍ - 1

Եւ եղև իբրև պայծառապէս ծագեցան աւուրք քառասներորդացն սրբոց, մեծաւ սիրով ընկալեալ զնա քաղաքացեացն (240 / 3)՝

ՊԱՅԾԱՌԱՑԵԱԼ - 3

Եւ ի գալ սրբոցն՝ ինքն թագաւորն հանդերձ թագուհեաւ ի հետիոտս ելանէր ընդառաջ բազում պաշտօնէիւք, տէրունեան պայծառացեալ խաչին նշանաւ (60 / 16) որ այժմ լցեալ տիեզերք և պայծառացեալ եկեղեցիք: (204 /6) այլ ևս քան զևս առաւել պայծառացեալ զուարթանայր և զօրանայր ի գործ մշակութեանն Քրիստոսի: (256 / 13)

ՊԱՅԾԱՌԱՑՈՒՑԱՆԵԼ - 1

նոյնպէս զեկեղեցւոյ սրբոյ կարգս անխափան պահել, ի ձեռն անարատ քահանայից և սպասաւորաց պայծառացուցանել, զմիմեանս որպէս զանձն սիրել. (307 / 9)

ՊԱՅԾԱՌՈՒԹԻՒՆ - 4

Նոյնգունակ և առաւելագոյն ևս հիացուցանող պայծառութեամբ զճանապարհն յօրինեաց: (83 / 18) Ապա այնուհետև հրճուալից եղև յոլովակի խնկարկութեամբ այրն Աստուծոյ՝ զուարթանայր հոգեծաղիկ պայծառութեամբ (216/2) Որում մեծաւ լրջմտութեամբ քաջահաւան այնմ եղեալ քահանային տեառն՝ պատրաստական յօրինէր զպէտս կազմութեան նուիրական տօնին ըստ օրինակի
խաչազարդ պայծառութեանն: (220/1) Զայն պայծառութիւն ընդունելութեան և զհամբոյր սրբութեան սիրոյն իբրև տեսանէր եպիսկոպոսն՝ խնդամիտ յոյժ լինէր (240 / 6)

ՊԱՅՄԱՆ - 8

Զայս պայման արարին եպիսկոպոսունք, և՛ քահանայք, և՛ ազատ մարդիկ առաջի արքայի: (94 /9) Եւ զերկոսեան նամակսդ կնքեալ իմով մատանեաւ ետու ի պահեստի Ներսմերհի/ճիշտը՝Ներսմեհրի/ ուխտի ի ձեռն սրբասիրի Քշկայ հօր՝ պայման անհոգութեան»: (304 / 3) Եւ յայսմ պայմանէ միթ լիցի իշխանութիւն ումեք արտաքոյ ելանել և այլաձևս ինչ առնել. (302 / 8) ապա եթէ թիւրեսցի ոք յայսմ պայմանէս, կաթողիկոս կամ եպիսկոպոս, չունի իշխանութիւն ի ձեր վերայ. (303 / 15) ԳԻՐ ՊԱՅՄԱՆԻ ՏԵԱՌՆ ԵՂԻԱՅԻ՝ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՌ ԱՂՈՒԱՆՍ (303 / 2) Արդ՝ եթէ կան ի նոյն պայմանի և յաւանդութեան սուրբ հարցն, ընկալարուք զդրսա և սիրեցէք որպէս զհոգևոր տեսուչս ձեր. (303 / 13) և ետու զայս պայմանի գիր ձեզ. (304 / 1) Յայնժամ առաքէր ընդ նախարարն ընդ այնմիկ առ ի հաստատել զխորհուրդ պայմանին այնորիկ արս հեծեալս ընտիրս, զօրաւորս զօրութեամբ, աղեղնաւորս կորովաձիգս թուով իբրև հազար մի. (141 / 17)

ՊԱՅՄԱՆԵՄ - 4

Եւ զնոյն կանոնս առաջի Աստուծոյ և ձեր սրբութեանդ պայմանեցաք (301 / 8) վասն այդորիկ պայմանեցաք առաջի Աստուծոյ և ձերոյ հայրութեանդ (302 / 4)

Եւ արքայի առաջի ազատ մարդիկ պայմանեցին (93 / 10) և պայմանեցին, եթէ կամք ի նոյն հաստատութեանս և ոչ խառնիմք ի պիղծ աղանդն Քաղկեդոնի (303 / 11)

ՊԱՅՔԱՐ - 1

և տուեալ ցեղիցն երկաքանչիւրոցն պայքար յանդիման կաճառախիտ բազմութեանն: (257 / 17)

ՊԱՆԴ - 1

առաջին պատճառ լուսաւորութեան մերոյ է սուրբն Եղիշայ … Եւ ապա … տէր Մովսէս, տէր Պանդ, տէր Ղազար (342 / 11)

ՊԱՆԴԱԼԻՈՆ - 14

Եւ դնէր անուն մանկանն Պանդալիոն (63 /10) Եւ զինգեսեան զամենասուրբ վկայսն Քրիստոսի՝ զմեծն Գրիգորիոս և զերանելին Զաքարիա և զամենասուրբն Պանդալիոն, զոյժ հռչակաւորս, զպատերազմայաղթս զՀռիփսիմէ և զԳայիանէ, առեալ ի բարեխօսութիւն մեծին և բոլորեցուն Աստուծոյ առ ի շնորհելոյ ի ձեռն նոցա զինքեան փափագելին: (68 / 19) որում ի Ցրի երանելին Զաքարիաս և սուրբն Պանդալիոն յայտնեցան (78 / 5) Եւ հրամայեալ այնուհետև զսուրբ Զաքարիա և զամենասուրբն Պանդալիոն, զմեծ և զոյժ հռչակելին Գրիգորիոս և զՀռիփսիմեայ Գայիանեաւ հանդերձ բերել և դնել առաջի բրածին: (80 / 18) Յայսմ բոլորից զգուշանալով՝ երանելւոյն առեալ ընդ իւր վայելուչ և յոյժ պատուականագոյն թոշակ, զմեծ քահանայապետին և մարտիրոսին Զաքարիայ՝ զհօրն Յովհաննու ի պատուական արենէն նշխարս և սրբոյն Պանդալիոնի (37 / 11) շինէր փոքրիկ եկեղեցի և դնէր անդ մեծ զգուշութեամբ մասն ինչ յարենէն Զաքարիայ և ի նշխարաց սրբոյն Պանդալիոնի (37 /15) և ինքն առեալ զաշակերտսն իւր զբարեսէրս և զհաւանս հրամանացն Քրիստոսի և զկէս նշխարացն սրբոյն Զաքարիայ և երանելւոյն Պանդալիոնի և երթեալ ի Մասքթաց աշխարհն (38 / 1) և զսուրբ արիւնն Զաքարիայ ի միում ապակեղէն շշի եդեալ և միւսում շշի զերանելւոյն Պանդալիոնի զնշխարիս. (39 /4) ՅԱՅՏՆՈՒԹԻՒՆ ՆՇԽԱՐԱՑ ՍՐԲՈՅՆ ԶԱՔԱՐԻԱՅ՝ ՀՕՐՆ ՅՈՎՀԱՆՆՈՒ ԵՒ ԵՐԱՆԵԼԻՈՅՆ ՊԱՆԴԱԼԻՈՆԻ (56/3) Եւ դնէր անուն մանկանն Պանդալիոն յանուն պատերազմող նահատակին Քրիստոսի Պանդալիոնի (63/11) Եւ բերեալ ի հանգստարան սրբոցն դնէր առ երանելեացն Զաքարիայ և Պանդալիոնի: (68 / 6) Եւ չուեալ յԱրաժանից սրբոյն Զաքարիայի և երանելւոյն Պանդալիոնի (72 / 1) ի միում կայր յարենէ Զաքարիայ և ի միում ի նշխարաց սրբոյն Պանդալիոնի: (81 / 17) մինչև կատարեսցի հիմնարկութիւն մատրանն, որ ի Դիւտական գեղջն՝ յանուն Պանդալիոնի (86 / 5)

ՊԱՆԴԱՎԱՆՔ - 1

Պանդավանքն, որ յարևելից կողմանէ ի Ձիթենեաց լերինն կայ, Պանոն ոմն ճգնաւոր յԱղուանից եղեալ նախաշինող (285 / 10)

ՊԱՆԴԽՏԵԱԼ - 1

քանզի վասն նորին իսկ անուան ապստամբութեան պանդխտեալ էր նա յօտարութեան յաքսորս ի բազում ժամանակս (154 / 15)

ՊԱՆԴԽՏԻՄ - 1

Սիդոնացիք ելին պանդխտեցան, որ են ի Կադմեայ որդւոյ Ագենովրայ. և Կարգեդովնացիք են եկք ի Տիւրոսէ: (5/5)

ՊԱՆԴԽՏՈՒԹԻՒՆ - 1

մինչև լցաւ ժամանակ պանդխտութեան նորա (150 / 20)

ՊԱՆԻՐ - 1

Եւ ոյր ոչխարք են, ի տանէ ոչխար մի և Գ զզաթ բուրդ և մի պանիր (91 / 4)

ՊԱՆԾԱՑԵԱԼ - 1

Արդ իբրև լուաւ զայս հպարտն ի հպարտէն, պանծացեալ յանձն իւր. (168 / 15)

ՊԱՆՈՆ - 1

Պանդավանքն, որ յարևելից կողմանէ ի Զիթենեաց լերինն կայ, Պանոն ոմն ճգնաւոր յԱղուանից եղեալ նախաշինող (285 / 10)

ՊԱՇԱՐԵԱԼ - 3

որք պատեալ պաշարեալ ի հնազանդութեան ունէին զաշխարհս և զքաղաքս նորա. (130 / 18) դժնդակ ախտ մահու զնա պաշարեալ և զեօթն ամիս յոգեհանս կացեալ՝ հազիւ ուրեմն թքէր զոգին և սատակէր: (318 / 13) և նոյն ինքն Սալարն պաշարեալ զնոսա՝ ոչ ինչ կարէր վնասել (338 / 6)

ՊԱՇԱՐԵԼ - 1

կամէր պաշարել զմեծ քաղաքն Կոստանդնուպօլիս: (329 / 2)

ՊԱՇԱՐԵՄ - 6

Եւ յամենայն կողմանց շուրջ պաշարեաց զինն ի վեր և ի վայր, ի վերջ և յառաջ, յաջ և յահեակ. (18 / 2) Եւ իբրև պաշարեաց զքաղաքն և սկսաւ մարտնչել, նեղել զբնակիչսն, որ ի նմա. (151 / 18) Իսկ յութերորդ ամին Յազկերտի ել միւս անգամ թշնամին և պաշարեաց զարքայ ի Տիզբոն քաղաքի զամիսս վեց: (176 / 2) և իսկոյն աճապարեալ ընդ այլ կողմն ծովուն արտաքս՝ պատեալ պաշարեն զթշնամիսն խաչին Քրիստոսի (329 / 4) գայ պաշարէ զՍևան ծովապատն բերդ ամս Գ. (318 /3) և պատեալ պաշարէին զփափկասուն, վաճառաշահ, հռչակաւոր մեծ քաղաքն Տփղիս: (137 / 18)

ՊԱՇԱՐՈՒՄՆ - 2

Եւ յերկարել պաշարմանն՝ Մեծ Կողմն աշխարհին աւերեցաւ (17 / 3) ՊԱՇԱՐՈՒՄՆ ՊԱՐՏԱԻԱՅ ՅՈՐԴԻՈՅՆ ՇԵԽԱՅ ԵԻ Ի ՋՕՐԱՅ ՀԱՅՈՑ ԵԻ ԱՂՈՒԱՆԻՑ (334 / 2)

ՊԱՇՏԱԿ - 1

և պաշտակս յայտ արարեալ սրբոցն դեսպակի և ձիոցն սպաս ունել: (62 / 4)

ՊԱՇՏԱՄՈՒՆՔ - Տե՛ս ՊԱՇՏՕՆ

ՊԱՇՏԵԱԼ - 1

որք միշտ ի տուէ և ի գիշերի պաշտեալ՝ սպաս ունէին սրբոցն: (62 / 10)

ՊԱՇՏԵԼ - 6

յուշ լիցի ամենեցուն ձեզ անյապաղ պաշտել և պահել և առնել խնդրուածս առ մարդասէրն Աստուած առ ի շնորհել մեզ զնշխարիս երանելւոյն Գրիգորիսի. (66/6) յորում ինքեան իսկ թագաւորին սովորութիւն էր յոտն կալ

և պաշտել (66 / 14) և պաշտել զԱստուած կենդանի՝ զարարիչն երկնի և երկրի (250 / 1) հաւատամք ի ձեզ և հաստատիմք անդրէն շինել և պաշտել մեհեանս (253 /1) և մեք և Աղուանք զմի հաւատ պաշտել ունիմք զՔրիստոսի աստուածութեանն: (295/16) որք քան զկարգ իւրեանց յանդգնեցան պաշտել զԱստուած: (308 / 9)

ՊԱՇՏԵՄ - 11

«Մեք հաւանեալ հաւատացաք առնս այսմիկ և պաշտեմք և երկրպագեմք Աստուծոյն, (252 / 11) և ընկալցին և պաշտեսցեն զնա հանդերձ զօրօքն իւրովք (132 / 6) որք միանգամ պատարագօք զերեսս քո պաշտեսցեն ի տեղւոջս յայսմիկ (188 / 9) Այլ նոյնպէս պաշտեցէք, զի մի՛ սրտմտեալ բարկասցին և յանդիմանեսցեն զաշխարհս մեր մեծամեծ և չարաչար հարուածովք: (251 / 15) զոր հարքն ձեր կանգնեցին՝ թագաւորք և իշխանք, և աշխարհս մեր բոլորովին պաշտեցին մինչև ցայժմ (250 / 17) զոր նախնիք ձեր և դուք պաշտեցիք (251 / 14) և պաշտէին մինչև ցառաւօտն: (59 / 11) զոր պաշտէին յոգւովքք աշխարհն Հոնաց, իշխանն և ազատքն ամենայն (250 /8) Ո՞չ ապաքէն յորժամ պաշտէիք և մատուցանէիք զզոհս և զնուէրս առաջի ծառոցն յանուն սկայազօր քաջին Ասպանդիատայ, զոր ինչ խնդրէիք, առնուիք և գտանէիք զբարիսն. (251 / 4) ցնծալից ուրախութեամբ պաշտէր զհամայնաժողովսն ի ձայն քաղցր, երգս սաղմոսացն յորդագոյնս ի բարեբանութիւնս Աստուծոյ: (83/4) թէ և այլ մոլորական բանից դորա հաւատայք և պաշտէք զԱստուածն (251/12)

ՊԱՇՏԵՑԵԱԼ - 1

Եւ պաշտեցեալ սաղմոս մի, կամեցան յառնել և ոչ կարացին: (59 / 6)

ՊԱՇՏՕՒՄՆ - 1

որ միանգամ մոգութեամբն աղտեղացուցեալ էին զոգւոցն զխոհականութիւն դիցն գարշելի պաշտմամբք (46 / 12)

ՊԱՇՏՕՆ - 34

խաչ ի ձեռն անհատ քաղցրաբարբառ պաշտամամբք զցայգ և զցերեկ անդադար բարեբանէին զԱստուած: (69 /8) գալ յերկրպագութիւն պաշտաման սրբոյ եկեղեցւոյ (242 / 6) և զյոլով աշխարհս ի դիւական չարագործ պաշտամանէն ի սուրբ և յուղիղ աստուածապաշտութեանն դարձուցանէր ի պողոտայն (46 / 9) Իսկ թագաւորն մոլեգնեալ ի դիւացն զանազան և պղծալից պաշտամունսն՝ ձեռն արկանէր յամենազօր նահատակն Քրիստոսի՝ օժանդակութեամբ չար վիշապին՝ կամեցեալ իւրն ծառայել ի խորխորատ կորստեանն դիցն աղտեղութեան պաշտամանն: (33 / 1) Եւ իբրև ժամանակ չար պաշտամանն եկեալ լինի (54 / 1) քանզի և այն աղանդ էր պաշտամանն (54 / 17) յորում բանակն արքունի ի ներքս մտանէր ի ժամ պաշտամանն առաջի ամենասուրբ խաչին և երջանիկ վկայիցն Քրիստոսի երկրպագութեամբ մաղթել զԱստուած և ունկն դնել Աստուածաշունչ գրոց: (61 / 13) և յերրորդում գիշերին, յորում չորրորդն մերկանայր տիւ ի կատարել պաշտամանն, կատարէին զտէրունեան և զկենդանական ահաւոր խորհուրդն: (83 / 6) և ի բազմութենէ ձայնիցն պաշտամանց յայլ և այլ լեզուս մեծագոյն հնչէր երկիրն. (74/1) և

զերծեալ զաշխարհին ամենայն յունայնակրօն պաշտամանցն (257 / 4) առաւել ևս հաստատեցան ի սէր հաւատոցն Քրիստոսի՝ հեռացեալ ի սնոտի դիւագործ պղծութեան պաշտամանցն (258 / 8) Եւ օր քան զօր յորդորելով յաստուածասէր պաշտամունս՝ անձանձրոյթ զհիշատակս սրբոցն կատարէր: (47 /12) ի բաց լքանել թողուլ զդիցապաշտութեանն զկարգս՝ զաղտեղի դիցն զոհամատոյց պաշտամունս: (47 / 15) Առ սակաւ սակաւ ջանայր խափանել ի վերայ մեռելոցն զմոլեկան լալիսն և զդիւական սրակոծութիւնսն՝ գարշելի և պիղծ համարելով զհայրենի պաշտամունս (249 / 16) Եւ յուխտ տեառն մտից ես Իղութուեր ընդ քեզ և զամենայն հեթանոսական պաշտամունս բնաջինջ խլեցից յերեսաց Հոնաց երկրիս (260 / 19) որ ոչ եթող զձեզ յընդունայն պաշտամունս հարցն ձերոց առաջնոց (265 /1) Ի բա՛ց թողէք այսուհետև զպղծութեան պաշտամունսդ (242 / 14) Իսկ թագաւորն մոլեգնեալ ի դիւացն զանազան և պղծալից պաշտամունսն՝ ձեռն արկանէր յամենազօր նահատակն Քրիստոսի՝ օժանդակութեամբ չար վիշապին՝ կամեցեալ իւրն ծառայել ի խորխորատ կորստեանն դիցն աղտեղութեան պաշտամանն: (32/21) ըստ հիւսիսական ցրտամիտ մորոսութեանն առասպելայօդ և ստապաճոյճ կրօնիւք զհեթանոսական պղտոր պաշտամունսն մեծ գոլ կարծէին: (240 / 19) լսէր և տեսանէր զայն ևս չարեաց պաշտամունսն զկռակործան անուղղայ սովորութիւնն (242 /2) և՛ ի տեղիս տեղիս ատրուշանս կանգնեալ՝ զօրանայր կրակալոյց պաշտամունք դիցն աղտեղութեան: (43 / 2) և ձեռնադրէր երիցունս և հորդորէր ի պաշտօն սրբութեան. (37 /3) և դառնալ ամենևիմբ ի սուրբ և յամենապարկեշտ քրիստոնէութեանն պաշտօն: (49 / 17) որ դից աղտեղեաց պաշտօն տարցի և զկարգս քրիստոնէութեան ամբողջ և հաստատուն ոչ պահեսցէ: (50 / 1) և հրամայէր ուխտի եկեղեցւոյն պահել և պաշտօն առնել առ Աստուած խնդրուածովք (52 / 13) առաքեաց արքայ զՄատթէ երէցն Դարահոջու՝ հանդերձ պաշտօնէիւք ի Սուհան՝ պաշտօն առնել և պատարագս մատուցանել յանուն սրբոցն (70 / 7) պաշտօն մատուցանէք աստուածոց մերոց (104/6) կամ թէ սպառնալեօք քովք համարեսցիս զանգիտեցուցանել զմեզ և զառժամանակեայս ընտրել կեանս, թողլով զԱստուած՝ անմռնչոց մատուցանել պաշտօն»: (104 /17) Նա և զորոտընդոստ հրատեսակ շանթիցն ցայտմունս և զեթերակէզ այրեցմունս, թէ մարդոյ դիպեսցի, թէ այլ ինչ նիւթեղինաց. ձօնեալ իմն, զնա ի պաշտօն առեալ՝ նուիրեալ Քուար Աստուծոյն համարէին: (241 / 2) Նոյնպէս սկայի ումեմն վայրագի անճոռնուոյ ձիախորով զոհիւք պաշտօն մատուցանէին՝ կարդալով նմա Թանգրի խան Աստուած (241 / 4) Զի որպէս զոհարանքն անմաքուր և պիղծ են, այնպէս գարշելի և պիղծ են առաջի Աստուծոյ ամենեքեան, որ Ասպանդիատայն մատուցանեն պաշտօն (246 / 8) որոց զամենայն արարածս ի պաշտօն էր առեալ. (269 / 9) և թէ սովորական ժողովուրդն ամենևին միւթ մերձեսցին՝ միւթ ի պաշտօն, մի՛ ի կարգ և միւթ ի տեղի քահանայիցն. (308 / 6) Իսկ ամենաչար պարսկաց պապանձական պաշտօնն ... միշտ հակառակ կայր եկեղեցւոյ Աստուծոյ (56 / 9)

ՊԱՇՏՕՆԱՏԱՐ - 1

և առնէր աստուածածանօթս անճառելի խորհրդոյ խորհրդակից Երրորդութեանն *պաշտօնատարս:* (75 / 10)

ՊԱՇՏՕՆԵԱՅ - 18

և թողոյր երէց մի սպասակալ և *պաշտօնեայ* վկայիցն Քրիստոսի Դանիէլ անուն (37 /16) Յայնժամ պատասխանեալ իշխանն Հոնաց առ քաւդեայսն և առ կախարդսն և առ վհուկսն և առ *պաշտօնեայս* բագնացն և ծառոցն և ասէ: (252 /10) և՛ ուտէ, և՛ ըմպէ ընդ չար *պաշտօնեայսն* իւր. (54 / 6) «Եթէ արքայ և ամենայն *պաշտօնեայք* և բովանդակ գունդն Աղուանից զԳրիգորիս խնդրեմք և ոչ կարացաք գտանել»: (71 /3) յորում *պաշտօնեայքն* և թագաւորն և յոլով ի ժողովոյն կային ի ներքս (61 / 10) և բազմութիւն *պաշտօնէից* արքունի դրանն առաջնոյ և վերջնոյ դեսպակին (69 / 7) Թողոյր երիցունս և սարկաւագունս և յոլովագոյն գունդ *պաշտօնէից* (86/6) և զայլ սրբութիւնսն յուղարկեցաք ի ձեռն քորեպիսկոպոսաց և քահանայից և դասու *պաշտօնէից* մեք՝ Դաւիթ և Յովէլ եպիսկոպոսունք ի տեղի մենաստանաց աբասուս շնորհօքն Աստուծոյ: (210 /12) և բազմութիւն *պաշտօնէիցն* առաջի և զկնի դեսպակին՝ խաչ ի ձեռս, սաղմոսանուագ երգովք միաբան փառաւորէին զերրորդութեան միաբուն զօրութիւնն: (62 /14) սարկաւագապետացն խաչ ի ձեռս, և երիցանցն՝ աւետարանս ի գիրկս, և *պաշտօնէիցն* բուրվառ ի ձեռս զանազանութեան խունկս ծխել. (80 / 3) Եւ զՄանասէ զիւր դրան երէցն … հանդերձ իւրովք *պաշտօնէիւք* առաքէր փութապէս առնուլ առ իւր զամենասուրբ նշխարս վկայիցն: (60 / 13) Եւ ի գալ սրբոցն՝ ինքն թագաւորն հանդերձ թագուհեաւ ի հետիոտս ելանէր ընդառաջ բազում *պաշտօնէիւք* (60 / 15) ընդ առաջ ելանէին ամենայն եպիսկոպոսունքն իւրաքանչիւր իշխանութեամբ և *պաշտօնէիւք* բազում դասք դասք և գունդք գունդք (67 / 8) և հրաման տայր բոլոր եպիսկոպոսացն՝ և երիցամբք և սարկաւագօք, և անապատաւորօք և բոլոր ուխտիւ եկեղեցւոյ՝ *պաշտօնէիւք* իւրաքանչիւր, աւետարանաւ և խաչիւ յոլովութեամբ իւրաքանչիւր դասու, և բազմութեամբ բուրվառաց խնկոց ծխելոց զկնի ելանել: Եւ ինքն արքունի դրան երիցամբք և յոլովագոյն *պաշտօնէիւք:* (68 /11; 68 /14) Ընդ աւուրսն ընդ այնոսիկ առաքեաց արքայ զՄատթէ երէցն Դարահոջու՝ հանդերձ *պաշտօնէիւք* ի Սուհառ՝ պաշտօն առնել և պատարագս մատուցանել յանուն սրբոցն (70 / 7) չու արարեալ թագաւորն ի Դիւտականէ բազմութեամբ ժողովոյն, եպիսկոպոսօք, երիցամբք և ամենայն *պաշտօնէիւք* յոլովութեամբ (70 / 15) Եւ չուեալ յԱրաժանից սրբոյն Զաքարիայի և երանելւոյն Պանդալիոնի …թագաւորաւն և յոլովագոյն ժողովով և եպիսկոպոսօքն և քահանայիւք և *պաշտօնէիւք:* (72 / 4) առնոյր զմնացեալ տապանակն կամակցութեամբ եպիսկոպոսին Դաւթի հանդերձ քորեպիսկոպոսաջոկ և երիցախումբ *պաշտօնէիւք* տեառն և ամենայն ժողովրդովք տանէին ի տեղի բնակութեան իւրոյ (207 / 18)

ՊԱՇՏՕՆ ՏԱՆԻՄ - Տե՛ս ՊԱՇՏՕՆ

ՊԱՊ - 4

Մեռանի և Արշակ, թագաւորէ *Պապ.* (31 / 2) ՄԱՀՆ ԱՐՇԱԿԱՅ ԵԻ *ՊԱՊԱՅ* ԹԱԳԱՒՈՐԵԼՆ. (30/10) լինի մեծ պատերազմ *ի մէջ Պապայ* և Մեհրուժանայ: (31 / 3) Ի Յովհաննիսէ՝ Հայոց կաթողիկոսէ, յԱբրահամէ՝ Տարօնոյ եպիսկոպոսէ … *ի Պապայ* Ամատունեաց եպիսկոպոսէ … և յայլ ամենայն եպիսկոպոսաց Հայաստանեայց օրինութեամբ ողջոյն: (122 / 14)

ՊԱՊԱՆՁԱԿԱՆ - 1

Իսկ ամենաչար պարսկաց պապանձական պաշտօնն …միշտ հակառակ կայր եկեղեցւոյ Աստուծոյ (56 / 9)

ՊԱՊԱՆՁՈՒՄՆ - 2

ՆՈՐԻՆ ՄԻՔԱՅԷԼԻ՝ ԱՂՈՒԱՆԻՑ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ ԽՆԴԻՐ ՅԱՂԱԳՍ ՊԱՊԱՆՁՄԱՆՆ ԶԱՔԱՐԻԱՅ ԵԻ ԾՆՆԴԵԱՆ ԵԻ ՅԱՅՏՆՈՒԹԵԱՆ ՓՐԿՉԻՆ ԸՆԴԷՄ ԵՐԿԱԲՆԱԿ ԱՂԱՆԴՈՅՆ (314 / 14) Մովսէս տօնս կարգեաց Իսրայէլացւոցն յեօթներորդում ամսեանն, որ է թշրին առաջին օրն՝ տօն փողոցն, տասներորդ օրն՝ տօն քաւութեան. հնգետասաներորդ օր՝ տօն տաղաւարահարացն, եօթնևտասներորդն՝ պապանձումն եղև Զաքարիայ մինչև ի քսաներկու նոյն թշրին ամսոյ: (314 / 19)

ՊԱՌԱԿՏԵՄ - 1

և պառակտեցին զաշխարհն: (112 / 17)

ՊԱՌԱԿՏՈՂ - 1

շահել կամեցաւ այժմ զնոյն ի ձեռն անիմաստ մարդոց պառակտողաց զեկեղեցի Աստուծոյ նորաձայնութեամբ և ձևով անսրբով՝ զշահս և զգլուխս: (298 / 15)

ՊԱՍԵՔ - 4

Եւ եկեալ հասանէին ի սուրբ պահս քառասնորդացն յեւթներորդ շաբաթու պասեքի զատկին ի խորախոխոմ անտառայար և ի մայրաստանիկ աշխարհն Արցախայ՝ գաւառն Մեծ Կուենից: (98 /18) Իսկ ծագումն արփիափայլ լուսոյ պասեքին սրբոյ իբրև հասանէր, բազումք ի քրմապետացն և ի գլխաւոր կախարդասար քաւդէիցն դեռ ևս ի դժնդակ կապանս անկեալ դնէին: (257 /13) և սակս հաւատոցն, որ ի Քրիստոս, չարաչար տանջեալ նահատակի ի սուրբ քառասունսն՝ մերձ օր սրբոյ պասեքին: (329 /12) Իսկ յետ Դ ամաց, յորում տարեմուտն ի սրբումն հանդիպիւր Պասեքին օր, սպանաւ Ապու Ալի Աղուանից իշխանն Հայկազունի յիւրմէ հարազատէն Սմբատայ. (336 / 5)

ՊԱՏԱՀԵԱԼ - 1

Երթայ գնայ ի դուռն Շապհոյ արքային Պարսից և անդ ումեմն ի զօրականացն պատահեալ՝ զետեղի: (109 / 13)

ՊԱՏԱՀԵՄ/ԻՄ/ - 6

և իբրև ոչ պատահեաց յոյժ տրտմութիւն կալաւ զամենեսեան: (70 / 11) Լինի զօրաժողով Տրդատիոս՝ մեծ թագաւորն Հայոց և իջեալ ի դաշտն Գարգարացւոց՝ պատահէ հիւսիսականացն սաստիկ պատերազմաւ. (29 / 6) և պատահէ նմա ի սահմանս Վրաց հանդէպ Խաղխաղ քաղաքի (114 / 5) և պատահէր ամենասուրբ գերեզմանին երանելւոյն. (81 / 3) Եւ ի գալ հրովարտակին՝ պատահի նմա ի սարոտն գաւառին Գարդմանայ. (171/17) և պատահիցի նմա արջ (156 / 12)

ՊԱՏԱՂԱՀԻԹ - 1

Եւ ծախս մեծս արարեալ դեղագեղիչս ի գործ արկեալ՝ նկարեաց ի գմբեթէն մինչև ի բարաւորս դրանն պատաղահիւթ կերպասագործեալ. (196 / 5)

ՊԱՏԱՂԻՃ - 1

որ ըստ Գեդէոնեան դժնկին՝ էր պատաղիճ (193 / 2)

ՊԱՏԱՆ - 1

և զթաքուցեալսն ի ներքոյ կարասւոյ կամ գրաստու պատանաց զմատաղ մանկունսն նոցա քարշէին, ածէին արտաքս (163 / 12)

ՊԱՏԱՆԴ - 5

ՀԱՐԿԱՊԱՀԱՆՋԵԼՆ ՎԱՐԱՋ ՏՐԴԱՏԱՅ՝ ԱՂՈՒԱՆԻՑ ԻՇԽԱՆԻ ԵԻ ԵՐԹՆ Ի ՅՈՅՆՍ, ՏԱԼ ՊԱՏԱՆԴ ԶՈՐԴԻՍՆ ԻԻՐ ԵԻ ԳԱԼ ՅԱՇԽԱՐՀ ԻԻՐ (311 / 7) և տուեալ ի պատանդ զորդիսն՝ և ինքն իշխանն խօթացեալ մնայր: (311 /15) Անդ առնու պատանդս Տրդատիոս (29 / 10) և պատանդս առնուլ զզաւակս և զկանայս՝ չապստամբելոյ ի նոցանէն: (180 /15) որք ի Յոյնս էին պատանդք (312 / 14)

ՊԱՏԱՆԵԱԿ - 1

Այլ ումեմն մանկագոյն պատանեկի դէպ եղև ճանապարհաւ հուպ անցանել առ նոքօք (52 / 5)

ՊԱՏԱՆԻ - 2

երէցն երթեալ յեկեղեցւոջն հանգչէր՝ հանդերձ երկու ևս երիցամբք, որ ընդ գործակալին էին, և Խոճկորիկն երկու պատանեօք յիւրն վանսն: (58 / 4) Եւ այնուհետև երէցն Յակոբ և նախարարն Խոճկորիկ անուանեալ և երկու ևս այլ երիցունքն … և երկու պատանիք … խաչիւն դիմէին յեկեղեցին: (59 / 2)

ՊԱՏԱՌԱԾ - 1

և ուր ցրեալ պատառած հանդերձի նորա սփիւռ և տարած ընդ երեսս անտառին փայլէին իբրև աստեղս: (102 / 9)

ՊԱՏԱՌԵԱԼ - 2

Մինչև անդրէն դառնայր այրն, երկիրն նոյն պատառեալ կայր (79/4) վաղվաղակի պատառեալ ելոյծ զսահման ուղղափառ հաւատոյ քաղկեդոնական հաւաքմամբն: (271 / 12)

ՊԱՏԱՌԵԼ - 2

զի յառաջագոյն լսել դոցա զեղեալքս, վաղվաղեսցեն պատառել զքեզ. (170 /12) Արդ ընդէ՞ր տամք տեղի Րոբովամու պատառել զեկեղեցի Աստուծոյ (278 / 13)

ՊԱՏԱՌԵՄ - 1

և տեսանէի, զի երկիրն պատառէր և ընդ պատառուած ճրագ լուցեալ էր և երևէր (78 / 12)

ՊԱՏԱՌՈՏՈՒՆ - 1

Եւ առեալ Գրիգորի՝ պատէր իւրեանց իսկ պատառոտուն հանդերձիքն չարարեալ ուրուք ինչ արժանի յերանելեացն մերձեցուցանել ի մարմինս (34 / 17)

ՊԱՏԱՌՈՒԱԾ - 1

և տեսանէի, զի երկիրն պատառէր և ընդ պատառուած ճրագ լուցեալ էր և երևէր (78 / 13)

ՊԱՏԱՍԽԱՆԵԱԼ - 3

նորա պատասխանեալ ՝ոչ: (78 / 10) Յայնժամ պատասխանեալ առ նա սրբոյ հայրապետին՝ ասէ. (203 /15) Յայնժամ պատասխանեալ իշխանն Հոնաց առ քաւդեայսն և առ կախարդսն և առ վհուկսն և առ պաշտօնեայս բագնացն և ծառոցն և ասէ. (252 / 9)

ՊԱՏԱՍԽԱՆԵՄ - 1

ես ինձէն պատասխանեցից (155 / 9)

ՊԱՏԱՍԽԱՆԻ - 20

Արդ՝ բան առ բան բազմաւորական և հատու պատասխանեօք զլոյսն առ խաւար ծաներո՛ւք խորագոյնս քննելով. (278/5) Եւ երանելին պատասխանի արարեալ ասէ. (40 / 5) իսկ նորա պատասխանի արարեալ (71/3) Պատասխանի ետուն ամենեքեան և ասեն (78 / 10) Պատասխանի ետ խոստովանողն Քրիստոսի՝ քաջ զօրավարն Թէոփիլէ և ասէ ցթագաւորն. (104 / 8) խորհելով վաղվաղակի արարէք ինձ պատասխանի (158 / 3)
Եւ պատասխանի տուեալ եպիսկոպոսին ասէ. (261 / 3) և մեծաւ խնդութեամբ ընկալեալ նոցա և ամենայն աշխարհին՝ առնէին պատասխանի զայս: (264 / 8) ՊԱՏԱՍԽԱՆԻ ԹՂԹՈՅՆ ՀՈՆԱՑ (264 /10) ետուն պատասխանի, եթէ արտաքոյ է պատուիրանաց (269 /8) ՊԱՏԱՍԽԱՆԻ ԹՂԹՈՅՆ ՄԽԻԹԱՐԱՅ՝ ԱՄԱՐԱՍԱՅ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ Ի ՀԱՅՈՑ (276 /4) ՊԱՏԱՍԽԱՆԻ ԹՂԹՈՅՆ ԵՂԻԱՅԻ՝ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ՝ ՅԱԲԴԼՄԷԼԻՔԷ ԱՄԻՐՄՈՄՆԻՈՑ (296 / 6) ինքն տացէ Աստուծոյ պատասխանի ՝ոյք և իցեն: (302 /12) և առնուն պատասխանի խստագոյնս: (323 / 1) Իսկ Ներսեհի անկեալ առ ոտս ծերոյն՝ ոչ ինչ լսէր պատասխանի. (340 / 1) Վասն այնորիկ չքարոզեն եպիսկոպոսապետ Սիւնիք և ոչ գրեն ի պատասխանին Հայոց եպիսկոպոսապետ (275 / 13) զի միաբանեսցին և նոքա ընդ իս ի պատասխանիս հրամանի թագաւորին ձերոյ». (155 / 8) սակայն ըստ նմին և պատասխանիս լսէին: (272/1) ԱՌ ԱՅՆ ՊԱՏԱՍԽԱՆԻՔ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՅՆ Ի ՀԱՅՐԱՊԵՏԷՆ ԵՒ ՅԻՇԽԱՆԷՆ (211 /2) ակն ունէր պատասխանւոյն ի թագաւորէն (155 / 3)

ՊԱՏԱՍԽԱՆԻ ԱՐԱՐԵԱԼ - Տե՛ս ՊԱՏԱՍԽԱՆԻ

ՊԱՏԱՍԽԱՆԻ ՏԱՄ - Տե՛ս ՊԱՏԱՍԽԱՆԻ

ՊԱՏԱՍԽԱՆԻ ՏՈՒԵԱԼ - Տե՛ս ՊԱՏԱՍԽԱՆԻ

ՊԱՏԱՐԱԳ - 25

Իսկ սուրբ հայրապետն եկեալ ի Գիս՝ կանգնեաց եկեղեցի և մատոյց զանարիւն պատարագ: (10 / 16) և եթէ մեղքն չեն յայտ, պատարագ հրամայեսցեն մատուցանել քահանային (92 / 16) քահանայն պատարագ մատուսցէ (93 / 4) Եւ ազատ մարդ ոք յիւր եկեղեցւոջ թէ սեղան կանգնէ, կա՛մ նշխարս ինչ բերէ, կա՛մ պատարագ առնէ, եպիսկոպոսին հրամանաւ արասցէ (94 / 5) և զանարատն մատուցանէ պատարագ որպէս զարին Ահարոն: (214 / 7) և իսկոյն յարուցեալ ի հսկումն խաչապայծառ տօնին կատարէին գոհացողական պատարագ ի վերայ սեղանոյն: (217 / 15) և պատարագ մատչի ի վերնայարկն Սիոնի (283 /17) անդ սեղան է և պատարագ մատչի: (284 / 4) Եւ ներքոյ բեմին սուրբ այրն և մսուրն, ուր սեղան է, և պատարագ մատչի: (284 / 16)

և պատարագ մատչի (285 / 2) և պատարագ մատչի. (285 / 4) Այլ Աստուած, որ ընդունիչ է պատարագաց և կատարիչ ուխտից, լսէ աղօթիցն կենդանեաց (88 / 18) քանզի յաւուր նաւակատեաց նորոգազարդ նշանի խաչին … արարեալ իշխանին զենմունս պատարագաց՝ և ամենայն մեծամեծացն: (258 /9) ուր կանգնեալ էր սեղանն մեղսաքաւիչ պատարագի տեառն: (205 / 18) և պատարագս մատուցանել յանուն սրբոցն (70 /7) Եւ անդէն կատարէին յոդեաց և յայծեաց պատարագս օրինութեան. (102 /17) մատուցանէին և նոքա պատարագս Աստուծոյ ըստ կարգի քրիստոսական կրօնից (103 / 15) Յայնժամ հանդերձեալ պատրաստեցին ընծայս և պատարագս. (238 / 10) Քոյին իսկ աշխարհիդ հայրենի հաւատքն պահեցան, եկեղեցիք շէն մնացին …քահանայք ի քահանայութեան, պատարագք ի սեղանս (26 /1) Եւ իբրև կատարեաց զաղօթս, մատոյց և զայն, որ յաղագս նորահրաշ տօնին էին պատարագք (189 /19) Լուծումն. «Աղաչելով զԱստուած պահօք և աղօթիւք և պատարագօք և կամ այլ ինչ բարի յիշատակօք, որ յանուն նոցա կատարի: (86 /17) Եւ որք կատարեն զյիշատակ սրբոցն, մեծարեալ պատարագօք աղաչեն զհոգիս նոցա (88 / 10) զի կարասցուք ցածուցանել զերեսս նոցա պատարագօք»: (158 /16) որք միանգամ պատարագօք զերեսս քո պաշտեսցեն ի տեղւոջս յայսմիկ (188 / 9) Եւ նպաստամատոյց ընծայիւք և պատարագօք կատարէր իշխանն առաջի սրբոյն խաչին նուէրս (212 / 6)

ՊԱՏԱՐՈՒՆ - 1

Վասն այսորիկ ոչ ինչ նուազ, քան որ թագաւորաց, զսա տեսաք՝ լի ամենայն ընչիւք, ոսկի և արծաթ բազում յոյժ … նաև ամենայն ինչ լի և պատարուն: (200 / 17)

ՊԱՏԳԱՄ -12

Ապա առաքէր պատգամ առ իշխանն Հոնաց զմեծ եպիսկոպոսապետն Եղիազար (232 / 15) վասն որոյ յղեալ պատգամ առ նա, եթէ Աստուած հրամայեաց թողուլ զկին քո: (289 / 8) առաքէր ի ձեռն պատգամաց առ մեծ թագաւորն Խոսրով (142 / 15) Եւ են պատճէնք պատգամացն առ միմեանս այսպէս. (142 / 17) և անսալ պատգամացն և կալ առաջի թշնամւոյն վասն բեկման և կորստեան աշխարհիս կամէր յանձն առնուլ: (154 /16) Ահա ուսուցիչ պատգամացն Աստուծոյ այրս Իսրայէլ եպիսկոպոս. (260 / 9) Եւ երկրորդեալ և երրորդեալ պատգամացն՝ զնոյն ասէին բանս: (261 / 8) այլ գրով և պատգամաւ յանդիմանէր զնա՝ վասն զուր աւերելոյն զաշխարհն Հայոց: (16 / 10) Եւ այսպէս միաբան սպառնալեաց պատգամաւ դադարեցին յամին յայնմիկ (134 / 15) քանզի ստիպէ զիս եկեալ պատգամն. (158 / 4) Յայնժամ առաքէր պատգամս ըստ բանի հօրն իւրոյ առ կուսակալ իշխանն Պարսից (154 / 7) զգուշացուցէք նոցա պատգամս որպէս յինէն՝ դառնալ մեղաւորին և անօրինին ի չար ճանապարհէ իւրմէ և կեալ: (306 / 10)

ՊԱՏԳԱՄԱՏԱՐ - 2

Մեծ և բարեպաշտ իշխանն Հոնաց Իլութուեր հանդերձեալ կազմէր ի գլխաւորաց աշխարհին իւրոյ Զիթգինն Խուրսունաց և զՉաթն Խազր զկնի սրբոյն Իսրայէլի պատգամատարս սիրոյ (262/10) Եւ պատգամատարք առ նոսա Խոսրովու՝ Պարսից արքայի. «Եթէ դուք ո՞յր հրամանաւ եկիք յաշխարհս իմ. (133 / 16)

ՊԱՏԳԱՄԱՒՈՐ - 6

Ուստի ի ձեռն հաւատարիմ պատգամաւորաց առաքէր երդմունս մեծամեծս և խոստմունս անչափ պարգևաց(194 / 5) Ընդ որ յոյժ զարմացեալ լինէր թագաւորն յաղագս տրամախոհ խորագիտութեան նորա, որում և ոչ սակաւ լինէր շնորհակալութիւն, որ ի թագաւորութենէն Հռոմայեցւոց անդ պատգամաւորաց (197 / 9) որպէս ի ձերոցս գրելոց և ի պատգամաւորացս լուաք (265 / 4) Եւ որ մնացին անդրէն ի դրանն, ճեպէին զնոսա պատգամաւորքն Կաւատայ զգուշութեամբ ունել պահել զխոսրով (147 / 15) Յայնժամ սկսան պատգամաւորքն ստիպել և ասեն. (155/11) Եւ կրկնեալ անդրէն հասին պատգամաւորքն թշնամւոյն, թէ՝ «Արա՛զայդ և ապրեսցիս դու և տուն քո և ամենայն մնացորդք երկրի քոյ. (157/13)

ՊԱՏԵԱԼ - 9

Եւ բէժ կտաւով զմեծ խորանաւն շուրջ որմափակաբար պատեալ (61 / 13) Եւ զանազան թագաւորական հանդերձիւ պատեալ զնշխարս սրբոցն ... դնէր ի դեսպակի սրբոցն (69 / 2) քանզի տեսանեմք զբազումս, զի կան և կամին լինել, եթէ զի՞նչ արդեօք կարիցէ բովանդակել, զի անթիւ հարուածս բարբարոսականաց թշնամեաց շուրջանակի զմեօք պատեալ: (128 / 4) որք պատեալ պաշարեալ ի հնազանդութեան ունէին զաշխարհս և զքաղաքս նորա. (130 /18) և պատեալ պաշարէին զփափկասուն, վաճառաշահ, հռչակաւոր մեծ քաղաքն Տփղիս: (137 /18) և շուրջ պատեալ որպէս հուր յեղէգն զեզերբ ծովուն Գեղամայ, ոչ թողին ի նոցանէ և ոչ մի. (169 / 1) և յայն վերնատանն գեղարդն և սպունգն և սկաւառակն Քրիստոսի պատեալ ոսկւով: (283 /8) և զերիվարսն պատեալ ոսկւով և արծաթով՝ դնէին ի վերայ սայլից և տանէին ի դուռն քաղաքին (323 / 9) և իսկոյն աճապարեալ ընդ այլ կողմն ծովուն արտաքս՝ պատեալ պաշարեն զթշնամիսն խաչին Քրիստոսի (329 / 4)

ՊԱՏԵԼ - 1

և հրամայէր ամփոփել զցրուեալ նշխարս սրբոցն, և պատել սուրբ կտաւովք և ծածկել ի բլրին:

ՊԱՏԵՄ - 1

յանկարծակի պատեաց մէգ և մառախուղ զամենայն երեսս երկրիս մերոյ առ հասարակ (156 / 1) (102 / 16)

ՊԱՏԵԱՆ - 2

և մի՛ ձգեսցես զսուր քո ի պատենից իբրև վրէժխնդիր ի վերայ թշնամեաց իւրոց (168 / 8) Եւ պարգևս մեծամեծս շնորհէր և գահոյս արծաթիս քանդակակերտ թիկամբ ոսկեզօծ, և հանդերձ ոսկեմանեալս և զիւրոյ անձինն մարգարտայեռն պատենիւք սուսեր: (182 / 1)

ՊԱՏԵՐԱԶՄ - 50

ՎԱՍՆ ՎԱՉԷի ԱՂՈՒԱՆԻՑ ԱՐՔԱՅԻ, ԹԷ ԶԻԱՐԴ ՈՒՐԱՑԱՒ ԶՀԵԹԱՆՈՍԱԿԱՆ ԳՈՐԾ ՄՈԼՈՐՈՒԹԵԱՆ ԵՒ ՀԱՒԱՏԱՑ ՅԱՍՏՈՒԱԾ ԿԵՆԴԱՆԻ. ԵՒ Ե�տ ՊԱՏԵՐԱԶՄ ԸՆԴ ՊԱՐՍՍ (15 / 7) լինի մեծ պատերազմ ի մէջ Պապայ և Մեհրուժանայ: (31 / 3) Եւ անտի անցեալ՝ տային պատերազմ ընդ բերդին: (109 / 4) Եւ կրկին և երեքկին տուեալ սաստկագոյն պատերազմ, ոչ ինչ կարէին առնել (109 / 6) Յայնժամ ամենայն մեծամեծքն առաջի անկեալ՝ աղաչէին մի

ևս տալ պատերազմ (109 /8) զի ընդ ակնարկել նորա պատերազմ, պատրաստական գտանիցին: (135/4) զի ի սպառել զառաջինսն՝ յառաջեսցես մխել ի պատերազմ թագաւորին և ի բանակս նորա և քեզէն միայն վճարեսցես զգործ պատերազմին ընդ նմա: (168 / 11) Յետ այսորիկ ճակատ առ ճակատ պատերազմ խմբեալ. (176 / 13) բորբոքէր վերստին առնել առ նոսա պատերազմ (181 / 2) Եւ ետ ընդ նոսա պատերազմ (186 / 16) սաստկացեալ ունելով միշտ պատերազմ ընդդէմ Ենիբայ թշնամւոյն (214 / 1) Իսկ Ռոստոմայ անփոյթ արարեալ զպատուէրն Բաբանայ՝ ել տալ պատերազմ ընդ ամրացելոցն ի բերդին: (328 / 2) որում համեմատ են ոչ դարուցն առաջնոց նշանագիրք ազգի ազգի պատերազմաց և խռովութեանց (127 /6) «Լսելոց էք պատերազմունս և համբաւս պատերազմաց (127 /13) ետես նա եթէ յաջողեցաւ գործ մարտի պատերազմաց (128 / 17) Եւ վասն մղելոյ նորա և յօրինելոյ զճակատն պատերազմաց և գյաղթութիւնսն կատարելոյ ըստ խորագիտութեանն Պարսից, այլ և այլ պճնող անուամբ յորջորջեն զնա. (129 / 3) ես եկից ելից հասից անձամբ իմով օգնական նմա քաջ զօրօք իմովք և հաճեցից զմիտս նորա գործովք պատերազմաց (141 / 15) Այլ և ինքն ուժով պնդութեամբ հարստութեանն քաջ և անուանի եղեալ ի մարտ պատերազմաց (249 / 9) լաւ համարեալ մեռանել պատերազմաւ, քան ուրացութեամբ ունել զթագաւորութիւնն: (15 / 13) և ընդդէմ եկաց պատերազմաւ Արեաց գնդին (16 / 8) Լինի զօրաժողով Տրդատիոս՝ մեծ թագաւորն Հայոց և իջեալ ի դաշտն Գարգարացւոց՝ պատահէ հիւսիսականացն սաստիկ պատերազմաւ. (29 /6) «Մինչև ցե՞րբ հոսեսցեն վտակք արեանցն այսոցիկ ի տեղիս տեղիս պատերազմաւ անձանց Արեաց աշխարհիս. (145 / 5) և Մայմուն ընդ հակառակս նմա ելեալ պատերազմաւ՝: (292 / 10) Եւ դարձեալ ապստամբքն ի Բաբանայ դիմադարձ պատերազմաւ ամրացան ի բերդն Գորոզու (327 / 9) ԵՒ ԽՈՑ ԱՌՆՈՒԼՆ ՈՒՌՆԱՅՐԻ ՅԱՅՆՄ ՊԱՏԵՐԱԶՄԻ (30 / 11) Ռազմ եղեալ՝ զբոլոր մեծութիւն դաշտին ի ներքս փակէր՝ զինեալք և վառեալք ի մարտ պատերազմի ընդդէմ գնդին Հայոց: (114 / 8) և ոչ գրգռէր զնոսա ի մարտ պատերազմի. (131 / 1) և խնայէր ի նա իբրև յերիվար ինչ ընտիր քաջընթաց յօր մարտի և պատերազմի. (150 / 19) Եւ մի՛ ընտրեսցես վասն նոցա տեղի պատերազմի. (168 / 7) և անդ դնէր ընդ նոսա ոչ վարկպարազի, այլ խոհականապէս դէմ առ դէմ ռազմ պատերազմի: (178 / 5) Յամօթալից հեղգութենէ չկարեմ համարձակել ասել բանս մխիթարութեան յաղթողիդ աներևոյթ պատերազմիդ (27/5) Ցանկալի ես հրեշտակաց, փափագելի ես մարդկան, առաւել անձկալի ինձ՝ հեռացելոյս, չլինելոյս մարտակից քեզ յաներևոյթ պատերազմիդ ամենաչար սատանայի: (28 /10) Եւ զօրագլուխն ոմն անարի հսկայ ի տիգաւորացն վառեալ թաղեաւ կաճեայ՝ շահատակէր ի մէջ պատերազմին առ Օշական առապարաւն. (30 / 4) Ապա եկեալ Շապուհ արքայ ի վճարմանէ պատերազմին, ետես զաղէտսն (108 / 21) Եւ յայնմիկ զօրքն Հայոց կատարելով զգործ մեծի պատերազմին ժողովէին զբազմութիւն աւարին (115 / 11) և քեզէն միայն վճարեսցես զգործ պատերազմին ընդ նմա: (168 / 12) կոչեսցես զտեղի պատերազմին Գերեզմանս թշնամեաց: (168 / 13) զի ի խոնել պատերազմին գթեալ քաջասլաց նորայն երիվարն գլորեցոյց զնա, սակայն ոչ կործանեցաւ (186 / 17) Վասն զի տարժանեալք յոյժ՝ լցան

տարակուսանօք յաղագս սատանայական պատերազմին: (239 /6) և ժողովեալ անթիւ զօրս՝ պատերազմին ընդ Ղիոնի ամս ԺԵ ապականելով զամենայն երկիրն: (323/3) Սաստկանայ պատերազմն (13/8) Եւ մխեալ ի պատերազմն՝ անկան առաջի զօրացն Յունաց ինքն և զօրքն իւր (145 / 1) որ ի մեծամեծ պատերազմունս հոյակապ անուն ժառանգեաց ի մէջ Հայաստանեայցն (14 /13) «Լսելոց էք պատերազմունս և համբաւս պատերազմաց (127 /12) Արդ՝ զամս եօթն ի պատերազմունս յայսոսիկ տարժանեալ մրցէր քաջն Ջուանշիր մետասան դժնդակ վէրս յանձն առեալ՝ գայր հրաժարեալ ի նոցանէ յԱտրպատական գաւառ: (176 / 17) Որ և ի Շակաշէն գաւառի յերկու իմն պատերազմունս զհազարաւորս հանդերձ իւրեանց զնդիւն քաջավրիժակ խոցոտմամբ կենազրաւէր: (179 / 1) զօրաւոր և յաղթող լինել ձեզ ի պատերազմունս թշնամեաց ձերոց: (251 / 2) Բարեյաղթ Հերակլ Հռովմայեցւոց թագաւոր զպէսպէս պատերազմունս վանեալ՝ յիշատակ քաջութեան եթող յաշխարհի: (316 / 15) այլ մարմնաւորական պատերազմունքն կարի յաճախէին: (126/18) զի մի՛ յարիցեն և ժառանգեսցեն զերկիր և լցցեն զնա պատերազմօք: (44 / 11)

ՊԱՏԵՐԱԶՄԱԿԻՑ - 3

Եւ ի գալ մեծին Գրիգորի հանդերձ պատերազմակից պսակելովքն Հռիփսիմեաւ և Գայիանեաւ ի մեծ ժողովն Դիւտականու, ընդառաջ ելանէր թագաւորն հանդերձ թագուհեաւն (67 / 5) «Աղաչեմ զձեզ, ասէ, ի ձեռն տեառն Հիսուսի Քրիստոսի և սիրով հոգւոյն պատերազմակից լինել ինձ յաղօթս առ Աստուած: (278 / 9) Զոր իբրև տեսին բնակիչք քաղաքին զզօրավիգն առաքեալ հանդերձ յաղթանդամ և կիրթ պատերազմակցօքն, յոյժ զօրացն յանձինս իւրեանց. (138 / 11)

ՊԱՏԵՐԱԶՄԵԱԼ - 2

որոյ զբարիոքն պատերազմեալ՝ յաստեացս բարի անուանեցաւ և ի հանդերձեալսն հրանիւթիցն գտաւ հանդիսակից: (234 / 2) որք արեամբ պատերազմեալք՝ վկայ անուն ժառանգեցին (202 / 7)

ՊԱՏԵՐԱԶՄԵԼ - 2

և ետ հրաման նմա ոչ պատերազմել ընդ բերդին (327 / 18) ՊԱՏԵՐԱԶՄԵԼ Ն ՏՐԴԱՏԱՅ ԸՆԴ ԲԱՍԼԱՅ ԱՐՔԱՅԻՆ Ի ՅԱՇԽԱՐՀԻՍ ԱՂՈՒԱՆԻՑ (29 / 2)

ՊԱՏԵՐԱԶՄՈՂ - 9

Եւ դնէր անուն մանկանն Պանդալիոն յանուն պատերազմող նահատակին Քրիստոսի Պանդալիոնի (63 / 10) Տկարքն և հանդարտքն խրախուսէին, եթէ հզօր և պատերազմող եմք մեք: (130 / 14) զօր փութանակի առաքէր յօգնականութիւն նոցա … զյօժարն և զքաջ պատերազմող զզօրագլուխն իւր զՇարհապաղ և յընտիր հեծելոց թիկնապահաց և դռնապահաց իւրոց ընդ նմա իբրև արս հազարս: (138 / 8) նոյն ինքն Խոսրովու առաքեաց թագաւորն հիւսիսոյ զխոստացեալ զօրն պատերազմող՝ զօրավար կարգեալ զեղբօրորդին իւր (142 /8) գիտաց ի միտս իւր ամենայն պատերազմող և որ կապէր զսուր իւր յազդեր, եթէ ոչ ինչ համարի առաջի նոցա իշխանութիւն թագաւորաց և զօրութիւն զօրավարաց: (169 / 12) Եւ չուեալ յԱրաժանից սրբոյն Զաքարիայի և երանելւոյն Պանդալիոնի և յոյժ վայելչականին

Գրիգորի և առաւել հռչակելեացն պատերազմողին Հռիփսիմեայ Գայիանէիւ հանդերձ, թագաւորաւն և յոլովագոյն ժողովով և եպիսկոպոսօքն և քահանայիւք և պաշտօնէիւք: (72 / 2) Արդ մի ոմն յաշակերտացն տեառն՝ Թադէոս անուն … լուսաւորէր զկողմանս ինչ Արևելից աշխարհին, մինչև եկն հռչակելին պատերազմողն և երիցս երանելին Գրիգորիոս (32 / 1) և թողեալ զօրս պատերազմողս ի ձեռն որդւոյն իւրոյ Շաթայ …երթալ հրամայէր ի սահմանս Աղուանից: (153 / 15) և մուծանեն ի ներքս արս պատերազմողս զինուք իւրեանց թուով Խ հազար. (323 / 9)

ՊԱՏԵՄ - 4

որ պատէ զկողմն քաղաքին (138 / 19) Խոնարհէր թագաւորն ծեր, անկանէր և պատէր զոտիւք և զձեռօք սրբոյն Գրիգորի (19 / 9) Եւ առեալ Գրիգորի՝ պատէր իւրեանց իսկ պատառոտուն հանդերձիւքն չարարեալ ուրուք ինչ արժանի յերանելեացն մերձեցուցանել ի մարմինս: (34 / 17) Եւ անդ մեծապատիւ այրն Ատրներսեհ՝ իշխան աշխարհին … գայր առ նա և իւրովի պատէր զվէրս նորա. (178 / 10)

ՊԱՏԺԵԼ - 1

ԳԱԼՆ ԵՂԻԱՅԻ՝ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ Ի ՊԱՐՏԱԻ ԵԻ ՊԱՏԺԵԼ ԶՆԵՐՍԷՍ (296 / 16)

ՊԱՏԺԵՄ - 1

և զորս ի քաղաքին կամ յամենայն սահմանս ընդ հրամանաւ զօրավարին Պարսից գտանէին, չարաչար պատժէին: (180 / 9)

ՊԱՏԻԺ - 3

և փոխանակ բարի խոստմանցն ած ի վերայ նոցա Աստուած զանձրևասաստ պատիժն (245 /3) զի արձակեսցին ամենայն գերեալքն և մի՛ ոք իշխեսցէ արգելուլ կամ թաքուցանել, ապա եթէ ոչ՝ պատիժս մեծամեծս կրեսցեն: (163/9) ՅԱՂԱԳՍ ՍՏԵՓԱՆՆՈՍԻ ՍԻՒՆԵԱՑ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ, ԵՐԹԱԼՆ Ի ՀՈՌՈՄՍ ԵԻ ԲԵՐԵԼՆ ԶԳՐԵԱՆՍՆ, ՈՐ ՅԱՐԵԻԵԼՍ ՈՉ ԿԱՅԻՆ ԵԻ ՎԱԽՃԱՆ ՆՈՐԻՆ ԵԻ ՊԱՏԻԺՔ, ՈՐ ՀԱՍԻՆ ՅԱՍՏՈՒԾՈՅ (320/17)

ՊԱՏԻՃ - 1

և զխելապատակէ անտի ըստ չարաթոյն սողնոյն նմանութեան ի վայր կոյս կախեալ ձևանայր պատիճ (200 / 5)

ՊԱՏԻԻ - 47

Եւ առեալ այնուհետև զքահանայապետութեանն պատիւ ՝եկեալ լուսաւորէր և զմնացորդս Աղուանից և Վրաց: (35 / 4) կամեցաւ առնել քննութիւն, թէ որ ազգ և լեզու ունիցի բարձ և պատիւ: (106 / 10) Եւ անդ մեծագոյն առեալ պատիւ ՝անդէն մեռանի: (109 / 10) Եւ աւանդէ նմա պատիւ ընդ Բագրատունիս և ընդ Մամիկոնեանս համապատուել: (111 / 5) որում ի պատիւ իշխանութեանն իւրեանց Շաթ անուն կարդային: (142/10) ես ինձէն պատասխանեցից և յօրինեցից ըստ պատշաճի թագաւորական ընծայիցն ընծայս ի պատիւ ողջունի թագաւորին ձերոյ»: (155 / 10) ապա եհան և նա բազում ինչս ի գանձուց իւրոց, որ ինչ պատշաճ էր ի պատիւ ընծայից նոցա պարգևաց: (159 / 1) Եւ առնէ զնա պռոտոն պատրիկ և տայր բերել

պատրկութեան և հիպատութեան և ապիւպաքոսութեան և ստրատելատութեան և ելիստութեան հազար երկերիւր արանց պատիւ. (182 / 4) զի ի նախկին պատիւ ևս առաւել արասցէ յաւելուած փառաց. (196 / 14) Եւ զմի ի տապանակացն առեալ ի պատիւ ՝յինքեան տեսանէր յեպիսկոպոսանոցն: (207 / 12) որ ղաքնար ունէր պատիւ (213 / 1) ի նոյն ժողովոյն առնու առաքելական պատիւ (213 / 12) որ մեծարեալն էր կայսերական պատուով զապուհիւպատ պատրակութեան ստացեալ պատիւ. (231 /4) ՎԱՍՆ ՅԱՌԱՋԱԴԻՄՈՒԹԵԱՆՆ ՎԱՐԱՋ ՏՐԴԱՏԱՅ ԵՒ ԸՆԴՈՒՆԵԼ ԳԱՀ ԵՒ ՊԱՏԻՒ Ի ԿՈՂՄԱՆՑ ԿՈՂՄԱՆՑ (233 / 8)պատուէր և պատիւ հայրապետական սրբութեանն առնէր: (240 / 2) և ինքն զլիթուերութեանն բերելով պատիւ ՝փառաւորեալ լինէր ի մէջ երից աշխարհաց (249 / 12) որ զտուրք թարխանութեան ունէր պատիւ (260 / 13) տալ նմա խաչ և պատիւ միայն և ոչ առնել ձեռնադրութիւն եպիսկոպոսի: (275 / 5) և Ութման ետ իշխանութիւն Աբդլայի պատիւ ՝քրքմել զհերս և զմօրուս: (291 / 7) ՊԱՇԱՐՈՒՄՆ ՊԱՐՏԱՒԱՅ ՅՈՐԴՈՅՆ ՇԵԽԱՅ ԵՒ Ի ՋՕՐԱՅ ՀԱՅՈՑ ԵՒ ԱՂՈՒԱՆԻՑ ԵՒ ՍԱՄՈՒԵԼԻ ԱՆՁԱՄԲ ԱՌՆՈՒԼ ՊԱՏԻՒ ԵՒ ԳՆԱԼ Ի ԴՈՒԻՆ (334 / 4) որ ի բազում ժամանակաց էր բարձեալ պատիւ թագաւորական ի տանէն Թորգոմայ: (335 / 13) թագ զարմանազան և ծիրանիս թագաւորական առաքէր ի պատիւ և ի գովեստ աստուածայաջող առնն այնորիկ (341 / 14) Արդ՝ մի՞թէ արգելուլ ինչ կարասցես ի մէնջ զշնորհս երկնային, կամ համեմատել զձեր վայրկենի պատիւդ կամի՞ցիս /ճիշտը՝ կամիցի՞ս/ ընդ աստուածային պատուոյն. (104 / 15) Եւ ոչ է իմ պատիւդ այդ, զոր խոստանայք (261 / 12) այլ յայսմ քաջանալ և առնուլ կրկին զանանցական պատիւն (35 / 3) «Եթէ կամաւ յանձն առնուք զօրէնս, պարգևս և պատիւս գտանէք ի նմանէ (113 / 2) որում ի վեր քան զառաջինն անհամեմատ մեծարանս և պատիւս հանդիպէր. (197 / 4) Եւ ոչ է իմ պատիւդ այդ, զոր խոստանայք, այլ եթէ չարամահ տանջանօք ի ձենջ տանջիմ, փառս և պատիւս ինձ զայն համարիմ վասն տեառն խնդամիտ յոյժ լինելոյ: (261 / 13) և շնորհեալ մեզ Քրիստոսի՝ զայս աստուածային և զմեծ պատիւս, ոչ յաղագս մերոյ ինչ բարեգործութեան և արժանաւոր լինելոյ, այլ ըստ բազում ողորմութեան իւրում կամեցաւ ինքն և պարգևեաց մեզ շնորհիւն իւրով: (306 / 1) և սա խնդրեաց ի Խոսրովայ արքայէ գրել պատիւս Գարդմանայ տէր և իշխան Աղուանից ի վերայ թղթոց «առ կուսակալս աշխարհիս», զոր և դեռևս գրեն: (343 /16) Յայնժամ կաթողիկոսն Աղուանից եպիսկոպոսօքն հանդերձ և երևելի արանց բազմութեամբ առաջի եկեալ՝ ծաղկաբերք և օրհնաբանիչք լինէին մեծազարդ պատուին: (183 / 1) Մի՛ոք տղայական բարուք և անիմաստ խորհրդով փոքր վարկանելով զսորայս տիրողութիւնս յաղագս ոչ ունելոյ թագ և եթ ի գլուխ, ծայրայապաւիչ թագաւորական պատուոյ, յոգնավայելուչ մեծութեան: (201 / 5) Արդ՝ մի՞թէ արգելուլ ինչ կարասցես ի մէնջ զշնորհս երկնային, կամ համեմատել զձեր վայրկենի պատիւդ կամի՞ցիս ընդ աստուածային պատուոյն. (104 / 15) Եւ եթէ յեպիսկոպոսաց ոք իցէ, լուծեալ լիցի ի պատուոյն (301 /13) զոր ածեալ բնակեցոյց յերկրին Հայոց մեծաւ պատուով: (7 / 15) Ամենայն թագաւորք ազգաց ննջեսցեն պատուով ՝այր իւրաքանչիւր ի տան իւրում. (44 / 13) յիւրաքանչիւր գնդի նշանք սրբոցն մեծապէս պատուով ընդ աւետարանին պատուեալք (67 / 9) Տայ նմա մասն մի ի սրբոյն նշխարացն և ի նմին

դաստակերտին մեծապէս կատարի յիշատակ պէսպէս պատուով: (86 / 1) զի եթէ ոչ եկեսցէ շքով և պատուով, անհնարին տանջանօք չարամահ արասցեն զնա: (101 / 19) և շնորհեալ նմա արքայի՝ մեծաւ պատուով առաքէ զնա յաշխարհին իւր: (111/5) հրամայեաց յուղարկել զկաթողիկոսն հանդերձ իւրայնովքն մեծաւ պատուով (162 / 12) Եւ այնպէս շքեղաշուք պատուով մուծանէին ի բանակն յոգնահոյլ գուպարից: (195 / 1) Եւ յետ այսորիկ գերահռչակ ևս պատուով ըստ թագառիկն՝ արքայից զարևելից իշխանն ծայրափառեալ թագաւորն հարաւոյ հրամայեաց շնորհել նմա զայն (197 / 11) տայր նմա զաջ իւր և յաւէտասքանչ պատուով արձակէր զնա: (199 / 1) որ մեծարեալն էր կայսերական պատուով զապուհիւպատ պատրակութեան ստացեալ պատիւ.(231/3) արձակեցին զնա պատուով յաշխարհին իւր: (262/4) և մեծագոյն պատուով զդիւաշունչն այն Մահմետ ածին յիւրեանց մէջն: (288 /14)

ՊԱՏԿԱՌԵՄ - 1

Եւ նոքա լռեցին, քանզի պատկառէին պատմել նմա: (147 / 19)

ՊԱՏԿԵՐ - 11

Եւ առեալ գեղարդ ի ձեռն՝ ծակոտէին յանդիման նոցա զդդումն՝ զնմանեցուցեալն ի պատկեր նորա: (140 / 5) կամեցաւ զի ի նուէր նշանին ձօնեսցէ ի պատկեր տեառնանման խաչին: (219 / 14) և մեք հոգևոր ողջունիւ տեսաք զդա որպէս պատկեր Աստուծոյ (262 / 15) ԴԱԻԹԱՅ՝ ՄԵԾ ԿՈՂՄԱՆՑ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՎԱՍՆ ՊԱՏԿԵՐԱՅ ԵԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹԵԱՆՑ ՀԱՅՑՈՒԱԾ Ի ՅՈՀԱՆՆԷ ՄԱՅՐԱԳՈՄԵՑԻՈՑ (266 / 14) մեք ոչ պագանեմք երկիր պատկերաց, զի ոչ ունիմք հրաման ի Գրոց: (269 / 9) սովորական ընդելութեամբն երկիր պագէք խաչիդ և անտեսանելւոյ պատկերի աստուածութեանն (256 / 4) Որոց բազում ազգք մոլորեալք նուիրական ձօնիւք զոհս մատուցանէին առաջի այնր պատկերին (246 / 2) Ձեռն որ ձգեցաւ ի սպանանել զտէրն, Եւ ոտք, որ կոխեցին զիրաշագեղ պատկերն, Ուրկածին ախտիւն եռացմամբ զօսացեալ՝ Յարեսցին ի նա ցեցք չարակեզ խոցոտմամբ: (228 / 9) եհաս համբաւ իմն ի նոսա, եթէ ոմանք պատկերս ոչ ընդունին, ոմանք մկրտութիւն ոչ առնեն (267 / 2) Մի՛ գիրս, մի՛ պատկերս, մի՛ նշխարս ի նոցանէ ընդունել: (268/1) հաւատամք ի ձեզ և հաստատիմք անդրէն շինել և պաշտել մեհեանս, և՛ զբագինս, և՛ զանդրիագործ պատկերսն. (253 / 1)

ՊԱՏԿԵՐԱԳՈՐԾ - 1

և յօրինուածովք նկարակերպ և պէս պէս կենդանագիրս հաստատեաց և սոսնձեալ ի վերայ բոլորովին ծածկելով գեղեցկութեամբն պատկերագործ նմանահանութեամբն ճշգրտեալ (255 / 11)

ՊԱՏԿԵՐԱՄԱՐՏ - 1

Իսկ պատկերամարտքն, որ իջին յԱղուանս, պղտորեցին զերկիրդ ձեր. (269 / 4)

ՊԱՏԿԵՐԱՄԱՐՏՈՒԹԻՒՆ - 1

և պատկերամարտութիւն նախ ի Հոռոմս երևեցաւ (267 / 7)

ՊԱՏՃԱՌ/Ք/ - 18

զորոյ զրպարտութեանն պատճառ Սողոմոն ոմն միանձնեայ, որ և յետոյ Հայոց եղև կաթողիկոս: (272 / 3) Եւ այսմ կորստեանն նոցա պատճառ եղև այն, զի առ հասարակ շնչեալ ի նոսա հոգի մոլորութեան (318 / 9) Արդ՝ զի՞ առաջին պատճառ լուսաւորութեան մերոյ է սուրբն Եղիշայ (342 / 6) Եւ եկեալ յաշխարհին Աղուանից՝ խնդրէր հնարս պատճառանաց (48 / 6) Եւ որ զկին թողու առանց պատճառանաց և առանց պսակ կին առնէ … զայնպիսին կապեալ ի դուռն արքունի տարցին (92/2) զորս ամենապիղծն զրպարտէր ապստամբութեամբ պատճառաւ (43 / 4) Արդ՝ ձեռնարկեցից և զայն ասել, եթէ որպէ՛ս կամ զինչ պատճառաւ շնորհատուն այն խաչ ծագեաց նմա ի խաւարէ լոյս կամ քաղել ծաղիկ ի հրոյ: (192 / 3) իրերաց դիպեցան և խոստովանեցան երկոքեան զմի պատճառս (58 / 17) Խորհուրդ կալեալ թագաւորին ընդ իւրոյ դրան երիցունսն խորհել պատճառս ինչ (65 / 7) Եւ տանէր բերէր զնոսա պատճառս կազդուրելով. (155 /5) և հրապուրեալ զնա ի պատճառս բղջախոհութեան, փաստապատիր բանիւք զնա հաւանեցուցանէր՝ ելանել ի զբօսանս խոհերական: (222 / 8) յայս պատճառս, եթէ քահանայութիւն բարձեալ է յերկրէս: (267 / 3) թիւրութիւն ետուն պատճառս: (268 / 17) Եւ եղեալ նոցա յանդիման մեզ՝ հարցաք, թէ յո՞ր պատճառս չընդունիք զմարմնացելոյ Աստուծոյ զպատկերն. (269 / 7) և հերքն և մուրուքն ճողին յայս պատճառս: (311 /17) Յաւուրսն յայսոսիկ ոմն երիտասարդ իշխանաց քաղաքին զայ ի Թեսաղոնիկէ քաղաք … ի պատճառս ինչ զբօսանաց. (322 / 18) սակայն պատճառք կան (265 / 8) և պատճառք հօր նոցա զաշխարհս արևելից ի Տաճիկս տալն եղև: (312 / 15)

ՊԱՏՃԱՌԱԻՈՐ - 1

Իսկ զօրագլուխն Պարսից դաւաճանեալ կոչէ պատճառաւորք բանիւք զհայր նորա (179 / 17)

ՊԱՏՃԱՌԵԱԼ - 1

նոցա զնզովս Հայոց պատճառեալ: (335 / 1)

ՊԱՏՃԱՌԵՄ - 1

պատճառէր ըստ օրինի զինակրութեան: (222 / 14)

ՊԱՏՃԵՆ, ՊԱՏՃԷՆ - 6

Եւ պատճեն հրովարտակին էր այս: (262 / 11) Աւետաբեր հնչմամբ հանդիսացուցանել ձեզ պարտիմք և /ճիշտը՝ ի/ ձեռն հրովարտակ պատճենիս զհրաշափառ ծածկելոցն երևումն և զգիւտ սրբոյն խաչին (208 /13) ՊԱՏՃԷՆ ՀՐՈՎԱՐՏԱԿԻՆ (182/7) ՊԱՏՃԷՆ ԹՂԹՈՑՆ, ՈՐ ԳՐԵՑԱԻ ՅԵՊԻՍԿՈՊՈՍԱՑՆ Ի ԴԱԻԹԱՑ ԵԻ Ի ՅՈՎԵԼԱՑ ԵԻ Ի ՄԵԾ ԺՈՂՈՎԱՐԱՆԷՆ, ԹԷ ՈՐՊԷՍ ԵՑՈՑՑ ԱՍՏՈՒԱԾ ԶՄԵԾ ՍՔԱՆՉԵԼԻՍՆ (208 / 6) Տառայարեալ պատճէն՝ հրովարտակիս, զոր շարաքերեալ և կարգեալ էր, տեսաք. (211 / 3) Եւ են պատճէնք պատգամացն առ միմեանս այսպէս. (142 / 17)

ՊԱՏՃԷՆ - Տե՛ս ՊԱՏՃԵՆ

ՊԱՏՄԱԳԻՐ - 2

որ ոչ են անկեալ ի գիրս հնագիր պատմագրաց (106 / 7) Ի ստոյգ և ի բուն օրինակս պատմագրաց այսպէս ծանեաք (170 / 16)

ՊԱՏՄԵԼ - 13

թոյլ ետ պատմել շուրջ զքև բոց սաստիկ հնոցին: (22 / 1) եթէ զիարդ կարացից բանիւ պատմել զայնմանէ, որ ի վեր քան զբանն գտանի: (23 / 12) Եւ նա առ սա չոգաւ՝ պատմել զտեսիլն. (58 / 16) և ինքն հեծեալ յերիվար մի գեղեցիկ ճեպէր հասանել առ բարեպաշտն Վաչագան՝ պատմել զերևումն հրաշիցն: (60 / 6) հասանեն ի միաբան յուխտ Հայաստանեայց՝ պատմել զանցս աղետին (112 / 13) Եւ զի անցեալ ժամանակն յետս յետս զիւրն պահանջէ ի մէնջ պատմել (128 / 7) Եւ նոքա լռեցին, քանզի պատկառէին պատմել նմա: (147 / 19) Իսկ զզարդուց եկեղեցեաց, զականակապ, զմարգարտայեռ սպասուցն ո՞վ իցէ բաւական առ ի պատմել: (153 /12) և երդմնապատիժ սահմանադրութեամբ պատուէր տայր նմա մի՛ ումեք պատմել: (218 /14) հրամայէր նմա զնոյն խուժադուժ ազգին տաճկաց պատմել. (288 /4) չոգայ առ սուրբ հայրապետն Աբաս՝ պատմելով նմա զխմբումն մեծապայծառ վկայիցն: (121 / 2) եկին հասին նոքա յաշխարհս Աղուանից և Հայոց … պատմելով զամենայն, զոր ինչ արար Աստուած ի ձեռն նորա յաշխարհին Հոնաց (264 / 4) բազմադաշն լեալ էր երդմամբ չպատմել ումեք (218 / 14)

ՊԱՏՄԵՄ - 35

Եւ նա ասէ. «Ե՛րթ և պատմեա՛»: (79 / 1) որ պատմեաց զայս ամենայն (54 / 10) իւր իսկ ականատես եղեալ պատմեաց: (56 / 14) Եւ Յովէլ երէց մի անապատական, որ առ արքային լինէր, պատմեաց (73 /3) Եւ պատմեաց վանաց երէցն և ասէ. (75 / 7) Եւ զարթուցեալ ի քնոյ՝ եկն պատմեաց զայս ամենայն արքայի: (79 / 10) պատմեաց հայրապետին Աղուանից Ուխտանիսի: (203 / 5) որպէս պատմեացն (72 / 19) Եւ ասէր ցաբեղայն, որ զնշանն ցուցանէր, թէ երթամ, պատմեմ արքայի զնշանդ, զոր ցուցեր ինձ: (78 / 14) Եւ նոքա ի գալն առ նա՝ պատմեն զխորհրդոյն զօրութիւն: (260 /14) «Յորժամ զարթնու արքայն, զոր տեսերդ, պատմեսջի՛ր նմա»: (79 / 6) «Արքայ յորժամ զարթիցէ, պատմեսջի՛ր զնշանդ, զոր տեսերդ»: (79 / 9) Եւ իբրև պատմեցաւ արքայի արութեան նորա գործք և կարեվէր խոցոտմունք, նոյնժամայն հրամայէր տալ նմա ապարանս (175 / 1) որպէս մեզ պատմեցաւ (264 / 13) Քանզի գրելով ձեր առ մեզ՝ պատմեցէք զձեր որպէսպաշտութիւնն (277 / 2) Եւ յետ յոլովից զմարմնաւորութիւնն բանին մեզ պատմեցէք զանազանեալ մտօք, զոր վարդապետութեան միտս եկեղեցի Քրիստոսի չէ առեալ յառաքելոցն (277 / 18) Պատմեցին նոքա, զոր ի Յորայ ճգնաւորէ լուեալ էին: (75 / 2) չոգան պատմեցին իշխանին իւրեանց, զի թարգման կայր ի միջի նոցա, որ լսէր զամենայն խօսս նորա: (101 / 16) Եւ նոցա տեսեալ զնա միայն՝ եկին պատմեցին վրիպական, մոլորամիտ ազգին Տաճկաց:(288 / 12) զբնութիւն նորա պատմեցից քեզ. (24 /12) և պատմեցից կարճառօտիւ զխորագիտութիւն առնն (146 / 6) Եւ աշակերտ նորին սուրբն Եղիշայ դառնայ յԵրուսաղէմ և պատմէ զտեսչալի նահատակութիւնն առաքելակցացն նորա: (10 /6) Ի ՍՈՅՆ ԽՈՐՀՈՒՐԴ ՏԵՍԻԼ ՄԻ ԵՒ ԽՈՃԿՈՐԻԿԱՅ՝ ՊՈՌՆԿՈՐԴԻՈՅՆ ԵՍՎԱՂԵՆԱՅ՝ ԱՐՔԱՅԻՆ ԱՂՈՒԱՆԻՑ, ՈՐ ԷՐ ԿԱՐԳԵԱԼ ԿՈՂՄՆԱՊԱՀ. ԵԻ ՊԱՏՄԷ ԱՐՔԱՅԻ (78 / 4) Եւ նոցա գաղտնի լրտես կացուցեալ առ ի գիտել թէ ով պատմէ նմա զայն կամ ուստի գիտէ նա զայս ամենայն: (288 / 9) «Յայսս տեղւոջ հրեշտակ ինձ երևեալ մեծամեծ սքանչելիս պատմէ»: (288 / 12) և պատմէին զտեսիլն իրերաց:

(58 / 17) զայս ամենայն նշանագործութիւնս պատմէին առաջի արքային (77 / 14) Եւ զջան քրտանցն Մաշտոցի բովանդակ պատմէին առաջի սրբոյ հայրապետին (98 / 8) պատմէր զամենայն մոլորութիւն հեթանոսաց (19 / 9) Եւ զարթուցեալ պատմէր զերազն. (33 / 24) և եկեալ փութապէս պատմէր արքային: (52 / 10) պատմէր զխորհուրդ չար աղանդոյն: (53 / 13) Եւ զարթուցեալ պատմէր զտեսիլն արքայի: (71 / 12) որ պատմէր զտեսիլ հօրն (203 / 7) և անկեալ առ ոտս նորա՝ պատմէր զբովանդակն զանուրջտեսութիւն. (218 / 8)

ՊԱՏՄԻՉ - 1

նորագոյն ի լսողս և պատմիչս յարդեան ժամանակիս ի մէջ հիւսիսական կողմանցս տօղավարողք զբոլոր լսողս տարբերմամբ ի մանաւանդն սակս ջամբոցեալ զխորհրդոյդ զսևեռութիւն (276 / 9)

ՊԱՏՄՈՂ - 3

յօժարեցայ պատմող լինել բանիւ: (17 / 22) Եւ թէպէտ և ունէի զայս ամենայն արուեստս նյութականաց պատմող, և էիր դու երբեմն նիւթական, այլ այժմ զաննիւթոցն ունիս զնմանութիւն: (23 / 17) Որքան պայծառ են երկինք աստեղօք և երկիրս բուսովք, այսպէս է և ջան աշխարհագիր պատմողի՝ յայլոց նիւթոց պարազարդեալ: (106 / 6)

ՊԱՏՄՈՂԱԲԱՐ - 1

ՅԱՌԱՋԻՆ ԺԸ Է ՆԱՀԱՆՋԷՆ. ՍԿԻԶԲՆ ՊԱՏՄՈՂԱԲԱՐ (128 / 11)

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ - 22

և մարթ էր զայն բանիւ ընդ պատմութեամբ արկանել (26 / 14) ՆԱԽԵՐԳԱՆ ՍԱԿՍ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԱՂՈՒԱՆԻՑ (3 / 4) Կատարեցաւ շարած երկրորդ միջակ պատմութեան Աղուանից: (286 / 12) Որպէս և ասէ իսկ ի Ծննդոց պատմութեանն (244 / 10) Ահա և Քանան անիծաւ յաղագս ծաղրական ժպրհութեանն Քամայ ըստ բանի պատմութեանն (245 / 8) ՊԱՏՄՈՒԹԵԱՆՄ ԱՂՈՒԱՆԻՑ (3 / 2) Այս է, որ զահի հարեալ էի ի սկզբան պատմութեանս (23 / 11) Կատարեցան գիրք առաջին «Պատմութեանս Աղուանից»: (105 /21) ՀԱՏՈՐ ԵՐԿՐՈՐԴ ՊԱՏՄՈՒԹԵԱՆՍ ԱՂՈՒԱՆԻՑ ԱՇԽԱՐՀԻՆ (106 / 2) Ո՛վ սքանչելի պատմութեանս, զոր հանդերձեալ եմ հնչեցուցանել ի լսելիս տիեզերաց, մօտաւորաց և հեռաւորաց (127 / 4) ՊԱՏՄՈՒԹԵԱՆՄ ԱՂՈՒԱՆԻՑ (287 /2) քանզի տեղեկացեալ էր ի հնադարացն պատմութենէ (65 /1) լուաք մեք ի ժամանակագիր պատմութենէ ոմանց (245 /14) ԳԻՏՈՒԹԻՒՆ ԵՐԵՒՄԱՆ ԱՍՏՈՒԾՈՅ ՄԵՐՈՑ ՄԵՐՈՑՍ ԱՐԵԻԵԼԻՑՍ. ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՃՇՄԱՐԻՏ (9 /13) ՅԱՂԱԳՍ ՍՐԲՈՅՆ ՄԵՍՐՈՊԱՅ ԵՒ ԸՆԿԵՐԱՑ ՆՈՐԻՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՎԻՊԱՍԱՆԱԲԱՐ (95 / 3) ՊԱՏՄՈՒԹԻՒՆ Ի ԴԷՊ ԳՐՈՑՍ (106 /4) ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՅԱՂԱԳՍ ՅԱՐՈՒՅՄԱՆ ԱԶԳԱՅ ԲԱՐԲԱՐՈՍԱՅ ԵՒ ՊԷՍՊԷՍ ԱՆՑԻՑ ՏԻԵԶԵՐԱՀԵՃ ՏԱԳՆԱՊԻՆ, ՈՐ ԵՂԵՒ ԱՇԽԱՐՀԱՅ (127 /2) Եւ նորա բազմահանճար խորհրդականութիւնն և խոնարհամիտ սէրն առ հասարակ եկելոցն լինէր հիացուցանող պատմութիւն յիւրաքանչիւր աշխարհի: (186 / 6) «Ըստ Գրոց իմանալի է այս. բայց զի նոր իմն և չքնաղ է պատմութիւն տեսլեանս (203 /16)

Ի ԳՐԵՆՈՅՆ ՍՏԵՓԱՆՆՈՍԻ ՍԻՒՆԵԱՑ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ԳՏԱԻ ԱՅՍ *ՊԱՏՄՈՒԹԻՒՆ* ՍԱԿՍ ԱՒԵՐՄԱՆ ՂԻՈՆ ՔԱՂԱՔԻ ԵՒ ՇԻՆԵԼՆ ՀՌՈՄԱՑ (322 / 11) Եւ նոյնժամայն խորհուրդ բերեալ իշխանացն Հայոց Մեծաց՝ մատուցին առաջի թագաւորին զԱգաթանգեղայ *Պատմութիւնն* ցանկալի: (107 / 9) և լեզու նորա իբրև զգրիչ երազագրի ի *պատմութիւնս* խօսից խորհրդականաց և ի մտավարժութիւն գովութեանց թագաւորաց և մեծամեծաց (150 / 3)

ՊԱՏՄՈՒՃԱՆ - 5

Եւ ի վերայ այնոցիկ զքաջ հաւուն իւրոյ Հերակլի և զՆիկիտայ հանուոյն զարքունական գօտին ածին ընդ մէջ նորա, և զիւրն *պատմուճան* և դրօշս երկուս. (185 / 9) Վկայդ Քրիստոսի, չարչարակից խաչին, ի հրեշտակաց փառամատոյց *պատմուճանաւ* զարդարեալ, անգարշ որդեակ իմ Վաչէ՝ Աղուանից արքայ, Գիւտ եպիսկոպոս ի տէր բերկրիլ: (27 / 1) Եւ ինքն անօրէն նենգաւորն վառեալ ի ծածուկ՝ ագեալ էր զզրահան ի ներքոյ *պատմուճանին:* (222 / 16) և զփառացն լուսոյ *պատմուճանն* արժանի լիջիք զգենուլ յանձինս ձեր»: (256 / 9) Ըստ նմին և այլ ևս մեծութիւն շնորհէր նմա. սուսեր պողովատիկ, ոսկեպատեան, մարգարտահոծ, գեղաշարեալ *պատմուճանս* (198 / 2)

ՊԱՏՇԱՃ - 6

զոր *պատշաճ* վարկաք մակագրել ի տառս տաղաչափութեան մերում: (106 / 7) ապա եհան և նա բազում ինչս ի գանձուց իւրոց, որ ինչ *պատշաճ* էր ի պատիւ ընծայից նոցա պարգևաց: (158 /18) Վասն այսորիկ յորդւոց անտի փոխանակ իւր *պատշաճ* համարէր զնա առաքել ի դուռն արքունի: (173 / 14) Սակս հայրապետական անուանց պարտ և *պատշաճ* վարկանելի էր զստոյգն յիշատակաւ դրոշմել ի գրի: (341 / 18) ես ինձէն պատասխանեցից և յօրինեցից ըստ *պատշաճի* թագաւորական ընծայիցն ընծայս ի պատիւ ողջունի թագաւորին ձերոյ»: (155 /10) այս կացցէ ի *պատշաճն:* (172 / 13)

ՊԱՏՇԱՃԱԲԱՐ - 1

Եւ առժամայն կալեալ վարձաւորս արս ճարտարս հիւսանց և *պատշաճաբար* յօրինեալ զնշան խաչին քանդակակերպ զարդու դրուագելով պատրաստեցին զամենայն ըստ գործոյ տեառն: (219 / 15)

ՊԱՏՇԱՃԻՄ - 1

Մովսէս նստէր ի Դուին կաթողիկոս. *պատշաճեցան* և նոքա Հռովմայեցիքն Յոհաննու կաթողիկոսարան յԱւանին, մօտ առ միմեանս: (268 / 8)

ՊԱՏՐԱԿՈՒԹԻՒՆ - Տե՛ս ՊԱՏՐԿՈՒԹԻՒՆ

ՊԱՏՐԱՆՔ - 1

և ի նոյն ինքն գլխաւոր եպիսկոպոսն Յովել *պատրանս* համարէր: (205 / 13)

ՊԱՏՐԱՍՏ - 3

«Արդ *պատրաստ* լե՛ր ի դիմի ելանել (114 / 1) Դեռ ևս կամէր ծաղկել և ի ծնօտսն տէգ մօրուացն, սիրեցեալ յաչս հօր, *պատրաստ* ի սպառազինութիւն, քաջասլաց իբրև արծուի: (173/11) երիվարք *պատրաստք,* օթևանք կազմք, մինչև եհաս ի դուռն թագաւորին մեծաւ շքով: (194 / 16)

ՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ - 3

զի ընդ ակնարկել նորա պատերազմ, պատրաստական գտանիցին: (135 /4) պատրաստական լերո՛ւք սակաւ ինչ հեծելովք: (146 /18) պատրաստական յօրինէր զպէտս կազմութեան նուիրական տօնին ըստ օրինակի խաչազարդ պայծառութեանն: (219 / 20)

ՊԱՏՐԱՍՏԵԱԼ - 1

Սա մեծապէս ելեալ ի հանդէսս յայս, դառնայ ըստ որում զգալն էր պատրաստեալ: (83 / 18)

ՊԱՏՐԱՍՏԵՄ - 7

Զաւակ չար, պատրաստեա՛ զորդիս քո ի սպանումն վասն մեղաց հօրդ իւրեանց. (44 / 10) պատրաստեա՛ մեղուցելոյս հոգւով օթևանս ի տան հօր քում, Քրիստոս»: (189 /16) զի պատրաստեսցէ առաջի նորա աներկիւղ զճանապարհս նորա (167 /8) կազմեցաւ, պատրաստեցաւ կամօք տեառն Աստուծոյ ի ձեռն եպիսկոպոսին (257 /11) Եւ առժամայն կալեալ վարձաւորս արս ճարտարս հիւսանց և պատշաճաբար յօրինեալ զնշան խաչին քանդակակերպ զարդու դրուագելով պատրաստեցին զամենայն ըստ գործոյ տեառն: (219 /16) Յայնժամ հանդերձեալ պատրաստեցին ընծայս և պատարագս. (238 / 10) և ո՛չ ազգս և զլեզուս հեռաւորս զօրավիգն օգնականութեան սանուն իւրոյ ընդդէմ նորա պատրաստէր: (146 / 12)

ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆ - 1

այլ գոհանալով զքո վերաբերութենէդ, ով զօրականդ Քրիստոսի, ոչ ունիմ գիտութիւն աղքատութեան իմոյ կազմութեան պատրաստութեան. (27 / 11)

ՊԱՏՐԵԱԼ - 1

և տռփեալ ի դուստր առն միոյ մեծի պատրեալ աճէ զնա ի Ղիոն քաղաք. (322 / 19)

ՊԱՏՐԻԱՐՔ - 7

նոյնպէս գահակալեցան ներքին խորանիս պատրիարք, որ է հայրապետ, և արքեպիսկոպոս, քահանայք և սարկաւագունք, կէսսարկաւագք և ընթերցողք և փսաղտք: (272 / 8) Ապա եթէ պատրիարք որ ունիք, և ոչ զայլ կղերս եկեղեցւոյ բովանդակ, յայտնի է՝ խոտորեալ հերձուածողք էք ընդ Արիոսս և ընդ խուժաստանս և ընդ այլ չարափառս»: (273 / 5) Յայնժամ շարժեցան ամենայն մեծամիտքն, և ուր առաքեալ էր վախճանեալ՝ զամենեցուն աթոռ պատրիարք խոստովանեցին: (273 / 13) Եւ սակս ինն դասակարգութեան գլխաւորք եկեղեցական անձնահաճ կամօք ըստ նպերտ բարուց՝ Հայաստանեայցն կարգեն զԱբրահամ պատրիարք (274 / 10) Եւ կատարեալ նոցա զերկրպագութեան ուխտ՝ երանաւէտ համբուրիւ ողջունէին զսրբոյ պատրիարքին ոտս: (98 / 15) Յայնժամ տեսիլ յԱստուծոյ երևէր ի վերայ սրբոյ պատրիարքին Եղիազարու (220 / 2) ո՛վ է պատրիարքն ձեր (272 / 11)

ՊԱՏՐԻԿ - 9

Եւ առնէ զնա պռոտոն պատրիկ և տայր բերել պատրկութեան և հիպատութեան և ապիւպաքոսութեան և ստրատելատութեան և ելիստութեան հազար երկերիւր արանց պատիւ. (182 / 2) «Քեզ տեառնդ Ջուանշիրի՝ Գարդմանայ տեառնդ և Աղուանից իշխանիդ, ապուհիպատ և

պռոտոն *պատրիկ* և արևելից կուսակալ … մեծ սիրով ողջոյն: (182 / 9) ո՛վ աստուածազան արևելեաց արքեպիսկոպոս Ուխտանէս… ապուհիպատ *պատրիկ* տէր Ջուանշիր՝ Աղուանից իշխան, ամենայն նախարարօքդ, որ համանգամայն ընդ ձեզ են, Դաւիթ և Յովէլ նուաստ եպիսկոպոսունք ի տէր խնդալ: (208 / 10) Յայնժամ *պատրիկ* ոմն՝ քեռորդի իշխանին, զիւր Նամեսականն առեալ լեգէոն գնդի յիսնեակսն զկնի ելանէր մահապարտին. (224 / 4) Այլև քրիստոսասէր ամենագով ազատք՝ աստուածապահ Շերոյ *պատրիկ* և Աղուանից իշխան, իշխան Ջուանքո *պատրիկ*՝ Աղուանից սպարապետ, Վարդան *պատրիկ* և նորին եղբայր տէր Գագիկ, Բաբ ի Հրահատեան, Վախտանգ ի Վարազմանեան … և այլ ամենայն ազատք աշխարհիս օրհնեցաք (300/10; 300/11; 300/11) և նոյնժամայն իմացաք զստոյգն. նախ՝ ես Շերոյ Աղուանից իշխան և Ջուանքոյ Աղուանից սպարապետ, Վարդան *պատրիկ* և նորին եղբայր Գագիկ (304 /10) և զորդիս նորա առնէր *պատրկունս* զտղայականս: (185 / 9)

ՊԱՏՐԻԿԵԱՆ - 1

և զԵռանշահիկն զվաչագան ի *Պատրիկեան* Աղուանից իշխան զքաջ կորովի աջողակ աղեղնաւորն հանդերձ զօրօքն իւրովք յետոյ իւր արարեալ (320 / 3)

ՊԱՏՐԻԿ ՔԱՐՈՅԵԱՆ - 2

Այլև քրիստոսասէր ամենագով ազատք՝ աստուածապահ Շերոյ պատրիկ և Աղուանից իշխան, իշխան Ջուանքո պատրիկ՝ Աղուանից սպարապետ … *Պատրիկ ի Քարոյեան* յազգէ թագաւորաց … և այլ ամենայն ազատք աշխարհիս օրհնեցաք (300 / 12) և նոյնժամայն իմացաք զստոյգն. նախ՝ ես Շերոյ Աղուանից իշխան և Ջուանքոյ Աղուանից սպարապետ, Վարդան պատրիկ և նորին եղբայր Գագիկ … *Պատրիկ ի Քարոյեան*՝ յարքայիցն զարմից (304 / 13)

ՊԱՏՐԿՈՒԹԻՒՆ - 2

որ մեծարեալն էր կայսերական պատուով զապուհիպատ *պատրկութեան / գրբում՝ պատրակութեան, ծն. պատրկութեան/* ստացեալ պատիւ. (231 / 4) Եւ առնէ զնա պռոտոն պատրիկ և տայր բերել *պատրկութեան* և հիպատութեան և ապհիպաքոսութեան և ստրատելատութեան և ելիստութեան հազար երկերիւր արանց պատիւ. (182 / 2)

ՊԱՏՐՈՒԱԿ - 1

Առ սովաւ կալան սովորութիւն գրել *ի պատրուակ* թղթի՝ Աղուանից, Լփնաց և Չորայ կաթողիկոսի: (343 / 2)

ՊԱՏՐՈՒԱԿ ԹՂԹԻ - Տե՛ս ՊԱՏՐՈՒԱԿ

ՊԱՏՈՒԱԾԵԱԼ - 1

և լանջացն կարմրանիշագոյն այսր անդր տրոհէր շուրջ զպարանոցաւն առ միմեանս *պատուածեալ* նման գարնանային առաւօտու ցօղոյ կայլակաց յանդաստանս (199 / 10)

ՊԱՏՈՒԱԿԱՆ - 31

և անդէն ի գուբ մի մահապարտաց ընկեցաւ *պատուական* նշխարքն (11 / 3) Յայսմ բոլորից զգուշանալով՝ երանելւոյն առեալ ընդ իւր վայելուչ և յոյժ պատուականագոյն թոշակ, զմեծ քահանայապետին և մարտիրոսին

Զաքարիայ՝ զհօրն Յովհաննու ի պատուական արենէն նշխարս և սրբոյն Պանդալիոնի (37 /11) և հանդերձ ինչ պատուական դնեն ի վերայ աթոռոյն: (54 / 3) և զեպիսկոպոսս և զերիցունս զզեցուցանէր պատուական հանդերձիւք: (60 /12) հրամայէր դեսպակ առնել յանուն սրբոցն և նոյնպէս շիկակարմիր մորթովք կազմեալ և սպիտակազգեստ պատուական կտաւով ի վերայ յարմարեալ (61 / 18) և փայլմունք ոսկւոյ և արծաթոյ և պատուական ականց, որ ի բազմութիւն խաչերոյն էին կառուցեալ, իբրև զլուսաւոր ամպ ծածկեալ ունէին զերկիր: (74 / 3) յոյժ պատուական թագ խաչին նշանարձակ ի վերայ դեսպակին լեալ իբրև զաստղ պայծառագոյն լուսով (74 / 6) Եւ դասս եպիսկոպոսաց, և՛ երիցանց և այլ պատուական արանցն առեալ թագաւորին ընդ սրբոցն՝ տանէր մինչև ցՔարուէճ յօթի տեղ (84 /10) ամփոփեցին զնշխարսն ի պատուական ինչ տեղարանս (121 / 17) ուստի և եկելոցն ի կայսերական քաղաքէն պատուական արանց, նմա հրամայէր, առ նոսա բանս խաղաղականս դնէր: (197 / 6) անդ հասանէին քահանայական դասք և այլք ի պատուական արանց (209 / 16) Այսպէս յարգոյ է և պատուական հաւատք և սրբութիւնք: (245 / 6) Պատուական գտելոցդ և վեհ հռչակելոցդ … ի դեպ /ճիշտը՝ դէպ/ է ինձ ասել (276 / 7) յորմէ ցրուեալ եղեն Քրիստոսի սուրբ մարմնոյ պատուական անդամք. (299 / 8) Եւ եղան պատուական նորա նշխարք ի մեծ եկեղեցւոջն Պարտաւայ՝ ի սուրբն Գրիգոր: (319 / 13) Եւ առին զզանձս ոսկւոյ և արծաթոյ անհամարս, և՛ գոհարս ականց պատուականաց (108 /9) և ի գերութիւն վարեաց զփայտն կենաց՝ զխաչն լուսատու տիեզերաց … և զսպասսն ամենայն սրբութեանց կողմանցն այնոցիկ զոսկւոյ և զարծաթոյ և զականցն պատուականաց (129 / 8) Ապա եթէ կարօտեցար դու ի նմանէ ոսկւոյ կամ արծաթոյ, կամ ականց պատուականաց ... կարող էի ես առաւել կրկին քան զնա հաճել զմիտս քո: (134 / 1) Ապա իբրև ետես իշխանն՝ տէրն նոցա զայն ամենայն աղխ գերութեան աւարացն մարդոյ և անասնոյ և անօթոց, արծաթեղինաց և ոսկեղինաց և հանդերձից պատուականաց, խորհեցաւ ի մտի իւրում յայն կոյս ինքն իսկ իւրովի գալ ելանել: (134 / 18) որք բնակեալ են յԱթէնս քաղաքի պատուականն Յունաց և Թեբեացւոց: (5 / 3) Զկնի այսորիկ և զպապկայն, որ պատուականն ևս է, քան զամենայն թոչունս (197 /16) կողոպտեցին զդիակունսն և ժողովեցին զզարդս երիվարացն, զզեղարդունս, և՛ զսուսերս ոսկիապատս, և՛ զվահանս, և՛ զհանդերձս պատուականս՝ (169 / 5) պարտ և արժան է մեզ պտղաբերել Աստուծոյ պտուղ բարի և քաղցր ի հաճոյս նորա և շինել ի վերայ հիմանն առաքելական, որ է Յիսուս Քրիստոսի՝ ոսկի, արծաթ, ականս պատուականս, այսինքն՝ զզանազան առաքինութիւնս և զամենայն գործս բարիս (307 / 2) Եւ ի յերկարելն Վարազ Տրդատայ ի միում աւուր եղև թագաւորին Հռովմայեցւոց ընտրել ակունս պատուականս, և կոչեալ զիշխանն Աղուանից՝ ցուցանէր նմա. (312 /1) որ իւր յոյժ սիրելի և պատուականք երևէին (62 /3) Վասն այսորիկ ոչ ինչ նուազ, քան որ թագաւորաց, զսա տեսաք՝ լի ամենայն ընչիւք, ոսկի և արծաթ բազում յոյժ, ծիրանիք պատուականք և հանդերձք գեղեցիկք և ականք պատուականք (200 /16; 200 /16) Արդ՝ ի լինել համբաւոյն այնմիկ՝ վաղվաղակի ճեպով ժամանեալ գումարէին

արք պատուականք, քորեպիսկոպոսունք, երիցունք, սարկաւագունք (205/7) Վասն որոյ սիրելիք և եղբարք իմ պատուականք...պարտ և արժան է մեզ պտղաբերել Աստուծոյ պտուղ բարի և քաղցր ի հաճոյս նորա (306 / 17) և զի այսդէս է, ո՛վ պատուականքդ, միտ դիք խոստովանութեան ձերում, թէ ուր ձգէ և որպէս մեկուսացուցանէ ի հոգւոյն սրբոյ վարդապետութենէ: (278 / 3) Եւ այնուհետև զանազան թագաւորական զգեստուք յարմարեալ զպաս սրբոցն՝ կազմէր ոսկւով և արծաթով և ականբք պատուականօք: (61 / 5)

ՊԱՏՈՒԱԿԱՆԱԳՈՅՆ - 4

Յայսմ բոլորից զգուշանալով՝ երանելւոյն առեալ ընդ իւր վայելուչ և յոյժ պատուականագոյն թոշակ, զմեծ քահանայապետին և մարտիրոսին Զաքարիայ՝ զհօրն Յովհաննու ի պատուական արենէն նշխարս և սրբոյն Պանդալիոնի (37 /10) և խաչ ոսկեղէն ի պատուականագոյն կազմեալ ականց և զանուն թագաւորին ոսկեգործ քանդակով ի վերայ գրեալ (61 /18) և ոսկի խաչ ի պատուականագոյն ականց քանդակեալ (69 / 5) «Ի տան իմում պատուականագոյնք գտանին քան զայդոսիկ, տաց զայնս ձերոյդ աստուածապսակեալ անձինդ (312 / 2)

ՊԱՏՈՒԱՍՏԵԱԼ - 1

վասն որոյ ուստերօք և դստերօք ընդ միմեանս պատուաստեալ էաք ի խնամութիւն: (143 / 15)

ՊԱՏՈՒԱՍՏՈՒԹԻՒՆ - 1

Ստուգաբանութեամբ այսպէս ծանեաք ընդ Հայկազանց արանց խնամաւորիլ Միհրական տոհմին, և պատուաստութեամբս այսուիկ առ ի զոյգ ունել զպետութիւն արևելեայց կողմանցս Աղուանից: (338 / 14)

ՊԱՏՈՒԱՒՈՐ - 4

Ապա առանձնացեալ եպիսկոպոսացն Իսրայէլիս հանդերձ և պատուաւոր քահանայիւք՝ բացեալ զկնիք մատանւոյն ի սրբութեան տապանակացն. (206 / 18) Վասն այսորիկ զմի ոմն ի սրբասնելոցն քահանայից նախամեծար պատուաւորաց հետևող իւրումն միայն զնա առաքէր գիւտին այնմիկ (215 / 3) Իսկ արքային Խոսրովու լինին մեղադիր պատուաւորքն իւր (171/11) Եւ ըստ կարգի պատուաւորքն մտանէին ահաբեկեալք: (183 / 6)

ՊԱՏՈՒԵԱԼ - 8

Ապա նստէր առ գերեզմանի սրբոյն թագաւորն ի վերայ երկրի և ի զանազան պատուեալ սպասուց արքունի հրամայէր բերել. (81 / 13) Եւ քաղաքացիքն յոյժ պատուեալ զնա. (108 / 8) ի վաղնջուց հետէ ի նախնեացն իմոց և յինէն մեծարեալ և պատուեալ էր տունդ ձեր իբրև եղբօր մերոյ սիրելւոյ. (143 / 14) և տեսանէաք անդ ոչ միայն սովորական չափով, այլ առաւել և բազմապատիկ արքայական շքով պատուեալ և պճնեալ պերևետեալ: (199 / 7) որ յաստուածուստ պսակօք, պատուեալ փառաւորեցաւ: (201 /9) Որոց մեծաւ սիրով պատուեալ ընդ առաջ ելանէին նմա: (236 /3) յիւրաքանչիւր գնդի նշանք սրբոցն մեծապէս պատուով ընդ աւետարանին պատուեալք (67/10) զուարճացեալք և պատուեալք լինէին յամենեցունց (240 / 5)

ՊԱՏՈՒԵԼ - 4

զի գիտասցէ ինքն պատուել կարասեաւն: (159 / 4) ի չորից ազգաց թագաւորաց աշխարհակալաց պատուել և մեծարել յոյժ (201 / 2) և ո՛չ զպաշտօնեայսն պատուել կարեն և ոչ անարգել զթշնամադիրսն իւրեանց (254/16) Բայց մեք որպէս ընկալաքն երկրպագութեամբ պատուել զսուրբ Երրորդութիւնն (279 / 12)

ՊԱՏՈՒԵՄ - 3

և զաստուածդ Ղիոնի ընծայիւք պատուեսցո՛ւք: (323 / 7) պատուէին զնա ըստ արժանի իւրում սրբութեանն: (206 / 17) Եւ յոգնամեծար ողջունիւ ընդունէին. Եւ փառօք պսակեալ պատուէին մեծապէս: (226 /24)

ՊԱՏՈՒԷՐ - 7

պատուէր առնէր զաւազակութիւն և զմարդադաւութիւն թողուլ (8/8) պատուէր տայր մեծապէս կատարել զյիշատակ սրբոցն: (86 / 8) Եւ դու պատուէր տացիր ամենայն իշխանութեան քում, զի դարձցին յիւրաքանչիւր տունս և ի վաստակս իւրեանց և ի գործս ձեռացն:(161 /11) և երդմնապատիժ սահմանադրութեամբ պատուէր տայր նմա մի՛ ումեք պատմել: (218 /13) և խոնարհեցուցեալ զինքն առաջի նորա, պատուէր և պատիւ հայրապետական սրբութեանն առնէր: (240 / 2) պատուէր ետ վիճակին իւրում առնուլ ձեռնադրութիւն յԱղուանս և զմիւռոնն օրհնութեան, մինչև միասցի աթոռ սրբոյն Գրիգորի: (274 / 3) Զայս ահագին և սոսկալի պատուէր ունիմք ի տեառնէ (306 / 12)

ՊԱՏՈՒԷՐ ՏԱՄ - Տե՛ս ՊԱՏՈՒԷՐ

ՊԱՏՈՒԻՋ - 1

տեսանէր զի ահա հրամանաւ թագաւորին պետք գաւառաց և ճոխք քաղաքաց ըստ իւրաքանչիւր սահմանս պատուիջք լինէին. (194 / 16)

ՊԱՏՈՒԻՐԱՆ - 16

և զսիրոյն կատարէր պատուիրան (238 / 8) Եւ նոյն շնորհիք սուրբ հոգւոյն հաստատեսցէ զձեզ յերկիւղն Աստուծոյ և ի պահպանութիւն պատուիրանաց նորա: (265 / 13) ետուն պատասխանի, եթէ արտաքոյ է պատուիրանաց (269 / 8) Ապա տեսանելով միշտ աստուածերկիւղս և հլուս և հաւանս պատուիրանաց զտեարսն Սիւնեաց …նոցա ետուն զպատիւ լինել մետրոպոլիտ Հայոց խաչանիշ մեծարանօք (275 / 9) Վասն որոյ սիրելիք և եղբարք իմ պատուականք և ընտիր աշակերտք Քրիստոսի և ճշմարիտ ծառայք պատուիրանաց նորա, պարտ և արժան է մեզ պտղաբերել Աստուծոյ պտուղ բարի և քաղցր ի հաճոյս նորա (306 / 18) Իսկ եթէ գիր ոք բերէ յառաջ վասն եկեղեցւոյ ըստ մարմնաւոր աշխարհական իրաւանց և ոչ ըստ աստուածային պատուիրանաց և կանոնաց, անվաւեր և անհաստատ է (310 /7) և երկասիրութեամբ հմտացեալ հպատակէր պատուիրանացն Աստուծոյ: (85 /6) Զայդ հրաման ունիմք մեք յԱստուծոյ և ի նորին պատուիրանացն: (309 / 1) Զի հակառակ Աստուծոյ պատուիրանացն է և կորուստ հոգւոյ և մարմնոյ՝ զազատութիւն եկեղեցւոյ ի ձեռն անարժանից մատնել: (309 / 7) Արդ՝ ես Սիմէոն շնորհիւն Աստուծոյ Աղուանից կաթողիկոս ըստ աստուածային պատուիրանացն և կանոնացն այսպէս հրամայեցի (310 / 2) Արդ պատուիրեմ ամենեցուն՝ զգոյշ կացէք պատուիրանացն Աստուծոյ (310 / 19)

լուեալ ի կենարար պատուիրանէն, եթէ որ դարձուցանէ ոգի մի ի մոլորութեան ճանապարհէն և ուսուցանէ առաքինասէր վարս, քաւի մեղք նորա (47 / 9) զի ընդդէմ Աստուծոյ երկասիրէր պատուիրանին (221 / 10) և հաստատէր զնոսա վարդապետական շնորհօք՝ կալ նոցա յուղղափառ հաւատս պատուիրանին պահպանութեան։(235/12) Նոյնժամայն հրամանակատար լինէր աստուածային պատուիրանին (249 / 3) Արդ ընտրեսցուք զբարին և մերժեալ անարգեսցուք զչարն շնորհիւ սուրբ հոգւոյն և պատուիրանօք նորա (307 / 5)

ՊԱՏՈՒԻՐԵԱԼ - 1

Եւ տայր ուսանել պահել զամենայն տէրունեան պատուիրեալսն (37 / 7)

ՊԱՏՈՒԻՐԵՄ - 7

վասն որոյ պատուիրեմ ձեզ զգոյշ կացէք անձանց և հօտիդ»: (306 / 5) Արդ պատուիրեմ ամենեցուն՝ զգոյշ կացէք պատուիրանացն Աստուծոյ (310 / 19) և յարուցեալ վաղվաղակի՝ խաչ արարեալ իւրով իսկ ձեռամբ՝ կանգնէր ի տեղւոջն, և մեզ պատուիրէր ասելով. (76 / 2) և զգուշութեամբ պատուիրէր ունել մինչև դառնալ նմա յիրացն հասելոց: (131 / 15) Եւ պատուիրէր նոցա զայս ինչ. (153 / 16) Այլ և յորժամ Մովսիսի պատուիրէր տէր վասն քահանայիցն, այսպէս ասէր. (306 / 5) Զի տէրն փառաց յորժամ պատուիրէր Մովսիսի յաղագս խորանին՝ ասէր. (308 / 1)

ՊԱՏՈՒՀԱՍ - 16

և պատուհաս մեծ հասուցանէր ի վերայ աշխարհին Հայաստանի: (33 / 12) Պատուհաս մեծ և տուգան ի վերայ ածէր և կարգէր (49 / 18) յայնժամ չարաչար տանջանօք և գանիւք, կապանօք ի դուռն արքունի հասուցեալ՝ մեծագոյն պատուհաս կրեսցեն: (50 / 5) Եւ որ սպուժեալ յամեսցի ոք, մեծ պատուհաս ի վերայ հրամայէր դնել: (66 / 12) Եւ իսկոյն հասեալ նմա պատուհաս Աստուծոյ (82 / 11) Քրիստոնեայ մարդ, որ կռուի և արիւն հեղու, տարցի առաջի եպիսկոպոսին և ըստ օրինացն պատուհաս արասցեն: (91 /16) Եւ այնք, որ կոծ դնեն, զտանուտէրն և զգուսանսն, կապեսցեն և ի դուռն արքունի տարցին և պատուհաս ի վերայ դիցեն (92 /6) երէցն պատուհաս արասցէ ժողովրդեամբն հանդերձ: (92 / 8) պատուհաս դիցեն և ի բաց հալածեսցեն ի շինէն. (92 / 15) որ առժամայն հասեալ պատուհաս ՝սպառեցան: (344 /16) և զմեր պատուհասդ քո առաջի ի Պարտաւ արասցէ ծառայդ մեր. (296/11) հրամանաւ Աստուծոյ պահեալ լինէր իւրայնովքն հանդերձ ի ջրահեղձ պատուհասէն: (245 / 6) Ընդ ութ հոգիսն տապանափակ ջանասցուք լինել ի բազմամբոխ ձգողացն և ի ջրահեղձոյցն պատուհասէն (279 / 8) Ոչ պատուհասի, այլ մեծի ողորմութեան է նշանակ (33 / 13) և եթէ յանդգնի ոք, յԱստուծոյ և ի մէնջ ընդ պատուհասիւ եղիցի: (310 / 6) զի նոյն ինքն զմեծ թագաւորն Սմբատ յետ սակաւ ժամանակի մատնեաց աստուածահաս պատուհասն: (337 / 6)

ՊԱՏՈՒՀԱՍԱԿՈՑ ԱՌՆԵԼ - 1

զորս պատուհասակոծ հրամայեսջիք առնել մեծ իշխանութեամբ ձերով՝ ըստ արժանի իւրեանց գործոց (296 / 3)

ՊԱՏՈՒՀԱՍԱԿՈՑ ԱՌՆԵՄ - 1

և պատուհասակոծ ևս առնէին վասն ընչիցն: (164 / 17)

ՊԱՏՈՒՀԱՍԵԱԼ - 1

և որ ոք յանդգնեսցի, պատուհասեալ սատակեսցի (308 / 7)

ՊԱՏՈՒՀԱՍԵՄ - 1

պատուհասէր և խրատէր զայնոսիկ, զորս ի դիւապաշտութեանն գտանէր յաղանդին. (35 / 10)

ՊԱՐԱԶԱՐԴԵԱԼ - 1

Որքան պայծառ են երկինք աստեղօք և երկիրս բուսովք, այսպէս է և ջան աշխարհագիր պատմողի՛ յայլոց նիւթոց պարագարդեալ: (106 / 6)

ՊԱՐԱԽՄԲԵԱԼ - 1

և դրունք բանային, և զինուորքն մտեալ՝ ունէին զզէնս իւրեանց աստի անտի շուրջ զնովաւ պարախմբեալք: (183 / 6)

ՊԱՐԱՆՈՑ - 2

եհաս լուծ ծանրութեան ի պարանոց իւր միայն (154 / 14) կտրէին և զվարսս պարանոցացն և ճակատուցն (169 / 8)

ՊԱՐԱՊ - 4

Յայնժամ Անդոկայ պարապ գտեալ ժամ՝ թողու զբերդն և մեծաւ աւարաւ անցանէ ի Հռովմայեցւոց աշխարհն: (109 / 9) և ոչ լինէր պարապ իշխանացն Աղուանից նորոգել զաթոռ հայրապետութեան Աղուանից: (334 / 10) Իսկ յայսմ վայրի ժամ գտեալ պարապոյ անձին իւրոյ՝ լաւ համարեալ մեռանել պատերազմաւ, քան ուրացութեամբ ունել զթագաւորութիւնն: (15 / 12) Եւ գտեալ ժամ պարապոյ Սանատրկոյ՝ հրամանաւ Շապհոյ ժողովէ զզօրս Աղուանից՝ թուով իբրև երեսուն հազար և արշաւէ ի միջոցս Հայոց: (30 / 1)

ՊԱՐԱՊԵԱԼ - 1

Ողջ լինելով ի Քրիստոս՝ լիցիս մեզ բազում ժամանակս պարապեալ և լցեալ սիրովն Քրիստոսի. (28 / 18)

ՊԱՐԱՊԵՄ - 1

Եւ ոչ զբաղմունք պազշոտելիք, այլ զօրն ողջոյն աշխարհական հոգւոց պարապէր. (183 / 9)

ՊԱՐԱՊ ԺԱՄ - Տե՛ս ՊԱՐԱՊ

ՊԱՐԱՊ ԼԻՆԻՄ - Տե՛ս ՊԱՐԱՊ

ՊԱՐԱՌԱԲԱՐ - 2

Որոյ պարառաբար յարուցեալ յառաւօտուն՝ փութապէս հասանէր ի կարգեալ եկեղեցին (220 / 3) Եւ պարառաբար յարուցեալ գայր առ կաթողիկոսն և աղաչէր կատարել զխնդիրն (236 / 15)

ՊԱՐԱՐԵՄ - 1

և ընդ նմին ծաւալեալ հոտ անուշից և առլցեալ պարարէր զնորա հոտոտելիսն (202 / 4)

ՊԱՐԱՐԵՑՈՒՑԱՆԵՄ - 1

և զպտուղս պարարեցուցանէին ի վայելումն և ի կերակուր ձեզ: (251 / 9)

ՊԱՐԱՐՏԱԿԱՆ - 1

և նովին պարարտական սառոյց, անլուայ աղտեղեաւքն յաբխոռն յանզգայս ի միոյ միոյ բաժակէ երկու երկու կամ երեք երեք ի նոցանէն զանապակ գինին կամ զկաթն ուղտուց և ձիոց անյագ յորովայնս իւրեանց իբրև ի տիկս ուռուցիկս չափէին: (160 / 7)

ՊԱՐԱՐՏՈՒԹԻՒՆ - 3

ՅՈՒՅՈՒՄՆ ԲԵՐՄԱՆՑ ԵՒ ՊԱՐԱՐՏՈՒԹԵԱՆՑ ՍԱՀՄԱՆԱՑՆ ԱՂՈՒԱՆԻՑ, ԹԷ ՋԻՆՉ ՈՒՆԻ Ի ՊԷՏՍ ՄԱՐԴԿԱՆ (9 / 2) ի ցօղոյ երկնից և ի պարարտութենէ երկրի տացէ զանհամեմատութիւն երկաքանչիւրովք ի վայելումն հոգեծաղիկ տեսողիդ և թագազարմ ժառանգօք մեծահագ հեղինակիդ՝ Ջուանշիրի. (210 / 16) և առլցեալ քմազարդ պարարտութիւն յաւէտաբար զյոլովիցն քաղցրացուցանէր զճաշակս (206 / 3)

ՊԱՐԱՒԱՆԴԵԱԼ - 2

որք յայսմ ամի կապեալ պարաւանդեալ ըմբռնեցան ի ձեռս Տաճկաց (332 / 3) և ոտք տառապելոց պարաւանդեալ կապեցան ի շղթայս երկաթեղէնս. (339 / 8)

ՊԱՐԳԱՄԻԴՈՍ - 1

Եւ են սահմանք սոցա ի Մարաց ընդ կողմն հիւսիսոյ մինչև ի Գաղիրովն, որ ձգին ի Պարգամիդոս գետոյ մինչև ի Մատուսիա, որ է Իլիոն: (6 / 8)

ՊԱՐԳԵՒ - 32

